ՄԵՐ ԴԺՈՒԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵԾ ՀԱՅԸ

Նուիրուած՝
Տէր Մեսրոպ Արք. Աշճեանի Յիշատակին

Կազմողներ՝ Աշոտ Մելքոնեան
Յովիկ Մկրտիչեան
Հռիփսիմէ Աշճեան

ԵՐԵՒԱՆ 2006

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆԻ ԽՈՀԵՐԻՑ

ԱԶԳ

Արդարեւ, հայ գաղթօճախների պատմութեան մէջ, իւրայատուկ տեղ եւ դիրք ունի Զայանդեռուդ գետի ափերին մակաղած այս հայաքաղաքը, որ իր գրեթէ չորս անգամ հարիւր տարիների գոյութեան ընթացքում ունեցել է հոգեւոր, մշակութային եւ ազգային աննախընթաց ճառագայթում: Նոր Զուղան, իր ծոցածին հնդկահայ գաղութի նիւթական աջակցութեամբ եւ իր ջերմ ազգասիրութեամբ, Հայ գաղթաշխարհից ազգային, կրօնական, կրթական եւ մտաւոր մշակոյթի կարեւոր հաստատութիւնների հիմնադիր եւ մեկենաս է եղել:

Նրա ազդեցութիւնը տարածուել է աշխարհով մէկ. Խաղաղական օվկիանոսը գրկելով արեւելքից եւ արեւմուտքից, եւ իր բազուկների մէջ առնելով ե՛ւ Հայաստան աշխարհը, ե՛ւ ամբողջ Եւրոպան, ու, դէպի արեւելք՝ Հնդկաստանից սկսած մինչեւ Չինաստան ու Ճապոն, ինտոնեզեան եւ մալէզեան կղզիներ: Իրաւացի է Լէօն, երբ ասում է, որ «Չէ կարելի երեւակայել ԺԷ դարի հայութեան մէջ կրթական, մտաւոր գործունէութիւն, առանց Զուղայի հզօր աջակցութեան եւ խրախուսանքին...»: Մեր ժողովրդի նորագոյն պատմութեան մէջ կարեւոր դեր են կատարել Ս. Էջմիածնայ գահակալներից ոմանք՝ որոնք ծնուել են եւ սնուել Նոր Զուղայում: Հայ ազատագրական շարժումը այնքա՜ն աղքատ պիտի լինէր՝ եթէ հայ կեանքի թատերաբեմին վրայ չերեւէին Իսրայէլ Օրիներն եւ Յակոբ Դ Զուղայեցիները, Շահամիրեաններն եւ Էմինները եւ Լազարեաններն եւ բազո՜ւմ ուրիշներ: Զուտ մշակութային գետնի վրայ եւս Նոր Զուղան անգնահատելի ծառայութիւն է մատուցել՝ սպանական Գատիքսից մինչեւ Բաթաւիա, Ամստերդամ, Փարիզ, Վենետիկ, Մոսկուա, Կալկաթա եւ Հայոց աշխարհ... ամենուրեք տանելով լոյս, տանելով մշակոյթ, տանելով ճաշմարտութիւն...

Երկու Խօսք. Պատգերագիրք Սուրբ Ամենափրկիչ Վանաց Նոր Զուղա, Սպահան 1975

***

Մայիս 28-ով, Հայ ժողովուրդը մէկդի շպրտեց վերջնականօրէն աղաչողի, ողոքողի իր ստրուկի վերարկուն, քանդեց նախկին թափառումներու ուղին եւ իր քայլերը ուղղեց դէպի յաւերժական Հայրենիք: Հայ ժողովուրդը աղաղակեց

աշխարհին թէ ինք լոյսին կը ձգտի, ինք արեւին, կեանքին կը նայի եւ թէ իր ազատութեան երազը հայկական նիզակն է, որ Վարուժանի բառերով «Նպատակին կը դիմէ օդին եւ արեւին մէջ երգելով»:
Խունկ եւ աղօթք Հաւատքի եւ Հայրենիքի ազատութեան ճամբուն ինկած նահատակներու յիշատակին:

Յարգանք Հայրենիքի ազատագրութեան խորանին առջեւ իրենց կեանքը զոհաբերած հայ մարտիկներուն:

Ողջոյնի Խօսք Հայաստանի Հանրապետութեան Վաթսունամեակին Առիթով. 1978

***

Մեր ժողովուրդը կանուխէն ըմբռնած է եւ ապրած Յարութեան խորհուրդը: Էր երբեմն, երբ մենք մեր հողերուն վրայ էինք եւ կ՚ապրէինք մեր հայրերու աւանդութեամբ, այնտեղ, հայաբնակ գաւառներու մէջ ապառաժ սրտերն անգամ թունդ հանող սովորութիւն մը ունէինք: Զատկի առաւօտուն, եկեղեցի երթալէ առաջ, մեր հայրերը գերեզման կ՚երթային, եւ իրենց սիրելիներուն գերեզմանին վրայ մոմ կը զետեղէին եւ կ՚աւետէին թէ Քրիստոս յարեաւ... Առաջին աւետիսը՝ մեռելներուն: Բայց աւելին կար: Մեր հայրերը լոյսը զուգորդած էին յարութեան, եւ այդ լոյսին մէջէն իրենք կ՚ապրէին եւ կ՚ապրեցնէին իրենց լոյս հաւատքը, որուն մէջ, ամեն բանէ առաջ կը տեսնենք ժողովուրդին այն ներքին տենչը որ զինք միշտ լոյսին տարած է, եւ իր պատմութեան սեւ ու մութ օրերուն միշտ փնտռած է լոյսին ճառագայթումը, լոյսին յաղթանակը: Եւ մենք, այսօր, եթէ հաւատարիմ ենք լուսաւորիչով լոյսի եւ հաւատքի բացուած մեր հայրերուն, նոյն այդ լոյսի տենչով պէտք է նայինք յարութեան:

Քրիստոս Յարեաւ, Մարտ 1980թ.

***

Դժբախտութիւն է որ ցեղասպանութենէն 70 տարի յետոյ, տակաւին ոմանց մտքին մէջ հարցական է ցեղասպանութեան գոյութիւնը. ուրեմն մենք պիտի պայքարինք ընդունիլ տալու քաղաքակիրթ աշխարհին այն ինչ որ արեւի պէս պայծառ իրողութիւն է, որքան ալ որ դժխեմ եւ տխուր ըլլայ: Բայց կը կարծեմ, որ մեր բոլոր ճիգերը պիտի ըլլան այն ուղղութեամբ, որ մեր դարաւոր թշնամին ընդունի իր կատարած ոճիրը. Օսմանական Թուրքիոյ անունով ըլլայ, կամ

կայսերական Թուրքիոյ անունով, բայց այսօրուայ Թուրքիոյ ղեկավարները պէտք է որ ճանչնան, պէտք է որ ընդունին: Պատմութիւնը չի կարելի վերագրել, չի կարելի խեղաթիւրել, չի կարելի օրուան պատշաճեցնել. եւ ասիկա պիտի ըլլայ մեր առաջնահերթ պարտականութիւնը:

Կը խորհիմ, որ այս 70-ամեակը պէտք է դառնայ տասնամեակը մեր հողային պահանջներուն: Շեշտեցի ասիկա, երբ կէս դիշերին խօսեցայ 1000-է աւելի երիտասարդներու, որոնք Սպիտակ Տան դիմաց, հսկում կը կատարէին ամբողջ գիշերը: Յիշեցի Թալէաթի խօսքերը, որ կ՚ըսէր այլեւս հայերը պիտի մոռցուին. հողը պիտի մոռնայ զիրենք- յիշեցի սակայն խօսքը Մուշեղ Գալշոյեանի «Ձորի Միրօ» վէպի հերոսին, որ իր գաւկին կ՚ըսէր: «Երկրի, հողի կորուստ անդարձ կորուստ չէ. հող, իր տիրոջ հաւատարիմ է. եւ իր արենակցին կը սպասէ, կը սպասէ, եւ մի օր կը միանան. հողի կորուստ անդարձ կորուստ չէ»:

Ես կ՚ուզեմ, որ նոր հասնող սերունդները, Սփիւռքի մէջ մանաւանդ չմոռնան, որովհետեւ Սփիւռքը արեւմտահայութիւնն է: Արեւմտեան Հայաստանի վեց վիլայէթներու, Կիլիկիոյ հայ ժողովուրդն է որ Սփիւռք է, եւ այդ Սփիւռքի ժողովուրդը իր հողը կ՚ուզէ, իր հայրենիքը կ՚ուզէ եւ պէտք է որ այդ հողերու վերադարձը ըլլայ մեր կէտ նպատակին: Սփիւռքի հայութիւնը պէտք չէ մոռնայ Արեւմտեան Հայաստանը: Ասիկա կը խորհիմ, որ պէտք է ըլլայ "Leit motif"-ը մեր յառաջիկայ գործունէութեան:

Մեծ Եղեռնի 70-Ամեակը Ուաշինկթընի Մէջ. Բ, 1985

***

Պիտի ուզէի, որ այն որդին որ Հայրենիքի մէջ կայ, ըլլայ առկայծ, ըլլայ անշէջ եւ Հայրենիքի ժողովուրդը ինք եւս զգայ, որ ինքն ալ տարագիր է, որովհետեւ իր մէկ մասը տակաւին գերի է, Արարատ սուրբ լեռնէն սկսած, որ սահմանի միւս կողմը Երեւանին կը նայի յաւէտ կարօտով: Նոյնպէս կարօտով կը նային մեր Վանն ու Վարագը, Տարօնի դաշտը, Խարբերդի ոսկեղէն դաշտը, Մարութայ Սուրբ Աստուածածինը, Վարագայ Ս. Նշանը, մեր դարաւոր սրբութիւնները, մեր հայրերուն գերեզմանները, այս բոլորը կարօտ են մեր ժողովուրդին եւ Հայրենի ժողովուրդը ինք պիտի ըլլայ հիմքը, խարիսխը ամբողջական եւ Միացեալ Հայաստանին:

«Մեծ Եղեռնի 70-ամեակը Ուաշինկթընի Մէջ» 1985

***

Թուրքը չգիտցաւ թէ ինչպիսի ուժի աղբիւր կը դառնան նահատակները: Եթէ հաւատքն է որ նահատակներ կը ծնի, նահատակները իրենք հաւա՛տքը կը կառուցեն: Մեր 1915-ի նահատակներն են, որ Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսէի մէջ դարձան աննկուն կամքը, վճռակամութիւն: Անոնց շնորհիւ է, որ մահը նահանջեց եւ յարութեան հրաշքը իրագործուեցաւ: Ապրիլ 24-ի նահատակները Հայրենիքի գաղափարին նահատակներն են: Հոն ուր հայրենիքը տէր չունի՝ օտարներն ու վարձկանները տէր կը դառնան այդ հայրենիքին:

Հայկական բարձրավանդակը թուրքին հայրենիքը չէր: Հայուն հայրենիքն էր, եւ թուրքը ծրագրեց կոտորածով պարպել այդ հողը իր ժողովուրդէն: Սփիւռքի տարածքին ապրող իւրաքանչիւր հայ՝ այդ հողին սեփականատէրն է: Հայօրէն ապրող, հայօրէն զգացող ու մտածող իւրաքանչիւր անհատ անհրաժեշտ է, որ իր կամքը պրկէ, իր ուժերը լարէ, շարունակելու համար հայութեան պայքարը, ազատագրելու համար հայրենիքի հողերը, եւ վերստին յանձնելու համար զայն իր իրաւատիրոջ՝ Հայոց ազգին:

Ձեզի Կը Նայինք Եւ Քաջութեամբ Կը Լեցուինք. Խօսուած՝ Ուաշինկթընի «Գանվէնշըն Հօլ»ի մէջ, 27 Ապրիլ 1985-ին

***

70 տարին չկրցաւ թաղել մեզ: Եկէ՛ք, խօսք տանք իրարու, որ ալ երբե՛ք պիտի չմեռնինք:

Պիտի ապրինք մեր հոգիով, մեր հայութեամբ: Յիշենք. ներկայ ընենք անցեալը մեր կեանքին մէջ: Նահատակներու դէմքերը վերականգնենք յարութեան շունչով, եւ յիշատակի այս օրը վերածենք յարութեա՛ն օրուան:

Հին ու նոր չկայ այսօր: Կայ հայ ժողովուրդը, որ չի թաղեր ինքզինք անցեալին մէջ:

Վա՛յ այն ժողովուրդին, որ կը մահանայ: Մոռնալը դաւաճանել է, մոռնալը մահանալ է: Մենք չենք կրնար մոռնալ մեր նահատակները, Ցեղասպանութեան ոճիրին զոհերը:

Եւ պիտի չմոռնա՛նք:

Միայն թէ,

Սփիւռքի մաշումին դիմաց՝ սփիւռքի տեսակ-տեսակ հալածանքներու մէջ մենք տեսակ-տեսակ հայ չըլլանք..., այս տեղացի՝ այն տեղացի չըլլանք, այլ մնանք միայն ու միայն մաքուր հայ:

Ողջոյն Վերապրողներուն. Խօսուած Արլինկթընի Ազգային Գերեզմանատան մէջ 28 Ապրիլ 1985-ին Եղեռնի 70-Ամեակի Եզրափակիչ Հանդիսութեան Ժամանակ:

***

Հայ կիներու եւ հայ մայրերու միութիւնն է ան գերագանցապէս: Եւ իբրեւ այդպիսին, իր էութեամբ եւ բնազդով, ան պահող է, պահպանող: Եւ պիտի ուզէինք, որ Հ.Օ.Մ.-ը միշտ միացնէ, հաւաքէ, պահէ, գուրգուրայ, պահպանէ հայ տունը, հայ ընտանիքը, հայ լեզուն եւ հայ հաւաքականութիւնը:

Խօսք Ողջոյնի Հ.Օ.Մ.-ի 75 Ամեակի Առիթով. 1985

***

Հ.Մ.Ը.Մ.-ը տարեկից է Հայաստանի Հանրապետութեան: Պարզ պատմական հաստատումէ մը անդի՛ն կ՛անցնի սակայն այս զուգադիպութիւնը: Որովհետեւ, ամեն անգամ, որ կը մտածենք Մայիս 28-ի երեւոյթի մասին, եւ կը հաստատենք, որ Սարդարապատեան յաղթանակով հայ ժողովուրդը թօթափեց վեց հարիւր տարիներու ստրկութեան շղթան, կ՛անդրադառնանք մէկ ուրիշ ճշմարտութեան- այն որ նոյն 1918 թուականին ծնունդ առաւ Հ.Մ.Ը.Մ.-ը, իբրեւ նոր արտայայտութիւնը հայկական ասպետական ոգիին, եւ որ կրցաւ ծառայել, ստրուկէն ստեղծել նոր հայը, սփիւռքի հայ երիտասարդը, Հայրենիքի կարօտն ու կրակը իր աչքերուն մէջ պահող հայ նոր սերունդը:

Անցէք հպարտ, հայ արիներ, անցէք հպարտ շարքերով, ձեռք ձեռքի տուէք, սիրտ սրտի միացուցէք, եւ աքսորի խուլ անկիւններէն նայեցէք հեռուն, դէպի լեռը սրբազան: Բարձրացէք, բարձրացուցէք մեզ դէպի կատարն Հայրենի լերանց հեռագոյն ...:

Ողջոյն Հ.Մ.Ը.Մ.-ին. 8 Օգոստոս 1985

***

Հայաստանը մեր յաւերժական Հայրենիքն է, մեր պատմական Հայրենիքի մէկ մասին վրայ հաստատ կ՛ապրի մեր ժողովուրդը իբրեւ հիմքը եւ խարիսխը մեր երազներու:

Սփիւռքի մէջ Լիբանանը մեր երկրորդ հայրենիքն է, Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը այնտեղ է եւ այնտեղ մենք ունենք բազմաթիւ

կազմակերպութիւններ՝ որոնք կը ջանան հայ կեանքը աշխոյժ պահել, հակառակ այն եղբայրասպան եւ անիմաստ պատերազմին, որ 10-12 տարիներէց ի վեր կը քամէ այնտեղի ժողովուրդին քսակը, կեանքը եւ ստեղծագործ ոգին ալ կը ջլատի:

Ինձ համար շատ տխուր էր տեսնել Լիբանանահայութեան վիճակը այս անգամ, տեսնել նրանց ընկճուածութիւնը յատկապէս տնտեսական ճակատի վրայ: Բայց ինչպէս յուզումով չգնահատել այն երիտասարդներուն, որոնք կը պաշտպանեն մեր հաստատութիւնները, մեր կեդրոնները՝ հոգեւոր թէ այլ, եւ պատրաստ են հայ արիւնը պահել թանկագին եւ չթողուլ, որ մէկ հայ իսկ ի զուր տեղը իր կեանքը վրայ տայ:

Կը մաղթեմ, որ այն բոլորը, որ կը կատարուի նիւթական շատ մեծ եւ սքանչելի զոհողութիւններու գնով, կարենան կատարել յառաջիկային եւս, որպէսզի մեր Լիբանանի հայութիւնը նախ իր ամբողջականութիւնը, իր մասնակցութիւնը բերէ ամբողջական Լիբանանի կերտումի համար եւ կարենայ ըստ առաջնոյն օգնութեան հասնիլ Սփիւռքի բոլոր կեդրոններուն, ուսուցիչներով, հոգեւորականներով եւ այլ գործիչներով:

«Հայաստան-1986 Բ» հարցազրոյցից, որը սրբազանը տուել է Ս. Էջմիածին իր այցելութեան առիթով, որն առնչւում էր Հայ Եկեղեցւոյ միասնական կանոնագրի մշակման հարցին:

***

Տակաւին այդ հրապարակի տպաւորութեան տակ ենք՝ եւ բառեր չեմ կրնար գտնել՝ արտայայտելու համար այն յուզումը՝ որ իմս էր, երբ տեսայ թէ ինչպէս հարիւր հազարաւոր բռունցքներ կը բարձրանային օդին մէջ՝ օրուան ճառախօսներուն այս կամ այն հարցումին ի պատասխան: Չեմ կրնար մոռնալ առաջին րոպէն՝ յատկապէս՝ երբ արցունքի կաթիլներ իջան այտերէս՝ երբ տեսայ ժողովուրդը: Ֆիլմերու մէջ տեսեր էինք Հռոմի ժողովուրդը, յետոյ Ս. Պետրոս հրապարակը՝ Վատիկանի մէջ: Բայց Օփերան տարբեր էր: Ամէնքը հայ էին, հայ: Ժողովուրդը կարօտ էր մեր սրտերուն՝ սպեղանի էր տեսնել այնքան համախմբուած հայ: Ինչպէս ըսեմ, հոն էին ծերը, երիտասարդը, մանուկը, գրագէտը, նկարիչը, ամէն հայ հոն էր:

Հայաստանը՝ Ղարաբաղով: Ինչ որ կ՚ընէ Հայաստանցին՝ Լեռնային Ղարաբաղին համար է- մեծով պզտիկով, մանուկ թէ ծեր, Ակադեմիկոս թէ կթուոր կին՝ մէկ մտասեւեռում ունին՝ Ղարաբաղ: Ամբողջ ազգ մը, կրնամ ըսել, հիբնոսացած է այս անունով՝ ՂԱՐԱԲԱՂ: Ղարաբաղը, ինք, ապստամբ վիճակի մէջ է, բայց մէկ բան գիտէ՝ պէտք է վերապրիլ, եւ միանալ Հայաստանին:

Տարբեր էր Երեւանը, տարբեր էր Հայաստանը: Աւարայրեան ոգին էր այնտեղ, սարդարապատեան միասնութեան ոգին կը թեւածէր հոգիներուն վրայ: Ղարաբաղը՝ Հայաստանի «Պուճուր» եղբայրը, կ՚ուզէր միանալ, միաւորուիլ Մայր Հայրենիքին հետ. եղբայրական այդ կանչին ալ արձագանք եղած էր Հայրենիքը՝ եւ 70 տարիներու հեռաւորութենէ մը վերագտած Ղարաբաղի հերոսական ժողովուրդը: Եւ, այս առթիւ՝ ինք, Հայաստանի հայութիւնը հոգեփոխուած էր. նոր երիտասարդութիւն մը ծնունդ առած է. նոր հայութիւն մը ծնած է, եւ մաքրագտուած, բիւրեղացած, սրբացած հայութիւն մը:

Սփիւռքի հայութեան կը մնայ՝ առանձին չթողուլ Հայաստանը: Գործով, բարոյական քաջալերութեամբ եւ նիւթական զոհողութեամբ: Ղարաբաղը՝ «Հայաստանին, մենք բոլորս Հայաստանին, «Ոգու Հզօրութեամբ», ինչպէս գրուած էր Օփերայի մուտքին: Ոգու Հզօրութեամբ:

«Հայաստան 1988»

***

Արդար հպարտանքով է որ այսօր հաւաքուած ենք այստեղ՝ յայտարարելու համար, որ մենք ժառանգորդներն ենք այն սերունդին, որ իր կեանքի գնով Անկախութեան երազը տուաւ մեզի եւ հռչակելու թէ այսօր, 1918 Մայիս 28-էն 70 տարի յետոյ, թէ մայր Հայրենիքի մէջ եւ թէ սփիւռքի մէջ, հայերս ժառանգորդներն ենք իրենց երազին, ժառանգորդներն ենք իրենց կտակին եւ համայն աշխարհին կը յայտարարենք, որ այն երկիրը որ տուաւ անկախութիւնը մեր ժողովուրդին, այն հողը, որ մեր հողն էր հազարաւոր տարիներէ ի վեր, այն հողը, որ շաղախուած է հայու արիւնով, մեր ժողովուրդին է եւ այն խորունկ կապը, որ կայ հողին եւ հայ ժողովուրդին մէջ, այդ խորհուրդը, որ մեզ կը կապէ մեր հայրենի հողին, ըլլայ ատիկա այսօրուան Հայաստանին, թէ Վասպուրականին, Սասունին, թէ Ղարաբաղին, այդ հողին հաղորդութիւնը մէկ է եւ մէկ պիտի մնայ մինչեւ որ հող եւ ժողովուրդ միասին հաղորդուին մէկ Հայրենիքի եւ մէկ պետութեան մէջ:

Հայաստանի Հանրապետութեան 70-Ամեակը. Խօսուած՝ 25 Մայիս 1988-ին Նիւ Եորքի «Էյվըրի Ֆիշըր Հօլ»ի մէջ:

***

Մենք սփիւռքի մէջ տակաւին մահուան հետ ժամադրութիւն ունինք: Մենք սփիւռքի մէջ չենք կրցած 1915-ի աղէտին ու սպանդին ճիրաններէն դուրս գալ:

Մենք մտերմութիւն ունինք մահուան հետ. մենք մտերմութիւն ունինք կորուստին հետ. բայց, Հայաստանի ժողովուրդը այսօր մեզի ըսաւ՝ որ այլեւս բաւ է մահուան մասին մտածել, թաղումի մասին մտածել, երէկուան մասին մտածել, նայեցէք դէպի վեր, դէպի ապագայ եւ արժանի էք Մայիս 28-ի սերունդ կոչուելու, արժանի էք յաղթանակ տօնելու, արժանի էք ապագային նայելու:

Հայաստանի Հանրապետութեան 70-ամեակը. խօսուած՝ 25 Մայիս 1988-ին Նիւ Եորքի «Էյվրրի Ֆիշըր Հօլ»ի մէջ

***

Խաղաղութիւն բոլոր անոնց, որոնք մահը գտան այս տխուր եւ աշխարհաւեր երկրաշարժին: Կը մաղթեմ, որ վերապրողները, հայ վերապրողները դիմանան, մինչեւ որ օգնութեան ձեռքը հասնի եւ հարիւրաւոր քիլօկրամ սիմէնթի տակէն անոնք կարենան դուրս ելլել եւ նոր կեանքի սկսիլ:

Բայց, Աւետարանը կ՛ըսէ, մենք մեռելները պիտի թողունք, որ մեռելները թաղեն, եւ ողբանք, եւ սգանք, յարգենք յաւերժ եւ յիշենք զիրենք, սակայն նաեւ պիտի սկսինք նոր կեանքին, որովհետեւ ուրիշ ժողովուրդ ծիծեռնակին երգը չունի, ուրիշ ժողովուրդ այնքան տուն չէ շինած, քանդուած տունը վերաշինած՝ որքան հայը: Դարեր ու դարեր հայը շինած է, օտարը քանդած է՛, բնութիւնը քանդած է, բայց հայը վերըստին շինած է: Եւ այս դժբախտութեան մէջէն ես կը տեսնեմ նոր քաղաքները, նոր գիւղերը, նոր աւանները՝ որոնք պիտի կեանքի բացուին, հազար հազար մանուկներ պիտի ծնին, գործարանները պիտի աշխատին, մտաւորականները պիտի գրեն, երաժիշտները պիտի հոգեւոր, սրբազան եւ զուարթ երաժշտութիւն ստեղծեն, կեանքը վերստին պիտի յաղթէ, որովհետեւ հայը կեանքը ընտրած է, այլապէս այն բոլոր դժբախտութիւնները, որոնք մեր ժողովուրդի գլխին եկան, շատոնց կրնային գերեզմանած ըլլալ համայն հայ ժողովուրդը, եւ Ասորեստանի, Մարերու եւ ուրիշ ազգերու գերեզմանին մօտ, հայու գերեզմանը կրնար ըլլալ:

Բայց, այս բոլորը գացին, հայ ժողովուրդը իր տոկունութեան ոգիով, իր սքանչելի դիմադրականութեամբ, յաղթեց բոլորին, յաղթեց 1915-ի ցեղասպանութեան, յաղթեց 2-րդ համաշխարհային պատերազմին իր տուած զոհերու ողբերգութեան, եւ վստահ ենք որ պիտի յաղթէ նաեւ աշխարհաւեր այս երկրաշարժին:

Սրտի Կոչ Հայաստանի Աղէտեալներուն

***

Հայ ժողովուրդի յարութիւնը իրական կ՚ըլլայ, ամբողջական կ՚ըլլայ՝ երբ Նախիջեւանը, Ախալքալաքը, Ախալցխան միանան Հայաստանին: Հայ ժողովուրդին յարութիւնը իրական կ՚ըլլայ, ամբողջական կ՚ըլլայ՝ երբ Կարսը, Անին, Արտահանը, Արեւմտեան Հայաստանը միանան Հայաստանին՝ եւ իրական դառնայ այն կոչը՝ որ Երեւանի ժողովուրդը կը հնչեցնէր անցեալ 1988-ի Փետրուարին՝ մէկ ժողովուրդ՝ մէկ հանրապետութեան մէջ:

Երբ Կը Ցիշենք Մեր Երկիրը, խօսուած Նիւ Եորքի Ս. Վարդան մայր տաճարին մէջ, 23 Ապրիլ 1990թ., Մեծ Եղեռնի 75-ամեակի առիթով:

***

Ուրֆան իր հերոսամարտով պատիւ մըն էր համայն հայութեան: Անոր հերոսներուն արժանի յաջորդները կրնանք կոչուիլ այն ատեն միայն՝ երբ պահել գիտնանք Ուրֆայի աւանդոյթներն ու երգերը եւ մանաւանդ անոր հարուստ ժառանգութեան հաղորդ դարձնենք տէր դառնալու գիտակցութեան հրամայականով գալիք սերունդները հայ ժողովուրդին:

Խօսք Ողջոյնի. Ուրֆայի Տոհմիկ Օր, Թորոնթօ 1995

***

Ամերիկայէն երկիր կը վերադառնամ, Ս. Էջմիածնայ մէջ ստանձնելու համար Քրիստոնէութեան 1700-ամեակի տօնակատարութեանց վարիչ-քարտուղարի պաշտօնը: Ես ալ կը դառնամ երկիր, բայց իմ երկիրը ազատ եւ անկախ Հայաստանն է, Արցախն է, որուն ժողովուրդը իր արիւնով եւ քաջութեամբ մեզի իրաւունք տուաւ իբրեւ մարդ ապրելու եւ իբրեւ մարդ նայելու աշխարհին: Ցաւի եւ արցունքի հովիտէն պիտի չանցնիմ, արիւնի երկիր պիտի չերթամ, պիտի երթամ իմ հայրերուս երկիրը՝ մասնակցելու համար անոր վերելքին...:

Հրաժեշտի խօսք Պոսթընի մէջ, Մայիս 1998թ.

***

Այսօր իմ կեանքի, եւ վստահաբար ձեզմէ իւրաքանչիւրին կեանքի գրքին մէջ բացառիկ գեղեցկութեամբ եւ խորիմաստութեամբ գեղուն էջ մը կ՛արձանագրուի: Այսօր իր վերջընթեր ճամբորդութիւնը կ՛ընէ Սօսէ Մայրիկը, եւ մեր աչքերուն առջեւ Հայրենի հողին կը հասնի իր աճիւնը:

Սօսէ Մայրիկ...

Մեզմէ ո՞վ, իր մանկութեան չէ երգած սիրելի երգը.

«Ձայն տուաւ Սօսէն, Սերոբ ջան, հոս եմ,

Ձինուած պատրաստուած ձայնիդ կը սպասեմ»:

Ու մենք մեծցանք, ճանչցանք ու պաշտեցինք Սօսէն, Հայ յեղափոխութեան այդ հրաշք հերոսուհին, որ իր կեանքի եւ զէնքի ընկերոջ հետ միասին գրեց մեր պատմութեան շքեղ դրուագները:

Եւ պիտի գայ օրը, երբ Սօսէն վերջին ճամբորդութիւն մըն ալ պիտի ընէ, պիտի դառնայ Էրգիր, պիտի դառնայ իր որդիներուն, պիտի տէր կանգնի Սերոբի գերեզմանին, եւ իր հանգիստը գտնէ Սասնոյ սարերուն գիրկը, իր ծննդավայր Նեմրութայ սարի բարի հայեացքին ներքեւ, եւ այն ատեն պիտի գիտնանք, որ իրականացած է Սօսէներու եւ Սերոբ Աղբիւրներու երազը, միացեալ, ազատ եւ անկախ Հայաստանի երազը:

Վերջին ճամբորդութիւնը. Խօսք Սօսէ Մայրիկի աճիւնը Եռաբլուրի հողին յանձնելու հոգեհանգստեան արարողութեան. 28 Մայիս 1998թ. Երեւան

***

Անդրանիկը տարբեր էր. չէի տեսած Անդրանիկը: Բայց ան աւելի մեծ կենդանութիւն էր, կը կարծեմ իմ մէջ, որովհետեւ տղայ օրերուս, երբ հազիւ այբուբեն կը սորվէինք, երբ հազիւ «Հայր Մեր» կ՛երգէինք, արդէն մեր շրթերուն վրայ էր Անդրանիկը իր երգերով՝ «Անդրանիկը քաջ...» կամ «Հասիր, Անդրանիկ, հասիր օգնութեան, Սերոբ կը զոհուի ի սէր ազգութեան» ու աւելին՝ «Իբրեւ արծիւ սաւառնում ես...»: Այս երգերով մեր մէջ կը պատկերուէր հերոս Անդրանիկը, քաջաց քաջը: Մեր մօտ Սասունցի Դաւիթը եւ Անդրանիկը կը նոյնանային: Յետոյ տեսանք իր պատկերը, աւելի ճիշտ արձանին պատկերը Ֆրանսա, Փարիզի Պեր Լաշէզի գերեզմանատան մէջ: Ձիու վրայ նստած փաշան էր, Անդրանիկ փաշան, հերոսը, որուն մասին կը խօսէին մեր մեծերը: Այդպէս մնաց Անդրանիկը մեր յիշողութեան մէջ ու հետզհետէ մեծցաւ ու աւելի մեծցաւ որքան մենք ճանչցանք Հայոց պատմութիւնը, որքան մտերմացանք հայ յեղափոխութեան, որքան մտերմացանք հայ ազատագրական շարժման հետ: Անդրանիկը եղաւ միշտ այդ խորհրդանշանը, քաջութեան, նուիրումի, զոհողութեան պատկերը:

Ողջոյն Քաջաց Քաջին

***

Հայ ժողովուրդի տառապանքէն եւ ստրկութենէն էր ծնած ան: Աննման հայրենասիրութեամբ, անձնուէր, Անձնազոհ՝ ան ընդունակ եղաւ ձեռք առնելու նմանը չտեսնուած փոթորիկի մատնուած հայկական նաւի ղեկը եւ առաջնորդելու դէպի փրկարար նաւահանգիստ... Տարիներ յետոյ, երբ հայութիւնը կ՛ալեկոծէր աշխարհի ծովերուն վրայ, ինք իր կտակը կը գրէր գալիք սերունդներուն, ու ես՝ տասնհինգամեայ պատանի, կը լսէի իր խրոխտ ձայնը՝ Պէյրութի Սինեմա Ռիվոլիի բեմէն... «Արիւնով կ՛ըլնի, գրիչով կ՛ըլնի, պայքարով կ՛ըլնի, մինչեւ հայը հաւաքուի իր բոյնին մէջ... Հայը հային կառավարի... հայը լինի իր երկրի տէրը, հայը լինի իր ազատութեան տէրը...»:

Այսօր Դրօն կը թռչի դէպի հայրենիք, ուր երամովին իրեն կը սպասեն ընկերները, Նիկոլ Դումանը՝ իր ուսուցիչը, Մարտիրոս Զարուխչեանը, կամաւորական գունդերու ընկերները՝ Քեռին, Համազասպը, Անդրանիկը, Հայոց Հանրապետութեան զօրավարները՝ Նազարբէկեանը, Փիրումեանը, Սիլիկեանը, Սօսէ մայրիկը, որ ահա երկու տարիէ ի վեր մայրութիւն կ՛ընէ Եռաբլուրի նահատակներուն...:

Դարձ Ի Տուն Հայրենի. Խօսք Դրօի յիշատակի հանդէսին. Պոսթըն 21 Մայիս 2000թ.

***

Բագրեւանդ

Արածանիի եզերքն ենք, մեր դէմքը դէպի Արեւելք, մեր շուրջը՝ հով, քամի ու փոթորիկ: Պիտի կատարենք ջրօրհնեքի միւռոնման, հաղորդութեան կարգերը: Կարծես ծնունդի օր է եւ ջրօրհնէք կը կատարենք: Սէյրանի ձայնը կը ճեղքէ երկինքը, իսկապէս՝ «Ո՜վ զարմանալի... խորհուրդ... գե՛տ, մի՛ զարհուրիր, քո Արարիչն եմ ես...»: Քրիստոս կու գար մկրտուելու, եւ մեր աղօթաւոր բանաստեղծը կը յորդորէր՝ «մի՛ զարհուրիր, մի՛ վախնար»: Հիմա մենք ալ Արածանի գետին կարծես կ՛ըսենք «գե՛տ մի՛ զարհուրիր, քու ժողովուրդդ ենք մենք... մրրկաւ ցրուած, վայրավատին ցրուած տարագիր քու զաւակներդ ենք, եկած՝ «մկրտիլ ի քէն»:

Ու յետոյ Միւռոնով օրհնութիւն Արածանիի ջուրերուն, եւ բոլոր ջուրերուն Հայոց աշխարհի... Արաքսն ալ, Մուրցն ալ, Մեղրագետն ալ, մօրս գիւղին՝ Հաւաւի

աղբիւրն ալ, «Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս Հայոց, գետք եւ վտակք, առուք եւ առուակք Հայաստանեաց անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Միւռոնը կը յամենայ, գետի ափերուն կառչած է, կարծես չ՛ուզեր հեռանալ, կ՛ուզէ մնալ հոն, այնտեղ, ա՛յդ ափին. այդ հողը որքա՜ն կարօտ էր միւռոնի սրբութեան:

Ագաթանգեղոս կը պատմէ, թէ 301թ. Լուսաւորիչ հաղորդութիւն տուաւ բոլորին:

Մեր խումբն ալ խոստովանեցաւ եւ մինչ տղաքը կ՛երգէին «Սուրբ, Սուրբ»ը, բոլոր ուխտաւորները եկան, շարուեցան կարգով եւ Սուրբ Հաղորդութեամբ զօրացած, Սուրբ Միւռոնի կնիքով հայացած, հայաշունչ եւ հայախորհուրդ դարձած՝ սկսան երգել: Ու ամեն մէկ երգ՝ փառք էր, երջանկութիւն էր, ինքնահաստատում էր՝ «Մեր Հայրենիք ազատ անկախ...», «Երբոր բացուին դռներն յուսոյ...», «... Երկար կեանք տուր Հայրապետին...»:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչէն Հրայր Դժոխք. Արեւմտեան Հայաստան ուխտագնացութեան տպաւորութիւններ Երեւան 3 Սեպտեմբեր 2000թ.

***

Վան

Դէպի լճափ վերադարձը այնքան ալ ուրախ չէ. միշտ ալ այսպէս եղած է: Ճշմարտութեան բոպէն ի վերջոյ կու գայ, եւ ահա... Աղթամարայ Սուրբ Խաչ վանքը լքելու տրտմութիւնը կը պատէ մեզ: Ես քիչ մը աւելի «փորձառու» եմ, կը փորձեմ երգեր երգել տալ: «Տէր Եամանը» կը յաջողի: Հրանդէն կը խնդրեմ, որ «Հայրիկ, Հայրիկ»ը երգէ. կը մերժէ. չի կրնար. դեռ նոյն առաւօտեան՝ իր ֆիտայի հօր գիւղն էր եղած, Շուշանց: Սէյրանին կը դառնամ: Միշտ հաճոյակատար, միշտ ազնիւ եւ մաքուր ջուրի պէս անարատ Սէյրանը ինք ալ կը մերժէ: «Սրբազան, չեմ կարող»: Ձա՞յնը քաշուած էր, ոչ, հազար անգամ ոչ: Սէյրանին ուրեմն դեռ չէի ճանչցած: Եւ տեսայ, որ այդ մեծ պատանին կու լար ու վստահ եմ, Սէյրանի արցունքը Վանայ լճի ջուրերէն աւելի դառն էր ու աղի:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչէն Հրայր Դժոխք. Արեւմտեան Հայաստան ուխտագնացութեան տպաւորութիւններ Երեւան 3 Սեպտեմբեր 2000թ.

***

Պահանջատիրութիւնը ուժի հարց է: Ամէն ինչ կախուած է Հայաստանի հզօրացումից: Որքան Հայաստանը ուժեղ լինի, այնքան մեր պահանջատիրութիւնը կը լինի զօրաւոր:

Աշխարհի սահմանները միշտ էլ ենթակայ են փոփոխման: Մենք մի գերագոյն խնդիր ունենք՝ ամրանալ, բազմանալ, լինել գիտակից, որպէսզի մեր պատմութիւնը առիթ ստեղծի, որ կարողանանք ներկայացնել մեր խնդիրը:

Հաւատարմութեամբ տէր կանգնինք, Արագածոտն, 2001թ. Ապրիլ, Գ

ԵԿԵՂԵՑԻ

Ապրելու տենչը, եւ հարկադրաբար, մահէն սոսկումը՝ ամենէն արդար բնազդն է մեր հոգիներուն: Մարդս, իր հոգեկան կառոյցին իսկ բերումով, կեանքին կը ձգտի, կը կառչի՛ ալ անոր...: Մահը, սակայն, անխուսափելի իրականութիւն մըն է, որուն ճակատագրուած ենք բոլորս անխտիր:

Բայց եղած են մարդիկ, մեծ հոգիներ, որոնք գլած, անցա՜ծ են այդ օրէնքի կաշկանդումի օղակները, մարդիկ որոնք Խորենացիի բառերով մահկանացու ծնած են, բայց յաջողած են իրենց գաղափարական աշխարհով, մատուցած ծառայութիւններով, կենդանի՛ կը մնան, ապրող մարդոց եւ յաջորդող սերունդներուն երախտագիտութեան մէջէն:

Ահա, նման անմահներէն եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ հայրապետը՝ Տ.Տ. Զարեհ Ա. կաթողիկոսը...:

Ահա ատոր համար ալ, տասնամեակը, որ կը փակուի, լեցուն եղաւ ի՛ր ալ հոգեղէն ներկայութեամբ, որով օրհնեց դեղեւկոտ քայլերը երիտասարդ նուիրեալներու, որոնք ուխտեցին իր ճամբուն հետեւիլ ու իր որդիները կոչուելու գերագոյն երջանկութիւնը ունենալ:

Տակաւին շա՜տ տարիներ պիտի գան ու անցնին: Ուրախ ու տրտում դրուագներով լեցուն տարիներ, ազգային եւ եկեղեցական շքեղ իրագործումներով լեցուն տարիներ: Բայց ինչ որ պիտի դիմանայ ժամանակի մաշումին, պիտի ըլլայ

կենսագրավէպը անձնդիր եւ քաջ հովիւին: Աննման ժպիտը Զարեհ Սքանչելիի: Անհուն բարութեամբ յորդուն սիրտը աննիւթական Վեհափառին:
Աննիւթական Վեհափառը. «Հայրենիք», Փետրուար 27, 1973

***

Աստուծոյ մեզի շնորհած գերագոյն պարգեւն է Հայոց Եկեղեցին: Հայ ժողովուրդը իր ազգային եկեղեցիին կը պարտի տասնեւհօթը դարերու քրիստոնէական քաղաքակրթութիւնն ու մշակոյթը՝ արտայայտութեան իր բոլոր երեսներով: Հայաստանեայց Եկեղեցին հարազատ մայրն է իր աւազանէն ծնած եւ իր սրբալոյս միւռոնով դրոշմուած բոլոր հայորդիներուն համար: Մեր ժողովուրդի գոյութեան ու յաւերժութեան խորհրդանիշն է ան, ապահով միջնաբերդն ու միաժամանակ խաղաղ նաւահանգիստը յատկապէս սփիւռքի ովկիանոսին մէջ վայրավատին ցրուած մեր ազգին զաւակներուն համար, գաղութներու միջեւ միութեան հասարակաց գետինը, եւ անսպառ գանձարանը մեր ժողովուրդի հոգեւոր եւ մշակութային ժառանգութեան:
Ողջոյնի Խօսք Մոնթրէալի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Օծման Առթիւ. Սեպտեմբեր 28, 1978

***

Մենք, ճնշուած եւ փոքրիկ ազգի մը զաւակներն ենք, բայց Աստուած մեզի տուած է գերագոյն պարգեւ մը - Հայոց Եկեղեցին: Եկեղեցին՝ իր կոչումին մէջ ընդհանրական է, առաքելական է եւ սուրբ: Եկեղեցին՝ հաւատքի տուն է, նախօրինակը գալիք թագաւորութեան: Բայց, այս բոլորին հետ միասին, Հայոց Եկեղեցին մեր ժողովուրդի տունն է, Հայ մշակոյթի եւ քաղաքակրթութեան օճախը, եւ հարազատ մայրը՝ իր աւազանէն ծնած հայորդիներուն, որոնք Հայ եկեղեցւոյ մէջ կը տեսնեն այն միակ հաստատութիւնը՝ որ դարերուն դիմացաւ: Կորսնցուցինք թագաւորութիւն, զօրք, ծիրանի, կորսնցուցինք երկիր եւ պատմութիւն, կորսնցուցինք մեր հազարաւոր տաճարները, ճարտարապետական սքանչելի կոթողները, բայց մնաց Հայոց Եկեղեցին իր Աստուածային հիմքով եւ բարոյական կառոյցով: Եւ նոյն այդ եկեղեցին է այսօր, զոր մեր ուսերուն շալկած իբրեւ մեր «Տապանակ Ուխտին», կը յառաջանանք դէպի լուսաւոր ապագայ, անոր մէջ դրած մեր հաւատքի սափորը, Հայութեան մանանան, եւ յոյսի ծաղկած գաւազանը:
Պէյսայտի Ս. Սարգիս Եկեղեցւոյ 20-Ամեակը. Ապրիլ 22, 1982

***

Հայ Հոգիի դիմադրականութեան վահանն է Հայ Եկեղեցին: Այդ ոգին ի յայտ եկաւ նախ՝ գրերու գիւտով, որ զօրավիգ եղաւ մեր գոյութեան, քանդելով մեր վրայ դրուած բոլոր շղթաները, մշակութային եւ հոգեկան գերութեան: Նման դիւցազներգութիւն մը տեղի կ՛ունենար շնորհիւ Հայ Եկեղեցւոյ, որ դարեր շարունակ թումբեր կազմած կը ջանար վառ պահել հայու հոգին եւ պահպանել ազգային սրբութիւնները: Ու, երբ ահաւոր ցնցումներէն յետոյ, թշնամին կը հեռանար մեր երկրէն, հայ հոգին անգամ մը եւս կը յառնէր Հայ Եկեղեցւոյ մէջէն, անգամ մը եւս վերակազմելու համար փշրուած հայրենիքը:

Ու հիմա, սփիւռքի մէջ, նոյն այդ եկեղեցին է որ կը շարունակէ ըլլալ միակ հաստատութիւնը, որ դիմացաւ դարերու փորձին: Միայն Հայ Եկեղեցին է, որ գաղութէ գաղութ, եւ դարերու վրայէն, միութեան օղակ է հայու բեկորներու միջեւ, հարազատ մօր նման պաշտպան իր զաւակներուն: Ու մենք, որդիաբար մօտենանք մեր մօր, եւ իբրեւ խնամատարները «փոքր ածուին» ապրեցնենք զայն մեր կեանքով եւ գործով: Զվիրաւորենք մեր մայրը, չտառապեցնենք զայն, այլ գուրգուրանք եւ սէր եւ նուիրում ունենանք Հայ Եկեղեցւոյ հանդէպ, որ կը հաւատանք, Հայոց ազգին ընծայուած Աստուածային գերագոյն պարգեւն է:

Հայ Եկեղեցին. Ազգային Երեսփոխանական ժողով, Բրաւիտընս, Մայիս 1987

***

Հին դարերուն, մեր թագաւորներն ու կաթողիկոսները, ազգին կեանքին մէջ անուն եւ հռչակ շահած անձնաւորութիւնները կոչուեր էին Մեծ, Լուսաւորիչ, Շինող, Երկաթ, Ողորմած, եւայլն...: 19-րդ դարուն, հայ ժողովուրդը իր տառապանքին եւ ստրկութեան մէջ, իր սրտէն փրցուց եւ Խրիմեանին տուաւ ամենէն մեծ անունը՝ - «Հայրիկ»: Մշոյ ժողովուրդին կողմէ տրուած այս կոչումը եղաւ ամենէն մեծ պատիւը՝ որ ստացաւ Վասպուրականի արծիւը, եւ նոյնիսկ Լուսաւորչի գահին վրայ, ան պահեց այդ տիտղոսը, իբրեւ ժողովուրդի անսխալ բնազդին ամենէն ճշգրիտ կոչումը: Հայոց Հայրիկ:

Ազգային Երեսփոխանական ժողով, Բրաւիտէնս, Մայիս 1987

***

Միւռոնօրհնէքի արարողութեան ընթացքին ժողովուրդը քանի մը յուզիչ պահեր ունեցաւ: Առաջինը, Գարեգին կաթողիկոս նոր միւռոնին խառնեց հին միւռոնը, եւ ըստ աւանդութեան այդ Միւռոնի մէջ կայ հիւլէ մը, մասնիկ մը այն Միւռոնէն, որ մեր հաւատոյ հայրը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ օրհնած էր, երբ հայոց դարձին ի քրիստոնէութիւն կը հովանաւորէր: Երկրորդ, Գարեգին կաթողիկոս նոր միւռոնին խառնեց նաեւ Ս. Էջմիածնէն բերուած Միւռոնը, իբրեւ խորհրդանիշը Հայ Եկեղեցւոյ միութեան անքակտելիութեան: Ու երբ վեհափառ հայրապետը «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգեցողութեամբ նոր Միւռոնին կը խառնէր Էջմիածնի Միւռոնը, ժողովուրդը խանդավառ ծափահարութիւններով իր համամտութիւնը, իր ուրախութիւնը յայտնեց այս խորհրդաւոր արարքին համար, որով այսքան գեղեցիկ ու պատկերալից կերպով կ՚արտայայտուէր Հայ Եկեղեցւոյ միասնականութիւնը:

Յուզիչ պահ մըն ալ եղաւ այն պահը, երբ Գարեգին կաթողիկոս նոր Միւռոնին խառնեց Անթիլիասի մէջ առաջին անգամ՝ 1936-ին օրհնուած Միւռոնէն սրուակ մը, եւ վեհափառը յիշեց թէ 1936-ին Անթիլիասի մէջ որբանոցային շէնքերն էին տակաւին որոնք կը տիրէին: Թարգմանչած փայտաշէն եկեղեցին կար, բոլոր շէնքերը փայտաշէն էին, թիթեղածածկ: Բայց որբանոցային այդ դրութեան մէջէն էր, որ Անթիլիասը ճառագայթեց, ծաւալեցաւ եւ հասաւ այսօրուան իր բարգաւաճ վիճակին: Եւ երբ իբրեւ մակարդ այդ օրերուն վեհափառը խառնեց առաջին Միւռոնը, ժողովուրդը երգեց «Երբոր բացուին դռներն յուսոյ, եւ մեր երկրէն փախ տայ ճմեռ»:

Քաղուած է «Միւռոնօրհնէք-1988» հարցազրոյցից՝ Անթիլիասում կայացած միւռոնօրհնէքի արարողութեան առիթով:

***

Օրհնութիւն Ձեզի, քանի դուք հաւատացիք՝ թէ Հայց. Եկեղեցին քաղցր եւ հարազատ հաստատութիւն մըն է՝ Աստուծոյ գերագոյն պարգեւը հայութեան:
Թէ Հայց. Եկեղեցին ոգի է, ոյժ է, լոյս է. եւ թէ անոր ջահակիրները՝ Լուսաւորիչ եւ Ներսէս, Սահակ եւ Մեսրոպ, Նարեկացի եւ Շնորհալի, Խրիմեան եւ Զարեհ Սքանչելի, «լուսաւորեցին մռայլը մեր պատմութեան, բացուելով անոր մութերուն վրայ եւ լուսաւորելով մեր պատմութեան ուղին»:

Եւ թէ Հայց. Եկեղեցին մեր տապանակ ուխտին է, ուր դրած ենք հայ հաւատքին մանանան, ոսկի սափորը հայ արուեստին, հայ գրչին, հայ ծէսին եւ

աղօթքին, գումարը այն հոգեկան եւ մտաւոր իրագործումներուն, որոնք հայ ուղին կը յատկանշեն Աստուծոյ մերձեցումին:

Եւ թէ Հայց. Եկեղեցին այն գերագոյն վայրն է՝ ուր հայը ինքզինք ամենէն աւելի հարազատ կը զգայ իր եղբայր հայուն:

Եւ վերջապէս, դուք գիտցաք, թէ Հայց. Եկեղեցին ամեն ինչ է հայու համար, եւ ատոր համար ալ ազգը ինքզինք նոյնացուցած էր եկեղեցիին հետ, եւ անոր աւազանէն ծնած եւ անոր Ս. Միւռոնով դրոշմուած հայը հաւատարիմ կը մնայ այն եկեղեցիին, որ կը դիմանայ ժամանակի փոշիին, թշնամիի աւերին, օտարութեան ցաւին, որովհետեւ «իր զանգակներն են բոմբիւն, եւ երգն է միշտ յաղթութիւն»:

Երանի Եկեղեցի Շինողաց. Գիր Օրհնութեան եւ Ողջունի. Ապրիլ 16, 1990, Նիւ Եորք

***

Լուսաւորչի տեսիլքին մէջէն մեր ժողովուրդը աւելի եւս կապուեցաւ Քրիստոսի, ինքզինք աւելի եւս նուիրեց Քրիստոսի լոյս հաւատքին, եւ այդ թուականէն սկսեալ, նոր ճամբաներ բացուեցան հայոց համար: Այս ժողովուրդը գիտցաւ, որ իրեն համար այլեւս մահ չկայ: Հայ ժողովուրդը իր հաւատքին, Էջմիածնի տեսիլքին եւ Ս. Լուսաւորիչի քարոզչութեան մէջէն տեսաւ, որ ինք այլեւս յաւերժի ճամբորդ է: Ճիշտ է, ամեն տեսակի ցաւ ու տագնապ, տառապանք եւ մահ, եկան ու եկան: Ամեն տեսակի վայրի ցեղեր եկան ու անցան, բայց հայ ժողովուրդը ապրեցաւ, որովհետեւ ունէր իր լոյս հաւատքը, ունէր իր եկեղեցին: Լուսաւորչի կազմակերպած եկեղեցին եղաւ այն կառոյցը, այն հաստատութիւնը, որ փրկեց ու պահպանեց մեր ժողովուրդը նոյնիսկ երբ եղաւ ժամանակ, երբ ջնջուեցան մեր ղեկավար դասը, իշխանաց դասը, ցրուեցաւ հայոց բանակը եւ առհասարակ կորսնցուցինք ամեն տեսակի ղեկավարութիւն: Բայց եկեղեցին պահեց մեր ժողովուրդը, ան միութիւն տուաւ մեր ժողովուրդին, տուաւ մէկ կրօն, գիր եւ գրականութիւն, այբուբեն եւ Աստուածաշունչ, տուաւ երաժշտութիւն, արուեստ եւ ճարտարապետութիւն, ի մի խօսք՝ տուաւ Աստուծոյ մօտենալու հայ կերպը, հայեցի կերպը: Հայ Եկեղեցին եղաւ ո՛չ միայն շաղախիչ ոյժ, միութեան ազդակ, հայ ժողովուրդը միաւորող օրգանիզմ, այլ նաեւ դարձաւ պահապանը հայութեան, նոյնիսկ երբոր անոր զաւակները ստիպուեցան թափառիլ աշխարհէ-աշխար, երկրէ-երկիր: Եւ ուր որ ալ եղան հայերը՝ Լեհաստան թէ Հունգարիա, ուրիշ ասիական եւ եւրոպական երկիրներ՝ այնքան ատեն, որ հաւատարիմ մնացին Լուսաւորչին, այնքան ատեն, որ հաւատարիմ մնացին Հայ Եկեղեցիին, չկորսուեցան Հայութեան համար, այլ մնացին մի՛շտ Հայ: Ա՛յս է Հայ Եկեղեցիին ուժը, ա՛յս է Լուսաւորչի

կազմակերպած եկեղեցիին ուժը, որ դարերու մէջէն միացուցած է եւ այսօր ալ կը միացնէ եւ կը պահպանէ մեր ժողովուրդը:

Սուրբ Լուսաւորչի Տեսիլքով. Խօսուած Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ, 20 Մարտ 1994

***

Որքան դիւրին է մեռնիլը ու որքան... դժուար: Հիմա կ՛անդրադառնամ թէ ի՛նչ փորձանքէ անցեր եմ: Բայց փառք, հազար փառք Աստուծոյ, որ նոր կեանք տուաւ ինծի, առիթ տուաւ ինծի, որ իմ հայ հոգեւորականի երազներուս իրականացման ճամբուն վրայ աչքերս ետ չմնան: Շնորհակալ եմ քեզի, Տէր Աստուած, այս երջանիկ բարեբաղդութեան համար, եւ կը յուսամ որ ամօթով չեմ մնար եւ ինծի շնորհուած կեանքի օրերուն մէջ աւելի մօտ կ՛ըլլամ քեզի, աւելի հաւատարիմ կը մնամ Քու Որդւոյդ սիրոյ աւետարանին քարոզութեան եւ իբրեւ հովիւ՝ տէր կ՛ըլլամ ինծի յանձնուած Աստուծոյ ժողովուրդին:

Դարձեալ հազար փառք Աստուծոյ: Մանաւանդ երբ կը մտածեմ թէ գործերս կրնային կիսատ մնալ...: Ճիշտ է, ըսելու ձեւ է, եւ կը յիշեմ հոգելոյս Խորէն Ա կաթողիկոսի խօսքը. «Ոչ ոք անփոխարինելի է», բայց եւ այնպէս՝ կը մտածեմ թէ ի՞նչ պիտի ըլլան Առաջնորդարանի Հայաստանի յայտագիրները, 900 որբերը, 2300 ծերունիները...: Թալիշ գիւղի նորոգութիւնը յանձն առեր էինք-տուն, դպրոց, եկեղեցի, ջրատար խողովակ, եւն., եւն.: Դեռ նոր հիմներ էինք «Հայաստանի ընութեան բարեկամներու ընկերակցութիւնը» նպատակ ունենալով օգնել Խոսրովի անտառին, Հայաստանի կենդանական աշխարհին եւ վաղուան սերունդներուն յանձնել մեր սերունդին հասած սրբազան աւանդը: Դեռ չէ հրապարակուած մանկութեանս հերոսներէն՝ Արամ Մանուկեանի տուն-թանգարանի ծրագիրը: Ո՞ր մէկը ըսեմ: Հապա՞ Առաջնորդարանի յայտագիրները, Ս. Գրիգոր Տաթեւացին, ամառնային միամսեայ դպրոցը Դիլիջանի մէջ, մեր երիտասարդներուն ծառայութիւնը, նորակառոյց եկեղեցիներն ու անոնց պարտքերը, Ս. Լուսաւորիչ ամենօրեայ դպրոցի ծրագիրը, «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան ծրագիրները: Տէր Աստուած, շնորհակալ եմ, որ առիթ տուիր որ այս բոլորին կարենամ ետ դառնալ եւ կրցածիս չափ օգտակար ըլլալ ազգիս եւ եկեղեցիիս: Ուրիշ բան չեմ խնդրեր. ամեն բանէ գոհ եմ, ամեն ժամանակէ աւելի երջանիկ եմ: Երջանիկ եմ մանաւանդ հիմա, որ գիտեմ թէ քանի-քանի հոգիներ աղօթեցին ինծի համար, ոյժ եւ կորով ներշնչեցին ինծի, աւելի եւս զօրացուցին սիրտս:

Անգամ մը եւս զգացի, որ մեր ժողովուրդը կը սիրէ իր եկեղեցին եւ հոգեւորականները: Կրնայ չաղօթել, կրնայ եկեղեցի չերթալ, կրնայ ամեն ձեւով

անտարբեր ձեւանալ, բայց միսթիք կապ մը կայ հայ ժողովուրդին եւ իր եկեղեցիին եւ եկեղեցականներուն միջեւ: Յարգը գիտնանք այս խորհուրդին եւ մի՛շտ արժանի ըլլանք այդ արտակարգ հոգեւոր վստահութեան:

Սրտի Խօսք՝ Փարիզի Հիւանդանոցէն Իր Թեմի Հոգեւորականներուն. Փետրուար 20, 1995 Պլինյի

***

Կիլիկիոյ Աթոռը հերձուած մը չէ, պարագայօրէն չէ ստեղծուած, 1956-ին չէ հիմնուած, ընդհակառակն՝ Հայ Եկեղեցւոյ պատմութեան բնական արգասիքն է եղած եւ Մայր Աթոռը որ տեղափոխուած էր երկրէ երկիր՝ դէթ 5-րդ դարէն սկսեալ, 1293-էն ի վեր կը գտնուէր Սիս մայրաքաղաքին մէջ, եւ 1441-էն ի վեր կը բաժնէր Հայ Եկեղեցւոյ ղեկավարութիւնը, Ս. Էջմիածնայ մէջ ընտրուած նոր Ամենայն Հայոց կաթողիկոսով:

Կիլիկիոյ Աթոռը, իր անունով իսկ, տապանակն է պատմական Կիլիկիոյ եւ աւելի լայն կարկինով՝ Արեւմտեան Հայաստանին, այսինքն՝ մեր կորսնցուցած հայրենիքին, որով օրինաւոր եւ բարոյական ժառանգն ու տէրը մեր հայրերուն սրբազան հողին:

Կիլիկիոյ Կաթողիկոսական Ընտրութիւնը. Յունիս 1995

***

Պատմութիւնը համբերող է եւ իր օրուան եւ յաղթանակին կը սպասէ: Վստահ ենք, որ մօտիկ տարիներուն պիտի գայ օրը, երբ «Մէկ Հայրապետութիւն» յղացքը իրականութիւն պիտի դառնայ մեր ազգին համար. բայց ասիկա պիտի ըլլայ բնականօրէն, հեզասահ կերպով եւ բարի ոգիով, եւ ո՛չ թէ Աթոռ մը խափանելու փութկոտութեամբ եւ կամ հատուածական հաշիւներով: Ի վերջոյ որեւէ անձի չէ վերապահուած Աթոռի մը ճակատագրին հետ խաղալ ըստ կամս:

Առաջնորդական Պատգամ Ազգային Երեսփոխանական Ժողովին. 10 Մայիս 1995, Մոնրէալ

***

Ես կը հաւատամ սակայն, որ Հայոց Եկեղեցին դարերու ընթացքին ո՛չ միայն եղաւ ծնողը Հայ Մշակոյթին, այլ նաեւ ներշնչողը, հովանաւորողն ու զարգացնողը միանգամայն: Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ

առաքելութիւնը վերջ չէ գտած տակաւին: Եթէ չունի իր անցեալի թափն ու տարողութիւնը եւ շեշտը, սակայն կը շարունակէ իր դերը անխափան՝ յատկապէս սփիւռքի մէջ: Եւ Հայ Եկեղեցին կը մնայ խորհրդանշանը հայութեան յաւերժ գոյատեւման:

Առաջնորդական Պատգամ Ազգային Երեսփոխանական Ժողովին. 19 Մայիս 1996, Նիւ Ճըրզի

***

Բակին մէջ եմ, մայր տաճարի դռնէն քանի մը քայլ անդին յանկարծ ձայն մը կը լսեմ. «Հրա՛յր»: Կը դառնամ: Ինքն է: Զարեհ Վեհափառը: Ինք չի գիտեր, որ իրեն համար 1956-ին կռուեր եմ, ցոյցերու մասնակցեր եմ, ընտրութեան օրը՝ ժամը չորսին Ս. Նշանէն Լիպոյին հետ հեւիհեւ վանք հասեր եմ, զինք պաշտեր եմ իբրեւ Կաթողիկոս, ինք չի գիտեր. ուրկէ՞ պիտի գիտնար: Բայց հիմա զիս կը ճանչնա՛յ...անուանս գիտէ, ինծի Հրայր կանչեց:

Մօտեցայ, լսեցի եւ կատարեցի իր պատգամը: Տարիներու պատրաստութիւնս իբրեւ պզտիկ լուսարար, արդիւնք տուեր էր: Խոնարհ հերոսը, որ Ս. Նշանի լուսարարն էր, Պրն. Հայրապետը իր դասերը լա՛ւ էր տուեր ինծի: Եւ հիմա, Զարեհ Կաթողիկոս այդ պզտիկ լուսարարին թելադրութիւններ կ՚ընէր Աւագ Ուրբաթ օրուան ծիսական կարգադրութեանց համար:

Հինգ տարիներ յետոյ Զարեհ Վեհափառ վախճանեցաւ ու երկնքի մէջ է ան հիմա: Երանի այն օրուան, երբ, մեղա՛յ Տէր յաւակնութեանս համար, երկնքի մէջ տեղ մը Վեհափառը զիս պիտի տեսնէ ու կանչէ «Հրայր», կամ ալ գուցէ «Հայր Մեսրոպ!», երկնքի մէջ ալ երջանկագոյններէն մին պիտի ըլլամ ես:

Պատմութիւն Խոնարհ Հերոսի Մը, Իր Պզտիկ Լուսարարին Եւ Այն Օրերուն Մասին. 31 Յուլիս 1996 KLM, Թռիչք 643

***

Գերեզմանատունները ինծի անծանօթ չեն, չեմ ալ խորշիր այնտեղերը երթալէն: Մանուկ օրերուս, երբ Պէյրութի Ս. Նշան եկեղեցին դպիր էի, մոմ կը բռնէինք եւ Ս. Նշանէն մինչեւ Ֆրըն Շըպպէքի հայոց գերեզմանատունը կ՚երթայինք թափօրով: Մէկ երկու շաբաթը անգամ մը կը պատահէր: Երբոր մեծցայ, ո՛ւր որ գացեր եմ, երբոր առիթ ունեցեր եմ, տուեալ քաղաքի գերեզմանատունը այցելեր եմ, տեսեր եմ Երեւանի Թոխմախ Գէօլը, Ժընեւի, Բարիզի Հայոց գերեզմանատունները, Ֆրէզնոյի Արարատը, Հոլիվուտի Ֆօրըսթ

Լօն գերեզմանոցը: Այո, մինչեւ Մալեզիա ալ գացեր եմ, Մալաքայի անկլիգաններու եկեղեցւոյ ատեանին մէջ թաղուած հայ տղու մը գերեզմանը այցելելու: Ձեւով մը իմ յարգանքի տուրքս վճարած եմ մեռելներուս յիշատակին, որովհետեւ գիտակցութեան տարիքին հասնելէս ի վեր, ականջիս հնչած է Զարեհ կաթողիկոսի մէկ խօսքը. «Հոմ կործանեցաւ, երբ մոռցաւ իր մեռելները յարգել»: Եւ կամ յիշելով այն միւս խօսքը զոր ամեն տարի, Ապրիլ 24-ին կը փորձուինք ըսել, «մեր մեռելները կը մեռնին, երբոր իրենց երազը կը մեռնի»:

Գերեզմանատուն Մը Ամերիկայի Մէջ. 15 Յունիս 1996, Փարիզ

***

Մենք հին ժողովուրդ ենք, եւ մեր լեզուին մէջ ունէինք այնքա՜ն բառեր, որոնք ծնած են մէկ բառէն-ուխտաւոր, ուխտական, ուխտասէր, ուխտանուէր, ուխտատուն...:

Ուխտը դաշինք է, խոստում է, ուխտը նաեւ ճամբորդութիւն է հաւատքի ճամբուն վրայ:

Աբրահամ Նահապետ առաջին ուխտաւորն էր, որ Քանանու երկրէն եկաւ Աւետեաց երկիր: Ուխտաւոր էին տաճար այցելողները, իւղաբեր կիները եւ ուխտաւոր եղան առաջին քրիստոնեաները, որոնք կու գային Սուրբ Երկիր համբուրելու համար քրիստոսակոխ երկիրը եւ կ՚այցելէին Երուսաղէմ, Բեթղեհեմ, Յորդանան: Յետոյ ուխտաւոր եղան անոնք՝ որոնք ուխտի գացին մարտիրոսներու եւ նահատակներու գերեզմաններուն, եկեղեցի շինեցին, տաճար կառուցին, եւ սրբավայրեր հաստատուեցան: Հայերս ալ ահա ունեցանք մե՛ր սրբավայրերը՝ Ս. Թադէն եւ Ս. Բարթուղիմէոսը, Վարագը, Մշոյ Ս. Կարապետը, Գեղարդը, Նարեկավանքը, Հաճկատարը:

Քարոզ Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով, Հաճկատարի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Օգոստոս 17, 1997թ., Սուչավա

***

Տասը օրէն մեծ երազի ճամբուն վրայ, Հաւաւ պիտի երթամ, պիտի փնտռեմ Սարգիս Գասապեանի տունը, եւ պիտի ըսեմ ես ինծի, իմ հայրերուս յաջորդ սերունդներուն, որ տարագիր սարգիսներու ժառանգորդներն ենք մենք, անոնց ծնած հողին ղուրպան, անոնց հողին համար պայքարող: Ասո՜ր Հայ Դատ կ՚ըսէք, ըսէ՛ք, հայապահպանում կ՚ըսէք, ըսէ՛ք: Հայ ժողովուրդի իրաւունքներու անժամանցելիութիւն կ՚ըսէք, ըսէ՛ք: Ինծի համար ալ զգացումը

քաղաքականութիւն չէ, լինելութիւն է, եւ նահատակներուն կտակը անփոխարինելի է եւ անսակարկելի:

Սիրելի ժողովականներ,

Ներեցէք, որ քիչ մը անձնական եղայ եւ զգացական պահու մը մէջ՝ խօսեցայ քաղաքի մը մասին, ուր իմ մեծ հայրս իր մահը գտած էր, եւ այսօր, ութսուն տարի յետոյ կը յիշեմ զինք եւ կը տեսնեմ զինք իբրեւ զոհը հայ ժողովուրդի ցեղասպանութեան, որուն մէկ զոհն ալ ես եմ, դուք էք, սփիւռքահայերս ենք, աշխարհով մէկ ցրուած հողակորոյս հայերս ենք, մինչ անդին՝ հայազուրկ հողը կը սպասէ, կը սպասէ իր տիրոջ եւ կը հաւատայ՝ որ իր տէրը պիտի գայ: Բայց արդեօք տէրը կը յիշէ՞ իր հողը:

Եւ ա՛յս է մեր ողբերգութիւնը, սիրելի բարեկամներ, մեր ժողովուրդի ողբերգութիւնը, մեր եկեղեցիի ողբերգութիւնը, մեր բոլորին ողբերգութիւնը:
Եւ ասոր համար ալ չէ՞, որ մենք կը պայքարինք իբրեւ ազգ եւ եկեղեցի, իբրեւ Հայ Եկեղեցի, իբրեւ հայ եկեղեցական: Եւ ասկէ՛ ալ կը բխի մեր առաքելութիւնը այս երկրին մէջ:

Ես քսան տարի այդ առաքելութեան հաւատարիմ մնացի եւ ջանացի իմ կեանքս եւ ծառայութեանս տարածել հետեւեալ ճակատներուն վրայ՝

- *Ճանչնալա Հայ Եկեղեցին, ճանչցնել Հայ Եկեղեցին*
- *Տէր կանգնիլ Հայոց լեզուին*
- *Հաւատարիմ մշակ ըլլալ Հայ դարաւոր մշակոյթին*

Այլ խօսքով՝ երեք սէր ունենալ կեանքին մէջ, Աստուծոյ սէրը, քեզ ծնող ազգին սէրը, քեզ մարդկայնացնող մշակոյթին սէրը: Քսան տարի շարունակ այս բեմէն, ա՛յս ճշմարտութիւնները հռչակեցի, ա՛յս հաւատարմութիւններուն կառչեցայ եւ իմ ամբողջ սրտով, էութեամբ եղայ Հայ եկեղեցական:
Առաջնորդական Պատգամ Ազգային Երեսփոխանական Ժողովին, 14 Մայիս 1997, Բրաւիտէնս

***

Երանի թէ ազգովին գիտակից ըլլանք Հայ Երուսաղէմի անկրկնելի արժէքին եւ այդ հրաշք իրականութեան մէջ տեսնենք ոչ միայն մեր անցեալի փառքը, այլ նաեւ հաւատքը, եւ այնպէս ընենք՝ որ վաղուան սերունդներուն ժառանգ թողունք մեր հայրերուն մեզի ժառանգ թողած Հայ Երուսաղէմը:
Երուսաղէմ Եւ Ուրիշ Տեղեր. 1 Նոյեմբեր 1997, Թորոնթօ

***

Բանը միայն շատ եկեղեցիներ կառուցելու մէջ չէ, մենք միշտ եկեղեցիներ կառուցել ենք: Բայց շէնքը ի վերջոյ շէնք է: Իմ փափաքն է հոգեւոր եկեղեցին, մարդոց եկեղեցին կառուցել, մարդն ինքը եկեղեցի պիտի լինի, որովհետեւ ի վերջոյ եկեղեցին «ժողովք հաւատացելոց է», յետոյ նոր միայն շէնքը, նոր միայն կազմակերպութիւն, եկեղեցի եւ այլն: Առաջին խնդիրն այն է, որ Քրիստոսի սիրոյ եւ կրօնի հետեւորդը լինենք, հետեւենք նրան, ով ասաց «Ես եմ լոյսը, ես եմ ճանապարհը, ես եմ կենդանի հացը»: Այն ատեն միայն, կը խորհիմ, երբ եկեղեցին ներթափանցի ժողովրդի մէջ, նոր կեանք կը տայ նրան:

Մեր Եկեղեցին Պիտի չնչի Կենդանի Հաւատքով, «Շողակն», Նոյեմբեր 1997

***

1700-ամեակին առաջին, հնչեղ եւ հոգեւոր արտայայտութիւններէն մին է Ուխտաւորութեան գաղափարին եւ զարգացումին վերածնունդը մեր մէջ: Մենք հին ժողովուրդ ենք, ուխտաւոր ժողովուրդ ենք, ուխտատեղիներ ունեցած ենք: Մեր ուխտատեղիներէն շատերը այսօր քանդուած են, բայց մեր հոգիներուն մէջ անթեղուած էր ուխտաւորութեան ապրումը: Մեզի մնացած են ուխտագնացութեան երգեր եւ հայերէնի մեր բառամթերքին մէջ, երկար է շարքը ուխտի բառերուն - ուխտ եւ ուխտադիր, ուխտադրութիւն, ուխտապահ, ուխտասէր, ուխտանուէր, ուխտատուն, ուխտաւոր եւ ուխտընկալ... ուխտաւոր բառը մեր հայ էութեան արմատն է... եւ ահա 1700ամեակի նախաձեռնութեանց մէջ՝ Աստուածածնայ տօնէն սկսեալ եւ մինչեւ 2001 թուականը Ս. Էջմիածնի տօնը եւ անդին, պիտի քալենք սփիւռքահայ մեր ուխտավայրերէն մինչեւ երկիր հայրենի: Սուչավայի վանքէն մինչեւ Անեցիներու Կաֆան, Քրիստոսի Ս. Երկրէն եւ Սսոյ տարագիր Աթոռէն մինչեւ Գանձասար, Տէր Զօրի անապատէն մինչեւ Խոր Վիրապ եւ Ս. Էջմիածին:

Այս է մեր բոլորի ճամբան:

Բայց ո՞վ է ուխտաւորը, ի՞նչ է ուխտագնացութիւնը, ո՞ւր է ուխտավայրը: Ուտը դաշինք է, երդում է, խոստում է, յանձնառութիւն է, տառապանք է, յաղթանակի եւ նուաճումի ուրախութիւն է:

Մա՜րդն է սակայն, ուխտաւորը: Եւ ուխտաւորութիւնը մարդուն կարողութիւնն է տեղափոխուելու, անկախ կերպով յառաջանալու: Ուխտագնացութիւնը մարդուն իրաւունքն է, առանձնաշնորհումն է, որովհետեւ Ուխտաւորութիւնը, ինք, գիտակցական քայլ մըն է:

Նախամարդը սնունդի ապահովման համար կը քալէր: Այսօր ալ մարդը կը քալէ, կը քալէ երբեմն առանց մտածելու, կը քալէ դէպի իր աշխատանքի վայրը,

դէպի իր հաճոյքը: Երբեմն աննպատակ կերպով կը քալէ, երբեմն առօրեային տաղտուկը բեկանելու համար կը քալէ: Կը քալէ՝ ուրի՛շ բան մը գտնելու համար, նո՛րը գտնելու համար իր անձին մէջ, ինքզինք վերանորոգելու համար կը քալէ, ինքզինք գերազանցելու համար կը քալէ: Այս բոլորը՝ ճամբորդութիւն է: Բայց՝ երբ այս ճամբորդութիւնը կը կատարուի ինքզինք գերազանցելու համար, յաւելեալ մղոնը քալելու համար, ատիկա կը դառնայ ուխտ: Երբ ուխտաւոր ես, այլեւս քու քալելդ ճամբորդութիւն չէ, ուխտագնացութիւն է: Ուխտաւորը կը մեկնի տեղէ մը, աւելի ցանկալի տեղ մը հասնելու համար եւ երբ ֆիզիքական ճամբորդութեան կը միանայ ներքին ճամբորդութիւն մը, ատիկա կ՛ըլլայ հոգեւոր ուղեւորութիւն մը:

Քրիստոնեան յարաշարժ այն մարդն է, որ գիտէ, թէ իր վիճակը այս աշխարհին մէջ չի բովանդակուիր, եւ թէ իր ճամբան՝ եկեղեցւոյ մէջէն ճամբորդութիւն մըն է դէպի երկնային քաղաքը, երկնային Երուսաղէմը:

1700 Ամեակը Իմաստալից Ճանապարհ. Հարցազրոյց, Երեւան

***

Նոր աւետարանչութիւն պէտք է, ինչպէս Լուսաւորչի օրով, սուրբ Մեսրոպի օրով, երբ աւետարանչական իսկական շարժում մը սկսաւ Հայաստանի մէջ: Այդ ժամանակ իրենք գիտէին, որ Աւետարանը պէտք է ժողովուրդին հասցուի: Ժողովուրդի լեզուով ալ թարգմանեցի Սուրբ Գիրքը: Հիմա մենք կը սպասենք, որ ժողովուրդը դայ, որովհետեւ եկեղեցի ենք, Հայաստանեայց Եկեղեցի ենք: Իսկ աղանդները կ՛երթան դէպի ժողովուրդը: Մե՛նք պիտի երթանք դէպի ժողովուրդը եւ բացատրենք ծայրէ ծայր՝ խաչակնքելէն սկսած, ամեն տարրական բաներէն սկսած, թէ ի՞նչ է Մկրտութիւնը, որ Մկրտութիւնը խրախճանքի առիթ չէ, Մկրտութիւնը խորհուրդ ունի, երբ Սուրբ Միւռոնը ճակատին կը տպուի, մկրտուողին մէջ փոփոխութիւն մը կ՛առաջանայ, բայց ի՞նչ փոփոխութիւն, պիտի բացատրուի:

«Հաւատս Զօրաւոր է Հայաստանի Հանդէպ». Երեւան

***

Այսօր ժողովուրդը տեսակ մը հեռացած է եկեղեցւոյ ըմբռնումէն կամ եկեղեցին մարդոց ամենօրեայ կեանքին մէջ չունի այն տեղը, որ ունէր նախկին դարերուն, երբ ամբողջ մթնոլորտը յագեցած էր քրիստոնէական կրօնի սկզբունքներով, երբ մարդիկ հաւատք ունէին Քրիստոսի անմահութեան հանդէպ: Եւ այդ հաւատքն էր, որ մեր ժողովուրդին ներշնչած էր անմահութեան

գաղափարը: Մեր հայրերը, ո՛ր սարի կատարին ու անտառներու մէջ կառուցեր են եկեղեցիներ ու վանքեր, միայն արուեստի, միայն որպէս պատմական յուշարձաններ չեն կառուցած: Առաջին հերթին ատոնք հաւատքի արտայայտութիւն են...եթէ կ՛ուզենք, որ եկեղեցին ժամանակի հետ քայլ պահէ, եթէ կ՛ուզենք, որ եկեղեցին մեր ժողովուրդի կեանքին մէջ դեր ունենայ՝ առաջին հերթին պիտի մտածենք մարդոց՝ հաւատքի իսկական տարածողներու պատրաստութեան մասին, որոնք կարենան ժողովուրդին հասցնել ոչ թէ կրօնի արտաքին, ծիսական դրսեւորումները, այլ բացատրեն Քրիստոսի Աւետարանի էութիւնը, անոր պատուիրաններու բուն իմաստը, որոնց միջոցով բարձր բարոյական գաղափարներ ու չափանիշներ ներշնչեն մարդոց եւ մարդը դաւաճանած չըլլայ Աստուծոյ պատկերին, որուն նմանութեամբ ստեղծուած է ինք:
Հայաստանն Իմ Գործունէութեան Առանցքն է, Բնօրրան

***

Գարեգին Վեհափառը շարքային հոգեւորական մը չէր: Յստակ, կաղապարուող, կաղապարեալ անձ մը չէր: Արթուն էր, խելացի, հեռատես, ճկուն, պատմութեան խոր զգացողութեան տէր էր եւ մարգարէաշունչ անձ, որ կրնար ժամանակներու նշանները կարդալ եւ ըստ այնմ նաւարկել իրեն յանձնուած նաւը եւ զայն հասցնել անքոյթ նաւահանգիստ: Ինք ամբողջականութեան հաւատացող էր, բաժանումի հաւատացող չէր: Ուր որ եղաւ, ձգտեցաւ դէպի միասնականութիւն, դէպի միաւորում, մէկ Ազգ, մէկ Եկեղեցի, մէկ մշակոյթ, մէկ ապագայ կարգախօսով առաջնորդուող մարդ: Իր Առաջնորդութեան տարիներուն, պիտի ըսել, որ թեմը օգտուեցաւ բազմաթիւ մակարդակներու վրայ: Նախ եկեղեցական տեսակէտէն ունեցաւ զօրեղ Առաջնորդ մը, եւ Առաջնորդ մը, որ իր աստուածատուր շնորհները ի գործ դրաւ թեմին զարգացումին եւ բարգաւաճումին համար: Ուր որ գնաց՝ ամբոխները շարժեց, որ քաղաքը, որ այցելեց, այդ քաղաքին մէջ Կիլիկիոյ թեմի ժողովուրդին նոր հպարտութիւն, նոր դիմագծութիւն տուաւ, եւ այդ եկեղեցին ինքզինք աւելի զօրաւոր զգաց Գարեգին Սրբազանի ներկայութեան եւ անոր առաջնորդութեան ներքեւ:... Ի ծնէ ղեկավար էր, ի ծնէ առաջնորդ էր, երբեք հետեւող չէր, որովհետեւ մտածում ունէր, կեցուածք եւ քաղաքականութիւն ունէր: Եւ այս բոլորը իրագործելու համար նաեւ վարչագէտ, դիւանագէտ, շատ ճկուն անձնաւորութիւն էր: Երբեք փակ դռան առջեւ չէր կանգնեցներ որեւէ մէկ մարդ եւ կամ դռներ չէր փակէր ոեւէ մէկուն դիմաց: Միշտ փոխզիջումի մը պատրաստ կրնար ըլլալ: Երբեմն կրնայինք նեղանալ թէ ինչո՞ւ փոխզիջումի գնաց, բայց ի վերջոյ կ՛անդրադառնայինք, որ ազգի գերագոյն շահերուն համար անհրաժեշտ էր

եւ ինք այդ քայլը պէտք էր առներ: Ինքը չոր սկզբունքայնութեան զոհ չէր երթար եւ կը հաւատար, որ շաբաթը մարդու համար եղաւ, մարդը շաբաթի համար չստեղծուեցաւ: Ասիկա ոմանց համար թերեւս տարբեր ձեւով կամ տարբեր չափով կ՚ընկալուի, բայց իր պարագային, այժմ արդէն, ժամանակի որոշ հեռաւորութենէ մը կը խորհինք, որ իր առաւելութիւններէն մէկն էր: Դիւանագէտ էր եւ լեզուներու իմացութիւնը եւ մարդոց մօտենալու, մարդոց հետ խօսելու, մարդոց հետ վերաբերուելու իր վարուելակերպը զինք կը դարձնեն հմայիչ անձնաւորութիւն մը եւ ամեն անգամ որ մէկը այցելէր իրեն, գիտէինք որ ան զինաթափ դուրս պիտի ելլէր, որքան որ ալ պատրաստուած ըլլար, տրամադրուած ըլլար այս կամ այն դիրքորոշումը ունենալու եւ կամ այդ դիրքորոշումը պաշտպանելու համար: Գիտէինք, որ Գարեգին Սրբազանին գրասենեակ մուտքէն յետոյ անիկա պիտի փոխուէր, աւելի ընդունելի հոգեբանութիւն պիտի ունենար եւ հարցերը տարբեր ձեւով պիտի ընկալէր:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

***

Առաջինը՝ ինքը, Աստուածաշունչ մատեանն իսկ է: Գիրքերու գիրքը: Գիրքը, Աստուծոյ խօսքը: Բայց եթէ բոլոր ժողովուրդներու համար ատիկա Սուրբ Գիրքն էր, Biblia Sacra-ն էր, մեզի համար, մեզի, Հայոցս համար Աստուածաշունչն էր: Պօղոս Առաքեալ զայն գործածած էր պարագայաբար, մենք Սուրբ Գիրքը կոչեցինք Աստուածաշունչ, եւ հաստատենք, որ Աստուծոյ շունչը կը փչէ անոր էջերէն եւ կենդանութիւն կու տայ մեզի:

Երկրորդ՝ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքն է, ճիշտ է, բայց միաժամանակ հաւաքական մտածումի, ապրումի, ներշնչումի, բարոյականի աղբիւր էր, մշակոյթի աղբիւր էր, գրականութեան աղբիւր էր եւ բոլոր այն ժողովուրդները, որոնք ունէին իրենց յատուկ մշակոյթը, կը պարտէին Աստուածաշունչին:

Երրորդ, Հայութեան համար Աստուածաշունչի թարգմանութիւնը ունեցաւ անհամեմատ մեծ կարեւորութիւն՝ կրօնական, մտքի, հայերէն լեզուի կազմութեան եւ մեր ժողովուրդի բարոյական կեանքին վրայ ունեցած առաջնային ազդեցութեամբ:

1500-Ամեակէն 1700-Ամեակ. Խօսուած «Աստուածաշնչեան Հայաստան» գիտաժողովին առիթով

***

Ահա՛ մնացող գիրը՝ Աստուածաշունչ մատեանը, դարերու ընդմէջէն մեզի կը բերէ լուսեղէն պատմութիւններ, կը բերէ Քրիստոսի Սուրբ Աւետարանը: Ինչ որ մենք կ՛ընենք իբրեւ եկեղեցի, իբրեւ ազգ, իբրեւ հաւաքականութիւն, հիմնուած է Աստուածաշունչի պատգամին վրայ: Մեր պատմութիւնն ու մշակոյթը քրիստոնէական են, ուրեմն նաեւ Աստուածաշնչական: Աշխարհի միակ ժողովուրդն ենք, որ կը գործածենք «Աստուածաշունչ» բառը: Ուրիշ ազգեր Սուրբ Գիրք, Պիպլիա կ՛ըսեն: Մենք Պօղոս Առաքեալէն առած ենք «Աստուածաշունչ» արտայայտութիւնը, մէջը դրած մեր առանձնայատուկ մօտեցումը: Եւ այսօր Աստուծոյ շունչը նորէն պիտի թեւածէ Հայաստանի, Հայ պետութեան մէջ, իմաստաւորէ մեր կեանքը, մեր օրերը լիցքաւորէ, ծաղկի մեր մանուկներու շուրթերուն վրայ:

Աստուծոյ շունչը՝ Օշականից Մայիս-Յունիս 1999

***

Քրիստոնէութեան մուտքը հոգեւոր յեղափոխութիւն էր, որին յաջորդեց Վարդանանց՝ զէնքի յեղափոխութիւնը: Մեր եկեղեցու ամենասուրբ անձինք եղել են նաեւ Հայրենիքի նուիրեալ գործիչներ: Խնդրեմ, նայէք մեր պատմութեանը: Ներսէս Շինողը, որ հրաշալի կաթողիկոս էր, դարձաւ նաեւ քաղաքական գործիչ, հայրենիքի համար մաքառող անձ: Կոմիտաս կաթողիկոսը, Յովհան Օձնեցին ժողովրդի փրկութեան համար հասան Դամասկոս: Սահակ հայրապետը, ցաւոք, Դամասկոսում էլ մահացաւ, բայց երբ Բուղան մօտեցաւ նրան, մեռած կաթողիկոսի ձեռքից խնդրագիրը բարձրացաւ իրեն:

Սա ցոյց է տալիս, որ Հայոց կաթողիկոսը նոյնիսկ մեռած ժամանակ է ձգտում իր ժողովրդի տառապանքը մեղմել: Մեզ համար տխուր եղաւ յատկապէս 20-րդ դարը, նախ տեղի ունեցաւ Եղեռնը, յետոյ Արեւելեան Հայաստանի հոգեւորականների ջարդը:

Հիմա նոր ենք մեզ գտնում, քարոզ ծաւալում, հոգեւոր կադրեր պատրաստում: Մինչեւ 1990թ. Էջմիածնի ճեմարանը հազիւ 34 աշակերտ պահելու իրաւունք ունէր: Հիմա այստեղ սովորում է 100-120 երիտասարդ: Շատերը հոգեւոր կրթութիւն են ստանում Սեւանի Վազգէնեան դպրեվանքում, Լիբանանում, Երուսաղէմում, Պոլսում եւ այլուր: Առանց հոգեւորականների եկեղեցին չի նորոգուի, ազգի չի վերածնուի:

Որ Ծնուի Նոր Հայը, «Միհր» 12, 2001թ.

***

1700 ամեակի առիթով ես ուրիշ փափաք չունեմ, քան այն որ մենք վերստին ծնունենք Քրիստոսով, վերստին մկրտուենք ու Հայ Քրիստոնեայ դառնանք: Մենք առաջին քրիստոնեայ պետութիւնն ենք՝ 1700-ամեակ պիտի նշենք, բայց յետոյ ի՞նչ, կարո՞ղ ենք ասել, որ արժանի ենք Գրիգոր Լուսաւորչին, քրիստոնեայ կոչուելուն: Ինձնից սկսած իբրեւ հոգեւորական՝ կարո՞ղ ենք ձեռքներս խղճերիս վրայ դնել ու ասել՝ ես Լուսաւորչի, Սահակի, Մեսրոպի հաւատարիմ զաւակն եմ, Քրիստոսի լոյս հաւատքն իմն է: Չէ՛, չենք կարող: Եթէ լուրջ փոփոխութիւն չլինի, յոբելեանները նշելը ի զուր է: Մաղթում եմ, որ 1700-ամեակը լինի այնպէս ոգեշնչող, յեղափոխիչ տօնակատարութիւն, որ ծնուի նոր հայը, հայութեան մեր խտէալը, որով Հայկ Նահապետն էլ հպարտանար, Տրդատ թագաւորն էլ, Գրիգոր Նարեկացին էլ, Խրիմեան Հայրիկն էլ…

Որ Ծնուի Նոր Հայը, «Միհր» 12, 2001թ.

***

Ազգերը իրենց պատկերներուն համեմատ կը ստեղծեն իրենց աստուածները: Մեր հեթանոսական պաշտամունքները՝ Արամազդը, Վահագնը գեղեցիկ, առաքինի էին, Անահիտը մայրն էր «ամենայն զգաստութեանց»: Հայ ժողովուրդը հոգեբանութեամբ կարծես պատրաստ էր քրիստոնէութիւնն իբրեւ ազգային կրօն ընդունելուն, որովհետեւ անիկա ամենէն աւելին կը համապատասխանէր իր նկարագրին: Եւ եթէ հայը քրիստոնէացաւ, պէտք չէ մոռնանք, որ քրիստոնէութիւնն ալ իր հերթին հայացաւ: Ինչպէս Վարդանանք խոստովանեցան, քրիստոնէութիւնը մեզի համար «գոյն մորթոյ» էր, միս, արիւն էր, որուն համար, ճիշտ է, երբեմն շատ սուղ վճարեցինք, սակայն մենք մեր էութեան հաւատարիմ մնացինք: Հայ ժողովուրդը քրիստոնէութեան շնորհիւ Արեւելքի վայրենաբարոյ ցեղերէն հեռացաւ, քաղաքակիրթ ազգերուն միացաւ: Զարմանալի չէ, ուրեմն, որ հոգեւոր քերթողութիւն, ճարտարապետութիւն, երաժշտութիւն, գեղանկարչութիւն, ինչ որ ստեղծած ենք՝ զուտ քրիստոնէական է: Տխուր եմ ըսելու, սակայն, որ պատմութեան ընթացքին հայը ուրիշ եղած, այժմ բոլորովին փոխուած է: Մենք մեր տաճարները, մագաղաթները, հոգեւոր երգերը ստեղծած նախնիներուն անարժան հետեւորդներն ենք: Որքան ժամանակ է արդէն քրիստոնէութիւնը մեզի համար պարզ հագուստ, աշխարհին ներկայանալու ձեւ մը դարձած է: 1700-ամեակը զբօսաշրջիկութեան խթան դարձնելով, շահարկելով, խորքին մէջ մենք կը բարոյազրկենք քրիստոնէութիւնը: Ամէն պարագայի ես լաւատես եմ, կը հաւատամ, որ անկախութեան վերահաստատումէն յետոյ մանաւանդ, պիտի ետ

երթանք մեր արմատներուն, անցեալին խարսխուելով վերակերտենք հայը, որ հաւատարիմ ըլլայ իր պատմութեան, ոգիին:

Հայն Ու Հայաստանը, «Գրական թերթ», 1-15 Մայիս 2001թ.

ԾՆՈՂՆԵՐ

Հիմա արդէն կէս դարու մը հեռաւորութենէ մըն է, որ կը փորձեմ վերյիշել զինք եւ գրել իր չունեցած կենսագրութիւնը: Բայց կը դիտեմ զինք, կ՚ապրիմ իրմով, իր պարթեւ հասակով, ինքզինք պարտադրող ներկայութեամբ, իրմէ մնացած կտոր-բրդուճ յիշատակներով: Բայց կը զգամ, որ հօրս կարօտը մէջս մնացած է միշտ, տասնեակ տարիներով: Եւ ոչ ոք, ոչ ոք կրցած է լեցնել այդ բացը: Բոլորիս ալ վիճակն է այս ապրո՞ւմը ըսեմ, չեմ գիտեր: Հօր կարօտը: Հիմա ալ, սիրտս տրտմութեամբ եւ քնքշութեամբ կը լեցուի, երբ շրջապատի մը մէջ յանկարծ մանչուկ մը կը տեսնեմ, որ այնքան սիրով եւ հաւատքով հայրի՛կ մը կ՚ըսէ, ուրիշ մը տէտի կ՚ըսէ, բաբա կ՚ըսէ, պապ կ՚ըսէ. ամեն մարդ իր հօրը դիմելու ձեւ մը ունի: Բայց միշտ փաղաքուշ բան մը կայ, մանաւանդ երբ զաւակները կը մեծնան եւ միշտ կրնան հայրիկ ըսել, իրենց հօր հետ ըլլալ, խօսիլ, կատակել, խրատ ուզել: Յետոյ՝ որդիները չափահաս կը դառնան եւ դարձեալ հայրիկ կ՚ըսեն: Կը մեծնան, իրենք ալ կը հայրանան եւ դարձեալ իրենց հօրը հայրիկ կ՚ըսեն: Որդիները կը ծերանան եւ եթէ հայրերը տակաւին կան՝ որդիները դարձեալ հայրիկ կ՚ըսեն այս անգամ կորաքամակ ծերունիի մը: Հիմա ալ գուրգուրանք ունին ծերունազարդ մարդու մը հանդէպ՝ որ ատենին գուցէ խիստ հայր մըն էր եղած իրենց, եւ հիմա, խրխլեակի վերածուած՝ գաւազանով կը քալէ, հիւանդանոցին մահիճին մէջ է, տկար էակ մըն է, բայց հայրիկ է: Եւ օր մըն ալ՝ որդիները կը փակեն իրենց հանգուցեալ հայրերուն աչքերը, խաղաղութեամբ, սրտի հանդարտութեամբ: Բնութեան օրէնքն է, սերունդներու հերթափոխութեան օրէնքը: Բայց ե՞ս: Հիմա կ՚անդրադառնամ յանկարծ, որ ես հօրս՝ յիշատակի մէջէն է, որ խնդրած եմ, որ ինծի հայր ըլլայ, հայրութիւն ընէ ինծի: Եւ ըրած է: Հայրիկս՝ իր մահէն յետոյ ալ, միշտ մնացած է հայրիկս ու կը զգամ հիմա՝ թէ մենք առհաւական որքան կապերով մեր հայրերուն հետ ենք միսթիք, անտեսանելի, անշօշափելի, անբացատրելի, բայց իրական, խորունկ կապերով, արեան կապով, արեան յուզումով, արեան շունչով: Եւ այդ կապը՝ սերմին եւ արիւնին կապը, մեր ծնունդէն իսկ մեր հետ է եւ մենք՝ Աստուծոյ պատկերը ունինք մեր մէջ՝ նախ եւ առաջ մե՛ր հօր պատկերին մէջէն: Ու

մեր հայրերը մեր մէջ են՝ մենք զիրենք մեր մէջ կը կրենք, մեզմով կ՚ապրին անոնք եւ մենք մեզմով կ՚ապրեցնենք զանոնք:

Հայրիկս

***

Սիրելի՛ մայրեր,

Մենք ամեն բանէ առաջ Ձեզի կը պարտինք մեր կեանքը, եւ մեր կեանքի ամենէն գեղեցիկ գանձերը՝ սէր եւ անձնուիրութիւն, հաւատարմութիւն, եւ նոյնացումի գերագոյն առաքինութիւնը, եւ այն վստահութիւնը, որ աշխարհիս վրայ կայ մէկը, որ մեզ մեզմէ աւելի կը սիրէ, կը տառապի մեզ համար, կ՚երջանկանայ մեզմով:

Սիրելի՛ մայրեր,

Մենք հպարտ ենք Ձեզմով: Որովհետեւ դուք ոչ միայն կեանք էք տուած մեզի եւ կամ կեանքի ամենէն գեղեցիկ առաքինութիւնները բաժնած էք մեզի, այլ եղած էք նաեւ նկարագիր քանդակող, դաստիարակութիւն ջամբող մայրեր, մեր ներաշխարհը հայկական կաթով սնուցանող Հայ մայրեր: Մենք Ձեզ կը պարտինք Վարդան Մամիկոնեանը, Եսայի Եղիպատրուշեցին, Ներսէս Լամբրոնացին, Արամը, մեր եկեղեցւոյ սուրբերը, մեր ազգին հերոսները:

Մայրերու Օր. 1978

ՄՇԱԿՈՅԹ

Նայեցէ՛ք մեր պատմութեան. նայեցէ՛ք մեր աշխարհագրութեան: Ո՞վ չփորձեց տրորել մեզ,՝ Պարսի՞կը, յո՞յնը, սելճո՞ւքը, թաթարն ու թո՞ւրքը: Մեր ժողովուրդը տեսաւ, որ այս բոլորը կու գան ու կ՚անցնին: Բայց ինք եկեր էր մնալու համար: Եթէ թշնամին ուզեց գերել, ուզեց տիրել, ինք գիտցաւ իր մշակոյթով գոյատեւել ու ապրիլ, եւ եթէ ինք գերեց՝ գիրքերով գերեց, եւ եթէ տիրեց՝ Նարեկով տիրեց: Եւ այդ ոգիով՝ արաբական արշաւանքներուն պատասխանեց Զուարթնոցի եռայարկ բերդատաճարով, Բիւզանդիոնի դէմ բարձրացուց Հռիփսիմէի հրաշքը, սելճուքներուն դիմադրեց հազարումէկ եկեղեցիներով... եւ դուք մտովի շարունակեցէք անընմբռնելի այս գոյապայքարին

ընթացքը, Լէնկթիմուրին հակադրելով Տաթեւը, Շահ Աբասին դէմ դնելով Էջմիածնի քարերը, հասնելու համար 1915-ի ցեղասպանութեան եւ Սարտարապատի զանգերով յարութիւն առած մեր ժողովուրդի ներկային: Եւ այս բոլորին վրայ տեսէք թէ ինչպէս կը թեւածէ Թարգմանչաց ոգին, անոնց տաք շունչը, անկատար մնացած երազը:

Ս. Մեսրոպի հետ. խօսուած Օշականի եկեղեցւոյ մէջ, Թարգմանչաց տօնի առիթով: 13 հոկտ. 1979թ.

***

Տէր Վարդապետ, առաջին ուսուցիչ, յանուն Հայոց պատմութեան, յանուն աստուածատուր մեր այբուբենին, յանուն մեր արեան կանչին, կ՛աշխատինք չմոռնալ այն աշխարհը, որ քուկդ էր եղած: Տարօնի Հացեկաց գիւղէն ու Առաքելոց վանքի Թարգմանչաց գերեզմաններէն մինչեւ Գողթան գաւառի խուլ անկիւնները, Դարանաղեաց գաւառէն մինչեւ Արարատեան աշխարհ, Աշտիշատէն մինչեւ Անի, այն աշխարհը, որ դուն թիզ առ թիզ չափեցիր, այն աշխարհը, որ քու ձեռքերովդ լոյս տեսաւ, եւ ուր քարը իմաստ հագաւ եւ որուն վրայ ապրող ժողովուրդին դուն երկրորդ կեանք պարգեւեցիր: Այդ աշխարհը, դառն ու մարդկային չափանիշներով անհասկնալի ու աւերակի լեզու ունի այսօր: Եւ ինչպէս մոռնանք այդ աշխարհը, ամենասուրբ ուսուցիչ: Ինչպէս մոռնանք այն եկեղեցիները, ուր Աստուած հայերէն խօսեցաւ իր ժողովուրդին եւ ուր այսօր միայն բուեր կը վայեն: Այն դպրոցները, ուր հայ մանուկներ Մեսրոպի լեզուն սորվեցան՝ եւ ուր հիմա հայ մանուկ չկայ... եթէ մոռնամ քեզ, Հայաստան աշխարհ, թող իմ լեզուս քիմքիս փակչի, չկարենամ խօսիլ, աջ թեւս թող զիս ուրանայ եւ ես չկարենամ հայօրէն ապրիլ:

Ս. Մեսրոպի հետ. խօսուած Օշականի եկեղեցւոյ մէջ, Թարգմանչաց տօնի առիթով: 13 հոկտ. 1979թ.

***

Յարատեւ ու բազմակողմանի ցեղասպանութիւնը իր աւերը գործեց մարդկային, կրօնական, լեզուական, մշակութային, հողային, տնտեսական, զինուորական, քաղաքական մակարդակներու վրայ: Մէկ ու կէս միլիոն հայ,- կին, ծեր, երիտասարդ, մանուկ, ծծկեր երախայ: Զորս հազար քահանայ, բժիշկ ու մտաւորական, հողագործ եւ հովիւ, կթուոր կին ու անմեղ մանուկ: Մէկ ու կէս միլիոն հայու արիւն ցամքեցաւ: Ու անոնց հետ քանի քանի տաճարներ, ձեռագիր

մատեաններ, մշակոյթի կոթողներ, աղբիւր ու խաչքար քանդուեցան, փշրուեցան, տրորուեցան: Անոնք ոչ զաւակ էին, ոչ թուղթ, ոչ մելան: Անոնք հոգի էին, նիւթով արտայայտուած, եւ յանկարծ փճացան: Կորուստը հետեւաբար միայն մարդկային չէր, միայն նիւթական չէր, հոգին՝ հայու հոգին էր, որ կը սպաննուէր:

Բայց հոգին չի մեռնիր, եւ Հայ ազգը պիտի չմեռնէր:

Եւ ահա, Հայոց մթագնած երկնակամարին վրայ, հետզհետէ սկսան փայլիլ աստղերը նոր կեանքի եւ պայքարի՝ Մուսա լեռ, Հաճըն, Ուրֆա, Շապին Գարահիսար, Վան... ու յետոյ եկաւ արշալոյսը, հորիզոնին վրայ բացուեցաւ Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի Մայիսը: Էջմիածնի զանգակները աւետեցին Հայոց ազատութիւնը, Արարատի ու Արագածի գրկին մէջ, բուռ մը հողի վրայ ծնաւ Հայոց նորամանուկ Հանրապետութիւնը: Եւ նոյն այդ հայրենիքն է, որ այսօր, Արարատի վիթխարի հովանիին ներքեւ կը ծլի ու կը ծաղկի, կը վերակերտէ իր կեանքը, գիտութեան, քաղաքակրթութեան, մշակոյթի բնագաւառներուն մէջ նուաճելով անհասանելի բարձունքներ, բայց տառապելով միաժամանակ, եւ ամեն օր, Մասեաց վիհերուն մէջ շղթայակապ Արտաւազդի տագնապի ապրումներով տուայտելով:

Ու դեռ գերի է Արարատը: Տխուր հով մը կը փչէ Վանայ ծովուն վրայ, մեր ոսկի դաշտերը փուշ ու տատասկ կը բուսցընեն, Նարեկայ վանքը քարուքանդ է, Մարութայ Սուրբ Աստուածածինը անաղօթք է մնացած: Եւ մենք, Մեծ Եղեռնի որդիներս, տարագիր ենք, սփիւռք ենք, վաթսուն երկրի մէջ վաթսուն անգամ արկած ենք, շեղում ենք, բայց կը մերժենք սփիւռքը ե՛ւ իբրեւ ճակատագիր ե՛ւ իբրեւ գերեզման: Կը մերժենք եւ կը կանգնինք պահանջատէրի մեր իրաւունքներուն ետին. կը գիտակցինք, որ մաս կը կազմենք մէկ ու միակ հայութեան, եւ կ՚ուխտենք որ մէկ եւ հասարակաց լեզու, կրօն, մշակոյթ պիտի ունենանք, սպասելով այն օրուան, երբ մերը պիտի ըլլայ մեր հասարակաց հողը:

Մշակութային Եղեռնը եւ Մենք. Ապրիլ 24. Նիւ Եորք 1981

***

Ինչ որ կ՚ընենք մենք, յաւերժական հայրենիքին համար է ի վերջոյ, եւ Կոմիտաս վարդապետին նուիրուած այս ձեռնարկն ալ կ՚իյնայ այդ ծիրին մէջ: Մենք մեր ներշնչումը կը ստանանք մեր հայրենիքէն, անոր ապրող ու ներշնչող ներկայութենէն, այնտեղ հասակ առնող երաժիշտներէն, անոնցմէ որոնք կը պահեն ու կը պահպանեն կոմիտասեան աւանդութիւնը համբուրելի հաւատարմութեամբ մը, եւ կը շարունակեն անոր կէս ձգած գործը: Այն ինչ որ Կոմիտաս չէր կրցած իրագործել, այսօր կ՚իրագործուի Հայրենիքի մէջ հազարաւոր հայ երաժիշտներու,

երգահաններու եւ արուեստագէտներու ու արուեստասէրներու կողմէ, եւ նաեւ պարզ ժողովուրդին կողմէ, որ սքանչելի կերպով կը վերարտադրէ «Կորանիներ»ը, Մշոյ, Տարօնի, Վասպուրականի այն երգերը, որոնք 50-60 տարի առաջ գրեթէ մոռացութեան դատապարտուած էին եւ զայն երգող ժողովուրդը գրեթէ անճիտուած էր: Բայց այսօր Հայրենիքի մէջ այդ ժողովուրդը կը յիշէ զանոնք եւ տուներու մէջ ամենուրէք կ՚երգէ այդ երգերը եւ կը շարունակէ Կոմիտասեան աւանդութիւնը:

«Կոմիտաս վարդապետի վախճանման 50-ամեակը», 1986

***

Մշակոյթը ազգի մը խոյանքն է, անոր հոգեկան արժէքներուն համադրոյթը. հայելին անոր հոգեկանութեան, հողին, ջուրին, պատմութեան եւ երազին: Շաղախը նաեւ՝ ազգային լինելութեան: Որքան պինդ կառչած է ժողովուրդ մը, այս պարագային սփիւռքեան համայնք մը իր մշակոյթին, այնքան աւելի դիմացկուն է որպէս ուրոյն միաւոր: Կենսաբանութենէն գիտենք, որ մարդուն բջիջները վեց ամիսը անգամ մը կը փոխուին, բայց մարդը ինք՝ նոյնը կը մնայ: Մշակութապէս կրնանք աճիլ, փոխուիլ, զարգանալ, բայց միշտ պէտք է ջանանք պահպանել մեր ինքնուրոյնութիւնը: Այս չէ՞ միթէ Խաչատուր Աբովեանի պատգամին միտք բանին, եր կ՚ըսէ՝ «լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր, էլ ինչո՞վ կարող ես ասել, թէ ի՞նչ ազգից ես...»:

Համազգայինը մեր իւրայատկութեան գրաւականն է սփիւռքեան ալեկոծեալ կեանքի յորձանուտներուն մէջ, երաշխաւորը մեր ուրոյնութեան: Համազգայինի շնորհիւ մենք կը պահենք մեր հազարագանձ մշակոյթը, զայն «կը թարգմանենք» մեր օրերու պահանջներուն, եւ կը ստեղծենք այսօրուան հայ մշակոյթը, հայոց մշակոյթը, բոլոր հայերուն մշակոյթը, միատարր հայութեան, միացեալ եւ մէկ հայ մշակոյթ՝ վաղուան միացեալ եւ մէկ Հայրենիքին համար:

Ողջոյն Հայ Մշակոյթին. 1987

***

Անին աշխոյժ քաղաք էր, Քրիստոնէական հաւատքի վառ կեդրոն էր. իր անհամար եկեղեցիներուն համար կոչուած էր «հազար ու մէկ եկեղեցիներու» քաղաք... հիմա՝ հարիւրաւոր տարիներու աւերումներէն, երկրաշարժներէն, թուրք ու սելճուք հորդաներու կեղեքումներէն յետոյ ալ, այնտեղ են, տխուր, մենաւոր,

իրենց արքային եւ թագուհիին, ոստանիկներուն, եւ քաղաքացիներուն վերադարձի սպասումին մէջ՝ Մայր Տաճարի հետ միասին՝ Տիգրան Հոնենցի Ս. Լուսաւորիչը, Ս. Գրիգոր Ապուղամրենցը, Ս. Փրկիչը, Հովուի եկեղեցին, Առաքելոց եկեղեցին, Կուսանաց վանքը, Գագկաշէնը եւ բոլորը միասին վկաները հայ ճարտարապետութեան սխրանքին, քարէ երաժշտութիւն իբրեւ, աղօթք եւ բողոք միաժամանակ:

Բայց այսօր, մենք կը հռչակենք ո՛չ Անիի տխրութիւնը, ո՛չ ալ լռութիւնը: Այսօր մենք կը տօնենք Անի քաղաքը: Անիի Մայր տաճարի հազարամեակը: Եւ, ասոր ընդմէջէն կը յարգենք մեր նախնեաց յիշատակը, մենք կ՛ողջունենք մեր գալիք սերունդները եւ անոնց ալ «արութեան գործերը» հաւատքով եւ սիրով:

Անիի Փառքը. Անի 989-1989, Նիւ Եորք 1989

***

Տեղ մը կարդացեր եմ, որ նկարիչը երբ կը գծէ, ճիշտ է, իր ներքին ապրումներուն անսալով, գոյներու եւ երանգներու մէջէն կ՛արտայայտէ ինքզինք, իր հոգին, իր ներաշխարհը: Այսինքն՝ գծուած պատկերը նկարիչին էութիւնն է. բայց նկարիչին գործը այնտեղ չ՚աւարտիր: Դիտողը պէտք է, արուեստասէրը, մարդը, գնահատողը, վայելողը, որպէսզի ան գայ, կանգ առնէ պատկերին առջեւ, խորհրդածէ, վայելէ, քննադատէ ու խօսի նկարին հետ: Ու երբ արուեստագէտը եւ դիտողը կը զրուցեն իրարու հետ, պատկերին միջոցով հաղորդութիւն կը ստեղծուի երկու մարդոց միջեւ եւ նկարիչին սրտի թրթիռը, ապրումը կը փոխանցուի արուեստասէրին, այն ատեն է որ արուեստը լիութեան կը հասնի:

Նոյնն է պարագան, կը խորհիմ, գիրին եւ գիրքին հետ: Գրողը՝ բանաստեղծ ըլլայ, թէ վիպագիր, արձակագիր գեղագէտ թէ յուշագիր՝ կը փնտռէ քեզ, ընթերցողը, որպէսզի միասին կարդան գիրին յանձնուած մտածումը, ապրումը եւ գրողն ու ընթերցողը ըլլան մէկ՝ ապրումի եւ մտածումի դաշտին մէջ: Հիմա ես ուրախ եմ, որ դուն ինծի հետ ես, եւ մօտս նստած ես, եւ կամ ես ափերուդ մէջ եմ, եւ միասին «Յետադարձ Հայեացք» մը կը նետենք իմ կեանքին վրայ՝ որուն հայելին է այս գիրքը:

«Յետադարձ Հայեացք» գիրքի առաջաբանից:

***

Ես աւելի ու աւելի կը համոզուիմ, որ մշակութային եղեռնը կը շարունակուի, եւ ոչ միայն Թուրքին ձեռքով: Մենք, հայերս, իբրեւ պետութիւն,

իբրեւ Եկեղեցի, շահագրգիռ կազմակերպութիւններով, Յուշարձաններու վարչութեամբ, հանցաւոր ենք անտարբերութեան մեղքով: Եւ յետոյ՝ մեր պարտականութիւնը չէ՞ ճանչնալ հայրենին, աւանդութիւնը, պատմութիւնը: Ինծի համար ապրող յուշարձան է եւ ճոճան պարը, եւ չաչանէն, եւ Մշոյ ղըրը, եւ եկեղեցւոյ շէնքը. ինծի համար յուշարձան է նաեւ մեր լեռներուն եւ սրբավայրերուն աւանդութիւնները, պատմութիւնը: Գիտնալը՝ թէ Սուրբ Յովհաննէս Արծուաբեր կը կոչուի, Շիշ Իւղոյ եւ կը կոչուի, կամ ուրիշ գիւղի մը եկեղեցին կը կոչուի Քաղցրահայեաց, Սիրահայեաց, Ծովահայեաց Սուրբ Աստուածածին:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչէն Հրայր Դժոխք. Արեւմտեան Հայաստան ուխտագնացութեան տպաւորութիւններ Երեւան 3 Սեպտեմբեր 2000թ.

ՅՈՒՇԵՐ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Մեսրոպ Սրբազանին՝ Որ Մահկանացու Ծնելով, Անմահ Մեկնեցաւ Այս Աշխարհէն

28 Մայիս, 1961★

"Օրհնեսցի, օծցի եւ սրբեսցի, զճակատս Տէր Մեսրոպ Քահանայի..." Զարեհ Սքանչելի, սրբազնասուրբ կաթողիկոսին աջով ձեռնադրուած եւ օծուած երիտասարդ Հրայր սարկաւագը, եկեղեցւոյ եւ ազգին ընծայուեցաւ որպէս նոր մարդ՝ Մեսրոպ աբեղայ, ապա վարդապետ, եպիսկոպոս ու արքեպիսկոպոս★ Հրայրը եւ Մեսրոպը այնքան հրաշալի կերպով միաւորուեցան իրարու հետ եւ ամենայն ներդաշնակութեամբ գործեցին իր մէջ, որ զինք դարձուցին դարադարձի բազմաշնորհ ու բազմավաստակ անզուգական անձնաւորութիւն մը★ Ան եղաւ ոչ միայն անուանակիրը Հայ ժողովուրդի պատմութեան մէջ իրենց բացառիկ տեղը ունեցող զոյգ տիտաններու՝ Մեսրոպ Մաշտոցի ու Հրայր Դժոխքի, այլ անոնց նման սիրահարուեցաւ իր ժողովուրդի հոգեմտաւոր հարստութեանց, տագնապեցաւ իր ժողովուրդի առօրեայի ու ապագայի հարցերով, ծրագրեց ու գործեց մեկնելով ընդհանրական շահերէ, միշտ առանցք ունենալով Աստուած եւ ազգ★ Խօսիլ կամ գրել Մեսրոպ Սրբազանի մասին համապարփակ կերպով, իսկապէս դժուար է, որովհետեւ ինչպէս Բարձրաշնորհ Օշական Ս. Արքեպիսկոպոս իր դամբանականին մէջ արտայայտուեցաւ, «բազմամարդ անձնաւորութիւն մըն

էր» ան, նախ եւ առաջ գիտակից Հայ հոգեւորականի կոչումին եւ առաքելութեան★ Արդարեւ իր ձեռնադրութեան օրէն մինչեւ վախճանը ան ապրեցաւ ու գործեց որպէս անբասիր, անձնուրաց, Հայ Եկեղեցւոյ հաւատքին ու աւանդութեանց, ծիսակատարութեանց ու կարգապահութեանց բծախնդիր հոգեւորական մը★ Քրիստոսի Պետրոս Առաքեալին ուղղուած պատգամը՝ «Եթէ կը սիրես զիս արածէ ոչխարներս» ան տարբացի կերպով ապրեցաւ իր կեանքին մէջ եւ եղաւ լիիրաւ Հովիւ մը, ուր որ Տէրը զինք կոչեց՝ Նոր Ջուղայէն մինչեւ Ամերիկա եւ Մունիի Ս. Գէորգ★ Եկեղեցականի իր կեանքի քայլերուն մօտէն հետեւող ոեւէ անձ պիտի վկայէր որ Դպրեվանքի առաջին դասարանի մատղաշ հոգիներու մէջ Հայ Եկեղեցւոյ ծիսակատարութեան նախանձախնդրութիւնը դրոշմող Հայր Մեսրոպէն մինչեւ 1700ամեակի առթիւ բազմահազար երախաներ մկրտող Մեսրոպ Սրբազանը ապրեցաւ, երազեց ու գործեց ի փառս Աստուծոյ, ի պանծացումն Հայաստանեայց Առաք. Ս. Եկեղեցւոյ★

Նորարար եւ մեծ խորհող անձ մըն էր Մեսրոպ Սրբազանը, որ կը հաւատար Քրիստոսի պատգամին, թէ՝ «Մարդ է որ գործէ զերկիր»★ Որպէս ուսուցիչ, տեսուչ, Առաջնորդ, հասարակական գործիչ, Քրիստոնեայ Հայաստանի 1700ամեակի վարիչ քարտուղար, իր պաշտօնները չէին որ կը բնորոշէին իր «անելիքը», կամ կ՚արժեւորէին զինք, այլ ի՛նք էր որ նոր իմաստ եւ նոր սահմանում կուտար անոնց★ Այս հասկացողութիւնն ու մօտեցումը իր պաշտօնին մղիչ ոյժը դարձաւ նորարարութեանց, կոթողական ծրագիրներու իրագործման, եւ այս ուղղութեամբ ո՛չ միայն ինք, այլ իր հետ զօրաշարժի կ՚ենթարկէր ամէն տարիքի ու սեռի մարդոյժեր★ Պետական մակարդակով կազմակերպուելիք Ուաշինկթըն Տի Սի-ի մէջ Եղեռնի 70ամեակի ոգեկոչման հանդիսութենէն մինչեւ 1700ամեակի առնչութեամբ կազմակերպած ուխտագնացութեանց, մկրտութեանց, արուեստի ձեռնարկներու, համագումարներու, հրատարակութեանց ու եկեղեցիներու վերանորոգման ծրագիրները հիացումի ու հպարտանքի յորդայորդ յուզումնախառն զգացումներու ծնունդ կուտան, պարծանք առթելով ո՛չ միայն իր անձին հանդէպ, այլ իր մէջէն՝ Հայ Եկեղեցւոյ ու ժողովուրդին★

Մեծ ծրագիրներու եւ նորարարութեանց մարդ ըլլալով հանդերձ մանրամասնութեանց նախանձախնդիր էր, եւ այս առաւել եւս ապշանք կը պատճառէր իր հետ աշխատողներուն կամ զինք ճանչցողներուն★ Ո՞վ կը մտածէ Պէյրութի Մարտիկեան վարժարանի աշակերտներուն համար ուղղաթիռէն պարանով կաղանդ Պապան բերելէ ետք, գիշերը «Հայր Օշական» Կաղանդ Պապային հետ չքաւոր սաներու տունները այցելել եւ նամակով Կաղանդ Պապայէն անոնց խնդրած նուէրները բաշխել, եւ նոյն ոգիով յետագային՝ Հայաստանի մէջ, Նոր Տարին դիմաւորելէ ետք բարձրաստիճան անձնաւորութեանց հետ

սահմանապահ Հայ զինուորներուն այցելել, քաջալերելով զիրենք հայրենիքի հանդէպ իրենց ցուցաբերած զոհողութեան համար★ Տակաւին, ո՞վ կը խորհի 1918-ի Հայաստանի Հանրապետութեան անցագրի պատճէնով տասը հազար նոր օրինակներ պատրաստել, վերեւ յիշուած Եղեռնի 70ամեակի ոգեկոչման մասնակցողներէն իւրաքանչիւրին բաժնելու որպէս անցագիր՝ շաբաթավերջի ձեռնարկներուն ներկայ ըլլալու, եւ կամ ո՞ր արագաշարժ միտքը կրնայ գործի լծուիլ եւ Արեւմտան Հայաստան ուխտագնացութեան ընթացքին Անաւարզա բերդի Ս. Զօրավարաց եկեղեցւոյ փլատակներուն մօտ պսակուիլ ուզող զոյգի մը համար անմիջապէս ծաղիկներ քաղելով թագ մը պատրաստել★

Համակ նուիրումի մարդ էր Մեսրոպ Սրբազանը★ Անհամար իր ծրագիրները յաջողութեամբ միշտ պսակուած են, որովհետեւ բովանդակ սրտով, մտքով ու հոգիով ան ինքզինք կ՛ընծայէր իրականացնելու այն երազները, զորս կ՛որդեգրէր, ինչպէս Քրիստոս կ՛ըսէ, «Ձեր գանձը ուր որ է նաեւ ձեր սիրտը հոն է»★ Արդարեւ, իր հետազօտութեանց, խօսակցութեանց առանցքը կը դառնար նոր ծրագիրները, նոյնանալով անոնց հետ★ Իր հետ կը վարակէր, կը խանդավառէր նաեւ ուրիշներ★ Նուիրումին կ՛ընկերանար տոկուն աշխատողի բացառիկ ուժականութիւնը★ Մեղուի թէ մրջիւնի նման ոքնաջան, զանոնք կը գերազանցէր՝ որովհետեւ կը հաւաքէր ու կ՛արտադրէր բոլոր եղանակներուն, եւ այս ամէնքը՝ առանց յոգնութեան★ Արդարեւ, յոգնութիւնը միակ բառն էր, որ իր բառարանին մէջ գոյութիւն չունէր մինչեւ իր վերջին շունչը★ Գիտէր արդիւնաւոր կերպով ո՛չ միայն աշխատիլ, այլ նաեւ՝ աշխատցընել, ստեղծելով առողջ մթնոլորտը հաւաքական աշխատանքի, իւրաքանչիւր գործօն տարրի էութիւնը պարուրելով զոհունակութեամբ, եւ աւելին՝ նոր աշխատանքի լծուելու խանդավառ պատրաստակամութեամբ★

Մեսրոպ Սրբազան մտաւորական էր★ Իր անսեթեւեթ ոճով, հեզասահ գետի նման իր ջինջ մտածումներով ու լեզուով, ան ընթերցողին կը հրամցնէր կեանքը՝ միշտ դիտուած հաւատքի, հայրենիքի, ընկերային ու բարոյական արժէքներու պրիսմակէն★ Որպէս բանասէր, Հայ մշակոյթի ընդերքներէն կը յայտնաբերէր այնպիսի արժէքներ, որոնք կ՛ապացուցանէին իր իւրայատուկ աղբիւրագիտութիւնը, ինչպէս նաեւ խոր ընթերցասիրութիւնը★ Իր լոյս ընծայած բազմաթիւ հատորները, բայց մանաւանդ վերջինը՝ նուիրուած Ս. Էջմիածին օտար ուղեւորներու օրագրութիւնները, ինչպէս նաեւ յետ մահու հրատարակելի աշխատանքները խօսուն վկաներն են այս արժանիքին★ Վաւերական բանասէրի իր արժանիքներէն մին էր կորուստէ փրկել մեր ժողովուրդի մշակութային հարստութեանց մասունքները, ըլլան անոնք երգեր, սրբութիւններ եւ հնութիւններ★ Կարծէք իր սրտէն արիւն կորսնցուց այն օրը երբ Սօթպիի մէջ

աճուրդի դրուած Մշոյ Ս. Կարապետի վանքի մայր դուռը օտար մը գնեց, եւ ինք ցաւն ու արիւնը թանաքին խառնելով ողբաց Հայ մեծահարուստներու անտարբերութիւնը★ Մտաւորականի մէկ այլ կերպար մը կը ճառագայթէր իր մէջ եւ որ առաւել եւս կը պայծառացնէր իր հոգիի մեծութիւնը, մեկենասներ ապահովելով ու քաջալերելով բազմահարիւր այլ գրչեղբայրներ, որպէսզի հարստացնեն Հայ մշակոյթի անդաստանը իրենց մտքի արգասիքներով★ Եւ վերջապէս, զուգադիպութի՞ւն թէ նախախնամական տնօրինում, երկրաւոր իր կեանքի վերջին օրը սկսած էր Նիւ Եորքի "Metropolitan Museum" (թանգարանին) մէջ հետազօտութեամբ մը, իսկ օրը աւարտած՝ "New York Public Library" նոյն քաղաքի գրադարանին մէջ★ Վստահաբար որ դէպի երկնքի լոյս խորանները իր երկնաւոր ճանապարհորդութեան որպէս ընկերակից ունեցաւ Յովհաննէս Սարկաւագ Վարդապետի հոգին, այն վարդապետը, որ ողջ գիշերը գրադարանին մէջ կարդալէ ետք, առաւօտուն երբ աշակերտները զարմացած զինք գտած էին գիրքերու առջեւ, ըսած էր.- "Ասոնք են իմ հացս ու ջուրս"★

Մեսրոպ Արքեպիսկոպոս յարաբերութեանց մարդ էր★ Ան օժտուած էր յիշողութեան բացառիկ կարողութեամբ, եւ ասոր միացնելով հաղորդակցելու իր բնածին յատկութիւնը, անվարան կերպով կարելի էր զինք կոչել Հայ իրականութեան շնչող եւ ապրող համայնագիտարանն ու համակարգիչը, եթէ ոչ գիտազօտութեանց կեդրոնը★ Բաւ էր որ առաջին անգամ ըլլալով անձի մը հանդիպելով իմանար անոր անունը★ Լոյսի արագութեամբ անոր մտային պաշարը գործի կը լծուէր եւ կը կռահէր ենթակային ո՞ր տեղացի ըլլալը (Այնթապցի, Մարաշցի, եւն.), եւ ինչու չէ կը թուէր ընտանիքի անդամները★ Նոյնն էր պարագան պատմական դէմքերու եւ դէպքերու, որոնք մշտական նեկայութիւն էին իր մտքի պաստառին վրայ★ Թերթերու աշխարհէն, մանաւանդ հեռախօսային հաղորդակցութեամբ իր շտեմարանած լուրերը լաւագոյն առհաւատչեան էին որ ան կացութեանց քաջածանօթ ղեկավար մըն էր, որ իր կարգին իրազեկ կը դարձնէր պատկան մարմիններ, որոնք կրնային ան- տեղեակ ըլլալ իրենց շուրջի անցուդարձերուն★ Որքա՜ն ուշագրաւ էր այն երեւոյթը, որ բաժանորդագիր ըլլալով հանդերձ New York Times օրաթերթին, երբ պատահէր որ ուշ գիշեր տուն դառնար, Ազգ. Առաջնորդարանի անկիւնը գտնուող իր լրագրավաճառէն թերթէն անպայման կը գնէր օրինակ մը, որպէսզի թարմ-թարմ լուրերը վայելէ՝ թօնիրէն ելած հացի նման, ինչ փոյթ որ յաջորդ առաւօտ դրան առջեւ պիտի գտնէր բաժանորդի իր օրինակը★ Հաղորդակցութիւնը իրեն համար միայն տեղեկատուական կամ հեռաձայնային լուր չէր, այլ այցելութիւններ, հանդիպումներ էին, որոնք գլխու պտոյտ պատճառելու աստիճան ճամբորդութիւններ կ՛ենթադրէին★ Ս. Գրքի կողքին իր անբաժան ընկերն էր

օդանաւային թռիչքներու տարեկան գրքոյկը★ Շատ յաճախ Նիւ Եորքի օդակայանը իրեն համար ոչ միայն մեկնումի կամ տուն դարձի կայան էր, այլ քաղաքէ մը այլ քաղաք, եւ կամ ովկիանոսէն վերադարձի ճամբուն վրայ իր ճամբորդութիւնը շարունակելու կապի կայան, բայց մանաւանդ իր բացակայութեան գրասենեակը դիզուած թերթերն ու նամակները առնելու առիթ մըն էր իր քարտուղարէն, անշուշտ վերցուցած պաշարին դիմաց չմոռնալով նոր գործեր տալ պաշտօնեաներուն, որպէսզի իր բացակայութիւնը չզգան առաջնորդարանէն ներս★

Մեսրոպ Սրբազան սրտի մարդ էր★ Որքան որ իր մօտ շեշտուած էր մտածող մարդու կերպարը, նոյնքան եւ աւելի զգացումի, փխրուն սրտի տէր մարդ էր★ Երեխայ մը գետին իյնալով երբ լար, ծնողքէ մը աւելի իր սիրտը կը ցաւէր★ Ընտանեկան տխուր պարագաներու դիմաց որպէս հարազատ կը փղձկար ու կ՛արտասուէր★ Սրտի մարդը ըլլալով սակայն միայն զգացական չէր, այլ՝ տագնապներու լուծումներ որոնող★ Ուշ գիշերին երբ Ազգային Առաջնորդարան հեռաձայն գար արտասահմանէն, թէ հայ երիտասարդներ ինչ ինչ պատճառներով ձերբակալուած ու բանտարկուած են տարբեր երկիրներու մէջ, շուտով զօրաշարժի կ՛ենթարկէր տեղական կամ ընդհանրական լրիւ իր միջոցները, որպէսզի թեթեւցնէ պատիժը եւ կամ ազատագրէ բանտի դաժան վիճակէն Հայ անմեղ զոհերը★ Պատահած էր որ օտարութեան մէջ ինկած հայորդիք գիշերանց Առաջնորդարանի դուռը թակէին որպէս ազգին տունը, եւ ահա կը զգային որ հօր մը սրտին դուռը կը բացուէր իրենց առջեւ★ Իսկ ո՞վ կրնայ թուել բարեսիրական այն յայտնի ու ծածուկ գործերը, որոնցմով ան մարդոց կեանքերուն մէջ յեղաշրջում բերաւ բարիին ու վսեմին հանդէպ՝ սրտերուն վրայ քանդակելով բարեգութ Աստուծոյ պատկերը★

Իր այս մեծութիւններով վեր Մեսրոպ Սրբազան աւելի մեծ մարդ էր, որովհետեւ ժողովուրդի մարդ էր բառին ամբողջական առումով★ Մեծին ու փոքրին, հարուստին թէ աղքատին, զարգացածին կամ անուսին, ամէնքին հետ յարաբերելու բնատուր շնորհքը ունէր★ Ճոխ սեղաններէն ետք ան գիտէր չքաւորին սեղանը բաժնել★ Գիտէր պալատականին հետ վեհութեամբ միաժամանակ ռամիկին հետ պարզութեամբ վարուիլ★ Կրնար տարէցին հետ իմաստութեամբ խօսիլ եւ երեխային հետ անմեղօրէն թոթովել★ Արդար հպարտութեամբ իր ուսուցիչներու ուսուցիչը դաւանելով հանդերձ Գարեգին Վեհափառը, ամենայն խոնարհութեամբ կը յիշէր Ս. Նշանի ժամկոչ Հայրապետը, որպէս լուսարարութեան իր առաջին ուսուցիչը★ Այսպիսին էր լեռներու բարձրութեամբ եւ ձորերու խորութեամբ Մեսրոպ Սրբազանը, ամէնքին հետ

ամէնքին նման աստուածատուր իր կեանքը բաժնողը, առանց սակայն կորսնցնելու իր ինքնութիւնը★

Այս բոլորով, Մեսրոպ սրբազան շատ նուրբ «հիւմուրի» մարդ էր★ Ան գիտէր կացութեանց դիմաց այնպիսի հաստատումներ կատարել, որոնք պարզ ժպիտ առթելէ աւելի պատգամի բնոյթ կը ստանային★ Ութսունական թուականներուն, երբ Մոսկուայի վրայով Հայաստան մուտքի արտօնութիւն գլացուեցաւ իրեն, վերադարձին երբ ամէն ոք մտահոգ պատճառը կը հարցնէր իրեն, ան թեթեւ ժպիտով մը ակնոցը կը հանէր ու ի՛նք կը հարցնէր.- Կռահէ՛, ո՞վ եմ ես★ Երբ դիմացինը կը շփոթէր այս տարօրինակ պատասխան-հարցումէն, ան կ՛ըսէր, սահմանապահ զինուորները վախցան որ Լենին պապուկը ողջնցած է...★ Եկեղեցական մը, որ միշտ կը բացակայէր Ղեւոնդեանց կամ Ազգ. երեսփոխանական ժողովներէ, երբ առիթով մը կը յայտնէ թէ պիտի չկրնայ մասնակցիլ ժողովին, Սրբազան Հայրը իսկոյն կը պատասխանէ.- Տղա՛ս, նորէ՞ն մեռել ապսպրեցիր★ 1986թ. Ազգ. Առաջնորդարանի նորգութենէն ետք երրորդ յարկը յատկացուեցաւ Դպրեվանքի աւարտական սարկաւագներու, որոնք փորձառութեան համար պաշտօններ կը վարէին Առաջնորդարանէն ներս★ Առիթով մը երբ սարկաւագ մը ուշ կ՛իջնէ դրասենեակ եւ մուտքին կը հանդիպի Սրբազան Հօր, վերջինս կը հարցնէ.- Տղա՛ս, ինչո՞ւ ուշ մնացած ես, չըլլայ "traffic"ի (խճողումի) բռնուած էիր★ Վերջին տարիներուն երբ բառին ամբողջական իմաստով հայրենի ժողովուրդի ծառայութեան նուիրեց ինքզինք, եթէ չեմ սխալիր, հարցազրոյցի մը ընթացքին, երբ իրեն հարց կը տրուի, թէ՝ Սրբազան, այսքան մարդոց կ՛օգնէք, բայց չէ՞ք անդրադառնար որ շատեր կը խաբեն ձեզ, Սրբազան հայրը մեծհոգութեամբ կը պատասխանէ.- Իսկ դուք չէ՞ք անդրադառնար որ ես խաբուելու եկած եմ հոս...★

Կարելի չէ փակել սրտի այս խօսքը առանց չնշելու Մեսրոպ Սրբազանի նկարագրի այն գիծը, որ ներուի ինծի կոչել «սրբազան խենթութիւն»★ Կոչում մը, որ Պարոյր Սեւակեան տարազաւորումով նուիրականութեամբ կնքուած է, եւ առանձնաշնորհումն է ի վերուստ տրուած՝ բացառիկներու★ Արդարեւ Մեսրոպ Սրբազան ինքզինք յանձնառու կը դարձնէր այնպիսի նպատակներու, որոնք լաւագոյն ցուցանիշն էին իր գերմարդկային զոհողութեանց★ Կ՛ուզեմ յիշել այն պարագան միայն, որ Նոր Ջուղա Առաջնորդ եղած շրջանին վերահասու կ՛ըլլայ հեռաւոր Մալէզիոյ Մալաքա քաղաքի մէջ 1736 թուին թաղուած Երեւանցի վաճառական Սարգիսի որդի՝ երեսնամեայ տարաբախտ Յովհաննէսի շիրմաքարի գրութեան, թէ՝ ո՞վ պիտի տանի իրեն խապրիկը հայրենիքի ազատութեան★ Տարիներ շարունակ իր ուխտագնացութեանց ցանկին վրայ ամենայն երկիւղածութեամբ նկատի ունէր յիշեալ երիտասարդին շիրիմին այցը★ Եւ ո՛վ

հրաշք, երբ 1990-ին Հայրենիքի անկախութեան երազը երբ իրականացաւ, յաջորդ տարուան Փետրուարին Սրբազան Կռունկը չվարանեցաւ այդ խապրիկը աւետելու երկդարեան շիրմատիրոջ...★
Ահա այսպիսին ու շատ աւելին էր, եւ այդպիսին ալ պիտի մնայ Մեսրոպ Սրբազանը, որ մահկանացու ծնելով, անմահ մեկնեցաւ այս աշխարհէն...★

Անուշվարդ
(Հայր Անուշաւան Ծ. Վրդ. Դանիէլեան)
9 Դեկտ. 2003

Բայց Դարձեալ Պիտի Ծաղկի Կիլիկեան Ս. Աթոռին Պտղատու Ծառը...

(Սահակ եւ Մեսրոպ Սրբազաններու վախճանման առիթով)

Վերջին քանի մը օրերուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վիշտի ու սուգի վարագոյրով պատուեցաւ, երբ վեհափառ հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, միաբանութեան հետ միասին, իրերայաջորդ երկու առիթներով գուժեց կիլիկեան դարաւոր Ս. Աթոռի նուիրեալ երկու միաբաններէն՝ Տ. Սահակ Ս. Արք. Այվազեանի եւ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի անժամանակ կորուստները: Յունահայոց թեմի առաջնորդ Սահակ Արք. Յունաստանի մէջ, իսկ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի նախկին առաջնորդ Մեսրոպ Արքեպիսկոպոս Նիւ Եորքի մէջ իրենց հոգին աւանդեցին անակնկալ կերպով, խոր սուգի մատնելով Հայոց Եկեղեցին, յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր միաբանութեամբ, ժողովական մարմիններով ու հաւատացեալ ժողովուրդով:

Կիլիկեան ուխտի երէց սերունդին պատկանող այս զոյգ ներկայացուցիչները անցնող տասնամեակներուն իրենց ծառայութեան լուման նետեցին մեր եկեղեցւոյ, ազգի ու հայրենիքի գանձանակին մէջ: Վաստակ, որ իր տարողութեամբ ու նուիրումի որակով անգնահատելի պիտի մնայ Հայ Եկեղեցւոյ սպասաւորներու պատմութեան տոմարներուն մէջ:

Արդարեւ «մինչեւ վերջին շունչ» ծառայութեան դաշտին վրայ գործող այս երկու մշակները, թեմական կազմակերպ գործունէութեամբ ազգային եկեղեցական կեանքէն ներս իրենց կարեւոր ներդրումը կատարեցին: Հոգեւոր, կրթական,

դաստիարակչական, մշակութային ու ընկերային զանազան աշխատանքներով ու նախաձեռնութիւններով, հոգեկոյս սրբազանները սատար հանդիսացան մեր ժողովուրդին կողմէ իրենց վստահուած թեմերուն վերելքին ու բարգաւաճման:

Սահակ Սրբազանի վախճանումէն քանի մը օրեր ետք, անգամ մը եւս քամին հարուածեց Կիլիկեան Ս. Աթոռի պտղատու ծառը, երբ Մեսրոպ Արք. Աշճեան ի Տէր հանգեաւ սրտէն նետահար եղնիկի մը պէս: Արագավազ գործունէութեամբ յատկանշուող ու բազմաճիւղ աշխատանք միաժամանակ ծաւալող Աստուծոյ այս պաշտօնեան եւս, մինչեւ վերջին իր շունչը, հոգեւորականի կեանքը իմաստաւորեց ծառայութեամբ, թեմական աշխատանքներու թէ անհատական նախաձեռնութեանց ճամբով: 20 երկար տարիներ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան շրջանի եւ Քանատայի իր առաջնորդութեան օրերուն, թեմը ապրեցաւ հոգեւոր-մշակութային կեանքի ծաղկումի ու վերելքի շրջան մը, որուն լաւագոյն արտայայտութիւնները եղան նոր համայնքներու կազմութիւնը, եկեղեցիներու կառուցումը, հայկական վարժարաններու ստեղծումը, հրատարակչական աշխատանքը եւ մշակութային ձեռնարկները: Ստեղծագործ այս միտքը չբաւականացաւ սակայն սահմանափակ առաքելութեամբ եւ յետ առաջնորդութեան տարիներուն, ընդլայնեց զայն հայրենի մեր ժողովուրդի կարիքներուն գործնապէս աջակցելով: Առաքելութենէն անդին առաքելութեան փնտռտուքը տարաւ զինք հոն, ուր ազգին կանչը կը լսուէր, տխուր թէ ուրախ աղաղակներով:

Վեհափառ Հայրապետը Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ սրբազանին ու թեմի հաւատացեալ ժողովուրդին ուղղելով իր հայրապետական ցաւակցագիրը, կ՚ըսէ. «Ծառայութիւնը անսակարկ, անանձնական ու ամբողջական ծառայութիւնը Մեսրոպ Սրբազանին համար դարձաւ իր կեանքին դաւանանքը, իր առաքելութեան ուղեգիծը, իր գոյութեան նպատակը: Մեսրոպ Սրբազան դարձաւ հոմանիշ ծառայութեան: Ծառայութիւնը իրեն համար հանգամանքի բերումով սոսկ պարտաւորութիւն մը չեղաւ՝ որոշ ծրագիրներով ու որոշ ժամանակաշրջանի մէջ պարփակուած, այլ եղաւ ամենօրեայ տագնապ, ապրում, ձգտում, ժամ ու հանգիստ չճանչցող մնայուն եւ ուժական ընթացք»:
Կիլիկեան Ս. Աթոռի վերջին շրջանի պատմութեան մէջ Սահակ եւ Մեսրոպ սրբազաններու վաստակը, Անթիլիասէն առած իրենց ծառայական ոգիին արդիւնաւորութեամբ ու իրագործումներով անթառամ պիտի մնայ կիլիկեան դարաւոր Ս. Աթոռի կապուած ժողովուրդի կեանքին մէջ:

Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեան
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան

Վերջին Հեռախօսազանգը

(Մեսրոպ Արք. Աշճեանի յիշատակին)

Հեռախօսի զանգէն խոր քունէս արթնցայ եւ հազիւ կրցայ մութին մէջ փայլող բջիջայինին ձեռքս երկարել: Ակնոցներս մօտ տեղ մը չէի դրած: Զկրցայ թիւը կարդալ եւ խռպոտ ձայնով երեք անգամ «Ալօ, Ալօ, Ալօ» ըսի:

Պատասխան չկար: Միայն աղմուկ, իրարանցում եւ ժխոր: Կրկին «Ալօ,Ալօ» ըսի: Դարձեալ անպատասխան մնացի: Բայց նոյն աղմուկը շարունակուեցաւ: Յետոյ՝ գիծը անջատուեցաւ: Մտածեցի, որ ինչպէս շատ պատահած է, սխալ թիւ են հաւաքած եւ կամ Լոս Անճելըսէն կամ Մոսկուայէն բարեկամներ հաւաքոյթի կամ խրախճանքի պահուն, փորձած են իրենց հարազատներուն եւ մտերիմներուն հետ կապ հաստատել եւ գիշերուան ուշ ժամուն ուրիշ մէկը արթնցուցած ըլլալով, չեն համարձակած ձայն հանել եւ գիծը անջատելը՝ նախընտրած: Փորձեցի տակաւին չփախցուցած քունս վերագտնել եւ գիշերուան հանգիստս ապահովել: Ժամացոյցիս նայեցայ: Քնաթաթախ աչքերով չկրցայ ճիշտ ժամը որոշել: Զորսն անց կէս, հինգի միջեւ բան մը նկատեցի: Ուրեմն ժամանակ կար քնանալու:

Առաւօտեան ժամը իններին, հեռախօսը դարձեալ հնչեց: Մայր Աթոռի ներքին ցանցին զանգն էր: Սովորաբար միջեկեղեցական վարկային հիմնադրամի մեր գրասենեակին հետ կապուելու եւ անհրաժեշտ կարգադրութիւնները ընելու պահն էր: Զարմացայ, երբ լսեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձայնը: Նոյնը չէր: Սովորաբար առաւօտները կը խօսէր աշխոյժ, յստակ եւ քաջալերութիւն ու վստահութիւն փոխանցող թոնով: Այս անգամ ձայնին մէջ զսպուածութիւն, յուզում եւ վարանում զգացի:

- Աստուած օգնական սրբազան...

Սովորական «բարի լոյս ի՞նչպէս ես այսօր»ը չլսեցի:

- Աստուած օգնական վեհափառ...ես ալ, չհասկցայ, թէ ի՛նչպէս բերնէս դուրս եկան «խեր ըլլայ, Վեհափա՛ռ» բառերը:

- ...Երանի խեր ըլլար սրբազան... կը ցաւիմ, որ այս առաւօտ բարի լուր չունիմ քեզի տալու:

- Ի՞նչ պատահած է, Վեհափա՛ռ:

- Դժբախտութիւն մը պատահած է, զոր առաջին հերթին կ՛ուզեմ քեզի հետ կիսել:

- ի՞նչ դժբախտութիւն, Վեհափա՛ռ, հարցուցի այլայլած:

- Մեսրոպ Սրբազանը սրտի տագնապ մը անցուցած է...

- ...Յետո՞յ, յետո՞յ...Վեհափա՛ռ:

- ...Կեանքը քեզի...

Լախտի հարուածի պէս գուժը իջաւ սրտիս եւ հոգիիս..

- «Ձեր մօտ կրնա՞մ գալ, վեհափա՛ռ» խնդրեցի խեղդուկ ձայնով եւ չկարենալով այլեւս ինքզինքս զսպել:
- ...Հիմա... անշուշտ...

Դէպի վեհարան ճամբուս վրայ մտայ Մայր Տաճար եւ Իջման Սեղանին առջեւ ծնրադիր «Հոգւոց հանգուցելոյ» աղօթքը ըրի, ճիշտ այնպէս, ինչպէս Մեսրոպ Սրբազանին հետ միասին, նոյն աղօթքը ըրած էինք երջանկայիշատակ Գարեգին Ա. Վեհափառի հոգին աւանդելէն ետք: Յետոյ բարձրացայ վեհին մօտ: Դրան առջեւ արդէն կը սպասէր: Ջերմօրէն գրկեց զիս եւ հազիւ կրցաւ ըսել.
- Ափսոս, ափսոս... հազա՛ր ափսոս:
Միայն «Մոկաց Միրզէն» կը պակսէր...

Փորձեցի մանրամասնութիւններ քաղել անակնկալ եւ ցնցիչ մահուան պարագաներուն մասին, որպէսզի մխիթարութեան դոյզն շարժառիթ մը ունենամ. տեսայ, որ անօգուտ է: Վեհափառն ալ ցնցուած էր: Որով հրաժեշտ առի փորձելով աչը համբուրել: Չթողուց:

Ընկերացաւ մինչեւ գրասենեակի դուռը, ձեռքը դրաւ ուսիս եւ ըսաւ:
- Քաջ եղիր:
Հազիւ արցունքներս զսպած՝ մտայ սենեակ, փուլ եկայ անկողնիս վրայ եւ լացի դառնապէս:

Չեմ գիտեր, թէ ինչն էր, որ զիս մղեց յանկարծ վեր կենալ եւ փնտռել բջիջային հեռախօսը: Բացի ստացուած զանգերուն բաժինը: Ստացուած վերջին զանգը Մեսրոպ Սրբազանի Ամերիկայի բջիջային հեռախօսի թիւն էր...
- Ա՛յ սրբազան... վա՛յ սրբազան: Ուրեմն դուն հեռաձայնեցիր, բայց... չկրցար խօսիլ եւ տապալեցար:

Հեռախօսը իր սիրած գործիքն էր: Չէր կրնար անկէ բաժնուիլ հինգէն տասը րոպէ. անգամ մը, եթէ հեռախօսազանգ չստանար, ինք կը զանգէր: Անոնցմէ քանի մը հատը օրուան մէջ ես կը ստանայի, մանաւանդ երբ անհանգիստ զգար:
- Սրտիս վրայ ծանրութիւն կը զգամ: Ի՞նչ ընեմ:
- Ստամոքսս խանգարուած է, ի՞նչ դեղ առնեմ:
- Ուսերս եւ գլուխս շատ կը ցաւին: Ի՞նչպէս կրնաս օգնել:
- Շատ յոգնած կը զգամ: Ոտքերուս վրայ ուժ չկայ: Ի՞նչ դեղ առնեմ:

Պաշտօնապէս զիս կը ներկայացնէր, իբրեւ իր անձնական բժիշկը: Այդ ալ անշուշտ իր պատմութիւնը ունի, զոր օր մը կը պատմեմ իմ յուշերուս մէջ: Բայց վայ որ իրեն հարց տայի, թէ ինչո՞ւ մասնագէտ բժիշկներու մօտ չերթար: Պատասխանը նոյնն էր:

- Սրբազա՛ն, հաւատա՛, որ կ՚երթամ: Բայց անոնք զիս լաւ չեն ճանչնար, չեն գիտեր իմ ինչ ըլլալս: Ինչ դեղ որ տան չօգներ: Դուն զիս ողն ու ծուծովս կը ճանչնաս: Քու տուած դեղերդ գոնէ որոշ ժամանակ մը զիս կը հանգստացնեն: Ուրեմն «հիւանդս» կրկին անհանգստացած էր: Այս անգամ, սակայն, ծանրօրէն: Յաջողած էր գանգել: Բայց չէր կրցած... խօսիլ:

Դժուար էր եւ մինչեւ վերջ ինծի համար դժուար պիտի ըլլայ այդ պահը երեւակայել, ընկալել կամ պատկերացնել: Վերջին անխօս հեռախօսազանգը... ամենամտերիմ եւ ամենահարազատ հոգեւոր եղբօրմէս:

Հիմա, սիրելի Մեսրոպ Սրբազան, ներէ որ վերջին անգամ ըլլալով քեզի հրապարակաւ հարցնեմ: Վերջին րոպէին դուն ի՞նչ տեսար, քու հոգւոյդ մաքրութեան, բարութեան եւ ազնւութեան մէջ նոր ի՞նչ բան յայտնուեցաւ, որ հեռախօսը ձեռքդ առիր եւ ուզեցիր քու սովորութեանդ համաձայն զիս ալ բաժնեկից դարձնել անոր:

Այլեւս երկար մի՛ չարչարուիր եւ մի տագնապիր: Քեզի հանգիստ պէտք է: Դուն խաղաղութեան պէտք ունիս: Աստուծոյ, մեր եկեղեցւոյ եւ մեր հայրենիքին ազնիւ, հաւատարիմ, բարի եւ անդուլ մշակ, հանգի՛ստ քու հոգնատանջ ոսկորներուդ եւ խաղաղութիւն Աստուծոյ շնորհքներով օժտուած քու անբիծ հոգիիդ: Մի՛ մտածեր մեր մասին շատ, ես գիտեմ, որ Աստուած ինքզինք իւրաքանչիւրիս կու տայ ըստ մեր չափի եւ հասակի, ինչ մեզքս պահեմ: Վերջին հեռախօսազանգդ միշտ ականջիս մէջ է եւ կը հնչէ: Պահեր կան, երբ կը մտածեմ, որ պիտի ուզէիր ինծի յանձնարարել, որ այս դժուարին օրերուն մօտ ըլլամ քու հարազատ եղբօրդ եւ քրոջդ՝ որուն զաւակներէն մէկուն՝ քու աւագանի անունդ կրող Հրայրին կնքահայր ըլլալուն մխիթարութիւնը տուիր ինծի: Այդ պարտականութիւնը տուած եմ եղբօրս Վահէին եւ իր տիկնոջ Նորային, որոնք ամբողջ ընտանիքով Նիւ Եորք չեն հիմա, քու վերջին օծումիդ ներկայ գտնուելու:

Երբեմն ինծի կը թուի, թէ դուն ինծի պիտի թելադրէիր, որ այլեւս աւելի ուշադիր ըլլամ ետիդ թողուած այն ծնողազուրկ երեխաներուն կամ մեծահասակ այն որբերուն, զորս պսակելով եւ տուն տեղ տալով անոնց նոր կեանքի կոչեցիր: Յաճախ կը մտածեմ, թէ ո՞ր կէս թողած գիրքդ պիտի ուզէիր, որ ամբողջանար. կամ Ակադեմիայի, Մատենադարանի, կրթական, մշակոյթի եւ ընկերային ապահովութեան նախարարութեանց հետ սկսած ո՞ր ձեռնարկները պիտի փափաքէիր, որ իրենց աւարտին հասնին քեզի մտերիմ այնքան ակադեմական եւ գիտական գործակիցներովդ: Այս Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն, գիտեմ բանտերու, որբանոցներու, ծերանոցներու եւ խրճիթներու մէջ խմբուած քանի հարիւրաւոր եւ հազարաւոր կիներ, այրեր, երիտասարդներ, երեխաներ եւ կարօտեալներ պիտի սպասեն քու օրհնաբեր այցելութիւններուդ հաւատա՛

Սրբազա՛ն, բոլորը ոտքի են կանգնած եւ ամբողջ սրտով կը փափաքին, որ քու աճիւններդ Հայաստանի ճամբով տարուին Անթիլիաս, որպէսզի իրենք ալ կարենային իրենց արժանի յարգանքը մատուցել այն Մեսրոպ Արք. Աշճեանին, զոր ճանչցան իբրեւ խնամատար Հայր, մեծ հրապարակախօս եւ հրապարակագիր, գիտնական, պատմագէտ, մտաւորական, օրինակելի հոգեւորական, մեծ հայրենասէր յաւիտենութեան մշտնջենական ուխտաւոր:

Այս երեկոյ անդրադարձայ, որ քու կազմակերպած իւրաքանչիւր ուխտաւորական ճամբորդութենէդ վերադարձին, քեզի հետ կը բերէիր մեր աւերուած Պատմական Հայաստանի վանքերէն, քաղաքներէն, սրբավայրերէն եւ հերոսամարտերու հանդիսասրահներէն մէկական բուռ հող: Որովհետեւ կը հաւատայիր, որ Հայոց սուրբ հողը ունի մոգական գաղտնիքը հոգերն ու ազգայինը իրար շաղախելով կերտելու յաւիտենական արժէքներ:

Գացի եւ փնտռեցի զանոնք: Բարեբախտաբար գտայ: Եւ հիմա փոքրիկ ճամբորդական ձեռքի պայուսակը, որ ինծի հետ Անթիլիաս պիտի գայ, ունի հիմնական մէկ բովանդակութիւն. մասունքներ այն սրբավայրերէն եւ պատմական Հայաստանի քաղաքներէն, ուր քեզ առաջնորդեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչը, Ս. Մեսրոպ Մաշտոցը (որուն անունը կրողներուն արժանաւորագոյններէն եղար), Ս. Գրիգոր Նարեկացին, մեր մեծանուն ֆետայիներն ու անանուն մեծ հերոսները: Առանց այդ սուրբ հողերու բուռերը գրկելու դուն չես խաղաղիր:

- Մշոյ Սուլթան Ս. Կարապետ
- Մշոյ Կարմիր Վանք
- Էրզրում
- Իգդիր
- Վարագայ Վանք
- Բագաւանի Ս. Յովհաննէս եկեղեցի
- Մշոյ Առաքելոց Վանք
- Սոխորտ
- Աղթամար
- Արածանի գետի այն ափը, ուր ըստ քու պրպտումներուդ, Վռամշապուհ արքան դիմաւորեց Ս. Մեսրոպ Մաշտոցը, երբ ան «նմանեալ Մովսէսի» նոր այբուբենը կը բերէր Հայոց աշխարհ:
- Վան
- Անի
- Մուղնիի Ս. Գէորգ վանք, զոր դուն վերակառուցիր անձամբ, 1700ամեակի առիթով:

Մէկ ժամէն Մայր Աթոռէն ճամբայ կ՚ելլեմ դէպի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տուն, դէպի Անթիլիաս, մասնակցելու քու թաղման արարողութեանց: Տակաւին չեմ ուզեր հաւատալ: Գոնէ չեմ կրնար ընդունիլ: Բայց այս է իմ ճիտիս եւ հոգիիս պարտքը:

Սիրտս այսքան մտերմօրէն, հարազատօրէն եւ անկեղծօրէն քեզի բանալէ ետք, ակամայ աչքս կ՚երթայ ձեռքի ժամացոյցիս:

Ժամը 4:47 A.M. ցոյց կու տայ:

Վերջին հեռախօսազանգիդ պահն է մօտաւորապէս: Բայց հիմա իմ ողջ էութեամբս գիտեմ, որ եթէ առիթը ունենայիր խօսելու՝ պիտի ըսէիր.

- Իբրեւ ծառայ Աստուծոյ, ինչ ծառայութիւն, որ կրցայ մատուցել, թող Տէրը ընդունելի համարէ, հալալ ընէ մեր եկեղեցւոյ, մեր ժողովուրդին եւ մեր հայրենիքին:

Խորապէս կը հաւատամ, որ այս է իւրաքանչիւր իրաւ, վաւերական, իմաստուն, ազնիւ եւ բարի հոգեւորականի վերջին անխօս հեռախօսազանգի պատգամը:

Տաթեւ Արք. Սարգիսեան
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան
5 Դեկտեմբեր 2003
Ս. Էջմիածին

Աստղն ու վարդը

Դիմացս տիեզերքը՝ աստղավառ ու անծիր,
Մոգական մի ձգողութեամբ քղանցքներն է բացել ինձ՝
Ոսկեզմուռ, պատմուճանուած շղարշուել է իմ հոգին:
Ես փնտրում եմ անհունի մէջ մի աստղ,
Որ իջել էր մի ժամանակ հողի մէջ
Ու տարրացել նրա հետ★
Այն ձուլուել էր իբրեւ պատկեր մի յաւէրժ,
Դարձել մարմին, սիրտ ու հոգի մի լուսէ
Ու մեծ սիրոյ զոհաբերման Սուրբ Նշան:
Խունկ էր դարձրել անուշաբոյր սիրտը իր,
Որ սփռում էր հայրենի մեր աշխարհում
Սէր ու գգուանք, յոյս անհատնում:
Անձը նրա մի սկիհ էր սրբասուրբ,
Ուր ապրում էր նախնիների նշխար դարձած վեհ հոգին՝

Աւետելով արշալոյսը խարխլուած մեր տաճարի...
Ճառագում էր նրա հոգուց կթած լոյսը,
Բախում դռներ կիսաւեր,
Իբրեւ պատգամ սէր աւետում
Տնանկներին, որբուկներին ու անկեալին...
Եւ հիւսում էր ոսկեշարան մի տեսիլքով
Պատմութիւնն իր,
Պատմութիւնը իրեն ծնող ժողովրդի ու հողի:
Յաղթանակով իր պանծացած, յախուռն, վարար
Ընթանում էր նա այնժամ՝
Աւետելու մարդուն, հային
Յաղթութիւնը արդարութեան,
Ներշնչելով իսկութիւնը յաղթանակի ու յարութեան,
Փոխանցում էր մեզ բոլորիս
Անկոտրում կամք ու քաջութիւն:
Եւ ուժասպառ ու քարացած
Հոգիներում մէկէն յանկարծ
Կենդանացաւ կեանքը ասես:
Կեանքը հագաւ իմաստ դարձած շապիկը իր
Եւ բաբախեց շռայլօրէն ու հիացած՝
Սրտի նման իր յուզառատ:
Այդ հոգին էր, որ անմեկնելի գուրգուրանքով ու մեծ սիրով
Իրենց խաչից ցած իջեցրեց
Տկարին ու տնանկին,
Իմաստունին, բանաստեղծին,
Պարզ անձերին ու մեծերին՝
Մեր ապագայ սիրոյ տաճար կերտողներին:
Ինքը նորից աստղ դարձած
Երկինք ելաւ՝ յուշիկ-յուշիկ իր քայլերով,
Այնպէ՜ս քնքուշ, այնպէ՜ս անտես,
Որ զարմացան բոլորն յանկարծ՝
Իրական էր նա, թէ երազ:
Բայց, տեսնելով դէմքն այդ լուսէ,
Որ հսկում էր շուրջն իր բոլոր
Աղօթարար մի հայեացքով,
Հաւատացին այդ տեսիլքին:

Ժողովուրդը մի վարդ ձօնեց
Իրեն սատար այդ լոյս աստղին:

Խաղաղութիւն էր...
Ու սրտի վարդն այդ սաւառնեց դէպ անծիրը՝
Մի աստղի հետ,
Ու մեծ սիրով եւ վեհացնող, ազնուացնող իր ժպիտով
Մէկ էլ նայեց
Ու սաւառնեց՝ ձուլուելով յաւէրժութեան մեծ խորհրդին:
Եւ երկնքում հաստատելով տեղն իր լուսէ,
Իր յոյսն ու սէրը թողեց մեզ...

Դիմացս տիեզերքն է՝ աստղավառ ու անծիր,
Որ մոգական ձգողութեամբ ձգում է ինձ
Դէպի աստղն այդ ճենճերող,
Որ հիանում է իրեն ձօնուած մեն մի վարդով...
Այո՛, չկայ գիշեր ճենճերացող աստղին այդ ու այդ վարդին,
Հեքիաթ դարձած յաւէրժական ու լուսաւոր այդ կեանքին...

Զարեհ վարդապետ Կաքաղեան
Խոր Վիրապի Վանահայր

Սրբազանի Հոգին Հանգչում է Երկնային Արքայութեան Լոյս Խորանի Ներքոյ

(Արագածոտնի թեմի առաջնորդ Տէր Թորգոմ աբեղայ Տօնիկեանի խօսքը՝ ասուած 2004 թ. Դեկտեմբերի 5-ին Մուղնիում Մեսրոպ Սրբազանի մահուան տարելիցի առիթով)

Այս պահին անկեղծօրէն հոգուս մէջ խաղաղութիւն կայ, որովհետև հաւատքով եմ լցուած, քանզի մեր Սրբազան հօր հոգին հանգչում է երկնային արքայութեան լոյս խորանի ներքոյ: Այսօր, այստեղ գտնուողները, գրեթէ բոլորը հաւատքով, վստահութեամբ եւ աղօթքով գործակցել, մտորել, խորհել, աշխատել եւ ստեղծագործել են Մեսրոպ Արք. Աշճեանի ուղեկցութեամբ, մտայնութեամբ, առաջնորդութեամբ, մտքի ծնունդով, ինչպէս նաեւ իր ստեղծագործական աշխատանքի ուժականութեամբ: Միակ անձը, որ այս դաշտի վրայ իր երիտասարդութեան պատճառով չի գործակցել, երեւի թէ, ես եմ: Սրբազան հօր հետ

ես ընդամենը առիթ եմ ունեցել միասնական մէկ միջոցառման կազմակերպչական աշխատանք տանելու: Երեւի թէ այստեղ ներկաներից բոլորն էլ յիշում են Վարդավառի տօնը, որը եղաւ վերջին արարողութիւնը, վերջին տաղաւար տօնը, երբ Սրբազան հօր հետ միասին հասարակաց աղօթքի բռնուեցինք Մուղնու Սուրբ Գէորգ եկեղեցում: Այդ ժամանակ ես նորանշանակ հոգեւորական էի այս թեմական տարածքում եւ առաջին իսկ այդ տօնին փոխադարձ արձագանք եղաւ միասնաբար մեր եկեղեցու այդ մեծ տօնը մատուցելու, իր հոգեւոր խորհրդի իմաստով, իր ազգային աւանդոյթների, նիստ ու կացի, սովորոյթների իմաստով. այսպէս մատուցելու մեր ժողովրդին եւ նպատակ հետապնդելով հոգեւոր կեանքի վերարկութեան համար: Ձեզ սուրբ հոգու մխիթարութիւնը, իսկ մեզ բոլորիս՝ ուղղակի թողած յիշատակը իբրեւ ճանապարհ ոգեւորելու, ապրելու, արարելու, պայքարելու, ստեղծագործելու, հաւատալու համար:

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան

Ինձ համար շատ դժուար է ներկայացնել մի մարդու, որն ամբողջութեամբ իր մէջ ներառում էր հայ արժանաւոր հոգեւորականի եւ մտաւորականի կերպարը:

Ես այստեղ ցանկութիւն ունեմ խորասուզուելու իմ յիշողութիւնների մէջ, նորից ապրել այն ժամանակները, երբ Սրբազան հօր հետ քայլում էինք Ս. Գէորգ եկեղեցու բակում եւ զրուցում անելիք գործերի մասին: Դիտում էր վարպետների կողմից կատարուած աշխատանքները, սրտի մէջ խնդութիւն զգում ամեն մի քարի, ամեն մի տնկուող վարդի կամ թփի համար:

Նրա կողմից վերականգնուեց եկեղեցին, տնկուեց այգին եւ վերակառուցուեց երիցատունը: Նա նման էր մի մարդու, որ իր համար տուն էր կառուցում, այգի տնկում եւ սպասում այգու պտղին: Այդ տանը պակասում էր թոնրատունը, որտեղ պիտի թխուէր աւանդական լաւաշը ու ծխար օջախի ծուխը: Նա սիրում էր նստել թոնրի շրթին, թոնրից հանած տաք լաւաշի մէջ լցնել կարմրած հացի փշրանքը, պանիրը, սամիթը: Այդպիսով նա գոհանում էր Աստծուց եւ առնում հայրենի տան կարօտը: Երբ օտար ափերից հայրենիք էր գալիս, անմիջապէս այցելում էր եկեղեցի, վանատուն, գրադարան, իսկ յետոյ մի հայեացքով նայում այգուն, կանաչած ծառերին ու ծաղիկներին, ուրախանում եւ նոր յանձնարարականներ տալիս աշխատողներին: Սրբազան հայրը երբեք չէր

վախենում գործի ծանրութիւնից, ամեն մի միջոցառում կազմակերպելիս, կարողանում էր այնպէս անել, որ ամեն ինչ անցնի բարձր մակարդակով: Գեղեցիկ էր Համբարձման տօնը, Վարդավառը, որով նա կարծես նոր ուժ էր ստանում իր ապրած կեանքի վրայ եւ մեր կեանքն էլ լցնում էր նոր ուժով, պատմութեան գրկից վեր հանում երգն ու խաղը: Ինձ համար շատ յիշարժան է 2002թ., երբ եղբօրս երեխաների մկրտութեան օրը հարց բարձրացրեցինք պարսկահայերի համար սրբութիւն դարձած Ս. Շուրչկանի Աւետարանը Մատենադարանից դուրս բերելու վերաբերեալ: Ես երկու անգամ դիմել էի Մատենադարանի տնօրինութեանը, բայց նրանք մերժել էին ասելով, որ այստեղից ոչ մի ձեռագիր չի հանուել այսքան ժամանակ: Սրբազանը լսելով ինձ ասաց. պարսկահայեր չ՞ատ կան Աշտարակում: Ասացի. Սրբազան եթէ դուք Սուրբ Գիրքը դուրս բերէք ի տեսութիւն ժողովրդի, իմացած եղէք, որ Հայաստանի տարբեր մարզերից պարսկահայեր ուխտի կը գան համբուրելու Սուրբ Աւետարանը: Սրբազան Հայրը ասաց, որ Յունուար 26-ին Սուրբ Գիրքը կը բերեն Մուղնու Ս. Գէորգ եկեղեցի: Զմռան այդ օրը հազարաւոր ուխտաւորներ յաղթահարելով ամեն տեսակի դժուարութիւններ, նոյնիսկ ոտքով եկել էին ուխտի Ս. Գէորգ եկեղեցի տեսնելու եւ ծնկի գալու Շուրչկանի հրաշագործ Աւետարանի առաջ:

Բազմաթիւ հաւատացեալներ մատաղներ էին անում, աղօթում եւ արտասուում:

Սրբազան հայրը ասաց.

Այն ամենը, ինչ ես կարդում էի պատմութեան էջերում, այսօր ես ականատես եղայ իմ աչքերով: Կարծես անցել եմ դարերի խորքը եւ զրուցում եմ մեր պատմութեան հետ:

Եթէ նա ոչինչ արած չլինէր, այս մէկ գործով կը մնար մեր պատմութեան յիշողութիւններում, յատկապէս պարսկահայերի մէջ:

Մեսրոպ Արք. Աշճեանը ոչ միայն հոգեւորական էր, այլ նաեւ ճարտարապետ, գրող եւ ազգանուէր մտաւորական:

Բացի եկեղեցու վերանորոգումից, մտածում էր նաեւ դպրոցի մասին: Երբ 2001 թուականին մասնակցեցին դպրոցում կազմակերպուած «Հայոց Դարձ» բեմականացմանը, Սրբազանը նկատեց դպրոցի անբարենպաստ վիճակը եւ զարմացաւ, թէ ինչպէս են այդ երեխաները սովորում այդտեղ: Նա յանձն առաւ վերանորոգել դպրոցը, գտաւ նուիրեալ մարդիկ, որոնք օգնեցին նրան կատարել այդ աշխատանքները: Շատ եմ ափսոսում, որ հոգելոյս Հայրը չտեսաւ դպրոցը վերակառուցուած վիճակում, բայց որպէս ազգասէր նուիրեալի դպրոցը կոչուեց Մեսրոպ Արք. Աշճեանի անուամբ, որի համար մեծ աշխատանք կատարեցին մեր սիրելի մտաւորականները: Սրբազան Հայրը վերակառուցեց նաեւ Մուղնու

մշակոյթի տունը եւ այնտեղ լցրեց գոյքով: Սրբազանը նման էր մեղուի, որ օտար ափերից իր աշխատանքի հասոյթի նեկտարը բերում էր իր հայրենիքին:

Աննկարագրելի էր նրա հոգեւոր պատկերը, որպէս իրօք հայր: Հա՛յր բոլորի համար, նա հայր մնաց որբերի համար:

Նա շատ յաճախ որբանոցից բերում էր սիրող գոյգերին եկեղեցի, պսակում, սեղան բացում, շնորհաւորում նորապսակներին եւ մաղթում նրանց բախտաւորութիւն, շատ դէպքերում էլ տուն էր գնում, կահ-կարասի նորաստեղծ ընտանիքի համար:

Նա շատ կապուած էր մուղնեցիների հետ եւ նրանց մէջ թողեց իր սէրն ու նուիրումը: Աստուածային նախախնամութեամբ երբ Նա հեռացաւ մուղնեցիներից, ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնեց, պահանջելով որ իրենց սիրելի Սրբազանի աճիւնը հանգիստ առնի Մուղնու հողի մէջ:
Ես շնորհակալ եմ Աստծուց, որ մեր ազգի մէջ ծնեցնում է այսպիսի նուիրեալներ, ինչպիսին էր Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը:

Տ. Եղիշէ քհնյ. Բարսեղեան
Մուղնու հոգեւոր հովիւ

Սրբազանի Ուխտը Հայաստանն էր

Ունենալ մարդ եւ կորցնել, ծանր է. դա Մեսրոպ Սրբազանն էր: Մարդ եւ հոգեւորական, որը նուիրուած էր իր կոչումին եւ իր ուխտին: Սրբազանը եզակի պարգեւներից էր մեր ազգի, մինչեւ հասկանում ես եւ տեղաւորւում, ցաւօք սրտի, ուշ է լինում ֆիզիկական անձը: Իմ ապրած ժամանակներում առաջին հոգեւորականն է եղել՝ շատ մեծ հնարաւորութիւնների տէր մարդ, ցանկացած գործի ժամանակ առաջին հերթին հացն էր կերակրում, յետոյ անցնում իր գործին, իրեն համար բոլորն էլ ընդունելի էին: Սրբազանը, երբ սկսեց իր բարեգործութիւնը հայրենիքի հանդէպ, եղան մարդիկ, որոնք հասկացան դա շատ լաւ, իսկ մարդիկ էլ, որ չընկալեցին, էլի լաւ, որովհետեւ ամեն բան Աստուծոյ կամօք է լինում, Աստուած ինքն է տալիս, յետոյ վերցնում: Եթէ օգտուեցիր՝ լաւ, ուշադրութիւն չդարձրեցիր՝ ափսոս:

Սրբազանը սիրում էր կառուցել եկեղեցիներ, մտածում էր ազգային աւանդութիւնների մասին, ապրում էր հայրենիքի կանչով, երազում էր տեսնել այն իրողութիւնները, որոնք կարդացել էր գրքերում իր նախնիների մասին: Եւ այս ուխտի համաձայն, նուիրուեց, ծառայեց, գործեց այնքան ինչքան Աստուած կեանք պարգեւեց իրեն: Ես՝ ինքս, իրական, գործնական աշխատանքներում շատ եմ եղել Սրբազանի հետ, երբ ամեն ժամանակ տեսնում էի, թէ ոնց էր Սրբազանը ամեն մի

գործից յետոյ ոգեւորուած եւ ինչպիսի եռանդով էր մտածում ու պատրաստւում յաջորդ այն «Մեծ» գործին, որը նպաստելու էր ազգային ցանկացած բնագաւառի զարգացմանը: Այս ամենի հետ մէկտեղ, Սրբազանի առողջականը լաւ չէր, բայց միեւնոյնն է, անում էր այն, ինչը կարեւոր էր ազգին: Մի անգամ Ջաւախքում կազմակերպել էր բարեգործական ծաւալուն միջոցառում, որտեղ մասնակցում էր մեր՝ «Սասուն» ազգային երգի-պարի համոյթը: Միջոցառումը տեղի էր ունենում ձմռանը: Շատ դժուար եւ ծանր օրեր էին, ճանապարհները, ձեան պատճառով, փակ էին, օրերով մնացել էինք ճանապարհին, բայց հասանք մեր նպատակին: Մեր հետ էր նաեւ Մեսրոպ Սրբազանը: Ճանապարհից ետ չվերադարձաւ, ինչպէս մենք, այնպէս էլ ինքը յաղթահարեց այդ բոլոր դժուարութիւնները: Եւ այսպէս, շատ ու շատ ճանապարհորդութիւններ եմ ունեցել Սրբազանի հետ: Մենք ազգովին ականատես եղանք շատ իրողութիւնների, ապրեցինք պատմական օրեր, գնահատեցինք մեծագոյն արժէքները, որի համար փառք եմ տալիս Աստուծոյ:

Ինձ համար մի հետաքրքիր աշխարհ կայ՝ հասանելի եւ ոչ հասանելի. դա մարդկային աշխարհն է: Դարեր շարունակ մեր ազգը պայքարել է ունենալու Անկախ Հայաստան: Այս հարցերում աւելի աշխոյժ մասնակցութիւն են ունեցել նուիրեալ մարդիկ, որոնցից մէկն էլ Մեսրոպ Սրբազանն էր: Այդպիսի մարդկանց պայքարը եղել է երկրի շէնացման համար, օտար ափերից հայ գաւակների հայրենիք վերադարձի համար, մեծագոյն արժէքների հայրենիք տեղափոխման համար: Եւ յանկարծ այսպիսի մարդու յուղարկաւորութիւնը տեղի է ունենում ուրիշ երկրում, ուրիշ հողի վրայ, որը անբացատրել է: Սրբազանի նմանօրինակ յուղարկաւորութեան համար ոչ մի բացատրութիւն չի արդարացնում , քանի որ Սրբազանը իր աշխարհով Հայրենի Աշխարհն էր: Սրբազանի ուխտը Հայաստանն էր, իսկ իր ուխտատեղին՝ Մուղնու Ս. Գէորգ եկեղեցին:

Ովքեր չհասկացան շա՜տ ափսոս, կը գայ ժամանակը եւ կը հասկանան, որ ամեն բան չէ, որ նիւթական արժէքներով պէտք է որոշել. կայ մահ, որի համար պատասխան պէտք է տալ:

Անդրանիկ Սարկաւագ Մանուկեան
«Սասուն» երգի-պարի համոյթի
գեղարուեստական ղեկավար

ԳՐՈՂՆԵՐ

Հոգու Մարդը

Մեր այս մահաշատ ժամանակներում քիչ է պատահում, որ այսքան մարդ՝ ամենատարբեր ասպարէզներից, այսքան միասիրտ, վշտով ու ափսոսանքով արձագանքէն մի անձի կորստին, միաձայն խօսեն նրա գործի ու վաստակի, նրա կարեւորութեան մասին, մանաւանդ որ այդ անձը կրօնաւոր էր, իր կոչումով՝ կապուած էր Աստծուն ու երկնքին, ունէր պատկառազդու եպիսկոպոս, գերաշնորհ, սրբազան եւ մեծարանքի այլ տիտղոսներ:

Սակայն այս բարձր տիտղոսները չէին հեռացնում մեզնից Մեսրոպ Արք. Աշճեանին: Զարմանալի մի շնորհով, իր մարդամօտութեամբ, մեղմ, հանդարտ խօսելաձեւով, իր ժպիտով նա մտնում էր , ինչպէս ժողովուրդն է ասում, մարդկանց սիրտը, դառնում մերձ ու մօտիկ: Յիշում եմ, Գիտութիւնների Ակադեմիայում գիտնականների մէկի գրքի շնորհանդէսն էր՝ գինեաճնով աւարտուող. մեր լուսաւոր եւ, աւաղ, լուսահոգի Լեւոն Հախվէրդեանը, որ գինի խմելու համար չէր սպասում գինեաճնների, բաժակ բարձրացրեց Մեսրոպ Սրբազանի կենացը եւ իրեն յատուկ հմայիչ քաղցրախօսութեամբ, լուրջն ու կատակը իրար խառնելով, գոչեց.

-Տո՛, ի՞նչ սրբազան, ի՞նչ եպիսկոպոս, եթէ ուզում եք իմանալ, նա իսկի էլ եպիսկոպոս չի, նա մեր ընկերն է, մեր առօրեայի մասնակիցը:

Մեսրոպ Սրբազանը մեղմօրէն առարկեց Լեւոնին, չեշտելով, որ ինքը առաջին հերթին ծառան է Հայ Եկեղեցու, եւ ծառայ լինելո՛վ է, որ նուիրուել է հայրենի ժողովրդին, նրա մշակոյթին, նրա կարիքներին:

Այնուամենայնիւ, ինչ-որ առումով Լեւոնը ճիշտ էր: Ճիշտ էր նաեւ Մեսրոպ Սրբազանը: Նա իսկական հաւատացեալ էր, իսկական հաւատաւոր: Սակայն իր մէջ եղած ողջ հաւատի ներուժը նա դարձնում էր գործ, այնքան բազմազան ու բազմաճիւղ, որոնց թուարկումն անգամ այս կարճառօտ խօսքի մէջ թւում է անհնար: Նա մեր ազգի պատմութեանը, նրա հոգեւոր արժէքների, նրա երկրային հոգսերի, նրա որբերին, որդեկորոյս մայրերին, նրա կարօտեալներին ծառայում էր Մուղնու վանքի ճգնաւորի նուիրումով եւ ջերմեռանդութեամբ: Նա իր ազնիւ ու անկաշառ գործունէութեամբ, հոգեւորականի անբասիր կերպարով նորոգում էր ոչ միայն կիսաւեր եկեղեցիները, այլեւ նորոգում էր կիսաւեր եկեղեցիները հոգիների մէջ:

Մեր յարգանքը եւ երախտալից խոնարհումը նրա հեռաւոր, բայց մեր հոգիներին այնքա՛ն մօտ, խնկաբոյր չիրիմին:

Սիլվա Կապուտիկեան
Բանաստեղծուհի

Ամբողջովին Խաղաղութիւն Եւ Մեղմութիւն Էր Մեսրոպ Սրբազանը

Մեսրոպ Արք. Աշճեանը ինձ համար հոգեւորականի իսկական տիպար էր, որն իր անձի մէջ միաւորում էր մի կողմից՝ ծառայութիւնը Հայ Եկեղեցուն, միւս կողմից՝ հայ մշակոյթին: Բարեբախտաբար, մեր պատմութեան մէջ այդ համատեղումը շատ յաճախ է տեղի ունեցել, էլ չեմ ասում, որ այդ երկուսին ծայր անհրաժեշտութեան դէպքում, միացել է նաեւ զէնքը:

Հրաչեայ Ղափլանեանի անուան Դրամատիկական Թատրոնի «Յիսուս Նազովրեցին եւ նրա Երկրորդ Աշակերտը» առաջին ներկայացումը, որի պիէսի հեղինակն եմ ես, ներկայ էր նաեւ Սրբազանը: Ինձ շատ էր հետաքրքրում նրա կարծիքը, մանաւանդ որ պիէսում Յուդայի կերպարը հեռու էր կանոնացուած աւանդներից: Հոգեւորականներն էլ, անշուշտ, մեզ նման մարդիկ են, նրանց մէջ էլ կան առաջադէմ մտածողներ եւ պահպանողականներ: Սրբազանը ինձ հաճելիօրէն զարմացրեց իր լայնախոհութեամբ եւ գեղարուեստի ընկալման նուրբ զգացողութեամբ: Այն, որ գովեստի իր խօսքը հերթապահ քաղաքավարութիւն չէր, երեւաց այն բանից, որ նա ամբողջ թատրոնին, թուով մօտ 70 հոգու, հրաւիրեց Հռիփսիմէ վանքին կից ճաշատունը, որտեղ, ազգագրական մի հրաշալի համոյթի մասնակցութեամբ, մենք երանելի ժամանակ անցկացրինք միասին, եթէ շատ չեմ մեղանչի հայոց լեզուի դէմ՝ հոգեւոր ժամանակ:

Ամբողջովին խաղաղութիւն եւ մեղմութիւն էր Մեսրոպ Սրբազանը, այդպիսի հոգեւորականները կարճացնում եւ դիւրացնում են դէպի տաճար տանող ճանապարհը, որն այնքան էլ հեշտ չէ գտնել մեր դժուարին կեանքի պայմաններում, երբ նիւթական արժէքը համատարած գերակայում է հոգեւորին:

Վստահ եմ, որ Սրբազանը այս պահին դրախտից նայում է մեզ իր մեղմ, փափուկ ժպիտով, իսկ իր թողած յիշողութիւնը մեր կեանքում ծառայում է որպէս բարոյական անչափ անհրաժեշտ արգելակ:

Պերճ Զէյթունցեան
Թատերագիր, հրապարակագիր

Գերաշնորհ Տէր Մեսրոպ Արք. Աշճեան

Անհատներ կան, որոնց ներկայութիւնը այնքան ներդաշնակ ու բնական է ներհիւսւում մեր կեանքին, որ թւում է թէ միշտ պիտի լինեն մեր կողքին ու մեզ հետ, ինչպէս օդը, լոյսը, դասական արժէքը: Եւ երբ վրայ է հասնում անխուսափելին, խիստ ցաւագին ենք տանում կորստի ահագնութիւնը, որովհետեւ մեր հաւաքական կեցութեան մի որոշակի հատուածը միանգամից անշքանում է...

Այդպիսի բացառիկ անհատ էր Մեսրոպ Արք. Աշճեանը:

Հայերս, սովորաբար, հոգեւորի մասին խօսելիս նկատի ենք առնում թէ՛ կրօնական եւ թէ՛ մշակութային ոլորտը: Սրբազանը իր հարուստ էութեան մէջ համադրում էր տիպար հոգեւորականի ու հաւատաւոր մտաւորականի որակները:

Լայն ծիրի մէջ էին նրա հետաքրքրութիւնները, նա միշտ այնտեղ էր, ուր ազգային տագնապն էր հնչում՝ յատկապէս վերջին տասնամեակում, երբ երկիրն ու ժողովուրդը բարութեան եւ ոգու ճգնաժամ են ապրում:

Նրա հայագիտական աշխատութիւնները, բարեգործական, մշակութային, եկեղեցանուէր ձեռնարկները՝ մեր ոգեզուրկ ժամանակներում... Իսկ նրա գրահրատարակչական գործունէութիւնը: Նրա հովանաւորութեամբ լոյս տեսան տասնեակ ուշագրաւ հատորներ, բայց ամենայուզիչը թերեւս, ՀԳՄ «Մուտք» մատենաշարի 13 գրքոյկներն են: Տէր կանգնելով գրական շնորհալի երիտասարդութեանը, նա դարձաւ այդ սերնդի հոգեւոր ռահվիրան: Սրբազանը, իրօք, ամենուր ճանապարհ էր հարթում:

Նա ապրեց իմաստալից կեանքով, տեսաւ իր պապերի Երկիրը, լիացաւ մարդկային երախտագիտութեան բռնկումներով՝ հասնելով հոգու վաստակած խաղաղութեանը:

Նա մեր մշակոյթի պահապան հրեշտակն էր, եւ հիմա, երբ աւարտուել է Սրբազանի երկրային կեանքը, իր հրեշտակային բարութեամբ հսկելու է մեր բոլոր ապագայ գործերին:

Լեւոն Անանեան
Գրող, Հայաստանի Գրողների Միութեան
նախագահ

Վախճանուել է Գերաշնորհ Տէր Մեսրոպ Արք. Աշճեանը

Գերաշնորհ Մեսրոպ Արք. Աշճեանի մահն անհաւանական է այնպէս, ինչպէս ճախրող հրեշտակի ինքնայրումը եթերում, ինչպէս սիբիրաբարբառ ձիւնը Սահարայի անապատում Օգոստոս ամսին:

Սակայն պարտադրեալ պիտի հաշտուենք եւ օվկիանոսից այն կողմ, հեռաւոր Նիւ Եորքում յանկարծամահ եղած ընտրագոյն հոգեւորականի ու

մշակութային անխոնջ գործչի, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի պատուաւոր դոկտորի, Հայաստանի Գրողների Միութեան անդամի, յաւերժական ուխտաւորի, շուրջ երկու հարիւր անուն գրքերի մեկենասի հեռացումն ընդունենք իբրեւ առժամանակեայ բացակայում ու տեսողական պատրանք:

Անհնար է՛, անհաւանական...

62-ամեայ Մեսրոպ Սրբազանն այլեւս Մագաղաթի մէջ է, մեր յիշողութեան ու մերօրեայ գրչութեան անփոխարինելի էութիւն, ում սրտի տրոփն արդէն իսկ փոխանցուել է հայագիտական, կրօնական, ազգագրական, բանասիրական, պատմագրական, գրական-գեղարուեստական բոլոր այն երկերին ու հրատարակութիւններին, որոնց արդարիրաւ բնակութեան վայրն իր իսկ հիմնադրած գրատներն ու գրադարաններն են, հրատարակչութիւններն են, գրքի միջազգային տօներն ու մշակութային կենտրոններն են:

Աւերուեց մշակութային մեր հայրենիքի հաւատաւոր սիներից մէկը, երերաց Հայրենիք-Սփիւռք մշակութային մեր Գագկաշէն կամուրջներից ամենախասը, Աշճեան Սրբազնի թեւի տակ ծուարած որբերն, աւաղ, նորէն որբացան, եւ Մուղնու Ս. Գէորգ վանքի զանգը ճաք տուեց: Տեսնես Հաւաւ գիւղի մօրենական իր մասնատուփը պարպեց յոյսի վերջին խնկահատիկը, թէ՞ Ս. Խաչ եկեղեցու իր իսկ իրականացրած հարսանեաց ծէսը վախուրած զեփիւռի նման տրուեց Վանայ ծովակի ալիքներին:

Յամենայնդէպս, մենք բոլորս՝ համայն աշխարհի հայերս, ասես որբացանք մի պահ եւ մոլոր մնացինք մեր ճամփաներին:

Սփոփուենք եւ տոկանք, քանզի Ս. Ներսէս Լամբրոնացու եւ Մ. Թաղիադեանի հաւատքով ու գեղագիտական սկզբունքներով էր առաջնորդւում ուրֆացի ծնողների զաւակ եւ անփոխարինելի, ուղղակիօրէն անփոխարինելի Մեսրոպ Աշճեան մտաւորականը զարմանալիօրէն աշխարհօծուն ժպիտով ամեն անգամ ժպտալու է մեզ իր հեղինակած «Եօթ Տարիներ», «Էջեր Հայ Եկեղեցւոյ Պատմութեան», «Հանդիպումներ», «Սուրբերը եւ Մենք», «Լուսաւորչի Լոյս Նշխարները», «The Armenian Church In America», «Պահն ու Յաւերժութիւնը», «Ս. Էջմիածին. Ուղեգրութիւններ» գրքերի միջից եւ ընծայելու է մեզ ինքնօրինակ իր Տէրունականն իբրեւ ազգային ոգու, լեզուի ու մշակոյթի անփոխարինելի պատգամ, իսկ մենք գրողական մեր կեանքի ու մշակութային այս «պարտադրուած» «պատերազմների» դաղարներին անսալու ենք իմաստնաթրթիռ իր խորհրդին. «Ուխտաւորի մեր ուխտն անկանգ է, եւ Հայրենին՝ կարօտ է ոտնաձայնին»:

Յովիկ Հովէեան

Գրող, Նախկին Կրթութեան եւ Գիտութեան նախարար
Գրական Թերթ, 5 Դեկտեմբեր 2003

Յոյսի, Հաւատքի Ու Սիրոյ Սպասաւորը

Չեմ կարող օգտագործել մահախօսական բառը եւ ոչ էլ ուզում եմ դրա համար ընդունուած արտայայտութիւններն օգտագործել:
... Ուզում եմ ձեզ պատում նուիրել՝ Յոյսի, Հաւատքի ու Սիրոյ Սպասաւորի մասին: Ու պէտք չէ մտածել, որ պատումն իրական հիմք չունի: Ընդհակառակը՝ ամենաանկեղծ, ամենամաքուր ու ամենալուսէ նիւթն է պատումը ու նաեւ ամենամնայունը՝ սերնդէսերունդ փոխանցուողը...

Կար մարդ, որին շատերը որպէս Հայ Առաքելական Եկեղեցու սպասաւոր գիտէին, մի մասը՝ որպէս գրչի մարդ, ոմանք էլ՝ բարեգործ...: Սակայն այս եւ մնացած բոլոր կոչումները միաւորւում են մէկ տիտղոսի տակ՝ Յոյսի, Հաւատքի ու Սիրոյ Սպասաւոր... Քանզի ուր էլ որ գնաց Մարդն այս, բացեց Հաւատքի գոց դռները, Յոյսով լցրեց անյոյս հոգիները եւ Սէր թողեց բոլորիս սրտում:
Մեզ, առաջին քայլերը կատարող գրողներիս համար էլ ճանապարհ հարթեց՝ նուիրելով «Մուտք» մատենաշարը: Երկար ճանապարհից առաջ Յոյս ու Հաւատք ներարկեց ու Սէր՝ առ այդ ճամբան...

... Ու հիմա ժամն է, որ մեր լուռ աղօթքներում մի անուն էլ յիշենք, մի կերոն էլ վառենք: Աղօթենք սիրով, խնդութեամբ ու շնորհակալութեամբ եւ տանք անունը Մարդու՝ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՍ ԱՇՃԵԱՆ...

Աստղիկ Սիմոնեան
Գրող

Մեսրոպ Աշճեան Սրբազանի Յիշատակին

Ամառային երեկոն ստուերներն է
ձգում,
Հողի մէջ արեան տաք եռք կայ,
Ջերմութիւնը բարձրանում է անվերջ
ու անվերջ,

Հողի եւ իր տիրոջ միջեւ անգուսպ
հոգեվարք է ու հեկեկոց:

Արածանին հանդարտ գուլալում է
փրփուրներից,
Իր ափին մէկ դար հայի աղօթք չէր
լսուել
Հայոց սրտերից դաղուած արիւն է կաթկթում:

Սրբազանը՝ ինչպէս Հայոց
հազարամեայ նահապետ,
Երկիւղած, դողդոջուն շրջում է Հայոց
աշխարհով,
Համբուրում քարերը, վանքերը,
մատուռները,
Աղօթում Հայոց երկրի փրկութեան
համար:

Վանից Սասուն, Մշոյ դաշտից՝
Էրզրում,
Հայոց Սրբազանն է Մայր հողը
ոգորում
Հայոց յիշատակները զարթնում են
կրկին
Հողը վերստին իր տիրոջն է
փարւում:

Զարթնում են միլիոն անմեղ
նահատակները,
Ճանաչում, ողջունում՝ իրենց
Սրբազանին
Քսաներորդ դարի վերջին հրաշքն է
ծագում,
Գերուած հողի վրայ Հայաստանն է
վերածնւում:

Արմեն Կարապետեան
Պատմաբան,
Պատմական Գիտութիւնների թեկնածու

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ, ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Նա Մարեց Նուիրական Մաքառումների Ճանապարհին

Ես բարեբախտութիւն ունեցայ Մեսրոպ Արք. Աշճեանին մօտիկից ծանօթանալու հայրենիք տեղափոխուելու հենց առաջին օրերից: Նա Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեայ տօնակատարութեան վարիչ-քարտուղարն էր, իսկ ինքս՝ յանձնախմբի անդամ էի: Տօնակատարութեան տարիներին եւ հետագայում գործի բերումով առիթ էր ստեղծւում եւ մշտապէս շփումների մէջ էինք: Երբեմն պատահում էր՝ անհամաձայնութիւն արտայայտել իր որոշ ձեռնարկումների նկատմամբ: Դրանք վերաբերում էին տպագրուող գրականութեան ընտրութեան եւ յատկապես Հայոց Պատմութեան թեմայով հրատարակուող գրքերին: Մենք փորձում էինք թոյլ աշխատութիւնները փոխարինել լաւերով, նշում տուեալ հիմնահարցի աւելի ճանաչուած հեղինակի անուն: Սրբազանը կարծես թէ համաձայնում էր, չէր բանավիճում, սակայն շարունակում էր իր նախընտրած ուղին: Մեր մօտեցումը սոսկ պատմագիտական էր, իսկ ինքն ազգային լայն դաշտում էր դիտարկում հարցը:

Յետխորհրդային տարիներին, ինչպէս յայտնի է, ֆինանսական միջոցների պակասը եւ պետական համակարգից շուկայականին անցնելը գիտութեան եւ մշակոյթի համար դժուարին կացութիւն ստեղծեց: Շատ հաստատութիւններ թուլացան, կորցրին նախկին կենսունակութիւնն ու աշխատանքային արդիւնաւէտութիւնը: Անբարենպաստ այդ պայմաններում անդամ, ծնուեցին ու առնականացան նաեւ գիտամշակութային նոր կենտրոններ: Սակաւաթիւ նման օջախներից է Օշականի Մեսրոպ Մաշտոց դպրատունը:

Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիան ժամանակին սահմանել էր Մեսրոպ Մաշտոցի անուան մրցանակ: Այն շնորհւում էր երեք տարին մէկ՝ հայագիտութեան բնագաւառում աղբիւրագիտական ծանրակշիռ աշխատութիւնների հեղինակներին: ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, աշխարհահռչակ գիտնական Վ©Հ©Համբարձումեանի նախաձեռնութեամբ մրցանակի շնորհման

հանդէսը կատարւում էր Օշականում՝ Մեսրոպ Մաշտոցի շիրիմի մօտ: Ակադեմիայի նախագահութեան նիստը տեղի էր ունենում Օշականի եկեղեցու հողածածկ եւ անբարեկարգ բակում, արեւից պաշտպանուելու համար ծառերից կախուած վարագոյրների ստուերի տակ: Այլ հնարաւորութիւններ չկային: Նման իրավիճակի պատճառով արտերկրից ժամանող հիւրերին անյարմարութեան զգացումով էինք ուղեկցում Օշական:

Արագածոտնի թեմի առաջնորդ Նաւասարդ եպիսկոպոս Կճոյեանի նախաձեռնութեամբ, երջանկայիշատակ վեհափառ Գարեգին Ա-ի նպատակամղուած հովանաւորութեամբ հիմնաւոր վերակառուցուեց եկեղեցուն առընթեր շէնքը, բարեկարգուեց բակն ու շրջակայքը: Ստեղծուեց Մեսրոպ Մաշտոց գիտամշակութային դպրատունը: Վերջինիս եռանդուն տնօրէն Ա©Շահնազարեանի գլխաւորութեամբ հաստատութիւնում ստեղծուեց գրադարան, թանգարան, ունեցաւ նիստերի հարմարաւէտ սրահներ եւ հանրապետութեան գիտամշակութային եւ կրթական հաստատութիւնների համատեղ ուժերով սկսեց պարբերաբար կազմակերպել գիտական նստաշրջաններ:

Հոգեւոր դասի մասնակցութեամբ հրաւիրուող գիտաժողովների նախապատրաստման ու անցկացման, ինչպէս եւ գիտաժողովների նիւթերի առանձին գրքերի հրատարակման ողջ ծանրութիւնը դպրատան տնօրէնի հետ իր վրայ էր վերցնում բոլորի կողմից ընդունելի Մեսրոպ Սրբազանը: Նրա ուշադրութիւնից չէին վրիպում անգամ 2-3 օր տեւող նիստերին հրաւիրուած հարիւրի հասնող բազմանդամ խմբի տեղափոխման, սննդի եւ այլ խնդիրների հետ կապուած մանրամասները եւ դրանց հետ կապուած բոլոր հոգսերը: Այդ ամենի հետ մէկտեղ Սրբազանը լիագումար բոլոր նիստերում հանդէս էր գալիս ուշագրաւ զեկուցումներով:

Գիտութեան եւ մշակոյթի համար ստեղծուած ծանր շրջանում Սփիւռքի շատ գործիչներ սատար կանգնեցին հայրենի մշակոյթին: Հայրենանուէր այդ գործիչների մէջ ընդգրկման լայն չափանիշներով եւ ինքնաբուխ նուիրումով առանձնանում է Մեսրոպ Արք. Աշճեանը: Միայն Ազգային Ակադեմիայի հումանիտար գիտութիւնների բնագաւառում Սրբազանի հովանաւորութեամբ հրատարակուեցին 100-ից աւելի հայագիտական աշխատութիւններ, հրաւիրուեցին բազմաթիւ գիտաժողովներ: Նրա հովանաւոր մասնակցութեամբ գրողների շրջանում, միւս ստեղծագործական միութիւններում նշուեցին յիշարժան յոբելեաններ, կազմակերպուեցին գրքերի շնորհանդէսներ եւ այլ միջոցառումներ:

Պատահական չէր, որ Պատմութեան, Հնագիտութեան եւ Ազգագրութեան, Գրականութեան ինստիտուտների հիմնաւոր ներկայացմամբ Մեսրոպ Արք. Աշճեանը առաջիններից մէկը ստացաւ ՀՀ ԳԱԱ պատուաւոր դոկտորի կոչում:

Իր ամբողջ էութեամբ ազգային խնդիրներով մտահոգ ու դրանով ապրող մտաւորականը նախաձեռնող եղաւ եւ սկիզբ դրեց շատ մեծ խորհուրդ ունեցող մի գործընթացի: Օգտագործելով ստեղծուած հնարաւորութիւնները՝ նա Հայաստանի եւ Սփիւռքի երիտասարդական խմբի գլուխ անցած շրջագայութեան մեկնեց Արեւմտեան Հայաստան: Նրանց ուղեկցեց պատմական նշանաւոր վայրերը, տիրոջ իրաւունքով, հայկական եկեղեցիներում ժամերգութիւն, մկրտութիւն, պսակ կատարեց: Երիտասարդները տպաւորուած, յուզմունքով եւ խոր ապրումներով եղան իրենց պապերի նուիրական ծննդավայրերում: Մեսրոպ Սրբազանը երեք անգամ նորանոր խմբեր առաջնորդեց պատմական հայրենիք, այցելեց գրեթէ բոլոր սրբավայրերը՝ անտեսելով բոլոր անյարմարութիւններն ու դժուարութիւնները:

Նրա բացած ոգեկոչ ուղին բռնեցին նոր խմբեր: Ուղեւորութիւնից վերադարձող երիտասարդները մամուլով, հեռուստատեսութեամբ, բանաւոր խօսքով ոգեշնչուած հաղորդում էին իրենց տեսածն ու զգացածը: Բնակչութեան, մասնաւորապէս երիտասարդ սերնդի հոգու ու գիտակցութեան մէջ թարմացնում, վերազարթնեցնում պատմական Հայաստանի գաղափարը, հայրենասիրական լիցք հաղորդում:

Դժուար է գնահատել Մեսրոպ Սրբազանի այդ ձեռնարկման նշանակութիւնը: Նա իր մարդկային, բարի խառնուածքով չէր կարող անտարբեր մնալ օգնութեան, աջակցութեան կարիք ունեցող միւս ոլորտների նկատմամբ: Ակադեմիայի Լեզուի Ինստիտուտի շէնքում է տեղաւորուած իր նախաձեռնութեամբ ստեղծուած «Մեծն Ներսէս» Բարեգործական Հաստատութիւնը, որը մշտապէս իր նպաստն է բերում միայնակ ապրող ու կարիքաւոր ընտանիքներին: Հանրայայտ է նրա հոգածութիւնը Գիւմրիի «Թռչունեան» որբանոցի, Արցախեան պայքարում զոհուած ազատամարտիկների ընտանիքների, ունեզուրկ ուսանողների եւ այլ մարդկանց ու հաստատութիւնների նկատմամբ★

Մեսրոպ Սրբազանը բարոյական իր բարձր նկարագրով մթնոլորտ էր ստեղծում, բարերար ազդեցութիւն գործում շրջապատի եւ բոլոր նրանց վրայ, ովքեր գէթ մէկ անգամ առիթ են ունեցել շփուելու նրա հետ: Պատահական չէր, որ կարճ ժամանակում նա հաւատ ներշնչեց, յարգանքի եւ սիրոյ արժանացաւ:

Ուսանելի շատ բան կար մեծերի նկատմամբ նրա վերաբերմունքի մէջ: Իր ուսուցչի՝ երջանկայիշատակ Գարեգին Ա-ի հանդէպ պաշտամունքի հասնող ակնածանք ունէր: Մենք նմանապէս երախտագիտութեան զգացմունքով ենք յիշում վեհափառին նաեւ այն բանի համար, որ Քրիստոնէութեան 1700-ամեակի առթիւ ԱՄՆ-ից հայրենիք հրաւիրեց Մեսրոպ Սրբազանին: Դրանով նա հնարաւորութիւն ստեղծեց, որ մեր ժողովրդի լայն զանգուածներն ու

մտաւորականութիւնը ծանօթանայ ու վայելի բիւրեղեայ մաքրութեան տէր, հայրենանուէր գործունէութեան մէջ սահման չճանաչող այդ մարդուն: Առանց հանգիստ առնելու, առանց ժամանակն ու զբաղուածութիւնը նկատի ունենալու իրեն ուղղակի նետում էր ամեն կողմ՝ մարդկանց հոգսերը թեթեւացնելու համար: Նրա նուրբ ու զգայուն սիրտը չդիմացաւ իր ժողովրդի զաւակների հոգսերն ու ցաւերը դարմանելու ծանրութեանը: Նա մարեց նուիրական այդ մաքառումների ճանապարհին:

Վլադիմիր Բարխուդարեան
ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի
փոխնախագահ, ակադեմիկոս

Մեր Դժուար Ժամանակների Մեծ Հայը

Մեսրոպ Արք. Աշճեանի անժամանակ մահը համազգային կորուստ էր: Դժուար տարիներին նա փութաց մայր հայրենիք՝ իր ծառայութիւնը մատուցելու նեղ կացութեան մէջ յայտնուած հարազատ ժողովրդին, հոգեկան նեցուկ լինելու ծրագրով:

Աստուածընտիր հոգեւորականը յիրաւի երեւոյթ էր՝ օժտուած ջերմ հայրենասիրութեամբ, բացառիկ կարողութիւններով: Նրա մատուցած ծառայութիւնները մայր հայրենիքին բազմապիսի էին, բոլորն էլ արդիւնաւէտ, յիշարժան:

Թէեւ ստիպուած էր հանդէս գալ որպէս Մուղնու վանքի վանահայր, սակայն կարողացաւ ծաւալել բացառիկ բազմաբովանդակ գործունէութիւն՝ ի շահ հարազատ ժողովրդի, հայրենիքի:

Սկսենք Մուղնու վանքից, ուր համատեղ մեկնեցինք: Մոռացութեան տրուած ուշ միջնադարեան այդ վանքային համալիրը անճանաչելի էր դարձել: Նրա եռանդուն ջանքերով Արագած լեռան լանջին վերագտել էր իր հոգեւոր, կրօնա-դաստիարակչական դերը: Վանքատարածքում ամբողջովին խնամուել ու ծառատնկուել էր, վերնաշէնքերը նորոգուել, բարեկարգուել ու կահաւորուել, հիմնադրուել տարեցտարի հարստացող գրադարան:

Միաժամանակ Սրբազանի ջանքերով հիմնադրուել է «Մուղնի» հրատարակչութիւնը: Աւելի գնահատելին նրա մեծ աջակցութիւնն էր հրատարակչական գործին: Միջնորդ ծառայելով հայրենիքի եւ սփիւռքի բարերարական կազմակերպութիւնների ու անհատների միջեւ, նրա շնորհիւ հրատարակուեցին բազմապիսի ու բազմաքանակ գրքեր, բոլորն էլ հրատարակման կարօտ՝ պատմաբանասիրական, հնագիտական-ազգագրական, ճարտարապետական

ու արուեստագիտական աշխատութիւններ, հայկական գրականութեան ու երաժշտական արուեստի դասականների հատորներ եւ այլն: Միայն ամերիկահայ բարերար Յարութիւն Սիմոնեանի հովանաւորութեամբ լոյս են տեսել երեսուն մեծարժէք հատորներ: Դրանց թուին պատկանում է իմ՝ «Արուեստակից ժամանակակիցներս» մեծածաւալ աշխատութիւնը:

Նա նաեւ նիւթապէս աջակցել է իմ ղեկավարութեամբ տասնամեակներ շարունակ գործող Պատմական Յուշարձանների Պահպանման Հայկական Ընկերութեանը, որն այժմ կանգնած է լուծարման եզրին... Դրանով նա իր գնահատականը մատուցեց այն ազգօգուտ գործունէութեանը, որն ընկերութիւնը ծաւալել է իր գործունէութեան բազում տարիներին: Նրա մշտական հաւատամքն էր ազգային ոգու ամրապնդումը, որը գործադրում էր ազգային արուեստի տարբեր բնագաւառները ոգեկոչելով: Մեծ ժողովրդականութիւն վայելեցին նրա նախաձեռնութեամբ կազմակերպուած հայկական հին երգերի փառատօնները:

Հոգեւոր հայրենասէրը քանիցս ուղեւորութիւններ կատարեց դէպի Արեւմտեան Հայաստան (Էրզրում, Մուշ, Բիթլիս, Վան եւ այլուր), որոնք արհեստավարժ տեսագրութիւնների ու իր ոսկեգրիչ շարադրանքով մատուցուեցին աշխարհով մէկ ցրուած հայութեանը: Ընթերցելով իր շարադրանքներն ու դիտելով տեսագրութիւնները, զարմանում ես իր այցելած տարածութիւններում անտէրունջ մնացած սրբավայրերի, նոյնիսկ յուշաքարերի մասին նրա խոր իմացութիւնների համար:

Անձամբ ծանօթ եմ եղել հայոց բարձրաստիճան շատ հոգեւորականների: Վստահօրէն Մեսրոպ Արք. Աշճեանը մաս է կազմում լաւագոյններին: Մայր հայրենիքում իր ծաւալած աստուածահաճոյ գործունէութեամբ նա արժանացաւ համընդհանուր յարգանքի ու գնահատման, իսկ ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիան 2001-ին նրան շնորհեց պատուաւոր դոկտորի կոչում: Նրա անժամանակ մահը սգացին նրա վաստակի երկրպագուները մայր հայրենիքում եւ սփիւռքում:

Բարին իր յիշատակին:

Վարազդատ Յարութիւնեան
Ճարտարապետ, ԳԱԱ Ակադեմիկոս

Լուսապայծառ Մարդը

Այսօր ես մեծ հաճույքով եմ վերյիշում Աշճեան Սրբազանի հետ իմ ունեցած մի քանի հանդիպումները★

Շուրջ չորսուկէս տասնամեակ ես զբաղւում եմ հայ ճարտարապետութեան պատմութեան ուսումնասիրութեամբ★ Արդէն տպագրել էի մի քանի մենագրութիւն եւ շուրջ հինգ տարի էր, ինչ աւարտել էի յաջորդ, թերեւս վերջին մենագրութիւնը, ուր անդրադառնում էի մի շարք վիճայարոյց խնդիրների, մասնաւորապէս, հայ¬վրացական ճարտարապետական առնչակցութիւնների շուրջ★ Մուտք էինք գործել 21~րդ դար, սակայն հասկանալի պատճառներով դեռեւս մեծ դժվարութիւններ կային ծաւալուն գրքեր պետական միջոցներով լոյս աշխարհ բերելու գործում★ Դիմել էի տարբեր մարդկանց, մի քանիսը խոստացել էին աջակցել հովանաւորներ գտնելու հարցում, սակայն տարիները գլորւում էին, իսկ սայլը տեղից չէր շարժւում★

Տարբեր տեղերից ես արդէն լսել էի Աշճեան Սրբազանի բարեգործութիւնների մասին, ուստի մի օր էլ որոշեցի ինքս դիմել★ Տիկնոջս հետ գնացինք Լեզուի Ինստիտուտի շէնքում գտնուող նրա գրասենեակը★ Սրբազանը ընդունեց յարգանքով ու սիրալիրութեամբ, թերթեց մուտքագրած ձեռագրի տեքստը, ուշադիր կարդաց երկու էջանոց համառօտ ակնարկը, պատրաստակամ լսեց իմ բացատրութիւնները, մի քանի հարցեր տուեց, ապա խնդրեց իր մօտ թողնել նիւթերն ու զանգահարել երկու շաբաթից★ Այդպէս էլ արեցի★ Մեր յաջորդ հանդիպմանն իմ այն նկատառմանը, թէ արդէն իննսուն տարեկան եմ, աչքիս լոյսը պակասում է ու կ՛ուզէի մինչ «հեռաւոր ճամփորդութեան» ելնելը տեսնել աշխատանքը տպագրուած, նա բարեհամբոյր ու ժպտերես դէմքով ասաց, թէ խոստանում է, որ կէս տարի անց տպագիր գիրքը կը դնի սեղանին★ Ճիշտն ասած, այնքան էլ չհաւատացի, սակայն իր պահուածքով եւ խօսքուզրոյցով այդ մարդը հաւատ ու մեծ պատկառանք էր ներշնչում, ուստի եւ որոշեցի համբերութեամբ լցուել ու սպասել★

Անցաւ կէս տարի ու ես տեղեակ էի, որ Սրբազանն իր խօսքի տէրն է եղել՝ գտել է բարերար (Էտուարտ եւ Վերժին Մսըրլեաններ), ընթանում են խմբագրական աշխատանքներ★ Մի քանի անգամ հետը զրուցել էի հեռախօսով, ու նա համբերատար ինձ հաւաստիացնում էր, որ ամեն ինչ ընթանում է իր հունով★ Ու վերջապէս եկաւ բաղձալի պահը, երբ իմ տարիների աշխատանքը լոյս տեսաւ★ Ուրախութեանս չափ չկար★ Այդ գիրքն ինձ համար կեանքի ուղեգիր էր ու, թերեւս, դրանով ներարկուած աւիւնով է, որ ցայսօր կամ ու շնչում եմ★

Հայերս միշտ հպարտանում ենք մեր մշակոյթով★ Սակայն այն միշտ էլ ինչ¬ինչ պատճառներով վտանգուած է լինում ու կարիք է զգում ոչ միայն պետական օժանդակութեան★ Այդ կարեւոր գործն իրենց վրայ են վերցնում

գիտութեան ու մշակոյթի իսկական բարեկամները★ Նրանցից էր Աշճեան Սրբազանը★ Հայաստանեան շրջանի նրա մէկ տասնամեակից էլ պակաս գործունէութեան ընթացքում նրա օժանդակութեամբ լոյս տեսան տասնեակ, գուցէ եւ մի քանի հարիւր աշխատութիւններ, շատ ու շատ մտաւորականների համար կազմակերպուեցին ուխտագնացութիւններ Արեւմտեան Հայաստան, նկարահանուեցին ու ցուցադրուեցին ֆիլմեր, կազմակերպուեցին գիտաժողովներ, իրականացուեցին տարիներով ծրագրուած բազմաթիւ ձեռնարկումներ, վերականգնուեցին եկեղեցիներ★ Առանց չափազանցութեան կարող եմ ասել, որ գիտութեանն ու մշակոյթին նման ուղղորդուած ու հետեւողական բարեգործութիւն, նման նուիրումի ես չէի հանդիպել առնուազն կէս դար, եթէ ոչ աւելին★ Իսկ որքան ծրագրեր ունէր Սրբազանը★ Ափսոս, հազար ափսոս, որ այդքան անժամանակ մեզանից հեռացաւ այդ Պայծառ անձնաւորութիւնը★

Տիրան Մարութեան
Հայաստանի վաստակաւոր շինարար,
Ճարտարապետութեան դոկտոր
23 Հոկտեմբերի 2005 թ.

Հայ Եկեղեցու, Հայագիտութեան Եւ Ազգային Մշակոյթի Անխոնջ Նուիրեալը

Մէկ տարի առաջ կեանքից վաղաժամ հեռացաւ Հայ Եկեղեցու, գիտութեան ու մշակոյթի բազմարդիւն երախտաւոր Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը: Իր արտասահմանեան կրօնա-եկեղեցական, գիտական ու ազգային մշակութային բեղմնաւոր գործունէութիւնից յետոյ, Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հովուութեան տարիներին Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը տեղափոխւում է Հայաստան եւ այդուհետեւ սկսւում է նրա եռանդուն գործունէութեան հայաստանեան ժամանակաշրջանը, որի ականատեսն ու վկան ենք եղել բոլորս:

Իր լայնախոհ ու ազգաշէն բնաւորութեամբ մայր հայրենիքում դառնում է նորանոր նախաձեռնութիւնների հեղինակ: Այսպէս. տակաւին Արեւելեան Ամերիկայի եւ Կանադայի թեմի առաջնորդ, նա Երեւանում 1993 թ.-ին հիմնեց «Ներսէս Մեծ» բարեգործական հիմնադրամը: Իսկ երբ 1996-ին Մայր Աթոռ

Ս.Էջմիածնում ստանձնեց կրօնա-ազգային մեծագոյն յոբելեանի՝ Հայաստանում Քրիստոնէութիւնը Պետական Կրօն Հռչակելու 1700-ամեակի գրասենեակի վարիչ–տնօրէնի պաշտօնը՝ Մեսրոպ Սրբազանը անձնադիր նուիրումով լծուեց այդ յոբելեանը կազմակերպական բարձր մակարդակով իրագործելու աշխատանքներին, որոնց արդիւնքները շուտով զգացնել տուեցին իրենց: Ընայած 2000թ. նա թողնում է այդ պաշտօնը, բայց յոբելեանի հետագայ յաջող իրականացման գործընթացում պարտական ենք Աշճեան Սրբազանի նախապատրաստական լուրջ աշխատանքներին (բազմաթիւ յոբելեանական գրքերի հրատարակութիւններ, տարբեր բնոյթի ու մակարդակի գիտաժողովների գումարումներ, քարոզչական տարբեր միջոցառումներ), որոնց բուն նպատակն էր յոբելեանը դարձնել ոչ թէ զուտ կրօնական, այլ համազգային ու համաժողովրդական:

Մեսրոպ Արքեպիսկոպոսի եռանդուն ջանքերով եւ նիւթական աջակցութեամբ վերանորոգուեց Մուղնու Սուրբ Գէորգ վանքը, 2001-ին Երեւանում հիմնադրուեց «Մուղնի» հրատարակչութիւնը, նրա անձնական ղեկավարութեամբ եւ Հայաստանի մտաւորականութեան տարբեր խաւերի ներկայացուցիչների մասնակցութեամբ երեք անգամ ուխտագնացութիւն կազմակերպուեց Արեւմտահայաստանի տարբեր գաւառներ, որտեղ նրանք այցելեցին հայ պատմամշակութային յուշարձանները, ականատես եղան հայկական նախկին բնակավայրերի ներկայիս տխուր վիճակին: Հայաստանի մտաւորականութեան համար այս ուխտագնացութիւնները բացառիկ իրադարձութիւններ էին, որոնք հնարաւորութիւն ընձեռեցին ծանօթանալու եւ ճանաչելու իրենց կորսուած հայրենիքի արդի վիճակը:

Բայց Մեսրոպ Սրբազանի հայաստանեան գործունէութեան տարիները յատկանշուեցին հայ գիտութեանն ու մշակոյթին մատուցած այնպիսի ծառայութիւններով, որոնք անջնջելի կը մնան ներկայիս ու գալիք սերունդների յիշողութեան մէջ:

Այն տարիներին, երբ Հայաստանում գրահրատարակչութեան գործը գրեթէ բարձիթողի էր արուած, իսպառ կամ մասամբ զրկուած էր պետական հովանաւորութիւնից, Մեսրոպ Սրբազանի եռանդուն ջանքերի ու հոգածութեան շնորհիւ Հայաստանում հրատարակուեց աւելի քան 200 անուն գիրք՝ նուիրուած Հայոց Եկեղեցու եւ հայագիտութեան բազմապիսի խնդիրների: Նրա նշանաբաններից մէկն այն էր, որ տարեց հայագէտները, ովքեր ունեն պատրաստի աշխատութիւններ, գոնէ իրենց աշխատանքների արդիւնքները տեսնեն հրատարակուած իրենց կենդանութեան օրոք: Այս նպատակն իրագործելու համար նա ջանք ու եռանդ չէր խնայում, մի ոտքը Հայաստանում,

մի ոտքը արտասահմանեան մշտական երթեւեկութիւնների մէջ, նա պարբերաբար, արտերկրի տարբեր բարեգործներից ու կազմակերպութիւններից նիւթական միջոցներ էր հայթայթում Հայաստանում գրքեր հրատարակելու եւ գրամշակութային այլեւայլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

Նա մի առանձնակի ջերմ ու հոգեկցական յարաբերութեամբ էր կապուած Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի հետ, անշուշտ, քաջ գիտակցելով Հնագիտութեան եւ ժողովրդագիտութեան տեղն ու արժէքը ազգային մշակոյթի պահպանման, ճանաչման եւ հետազօտման ասպարէզում: Լինելով բարձրաստիճան հոգեւորական գործիչ եւ հայ կրօնաեկեղեցական մշակոյթի նորօրեայ հետազօտող՝ նրա գիտական նախասիրութիւններն ամենից առաջ կապուած էին կրօնաժողովրդական տօների եւ ծիսակատարութիւնների, հայոց սրբերի ու սրբավայրերի, դրանց հնօրեայ ազգային ակունքների ուսումնասիրութեան հետ:

Եւ բնաւ պատահական չէ, որ նա յենուելով հայ հնագէտների, ազգագրագէտների, բանագէտների, արուեստագէտ-պարագէտների գիտական ներուժի վրայ, իր նիւթական հովանաւորութեամբ եւ աշխոյժ մասնակցութեամբ մեր ինստիտուտի շրջանակներում կազմակերպուեց հինգ գիտական նստաշրջան՝ նուիրուած հայոց սրբերի ու սրբավայրերի, Կարոս Խաչ վիպերգի, Սուրբ Սարգսի, Թուխ Մանուկ սրբերի, նրանց սրբավայրերի, պաշտամունքի, ինչպէս նաեւ հայոց ծիսական պարերի բազմակողմանի ուսումնասիրութեանը՝ միաժամանակ առանձին գրքերով իրականացնելով այդ բոլոր նստաշրջանների զեկուցումների հրատարակութիւնը:

Հարկ է առանձնակի նշել, որ յիշեալ նստաշրջաններն ու դրանց նիւթերի հրատարակութիւնները բացառիկ երեւոյթ էին Հայաստանի գիտամշակութային կեանքում, քանզի խորհրդային աստուածամերժութեան տարիներից ի վեր մեզանում իսպառ դուրս էր մղուած կրօնաեկեղեցական թեմաների, մանաւանդ ազգային սրբերի ու սրբութիւնների գիտական հետազօտութիւնը: Հանգուցեալ Սրբազանը եռանդով նախապատրաստւում էր, դարձեալ մեր ինստիտուտի շրջանակներում, իրագործել մեր ազգային մեծագոյն սրբի՝ Սուրբ Կարապետին նուիրուած գիտական նստաշրջանի գումարումը, որը, ցաւօք, ընդհատուեց նրա վերահաս մահուան պատճառով:

Մեր ինստիտուտի գիտահետազօտական արդիւնքների նկատմամբ Աշճեան Սրբազանի ցուցաբերած յաջորդ մեծագործութիւնը՝ գիտական աշխատութիւնների հրատարակութիւնն է: Նրա հոգածութեամբ հնարաւոր եղաւ իրականացնել 14 անուն գրքերի ու մենագրութիւնների հրատարակութիւնը: Դրանցից են «Հայ Ժողովրդական Հեքիաթներ»ի 13 եւ 14-րդ հատորները,

«Դիւան Հայ Վիմագրութեան» 7 եւ 8-րդ պրակները, Քաջբերունու «Ճանապարհորդական Նկատողութիւնները», Ռաֆայէլ Վարդանեանի «Հայոց Տօնացոյց» մեծածաւալ աշխատութիւնը, Ս. Յարութիւնեանի «Հին Հայոց Հաւատալիքները», Սվետլանա Վարդանեանի «Միքայէլ Մինասարեանց» մենագրութիւնները եւ «Հայոց Հնագոյն Մշակոյթ- 3» գիտաժողովի նիւթերը: Հանգուցեալ Սրբազանը խոստացել էր նաեւ հրատարակել Ս. Յարութիւնեանի «Հայ Հմայական եւ Ժողովրդական Աղօթքներ» մեծածաւալ աշխատութիւնը, բայց աշխատանքների ձգձգման պատճառով, այդ խոստումը մնաց չիրագործուած:

Այս է համառօտ գծերով գերաշնորհ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի կարճատեւ, բայց հարուստ կեանքի եւ բազմարդիւն գործի մօտաւոր պատկերը, որն ինքնին խորին երախտագիտութիւն, յարգանք եւ պատկառանք է ներշնչում:

Մեսրոպ Արքեպիսկոպոսը Հայ Եկեղեցու, հայագիտութեան եւ հայ մշակոյթի նկատմամբ ինքնամոռաց նուիրումով, հեռահար նպատակադրմամբ, լայնախոհ հայեացքով ու մտահորիզոնով, արմատապէս տարբերւում էր ներկայիս (նաեւ անցեալի) հայ բարձրաստիճան եկեղեցական գործիչներից: Նրա կեանքի ողջ նպատակը համայն հայութեան հոգեւոր վերանորոգումն ու վերածնունդն էր, առանց հատուածային խտրականութեան եւ եկեղեցիների տարբերութեան: Օժտուած լինելով առինքնող մեղմ ու հեզաբարոյ բնաւորութեամբ, միաժամանակ հոգեկան աննկուն կորովով, նա իր անշահախնդիր ազգաշէն գործունէութեամբ ու անձնադիր նուիրումով շատ կարճ ժամանակամիջոցում նուաճեց Հայաստանի գիտական մտաւորականութեան սէրն ու յարգանքը: Դրա վառ ապացոյցներից մէկը եղաւ նրան Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի պատուաւոր դոկտորի աստիճանի շնորհումը: Մեծ, ազգանուէր քաղաքացու անհանգիստ հոգով էր օժտուած հանգուցեալ Սրբազանը, որի գործունէութեան սահմանները վաղուց էին դուրս եկել եկեղեցու անձուկ շրջանակներից եւ նուաճել համազգային հորիզոններ: Եւ այս իմաստով նա շատ էր նմանւում իր մեծ անուանակցին՝ Մեսրոպ Մաշտոցին եւ նրա գործի հեռահար նպատակադրումներին:

Եւ թող երիցս օրհնեալ լինի հոգելոյս Աշճեան Սրբազանի անմահ յիշատակը:

Սարգիս Յարութիւնեան
ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի
փոխտնօրէն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Բարի ու նուիրական անուն՝ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան

Դժուար է հաշտուել այն մտքի հետ, որ այլեւս մեր կողքին չէ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը՝ հայ մտաւորականութեան բարեկամը, իրաւամբ՝ հաւատաւոր մտաւորականը, հայագէտ-գիտնականը, հոգեւոր-եկեղեցական գործիչը:

1960-ական թուականներից սփիւռքում, ապա նաեւ՝ հայրենիքում իր գործունէութիւնն սկսեց Լիբանանում, Իրանում եւ յատկապէս Միացեալ Նահանգներում ու Կանադայում: Հոգեւոր-եկեղեցական գործունէութիւնից յետոյ ճանապարհները Մեսրոպ Սրբազանին բերեցին հայրենի եզերքներ բնակութեան՝ Հայաստանի Հանրապետութիւն եւ ուխտագնացութիւնների՝ կորուսեալ Արեւմտահայաստան: Առաջին անգամ Սրբազանը հայրենիք այցելեց 1972 թ.: Մինչեւ Հայաստան տեղափոխուելը նա արդէն իրականացրել էր բազմաթիւ ծրագրեր, որոնք առաւել ընդլայնեցին Սպիտակի աւերիչ երկրաշարժից յետոյ եւ Արցախեան ազատամարտի ընթացքում: Զոհուած ազատամարտիկների ընտանիքներին տրուող օգնութիւնը կանոնաւոր եւ հիմնաւոր դարձնելու նպատակով Մեսրոպ Արքեպիսկոպոսը 1993թ. Երեւանում ստեղծեց «Մեծն Ներսէս» հիմնադրամը, որն օգնեց աւելի քան 900 երեխաների: Օգնութեան ձեռք մեկնուեց նաեւ 2600 միայնակ ծերերի: Հիմնադրամը ձեռնամուխ եղաւ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Թալիշ գիւղի վերականգնման աշխատանքներին: Այստեղ կառուցուեցին 50-ից աւելի առանձնատներ, վերանորոգուեցին դպրոցներ, ջրատարներ, ջրաղացներ, շահագործման յանձնուեցին էլեկտրաաղացներ կազմակերպուեց հանգանակութիւն տեղի խոնարհուած եկեղեցիների ու վանքերի նորոգութեան համար:

Մեսրոպ Սրբազանը մեծ ծաւալի աշխատանք կատարեց իր մասնակցութեամբ հիմնադրուած համահայկական «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան գործունէութիւնը հայրենիքում աշխուժացնելու ուղղութեամբ: Հայրենիք այցելած բազմաթիւ սփիւռքահայ երիտասարդներ մասնակցեցին եկեղեցիների բարեկարգման աշխատանքներին՝ դրանով իսկ իւրովի կապուելով հայրենի եզերքների հետ:

Սրբազանի նախաձեռնութեամբ Գիւմրիում ստեղծուեց «Թռչունեան Տուն» գիշերօթիկ դպրոցը: Ամերիկահայ բարերար Վահան Թռչունի կտակի համաձայն յատկացուած գումարը նպատակաուղղուեց բազմաթիւ որբ երեխաների՝ մինչեւ չափահաս դառնալը՝ 18 տարեկանը, պահելու մարդասիրական ու ազգասիրական

գործին: Մեսրոպ Արքեպիսկոպոսը Քրիստոնէութեան 1700-ամեակի առթիւ կազմակերպեց բազմաթիւ հաւաքական մկրտութիւններ:

Հայրենիքում նոր եռանդով Մեսրոպ Արքեպիսկոպոսը շարունակեց իր հայագիտական ուսումնասիրութիւնները: Ներսէս Լամբրոնացուն ու Մեսրոպ Թաղիադեանին, Հայ Եկեղեցու պատմութեանն ու ծիսակարգին նուիրուած մնայուն աշխատութիւններին աւելացան նորերը, որոնց մէջ իր ուրոյն տեղն ունեցաւ Սրբազանի վերջին հետազօտութիւնը՝ նուիրուած Ս. Էջմիածնի վերաբերեալ օտար հեղինակների քրոնիկոններին: Անխոնջ աշխատանքի շնորհիւ նա սերունդներին թողեց շուրջ 30 աշխատութիւն, որոնք ընդգրկում են հայագիտական, գիտաճանաչողական լայն ոլորտ՝ աստուածաբանութեան, պատմութեան, բանասիրութեան, փիլիսոփայութեան, ազգագրութեան, գրական-գեղարուեստական եւ այլ ընագաւառներ:

Երեւանում հիմնեց «Մուղնի» հրատարակչութիւնը, որը տպագրեց բարձրարժէք գրական ու գիտական հարուստ գրականութիւն: Միայն 2002թ. Յունուար-Յուլիս ամիսներին «Մուղնին» լոյս ընծայեց 27 հազար կտոր գիրք: Միայն վերջին 6 տարում Մեսրոպ Սրբազանի անմիջական հովանաւորութեամբ, ինչպէս եւ օժանդակութեամբ լոյս ընծայուեց հայագիտական մեծ արժէք ներկայացնող աւելի քան 180 աշխատութիւն: Դրանց շարքում առանձնանում է «Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան» նիւթերի բազմահատորեակը, որում առաջին անգամ շրջանառութեան մէջ են դրւում Հայ Եկեղեցու պատմութեան սպիտակ էջերը լուսաբանող հարիւրաւոր փաստաթղթեր:

Մեսրոպ Արքեպիսկոպոսի հայաստանեան գործունէութեան անբաժան մասը կազմեցին Հայ Առաքելական Եկեղեցու, Հայոց պատմութեան, բանասիրութեան, արուեստի, ազգագրութեան եւ այլ հիմնահարցերի նուիրուած գիտական նստաշրջանները, որոնց մեծ մասն անցկացուեց Օշականի դպրատանը եւ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայում: Իր բեղուն գիտակրթական գործունէութեան համար Սրբազանը արժանացաւ ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի պատուաւոր դոկտորի կոչման, դարձաւ Հայաստանի գրողների, ստեղծագործական այլ միութիւնների անդամ, պարգեւատրուեց տասնեակ շնորհակալագրերով: Նա «Հայկական Պատմական Յուշարձանների Պահպանութեան Հիմնադրամի» նախագահն էր եւ ջանք չէր խնայում կործանումից հայկական ճարտարապետական կոթողները փրկելու համար:

Քրիստոնէութեան 1700-ամեակի տօնակատարութիւնների եկեղեցական յանձնաժողովի գրասենեակի վարիչ-քարտուղարի պաշտօնում Մեսրոպ Արքեպիսկոպոսը յատուկ ուշադրութիւն յատկացրեց եկեղեցիների ու վանքերի նորոգութեանը: Կարճ ժամանակում վերանորոգուեցին եւ օծուեցին բազմաթիւ

եկեղեցիներ: Նա մինչեւ կեանքի վերջին օրերն իր եկեղեցական ծառայութիւնը բերեց՝ մեծապէս օժանդակելով յատկապես Մուղնու Ս. Գէորգ վանքի բարեզարդմանը: Մուղնին կազմեց Սրբազանի ազգանպաստ գործունէութեան առանցքը:

1997-ից վեր նրան վիճակուեց քանիցս լինել հող-հայրենիում:

Մեսրոպ Արքեպիսկոպոսը պատարագում էր կիսաւեր եկեղեցիներում, մամռակալած քարերին վերադարձնում հայ եկեղեցականի խօսքն ու հայ հոգեւոր երգի հազարամեայ հնչիւնները, վայելում Արածանիի ափին, Նպատ լեռան ստորոտին Ս. Տրդատի ու հազարաւոր հայերի առաջին մկրտութեան վայրում լինելու, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում հայորդաց պսակ անելու բերկրանքը:

Աշճեան Սրբազանի կազմակերպած ուխտագնացութիւններն ընդգրկեցին նաեւ հայկական այլ սրբատեղիներ: Վերջին տարիներին նրա գործունէութեան մէջ իւրայատուկ էջ կազմեց Ջաւախքը: 2001-2002թթ. դէպի Ջաւախք կազմակերպուած ուխտագնացութիւնները մեծ խանդավառութիւն առաջացրեցին ջաւախքահայութեան շրջանում: Մեսրոպ Արքեպիսկոպոսի կազմակերպած անհամար միջոցառումների ցանկը, դժբախտաբար չհարստացաւ մի այնպիսի նուիրական իրադարձութեամբ, որպէսին Հայ Գրերի 1600-ամեակի տօնակատարութիւնն էր, որին Սրբազանը վերջին տարիներին մեծ խանդավառութեամբ նախապատրաստւում էր: Նրան յատկապէս մեծ ոգեւորութիւն էր պատճառել սեփական փնտրտուքի արդիւնքում Արաքսի վրայ Տափերական կամուրջի տեղի յայտնաբերումը:

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի անժամանակ մահը անաւարտ թողեց բազում գործեր:

2004 թ. Յունուարին Պատմութեան Ինստիտուտում գործող Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի անուան կենտրոնի կազմում բացուեց եւս մի կարեւոր հաստատութիւն՝ գիտական գրադարան: Այստեղ զետեղուած հարուստ գրականութեան կողքին տեղ գտան Սրբազանի անձնական իրերը, Արեւմտեան Հայաստանից բերուած զանազան մասունքները, լուսանկարների ու տեսաֆիլմերի հաւաքածուները, արխիւային նիւթերը:

Անցած տարիները յուշում են, որ Մեսրոպ Սրբազանի ֆիզիկական բացակայութիւնն ամենեւին էլ չի ենթադրում նրա իրական բացակայութիւն: Իսկական մտաւորականի եւ քաղաքացու ներկայութիւնն ամենուր է՝ նրա ջանքերով նորոգուած եկեղեցիներում, հեղինակած աշխատութիւններում, հոգողութեամբ հրատարակուած գրքերում, պատմական հայրենիք՝ Արեւմտեան Հայաստանի ճամփաներում, միլիոնաւոր հայորդիների սրտերում:

Աշոտ Մելքոնեան
ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի տնօրէն, պ.գ.դ., պրոֆեսոր
Հայաստանի Հանրապետութիւն, 4 Դեկտեմբեր, 2004

Հոգու եւ գրքի մարդը

Խորհրդային մարդու իմ հանգամանքով մինչեւ իննսունական թուականները բարձրաստիճան հոգեւորականների քիչ էի հանդիպել: Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը առաջիններից էր, որին կարողացայ տեսնել առօրեայ հանգամանքներում, մի քանի օր շփուել, զրուցել հետը:

1991 թ. Ապրիլին Լոս-Անջելեսից եկայ Բոստոն, ապա Նիւ-Եորք՝ այնտեղից հայրենիք թռչելու համար: Ապրիլի 24-ին նախորդող օրերին իմ բարեկամ, Նիւ-Եորքաբնակ Գրիգոր Գրիգորեանը ինձ ասաց, որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ Արքեպիսկոպոս Աշճեանը ինձ խնդրում է մասնակցել Ցեղասպանութեանը նուիրած երեկոյին եւ ելոյթ ունենալ: Ես, իհարկէ, հաճոյքով համաձայնուեցի, տեղափոխուեցի հիւրանոց, որ ինձ համար վարձել էր Արեւմտեան թեմի առաջնորդարանը, եւ քանի որ հիւրանոցը շատ մօտ էր Առաջնորդարանին, յաճախ գնում էի Մեսրոպ Արքեպիսկոպոսի հետ զրուցելու: Աշխոյժ, լայն հետաքրքրութիւնների տէր մարդու տպաւորութիւն թողեց վրաս: Տեսնում էի, որ Նիւ-Եորքաբնակ տիկիններ եւ պարոններ յաճախ են գալիս, զրուցում, խնդիրներ քննարկում: Համայնքի կենտրոնական դէմքերից մեկն էր: Մեր զրոյցների ժամանակ Քեաւառի /Գաւառի, այն օրերին Կամոյի/ անեկդոտներ էր պատմում, որը զուարճացնում եւ զարմացնում էր ինձ: Ես, որ ծնունդով Գաւառից եմ, ուրախանում էի, որ ահա այդ հռչակաւոր քաղաքում տրւում է իմ հայրենի քաղաքի անունը: Եւ ես մի օր, դարձեալ խորհրդային մարդու իմ անփորձութեամբ, ասացի Մեսրոպ Արքեպիսկոպոսին. «Սրբազան, ինչ աշխարհիկ մարդ եք»: Վստահ էի, որ լաւ բան եմ ասում. բայց Մեսրոպ Սրբազանը վիրաւորուեց, մի տեսակ տագնապահար եղաւ եւ խնդրեց. «Մէկ ալ ատանկ բաներ չըսէք»: Դրանից յետոյ երկար ժամանակ պէտք է անցնէր, որպէսզի այս անպատեհութեան տպաւորութիւնը ցրուէր: Մի օր, արդէն Երեւանում, նշւում էր Սրբազանի ծննդեան վաթսունամեակը: Ելոյթ ունեցաւ Լեւոն Հախվէրդեանը եւ իբրեւ բարձր գնահատական, ասաց բառացիօրէն նոյնը, ինչ ես էի ասել տարիներ առաջ՝ «Մեսրոպ Արքեպիսկոպոսը աշխարհիկ մարդ է», անշուշտ, նկատի առնելով Սրբազանի բնաւորութեան եւ գործունէութեան լաւագոյն կողմերը: Ես նստած էի Սրբազանի կողքին: Նայեցի, ժպտացի, ինքն էլ ժպտաց, եւ խնդիրը փակուեց:

Եւ իսկապէս, Մեսրոպ Սրբազանը աշխարհիկ մարդ էր բառիս լաւագոյն, իսկական հոգեւորականի արժանապատուութիւնը ամենեւին չվիրաւորող իմաստով: Այսինքն, ներփակուած չէր զուտ հոգեւորական, եկեղեցական խնդիրների ոլորտում, այլ ապրում էր աշխարհի, իր ժողովրդի ու իր մշակոյթի, իրեն շրջապատող կենդանի մարդկանց հոգսերով: Նոր Ջուղայում ու Նիւ-Եորքում իր ծաւալած գործունէութեանը ծանօթ չեմ: Բայց այն, ինչ նա արեց Հայաստանում իր ապրելու մի քանի տարիների ընթացքում, լիուլի բաւական էր նրան դասելու Հայ Եկեղեցու եւ հայ մշակոյթի ամենանուիրուած գործիչների շարքում: Բազմաթիւ գրքերի տպագրութիւն հովանաւորեց, ինքը գրեց, կազմեց ու հրատարակեց գրական եւ բանասիրական արժէք ունեցող կարեւոր գրքեր, հրատարակչութիւն ստեղծեց: Հովանաւորեց ամենատարբեր մշակութային ձեռնարկներ: Շէնացրեց Մուղնու վանքը:

Եւ այս բոլորի մէջ եղաւ իսկապէս հոգու մարդ՝ ոչ միայն եկեղեցու սպասաւորի իր հանգամանքով, այլեւ իր բուն էութեամբ: Եւ նրա սէրը հայ գրքի հանդէպ իր ազնուական հոգեւոր էութեան դրսեւորումն էր:

Ես հիմա հիացմունքով ու տխրութեամբ եմ յիշում այն ուղեւորութիւնները, որ կազմակերպում էր Մեսրոպ Սրբազանը դէպի Արեւմտյան Հայաստան: Ես բախտ չեմ ունեցել դրանց մասնակցելու: Բայց այն ֆիլմերը, որոնք պատկերում են այդ ուղեւորութիւնները, այնքան տպաւորիչ ու յուզիչ են, որ ինձ մնում է միայն նախանձել իմ այն ընկերներին, որոնք եղել են ուղեւորութեան մասնակիցների թւում:

Իսկապէս ապրում էր Հայաստանի հոգսերով: Հոգով ու սրտով կապուեց Հայաստանին, Երեւանին: Ո՞վ չի տեսել նրան Երեւանի փողոցներում, իր ոչ այնքան շքեղ բաճկոնով շրջելիս: Երբ այլեւայլ հանգամանքների պատճառով նա ազատուեց Քրիստոնէութիւնը Պետական Կրօն Հռչակելու 1700-ամեակին նուիրուած հանդիսութիւնների կազմակերպման եկեղեցական յանձնաժողովի քարտուղարի պարտականութիւններից, չխռովեց, չհեռացաւ Հայաստանից, այլ շարունակեց իր գործունէութիւնը իբրեւ մշակութային գործիչ, բարեգործական հիմնադրամի ղեկավար: Եւ դրա համար նորից ու նորից չեմ կարող խորապէս չափսոսալ, որ նրա դին ամփոփուեց ոչ թէ Մուղնու վանքի բակում, այլ հեռաւոր Լիբանանում: Հէնց ա՛յս՝ հայկական հողում Մեսրոպ Սրբազանի աճիւնը պիտի վայելէր իր յաւերժական հանգիստը: Նրան բաժին չհասաւ հայրենի հողում թաղուելու այն հասարակ շնորհը, որը չի մերժւում սովորական մահկանացուներին:

Մի քանի տարի առաջ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիան Մեսրոպ Սրբազանին ընտրեց իր պատուաւոր դոկտոր: Միանգամայն արժանի

գնահատական նրա գործունէութեանը: Մշակոյթի մարդ էր, գրքի եւ հոգու մարդ էր, եւ մեզ մնում է այսօր խոնարհուել նրա յիշատակի առջեւ...

Ազատ Եղիազարեան
ՀՀ ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտի տնօրէն,
բանասիրական գիտութիւնների դոկտոր

Իմ Սրտի Խօսքը

1980-81 թուերին ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտը ձեռնարկեց հրատարակելու 19-րդ դարի հայ նշանաւոր լուսաւորիչներից մէկի, «Հիւսիսափայլի» հիմնադիր Ստեփանոս Նազարեանի երկերի երկար սպասուած ժողովածուն, որի համար գերմաներէնից ես թարգմանել էի նրա մի եզակի ուսումնասիրութիւնը՝ «Պարսկական Պոեզիայի ակունքները», որ լոյս է տեսել գերմաներէն Բեռլինում 1852 թուին եւ հայերէն տպագրուելու էր առաջին անգամ: Ուսումնասիրութեան հետ թարգմանել էի նաեւ պարսկական պոեզիայի հազուագիւտ նմոյշներ, որ մէջ էր բերել հեղինակը տողացի գերմաներէն թարգմանութեամբ: Սակայն ժողովածուն տարիներով մնաց երեսի վրայ, որովհետեւ ԳԱ Ակադեմիան գումար չունէր հրատարակելու: Եւ 1996 թուին անակնկալ իմացայ, որ Հայ Եկեղեցու ամերիկեան թեմերից մէկի առաջնորդ, Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը 5000 դոլար է նուիրել ժողովածուն հրատարակելու համար: Դա իմ առաջին հեռակայ ծանօթութիւնն էր այդ ազնուական անձնաւորութեան հետ, որին յետոյ շատ անգամ եմ հանդիպել Օշականի Մաշտոցեան դպրատան գիտաժողովներում: Երախտագիտութեամբ պէտք է նշեմ, որ նա 2000 թուին գումար հայթայթեց ամերիկահայ Ջորջ Բակումեանից՝ Արմին Վէգնէրի «Ճանապարհ Առանց Տունդարձի» գիրքը հրատարակելու համար, որ գերմաներէնից թարգմանել եւ 50-ից աւելի լուսանկարներով պատրաստել էինք երջանկայիշատակ կնոջս՝ Ռիմայի հետ,- ուստի այդ գիրքը կրկնակի թանկ է ինձ համար:

Գերաշնորհ Մեսրոպ Արք. Աշճեանը **Սրբազան** էր իր հոգեւոր կոչումով, բայց ինձ համար նա **հայր** էր իր հարազատութեամբ եւ **Սրբազան** իր հոգու լուսեղէն մաքրութեամբ: Մի անգամ հարցրի իր աշխարհիկ անունը - ասաց, որ Հրայր է եղել, իսկ ձեռնարդրելիս Կիլիկիոյ Զարեհ Ա Կաթողիկոսը տուել է իրեն Մեսրոպ անունը: Ոգու հրայրքով նա ծառայեց Սուրբ Մեսրոպի գործին եւ ստեղծեց իր հրատարակած եզակի գրքերից մի գրադարան, որոնցից իւրաքանչիւրի վրայ դրոշմուած է նրա մեծախորհուրդ անունը:

Ամեն հանդիպելիս, ում հետ էլ խօսելիս լինէր, պիտի պահը գտներ, մօտենար ինձ եւ գորովանքով ողջունէր: Մինչեւ հիմա զգում եմ ուսիս նրա աջի մտերմիկ հպումը, իմ Թոռնիկներ Կարենը եւ Անին, որոնց ուղեկցութեամբ փոխնիփոխ ներկայ եմ եղել Դպրատան հաւաքներին, ինձնից շատ աւելի երկար են յիշելու Սրբազան Մեսրոպ պապիկի մատների շոյանքն իրենց մազերին: Վերջն անգամ նրա ձայնը լսեցի «Ազատութիւն» ռադիոկայանով Նիւ-Եորքից, ուր տարել էր շնորհանդէսի նոր լոյս տեսած «Ս. Էջմիածին. Ուղեգրութիւններ» գիրքը: Յաջորդ իսկ օրը նոյն կայանը գուժեց նրա անակնկալ վախճանը:

Գերաշնորհ Մեսրոպ Արք. Աշճեանի նման եզակի մարդկանց մասին եմ գրել իմ այս քառատողը.

Մեր կեանքում նա՛ է միշտ բարձր մնում,
Ով որ դժուարն է ընտրում թեթեւից.
Մարդ կայ, որ պատուի ետեւից է գնում,
Մարդ կա՛յ, որ պաւն է գնում ետեւից:

Ալբերտ Մուշեղեան
Բանասիրական Գիտութիւնների դոկտոր,
ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտ

Հայրենի Իմաստութեան Հոգեւոր Նուիրեալը

Սրբազան Մեսրոպ Աշճեանի յայտնուելը իմ կեանքում նման էր Տարօն-Սասունից եկող մի հեռաւոր յուշի, որ ես կրում էի իմ սրտում՝ կարծես այնտեղ ծնուած լինէի: Աստծուն Սրբազանը լսելի դարձրեց իմ հոգու ձայնը՝ գնալ այնտեղ, ուր իմ հոգեմտաւոր արմատներն էին: Ես յօդուածների շարք ունեմ Տարօն-Սասունի Մամիկոնեան-Թոռնիկեանների մասին: Ինչպէս նաեւ մանուկների համար՝ պատմաբանների հեղինակային կազմի կողմից գրուած եւ իմ խմբագրած «Հայոց Պատմութեան» ձեռնարկի առաջաբանում, դիմելով հայ աշակերտին, գրել եմ. «...Հայոց Պատմութիւնը քեզ կ՛առաջնորդի դէպի Վան ու Մուշ, Կարին ու Կարս, Անի ու Սիս, Բարձր Հայք ու Տայք, Ծոփք ու Սասուն, Վասպուրական ու Մոկք, Փոքր Հայք ու Կիլիկիա, դէպի, իրօք, հեքիաթային մի աշխարհ, ուր ապրել ու ստեղծագործել են մեր նախնիները: Դու հոգեւոր թելերով պիտի կապուես Մայր

հողին, պիտի զգաս արեանդ կանչը, պիտի վեհանաս Անիի ու Աղթամարի եկեղեցիներով... »:

Ինձ համար մեր հայրենի պատմութիւնը ներկայ դարձնողը եղաւ Սրբազանը: Նա ունէր մեծ սէր դէպի Հայոց Պատմութիւնը: Եւ նա իր զարմանահրաշ հետաքրքրութեամբ կարող էր ոգեշնչել իր շրջապատը, մասնագէտներին: Արեւմտեան Հայաստանում մեր ուխտագնացութեան հոգեւոր առաջնորդն էր Սրբազանը: Նա նաեւ մեր Զօրավարն էր: Երբ Անիից գալուց առաջարկեցինք, շրջանցելով թուրքական պահակակէտը գնալ Բագնայր, Սրբազանը միայն մէկ վայրկեան մտածեց (չէ որ խախտելու էինք «սահմանային կարգը»), այնուհետեւ վճռական կերպով մեքենաները ուղղեց դէպի հինաւուրց Հայոց սրբավայրը: Իսկ յետոյ, երբ թուրքերը երեք զրահապատ մեքենաներով մեր երեք մեքենաները շրջապատեցին եւ հրացանների փողերի տակ պահեցին գիշերը դաշտում, Սրբազանը անվարան էր եւ իր իմաստուն աչքերի մէջ երեւում էր այն թախիծը, որ խնկում էր ի յիշատակ Եղեռնի զոհերի...

Երբ Վանայ լիճը թափուող Բերկրի գետակն էինք անցնում, գեղատեսիլ ջրվէժի մօտ գտնուող կամրջի վրայով, Սրբազանը մտախոհ էր: Անսպասելի տեսանք գունատուեց: Մատից արիւն էր գալիս: Սուր մետաղի էր կպել եւ վնասել էր ձեռքը: Այդ պահին մատից ջուրն էր ընկել եպիսկոպոսական մատանին: Սրբազանը ասաց, որ հոգ չէ, քանզի հայրենի ջուրը տարաւ մատանին: Այնուամենայնիւ խմբով բոլորս իջանք գետը եւ փնտրեցինք մատանին, սակայն չգտանք...

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին առանց խաչի է, ոսոխը ոչնչացրել է այն: Սակայն հոգելից է մնում եկեղեցին՝ բիւր բիւրաւոր նահատակուած հաւատացեալ հայերի անմահ հոգիներով: Սրբազանը սուրբ պասակաղրութիւններ կատարեց: Մեր ուխտագնացներից Աշոտ եւ Լուսինէ Մելքոնեանները, Վոլոդէա եւ Հռիփսիմէ Առուշանեանները տարիներ է ինչ ամուսնացած էին, սակայն եկեղեցական պասակաղրութիւն չէին ունեցել★ Այն եղաւ Ս.Խաչ եկեղեցում, ամբողջ ծիսակարգով՝ ազգագրական երգերով եւ պատարագով: Սրբազանը ասաց, որ աւելի քան ութսուն տարի եկեղեցու պատերը հայերէն երգ ու աղօթք չէին լսել...

Վարագայ վանքում Սրբազանը եղել էր նաեւ նախկին ուխտագնացութեան ժամանակ եւ տեղի քուրդ կանանց խնդրել մաքուր պահել աւերակները: Իսկ այստեղ եւս իշխանութիւնների ծրագրով, քանդուած վանքի պատին կպած մզկիթ էր կառուցուել: Իսկ ընդհանրապէս այն ինչ դեռեւս հիմնայատակ չեն քանդել թուրքական իշխանութիւնները վերածում են մզկիթի (Կարսի Առաքելոցը, Փրխուսի եկեղեցին): Վարագայ վանքում, ինչպէս եւ միւս քանդուած եւ աւերուած եկեղեցիներում Սրբազանը մաքրագործող, հոգեյիշատակ պատարագ արեց:

Զարմանալի էր Սրբազանի տոկունութիւնը Մշոյ Առաքելոց վանքը բարձրանալիս: Զնայած իր առողջական ծանր վիճակին, Սրբազանը հաւատի եւ հայրենասիրութեան ուժով բարձրացաւ Անդրանիկ զօրավարի պաշտպանած վանքը եւ այնտեղ նոյնպէս պատարագ մատուցեց:

Սարից իջնելու ճանապարհին շատ էր յոգնել Սրբազանը ու ծառաւել: Ես մի կրեայ տեսայ եւ գնացի նրա հետքերով, համոզուած լինելով, որ այն կը բերի աղբիւրի մօտ: Այդպէս էլ եղաւ: Պէտք էր տեսնել Սրբազանի ուրախութիւնը Սասունի ջուրը խմելիս...

Անիի Մայր Տաճարում Սրբազանը օրհնեց իմ խաչը, որը ես ընկղմեցի նաեւ Արածանիի ջրերում, Բագաւանի մօտ: Արեւմտեան Հայաստանի սրբավայրերով անցած այդ խաչը ինձ հետ է ի յիշատակ մեր սիրելի Սրբազան Մեսրոպ Աշճեանի առաջնորդած մեր ուխտագնացութեան...

Էդիկ Դանիէլեան
պատմագիտութեան դոկտոր,
պրոֆեսոր

Աղբիւր Սիրոյ

(Մեսրոպ Արք. Աշճեանի յիշատակին)

Տիեզերքի հեռաւոր անկիւններում կան աստղեր, որ վաղուց մարել են, մահացել, սակայն ժամանակի ու տարածութեան մէջ մենք տակաւին տեսնում ենք նրանց լոյսը, ըմբոշխնում նրանց վեհութիւնն ու գեղեցկութիւնը: Մեր կեանքում էլ կան մարդիկ, որ մահից յետոյ՝ նման հեռաւոր այդ աստղերին, շարունակում են լոյս սփռել իրենց շուրջբոլորը, շարունակում են ապրել ու արարել:

Ինձ համար այդպիսի մարդկանցից է գերաշնորհ Մեսրոպ Արք. Աշճեանը: Պէտք է խոստովանեմ, որ շատ մտերիմ չեմ եղել հետը, մեր հանդիպումներն եղել են դրուագային, զուտ գործնական-գիտական հարցերի շուրջ ու առիթով: Սակաւաթիւ այդ հանդիպումների ժամանակ միշտ էլ պատկառել եմ այն ահռելի ներուժից, որ կուտակուած էր իր մէջ, որ մերթ ընդ մերթ ժայթքում էր ու փորձում պարուրել զրուցակցին, ստիպում մի պահ տոգորուել իր մտածումներով ու ապրումներով: Լոյսի, ջերմութեան, բարիութեան, ու սիրոյ աղբիւրի էր նման: Ի՜նչ սիրով ու պատկառանքով էր խօսում, ի՜նչ ջերմութեամբ էր արտայայտւում ինձ

ծանօթ եւ անծանօթ մարդկանց մասին: Ոչ մի խծբծանք որեւէ մէկի հասցէին, ոչ մի արհամարհանք: Դիմացինին լսում էր լայն, անուշ ժպիտով, փոքր ինչ կկոցած աչքերով, միշտ փոքր-ինչ զարմացած արտայայտութեամբ:

Նրա սէրը մարդն էր ու իր գործը: Անկախ այդ մարդու դիրքի, բնաւորութեան, արհեստի, մասնագիտութեան, կշռի եւ հոգեբանութեան: Իր համար մարդը մի ամբողջ տիեզերք էր, արարչագործութեան գլուխգործոցը: Մի առիթով զրուցում էինք նշանաւոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի մասին: Իրեն պատմեցի պատմաբանի վերջին օրերի վերաբերեալ ինձ յայտնի մի քանի դրուագներ: Լսում էր անհուն յուզումով: Խորապէս ազդուած էր յատկապէս Բրիւսելի հասարակաց հիւանդանոցում դանդաղ հանգչող Ադոնցի վերջին խօսքերից: Երբ աւարտեցի խօսքս արցունքի մի խոշոր կաթիլ հոսեց այտն ի վայր: Կարծես նեղուելով իր բոպէական յուզումից, ասաց.

Մեծագոյն, աներեւակայելի դժբախտութիւն է այսպիսի հայրենիք ունենալով հանդերձ, մարդ մահանայ օտարութեան մէջ, թաղուի օտար հողում: Հայրենիքը նրա համար սիրոյ աղբիւր էր, իսկ այդ աղբիւրի շքեղագոյն ակը՝ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին էր ու նրա հնաւանդ սովորոյթներն ու արարողութիւնները, որ աստուածատուր էր համարում: Ամենամեծ սէրը հայ հայրենիքն էր ու հայ մարդը: Եւ վերջապէս նրա՝ ամէնքին յայտնի անդաւաճան սէրը Հայ Գիրքն էր ու Գրչի մարդը: Գիրքն իր կեանքն էր, կեանքի իմաստը, խորհուրդը: Ուշ աշնանային մի օր «Արմենիա» պանդոկի սրահում խօսք գնաց իր հովանաւորութեամբ հրատարակուած գրքերից մէկի մասին: Արշաւիր Գաբուճեանի հետ համակարծիք էինք, որ այդ գիրքը թոյլ գործ է՝ կասկածելի իր անհրաժեշտութեան մէջ: Ներողամիտ ժպիտով ընդհատեց մեզ.

- Ամենավատ գիրքն անգամ իր մէջ պարունակում է պիտանի եւ ուսանելի շատ բաներ:

Թէեւ համակարծիք չէի իր հետ, սակայն հասկանում էի, որ խօսքն առաւել եւ ընդհանրապէս հայ գրքի մասին է, որն իր համար սիրոյ եւ հայրենասիրութեան մի անսպառ շտեմարան էր ինքնարտայայտման ու ինքնաբացայայտման միջոց:

Ինքն էլ աղբիւր էր անսահման սիրոյ: Իրենից ճառագում էր մի տաք լոյս, որ շարունակում է ճառագել մահից ի վեր ասդին ու ջերմացնել մեր պաղած հոգիները:

Պետրոս Յովհաննիսեան

պատմական գիտութիւնների դոկտոր,

պրոֆեսոր

Մեսրոպ Արք. Աշճեանի Յիշատակին

Մահացաւ այնքան սակաւաթիւ դարձող վերջին մեծ հայերից մէկը:

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը իր էութեամբ մարմնաւորում էր քրիստոնէական գաղափարը: Կարծես նրա մասին էր ասել բանաստեղծը. «Նա նստել ոտների տակ Յիսուսի // ունկնդրել, աստուածային Կտակին// Սիրել, ներել ե՛ւ չարին...//: Այս նիւթամոլ, այս կեղծաւոր դարի մէջ, //Արհամարհեց նա ամեն բարձ ու պատիւ,// Միշտ վառ պահեց այն երկնային ջահն անշէջ //եղաւ բոլոր որբ սրտերի քաջ հովիւ»:

Սիմոն Զաւարեանի յիշատակին նուիրուած Իսահակեանի այս բանաստեղծութեան տողերը ես մէջ էի բերել իմ խօսքում 1996 թուի Մայիսին Նիւ Ջերսիի հայոց եկեղեցում, ուր Ամերիկայի Արեւելեան Թեմը նշում էր Սրբազանի հոգեւոր գործունէութեան 35-ամեակը: Լեփ-լեցուն եկեղեցու նիստերի դահլիճը մէկ մարդու նման յոտնկայս ծափերով բռնուեց, երբ Սրբազանը ամբիոնին մօտեցաւ իր շնորհակալական խօսքն ասելու:

Ես մտածում էի հովուի եւ հովուապետի ի՛նչ կատարեալ ներդաշնակութիւն, ինչքան կարող է սիրուած լինել ճշմարիտ հոգեւորականը: Այդ օրերին բազմաթիւ առիթներ ունեցայ կրկին ու կրկին անձնապէս համոզուելու ասածիս մէջ, լինէր դա երբ գնում էինք Նիւ Եորքի հայոց եկեղեցիներ կամ թէ Նիւ Ջերսիի Մանուկեան հայկական դպրոցը, բնակարանամուտի կամ «Համազգայինի» հաւաքի, ամենուրեք, ամեն տեղ սպասուած, սիրուած, յարգուած: Իսկ ինքը հեզ, համեստ ու համբերատար:

Ջեմ թաքցնի՝ մեծ էր զարմանքս, երբ շուտով իմացայ, որ Սրբազանը թողել էր իրեն այնքան պաշտող թեմը եւ Գարեգին Առաջին վեհափառի խնդրանքով եկել Հայաստան, ղեկավարելու Քրիստոնէութեան Ընդունման 1700-ամեակի էջմիածինեան յանձնաժողովի աշխատանքները: Գիտէի, որ Մեսրոպ Սրբազանը մեծ յարգանք ունէր Գարեգին Առաջին վեհափառի հանդէպ, եւ նրա խօսքը օրէնք էր իր համար: Սակայն ոչ միայն դա:

Արդէն, երբ Նիւ Եորքում Սրբազանը ստեղծել էր «Հող եւ Մշակոյթ» միութեան մասնաճիւղը, նրա հիմնական նշանաբանն էր դարձել վերադարձ դէպի հայրենիք: Եւ մօտ չորս տարի եկեղեցական յոբելեանից առաջ նա մեծ եռանդով անցաւ գործի, յոբելեանին ընդառաջ սկսեց հրապարակել մատենաշարեր, կազմակերպել ուխտագնացութիւններ պատմական Հայաստան, համերգներ՝ կեանքի կոչելով Արեւմտահայաստանի արուեստի աւանդոյթները, գիտական նստաշրջաններ: Մթնոլորտն իրօք լցուած էր 1700-ամեակի մեծ խորհրդի շնչով:

Այդ շրջանում նա ոչ միայն այդ յանձնաժողովի պատասխանատուն էր, այլեւ Գարեգին Առաջին վեհափառի աջ ձեռքը, ամենամօտ եւ վստահուած անձը եւ թէպէտ Սրբազանը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի ներկայացուցիչ էր, սակայն նրա եւ Գարեգին Առաջինի համագործակցութիւնը լաւագոյնս խորհրդանշում էր մեր երկու եկեղեցական կենտրոնների նպատակի ընդհանրութիւնը:

Եւ երբ արդէն ըստ պաշտօնի Մեսրոպ Սրբազանը չէր (1999 թուի աշնանից), 1700-ամեակի յանձնաժողովի պատասխանատուն, նա, միեւնոյն է, մենակ, իր կամքով, իր խելքով ու եռանդով աւելի գործ արեց ի նշանաւորումն այդ յոբելեանի, քան արեցին յանձնաժողովները, կոմիտէներն ու ինստիտուտները: Եւ յետոյ նա նոյն թափով անցաւ Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» ստեղծման 1000-ամեակի յոբելեանին: «Մատեանի» երկու սքանչելի հատորներ հրապարակեց գրաբար եւ աշխարհաբար (Մկրտիչ Խէրանեանի թարգմանութեամբ): Օշականի «Մեսրոպեան» դպրատանը անցկացրեց գիտական նստաշրջան, ուխտագնացութիւն Նարեկայ վանք:

Իսկ Նարեկացու յոբելեանական նիստին պաշտօնական հրաւէր չստացաւ: Սրբազանը դրուել էր մի իրավիճակում, որ ժողովրդական լեզուով կոչւում է «խաղից դուրս», իսկ գրական՝ «իւրային օտարների մէջ, օտար իւրայինների մէջ»:

Մենք այդպէս էլ չհասկացանք, թէ ով էր մեր կողքին: Եւ թոյլ տուէք Սրբազան, այս ամենի համար ներողութիւն խնդրել:

Աւիկ Իսահակեան

գրականագէտ

«Հայոց Աշխարհ», 6 Դեկտեմբեր 2003թ.

Հպարտ Հայը

Կան մարդիկ, որոնց հոգու աշխարհագրութիւնը ամենեւին չի աղերսւում իրենց երկրի պատմական այս կամ այն ժամանակաշրջանի ֆիզիկական քարտէզի հետ, որովհետեւ ընդգրկում են հոգեւոր հայրենիքը, կան մարդիկ, որոնց հոգու ժամանակագրութիւնը ամենեւին չի սահմանափակւում իրենց ապրած ժամանակների շրջանակներում, որովհետեւ նրանք ժամանակը դիտում են գոյութեան տիեզերական ամբողջութեան մէջ: Նրանք Աստծոյ ընտրեալներն են, նրանք, ում վիճակուած է մասը կազմելու սեփական ժողովրդի գոյութեան պատմական խաչը կրող ծանր ու մեծապատիւ երեւելիների շարքում: Այդ նրանք են, որ աշխարհ են գալիս անհրաժեշտաբար, կամօքն Աստուծոյ, որպէսզի նորովի ներկայացնեն աշխարհին իրենց նախնիների հարուստ ու շքեղ հոգեւոր անցեալը,

որպէսզի վերհանեն պատմութեան խորքերում ամբարուած հոգեւոր, գիտական-ստեղծագործական գանձերը, վերիմաստաւորեն ներկան եւ մշակոյթի, գիտութեան, գրականութեան, վերջապէս մագաղաթի ու գրքի շնորհիւ հայոց հոգեւոր բարձունքները դարձնեն մատչելի ուխտաւորների համար: Այդպիսի մեծութիւն էր մեզ համար Մեսրոպ Արք. Աշճեանը: Ինչպէս հոգեհարազատ է մեզ գրականութեան բանաձեւումը ըստ Դանիէլ Վարուժանի ազգային հիմքի վրայ համամարդկային գաղափարները արտայայտելու խորհրդով, այնպէս էլ Մեսրոպ Արք. Աշճեանի հարցազրոյցներից մէկում գոյութեան, կենսակերպի բնորոշումն է հոգեհարազատ՝ «պիտի երթանք մեր արմատներուն, անցեալին խարսխուիլով կերտենք նոր հայը, որը հաւատարիմ պիտի ըլլայ իր պատմութեան, ոգիին»:

Հոգեւորական, մտաւորական, գիտնական, մանկավարժ, գրող, հրատարակիչ, տեսաֆիլմերի հեղինակ, հասարակական գործիչ եւ այլն, եւ այլն: Զթուարկենք գրքերի եւ յօդուածների այն պատկառելի քանակը, որոնք հեղինակել է Մեսրոպ Արք. Աշճեանը, չնչենք քանակն այն գրքերի, որոնք լոյս աշխարհ են եկել նրա մեկենասութեամբ, դրանք դրուած են ի ցոյց հայութեան, կազմում են մի ամբողջ գրադարան: Ի վերջոյ չգնահատենք նրա ներդրումը մեր հայաստանեան մշակութա-գրահրատարակչական կեանքում, որովհետեւ անգնահատելի է այն: Եւ չյիշատակենք նրա լայնածաւալ եւ խորախորհուրդ գործունէութեան բոլոր հանգրուանները, որովհետեւ միեւնոյն է, ոչինչ են թուերը, որովհետեւ նման գործունէութիւնը արժեւորւում է ներքին բովանդակութեամբ եւ ոգով:

Մեսրոպ Արք. Աշճեանը մէկն էր այն եզակիներից, ով պատրաստակամ եղաւ հայրենիքի եւ հայաստանցու հետ բաժանելու ողբերգական եւ դժուարին օրերի դառնութիւնները, կիսելու վիշտը, տօնելու յաղթանակը, եւ աստուածային աղօթքով, եւ այդ աղօթքի խորհուրդն առարկայացնող գործով նեցուկ լինելու նրանց: Ոչ ճառասացութեամբ, այլ գործով փաստելու հաւատքի ուժը-այնպէս, ինչպէս ճգնաւորի աղօթատեղիի քարն է մաշւում ծնկատեղերից, ինչպէս ժայռափոր եկեղեցի արարելու նուիրումն ու ուժն է, ինչպէս հայրենեաց մշակի ու ծառայի տիրական ամրութիւնը:

Մեսրոպ Արք. Աշճեանը իր ուսուցչապետերի, հոգեւոր հայրերի դաւանանքին հաւատարիմ եւս մէկ անգամ փաստում էր վերուստ հաստատ այն ճշմարտութիւնը, որ բանիւը գերադասելի է հացիւից, որ միաբանուել է պէտք միայն կերտելու եւ արարելու նպատակով, որովհետեւ դա է մարդու, ազգի, ժողովրդի գոյութեան, բարու, վեհի եւ գեղեցիկի յաւերժացման անքննելի միջոցը:

Խորհրդանշական է, որ Մեսրոպ Արքեպիսկոպոսի անձնական նախաձեռնութեամբ այսօր նոր կերպարանք եւ իմաստաւորում է ստացել Մուղնու Ս. Գէորգ վանքը: Խորհրդանշական է, որովհետեւ ճիշտ նոյն կերպ, նրա շնորհիւ, ի

սփիւռս աշխարհի շատ ու շատ հայերի մտապատկերում մարմին է ստանում նաեւ հայրենիքը որպէս սրբազան ուխտատուն տեսնելու, նրանով կեանքն իմաստաւորելու հրամայականը:

Եւս մէկ անգամ անդրադառնալով Աշճեանի վաստակին եւ քաղաքացիական կեցուածքին, ուզում եմ նշել, որ Հայաստանի Ազգային Գրադարանի սեփականութիւն են դարձել բազմաթիւ հրատարակութիւններ գերազանցապէս Մեսրոպ Արք. Աշճեանի շնորհիւ: Մեր բազմահազար ընթերցողների եւ իմ գործընկերների կողմից խորին երախտագիտութեամբ խոնարհւում եմ նրա յիշատակի առջեւ...

Դաւիթ Սարգսեան
Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէն
Հոգեւոր Հայրենիք, Մարտ 2004թ.

Նրա Մէջ Համատեղւում Էր Անհամատեղելին
Շռայլ Գոյութիւն

Մենք մարդիկ ենք, որ կորցրել ենք մեզ եւ շրջապատը ճիշտ գնահատելու կարողութիւնը: Խեղուած մտքերով, հիւանդ երեւակայութեամբ, ապրում ենք Աստծոյ դրախտում՝ ինչպէս դժոխքում, գոհ ենք ինքներս մեզանից եւ դժգոհ ենք ուրիշներից, առանց կասկածելու մեր ճշմարտութիւններին: Սէր ենք ակնկալում ուրիշներից, սիրելու մեր անկարողութիւնը բացատրում ենք մեզ բաժին հասած սիրոյ պակասով: Չենք գիտակցում, որ տալիքը չպէտք է պայմանաւորուած լինի ստանալիքով, եթէ խօսքը առեւտրի մասին չէ:

Մենք ծնւում եւ մեռնում ենք մենակ, սակայն չենք կարողանում ապրել մենակ: Մեզ օդի եւ ջրի պէս անհրաժեշտ են ուրիշները՝ սեփական անկատարութիւնը արդարացնելու եւ բացատրելու համար: Մեզանում երբեմն յայտնւում են մարդիկ՝ մեծ «մենակներ», նրանք սիրոյ եւ բարութեան ակունք են, եւ մեր կոպիտ ու աննկարագրելի գոյութիւնը չի պակասեցնում սիրելու նրանց կարողութիւնը: Նրանք շռայլօրէն բաշխւում են բոլորին, քանի որ այդ է նրանց գոյութեան կերպը: Այդպիսին էր Սրբազանը: Ինչպէ՜ս էր նրա մէջ համատեղւում անհամատեղելին: Մեղմ ու հեզաբարոյ, գործարար եւ սկզբունքային, իմաստուն եւ երեխայ, անսահման կենսասէր եւ անխնայ՝ սեփական առողջութեան նկատմամբ: Ճշմարիտ ազնուական հայ հոգեւորական՝ օժտուած սիրելու մեծ տաղանդով, անսահման նրբազգացութեամբ եւ ներողամտութեամբ:

Նրա շրջապատում երբեմն յայտնւում էին նաեւ սպառողների խմբեր, որոնց միակ արժէքը ուրիշներին արժեւորելու մէջ է: Նրա մտերիմներից ոմանք փորձում էին շտկել, ուղղութիւն տալ Սրբազանի գործունէութեանը, տարակուսում էին, երբ նրա հովանաւորութեամբ լոյս տեսած բազմաթիւ արժէքաւոր գրքերի մէջ, երբեմն յայտնւում էին անարժէք գործեր, կարծում էին թէ միամիտ է, չի տեսնում, որ օգտւում են, չի զգում, որ խաբում են:

Տեսնո՛ւմ էր, քանի որ տեսանող էր, եւ հասկանո՛ւմ էր, քանի որ իմաստուն էր: Յաճախ նեղւում էր, երբ իրեն խաբում էին, բայց երբեք չէր չարանում, երբեք չէր դատում, այլ օգնում էր նոյնիսկ իրեն խաբողներին, իր լոյսը հաւասարապէս բաշխելով բոլորին: Այդպէս էր, որովհետեւ ծնուել էր, որ մեզ յիշեցնի սիրելու կերպը, յիշեցնի, թէ որոնք են այս աշխարհի ճշմարիտ արժէքները:

Նա ապրեց մեր մէջ, մեր կողքին եւ մենք չամաչեցինք մեր տգեղ, անշնորհակալ, մանրախնդիր գոյութեան համար: Զենք ամաչում եւ հիմա, երբ նա այլեւս մեզ հետ չէ: Ես ճանաչում եմ նրան 1979-ից: Նա իմ կողքին է եղել կեանքիս ամենաերջանիկ եւ ամենադժուար պահերին, երբ ցաւն իմ մէջ խեղդել էր սիրելու եւ ներելու կարողութիւնը: Ականջներիս մէջ է իր մեղմ, հեւացող խօսքը, որն ուղիղ հասնում էր սրտիդ: Այդ խօսքին հաւատում էիր անվերապահօրէն, նոյնիսկ եթէ անսահման յուսահատ էիր: Յուսահատութիւնն իսկ մեղքի էր վերածւում, քանի որ այն ծնունդ է առնում սեփական անձդ չափից աւելի կարեւորելուց:

Սրբազանն ինձ իր քոյրն էր անուանում, իսկ ես հիմա փորձում եւ չեմ կարողանում գրել իր մասին, որովհետեւ բառերը կաղապարում են միտքս եւ զգացմունքներս: Ի՞նչ կարող եմ ասել այդ շռայլ գոյութեան մասին: Ով աչք ունէր՝ տեսաւ, ով սիրտ ունէր՝ զգաց եւ հասկացաւ: Երանի նրանց:

Յասմիկ Մաշինեան
քիմիական գիտութիւնների թեկնածու, դոցենտ

Հայ Ճարտարապետութեան Բարեկամը

Հայ ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը հայագիտութեան կարեւոր բնագաւառներից է: Այն 20-րդ դարում, ինչպէս Խորհրդային Հայաստանում, այնպէս էլ արտերկրում, զգալի նուաճումներ է ձեռք բերել, եւ յատկապէս միջնադարեան ճարտարապետութիւնը իր արժանի ու պատուաւոր տեղն է գրաւել համաքրիստոնէական մշակոյթի պատմութիւնում:

Սակայն 1990-ական թուականներին, առարկայական յայտնի պատճառների հետեւանքով, Հայաստանում ճարտարապետութեան ուսումնասիրութեան գործընթացը զգալի թուլացաւ, մեծապէս նուազեց այդ թեմային նուիրուած հրատարակութիւնների քանակը, դադարեցին հրաւիրուել հայ արուեստին նուիրուած միջազգային սիմպոզիումները, որոնցում ճարտարապետութիւնն առաջատար տեղ էր գրաւում:

Այդ տարիներին հայագիտութիւնն ընդհանրապէս, իսկ հայ ճարտարապետութիւնը մասնաւորապէս, ունեցաւ իր մեկենաս-բարեկամը՝ յանձինս Մեսրոպ Արք. Աշճեանի, որի եռանդի, այդ գործին նուիրուածութեան, կազմակերպչական տաղանդի շնորհիւ հրաւիրուող բազմաթիւ գիտաժողովները հայագիտութեան զարգացման մեծ խթան դարձան, իսկ նրա հոգածութեամբ տպագրուած գրքերն այսօր մի ամբողջ գրադարան են կազմում:

Մեսրոպ Սրբազանն առանձնայատուկ վերաբերմունք ունէր հայ ճարտարապետութեան յուշարձանների, հայ ժողովրդի անցեալի այդ նիւթական վկայութիւնների նկատմամբ: Եւ այդ դրսեւորուեց Սրբազանի՝ դեռեւս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ԱՄՆ-ի Արեւելեան շրջանի եւ Կանադայի թեմակալ առաջնորդ եղած ժամանակ: 1989թ., երբ լրացաւ Անիի Մայր Տաճարի հիմնադրման 1000-ամեակը, Հայաստանում իրավիճակը խիստ անբարենպաստ էր նման փառաւոր տարեդարձը նշելու համար: Բայց Մեսրոպ Սրբազանի նախաձեռնութեամբ ու ջանքերով այդ յոբելեանը մեծ շուքով, հեղինակաւոր գիտաժողովով նշուեց Նիւ-Եորքում, հայ եւ օտարերկրեայ ճանաչուած գիտնականների մասնակցութեամբ եւ ունեցաւ միջազգային հնչեղութիւն:

Նրա հովանաւորութեամբ 1997թ. տպագրուեց «Հայկական Ճարտարապետութեան Մատենագիտութիւնը» (կազմեց՝ Ս.Գէնջեան), որը սեղանի գիրք է դարձել ճարտարապետների, հնագէտների, արուեստաբանների համար:

Հայաստան տեղափոխուելուց յետոյ Մեսրոպ Սրբազանը բուռն գործունէութիւն ծաւալեց ինչպէս հայագիտական աշխատութիւնների հրատարակութիւնն իրականացնելու, այնպէս էլ գիտաժողովների կազմակերպման ընդաւառում: Նա 2001թ. հովանաւորեց «Հայաստան. Քրիստոնէական Ճարտարապետութեան 1700 Տարին» (հեղ. Մ.Հասրաթեան, Զ.Սարգսեան) չքեղ գրքի տպագրութիւնը՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով, որը Հայաստանում Քրիստոնէութեան Ընդունման յոբելեանին յիրաւի նուէր դարձաւ: Նոյն՝ 2001թ. Մեսրոպ Սրբազանը կազմակերպեց Անիի Մայր Տաճարի օծման 1000-ամեակի տարեդարձը, որի շնորհիւ արդէն ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետութիւնում հնարաւորութիւն ստեղծուեց տօնելու մեր ճարտարապետութեան գլուխ-գործոցի կառուցման յոբելեանը: Մեսրոպ Սրբազանի

ջանքերով այն նշուեց գիտաժողովով եւ հանդիսութիւններով: Գիտաժողովն ունեցաւ լայն ընդգրկում, նուիրուած լինելով ոչ միայն Անիի Մայր տաճարին, այլեւ միջնադարեան Հայաստանի հռչակաւոր մայրաքաղաք Անիի պատմութեանը, վիմագրութեանը, մշակոյթին, ճարտարապետութեանը եւ արուեստին: Եւ խորհրդանշական է, որ նիստերը կայացան համահայկական սրբավայր Օշականում, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի մօտ: Գիտաժողովին մասնակցեցին Հայաստանի լաւագոյն գիտնականները, ինչպէս նաեւ սփիւռքահայ ճանաչուած մեր գործընկերները: Գիտաժողովի հետաքրքրական զեկուցումները մի նոր՝ բարձր մակարդակ նախանշեցին մէկ դարեայ պատմութիւն ունեցող «Անիագիտութեան» մէջ:

Յոբելեանը վերածուեց իսկական տօնախմբութեան՝ հարուստ եւ բովանդակալից մշակուած ծրագրով. գիտաժողովից բացի՝ ցուցահանդէսներ, համերգ եւ, վերջապէս, Մեսրոպ Սրբազանի առաջնորդութեամբ ուխտագնացութիւն դէպի Անի, ցաւօք, միայն մեր կողմից դիտելով:

2003թ. Մեսրոպ Սրբազանի հոգածութեամբ տպագրուեց Տ. Մարութեանի «Հայ Դասական Ճարտարապետութեան Ակունքներում» մեծածաւալ գիրքը, որտեղ ամփոփուած էր 92-ամեայ գիտնականի հիմնական աշխատութիւնները, նուիրուած հայկական շինարարական արուեստի հանգուցային հիմնախնդիրներին:

Պէտք է առանձնակի նշել Մեսրոպ Արք. Աշճեանի յատուկ վերաբերմունքը, կարելի է ասել՝ սէրը Մուղնու վանքի նկատմամբ: Մուղնու վանքը Հայաստանի հին եւ նշանաւոր սրբավայր-ուխտավայրերից է, իսկ նրա Ս. Գէորգ եկեղեցին իր ճարտարապետութեամբ եւ յարդարանքով 17-րդ դարի հայկական լաւագոյն յուշարձանն է: Վանքը գտնւում էր անմխիթար վիճակում՝ լքուած, նորոգման կարօտ եկեղեցիով, որի որմնանկարները փչանում էին ներս թափանցող անձրեւաջրերից, համալիրի միւս շէնքերը կիսաւեր էին, տարածքը՝ անբարեկարգ: Մեսրոպ Սրբազանի ջանքերով նորոգուեցին ե՛ւ եկեղեցին, ե՛ւ վանական շէնքերը, վերանորոգուեց միջնադարեան աղբիւրը, իսկ տարածքը վերածուեց վարդաստանի:

Լայնածաւալ էր Մեսրոպ Արք. Աշճեանի գործունէութիւնը Հայաստանում՝ նրա բազմաթիւ նախաձեռնութիւնների մասին կարելի է մի ամբողջ գիրք գրել: Սրբազանի յանկարծակի եւ անժամանակ մահը մեծ կորուստ եղաւ Հայ Եկեղեցու, հայ մշակոյթի, հայ ճարտարապետութեան համար:

Մուրադ Հասրաթեան
ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր
ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի ճարտարապետութեան բաժնի վարիչ

Առաքելագործ Հոգեւորական Մեսրոպ Արք. Աշճեանը

1950-ական թուականներից Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան ակադեմիկոս Յովսէփ Օրբելու եւ բանասիրական գիտութիւնների թեկնածու Արտաշէս Նազինեանի խմբագրութեամբ ու տարբեր կազմողների ջանքերով սկսեց պարբերաբար լոյս ընծայել «Հայ Ժողովրդական Հեքիաթներ»ի գիտական մատենաշարի հատորները, որոնց բնագրերը գրի էին առնուել 1915 թ. Արեւմտահայաստանից գաղթած հայերից ազգագրագէտ Երուանդ Լալայեանի կազմակերպած գիտարշաւի ընթացքում: Հազիւ տպագրութեան հերթը հասել էր «Վան-Վասպուրականի Հեքիաթներ»ի 14-րդ եւ 15-րդ հատորներին, երբ ամեն ինչ փոխուեց: Վրայ հասան Հայաստանի Հանրապետութեան անկախութեանը յաջորդող «մոմի ու սովի» տարիները: Թւում էր, թէ կեանքը կանգ է առել առանց էլեկտրական հոսանքի. ո՛չ գործարաններն էին աշխատում եւ ո՛չ տպարանները, չկային նիւթական միջոցներ, յուսահատութիւնը պատել էր բոլորին եւ յատկապէս հայ մտաւորականներին...

Այդ ժամանակ հրաշքի պէս յայտնուեց Մեսրոպ Արք. Աշճեանը: Ես նրան առաջին անգամ հանդիպեցի 1997 թ. «Մեծն Ներսէս» գրասենեակում, որտեղ նա արցախեան ազատամարտիկների ընտանիքներին բարեգործական օգնութիւն ու նպաստ էր բաշխում: Լսելով իմ խնդրանքը՝ նա իսկոյն ձեռնամուխ եղաւ հեքիաթների այդ զոյգ հատորների տպագրութեան հովանաւորութեանը...: Եւ այդ եղաւ սկիզբն այն հարիւրաւոր գրքերի, որոնք նրա եռանդուն ջանքերով լոյս աշխարհ եկան՝ յոյս ու հաւատ ներշնչելով հեղինակներին...:

Այդ թուերին Մեսրոպ Սրբազանին էր վստահուած Հայաստանում Քրիստոնէութիւնը որպէս Պետական Կրօն Հռչակման 1700-ամեակի տօնակատարութեան նախապատրաստական աշխատանքների ղեկավարութիւնը: Պէտք էր տեսնել եւ հիանալ, թէ նա հոգու ինչպիսի թրթիռով էր կազմակերպել «Աստուածաշնչային Հայաստան» միջազգային գիտաժողովը Օշականի վերակառուցուած դպրատանը՝ ապահովելով գիտաժողովի ոչ միայն գիտական բարձր մակարդակը, այլեւ հոգալով բազմաթիւ մտաւորականներին փոխադրամիջոցներով ապահովելու հարցերը: Պէտք էր տեսնել, թէ հայրական ինչպիսի հոգատարութեամբ ու նուիրուածութեամբ էր նա պատրաստել տուել իւրաքանչիւր զեկուցողին հասանելիք փաթեթը՝ գրենական պարագաներով եւ կրօնագիտական գրքերով:

Միջազգային այդ գիտաժողովը նուիրուած էր բոցավառ հռետոր, բառիս բուն իմաստով հոգեւորական-գիտնական, բայց արդէն օրըստօրէ յանգող Ամենայն

Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին…: Աշճեան Սրբազանը եւս շատ ծանր ապրեց այդ կորուստը, բայց չկորցրեց իր հոգու արիութիւնը: Նա գիտէր արժանապատիւ լռութեամբ տանել իր վիշտն ու հոգու ցաւը եւ անմնացորդ նուիրուել հայ մտաւորականութեան վերազարթօնքի սուրբ գործին:

Աշճեան Սրբազանը կազմակերպեց ակադեմական մի շարք ինքնատիպ ու հայաշունչ գիտաժողովներ, բազմամարդ ուխտագնացութիւններ դէպի Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի սրբավայրերը, որոնց մասին ինքը հանգամանօրէն պատմում էր՝ բացատրութիւններ տալով: Այդ բոլորը հետագայում դառնում էին հեռուստահաղորդումներ «Ո՛վ, Հայոց Աշխարհ» խորագրով եւ կամ որպէս տեսաերիզ սփռւում աշխարհով մէկ…:

Նրա մտայղացումները շա՜տ էին ու բազմազան՝ Մուղնու վանքի եւ շրջակայքի բարեկարգումը, «Մուղնի» տպարանի հիմնադրումը, աննախադէպ «Գրքի տօները», հայ գիր ու գրականութեան, դպրութեան բարելաւմանն ուղղուած նոր ծրագրերն ու մտայղացումները, որոնք իրագործուելու էին իր հայթայթած միջոցներով ու նորագոյն տեխնոլոգիաներով, եւ այլն, եւ այլն:

Մեսրոպ Արք. Աշճեանը, տարիներ շարունակ անօգտագործելի մնացած յարկաբաժինը վերանորոգել տալով, այն դարձրեց ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտին արժանավայել գիտական նիստերի դահլիճ իր արխիւով ու յարակից յարմարութիւններով: Արուեստասէր հոգեւորականը չզլացաւ իր անձնական հաւաքածոյից առանձնացնել մեր երբեմնի շքեղ մայրաքաղաք Անիի մեծադիր համայնապատկերը եւ նուիրաբերել ու զարդարել նորաստեղծ դահլիճը՝ այն խորը համոզմամբ, որ հայ ժողովրդի երբեմնի մշակութային ծաղկուն կեանքն է վերազարթնում իր հեւիհեւ ու շնչակտուր հեւքի տակ: Կարծես, նա զգում էր, որ կեանքը կարճ է, իսկ իրեն սպասում են շատ ու շատ գործեր…: Իրօք, շատերը յոյս ու հաւատով սպասում էին, որ Աշճեան Սրբազանը, նիւթական ու հոգեւոր նոր հնարաւորութիւններով ու նոր ծրագրերով վերադառնալու է ԱՄՆ-ից… Սակայն անսպասելի բօթը չանթահարեց բոլորին…

Մեսրոպ Արք. Աշճեանը խորապէս գիտակցում էր իսկական հոգեւորականի իր առաքելութիւնը եւ, առաջնորդուելով իր մեծ անուանակից Սուրբ Մեսրոպ Մաշտոցի տեսլականով, հայ ժողովրդի անձուկ ու դժուարին ժամանակներում ասուպի նման հրավառուեց՝ անկասելի լուսոյ շող թողնելով հայ մշակոյթի պատմութեան անդաստանում…

Վերժինէ Սվազլեան
ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի
առաջատար գիտական աշխատող
բանասիրական գիտութիւնների դոկտոր

Սրբազանը

Ինձ համար Ղարաբաղը, պատմական հայրենիքի մի մասնիկը լինելուց բացի, այսուհետեւ արժեւորուելու է նաեւ նրանով, որ այստեղ՝ այս հողի վրայ ես առաջին անգամ հանդիպեցի, ծանօթացայ, ընկերացայ մի ազնուագոյն անձնաւորութեան հետ, որին հետագայում թէ՛ ես եւ թէ՛ իմ երեխաները դիմում էինք մէկ բառով՝ Սրբազան: Այստեղ առաջին անգամ ծանօթացայ հոգեւորականի հետ, որը, պատկանելով բարձր հոգեւորականութեան դասին, մտաւորականի եւ աշխարհիկ իր կեցուածքով մարմնաւորում էր Հայոց պատմութեան էջերում հաստատուած մեծերի կերպարը: Աստծոյ պարգեւ էր մեր ազգին նրա ներկայութիւնը, թէ ժամանակի պահանջ: Այժմ, երբ էլ չեմ կարողանալու հանդիպել, խօսել, քննարկել, կատակել, երազել Սրբազանի հետ միասին, իմ անցած տարիները Տիրոջ կամքով մէկ վայրկեանում դարձան անհասանելի երազներ, որոնց բերկրանքը արդէն անցած ժամանակով վայելել եմ՝ ֆիզիկապէս նրա գոյութիւնը կողքիս զգալով:

Մեսրոպ Արք. Աշճեանի անունը ոսկէ տառերով է գրուելու Հայաստանի երրորդ հանրապետութեան պատմութեան էջերում: Նա Հայաստանեան գործունէութեան ողջ ընթացքում իր ծառայութեամբ, որբախնամ աշխատանքներով եւ այլ բարեգործական ծրագրերով միայն հաստատում էր «Հաւատք գործովք յաջողեալք» բնաբանը՝ որն ի սկզբանէ դարձել էր նրա ապրելակերպը: Ձկայ մի բնագաւառ, որտեղ չի եղել, չի գործել եւ իր դրական ներդրումը չի ունեցել Մեսրոպ Սրբազանը: Հասարակական դաշտում, ցաւօք, դեռ շատ երկար ժամանակ չի գտնուելու մէկ ուրիշը, որ կարողանայ լրացնել նրա տեղը:

Մեսրոպ Սրբազանը համազգային ուխտաւորն էր, հաւաքական մկրտութիւնների ու եկեղեցիների վերանորոգման աշխատանքների կազմակերպիչը: Նրա ամենաերջանիկ պահերից մէկն էր Ջաւախքում եւ Արցախում կազմակերպած հաւաքական մկրտութիւնն ու Քրիստոնէութիւնը որպէս Պետական Կրօն Հռչակելու 1700-ամեակին նուիրուած՝ եկեղեցիների մաքրման աշխատանքների կազմակերպումը, որին մասնակցեցին շուրջ 12000 դպրոցականներ եւ ուսանողներ: Մեսրոպ Սրբազանը նաեւ մեծ հրատարակիչ էր, այնպիսին, ինչպիսին եղել են մեր պատմութեան էջերում այն լուսաւոր հոգեւորականները, որոնք իրենց ժողովրդի համար այբուբեն են ստեղծել եւ քարակոփ խցերում ճրագի լոյսի ներքոյ պատմութիւնն են մոռացումից փրկել:

Շատ էր ոգեւորուել Գիւմրիում վերջերս բացած «Թռչունեան Տուն» մանկատնով: Անպայման ուզում էր այնտեղ սկաուտական շարժում ստեղծել, քանզի, ըստ պատմական տուեալների, Վահան Զերազը առաջին հանրապետութեան ժամանակ այդ նոյն շէնքում գործող մանկատան սաներով էր հիմնադրել ՀՄԸՄ-ը, եւ այդ նոյն սաներն էին, որ հետագայում լծուեցին նորանկախ հանրապետութեան պաշտպանութեան եւ կառուցման գործին: Սկաուտական շարքերի իր ամենասիրած հատուածը գայլիկներն էին: Իր կազմակերպած հանրային ձեռնարկներին սկաուտների մասնակցութիւնը շատ էր կարեւորում:

Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր: Եւ սա էր նաեւ Սրբազան Հօր հմայքի գաղտնիքը, որի պակասը, ցաւօք, շատ է զգացւում մեր հոգեւորականների շրջանում: Նա այս դժուարին տարիներին աւելի շատ ժողովրդի մէջ էր, նրա հետ, քան եկեղեցում, իսկ եթէ եկեղեցում էր, ապա՝ նորից իր ժողովրդի հետ:

Յարութիւն Յարութիւնեան
«Երկիր», 5-11 Դեկտեմբեր 2003թ.

Սրբազանը Միայն Անցյալի Պատմություն Չէր, Այլ Ուղերձ Էր Ներկաներին...

Առաջին անգամ մենք հանդիպեցինք Արցախում՝ Կովսականի շրջանի Դից Մայրի բնակավայրում, Ծավի նշանաւոր Սոճուտի մօտ, 1999թ.-ին, Աւագ Ուրբաթ:

Այստեղ՝ գետում, կառուցուած էր մկրտութեան աւազան և տարածաշրջանի բազմաթիւ բնակավայրերից ժամանած երեխաները, տարեցները, տասնամեակներով քահանայ չտեսած, աղօթք չլսած, անկնունք ժողովուրդը շրջապատել էր Սրբազան Հօրը որը 12 վարդապետների հետ ամբողջ օրը սաղմոսում էր, օծում սուրբ ջրով...

1000-ից աւելի մարդ այդ օրը մկրտուեց: Սա առիթ հանդիսացաւ սկսելու Հայոց տաղավար տօներին վերաբերուող տեսաշարի ստեղծման համար եւ յաջորդ տարի, երբ Մուղնիի Ս. Գէորգում նկարահանում էինք Վարդավառի տօնակատարութիւնը կրկին հանդիպեցի Մեսրոպ Սրբազանին: Պատարագից յետոյ, սեղանի շուրջ հարցրեց.

-Գալիս ես Արեւմտեան Հայաստան:

-Ե՞րբ եք մեկնում Սրբազան

-10 օրից...

...Գնացինք: 6 տարի է անցել, բայց առ այսօր անցած 5000 կմ-ի իւրաքանչիւր դրուագ դուրս չի գալիս մտապատկերից: Շատ ու շատ խորհրդածութիւնների, վերանայումների, արժէքաւորման առիթ հանդիսացաւ այդ ուխտագնացութիւնը, որի ոգեշնչողն ու առանցքը Սրբազանն էր:

Այնուհետեւ Հայաստանի տարբեր բնակավայրերում, նկարահանումների ժամանակ, մարդկանց հետ շփուելիս առաջին խօսքը լինում էր «Սրբազանը երեկ եկել էր, ուզում է եկեղեցին նորոգի կամ ճանապարհը բարենորոգի»: Շուտով ես հասկացայ, որ կարիք չկայ հարցնելու, ո՞ր Սրբազանը՝ Ախուրեանի ափից Անիին հանդիպակաց եւ նոյն օրն Սիւնիքում կարելի էր միայն Մեսրոպ Սրբազանին հանդիպել, այդպէս շատ է եղել, մեկ անգամ նոյնիսկ կրկնակոխ հետապնդում էի, ուր մտանք ասացին «նոր գնաց» այդպէս էլ շնչասպառ չհասանք: Այս ամենի կողքին առանձին տեղ էր գրաւում համատեղ կազմում հեռուստածրագրերը: Քրիստոնէութեան 1700 ամեակի ընթացքում պատրաստեցինք «Հայոց կաթողիկոսները» շարքը: Մեր պատմութեան, իմացութեան մի փառահեղ քրիստոմատիա էր, անմոռանալի է Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Հովսէփեան եւ Զարեհ կաթողիկոսներին նուիրուած ծրագրերը, այն անցկացրեց Սրբազանը՝ միայն անցեալի պատմութիւն չէր այլ ուղերձ էր ներկաներին...

Նրա իմաստութեան, հանդարտութեան, հանդուրժողականութեան կարիքը մենք դեռ երկար կը զգանք:

Արթուր Բախտամեան
հեռուստալրագրող

Խօսք Երախտագիտութեան
Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանին

Յտեսութիւն, քանի մը շաբաթէն կը հանդիպինք...

1985 թուականին ցեղասպանութեան 70 ամեակի հանդիսութիւնը Վաշինգտոնում աւարտուել էր, Սրբազանի հետ վերադառնում էինք Նիւ-Եորք: Օդանավակայանում հրաժեշտ տուեցի՝ շուտով Փարիզում «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան վարչական ժողովին հանդիպելու յոյսով: Եւ այսպէս 70-ական թուականներից նաեւ որպէս «RAA» կազմակերպութեան գիտխորհրդի անդամ՝ շարունակաբար հանդիպում էինք Եւրոպայում կամ Ամերիկայում եւ խօսում ու

ծրագրեր էինք մշակում պատմական Հայաստանի Արտազ եւ Պարսպատունիք գաւառներում, ներկայ Պարսկաստանի Ատրպատական նահանգում գտնուող Թադէոս Առաքեալի, Ստեփանոս Նախավկայի եւ Ծործորի վանքերի վերականգման ու հնարաւորութեան դէպքում գործօն դառնալու հարցերի շուրջ:

Հայաստանը, աւելի ճիշտ Խորհրդային Հայաստանը, այդ օրերին մեզ համար մնում էր անհասանելի հեռու, եւ, եթէ ինչ-որ գիտաժողովի առնչութեամբ «Մշակութային Կապի Կոմիտէի» հրաւէրով առիթ էր ստեղծւում մի քանի օր Երեւանում լինել, դա համարւում էր մենաշնորհ, որին արժանանում էր այս կամ այն անձը, որը համարւում էր Սփիւռքից ժամանած զբօսաշրջիկ եւ ոչ աւելին...

Դա էր ժամանակի իրականութիւնը. ժլատ ու պատնէշներով իրարից անջատուած երկու կարգի հայը՝ ներսի եւ դրսի: Առաջինը՝ որպէս ծովից ծով Խորհրդային Միութեան քաղաքացի, իսկ երկրորդը՝ որպէս զբօսաշրջիկ, որին իրաւունք էր տրուած տեսնել ու ապրել իրականութեան՝ միայն իրեն յատկացուած բաժինը՝ երկրի ցուցադրական վարդագոյն պատկերը: Քննադատութիւնը, որը ընկերային հասարակարգի առաջադիմութեան նախապայմանն է, համարւում էր անցանկալի: Կար, սակայն գովքի-ինքնագովքի մեծ պահանջ՝ քարոզչութիւնը պետականօրէն ծրագրուած սոցիալիզմի անբաժան մասնիկը: Ճակատագրի բերումով արտերկրում ծնուած ու սնուած հայը, երկրի կարօտախտով տառապող մարդը, եթէ հասնում էր Հայաստան քարոզչութեան միջոց էր նաեւ նպաստը:

1988-ի ողբերգական երկրաշարժին յաջորդեց խորհրդային աշխարհը փլուզող «քաղաքական երկրաշարժը»... Երկրաշարժ, որի ալիքները հասան մօտ եւ հեռու մեր գաղութներին, իրենց պատեանների մէջ կծկուած գաղութներին. պատեաններ, որոնք ստեղծուել էին մեր ինքնութիւնը օտարանալուց պաշտպանելու: Լինելիութեան կռիւ, որը պարտաւորութիւն էր, եւ որի մէջ կար տուայտանք եւ վեհութիւն, եւ որի վերջակէտը պարտութիւնն էր: Սա մեր պատմութեան մէջ անհամար կրկնուած փաստ է:

Քաղաքական փոխուած այս իրավիճակը 70 տարիներից յետոյ մի նոր հայրենադարձութեան ճամբայ բացեց, որը սկսուեց մութ եւ ցուրտ տարիներին, անձայն եւ դանդաղ, սակայն օրեցօր աճող երթով, որը յուսադրող է, շատ յուսադրող:

Մեսրոպ Արք. Աշճեանին, որը սփիւռքահայ հոգեւորականութեան ասպարէզում այս շարժման դրօշակակիրն էր, յաջորդեցին ուրիշները: Որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան առաջնորդ՝ Նիւ-Եորքից ուղղակի փոխադրուեց Հայաստան՝ առանց որ Սփիւռքի համայնքների հետ երբեւէ կապը կտրելու, որոնց համար աշխատում էր դէպի Հայաստան կամուրջ հանդիսանալ: Մուղնին Սրբազանի սիրած վանքն էր, որի անմշակ տարածքում հարիւրաւոր պտղատու

ծառեր տնկելով՝ փարթամ այգու վերածեց ու ինքն էլ իր ծառերի պէս արմատաւորուեց այնտեղ: Նա ունէր սրտի հարց. վատառողջ էր, երբեմն շատ անզգոյշ, սակայն ունէր անսպառ եռանդ, որը դրսեւորւում էր տարբեր ասպարէզներում ձեռնարկած բազմակողմանի գործունէութեան մէջ: Սրբազանը հաւատում էր լաւին, սակայն գեր բազմազբաղութեամբ, տարատեսակ գործունէութիւններում, երբեմն հասնում էր նոյնիսկ հակասութեան:

Սրբազանը շռայլ էր իր օգտակարութեամբ, նա գիտաժողովների եւ ցուցահանդէսների մնայուն հովանաւորն էր, եւ բացի իր գրչին պատկանող բազմաթիւ ուսումնասիրութիւններից՝ նաեւ նրա մեկենասութեամբ վերջին տարիներին անթիւ գրքեր հրատարակուեցին: Զկար մի մարդանուէր հայրենասէր գործ, որից յետ կանգնէր: Յիշում եմ, անցած աշնանն էր, մի ամպամած ցուրտ օր, նորից Մուղնիում էինք, ուրախ էր ու գոհունակութեամբ պատմում էր իր հովանաւորած որբանոցի մասին: Երբ մեկնում էինք վանքից, Սրբազանը թեքուեց, ետ նայեց ու ասաց. «Արմէ՛ն, գիտե՞ս, իմ տեղը հոս է...»: Մի քանի օր յետոյ՝ Ամերիկա մեկնելուց առաջ, զանգեց. «Վաղը կը մեկնիմ, բայց գործ շատ ունիմ: Յոտեսութիւն, քանի մը շաբաթէն կը հանդիպինք...»:

Սրբազան հայր,
Հողը Քեզ թեթեւ,
Յիշատակդ վառ

Արմէն Հախնազարեան
«RAA» Հայկական ճարտարապետութիւնն Ուսումնասիրող
Կազմակերպութեան հիմնադիր եւ գիտխորհրդի անդամ

Լինել Երախտագէտ

Մայիսի 24-ին Մուղնի գիւղի դպրոցը կոչուեց Մեսրոպ Արք. Աշճեանի անունով: Երախտագէտ մուղնեցիների ցանկութիւնն էր դա, եւ մայրաքաղաքից եւ մարզկենտրոնից ժամանած բազմաթիւ հիւրերը, մասնակցելով Համազգային Մշակութային Միութեան կազմակերպած յիշատակի միջոցառմանը, մի գեղեցիկ օր անցկացրին «Աշճեանական մթնոլորտում»: Բազմաթիւ պաշտօնեաներ էին ներկայ, բայց նրանցից ոչ մէկը չէր եկել «ի պաշտօնէ», այլ սրտի կանչով: Իրօք, Մեսրոպ Սրբազանը Հայաստանում ապրեց նուիրեալի կեանքով, մեզ ներկայացրեց հայ

հոգեւորականի ու մտաւորականի, եկեղեցական ու մշակութային գործչի մի նոր, մեզ անծանօթ տիպար, եւ այն ինչ արեց, դժուար է անգամ թուարկել սոյն հրապարակման մէջ:

Մուղնիում, մասնաւորապէս Սրբազանի ջանքերով նորոգուեց եկեղեցին, վերաշինուեց վանատունը, հիմնուեց գրադարան, բարեկարգուեց շրջակայքը: Հեռաւոր Լիբանանում ծնուած-մեծացած, որպէս թեմական առաջնորդ Իրանում եւ Ամերիկայում ապրած, հայրենիքի ու հայ գրքի պաշտամունք ունեցող մարդը սիրեց Հայաստանի այս գողտրիկ անկիւնը եւ մտածում էր այստեղ ապրել կեանքի մնացած մասը... Ցաւօք, մահը վրայ հասաւ անակնկալ՝ 2003-ի Դեկտեմբերին, ԱՄՆ-ում, որից յետոյ նրա աճիւնը հողին յանձնուեց Անթիլիասի մայրավանքում...

Սակայն խօսքը Մեսրոպ Արք. Աշճեան մեծ երախտաւորի մասին այսքանով պիտի սահմանափակենք եւ անդրադառնանք այս նիւթի խորագիրը կազմող խնդրին:

Մուղնեցիները հայ գիւղացու դարաւոր իմաստնութեամբ երախտագիտութեան մի «դաս» տուեցին, որն այնքան անհրաժեշտ է մեր հայաստանեան իրականութեանը: Թերեւս բոլոր բնագաւառներում, բայց առաւել ակնբախ գիտութեան ու մշակոյթի ասպարէզում մի ցաւալի «աւանդոյթ» ունենք: Ջ՛ենք գնահատում: Երախտամոռ ենք: Մեր կողքին ապրող, արարող, ստեղծող մարդուն լաւագոյն դէպքում մի բարի բառով կը յիշենք նրա մահից յետոյ միայն: Ամեն մի մեծ ու պստիկ ղեկավար պիտի անպայման փնովի իր նախորդին: Ամեն մի արուեստագէտ պիտի սեւացնի «փեշակակից» ուրիշի արածը: Միով բանիւ, ամեն մէկը պիտի տեսնի դիմացինի աչքի շիւղը եւ չտեսնի իր աչքի գերանը: Աշխարհի չափ հին այս երեւոյթի մասին բարձրաձայնող երկնառաք Միածինը երեւի յոյս ունէր, որ Իր հետեւորդներն ու Իր անունով մկրտուածները պիտի ձերբազատուեն այդ բարոյական արատից...

Այսօր ամեն մարդու կատարած գործի արժանի գնահատումը (դեռ չենք խօսում մեծ քանքարի մասին) քաղաքակիրթ հասարակութեան չափանիշ է: Կասկած չկայ, որ մենք քաղաքակրթական հէնց ա՛յս ճանապարհն ենք ընտրել: Այս ճանապարհն ընտրել ենք Մեծն Մաշտոցից սկսած: Եւ այս ճանապարհի առաջապահները ոչ միայն իրենց գործով, այլեւ իրենց դժուարին կեանքով ուղի են հարթել մեզ համար: Պատմահայր ենք անուանում Մովսէս Խորենացուն, որի կեանքը հալածանքների մէջ է անցել: Սուրբ ենք կոչում Գրիգոր Նարեկացուն, որը զրպարտուել ու հալածուել է յանիրաւի: Այս շարքից մէկ այլ խոշոր անուն է Անանիա Շիրակացին: Ահա թէ նա ինչ է գրում Բիւզանդիայից գիտելիքներով բեռնաւորուած Հայաստան վերադառնալու մասին. «Եւ ահա ես՝ նուաստս

Հայաստանցի, սովորեցի մեծազօր գիտութիւնը, որ թագաւորներին է ցանկալի, եւ բերեցի մեր երկիրը՝ առանց որեւէ մէկի աջակցութեան, շնորհիւ միայն իմ ջանքերի եւ օգնութեամբ Սուրբ Գրիգորի աղօթքների, թէպէտ եւ ոչ ոք չգտնուեց մեծարող եւ շնորհակալ իմ աշխատանքի համար, որովհետեւ մեր ժողովուրդը իմաստասիրութիւն եւ գիտութիւն սիրող չէ..., Երբ ես վերադարձայ, շատերը եկան ինձ մօտ սովորելու եւ փոքր ինչ սովորած՝ թողեցին ու հեռացան, չմնացին մինչեւ դասերի աւարտը: Նրանք բաւական համարեցին այն ինչ ստացել են եւ ինձանից առանձնանալով սկսեցին ուսուցանել այնպիսի բաներ, որ չգիտէին... Իմ մասին նրանք տգիտութեամբ պարսաւանքի խօսքեր էին ասում...»:

Այս ամենը մենք արդէն անցել ենք մեր երկարատեւ պատմական ճանապարհին եւ ժամանակն է, որ գոնէ հիմա նոյնը չկրկնենք: Ժամանակն է, որ ընդհանրական շահը վեր դասենք մասնաւորից, մերժե՛նք նախանձն ու մեծամտութիւնը, որ գնահատենք մարդուն ու իր աշխատանքը, երախտիք ու պարգեւ մատուցենք ըստ արժանւոյն եւ ո՛չ «մերոնքականութեան» թիւր սկզբունքով: Իսկ դրա համար անհրաժեշտ է առաջին հերթին բարեկիրթ լինել: Անհրաժեշտ է լինել երախտագէտ:

Կարեն Մաթեւոսեան
Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանի
աշխատակից

Մեծ Հմայքի Տէր Հայրենասէրը

Մեսրոպ Արք. Աշճեանը երկնառաք հայրենասէր էր: Ի վերուստ նա կոչուած էր առատաձեռն սերմնացանի նման, մարդկանց հոգիներում սերմանելու բարին, անքէն ու հանգիստ ապրելու աստուածային գաղափարները:
Նրանք, ովքեր երջանիկ պատեհութիւն են ունեցել գէթ մէկ անգամ զրուցել Սրբազանի հետ, հմայուել են նրա անսահման բարի ժպիտով, մտքի ու խօսքի պայծառութեամբ, անսպառ գիտելիքների հմուտ մատուցմամբ, աստուածային բանը մարդկանց մատուցելու վարպետութեամբ:

Մեսրոպ Սրբազանի առաջնորդութեամբ ես երջանիկ պատեհութիւն ունեցայ տասն օր լինել մեր նախնիների պատմական հայրենիքում՝ Անիից մինչեւ Սասուն եւ հմայուել ու թախծել ոչ միայն հայոց չքնաղ լեռնաշխարհի, հովիտների, լճերի ու գետերի թովիչ գեղեցկութեամբ, այլեւ նրա հետ ապրել ու կիսել բերկրանքը եւ ցաւատանջ զգացումը, որն ունենում էր մեծ հայրենասէրը: Այդ տասն օրերի հեքիաթային ճանապարհորդութեան իւրաքանչիւր օր ինձ համար նորովի էր

բացայայտում Սրբազանի խորը հայրենասիրութիւնն ու անափ կարօտը հայոց պատմական հայրենիքի նկատմամբ:

Երբ մտնում էինք աւերուած քաղաք, վանք կամ եկեղեցի հոգեկան խռովքը եւ կորստի անսփոփ ցաւն էր պատում Սրբազանի այնքան բարի, հրապուրիչ դէմքը, արտաքուստ այնքան հանգիստ, սակայն ներքին խորը յուզմունքով, համակուած էութիւնը: Այդ տասն օրերից իւրաքանչիւրը Մեսրոպ Սրբազանի համար յագեցած էր ոչ միայն հիանալի, անկեղծ յուզականութեամբ, այլեւ դարերի ընթացքում հայոց հանճարով արարուած, սակայն նուաճող-բարբարոսների ձեռքով խորտակուած յուշարձանների, հազարախոց խաչքարերի, ջարդ ու փշուր արուած նախշազարդ քիւ ու խոյակի մօտ նրանց եւ նրանց արարողների յիշատակին գիտական խօսք ասելու ու հոգեւոր պատարագ մատուցելու ջերմեռանդ գործունէութեամբ:

Գերագոյն հաճոյք է անցնել մեր պատմական հայրենիքի սրբազան եզերքներով, ապրել բերկրանքի անմոռաց պահեր ու կորստի դառը ցաւը...
Ուխտագնացների խումբը եղել էր Կարսում, Անիում, Բագնայրում, Տեկորում, Խծկոնքում, Մրենում, Իգդիրում եւ մեր ազգային վեհութեան խորհրդանիշ, սրբազան Արարատի գեղատեսիլ փեշերով հասել էր Բագրեւանդ, ուր Արածանիի չքնաղ ափին սրբազան քարերն են, որոնց մօտ Գրիգոր Լուսաւորիչը 301թ. մկրտել էր Տրդատ թագաւորին, թագուհուն եւ «տասնհինգ բիւր մարդկանց»:

Խումբը Բագրեւանդի չքնաղ դաշտով քայլեց դէպի սրբազան Արածանի: Լուսաւոր դէմքն ու ճակատը Արածանիից եկող անուշիկ հովերին յանդիման պահած՝ առջեւից գնում էր Մեսրոպ Սրբազանը, ինչպէս Նոյ նահապետը Արարատից իջնելիս: Հզօր է հաւատի ուժը, մանաւանդ, երբ այն ներշնչում է մարդկանց մէջ քրիստոնէական հաւատի ջերմեռանդ նուիրեալ մէկը, ինչպիսին էր Մեսրոպ Սրբազանը:

Նախախնամութիւնն ինքը մեծ հայրենասէր-հաւատաւորին առաջնորդեց դէպի Գրիգոր Լուսաւորչի քարերը:

Նպատ լերան լանջին փարուող Արածանին կիսաշրջան է անում եւ շարունակում իր հանդարտ ընթացքը: Այդտեղից Սրբազանի առաջնորդութեամբ խումբը անցաւ, տարուայ այդ եղանակին, սակաւաջուր դարձած Արածանին, բարձրացաւ մի քանի մետր եւ ահա հրաշք, դարերի խորհրդաւոր լռութեան մէջ, կանգնած են խաչակիր հսկայ քարերը:

Խիստ յուզիչ էր խաչակիր առաջնորդի եւ խաչակիր քարերի հանդիպումը... Մեսրոպ Սրբազանի համակրելի դէմքին երեւաց ներքին հրճուանք, քրիստոնէական նուիրումով նա մօտեցաւ քարերին, համբուրեց ու ըմբոշխնեց խաչքարերի լուսաւորչախառն բոյրը, ապա փութկոտ հագաւ շուրջառը, ձեռն առաւ խաչը եւ

պատարագ մատուցեց ի յիշատակ հայոց համար պատմական մեծ նշանակութիւն ունեցող իրադարձութեան եւ նրա իրագործողների՝ Տրդատ թագաւորի ու Գրիգոր Լուսաւորչի: Աւարտից յետոյ նոյն փութաջանութեամբ Սրբազանը մեզ տարաւ Արածանիի սրբազան ջրերը, կատարեց մկրտութիւն եւ ջրօրհնէք:

Անուշաբոյր միւռոնը կրկին թափուեց Արածանիի ջրերում եւ սրբագործեց գետի ջրերն ու եզերքները: Միւռոնուած Արածանին, իր ալեացն առած պատարագի մեղմանուշ հնչիւնները, գնաց աւետիս տալու հայոց լեռնաշխարհին...

Ինչպիսի խինդ ու ոգեւորութիւն ապրեց հրաշէկ հոգու տէր այդ մեծ մարդը Աղթամարի Ս. Խաչ հոյակերտ եկեղեցում ուխտագնացների երկու զոյգի պսակադրութեան արարողակարգը նախապատրաստելիս եւ կատարելիս: Անուշաբոյր միւռոնի եւ հոգեւոր երգեցողութեան թովիչ հնչիւնները սրբագործեցին հոյակերտ եկեղեցու քանդակազարդ, սքանչելի պատկերները, ափէափ լցրեցին եկեղեցին եւ դուրս յորդեցին դէպի կապուտաչուի կոհակներն ու գեղատեսիլ լեռները...

Այդ պահին Աղթամարը տեսնելու եկած եւրոպացի զբօսաշրջիկները համակ ուշադրութեամբ դիտում էին պսակադրութեան հանդէսը, հոգեւոր երգը կախարդել էր նրանց հոգիները, ամենակարեւորը նրանք հանգամանալից տեղեկութիւններ ստացան Աղթամարի պատմութեան եւ հայերին պատկանելու մասին: Սա Աշճեանական խորիմաստ հայրենասիրութիւնն է...

Մեծ էր Մեսրոպ Սրբազանի ցանկութիւնը հասնել Սասուն՝ դիւցազնական հերոսականութեամբ ազատագրական պայքարի ելած մարդկանց էրգիրը, իջնել Գելիգուզանի գեղատեսիլ ձորը եւ ծնրադիր աղօթել հայոց ազատագրական պայքարի մեծ նահատակներ Սերոբ Աղբիւրի ու Հրայր Դժոխքի գերեզմանների առջեւ: Դա Սրբազանի պատանեկան տարիների սուրբ երազանքն էր:

Սասունի Սէմալ գիւղում թուրք ոստիկանները մեզ արգելեցին գնալ Գէլիգուզան, նրանց հետ բանակցութիւնները շարունակուեցին շուրջ երեք ժամ: Ես, հարազատ Սասունի հողին պառկած, ըմբոշխնում էի նրա անուշ բոյրը եւ ակնդէտ նայում իմ դիմաց նստած Մեսրոպ Սրբազանի մտախոհ դէմքին: Նրա դէմքին, պարզ ու վճիտ աչքերում տեսնում էի ափսոսանքի ու ցաւի անափ զգացմունք: Մեծ հայը խորապէս յուզուել էր ոչ միայն նրա համար, որ իր սուրբ զգացմունքներին անհաղորդ բիրտ թուրքը թոյլ չի տալիս իրականացնել իր պատանեկութեան տարիների երազանքը, այլեւ՝ ուխտագնացները չեն կարող տեսնել Սասունի գոյապայքարի կենտրոններից մէկը՝ ըմբոստ պայքարի մարդկանց ծննդավայր Գէլիգուզանը:

Անհանգստութեան վայրկեանները դառնում էին րոպէներ, իսկ րոպէները՝ ժամեր, ու թւում էր, թէ մի ողջ յաւիտենութիւն է, ինչ Սասունում էինք:

«Յաւիտենութիւնը» ընդհատուեց, երբ խմբի ուղեկցողներից մէկը մօտեցաւ Սրբազանին եւ նրան հրաւիրեց ոստիկանութեան պարենատուն:
Մեսրոպ Սրբազանի յուսակորուստ դէմքին երեւաց յոյսի նշոյլը, մանաւանդ, երբ «Աստուած» կոչելով ելաւ ոտքի եւ հաստատուն քայլերով գնաց պարենատուն:

Շուտով առաջնորդին իւրայատուկ կեցուածքով, մեղմանուշ աչքերում խորամանկ ու յաղթական ժպիտ, պահակատնից դուրս եկաւ Մեսրոպ Սրբազանը եւ հաղորդեց Գէլիգուզան գնալու աւետիսը...

Անդնդախոր ձորի լանջն ի վար շուլալուած ճանապարհը մեզ հասցրեց բազմապիսի ծառատեսակների հեքիաթային գեղեցկութեան մէջ պարուրուած Գելիգուզան գիւղը: Ջորում անուշ երգող գետակի ափից արահետ-ճանապարհը չքնաղ այգիների ու ծառաստանների միջով խմբին տարաւ ձորալանջի բարձրութեան վրայ գտնուող մի տնակ, ուր ժամանակին եղել էր Գէլիգուզանի հայերի սրբատեղի եկեղեցին: Եկեղեցին աւերուած է, նրա փլատակների մի մասը խաչնարած քուրդը յարմարեցրել, դարձրել է իր ընտանիքի համար կացարան:

Գտնել Սերոբի եւ Հրայրի շիրիմները անհնարին էր, մեր սուրբ նահատակների շիրիմները, ինչպէս ամենուր Արեւմտեան Հայաստանում, աւերուած ու պղծուած են...

Մեսրոպ Սրբազանը ձեռքն առաւ մագաղաթն ու խաչը, անկեղծ յուզմունքից շառագունած դէմքով, ալեկոծուած հոգով, վճիտ աչքերում արցունքի յակինթը, սկսեց հոգեհանգիստ աղօթք կարդալ նահատակների սուրբ յիշատակին:

Սակայն այն իր աւարտին հասցնել չկարողացաւ. սիրտը տկարացաւ, իսկ ալեկոծուած հոգու դառնաղի արցունքները թափուեցին սուրբ հողին...
Սրբազանի սրտաբուխ յուզմունքը, սուրբ շիրիմները պղծուած լինելու հանգամանքը յուզեցին բոլորիս, եւ մենք գլխահակ ու դառնացած հոգով հրաժեշտ տուեցինք ազատագրական պայքարի սուրբ նահատակների շիրիմների տեղին:

2000թ. ուխտագնացութիւնից առաջ Մեսրոպ Սրբազանը կազմակերպել էր սփիւռքահայերի մի խմբի ուխտագնացութիւնը մեր պատմական հայրենիքի արեւմտեան շրջանները եւ Կիլիկիա:
Այդ ուխտագնացութեան ժամանակ մեծ հայրենասէրին զաւակի ազնուագոյն զգացմունքները տարել էին մինչեւ իր ծնողների ծննդավայրերը եւ նա՝ երախտապարտ զաւակը, իր սուրբ հոգու ողջագուրանքն ու կարօտներն էր թողել չքնաղ եզերքներից...

Մեսրոպ Սրբազանի կազմակերպած ուխտագնացութիւնների պատմական, մշակութային եւ հոգեւոր նշանակութիւնը խիստ մեծ է: Ուխտագնացութեանը մասնակցած պատմաբանները, մշակոյթի խնդիրներով զբաղուողները, հեռուստատեսութեան եւ մամուլի աշխատողները փոքր-ինչ կարողացան հաւաքել

պատմագիտական, վանքերի ու եկեղեցիների տեղագրութեանը վերաբերող նիւթեր, տեսաժապաւէնի առնել մեր հայրենի չքնաղ եզերքները, դեռեւս կիսականգուն մնացած վանքերն ու եկեղեցիները եւ նուաճող բարբարոսների կողմից աւերակոյտերի վերածուածները:

Այս առումով աւելի դրուատանքի են արժանի Մեսրոպ Արքեպիսկոպոսի կազմակերպած ուխտագնացութիւնները եւ նրանց հայրենագիտական նշանակութիւնը: Մեսրոպ Սրբազանն այն եզակի մտաւոր գործիչներից էր, որոնց կեանքի նպատակը անմնացորդ նուիրուելն էր հայոց պատմութեանն ու մշակոյթին:

Հայ ժողովրդին, հայրենիքին տալ առաւելը եւ չակնկալել ոչինչ, ահա մեծ մարդու նշանաբանը: Այսպիսի հայրենասէրները եզակի են եւ երկնառաք...
Սրբազան Հայրը, իր ժողովրդի համար, աշխարհի շատ երկրներում եղաւ Քրիստոսի վեհ գաղափարները տարածող նուիրեալը: Նա իր հրաշունչ հոգով գրուած ստեղծագործութիւններում իր ժողովրդին է պատգամել աստուածային խօսքի ուժն ու կախարդիչ զօրութիւնը, հայրենիքն ու մարդուն սիրելու, նրանց անմնացորդ նուիրուելու գաղափարները:

Մեսրոպ Սրբազանը Հայաստանում շուրջ մէկ տասնամեակ ծաւալեց բարեգործական լայն գործունէութիւն: Այն ընդգրկել է կարիքաւորների խնդիրները հոգալուց մինչեւ Հայաստանի տարբեր մարզերում երեխաների մկրտութեան կազմակերպումը, երիտասարդ զոյգերի ամուսնացնելը, նրանց բնակարաններով ապահովելը:

Սրբազանի հովանաւորութեամբ հրատարակուած 200-ից աւելի արժէքաւոր սկզբնաղբիւրները եւ ուսումնասիրութիւնները անգնահատելի աւանդ են Հայոց պատմութեան, բանասիրութեան եւ մշակոյթի ուսումնասիրման խնդրում:

Մեսրոպ Սրբազանն աստուածային խօսքի, սիրոյ, բարութեան, առաքինութեան, հայրենասիրութեան առատաձեռն սերմնացանն էր...
Նրա անժամանակ կորուստը անափ ցաւով է լցրել նրան ճանաչողների սրտերն ու հոգիները...

Սակայն մխիթարականն այն է, որ նրա սերմանած գաղափարները՝ հայրենասիրութիւնը, հայրենանուէր գործերը եւ ուսանելի կեանքը նրա ֆիզիկական բացակայութեան հոգեւոր յուշարձանն են:

Գեղամ Կիրակոսեան
Հայկական Մանկավարժական Համալսարանի
պրոֆեսոր

Հայ Ազգի Հոգեւոր Վերածննդի Նուիրեալը Զկայ

Մեսրոպ Սրբազանը՝ Հայ Առաքելական Եկեղեցու այն վառ անհատականութիւններից մէկն է, որի եկեղեցական, ազգային, հասարակական բեղուն գործունէութիւնը մնայուն լուսաւոր հետագիծ է թողել ապագայ սերունդներին: Հոգեւոր պատմա-մշակութային, գրական եւ գիտական ոլորտներում նրա թողած հարուստ ժառանգութեան ուսումնասիրութիւնը եւ պատշաճ գնահատումը համապատասխան մասնագէտների խնդիրն է:

Այս օրերին, երբ բոլորւում է Մեծ Հայրենասէրի մահուան մէկ տարին փորձենք նրա պայծառ կերպարը զգուշաւոր կերպով լրացնել մեր տպաւորութիւններով:

Երջանիկ պատահականութեամբ մեր ծանօթութիւնը կայացաւ 1993թ. ձմռանը, երբ նա հերթական անգամ այցելել էր Հայրենիք, տեղում ծանօթանալու իր նախաձեռնութեամբ Երեւանում բացուած «Սուրբ Ներսէս» բարեգործական կազմակերպութեան խնդիրներին եւ հետագայ անելիքներին: Պատեհ առիթներով Սրբազանը հպարտութեամբ էր յայտարարում, թէ որ երրորդ անգամ է այցելում Հայրենիք, մինչեւ որ 1998թ. վերջնականապէս հաստատուեց Հայաստանում եւ ծաւալեց բուռն եկեղեցական եւ հասարակական գործունէութիւն:

«Մեծն Ներսէս» բարեսիրական հաստատութեան միջոցով Սրբազանը իրականացրել է բազմաթիւ բարեգործական ծրագրեր, Արցախեան պատերազմում զոհուած ազատամարտիկների երեխաների, մանկատների, ծերանոցների օժանդակութիւն, հրատարակչական գործեր, մեր հաւատքի 1700-ամեայ յոբելեանի առիթով հաւաքական մկրտութիւններ եւ այլն:

Սրբազանին բնորոշ մարդկային լաւագոյն յատկանիշներից մէկն այն էր, որ նա ապրում էր ժողովրդի հոգսով, անվրէպ եւ ժամանակին տեսնում էր մեր իրականութեան ցաւոտ կողմերը եւ նախաձեռնում այն վերացնելու, ինչպէս իր ուժերի ներածի չափով, այնպէս էլ առանձին բարերարների օժանդակութեամբ:

Հմուտ կազմակերպիչ էր, միանձնեայ կարող էր ծրագրել եւ գործնական պայմաններ ստեղծել իր մտայղացումները իրականացնելու համար: Իւրաքանչիւր նախաձեռնութիւն, մեծ կամ փոքր, կատարում էր պատասխանատուութեան

զգացմունքով, սիրով եւ հաւատով: Նա իր անմիջականութեամբ եւ պարզութեամբ շուրջը ստեղծում էր ջերմ եւ անկաշկանդ մթնոլորտ: Մեծ հոգատարութեամբ էր վերաբերւում ազգային, պատմա-մշակութային արժէքներին, ջանք ու եռանդ չէր խնայում այն կորստից փրկելու եւ դարձնելու հասարակութեան սեփականութիւնը: Բարձր կուլտուրայի եւ լայն մտահորիզոնի տէր անձնաւորութիւն էր, հոգեւորականի լաւագոյն տիպար, նրա հետ իւրաքանչիւր հանդիպում հոգեպէս զօրացնում էր մարդու հոգին եւ հաւատը:

Յայտնի է Սրբազանի մեծ ներդրումը Քրիստոնէութիւնը Հայաստանում Պետական Կրօնի Հռչակման 1700-ամեակին նուիրուած յոբելեանական միջոցառումների ծրագրման ու իրականացման խնդրում: Այդ շարքին պատկանող ծրագրերից մէկը Սրբազանը իրականացրեց 1996թ. Մայիսին Սիւնիքի մարզի Ծաւ գիւղի մերձակայ սոճիների պուրակում: Հաւաքական մկրտութեան ընթացքում աւելի քան 1000 հայազգի զաւակներ դարձան իրենց քրիստոնէական արմատներին: Միջոցառումն անցաւ ջերմ ու տօնական մթնոլորտում, մկրտուողների տարիքը տատանւում էր մանուկներից մինչեւ տարեցները, այդ առումով կազմակերպիչների ուշադրութեանն արժանացան 60 բոլորած ամուսինների մկտութիւնը: Անտեսելով իր առողջական վիճակը՝ Սրբազանը ամբողջ օրը մեծ ոգեւորութեամբ կատարեց արարողութիւնն՝ անձամբ մկրտելով մի քանի տասնեակ անձանց:

Վերջին տարիներին մշտապէս լինելով Հայրենիքում՝ մի առանձնակի սիրով ու գուրգուրանքով նուիրուեց Մուղնիի վանքի Սուրբ Գէորգ եկեղեցու եւ նրա շրջապատի բարենորոգչական աշխատանքներին: Եկեղեցին եւ յարակից կառոյցները ստացան իրենց երբեմնի վեհաշուք տեսքը: Լինելով բնութեան մեծ սիրահար՝ վանքի տարածքում հիմնեց պտղատու այգի եւ շուրջ 4000 բազմերանգ վարդերի ծաղկանոց:

Նա իր հոգեւոր գործունէութեան մէջ մեծ տեղ էր տալիս ուխտագնացութեանը, իր իսկ խօսքերով «ուխտը դաշինք է, երդում, խոստում, յանձնառութիւն, տառապանք է, յաղթանակի եւ նուաճումի ուրախութիւն է»: Աշխատում էր վերականգնել ուխտագնացութեան աւանդոյթները, գտնելով, որ այն իր մէջ ունի մեծ ներուժ մեր հաւատքի վերայայտնաբերման, ամրապնդման, ինչպէս նաեւ ազգի համախմբման գործում:

Սրբազանը մեծ սէր եւ համակրանք ունէր դէպի հայ երգն ու երաժշտութիւնը: Յիշում եմ՝ 2001թ. Յունուարն էր, երբ մի առիթով նա իրեն յատուկ յուզիչ խօսքով եւ ոգեւորութեամբ պատմում էր իր մի նոր մտայղացման վերաբերեալ՝ կազմակերպել համերգաշար, որի ընթացքում բացառապէս պէտք է

կատարուէին գեղջկական, քաղաքային հոգեւոր, գուսանական-աշուղական երգեր եւ միջնադարեան տաղեր:

2001թ. Մարտ-Ապրիլ ամիսներին Երեւանում տեղի ունեցաւ համերգաշար «Մեր Հին Երգերը» խորագրով հայ ճանաչուած երգիչների մասնակցութեամբ: Համերգաշարը ամբողջացաւ «Մեր Հին Երգերը» ժողովածուի հրատարակութեամբ:

Նա այլեւս մեզ հետ չէ, մխիթարուենք յուշերով եւ թողածով:

Մեր կարծիքով Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանին իրաւամբ կարելի է դասել Հայ ազգի հոգեւոր վերածննդի նուիրեալների շարքին:

Սերգէյ Յարութիւնեան
«Մեծն Ներսէս» ԲՀԿ տնօրէն

Հային Հայ Դարձնելու Առաքելութիւնը

Այս ի՞նչ արեցիք, Սրբազան՝ գրասեղանին վրայ անաւարտ մնացին:

Հայաստանում Քրիստոնէութիւնը Պետական Կրօն Հռչակելու 1700-ամեակի տօնակատարութեան յիրաւի պատմական միջոցառումների քառամեայ տարեգրութիւնը, որոնց մեծ մասը Դուք էիք նախաձեռնել ու իրագործել թէ՛ որպէս վարիչ-տնօրէն եւ թէ՛ հետագայում՝ պաշտօնից հրաժարուելուց յետոյ: Յաճախ՝ մեն մենակ: Դուք ինչ-որ բան կանխազգում էիք, որ անընդհատ յորդորում էիք ինձ.

Գրիգոր շատ ուշացուցինք, ա՛լ վերջացուր:

Միայն այդ գի՞րքն է: Հապա «Արեւմտահայաստան» մատենաշարը, հայ զինուորների մկրտութեան արարողութիւնները Ձեր այնքան սիրած Մուղնու վանքում:

Ես յաճախ եմ մտորել, թէ ինչո՞ւ էիք այդքան բազմաբնոյթ, բազմարդիւն գործունէութիւն ծաւալում ու եկել եմ այն համոզման, որ Ձեր բուն առաքելութիւնը հային հայ դարձնելն է եղել: Այդ նպատակով ուխտագնացութիւններ էիք կազմակերպում Արեւմտահայաստան, Վան-Վասպուրականին, Մշոյ Սուրբ Կարապետին, Վարդանանց քաջամարտիկներին նուիրուած տօնահանդէսներ էիք նախաձեռնում, նիւթապէս, բարոյապէս սատարում էիք զոհուած ազատամարտիկների ընտանիքներին, երիտասարդ գրողներին, վաստակաշատ գիտնականներին՝ ո՞ր մէկը թուեմ:

Առաջինը Դուք Հայաստանում հրապարակային գրքահանդէս իրագործեցիք, ամուսնացող որբերին առանձնատուն յատկացնելու հեռատեսութիւնը հանդէս բերեցիք, հրատարակեցիք, տարածեցիք Նարեկացու

Մատեանի գրաբար ու աշխարհաբար տարբերակները, Խորենացու «Հայոց Պատմութիւնը», հայագիտական, ազգագրական, պատմագիտական գրքեր, որոնց ցանկը հարիւրների է հասնում:

Դուք աննկատ չթողեցիք անգամ իմ նորածին թոռանը, քառասուներորդ օրը լրանալու առիթով անձամբ տուն եկաք, կրօնական այնքա՜ն խորհրդանշական ծէս կատարեցիք: Հրաժեշտ տալուց առաջ էլ չմոռացաք զգուշացնել.

- Կնունքը շատ մի ուշացնէք:

Այդքան զբաղումներ, աշխարհով մէկ սփռուած գործեր, բայց ամեն անգամ հանդիպելիս չէիք մոռանում հարցնել.

- Թոռնիկիդ ե՞րբ պիտի կնքենք...

Ուզում էիք ասել, ե՞րբ պիտի հայ քրիստոնեայ օծենք:

Իմ միակ մխիթարութիւնը այս ծանր պահին այն է, Սրբազան, որ ես բախտ ունեցայ խմբագրելու «Պահն ու Յաւերժութիւնը» գիրքը, որը իւրովի է ամփոփում Ձեր 60 տարիների կեանքն ու հոգեւորականի, մտաւորականի, բարեսէրի, բարերարի բազմաբեղուն գործունէութիւնը:

Դուք իմ թոռնիկին դեռ կը հասցնէք հայ օծել: Հէնց միայն այսքանով: Ինչպէս հայ ժողովրդի գալիք բազում սերունդների:

Գրիգոր Ջանիկեան
Գրող, խմբագիր

Նրա Վերջալոյսի Մէջ Անմահութիւն Ու Կեանք Կայ

Ճանչնանք հայրենին: Ճանաչումի և ինքնագիտակցութեան մեր ճիգին մէջ մեր բոլորին նշանաբանը ըլլայ դէպի երկիր, դէպի հող....

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան

Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեանի յանկարծակի մահով ընդհատուեց այն նուիրական հոգեւոր կապը, որ ստեղծուել էր հայաստանաբնակ մտաւորականութեան ու իր ուխտին հաւատարիմ հոգեւորականի միջեւ: Նրա աշխոյժ գործունէութեան շնորհիւ նոր շունչ է առնում նորանկախ Հայաստանի գիտական ու մշակութային կեանքը: Սրբազան հօր ջանքերով կազմակերպւում են բազմաթիւ գիտաժողովներ, հանդիսաւոր արարողութիւններ, մշակութային

երեկոներ, հանդիպումներ, համերգներ, թատերական ներկայացումներ, գրքերի շնորհանդէսներ, որոնց երջանիկ մասնակիցը լինելու բարեբախտութիւնն եմ ունեցել նաեւ ես: Նա գրքի ու գրչի մարդկանց արժէքը հասկացող յուսալի բարեկամն էր, նրանց ստեղծագործական միտքը կեանքի կոչողը, գիտաժողովների ու արժէքաւոր հրատարակութիւնների մեկենաս աջակիցը: Նրա հետ իւրաքանչիւր շփում կեանքի ու գիտելիքի դաս էր:

Երկար խօսել չէր սիրում, որովհետեւ գործի մարդ էր: Ձեռագիրը բաւականին անընթեռնելի էր, որովհետեւ շատ յաճախ գրում էր ուղղակի ընթացքի մէջ՝ աւտոմեքենայի, ինքնաթիռի, նոյնիսկ քայլելիս գրառումներ էր կատարում:

* * *

Անուանի երաժշտագէտ Ցիցիլիա Բրուտեանը 1995 թ. ձմռան մի ցուրտ օր երջանկութիւնից փայլող աչքերով ինձ յայտնեց, որ իր գիրքը տպագրելու համար հովանաւոր է գտել: Այդ թուերին գրքի ու հրատարակչական գործի մասին քչերն էին մտածում: Կային առաւել մտահոգիչ կենսական հարցեր:

Ամերիկահայ բարձրաստիճան մի հոգեւորական՝ լսելով Ցիցիլիա Բրուտեանի խնդրանքը՝ անմիջապէս ընդառաջել է: Երկար տարիների իր աշխատանքը վերջապէս տպագրուած տեսնելու հնարաւորութիւնից անսահման երջանիկ տիկին Ցիցիլիան յայտնեց հոգեւորականի անունը: Ի տրիտուր այդ մեծահոգութեան՝ տիկինը կամեցաւ իր գիրքը՝ «Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները» լոյս ընծայել դասական ուղղագրութեամբ: Այդ հարցում դիմեց իմ օգնութեանը:

Գրքի անուանաթերթի վրայ առաջին անգամ աւանդական ուղղագրութեան վերածեցի ինձ անծանօթ հոգեւորականի անունը, անուն, որ յետոյ շատ սիրելի ու հարազատ պիտի դառնար նրան ի մօտոյ ճանաչող իւրաքանչիւր անձի համար:

* * *

Հայաստան տեղափոխուելու առաջին իսկ օրերից Մեսրոպ Սրբազանն սկսում է գրահրատարակչական գործընկերներ որոնել: Մի օր Լեզուի Ինստիտուտում ինձ ասացին, որ բարձրաստիճան մի հոգեւորական հարցում է արել դասական ուղղագրութիւն իմացողի մասին, եւ մեր ինստիտուտի աշխատողները տուել են իմ անունը: Ես այդ ժամանակ աշխատում էի նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ուստի Մեսրոպ Սրբազանը շատ հեշտութեամբ գտել էր ինձ:

Առաջին հանդիպմանը իմ ուշադրութիւնը գրաւեց նրա մեղմ ձայնը: Պարթեւահասակ, բարեկիրթ այդ անձնաւորութիւնը հանդարտ ու ցածրիկ ձայն ունէր, համարեա շշուկով էր խօսում:

Այդ օրուանից սկսուեց մեր համատեղ աշխատանքը:

* * *

Սրբազանն այդ տարիներին Վեհարանի երկրորդ յարկում աշխատասենեակ ունէր: Այդտեղ ես առաջին անգամ տեսայ Սրբազան Հօր գրած գրքերը՝ ամերիկեան շքեղ հրատարակութիւններ, որոնք ես նուէր ստացայ Սրբազանից: Նրա կրօնաեկեղեցական երկերը, բանասիրական ուսումնասիրութիւնները, քարոզխօսութիւնները, ուղեգրութիւնները, ճանապարհորդական նօթերն ու յուշագրութիւնները ինձ պատմեցին Սրբազանի անցած ուղու մանրամասները՝ մանկութիւնից մինչև 1700-ամեակի տօնակատարութիւնների գրասենեակի վարիչ-քարտուղար:

Սրբազան Հօր հրատարակած եւ խմբագրած բազմաթիւ հատորները, տասնեակ հայ եւ օտարալեզու յօդուածները շատ բան պատմեցին նրա մասին: Այդ ամենի մասին երբեք նրանից չէիր լսի, որովհետեւ նա պատկանում էր մարդկային այն որակին, որը շատ է աշխատում եւ ընաւ ժամանակ եւ անհրաժեշտութիւն չի գտնում իր անելիքը ներկայացնելու կամ դրա մասին խօսելու: Նրա միտքը մշտապէս զբաղուած էր անընդմէջ ծրագրերով եւ դիմացինին համակող ոգեւորութեամբ:

* * *

Երբ Քեսաբում յուշեր էի հաւաքում երջանկայիշատակ Գարեգին Առաջինի մասին, գրեթէ բոլորը Վեհափառի եւ Մեսրոպ Սրբազանի անունները միասին էին տալիս եւ հիացմունքով ու կարօտով արտայայտւում իրենց շատ հարազատ հոգեւոր հայրերի մասին: Մի անգամ, երբ մի գալատուրանցի իմացաւ, որ Հայաստանից եմ եւ Մայր Աթոռում եմ աշխատում, միանգամից պայծառացաւ ու հարցրեց.

-Մեր Հրայրին կը տեսնա՞ս: Վարժարանի ամենէն ուշիմ և ամենէն սիրուած սանն էր: Ամէն առտու հետս պարտէզը ջրելու կու գար: Ըսէ՛, որ Պիքֆայայի այգեպանը միշտ կարօտով կը յիշէ անոր եւ բարեւ կ՚ընէ:

Ապա Պիքֆայայի նախկին այգեպանը սկսեց ոգեւորութեամբ պատմել վարժարանի սաների, յատկապէս իր համեստութեամբ ու օրինապահութեամբ աչքի ընկնող տղայի՝ Հրայր Աշճեանի մասին:

* * *

Պատրաստակամ ընդառաջող էր: Նորաբանութիւնների բառարան կազմելու համար կարդացել էի Գարեգին Առաջինի բոլոր տպագիր գործերը: Հարցրեց, թէ ծանօթ եմ «Հայ եկեղեցու աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու» վարդապետական թեզին: Ասացի՝ ոչ: Ասաց, որ տպագրուած չէ, կը բերի, որպէսզի կարդամ: Ձեռագրերը Հայաստանում չէին: Մի երկու ամիս անց ինքը Ամերիկայից բերեց: Միակ օրինակն էր՝ մեքենագրուած Վեհափառի կողմից:

* * *

Երբ իմացաւ, որ Գարեգին Առաջինի գրաւոր խօսքն եմ ուսումնասիրում, ուրախացաւ, նայեց կարդացածս գրքերի ցանկին, համալրեց, խորհուրդներ տուեց, թէ ինչ ամսագրեր կարդամ եւ որտեղ որոնեմ Վեհափառի գրածները: Առաջարկեց իր մօտ գտնուող անտիպ նիւթերը:

- Ո՞վ պիտի տպագրէ, մէկու մը հետ խօսեցա՞ծ ես այդ մասին:

Ասացի, որ Յովնան Սրբազանն է խոստացել լուծել տպագրութեան խնդիրը: Ուրախացաւ, որ աշխատութիւնս յուսալի ձեռքերում է:

-Ա՛հ, ատիկա լաւ է, Յովնանը յոյժ հետեւողական է:

* * *

Նրա մեղմ ու հանդարտ ձայնը լսողին կը թուար, թէ ընդհանրապէս ընդունակ չէ գայրանալու: Բայց մի անգամ գայրացաւ վրաս: Հրատարակիչներից մէկը, իմանալով, որ ինձ մօտ է Վեհափառի վարդապետականը եւ էլի մի երկու անտիպ գործ, ցանկութիւն յայտնեց հրատարակելու: Ես ասացի, որ պիտի այդ մասին խօսեմ Մեսրոպ Սրբազանի հետ: Դեռ խօսքս չէի աւարտել, Սրբազանը գայրացած ընդհատեց.

-Ի՞նչ կը խօսիս, ատ ձեռագիրները միայն քեզի վստահած եմ: Չեմ ուզեր, որ մէկու մը ձեռքը իյնայ:

Զայրանալիս անգամ ձայնը չբարձրացրեց:

* * *

Վեհափառի ձեռագրերը ընթերցելիս, երբ դժուարութիւնների էի հանդիպում, վերծանելու մասերը միայն Սրբազան Հօրն էի վստահում: Ուղղակի ձեռագրին նայելով, առանց կարդալու ասում էր, թէ ինչ է գրուած: Երբ Սրբազանը արտասահման էր գնում, եւ անհրաժեշտ էր լինում ձեռագրի անհասկանալի բառերը մէկ ուրիշին կարդալ տալ, ոչ մէկը չէր կարողանում վերծանել: Ես ի վերջոյ յանգում էի այն մտքին, որ իմաստ չունի այդ հարցում Սրբազանից բացի որեւէ մէկին դիմել:

* * *

Աստուածաշնչական Հայաստան գիտաժողովի դրոյթներն էին հաւաքում: Ես ներկայացրի «Մաշտոցեան ոգին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի գրական երկերում» զեկուցման դրոյթս: Վեհափառը այդ օրերին ծանր վիճակում էր, եւ օրըստօրէ առողջութիւնը վատթարանում էր: Դրոյթները տպագրելուց մի քանի օր առաջ Սրբազանն ինձ ասաց, որ յարմար չի նկատում իմ նիւթը զետեղելը:

- Հայկանո՛ւշ, եկուր հետաձգենք զեկուցումդ: Կը վախնամ, որ Վեհափառի մասին գովեստի խօսքերը ճիշդ չընկալուին ու հաճոյախօսութիւն նկատուին:

Ես լուռ համաձայնեցի:

Վեհափառի մահից յետոյ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրատանը գումարուեց Գարեգին Առաջինի յիշատակին նուիրուած գիտական նստաշրջան: Իմ զեկուցումը Սրբազանը զետեղել էր լիագումար նիստում:

* * *

Նրա մօտ գերագոյն նուիրումն ու հաւատարմութիւնը հանգուցեալ Վեհափառի հանդէպ խիստ ընդգծուած էր:

Ընդհանրապէս երբեմն Վեհափառի մասին մտորելու առիթներ էին լինում: Մի անգամ սրտի ցաւով ասաց, թէ ինքն այդպէս էլ չհասկացաւ, թէ ինչու Վեհափառի վախճանը այդքան ցաւալի եղաւ: Ինչո՞ւ Աստուած այդպիսի վճիռ կայացրեց:

Ես անհամեստութիւն ունեցայ ասելու, որ ես գիտեմ, թէ ինչու: Իրեն տանջող հարցի պատասխանը միանգամից գտած լինելու յոյսով՝ անմիջապէս հարցրեց: Ինչո՞ւ:

-Որովհետև շատերը իսկական արժէքը գնահատել չկարողացան... Ու Տէրը չկամեցաւ, որ նա խօսի մեզ հետ...

* * *

Զնայած Վեհափառի մահը անսպասելի չէր, Սրբազանը շատ ծանր տարաւ այն:

-Ես նորէն որբացայ,- ասաց նա մի օր:

Ես անխօս նայեցի Սրբազանին: Մենք սրտակցօրէն զգում էինք այդ վշտի խորութիւնը:

* * *

Ներողամիտ էր ինչ-ինչ պատճառներով սպրդած սխալների նկատմամբ: Մի անգամ պայմանաւորուել էինք, որ գիրքը տպարան գնալուց առաջ ես անպայման պիտի կարդամ, որպէսզի յանկարծ սխալներ չլինեն: Շտապել էին եւ գիրքը առանց վերանայելու տարել տպագրութեան: Գրքում սխալներ կային: Ես յուզուած էի, եւ սկսեցի ափսոսալ, որ սխալներով է լոյս տեսել: Հանդարտ ասաց.

-Հոգ չէ, եղածը եղած է: Յաջորդ անգամ աւելի ուշադիր կ՚ըլլանք:

* * *

Երեխայ շատ էր սիրում: Անպայման պիտի շոյէր նրանց, ում երեխան ուզում է լինէր: Մի անգամ Թոռանս՝ Դաւթին՝ շոյեց եւ ապա գորովանքով ասաց.

-Պաչիկ մը ըրէ ինծի:

Թոռնիկս համբուրեց Սրբազանին:

-Ա՜խ, աս ի՜նչ անուշ էր: Դուն ալ ի՜նչ անուշիկ ես:

Սրբազանի հարցերին Դաւիթը, որ ընդամէնը 7 տարեկան էր, պատասխանեց գլխահակ եւ խիստ ամաչելով:

Սրբազանը մտքով սլացաւ Բէյրութի Սուրբ Նշան եկեղեցու ազգային վարժարան.

- Ես ալ ասանկ մանչ մըն էին, ու ասոր պէս կը կարկամէի, կը չիկնէի:

* * *

Սիրում էր հայրենի բնութիւնը ու այդ բնութեան մարդկանց՝ ինչպիսին էլ որ նրանք լինէին:

Մի անգամ Վեհափառի ազգականների՝ Տաթեւ Սրբազանի, տիկին Մարիի, Ռոզիկի հետ Սաղմոսավանքում էինք: Մեսրոպ Սրբազանը, հայեացքը հարազատ եզերքներին՝ թիկն էր տուել ժայռաբեկորին ու ըմբոշխնում էր ծաղիկներով լեցուն ձորի բոյրը:

Յետոյ յիշեց իր մեղուներին. կարօտել էր նրանց բզզոցին, ու այդ իմաստուն թեւաւորների չափազանց տրամաբանուած առօրեային:

Կեսօրից բաւական անց, երբ հովն ընկաւ, գնացինք փեթակատեղի: Ծաղկունեաց լեռների փէշին՝ Թթու ջուր եւ Եղիպատրուշ գիւղերի միջեւ ընկած հանդամասում կանոնաւոր շարքերով դասաւորուած էին մեղուների փեթակները:

Սրբազանը գլխին է անցկացնում պաշտպանական ցանցն ու անցնում գործի: Մենք զարմանքով նայում ենք փեթակների կափարիչները մէկ-մէկ բացող Սրբազանին, որ հանում է մեղրով ծանրաբեռնուած շրջանակները ու հմուտ մեղուաբոյծի գոհունակութեամբ զննում մեղրամոմով զմռսուած իւրաքանչիւր մեղրափոսիկ: Սրբազանը ժպտում է, կատակում իրեն շրջապատած գիւղական երեխաների հետ, որ որտեղից որտեղ իմացել են Սրբազան Հօր գալստեան մասին ու շտապել նրան օգնելու: Երեխաներից մէկը գործի է դնում ծխոցը՝ մեղուաբոյծ-հոգեւորականին խայթոցներից պաշտպանելու համար:

Դաշտը ծնկէիծունկ ծաղիկ է, եւ ծխի վարագոյրի միջից, ասես խնկավարագոյրի ու խնկաբոյրի մէջ փեթակից փեթակ է անցնում Սրբազան հայրը:

Յետոյ գիւղական մի կին նոր թխած լաւաշ ու պանիր է բերում: Սրբազանը մի բրդուճ է անում եւ սկսում է ուտել.

- Կեանքիս մէջ դեռ ասանկ համով բան մը կերած չեմ:

* * *

Անիի Մայր Տաճարի 1000-ամեակին նուիրուած գիտաժողովից յետոյ Սրբազանը մտաւորականների մի մեծ խմբի առաջնորդում է Անիի հանդիպակաց դարաւանդից տեսնելու երբեմնի փառապանծ մայրաքաղաքը: Ամառային պարզ ու

հաճելի օդի մէջ տեսանելի են իւրաքանչիւր քար ու թուփ: Անիի կողմից լսւում են թուրքական մուղամի ճնշող հնչիւններ: Թերեւս ինչ-որ մէկը դիտմամբ չափից աւելի է բարձրացրել երաժշտութեան ձայնը՝ լուռ հոգեմարտում յաղթանակ տանելու համար: Այդ դառն զգացողութիւնը երկար չի տեւում: Մէկ այս մէկ այն խմբով շրջապատուած Սրբազանը աշխոյժ երիտասարդական քայլքով մօտենում է մեզ եւ յուսադրող ձայնով ասում.

- Է՛, ինչո՞ւ քիթերնիդ կախեցիք: Զգօն պիտի ըլլանք, որպէսզի օր մը Աստուծոյ կամօք ձորի այն կողմը հաւաքուինք:

Քիչ յետոյ որտեղից որտեղ յայտնւում են Թալինից ժամանած ազգագրական երգ ու պարի խմբերը, ու Սասունի երգերի, պարեղանակների, «Եարխուշտայի» դոփիւնի մէջ խեղդւում են թուրքական երգի ելեւէջները:

Սրբազանը բոլորին քաջալերում է միանալ շուրջպարին:

Կեանքի իւրաքանչիւր պահը իմաստաւորելու, հետաքրքրութեամբ ու ոգեւորիչ գաղափարով լցնելու ունակութիւն ունէր Սրբազանը: Նրա առաջարկով գիտաժողովի ազդագրերից մէկի հակառակ երեսին շատերս գրառեցինք մեր այդ պահի ցանկութիւնը:

Յետոյ Սրբազանը բանակցում է սահմանապահների հետ՝ Ախուրեանի ալիքներին ուսամբարձ մի ծաղկեպսակ ուղարկելու կորուսեալ երկրի նահատակներին ի յիշատակ:

* * *

Հոգելոյս Մեսրոպ Սրբազանը որպէս թեթեւոտն մի պատանի անխոնջ քայլեց Հայաստան աշխարհի բոլոր նուիրական վայրերով, ծունկի իջաւ չէն ու աւեր եկեղեցիների գաւիթներում, երկիւղածօրէն համբուրեց դրանց հայադրոշմ պատերը, սրտի ցաւով անցաւ հօրենական Ատանայով ու մօրենական Բալուով, եւ որպէս բնաւեր ու աստանդական հայի զաւակ, հանգաւ օտարութեան մէջ՝ իր լոյսը թողնելով աշխարհին ու իր ժողովրդին:

* * *

«Հիմա ես ուրախ եմ, որ դուն ինծի հետ ես, եւ միասին «Յետադարձ հայեացք» մը կը նետենք իմ կեանքի վրայ, որուն հայելին է այս գիրքը»,- լսւում է Մեսրոպ Սրբազանի ձայնը:

Հայկանուշ Մեսրոպեան
ԳԱԱ լեզուաբանութեան ինստիտուտի
գիտաշխատող

«Ու՞ր ես, Սրբազան»

(Հոգելոյս Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի խնկելի յիշատակին)

Երբ հնչում էր հեռախօսազանգդ եւ լսափողից ձայնդ էր լսւում, առաջին խօսքս հետեւեալն էր. «Ու՞ր ես, Սրբազան»: Հարցնում էի, որովհետեւ համոզուած էի, որ Հայաստանի որեւէ շրջանում ես, որեւէ վանքում, մանկատանը, բանտում, ծերանոցում, նիւթական կամ հոգեւոր օգնութեան կարօտ մի ընտանիքում: Գիտէի, որ կեանքդ հայրենիքինդ է, ժողովրդինդ: Սիրում էիր լինել հայ ընտանիքներում, ցաւով էիր լսում տարեցների զրոյցները կորցրած երկրի, հողի, ջրի, իրենց չիրականացած լուսէ երազների մասին, հրճւում էիր երիտասարդների՝ հայրենի հողում ինքնահաստատուելու ձգտումը տեսնելով, նրանց մանուկների ճիչով, փորձում էիր սատարել բոլորին՝ ինչպէս կարող էիր: Անդիմադրելի մի ուժ քեզ տանում էր այնտեղ, ուր կարիքն էր, խեղճութիւնը, թշուառութիւնը: Ասում էիր, որ կը կամենաս օգնել բոլորին, որպէսզի Հայաստանում խեղճացած մանուկ չտեսնես: Միշտ վկայակոչում էիր աստուածաշնչեան սաղմոսը. «Տէրն եղաւ տնանկի ապաւէնը եւ նեղութեան ժամանակ օգնականը» ու հոգեւորականիդ եւ Տիրոջ ծառայիդ առաքելութեան նպատակն էիր համարում նրան հետեւելը:

Այսօր Հայաստանում քեզ փնտրում են շատերը, որոնց ապրելու եւ պայքարելու կամք էիր ներշնչել՝ հայրական խօսքով ու խրատով, սիրել էիր, գուրգուրել, գթացել, օգնել, սատարել: Նրանք փնտրում են քեզ ու չեն հաւատում, որ այլեւս չես վերադառնալու, չեն հաշտւում անդառնալի կորստիդ հետ: Այսօր շատերն են հարցնում. «Ու՞ր ես, Սրբազան»: Նրանցից մէկն էլ ես եմ: Զէ՞ որ դու էիր, որ ինձ կեանք վերադարձրիր, երբ երկու տարի առաջ, կորցնելով իմ ամենաթանկ մարդուն՝ հօրս, յուսահատութիւնից թեւաթափ, ցաւից ու դառնութիւնից կորացած ոչ ոքի ու ոչինչ չէի կարողանում տեսնել: Ամեն ինչ մութ էր, մռայլ, գորշ ու դաժանօրէն կորած:

Բառերդ այսօր էլ զնգում են ականջիս, եւ ես կրկին ցանկանում եմ կենդանի լսել դրանք ու փնտրում եմ քեզ ամենուր. «Ու՞ր ես, Սրբազան»: Հպարտ էի, որ աշխատում էի քեզ հետ, որ միշտ առաջին ընթերցողն էի յօդուածներիդ ու գրութիւններիդ: Դրանք բոլորն էլ փոքրիկ պատմութիւններ էին, որոնց մէջ այնքան զգացմունք կար: Դրանք անկեղծ էին ու շատ մտերմիկ: Ես առաջին

ոգեւորուողն էի ու հիացողը քո վճռականութեամբ, որով փորձում էիր հրատարակելով ու վերահրատարակելով մեզ վերադարձնել Հայ Եկեղեցու, մշակոյթի ու գրականութեան մասունքուած նշխարները, հոգեւոր բացառիկ արժէքները, որոնք այնքան-այնքա՜ն անհրաժեշտ են այսօր բոլորիս՝ դժուարին այս ժամանակներում:

Դու յաւերժական ուխտաւորը մնացիր պատմական հայրենիքիդ: Ուխտի քո ճամփան ձգուեց Էջմիածնից մինչեւ Արածանի, Աղթամար, Մուշ, Էրզրում, Կարս, Անի...Ջրօրհնէք Արածանիի ափին, պսակադրութիւն Աղթամարի Սուրբ Խաչ վանքում, հոգեւոր արարողութիւններ Վարագայ «Սուրբ Աստուածածին» եկեղեցում, դժուարին վերելք Մշոյ Առաքելոց վանք, Արտագերս ամրոց: Հոգեւորականի անցած փառահեղ ճանապարհ...

Քո վառած խունկը կենդանացրեց ու կրկին ապրեցրեց քարերը որբացած վանքերի, նախնեացդ ոստաններում՝ Շուշանց, Գէլիգուզան, Դատվան, Տէկոր, Խծկոնք, Մրէն, հողը ցնծաց ուրախութիւնից՝ ուխտաւոր իր զաւակի կարօտի վճիտ արցունքը խառնուեց իրեն, նորից կենդանացան անցեալի թանկ յիշատակները: Այո՛, շատ տարիների հեռաւորութիւնից անգամ հողը ջերմօրէն գրկեց հարազատ զաւակին, նա սպասում էր քեզ: Ուխտիդ ճամփէքին ուրախութիւնդ ու ցաւդ խառնուել էին իրար: Ուրախ էիր ուխտիդ խորհրդով, տխուր, որովհետեւ աւերուած էին երբեմնի շէն ու գեղեցիկ հայոց բնակավայրերը, սրբավայրերն ու վանքերը, այնտեղ մնացած հատուկենտ հայերի սերունդները թրքացած էին կամ քրդացած: Այդ ամենից դառնացած փնտրում էիր հայոց հերոսական ինքնապաշտպանութեան նուիրեալների ոգիները, փորձում հակակշռել ցաւիդ...Իսկ մօրդ գիւղի սառնորակ աղբիւրը զովացնում էր պապակ հոգիդ:

Հայոց երգ ու պարից արթնացած, ուխտաւորիդ խունկ ու աղօթքից սրբացած թանկ յիշատակներն էլ են քեզ կարօտելու ու փնտրելու, նրանք էլ են սպասելու վերադարձիդ՝ միշտ հարցնելով. «Ու՞ր ես, Սրբազան»:

Պատմական Հայաստանից վերադարձիդ խիստ տպաւորուած էիր, յախուռն ու տարաբնոյթ յոյզերն ու ապրումները երկա՜ր էին ալեկոծում ազնիւ հոգիդ, իսկ ես՝ միամիտս, տագնապով հարցնում էի. «Սրբազան, իսկ եթէ առողջական խնդիր ունենաս հեռաւոր, այսօր յաճախ անմարդաբնակ այդ վայրերում, վանքերը բարձրանալու ճանապարհին, ի՞նչ պիտի անես»: Պատասխանը սպասելի էր. «Երջանիկ պիտի լինեմ այնտեղ մահկանացուս կնքելով»: Խոստովանում եմ, որ, լսելով պատասխանդ, զղջում էի հարցիս համար:

Դու Բարձրեալից անանձնական սէր ու ուրախութիւն էիր հայցում, որովհետեւ շատ էիր սիրում մարդկանց եւ ինչպէս վաղամեռիկ բանաստեղծը, ցանկանում էիր ժողվել հոգուդ մէջ «ծերերուն, կոյսին, մանկան, պարզ մարդերուն,

գեղջուկներուն, բանուորին... ամենուն համայնական»: Եւ դու կարողացար այդ անել: Քո մեծ հոգում տեղ կար բոլորի համար: Այսօր նրանք էլ որբացած քեզ են որոնում, եւ նոյն հարցն են շշնջում ամենուր. «Ու՞ր ես, Սրբազան»: Ինչպէս կարող է չփնտրել քեզ արծուաշէնցի պատանին, որ արցախեան պատերազմի ժամանակ հաշմանդամ էր դարձել՝ կուրացել էին աչքերը, աղաւաղուել էր դէմքը: Ես գիտեմ, թէ ի՜նչ ջանքերի գնով կարողացար նրան Ամերիկա տանել, իրականացնել վիրահատութիւնները ու ամեն հնարաւորն ու անհնարն արեցիր, որ քիչ թէ շատ վերականգնուած տղային կրկին հայրենիք բերես: Եւ մի օր էլ ուրախ-ուրախ ցոյց տուեցիր լուսանկարները... երիտասարդին պսակել էիր եւ երջանիկ էիր, որ մի հայ մանուկ էլ կը ծնուի:

Իսկ Էջմիածնում ապրող փոքրիկ Գրիգորը, որ հինգ տարեկանում ստացած ահաւոր այրուածքներից մի կերպ էր փրկուել, արդէն եօթ տարեկանում լուրջ վիրահատութիւնների կարիք ունէր, որպէսզի կարողանար ինքնուրոյն սնուել, ուղիղ քայլել, դպրոց գնալ: Դու նաեւ նրա կողքին էիր, եւ փոքրիկն արդէն առողջ է, սովորում է երրորդ դասարանում: Նրանց նման քանի՜ քանիսը:

Վերջին տարիների ընթացքում հասցրեցի լաւ ճանաչել քեզ, ականատես եղայ քո՝ հայ հոգեւորականիդ հանդէպ ծաւալուած համաժողովրդական սիրուն, յարգանքին, մեծարանքին, ոչ միայն հայրենիքում, այլ նաեւ Սփիւռքի գաղթօջախներում, ուր երկար տարիներ թեմակալ առաջնորդի պաշտօնն ես վարել: Ինչպէ՜ս մոռանամ այն օրը, երբ հանդիպեցի քեզ մայրավանքի բակում՝ լուռ ու յուզուած քայլելիս: Դառնացել էիր առօրեայ կեանքում առկայ մարդկային չարութեան փաստից, անտարբերութիւնից: Եւ յանկարծ քեզ մոտեցաւ ուխտաւորների մի խումբ Նոր Ջուղայից, շրջապատեց իր նախկին առաջնորդին, իսկական հոգեւորականին, եւ մի անգամ եւս գնահատանքի ու սիրոյ խօսքեր ուղղուեցին քեզ: Տրամադրութիւնդ փոխուեց մէկէն: Մարդկային չարութեանը հակադրուեց գեղեցիկը, բարին, եւ դրա համար դու երջանիկ էիր...

Այո, «Քո անձը օրհնուեց կենդանութեանդ ժամանակ», - ինչպէս կ՚ասէր սաղմոսերգուն:

Այսօր դու մեզ հետ չես լոկ ֆիզիկապէս, սակայն մեզ հետ են կարօտներդ, սէրերդ, յուշերդ, իրականացած եւ չիրականացած երազներդ, խրատներդ, յորդորներդ, հոգեւորականի ու մարդու զարմանալի քո կերպարը: Յախուռն ու անսանձ տարերքդ, որ բարիք էր միայն երկնում, մերն է՝ բոլոր նրանցը, ովքեր լաւ էին ճանաչում քեզ, ում թանկ է քո յիշատակը: Իսկ քո թողած հետքը պատմութեանն է, որ արժեւորելու է այն սերունդների համար:

Քեզ են ուղղուած կարծես հանճարեղ Չարենցի տողերը.

Բայց եթէ միեւնոյնն է վախճանը բոլորիս գերեզմանից անդին,
Եթէ նոյնն է մեր բախտը հեռանալուց յետոյ, -
Ապա տարբեր է յուշը, յիշատակը, այն զրոյցը անդին,
Որ մնում է սրտերում մարդկանց եւ լցնում է սրտերը կարօտով...

Ֆլորա Կաբաղեան
Մայր Աթոռ Ս. Էջմիածին
խմբագիր

Այնպէս Ապրել, Որ Արարքները Յաւիտենական Արժէք Ունենան

Սրբազան... հարազատաբար, գուրգուրանքով եւ չհասկանալով անգամ բառի խորհուրդը դիմում էի նրան, երբ տաս-տասնհինգ տարեկան էի: 80-ականներն էին. Մեսրոպ Սրբազանն իբրեւ մեր ընտանիքի բարեկամ, աւելին՝ ընտանիքի անդամ, յաճախ էր լինում մեր տանը, երբ հիւրաբար Հայաստան էր գալիս:

Այն ժամանակ դժուար թէ կարողանայի գիտակցել կամ պարզապէս գնահատել Սրբազանի շռայլ ու շքեղ ներկայութիւնը:

Տարիներ անց Մեսրոպ Սրբազանը ոչ թէ հիւրաբար, այլ տուն վերադառնալու պէս եկաւ Հայաստան, եւ նրա բարեկամութիւնը, մտերմութիւնը վայելելու երջանկութիւնը շատերը ունեցան: Տարիների ընթացքում Սրբազանը ուղղակի մուտք գործեց շատ-շատերի սրտերն ու նրա թանկ ու ազնուացնող ներկայութիւնը վայելեցին շատերը: Նա նուաճեց հոգեւոր տարածքներ ու հոգեւոր միջավայր ստեղծեց:

«Ես Հայաստան երկրի ուխտաւորն եմ». սիրում էր իր մասին ասել Սրբազանը: Ու որքան էլ զարմանալի էր, հայրենիքից հեռու՝ Լիբանանում ծնուած, բայց իր հոգեւոր ու պատմական հայրենիքի ուխտաւորը դարձած Սրբազանը հոգեւորականի, մտաւորականի, գիտնականի ու քաղաքացու իր բացառիկ ու հազուագիւտ տեսակով ճանաչել էր տալիս մեզ, մեր հայրենիքը, մեր տեսակը, մեր արմատները, աւելի լուսաւոր էր դարձնում մեր իրականութիւնը. պարզապէս ցեղաճանաչ էր դարձնում մեզ:

Այնպէս ապրել, որ արարքները յաւիտենական արժէք ունենան. այս խորհրդով ու այս հաւատքով ապրող Սրբազանը անափ սիրոյ, երախտագիտութեան ու ակնածանքի միջավայր էր կերտել: Բայց ցաւալիօրէն մեր բոլորի հաւաքական սէրն ու աղօթքներն անզօր ու անկարող եղան մեր կողքին պահել Մեսրոպ

Սրբազանի ներկայութիւնը: Փոխարէնը մեզանից իւրաքանչիւրն իր մէջ ունի լոյսը, որ վառուել էր նրա կողմից: Ու Մեսրոպ Սրբազանի վառած լոյսի արահետները մեզ տանում են Մուղնի, Կիլիկիա, դարձնում Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ վանքի ուխտաւորը, Ախթամարի տէրը, Սասունի անանց սարերի ու ձորերի սրնգահարը, Մարաթուկի դպիրը, Հայաստան աշխարհի արժանապատիւ քաղաքացին...

Իսկ, որ Մեսրոպ Արք. Աշճեանը շարունակելու է լինել մեզ հետ ու մեր մէջ, վայրկեան անգամ կասկած չունեմ, լինելու է, որովհետեւ անանց են այն բոլոր արժէքներն ու այն բարոյական դաշտը, որոնց խնկարկում էր Սրբազանը:

Լիլիթ Գալստեան
Համազգայինի Հայաստանի Գրասենեակի
տնօրէն

Նա Եկեղեցի էր

Երբ յանձն առայ գրել վսեմաշուք այրի՝ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի մասին, ծանօթ էի այն մեծ գիտնականներին, որոնք տուել էին խօսքի մերօրեայ վարպետները՝ Հրանդ Մաթեւոսեանն ու Ռազմիկ Դաւոյեանը, Սիլվա Կապուտիկեանն ու Ռուբէն Յովսէփեանը, եւ թւում էր, թէ անիմաստ է նրանցից յետոյ որեւէ խօսք ասելը, բայց կեանքիս վերջին հինգ ամիսներին նրա պատկերը մշտապէս աչքիս առաջ է եղել, եւ նրա կերպարը մշտապէս կամք է ներշնչել դժուար այդ պահերին:

Հրայր Դժոխքի պատուին Հրայր անունով մկրտուած երեխան դեռ մանկուց իր հոգում դրախտ է ունեցել, որ մինչեւ իր վերջին օրը ծաղկեցրել, պտղաւորել է ու պտուղները շռայլօրէն բաժանել ուրիշներին: Նա եկեղեցի էր իր հայակերտ ճարտարապետութեամբ՝ սլացիկ հասակ, լայն թիկունք, բարձր ու բաց ճակատ, խոր եւ կարեկից աչքեր:

Քաղքենին ձգտում է մերձ լինել ճանաչուած արուեստագէտին, մտաւորականին, քաղաքական գործչին, դա նրան շուք է տալիս: Մէկ մարդու հետ երազեցի մտերիմ լինել, աւելի յաճախ հանդիպել՝ Մեսրոպ Արքեպիսկոպոսն էր, որովհետեւ առաջին իսկ թռուցիկ հանդիպումից յետոյ ինձ մաքրուած էի զգում, զգում էի ինչ-որ վեհութիւն ու հպարտութիւն, որն, անշուշտ, սեփական արժանիքներով չէր պայմանաւորուած: Ճանաչածս բոլոր մարդկանցից՝ հոգեւորական թէ աշխարհիկ, Սրբազան բառի սուրբ արմատը ամենից շատ նրան էր պատշաճ ու յարիր: Խրիմեան Հայրիկի, Ներսէս Աշտարակեցու կամ մի բանի այլ

մեծանուն հայ մտաւորական հոգեւորականների կերպարն ինձ համար Մեսրոպ Արք. Աշճեանով էր կոնկրետանում:

Կեանքիս վերջին հինգ դժուարին ամիսներին նրա կերպարն ուղեկից եղաւ ինձ, մանաւանդ որ սիրիահայ բժիշկ՝ Հրանտը, իր Աշճեան հազուագիւտ ազգանունով մշտապէս յիշեցնում էր Սրբազանի մասին:

Երբ Վազգէն Առաջին հայրապետից յետոյ Էջմիածնի կաթողիկոսական գահը թափուր էր, ուսուցիչս՝ հայագէտ Արտաշէս Մարտիրոսեանը, գրեց, թէ Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Երկրորդն է մեր ժողովրդի հաւաքական ընկալման մէջ ամենաարժանի յաւակնորդը, եւ ցանկացած այլ ընտրութիւն կը նշանակի Էջմիածնի գահի բռնազաւթում:

Այդպէս 1994 թ. իր ուսուցչի՝ Ամենայն Հայոց Գարեգին Առաջին կաթողիկոսի հետ հայրենիք եկաւ Մեսրոպ Արք. Աշճեանը եւ շուրջ տասը տարի որպէս հոգեւորական, մտաւորական եւ բարերար այնքան բեղուն գործունէութիւն ծաւալեց, այնքան ձեռնահաս եղաւ, որ այսօր, ինքն էլ չկայ, որբութեան զգացումը շատերին է տիրել:

Հետաքրքիր է, որ նա երբեք չընկալուեց որպէս կաթողիկոսութեան թեկնածու, եւ պատճառը ոչ միայն իր անյաւակնոտ էութիւնն էր, եւ ոչ էլ այն ցաւալի իրողութիւնը, որ հոգեւոր հովուի եւ Աստծու ծառայի կոչումը մեր հաւաքական գիտակցութեան մէջ արդէն դարձել է պարզապէս բարձրաստիճան պաշտօնեայի նկարագիր:

Նա չընկալուեց որպէս եկեղեցու ղեկավար այն պարզ պատճառով, որ ինքն էր եկեղեցին:

Հաստատուելով Հայաստանում, Մեսրոպ Արք. Աշճեանը մի նոր Գլաձոր դարձաւ, կամ մի նոր Տաթեւ, որովհետեւ հիմնադրեց «Մուղնի» հրատարակչութիւնը, կազմակերպեց տասնեակ կարեւորագոյն գիտաժողովներ, հեղինակեց գրքեր, հրատարակեց խիստ արժէքաւոր աշխատութիւններ, իր ամենահաս ձեռքը մեկնեց շատ ստեղծագործների: Նա ուխտի գնաց իր պապերի երկիրը՝ մկրտելով իր ուղեկիցներին Արածանիի ջրերում, սրբագործեց Մշոյ Առաքելոցն ու գտաւ Տրդատայ քարը: Եւ ուխտի մասնակիցները միայն իր ուղեկիցները չեղան, այլ մի ողջ ժողովուրդ:

Աստծոյ խօսքի կարիքն ամենից շատ փորձութեան մէջ յայտնուածն է զգում, եւ Մեսրոպ Սրբազանը մտաւ բանտ ու հիւանդանոց, որբանոց ու ծերանոց: Քանի-քանի բանտարկեալի շուրթերին հայհոյանքի փոխարէն աղօթք դրեց, քանի յուսահատ հիւանդի հոգում հաւատ ու կամք վառեց, քանի որբ ու միայնակի անէծքը բարեմաղթանքի փոխեց: Սա է, մեր կարծիքով, եկեղեցու առաջին առաքելութիւնը, եւ ինքն էր անում, որովհետեւ ինքն էր եկեղեցին:

Բեղուն սերմնացան եղաւ Մեսրոպ Արքեպիսկոպոսը, եւ իր ցանած սերմերից ոչ մի հատիկ քարի վրայ չընկաւ, եւ ոչ մի հատիկ չտարան ագռաւները: Դեռ ծլարձակելու են այդ սերմերը, դեռ կանաչելու է նրա ցանած արտը: Եւ ինչքան տեղին ու մարգարէական են Նոր Ջուղայի թեմից հեռանալու առիթով մի անծանօթ բանաստեղծուհու՝ նրան ձօնուած բանաստեղծութեան տողերը.
Հեռանում ես, բայց չես գնում...

Նրբաշունչ օդի,
մաքուր ջրերի
ու սրբութեան պէս
անհրաժեշտ ես դու
ու պիտի հասնես
ամեն-ամեն տեղ...

Ու խորհուրդներիդ արձագանքները
մենք յետ կը լսենք
ամեն սուրբ սուրբից,
ամեն Հայր մերից:
Հեռանում ես... բայց չես գնում:

Յովհաննէս Երանեան
«Երկիր», 12-18 Դեկտեմբեր 2003թ.

Հայրիկը Մեր Կողքին

Շատերը, վստահաբար, իրենց մենակ են զգալու՝ գրողը, որի գրքերն էին տպագրւում Մեսրոպ Արքեպիսկոպոսի աջակցութեամբ, այն ծնողազուրկները, որոնք ներկայումս տուն ունեն Հայաստանի սահմանամերձ շրջանում, որոնց այնքան գուրգուրում էր Սրբազանը, մուղնեցիները, որոնց գիւղը Մեսրոպ Սրբազանի՝ տարիների քրտնաջան աշխատանքով կեանք ստացաւ, վերաշինուեց եկեղեցով, ակումբով, մանկական երգչախմբով, շատերի համար իրօք ուխտատուն դարձած այգիով, որտեղ սիրում էր նստել: Մենակ զգացին այն մարդիկ, որոնք նրանից ստանում էին մշտական զօրակցութիւն ու հովանաւորութիւն, այն գիտնականները, որոնց համար Սրբազանը վերջին յոյսն էր: Մենակութեան զգացում ունեցան այն կիլիկեցիները, որոնց այցի էր գնացել Սրբազանը, Արեւմտահայաստանի բնակավայրերը, որոնց մասին այնքան գուրգուրանքով էր

խօսում եւ ուխտագնացութեան մանրամասները ներկայացնում ողջ ժողովրդին, ու վերջապէս մենակութիւն ապրեց նրա լոյս ընծայած վերջին հատորը՝ Մայր Տաճարի 1700-ամեակի առիթով պատրաստուած հսկայածաւալ հրատարակութիւնը:

Մենակութեան զգացում ունեցանք նաեւ մենք՝ «Երկիրը», ուր երբեմն այցելում էր Մեսրոպ Սրբազանը՝ խորհրդի, զրոյցի կամ քննարկման:
Այս մենակութիւնը ունի իր պատճառը՝ նա Հայրիկն էր, մերօրեայ Հայրիկը, որն իր նախորդի նման ժողովրդային էր իրապէս, հաւատացեալ էր խորապէս ու տասնամեակներ շարունակ Հայ Առաքելական Եկեղեցու, Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան ծառան անկաշառ: Հայաստանում շատերը նրան սպասում էին, բայց չեն տեսնելու, ու հիմա էլ դեռ սպասում են, ու յոյս ունեն, որ առիթը թէեւ տխուր, բայց Հայաստանում առնուազն հնարաւորութիւն կ՚ունենան այցի գնալու նրա շիրիմին:

«Երկիր» շաբաթաթերթի խմբագրութիւն
5-11 Դեկտեմբեր 2003թ.

Որպէս Պարտատէր Մեկնեցիք, Սրբազա՛ն

- Հակառակ որ մեր տարիքային տարբերութիւնը մեծ չէ, սակայն ձեր անձի մէջ հօրս կերպարը կը տեսնեմ,- մի քանի անգամ կրկնել է Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը:

- Սրբազան, Դուք անհնազանդ զաւակ եք եղել,- կատակում էի ես,- եթէ Ձեր հօրն էլ լսել եք այնպէս, ինչպէս ինձ եք լսում: Կարծիքս հարցնում եք այն ժամանակ, երբ իրողութիւնը կատարուած է լինում:

Եւ 2003ի Դեկտեմբերի 2-ը դարձաւ դրա ապացոյցը: Ոչ միայն ես, այլեւ բոլորս կանգնեցինք կատարուած իրողութեան առջեւ: Առաջ քայլ չկայ, յետ քայլ չկայ, Սրբազանը չկայ:

Երբ «Թռչունեան տան» շէնքը ռուսական զօրքը մեզ տուեց եւ արդէն որոշուած էր այնտեղ որբանոց հիմնել, Դուք ասացիք.

- Այս շէնքը ինքը որբ մըն է, ինչպէ՞ս պիտի ընենք...

Իսկ Դուք գիտէիք, որ երկու տարի անց նորից որբացնելու էիք «Թռչունեան Տան» սաներին, որոնց միակ յոյսն էիք... Գիտէի՛ք, Սրբազան, եթէ չգիտենայիք, այդքան չէիք շտապի, վարորդներին քնից չէիք զրկի, մեքենաներ չէիք մաշի, ճամփաներ ու երկրներ չէիք կտրի, հրատարակչութեան աշխատողներն ու հմակարգիչները չէին յոգնի, տպարանները դեռ չչորացած գրքեր չէին առաքի: Շտապում էիք, Սրբազան, շտապում էիք, եւ ի՞նչ իմանայինք, թէ ինչու: Ի՛նչ լաւ

էր այն ժամանակ, երբ չէինք հասկանում, թէ ինչու, հիմա հասկացանք, երանի չհասկանայինք...

- Այս անգամ Լենինական ձեր օթոյով երթանք:

Դա նշանակում էր, որ խօսակցութիւնը լինելու էր գլուխ-գլխի:

Եւ լինում էր, լինում էր դառնութիւն, հիասթափութիւն, խաբուածութիւն, չգնահատուած լինել, բայց ո՛չ երբեք «դասալքութիւն»:

Ցաւօք, մինչեւ օրս շատ-շատերը չիմացան ու այլեւս երբեք չեն իմանայ, որ Դուք միշտ էլ հասկանում էիք Ձեր նկատմամբ շահախնդիր ու անշահախնդիր վերաբերմունքը, սակայն բարեկրթութիւնը, գումարած հոգեւորականի կոչումը, թոյլ չէին տալիս վշտացնել դիմացիններին, եւ Աստուած կամեցաւ, որ Դուք մեկնէք որպէս պարտատէր, լինի դա նիւթական թէ բարոյական, բայց բոլոր դէպքերում չվշտացնող:

Ռոմէն Կոզմոյեան
նախկին Հայաստան-Սփիւռք Կապի Կոմիտէի
նախագահ

Երեք Օր Մեսրոպ Արք. Աշճեանի Հետ
Կամ Ուխտագնացութիւն Դէպի Ջաւախք

Նշանաւոր հոգեւորական, Հայ Եկեղեցու եւ մշակոյթի երեւելի գործիչ Մեսրոպ Արք. Աշճեանի մասին, մինչեւ նրան տեսնելս, կցկտուր տեղեկութիւններ ունէի, նրա անուանը մի քանի անգամ հանդիպել էի սփիւռքահայ մամուլի էջերում, կարդացել հայրենասիրական ջերմ շնչով եւ ճոխ լեզուով գրուած յօդուածներն ու ակնարկները եւ մեծ բաւականութիւն ստացել: Սակայն դա մինչեւ 1990-ական թուականները: Հետագայում նա եկաւ Էջմիածին եւ իր հայրենանուէր գործունէութիւնը շարունակեց Հայաստանում: Եւ այստեղ նա շատ կարճ ժամանակահատուածում հասցրեց կատարել ստեղծագործական-գիտահրատարակչական լայն աշխատանքներ՝ իր հեղինակութեամբ եւ մեկենասութեամբ տպագրելով բազմաթիւ մնայուն գրքեր: Բայց, աւա՜ղ, յանկարծահաս մահը վաղ ընդհատեց նրա կեանքի երկրային ուղին՝ կիսատ թողնելով այդ յոյժ կարեւոր ծրագրերն ու մտայղացումները: Նա դեռ շատ անելիքներ ու նուիրական իղձեր ունէր, որոնք իր հետ տարաւ երկնային լոյս ոլորտները:

Մեսրոպ Սրբազանի հետ իմ առաջին հանդիպումը տեղի է ունեցել Երեւանի Պետական Համալսարանի Աստուածաբանութեան Ֆակուլտետում, եթէ չեմ

սխալւում, նրա առաջին շրջանաւարտներին նուիրուած հանդէսի ժամանակ: Նա այդ արարողութեանը մասնակցելու էր եկել մի խումբ բարձրաստիճան հոգեւորականների հետ: Մինչ հանդէսի սկսուելը, Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Շահէ Արք. Աճէմեանը համալսարանի պատմական շէնքի առաջին յարկի վերանորոգուած ու լուսաւոր միջանցքում զրուցում էր հիւրերի հետ եւ նրանց ծանօթացնում ֆակուլտետի ուսումնագիտական կեանքին, նրա նուաճումներին ու ուսանողութեան առօրեային:

Երբ մօտեցայ նրանց, Շահէ Արքեպիսկոպոսը, պատասխանելով բարեւիս, ինձ ներկայացրեց իր շուրջը խմբուած հիւրերին: Մեսրոպ Սրբազանը եւ միւս հիւրերը մի պահ ուշադիր նայեցին իմ կողմն ու, ինձ էլ առնելով իրենց շրջանի մէջ, շարունակեցին ընդհատուած զրոյցը:

Մի փոքր անց սկսուելու էր արարողութիւնը, եւ մենք մտանք դահլիճ, ուր այնպէս ստացուեց, որ ես նստեցի Մեսրոպ Արք. Աշճեանի կողքին: Նա հետաքրքրուեց թերթի խմբագրութեան աշխատանքներով, տուեց անմիջապէս ինձ վերաբերուող մի քանի հարցեր, թէ որտեղ եմ ծնուել, ովքեր են ծնողներս, միջնակարգ դպրոցը որտեղ եմ աւարտել եւ այլն: Իմանալով այս ամենի մասին, նա սիրալիր ժպտաց, տուեց իր հեռախօսահամարները եւ ասաց. «Երբ կամենաք, կարող եք զանգել ու հանդիպել, կը բերէք նաեւ ձեր խմբագրած թերթի մի քանի համար՝ Համալսարանի կեանքին ծանօթանալու նպատակով»:

Դրանից մի քանի օր անց հանդիպեցի Մեսրոպ Սրբազանին իր աշխատասենեակում, որը գտնւում էր ՀԳԱԱ Հ. Աճառեանի անուան Լեզուաբանութեան ինստիտուտի շէնքում: Այս անգամ նա աւելի մանրամասնօրէն հարցուփորձ արեց համալսարանական կեանքի ու իմ ծրագրերի մասին: Նրա խօսքը հարուստ ու հիւթեղ էր, միաժամանակ՝ պարզ ու անպաճոյճ եւ ունէր ներգործելու մոգական ուժ, դէմքը խոհուն, համակրելի ու արտայայտիչ էր, աչքերը՝ սրաթափանց ու կրակոտ, զննող ու որոնող: Այդ ամենը մի առանձին հմայք էր տալիս նրա կերպարին եւ Աշճեան մարդուն ու հոգեւորականին դարձնում ջերմ ու սրտամօտ, հասարակ ու անմիջական: Առաջին իսկ հանդիպումից այդպիսի տպաւորութիւն ստացայ ես նրանից ու մտերմացայ հետը:

Սակայն, ցաւօք, բազմազբաղ լինելու հետեւանքով նա քիչ էր լինում ակադեմիայի իր աշխատասենեակում, որի համար էլ չէի կարողանում յաճախակի հանդիպել նրան այնտեղ, փոխարէնը տեսնւում էինք մասսայական միջացառումների ժամանակ, որոնց սովորաբար ներկայ էր գտնւում ինքը: Նա շրջում էր Հայաստանի գիւղերում ու քաղաքներում, յաճախակի մեկնում արտասահման, ուր ունէր բազմաթիւ հարազատներ ու մտերիմներ, ծանօթներ ու բարեկամներ, եւ կատարում էր քարոզչական լայն աշխատանք: Աշճեանը

տենդագին կերպով զբաղւում էր ստեղծագործական աշխատանքնով, գրում ու խմբագրում էր գրքեր, թղթին յանձնում իր կեանքի յուշերն ու տպաւարութիւնները, կազմակերպում ուխտագնացութիւններ Արեւմտեան Հայաստանում եւ մեր հանրապետութիւնում, որոնց հիման վրայ ստեղծուել են գեղարուեստական եւ ճանաչողական անուրանալի արժէք ունեցող հայրենագիտական տեսանիւթեր:

Եւ ահա, Մեսրոպ Սրբազանի կազմակերպած այդ ուխտագնացութիւններից մէկի ուխտաւորը դարձայ նաեւ ես, որի ընթացքում աւելի մօտիկից շփուեցի նուիրեալ հայրենասէր, ճանաչուած հոգեւորական ու մտաւորական Աշճեանի հետ, տեսայ նրա արծուային ճախրը հայրենի լեռնաստանում՝ հաւքերի երամի նման ուխտաւորների թափօրն իր հետքից, լսեցի նրա զրոյցները լեզուի ու բառի, հողի ու ապառի, թփի ու ծառի, ջրի ու բարի, ինչպէս նաեւ մարդու եւ Աստծու աներեւոյթ փոխյարաբերութիւնների մասին: Նրա կողմից դէպի Ջաւախք վաղուց մտայղացուած այդ ուխտագնացութիւնը իր ղեկավարութեամբ իրականացուեց 2002թ. ամռանը, որի մասին էլ այստեղ ուզում եմ պատմել մի փոքր աւելի հանգամանօրէն:

* * *

Ուխտաւորներիս շուրջ 50 հոգիանոց խումբը Յունիսի 28-ի առաւօտեան իր երթն սկսեց Երեւանի Աւետիք Իսահակեանի արձանի մօտից եւ նոյն օրը իրիկնամուտին հասաւ Ջաւախքի վարչական կենտրոն Ախալքալաք ու իջեւանեց Սուրբ Խաչ եկեղեցու գաւթում: Այնտեղ մեզ դիմաւորեցին Վրաստանի Հայոց Թեմի Սամցխէ-Ջաւախքի առաջնորդական փոխանորդ, Հոգեշնորհ Տէր Բաբկէն աբեղայ Սալբիեանը, Ախալքալաքի շրջանի հոգեւոր հովիւ, Սուրբ Խաչ եկեղեցու քահանայ Տէր Սամուէլ Թորոսեանը եւ ուխտաւորներիս սպասող բազմութիւնը:

Վրաստանի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Գէորգ Արք. Սէրարդարեանի օրհնութեամբ իրականացուող այդ ուխտագնացութիւնը, որ մամուլի կողմից այն ժամանակ անուանուեց «Թումանեանական օրեր Ջաւախքում», իրականում կրօնա-մշակութային մի միջոցառում էր, որը տեւեց երեք օր: Նրա նպատակն էր Հայաստանի տարբեր շրջաններից հրաւիրուած երիտասարդներին ծանօթացնել Ջաւախքի պատմամշակութային յուշարձաններին, նրանց մտերմացնել տեղի երիտասարդութեան հետ եւ, ինչու չէ, անցնել նաեւ Թումանեանական վայրերով,

ուր դրանից շուրջ մէկ դար առաջ եղել էր մեծ բանաստեղծը եւ գրել իր նշանաւոր լէգէնդները:

Սուրբ Խաչ եկեղեցու գաւթում կանգնեցուած Կարնոյ նահանգի հայութեան գաղթը դէպի Սամցխէ, Ջաւախք ու Թռեղք կազմակերպած (1929-1930թթ.) Կարապետ Արքեպիսկոպոս Բագրատունու (1779-1856) նորակերտ վեհաշուք արձանի շուրջը մի փոքր դադար առնելուց, փոխադարձ ողջագուրումներից ու ծանօթութիւններից յետոյ բոլոր ուխտաւորներն ու ներկայ գտնուողները մտան եկեղեցի, ուր տեղի ունեցաւ հանդիպման արարողութիւնը: Մեսրոպ Սրբազանը օրհնեց մատուցուած աղն ու հացը, որն այնուհետեւ բաժանուեց ուխտաւորներին, ապա լսուեցին աղօթքի մրմունջներ, որից յետոյ ելոյթ ունեցաւ եկեղեցուն կից գործող «Հայաստան» մանկական երգչախումբը:

Հարկ ենք համարում նաեւ նշել, որ ուխտի եկածների մէջ էին հարեւան Ծալկայի շրջանի հոգեւոր հովիւ Սանասար սարկաւագը եւ այլ հոգեւորականներ, Երեւանից եկել էին ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մելքոնեանը (ծնունդով Ախալքալաքից), պատմաբան Գեղամ Բաղալեանը, դերասաններ ու արուեստագէտներ Անահիտ Մուրադխանեանը, Լօրենց Առուշանեանն ու Ամիրան Գալստեանը, երգիչներ Մկրտիչ Մկրտչեանը (Մակիչը՝ Արցախեան ազատամարտի մասնակից, շքանշանակակիր), Արսէն Գրիգորեանը, պարուսոյց Գագիկ Գինոսեանը (ծնունդով Ախալցխայից), Գեղանկարիչ Մեսրոպ Քամալեանը, երգիչ Լեւոն Իսպիրեանը (Նինոծմինդայից) եւ շատ ուրիշներ: Մեզ հետ էին նաեւ Էջմիածնի ճեմարանի սաների երգչախումբը, Անդրանիկ սարկաւագ Մանուկեանը իր նուագախմբով, ինչպէս եւ ներկայացուցիչներ Արցախից, Գաւառից, Գիւմրիից, ուխտաւորներ կային նաեւ Ֆրանսիայից, Լիբանանից ու Սիրիայից:

Սուրբ Խաչ եկեղեցում տեղի ունեցած արարողութիւնից յետոյ Վրաստանի խորհրդարանի պատգամաւոր Հէնզէլ Մադոյեանի կողմից Ախալքալաքի «Եւրոսթար» ճաշարանում կազմակերպուեց հիւրընկալութիւն-ընդունելութիւն: Մեսրոպ Սրբազանի կողմից ասուած հակիրճ խօսքից յետոյ սեղանապետ (Թամադայ) ընտրուեց Ջաւախքի «Ակունք» թերթի խմբագիր Մէլս Թորոսեանը, որին Սրբազանը, չգիտեմ ինչու, կոչում էր «նախարար», նրա համով հոտով բաժակաճառերը ուղեկցւում էին հայրենասիրական երգերով, նուագներով ու պարերով՝ մինչեւ ուշ երեկոյ: Ընթրիքի աւարտին սրտառուչ խօսք ասաց Մեսրոպ Սրբազանը: Նա, շնորհաւորելով ու օրհնելով բոլորին օրուայ խորհրդանշական առիթով, պատմեց, թէ ինչպէս ինքը Հայաստանում Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին նուիրուած ուխտագնացութիւնների շարքում անպայման նախատեսել էր նաեւ այցելութիւն Ջաւախք, որն անկատար էր մնացել

եւ, ահա, իրագործւում էր այդ օրը: Ապա նա թուարկեց իր կողմից կազմակերպուած կարեւոր ուխտագնացութիւնները պատմական Հայաստանի տարածքներում ու հայկական սփիւռքում (Տէր Զօրից Երուսաղէմ, Անթիլիասից Ռումինիայի Հաճկատար վանք եւ այլուր):

Ուշ երեկոյեան կրկին վերադարձանք Սուրբ Խաչ եկեղեցու գաւիթ, ուր մեզ էր սպասում Թբիլիսիից ու Վրաստանի այլ բնակավայրերից ժամանած ուխտաւորների մի մեծ խումբ: Շուտով ուխտաւորներիս խումբ առ խումբ իրենց տներն են տանում հիւրասէր ախալքալաքցիները՝ գիշերելու:

* * *

Յաջորդ օրը՝ Յունիսի 29-ին, վաղ առաւօտեան դարձեալ հաւաքւում ենք Սուրբ Խաչ եկեղեցու գաւթում, ուր իջեւանել էին հարեւան շրջաններից ուխտագնացութեան եկած նորանոր խմբեր: Եկել էին նաեւ Ախալքալաքի երիտասարդական միութեան անդամները, բազմաթիւ անհատ ցանկացողներ: Մեսրոպ Սրբազանի օրհնանքներն առնելուց յետոյ ուխտաւորների շուրջ 200 հոգիանոց քարաւանը մեքենաների շարասիւնով ուղղութիւն վերցրեց դէպի Թմկաբերդ ու Վարձունեաց աշխարհ:

Ուխտաւորների խումբը կանգ առաւ բերդի դէմ-յանդիման գտնուող մի բարձր բլրի վրայ, որտեղից պարզ երեւում էին բերդի պարիսպների մնացորդները եւ այլ շինութիւններ: Մեսրոպ Սրբազանը, ուխտաւորներին շուրջը հաւաքած, բացատրութիւններ էր տալիս բերդի մասին, ներշնչուած խօսում հին-հին դարերի յիշատակներից, հիանում Թմուկ բերդի հրաշակերտ տեսարանով: Ապա Զաւախք աշխարհի անցեալի ու ներկայի մասին հակիրճ զեկուցում կարդաց ՀԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն, պրոֆ. Աշոտ Մելքոնեանը:

Այս ամենից յետոյ պիտի սկսուէր թատերականացուած հանդէսը, որի ընթացքում ասմունքող-դերասաններ Լօրենց Առուշանեանն ու Ամիրան Գալստեանը հէնց այնտեղ լերան լանջին պիտի արտասանէին Թումանեանի անմահ պոեմը, եթէ չթափուէր տեղատարափ անձրեւը: Ասմունքն յետաձգուեց, ուխտաւորները ճանապարհը շարունակեցին դէպի Վարձիա (Վարձունիք), որը Թմկաբերդից այնքան էլ հեռու չէ:

Վարձիան դիտելուց յետոյ ուխտաւորներն իջան Քռի ափ, որտեղ Մեսրոպ Սրբազանի օրհնութեամբ մատաղ ճաշակեցին ու կրկին վերադարձան Թմկաբերդ: Ամրոցի դէմ-յանդիման գտնուող նոյն լերան բարձունքին շարունակուեց կիսատ մնացած հանդէսը: Դերասաններ Ա. Գալստեանը եւ Լ. Առուշանեանը մեծ

վարպետութեամբ ասմունքեցին Յովհաննէս Թումանեանի «Թմկաբերդի առումը» պոեմը, որի ողջ ընթացքը տեսագրուեց:

Այնուհետեւ նոյն վայրում, ուխտաւորները շուրջ երկու ժամ աւանդական դհոլ ու զուռնայի հնչիւնների ներքոյ երգում, պարում ու ասմունքում էին: Կատարւում են «Աշնակցիների պարը», «Եար խուշտան» եւ էլի շատ ուրիշ ստեղծագործութիւններ, թնդում է «Քոչարին»:

Ուխտաւորները իրենց ուխտը կատարած, ուշ երեկոյեան, յորդառատ անձրեւի տարափի տակ վերադարձան Ախալքալաք:

* * *

Ուխտաւորութեան երրորդ օրը սկսուեց Ախալքալաքի գաւառագիտական թանգարան այցելութեամբ, ուր շատերն առաջին անգամ էին լինում այնտեղ: Թանգարանի հարուստ նիւթերը դիտելուց յետոյ կրկին հաւաքուեցինք Կարապետ Արք. Բագրատունու յուշարձանի մօտ, ուր տեղի ունեցաւ հրաժեշտի հանդէս: Ելոյթ ունեցաւ «Հայաստան» մանկական երգչախումբը, ապա հնչեց «Տէր, ուղղեա՛ զճանապարհս մեր» աղօթքը, կատարուեց «Հայր Մեր»-ը, այնուհետեւ հրաժեշտի խօսքեր ասացին Մեսրոպ Սրբազանն ու Հայր Բաբկէնը, իսկ դերասաններ Լ. Առուշանեանն ու Ա. Գալստեանը արտասանեցին Թումանեանի «Հայ Ուխտաւոր» եւ «Լուսաւորչի Կանթեղը» ստեղծագործութիւնները: Եւ Մեսրոպ Սրբազանի՝ ուխտաւորներին ուղղուած այն հարցին, թէ «Ո՞վ կը տեսնէ Լուսաւորչի կանթեղը», բոլորը իրենց հայեացքները դարձնում են դէպի վեր, դէպի երկինք, ու ասես այնտեղ «կախ ընկած» տեսնում են այդ կանթեղն անմար, որ սեղանից հսկայական լոյս է տալիս աշխարհին:

Այսպէս մենք հրաժեշտ տուեցինք Ախալքալաք քաղաքին եւ ճանապարհ ընկանք դէպի Փարվանա: Մինչ լիճ հասնելը ուխտաւորները մի փոքր դադար առան Սաղամօ լճի ափին, որի միջով է անցնում Թափարվան գետը: Յաջորդ կանգառը եղաւ Գանձայում՝ Վահան Տէրեանի ծննդավայրում:

Տուն-թանգարանը դիտելուց ու ցուցադրուած նիւթերին ծանօթանալուց յետոյ ուխտաւորները մտան հէնց տան կողքին 1859թ. կառուցուած Սբ. Կարապետ եկեղեցին: Եկեղեցում համատարած լռութիւն էր, միայն մերթ ընդ մերթ գմբեթի տակ ճռւողում էին ծղրիդները ու խախտում նրա նիրհը: Այդ օրը այնտեղ գուցէեւ տասնամեակների քար լռութիւնից յետոյ, առաջին անգամ Մեսրոպ Սրբազանի շուրթերից հնչեց «Հայր Մեր»ը: Եկեղեցին դարաւոր քնից արթնացաւ, եւ նրա գմբեթի տակ խաթարուեց բուն դրած հաւքերի ու աղաւնիների անդորրը, որոնք բներից ելել ու թեւածում էին եկեղեցու ներսում: Կարճատեւ ժամերգութիւնից

յետոյ հոգեւոր հայրերը խնկարկեցին նախնեաց սուրբ յիշատակները, յիշեցին Տէրեանին ու Թումանեանին, նրանց քահանայ ծնողներին: Այդ օրը լրանում էր նաեւ Գարեգին Ա հայրապետի մահուան երրորդ տարելիցը, եւ Մեսրոպ Սրբազանը աղօթեց նրա հոգելոյս յիշատակի համար: Այնուհետեւ Սրբազան Հայրը այցելեց Գանձա գիւղի նորակառոյց հիւանդանոց, ուր զրոյց ունեցաւ բժիշկների ու հիւանդների հետ եւ ոգեւորեց նրանց:

Ուխտաւորներն այնուհետեւ ճանապարհը շարունակեցին դէպի Փարւանա: Փոկա գիւղի մօտ մեզ աղ ու հացով դիմաւորեցին երիտասարդները եւ, առնելով Մեսրոպ Սրբազանի օրհնանքը, աղուհացը բաժանեցին ուխտաւորներին ու մեզ ուղեկցեցին մինչեւ լճափ:

Փարւանան՝ Ջաւախքի լճերի թագուհին, ուխտաւորներիս դիմաւորեց իր բնական խաղաղութեամբ: Սուրբ Նունէի յիշատակին կանգնեցուած խաչափայտի մօտ տեղի ունեցաւ ուխտաւորների ծիսակատարութիւն: Մեսրոպ Սրբազանը շարականների ու սաղմոսների երգեցողութեամբ հոգեւոր դասի հետ զառիթափ բարձունքից իջաւ ափ ու աղաւնակերպ մեռոնաթափից սրբալոյս միւռոն հեղեց ջրերի մէջ: Ասես մի պահ լոյսի ճառագայթներ ցոլացին շուրջբոլորն ու փայլատակեցին լճի կապտաջինջ ալիքները: Սրբազանը այդպէս օծեց ու օրհնեց Փարւանա լիճը, որի ափերին շուրջ 1700 տարի առաջ հայոց լեզուով քրիստոնէութիւն է քարոզել Հռիփսիմեանց քառասուն կոյսերից մէկը՝ Սուրբ Նունէն (Նինօ): Մեսրոպ Սրբազանը նշեց նաեւ, որ նորօրեայ այս ուխտը մեծ խորհուրդ ունի, քանի որ այն գալիս է խնկարկելու Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հրահանգով Ջաւախք ու Վրաստան եկած Նունէի ու Մանէի սրբացուած յիշատակը:

Ետդարձի ճանապարհին Փոկայում տեղի ունեցաւ հրաժեշտի հանդիսութիւն: Երկյարկանի դպրոցի բեմահարթակ յիշեցնող մուտքի առջեւ ելոյթ ունեցան Մեսրոպ Արք. Աշճեանը, պատմաբան Աշոտ Մելքոնեանը, հայր Բաբկէն Սալբիեանը, Փոկայի գիւղապետ Խաչատուր Զօրօղլեանը, Փարւանա լճի տնտեսութեան տնօրէն Սահակ Մադոյեանը եւ ուրիշներ, որից յետոյ տրուեց ճոխ համերգ, հանդէս եկան «Հայաստան» մանկական երգչախումբը, «Ջաւախք» երգի-պարի ազգագրական համոյթը, դերասաններ Ա. Գալստեանն ու Լ. Առուշանեանը, երգիչներ Մ. Մկրտչեանն ու Ա. Գրիգորեանը եւ ուրիշներ: Հանդիսութեան աւարտին Մեսրոպ Սրբազանը, ի յուշ Փոկա կատարած իր այցելութեան, մի մեծ խումբ մանկահասակ երեխաների նուիրեց ոսկեայ խաչեր: Ի դէպ, նա իր այդ նուիրատուութիւնը կատարում էր ամենուր, երբ իր շուրջը խմբւում էին երեխաները: Ապա Սրբազանը փոկացիներին բաժանեց աղօթագրքեր ու այլ յիշատակներ:

Վերջում դպրոցի ընդարձակ սրահում ուխտաւորներին ու գիւղի հասարակայնութեանը մատուցուեց մատաղ: Այն ճաշակելուց յետոյ բռնեցինք վերադարձի ճամփան:

Ահա այսպէս աւարտուեց եռօրեայ մեր ուխտագնացութիւնը Ջաւախք աշխարհում, թումանեանական ստեղծագործութիւնների վայրերով: Նինոծմինդայի կենտրոնում Յունիսի 30-ի երեկոյեան տեղի ունեցաւ աւարտի հրաժեշտը, որը վերածուեց մի սրտագեղ տեսարանի: Մեսրոպ Սրբազանը Ջաւախքին ու ջաւախցիներին յղեց իր օրհնանքի ու հրաժեշտի յուզիչ խօսքը, ապա նա, դառնալով ուխտաւորներիս, ասաց՝ տարիներու փափագս կատարուեցաւ, հիմա հանգիստ խիղճով կրնանք երթալ:
Եւ մենք Յուլիսի 1-ի գիշերը հասանք Երեւան:

* * *

Մեսրոպ Սրբազանին վերջին անգամ ես տեսել եմ ՀԳԱԱ պատմութեան ինստիտուտի ներկայումս իր անունը կրող գիտական կենտրոնի եւ իր նուիրաբերած անձնական հարուստ գրադարանի բացման հանդիսաւոր արարողութեան ժամանակ, որը փաստօրէն վերածուեց նրան մեծարելու, նրա արածն ու անելիքները ամբողջականացնելու մի գեղեցիկ ցերեկոյթի: Աշճեան-մարդու, եկեղեցական գործչի, գիտնականի ու բարերարի մասին բովանդակալից զեկուցում կարդաց ինստիտուտի տնօրէն Ա. Մելքոնեանը, եղան նաեւ ելոյթներ ու ողջոյններ, ասուեցին սրտառուչ ու ջերմ խօսքեր, յղուեցին մաղթանքներ: Դրանից մի կարճ ժամանակ անց նա վախճանուեց...

Յետմահու նոյն դահլիճում տեղի ունեցաւ նրա նոր լոյս տեսած գրքի շնորհանդէսը, որը վերածուեց նաեւ յիշատակի ցերեկոյթի: Իմ յիշողութեան մէջ այդ միջոցառումից մնացել է մի հետաքրքիր դրուագ, որը, ըստ իս, խիստ բնութագրական է Աշճեանի կերպարի ամբողջականացման համար: Ներկայացուող գրքի մէջ զետեղուած էր նրա լուսանկարը մի արտակարգ նուրբ ծաղկի թերթերի ֆոնին: Նոյն նկարը, աւելի մեծադիր, դրուած էր նաեւ բեմում: Պրոֆ. Ա. Մելքոնեանը իր խօսքում նշեց, որ Թալինում աճող այդ ծաղկի մասին առաջին անգամ միջնադարում իր նօթերում յիշատակել է մի օտարերկրացի ճանապարհորդ, որն, անցնելով այդ կողմերով, նկարագրել է տեղի բուսականութիւնը: Յետագայում այլեւս ոչ մի տեղ չի յիշուել այդ ծաղկի մասին, նոյնիսկ այն չունի անուն...

Ու դարեր անց, ահա, Մեսրոպ Սրբազանը, այդ ծաղկի մասին օտարազգի ճանապարհորդի յիշատակարանում կարդալով, սկսել է իր որոնումները: Սար ու ձոր ընկած նա փնտրել է երկար, փնտրել ու վերջը գտել է...

Զգիտեմ ինչու, այդ օրը ես կրկին յիշեցի նուիրական բրաբիոն ծաղկի ու նրա որոնողների մասին առասպելը: Մեսրոպ Արք. Աշճեանը մեզանում այդ ծաղիկը որոնող անմար հոգիներից մէկն էր:
Թող նրա իղձն ի կատար ածուի երկնային լոյսի ոլորտներում:

Վահան Մաղալեան
Բանասիրական գիտութիւնների թեկնածու,
«Երեւանի Համալսարան» թերթի
խմբագիր

Ուխտագնացութիւն Դէպի Ջաւախք

Արեւմտեան Հայաստանում իր ուխտագնացութիւնն աւարտելուց յետոյ նրա հոգին չհանդարտուեց: Զգում էր, որ ճանապարհ ունի անցնելիք, ու այդ ճանապարհը հոգու կանչով տանում էր Ջաւախք: Գնաց: Մենակ չէր: Ուխտաւորների քանակը գերազանցում էր վեց տասնեակը. եկել էին Արցախից, Սփիւռքից, Հայաստանի տարբեր մարզերից:

Սա մի մտայղացում էր, որը Ջաւախքի ընդհանուր Առաջնորդական փոխանորդ Հայր Բաբգէն Սալբիեանի եւ նրա՝ Մեսրոպ Արք. Աշճեանի ջանքերով կեանքի կոչուեց: Ուխտաւորները հաւաքուեցին: Առաջնորդին էին սպասում, ու այդ սպասումի մէջ մի քիչ վախ կար՝ Սրբազանը վատառողջ էր, կարող էր չգալ, բայց ճանաչողները վստահ էին՝ գալու է:

Եկաւ: Շարուեցինք: Ճանապարհը երկար էր եւ յոգնեցուցիչ: Ամբողջ ճանապարհի ընթացքում Սրբազանը անհանգիստ էր: Շտապում էր: Օրուայ երկրորդ կէսին վերջապէս Ջաւախքում էինք:

Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու բակում անսովոր երուզեռ էր տիրում: Հաւաքուածներն անհամբեր սպասում էին տեսնելու մի մարդու, ով ոտքով անցել էր Մշոյ դաշտը, աղօթք է կարդացել Մշոյ Սուրբ Կարապետում, ձեռքերն է լուացել Եփրատի զուլալ ջրերում:

Հաւաքուածներից շատերը չէին կարողանում թաքցնել իրենց յուզմունքը: Եկել էին տեսնելու մեծ հայրենասէրին, եկել էին մեծ հոգեւորականից օրհնութիւն ստանալու կամ պարզապէս մեծ մարդու կողքին գտնուելու համար:

Ոչ միայն տեսան Մեսրոպ Արք. Աշճեանին, այլեւ լսեցին նրա աղօթքը առ Աստուած. «Թող Տէրը զօրավիգ լինի Ջաւախք աշխարհին եւ ջաւախքահայութեանը»:

Սրբազանը հաւատացած էր՝ ուխտը որ պիտի արուէր, ուխտաւորներին ու ջաւախքահայութեանը պիտի կապի հայերին, անցեալին, պատմութեանը:

Օրը մթնում էր: Բոլորը հանգստանալ էին ուզում: Ուխտագնացութիւնը սկսուելու էր յաջորդ օրը, վաղ առաւօտից: Քայլելու էինք Թումանեանի հետքերով: Ճանապարհը տանելու էր Թմբկաբերդ:

Հաւաքուեցին առաւօտ կանուխ եւ Մեսրոպ Սրբազանի աղօթքից յետոյ ճանապարհ ընկանք: Երկար ու դժուար էր ճանապարհը, սակայն Սրբազանի ոգեւորութիւնը վարակել էր բոլորին: Օրը մի տեսակ մթնում էր, անձրեւոտ, եւ հեռւում, մութ ամպերի տակ, աչքը՝ եկողի ճամփին կանգնած էր Թմկաբերդը, աւելի ճիշտ՝ այն ամենը, ինչ մնացել էր Թմուկ բերդից:

Սրբազան Հայրը յուզուած էր: Քայլում էր դանդաղ եւ երեւի մտքով հասել ու զրուցում էր Թումանեանի հետ լաւ ու վատ օրերից, էս անցաւոր աշխարհից:

Ուխտաւորներս հետեւում էինք Սրբազանին, քայլում նրա քայլքին համընթաց եւ աշխատում էինք չընդհատել նրա զրոյցը: Սրբազանի հետ Ջաւախք էին եկել դերասաններ Լօրենց Առուշանեանն ու Ամիրան Գալստեանը, եւ հէնց նրանք էլ բոլորիս մասնակից դարձրեցին երկու մեծերի լուռ զրոյցին՝ կարդալով «Թմկաբերդի առումը» պոեմը: Կարդացողների ձայնը արձագանքում էր, եւ մի պահ թուաց, թէ բերդից ցած են նայում սեւաչեայ Թամարն ու քաջ Թաթուլը:

Ընթերցումից յետոյ հնչեց հայկական քոչարին, եւ բոլորս շուրջպար բռնեցինք, եւ լեռները դղրդում էին ուխտաւորների «հէյ-հէյից»: Երջանիկ էր Սրբազան հայրը:

Թմկաբերդից շարժուեցինք դէպի Վարձաւունիք՝ հայ իշխանների բնակատեղին: Սրբազանը լուռ շրջեց քաղաքում, խմեց խորհրդաւոր աղբիւրի ջուրը:

Կէսօրին եփւում էր մատաղը: Հաւաքուեցինք սեղանների շուրջ: Սրբազանը օրհնանքի արարողութիւն կատարեց Հայր Բաբկէնի հետ, եւ ով զարմանք, արեւ դուրս եկաւ: Սա բոլորիս հաւատքի արդիւնքն էր, խորհուրդ խորին, խորհուրդ հայկական: Մատաղի արարողութիւնը առիթ հանդիսացաւ, որ Վարձաւունիք քաղաքի դարպասների մօտ կրկին հնչի հայ երգն ու պարը՝ հաստատելով, որ քանի դեռ հայ ժողովուրդը կարող է տալ այդպիսի մեծ հայրենասէրներ, ինչպիսին Մեսրոպ Արք. Աշճեանն է, հայը կը շարունակի ապրել եւ ապրել արժանավայել:

«Սասուն» երգի-պարի ազգագրական համոյթի ազգային երգերի ներքոյ ուխտաւորներից իւրաքանչիւրը հայրենիքի մի զինուոր էր եւ պարում էին

յաղթական, ոգեւորուած Սրբազանի ներկայութիւնից եւ պատմական հողը սեփական ոտքի տակ ունենալու մտքից:

Ախալքալաքից մեզ էր միացել Լեւոն Իսպիրեանը, ով իր հոգեթով ձայնով երգում էր Էրզրումի երգերը: Սրբազանի հոգին ալեկոծւում էր, կարծես ուզում էր արծուի նման ճախրել երկնքում եւ այնտեղից տեսնել բոլորի ոգեւորութիւնը:

Մայրամուտ էր արդէն երբ վերադարձանք Ախալքալաք: Ուխտագնացութեան երկրորդ օրը ճանապարհը տարաւ սիրոյ մեծ երգիչ Վահան Տէրեանի ծննդավայրը՝ գիւղ Գանձա: Գանձայում Սրբազանին եւ ուխտաւորներին դիմաւորելու էին եկել ողջ գիւղը: Տէրեանի տուն-թանգարանը գտնւում էր Ս. Կարապետ եկեղեցու բակում:

Օրը լի էր խորհուրդով: Այդ օրը նշւում էր Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա կաթողիկոսի մահուան երրորդ տարին: Սրբազան Հայրը Ջաւախքի Առաջնորդական փոխանորդի հետ կատարեց հոգեհանգստի արարողութիւն, եւ աղօթքը՝ թեւեր առած, դուրս ճախրեց եկեղեցու կիսաւեր գմբէթից՝ տարածուելով Ջաւախքի երկնակամարում, հաստատելով մեր ուխտը Տիրոջ հետ:

Սրբազանը քայլում էր կիսաւեր եկեղեցում, տեսնելով աղաւնիի հիւսած բունը խորանի մօտ, վախուորած ձեռքերով վերցրեց աղաւնու ձուն եւ շրջելով ուխտաւորներին, անթաքոյց յուզմունքով ասաց.- «Ես հիմա՛ հասկացայ Կոմիտասին՝ «խախտուել գերաններ, փլուել են տներ, բուն պիտի դնեն մէջ վայրի հաւքեր»ը:

Յետոյ բոլորս ուխտեալ եւ հաւատաւոր, հաւաքուեցինք Տէրեանի արձանի շուրջ՝ լսելու նրա ստեղծագործութիւնների ընթերցումները: Իսկ երգիչներ Մկրտիչ Մկրտչեանն ու Արսէն Գրիգորեանը իրենց հայրենասիրական երգերով ոգեւորեցին ներկաներին:

Տխուր, բայց մեծ ոգեւորութեամբ հրաժեշտ տուեցինք Գանձային, իսկ առջեւում ուխտաւորներին կարօտով սպասում էր չքնաղ Փարւանան:

Հասանք Փարւանա: Խռովք կար սրտում: Ինչո՞ւ էր տխուր: Սրբազանը դա շուտ հասկացաւ եւ հաշտութիւն կնքեց գուլալ լճի հետ՝ ջրօրհնէքի արարողութիւն կատարելով: Աղօթքն ու շարականը յաջորդում էին միմեանց: Եւ ի՜նչ հրաշք, թախծոտ Փարւանան ժպտալ սկսեց, կայտառացաւ եւ իր երգով միացաւ ուխտաւորներիս երգին: Սա մի սիմֆոնիա էր, որը գրուեց Մեսրոպ Արք. Աշճեանի ձեռքով: Ժամանակը սուղ էր: Առջեւում Փոկա գիւղն էր: Սրբազանը հասկանում էր՝ պէտք է գնալ: Նա մի վերջին հայեացք նետեց լճին, հոգու թեւերով գրկեց լիճը եւ չէր ուզում բաց թողնել: Ճանապարհը կանչում էր, իսկ չքնաղ Փարւանան շշնջում. «Մի՛ գնա, մի քի՛չ էլ...»: Եւ նա, ով գոյացել էր սիրահարի արցունքից, ինքն էլ դարձած սիրահար՝ մեզ ճանապարհ դրեց կարօտ աչքերով: Շարժուեցինք

դէպի Փոկա, ուր Սրբազանին դիմաւորեցին աղ ու հացով: Հաւաքուել էր ողջ գիւղը: Աղօթեց Սրբազանը բոլորի համար, տպաւորութիւնները կիսեց ժողովրդի հետ եւ խնդրեց. «Թէկուզ տասը լեզու իմանաք, ձեր հաւատքն ու լեզուն «ղայիմ» պահէք: Եւ որքան, որ Աստուած ինձ կեանք պարգեւի պիտի ապրեմ ու աղօթեմ Ջաւախքի համար»: Եւ իմանալով, որ այդ տարածաշրջանի բնակչութիւնը զրկուած է դիտելու ՀՀ հեռուստածրագրերը Սրբազանը իր խօսքը անմիջապէս գործի վերածեց, նուիրելով ալեհաւաք, որը ապահովեց եօթ գիւղերի հեռուստակապը Հայաստանի հետ:

Այնուհետեւ բոլորին ողջունեց Ախալքալաքի «Ջաւախք» երգի-պարի համոյթը, եւ «Տէր Ողորմեա»-ի հնչիւնների ներքոյ «մնաս բարով» ասացինք Փոկա գիւղին:

Աւարտուեց ուխտագնացութիւնը՝ մի քիչ տխուր, մի քիչ ուրախ, նոր հանդիպման ակնկալիքով:

Լիանա Խլոյեան
Ուխտագնացութեան կազմակերպիչ,
մասնակից

Անհանգիստ Հայորդին

Երիտասարդական աւիւնով լեցուն կենսախինդ մարդը մշտապէս ճամփորդութիւնների մէջ էր: Այցելութիւններ սփիւռքահայ գաղթօճախներ, կրթական եւ մշակութային կենտրոններ:

Նրա մշտական ուղեկիցներն էին լուսանկարչական սարքն ու տեսախցիկը: Հետաքրքրասէր մարդուն հետաքրքրում էր հայկական ծագում ունեցող պատմամշակութային բոլոր արժէքները, տարբեր մասնագիտութիւններ ունեցող հետաքրքիր մարդիկ: Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումից յետոյ վերացան բոլոր գաղափարական եւ վարչական դժուարութիւնները: Անհանգիստ մարդը սկսեց շրջել Մայր Հայրենիքում՝ այցելելով բոլոր մարզերն ու քաղաքները, բոլոր գիւղերն ու ճարտարապետական յուշարձանները, բոլոր եկեղեցիներն անխտիր: Բարձրաստիճան հոգեւորական, մտաւորական, գրող, աստուածաբան, հայրենասէր հայը փնտրում էր այն վայրը, որտեղ կարելի էր հանգրուանել՝ գրել, մտածել, հանգստանալ, կազմակերպել հանդիպումներ, ընդունել հիւրեր:

Արագածոտնի մարզի Մուղնի գիւղը դարձաւ այն վայրը, իսկ Սուրբ Գէորգ եկեղեցին այն կենտրոնը, որը հոգեկան հանգստութիւն էր պարգեւում ալէծուփ հոգիներին: Հետաքրքրասէր հայը՝ Գերաշնորհ Տէր Մեսրոպ Արք. Աշճեանն էր:

Մեսրոպ Սրբազանը ջերմեռանդութեամբ սկսեց եկեղեցու վերանորոգման, տարածքի գեղեցկացման աշխատանքները: Կարծես կախարդանքով վերափոխւում էր եկեղեցու տեսքը, շրջակայ տարածքը: Կառուցուեց թոնրատունը, փոքրիկ ջրաւազանը, գեղեցիկ տաղաւարներ: Կատարուեցին ներքին յարդարման աշխատանքներ:

Սրբազանը ինձ հրաւիրեց եկեղեցու շրջակայ տարածքներում դպրոցականների հետ մաքրման աշխատանքներ կատարելու համար, որը եւ կատարուեց մեծ ջանադրութեամբ ու սիրով: Եկեղեցու շրջակայքի մաքրումից յետոյ Սրբազանը նրանց ուղղորդեց յարակից հին գերեզմանոցի տարածքը մաքրելու համար: Բոլոր մասնակիցներին անխտիր լուսանկարեցին: Երկու լաւագոյն աշխատող երեխաներ ստացան մէկական գիրք, իսկ բոլոր երեխաները հիւթեր եւ քաղցրաւենիք:

Եկեղեցին իր տարածքով բարւոք տեսք ստացաւ: Եկեղեցու տարածքում տնկուեցին բազմաթիւ վարդեր, կակաչներ, ծառեր ու ծաղիկներ: Սակայն եկեղեցու դիմաց կանգնած էր վաթսունական թուականներին կառուցուած մի անշուք շինութիւն, որը ծառայել էր, որպէս շերամապահութեան շէնք, այնուհետեւ ակումբ, գրադարան, ընտրական տեղամաս, կապի բաժանմունք: Սրբազանի միջամտութեամբ այն վերափոխուեց, նորացաւ, ձեւափոխուեց արտաքին եւ ներքին տեսքը՝ դառնալով հիասքանչ շինութիւն իր նորաձեւ կահաւորմամբ, ցանկապատով, սանհանգոյցով, ջեռուցման համակարգով ու բակի ծաղկազարդ տեսքով:

Եկեղեցու վերանորոգման աշխատանքներից յետոյ պէտք է կատարուէր օծման արարողութիւնը: Մեսրոպ Սրբազանը նախապէս պատրաստել էր ու ծրագրաւորել ամեն ինչ:

Վաղ առաւօտից դպրոցի բոլոր աշակերտները ծաղիկները ձեռքներին դպրոցից մինչեւ եկեղեցի շարուած էին ճանապարհի երկու կողմերում ուսուցիչների հետ միասին, որպէսզի դիմաւորեն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսին:

Կաթողիկոսն ու թեմերի առաջնորդները իջան մեքենաներից, իսկ երեխաները մօտենալով ծաղիկներ նուիրեցին, փոխադարձը ստանալով հայրական օրհնութիւն եւ խաչ, ապա թափօր կազմած ուղղուեցին դէպի եկեղեցի: Եկեղեցուց հոգեւորականների մի այլ թափօր Մեսրոպ Սրբազանի գլխաւորութեամբ դիմաւորեց կաթողիկոսին եւ ուղեկցեց եկեղեցի՝ օծման արարողութիւնը կատարելու համար: Բազմամարդ էր Մուղնին: Եկեղեցում ասեղ գցելու տեղ չկար,

իսկ դրսում շատերն էին սպասում, որ եկեղեցուց դուրս եկողների տեղը զբաղեցնեն: Հիասքանչ ու կատարեալ տօնակատարութիւն էր այդ օրը, որը երկար կը յիշուի ականատեսների յիշողութիւններում:

Մուղնին Հայաստանի հին բնակավայրերից մէկն է, իսկ Սուրբ Գէորգ եկեղեցին ամենամեծ ուխտատեղիներից մէկը, որը իր ժամանակին լաւ նկարագրել է Մուղնիի դպրոցի սան Պերճ Պռոշեանը: Մեսրոպ Արք. Աշճեանի Մուղնի գալուց ի վեր շատացաւ ուխտաւորների, հետաքրքրասէրների եւ արտասահմանեան հիւրերի այցը եկեղեցի: Սրբազանը յաճախ էր կազմակերպում հանդիսութիւններ ու միջոցառումներ՝ հրաւիրելով հիւրեր տարբեր երկրներից: Այդպիսի միջոցառումներից մէկի՝ Ծաղկազարդի ժամանակ դպրոցի աշակերտների մէկժամեայ հայրենասիրական ծրագիրը կատարուեց եկեղեցու գաւիթի սիւների ներքոյ՝ արժանանալով ներկաների հաւանութեանը:

Սրբազանը նախապատրաստւում էր ծառատունկի: Մուղնի մտնող ճանապարհի երկու կողմերում նախապէս փոսեր էր պատրաստել տուել եւ գարնանային մի կիրակի օր ծառերը բերեցին: Դպրոցահասակ երեխաները իրենց գործիքներով, համայնքի ներկայացուցիչների հետ միասին սկսեցին ծառատունկը: Սովորաբար երեխաները սիրում են լինել ուշադրութեան կենտրոնում, ցուցադրել իրենց աշխատասիրութիւնն ու ճարպկութիւնը, առաջ քաշել իրենց համար օգտակար հարցեր: Ծառատունկից մի քանի օր յետոյ դպրոց է գալիս Տէր Եղիշէ քահանան իր հետ բերելով մի մեծ տոպրակ տարբեր գնդակներ, որն ուղարկել էր Մեսրոպ Սրբազանը՝ կատարելով երեխաների ցանկութիւնը:

Դպրոցում յաճախ են կազմակերպւում գեղարուեստական միջոցառումներ, իսկ ամենացանկալի հիւրը Մեսրոպ Սրբազանն էր, որը լինելով գերզբաղուած մարդ, չէր կարողանում ներկայ լինել բոլոր միջոցառումներին:

Առաջին դասարանի դասվար Վարդիշաղ Եղիազարեանը կազմակերպել էր գրաճանաչութեան հանդէս: Երեխաները այնքան լաւ էին երգում ու արտասանում, որ հիացմունք էին պատճառում բոլորին: Ամենից շատ հիացած, ուրախացած ու զգացուած էր Սրբազանը եւ ըստ երեւոյթին առաջին անգամ էր դիտում այսպիսի հանդէս: Մի քիչ յետոյ ասաց. «կարո՞ղ էք այս մասը գրել ինձ տալ», մի քիչ անց՝ «Այս էլ», իսկ ամենավերջում նաեւ ամբողջ ծրագիրը:

Հայաստանում Քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակի առիթով դպրոցում կազմակերպուեց թատերական ներկայացում: Մարզադահլիճում կառուցուեց ժամանակաւոր բեմ, քանի որ միջոցառումների դահլիճը շատ փոքր էր: Միջոցառմանը ներկայ էին կրթութեան վարչութեան պետ Վաղինակ Սայադեանը, առաջատար մասնագէտներ, քաղաքապետարանի ներկայացուցիչներ: Մեսրոպ Սրբազանը շնորհաւորելով փոքրիկ դերասաններին, խոստացաւ նրանց

լուսանկարները ուղարկել՝ յայտնելով իր գոհունակութիւնը գեղեցիկ միջոցառման համար:

Մուղնիի մշակոյթի տունը վերանորոգուած էր, կահաւորուած, եւ պատրաստ սկսելու իր գործունէութիւնը: Յարութիւն Միքայէլեանը տնօրէնն էր լինելու, մէկ գրադարանավար, մէկ պարտիզպան, երկու ճաշարանի աշխատակիցներ: Սովորաբար Սրբազանը զրուցում էր բոլորի հետ առանձին-առանձին, յայտնում իր կարծիքը, չնայած գիտէր այն անելիքներն ու ձեւերը, թէ ինչպէս պէտք է առաջնորդուեն բոլորը: Ինձ առաջարկեց գրել մի կանոնադրութիւն, որով պէտք է առաջնորդուէին մշակոյթի տան աշխատակիցները: Ֆինանսաւորումը կատարում էր անձամբ, աշխատանքների վերահսկողութիւնը պէտք է կատարուէր համայնքի անդամներից կազմուած խորհրդի կողմից, որի կազմի մէջ էի եւ ես:

Խորհրդի կազմը, մշակոյթի տան աշխատակազմը, որը նախնական պայմանաւորուածութիւն ունէր տնօրէնի հետ՝ պէտք է հանդիպէին երկու օր անց: Ես պէտք է ներկայացնէի կանոնադրութիւնը, հաւանութեան արժանանալու դէպքում պէտք է սկսուէին աշխատանքները: Դա նաեւ Մշակոյթի Տան բացման արարողութիւնն էր: Սրբազանը նախ ծանօթացաւ խորհրդի անդամների հետ, որոնք համառօտ ներկայացրեցին իրենց կենսագրական տուեալները: Խորհրդի անդամներն էին Մնացական Գրիգորեանը, Արամ Քամալեանը, Տէր Եղիշէ քահանայ Բարսէղեանը, Հրանտ Թորոսեանը եւ ես՝ Մուշեղ Գալստեանը:

Կանոնադրութիւնը ընթերցեցի, որտեղ մանրամասնօրէն ներկայացուած էր իւրաքանչիւրի աշխատանքային պարտականութիւնները, աշխատանքի ընդունման ու ազատման ձեւերը, աշխատանքային օրէնսդրութեամբ սահմանուած կարգերը, աշխատանքային ժամերը, եւայլն: Նախատեսուած աշխատանքներից դուրս ես աւելացրել էի տնօրէնի տեղակալի պաշտօն, որն անսպասելի էր բոլորի համար, եւ իմ համոզիչ փաստարկներն ներկայացնելուց յետոյ Սրբազանը համաձայնուեց աւելացնել եւս մէկ հաստիք՝ աշխատանքային լիարժէքութիւնն ապահովելու համար: Ժամանակը շատ արագ անցաւ եւ շատ հաճելի, քանի որ Սրբազանը եղել է հետաքրքիր զրուցակից եւ մշտապէս եղել է հանդիպումների մէջ: Բոլորս ուրախ էինք, քանի որ մեր աչքի առաջ ծնւում էր մի նոր մշակութային օճախ՝ ժամանակակից ոճով ու կահաւորանքով:

Սրբազանը հարազատօրէն էր վերաբերւում Մուղնի գիւղին: Դպրոցական շէնքի վատթար վիճակը անհանգստացնում էր բոլորիս: Իր գոյութեան քսան տարիների ընթացքում լուրջ վերանորոգման աշխատանքներ չէին կատարուել: Ներկայացրել էի տանիքի կառուցման, ներքին յարդարման, վերանորոգման աշխատանքների ծրագրեր, յուսալով, որ Սրբազանի համար աւելի հեշտ կը լինի բարերարներին ներկայանալիս եւ ֆինանսական աջակցութիւն ստանալիս:

Տարրական դասարանների մասնաշէնքի ֆինանսաւորումը կատարեց Զապէլ Վասիլեանը, երեք հազար հինգ հարիւր դոլար տրամադրելով այդ աշխատանքին: Պոլսահայ բարերար Յակոբ Կիրէլթեանը Մեսրոպ Սրբազանի հետ միասին հիւրընկալուեցին դպրոցում Կարպիս Ուղուրեանի եւ Սիլվայի ուղեկցութեամբ: Սրբազանը նախապէս առաջարկել էր պատրաստել ծրագրերը, որոնց արժողութիւնը կազմելու էր մօտ 40.000 դոլար: Ծրագրերի արժէքը կազմեց մօտ 43.000 դոլար, սակայն բարերարները յատկացրեցին 50000 դոլար՝ դպրոցն ամբողջութեամբ վերանորոգելու համար: Վերանորոգման աշխատանքները կատարեց ԱՄՆ-ի Հայ Կրթական Հիմնարկութեան ՀՀ մասնաճիւղը՝ Ստեփան Նալբանդեանի գլխաւորութեամբ: Շինարարն էր Գագիկ Համբարձումեան:

ԱՄՆ-ում Սրբազանը դումարը փոխանցել էր վերը նշուած կազմակերպութեանը եւ այդ օրերին իմացանք չարաբաստիկ լուրը, որը կոչւում է մահ:

Մուղնիի ազգաբնակչութիւնը համախմբուած ուղեւորուեց կառավարութեան շէնք եւ իր ցանկութիւնը յայտնեց յուղարկաւորութիւնը կատարել Մուղնիի Ս. Գէորգ եկեղեցու բակում: Սրբազանը բազմիցս շեշտել է, որ Մուղնիի եկեղեցում հոգեւոր հանգստութիւն է զգում:

Մենք բոլորս զգացինք այն ջերմ սէրն ու գորովանքը, որ ունէր Սրբազանը Մուղնիի նկատմամբ: Մուղնիի ազգաբնակչութիւնը, ուսուցչական անձնակազմը իր երախտագիտութեան տուրքը մատուցելով իր սիրելի Սրբազանին, Մուղնիի միջնակարգ դպրոցն անուանակոչեց «Մեսրոպ Արք. Աշճեանի» անունով:

Մշտնջենական հանգստութիւն քեզ անհանգիստ հայորդի:

Մուշեղ Գալստեան
Մուղնիի միջնակարգ դպրոցի տնօրէն

Ի Լոյս Յանգեաւ
Զկայ Այլեւս Մեսրոպ Արք. Աշճեանը

Մի քանի ամիս առաջ Մուղնու վանքում կազմակերպել էր Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» 1000 ամեակի տօնահանդէս, որն ինքը սոսկ ցերեկոյթ էր կոչել: Բանախօսներին, արուեստագէտներին, երաժիշտներին ինքն էր ընտրել, ինքն էր տէր կանգնել երաժշտական ձեւաւորմանը: Այսինքն՝ Սրբազանը Նարեկացուն վայել եւ «Մատեանին» վայել մթնոլորտ էր ստեղծել:

Անոգեղէն մեր ժամանակներում, երբ մեր ականջները ծուլացել ու ճանձրացել են քաղաքական ճառերից ու նվնվոցներից, իսկապէս ոգեղէն մի օր ապրեցինք:

Քայլում էինք Մուղնու վանքի մամռակալած քարերի արանքով ու զրուցում: Զրոյցը թերթի համար չէր թէեւ, սակայն, ճիգ ու խորիմաստ զրոյց էր : «Այնքան շատ բան էք արել Սրբազան», ասացի՝ սոսկ փաստելով կատարուածը, եղածը, այն, ինչ բացարձակ իրողութիւն է: «Է՛, դեռ ինչքա՜ն բան կայ անելու: Տէրը եթէ մի քիչ ժամանակ բաշխի, ապա շատ ու շատ բան կարելի է: Այ, տե՛ս, դու ասում ես, որ մենք արեւելահայերէնով դեռ չունենք «Վարք Սրբոց»: Պէտք է մեզ, պէտք է անել...»:

Խօսեցինք հայ մշակութային եղեռնի մասին, որովհետեւ 19-րդ դարավերջից մինչեւ օրս Հայաստանի, Հայաստանին յարակից շրջաններում, անգամ հեռու հեռաւոր ափերում հայ մշակոյթի աւերումներ են արձանագրում: Սրբազանը խոստացաւ կարդալ պատրաստի գիրքը...Աւաղ...:

Գտնում էր, բերում, տպագրում էր հայ հոգեւոր մշակոյթի մասին ամեն մի արժանաւոր գիրք, տէր էր կանգնում, գրքերի տպագրութեան համար հովանաւորներ էր գտնում ե՛ւ Հայաստանում, ե՛ւ, յատկապէս, Սփիւռքում:
Ու մեր սեղանին արժէքաւոր շատ ու շատ գրքեր էին դրւում Սրբազանի հոգողութեամբ: Թուարկեցինք մի քանիսը միայն, որովհետեւ յիսունից աւելի գրքերի անուանումներն արդէն անչափ շատ տեղ կը զբաղեցնէին:

Սերգէյ Գալոյեան
«Ազգ» օրաթերթ, Դեկտեմբեր 4, 2003թ.

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐ

Սփիւռքի Անգին Նուէրը

Սրբազան Մեսրոպ Աշճեան...

Գրեցի էս անուն ազգանունը ու մի պահ կանգ առայ, մտածեցի ի՞նչ ու ինչեր է տուել Սփիւռքը Հայրենիքին... Այո, նիւթական օգնութիւն ինչքան որ ասես, աւելի ճիշտ ինքան, որ կարողացել է, բարոյական աջակցութի՞ւն... Այո անսահման: Սէր, նուիրում, յարգանք, ակնածանք, յոյս, հաւատ... վերջ չունի:

Ու յանկարծ անուններ յիշեցի՝ իհարկէ հայկազնորդի փառապանծ անուններ՝ Քըրք Քրքորեան, Ալեք Մանուկեան, Լուիզ Սիմոն, Վահագն ու Հրայր

եղբայրներ, Նալբանդեաններ, Արա Աբրահամեան, Հանճարեղ Շառլ Ազնաւուր ու էլի շատ ու շատ հայրենիքի հոգսերով ապրող բարերարներ- ո՞ր մէկին յիշես:

Յետոյ սկսուեց խրախճանք ու հրճուանք հոգեւոր մեր աշխարհում ու յաղթանակներ արմենականների երկրում քանզի եկան նրանք, վիզները դրին մեր լծի տակ ու մեզ հետ միասին հայակուլ ու հայանախատ մեր շրջապատում իրենց տաղանդով հաստատեցին հայոց հոգին էս հողակտորի վրայ, որը հպարտօրէն իրեն կոչում է Երկիր Նայիրի:

Անուննե՞ր... Փափազեան, Հրաչեայ Ներսիսեան, Յոլակ Ամերիկեան, Կոթիկեան ու էլի շատեր: Իսկ մեր օրերում՝ Զէքիջեան Յովհաննէս, Յակոբ Յակոբեան, Ճգնաւորեան Լօրիս, Պերճ Զեյթունցեան եւ դարձեալ շատ-շատերը: Մարդիկ՝ շինականի էութեամբ...

Ուրեմն միշտ մտքներումս պահենք, որ Սփիւռքը մեզ տալիս է անհատներ, որոնք իրենց հզօր տաղանդով մխրճւում են մշակոյթի մեր աշխարհը, հարստացնում են այն իրենց հետ բերած նոր աշխարհընկալումներով, աւելի արդիական գեղագիտութեամբ, իրենց բարձր ճաշակով:

Էդպիսի մի նուէր էր մեզ՝ փառահեղ մարդ, իսկականից ՍՐԲԱԶԱՆ, մեր ժողովրդի զաւակ, ժողովրդի ցաւերին տէր Մեսրոպ Սրբազանը (Սիրելի Մեսրոպ, կարծես թէ քեզ հետ կապ չունեցող էս ինչքան բաներ խօսեցի մինչեւ քեզ հասնելը):

Հայրենիքում ապրելու իր կարճ տարիներին /աւաղ/, գործեր արեց մեծ-մեծ ու բոլորն էլ ազգօգուտ, բոլորն էլ բարի:

Կան մարդիկ, որ իհարկէ մէկ առ մէկ գիտեն նրա կատարած գործերը, թող չմոռանան ու մի տեղ գրանցեն ապագայի համար:

Իմ գիտցածը նրա մարդկային մաքրամաքուր էութիւնն է, իմ իմացածն ու տեսածը նրա նուիրումն է Հայոց մշակոյթին, բարիացակամութիւնն է, որ սփռում էր շրջապատին, Մուղնու վանքն է նրա շնորհիւ շքեղ վերանորոգուած, եւ հայերի պատմութեամբ արդարամիտ մշտապէս տէր էր «Հայոց Դատին», սրտում յաւիտեան կրելով Հայոց Եղեռնի ցաւերն ու կորուստները:

Իմ տեսածը նրա բարի ժպիտով լուսաւորուած դէմքն էր, դէմք որ երբեւիցէ հնարաւոր չէ մոռանալ, կամ ջնջել յիշողութիւնից, որովհետեւ աչքերն իմաստուն էին, ողջ կերպարը՝ սրբի:

Շնորհակալ լինենք Հայոց Սփիւռքին, որ ծնել-սնել, մեր էդ տեսակ զաւակին օժտել էր մարդկային էդքան բարեմասնութիւններով:

Հայրենիքում տուն էր կառուցել, բնակութիւն հաստատել, ինչքան է խորը մեր ցաւն ու ափսոսանքը, որ Սրբազանը իր հետ անթիւ դասեր էր բերել ու մենք չհասցրինք դրանք բոլորն առնել...

Վշտանանք, որ էդպէս անսպասելի, յանկարծակի, անժամանակ հեռացաւ մեզանից: Էդ հզօր հոգիները որքան են պէտք էսօր էլ Հայութեանը:
ՄԵՍՐՈՊՆԵՐԸ...

Սօս Սարգսեան
վաստակաւոր դերասան

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի Յիշատակին

Թէեւ իր մտերիմները գիտէին, եւ իր մտերիմներուն թիւը շատ մեծ էր, որ Սրբազանը հիւանդ է, բայց ինքը ապրելակերպով, իր գործունէութեամբ, բարեգործութիւններով մոռցնել էր տալիս իր առողջութեան մասին, իրեն կեանքին սպառնացող վտանգի մասին եւ անշուշտ իր ցաւալի մահը անակնկալի բերեց իր երկրպագուները: Յանկարծ իր հայրենակիցները զգացին, որ ինչ մեծ կորուստ էր Սրբազանին մահը, հեռանալը մեզանից: Որքան հայրենակիցներ յանկարծ զգացին իրենց որբանալը՝ զրկուելով իրենց պաշտպանէն... իրենց հովանաւորէն, իրենց հոգեւոր հօրմէն: Չեմ կարող ասել, որ Սրբազանին մտերիմներէն էի, ծանօթ չէի իր կեանքին, իր գործունէութեան: Յատուկ չեմ հետաքրքրուած իր կեանքով, բայց կրնամ ըսել, որ փոխադարձ համակրանք կար մեր ընտանիքին եւ իր միջեւ: Ինչպէ՞ս սկսեց մեր ծանօթութիւնը եւ բարեկամութիւնը, կը պատմեմ:

Սրբազանը մանաւանդ մեծ գործունէութիւն ծաւալեց հայրենի հողի վրայ★ Երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեց Գարեգին Առաջինը և նստեց Ս. Էջմիածնի աթոռին, իր հետ եկաւ հայրենիք Մեսրոպ Սրբազանը՝ Վեհափառին ամենամօտ եւ հաւատարիմ օգնականը եւ սկսաւ իր մտաւորականի գործունէութիւնը հայրենի հողին վրայ★ Գարեգին Ա. վեհափառի անժամանակ մահը պատճառ եղաւ, որ շատ մտագիծեր կիսատ մնան, որոնց իրականացման մէջ մեծ դեր պէտք է ունենար Մեսրոպ Սրբազանը: Ես այդպէս եմ ենթադրում: Անշուշտ իր ուսուցչին, իր մեծ բարեկամին կորուստը պահ մը ընկճեց Սրբազան հօր, բայց նա շուտով վերսկսեց իր մշակութային և հոգեւոր գործունէութիւնը՝ քաջալերուելով ազգընտիր Գարեգին Երկրորդ եռանդուն կաթողիկոսէն:

Մեսրոպ Աշճեան Սրբազանը՝ ազգին նուիրեալ հոգեւոր հովիւը, մինչեւ հայրենիք հաստատուիլը, ունեցած է եռանդուն գործունէութիւն: Եկեղեցիի բարձրաստիճան սպասաւոր պատասխանատու պաշտօններ վարած է Թեհրանից, մինչեւ Նիւ Եորք՝ միշտ արժանանալով իր հօտին յարգանքին եւ սիրոյն:

Առաջին անգամ Մեսրոպ Աշճեան Սրբազանին անունը լսել եմ մեր նշանաւոր բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանի բերանից, ինքը գովում էր եւ հիացած

Սրբազանի մի աշխատասիրութեամբ՝ նուիրուած 19-րդ դարի նշանաւոր մտաւորական գործիչ Մեսրոպ Թաղիադեանի կեանքին. ասում էր, որ շատ արժէքաւոր հայագիտական աշխատութիւն է: Ես անձնապէս ծանօթ չէի Սրբազանին: Նրան ֆիզիքապէս ծանօթանալս ալ նորից պարտական եմ Ռազմիկին, որուն ընտանիքին հետ՝ հրաշալի Յասմիկին եւ իրենց Մհեր որդու հետ, մօտ հարեւաններ դարձանք իբրեւ նոյն շէնքին բնակիչներ: Շատ մտերիմ յարաբերութիւններու մէջ էինք մօտ 18 տարի: Մեր տուներէն ներս կատարուող բոլոր հիւրասիրութիւններուն մենք զիրար հրաւիրում էինք: Ժամանակ մը Ռազմիկ Դաւոյեանը Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէում մամուլի բաժնի վարիչ էր, եւ առիթը ունեցաւ այցելելու Սուրիայի եւ Լիբանանի հայկական գաղութներուն, համայնավար գրող Գառնիկ Ադդարեանի կազմակերպած հրաւէրով:

Է՛հ, Ռազմիկ Դաւոյեանի համբաւը Ս. Հայաստանի սահմաններից դուրս էր շուտուանից, այնպէս որ քիչ ծանօթներ չունէր մանաւանդ Միջին Արեւելքի հայահոծ գաղութներում: Մինչեւ Լիբանանում սկսած քաղաքացիական եղբայրասպան պատերազմը հայութիւնը հասել էր տնտեսական եւ մշակութային իրական յաջողութիւններու: Ռազմիկ Դաւոյեանին համար դժուար չէր նուաճել Պէյրութի մտաւորականութեան սիրտը: Անխտիր: Ս. Հայաստան՝ տուն վերադառնալուց ոչ շատ ժամանակ անց, իր արտասահմանի նոր ծանօթներից փոխադարձ այցելութիւններու սկսեցին գալ Ռազմիկին տունը, ուր ժպտումներս եւ մարդամօտ Յասմիկը բացառիկ ջերմութեամբ ընդունում էր հիւրերը, հիւրասիրելով նաեւ ճոխ եւ համեղ ուտելիքներով: Ինչպէս ասի, մեր ընտանեկան սերտ կապերու շնորհիւ մեր ընտանիքին էլ բախտ վիճակուեց ծանօթանալու բանաստեղծի հիւրերուն, որոնց մեր հերթին մենք էլ բնականաբար հիւրասիրում էինք: Մեր բարեկամական շրջանակն էլ սկսում էր մեծանալ: Ահաւասիկ, Ռազմիկին շնորհիւ իմ նոր ծանօթները եղան նախ Տաթեւ Սրբազանը, յետոյ Մեսրոպ Սրբազանը, նաեւ Արտաւազդ Սրբազանը, որ այդ ժամանակ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքի տեսուչն էր: Մի օր էլ Ռազմիկը ասաւ, որ զբաղուածութեան պատճառով ինքը չի կարող մասնակցիլ շրջապտոյտին, որ կազմակերպուած էր Մեսրոպ, Տաթեւ եւ Արտաւազդ սրբազանները Հաղպատ եւ Սանահին վանքերը տանելու համար: Երեւան քաղաքի գլխաւոր ճարտարապետ Ջիմ Թորոսեանը, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանեանը եւ ձեր խոնարհ ծառան ալ մաս պիտի կազմէին խմբին: Ուրեմն, յաջորդ օրը ժամը 9-ին, ըստ պայմանաւորուածութեան, Ս. Էջմիածնի բակում էի, ուր եւ հանդիպեցի Ջիմին, Ռոբերտին եւ Տաթեւ, Մեսրոպ եւ Արտաւազդ սրբազաններուն, մի ուրիշ անծանօթ ընկեր ալ կար, որ Մեսրոպ Սրբազանին ծանօթն էր:

Այն ժամանակից, երբ Մեսրոպ Սրբազանը Անթիլիասի թեմ եղող Իրանի թեմին հոգեւոր հովիւն էր, այս մեր նոր ծանօթը ըլլալով Սովետական դեսպանատան պաշտօնեայ, ծանօթացել էր Մեսրոպ Սրբազանին հետ: Մէկ խօսքով՝ հին ծանօթութիւն: Ծանօթացանք, ողջագուրուեցինք եւ մեզի տրամադրուած երկու ավտոներով ճամբայ ընկանք: Այս, ինչ-որ պատմում եմ, սիրելիներ, ճիշտ թուականը չեմ յիշում, բայց հաստատ յիշում եմ, որ դա այն ժամանակներն էին, երբ մենք տակաւին հպատակներ էինք երկրագնդի միւս մասերից երկաթեայ վարագոյրով բաժանուած պետութեան: Մի քիչ անսովոր եւ տարօրինակ վիճակ էր բոլորիս համար: Հայ Առաքելական Եկեղեցու Կիլիկեան Կաթողիկոսութեան երեք բարձրաստիճան հոգեւորականները, անշուշտ, սովետական իշխանութեան համար պարզապէս թշնամիներ էին: Է՛հ, իբր սովետական իշխանութիւնը իրեն բարեկամ էր համարում իր հպատակները:

Վստահաբար երջանկայիշատակ Վազգէն Առաջին կաթողիկոսը տեղեակ էր եղածէն եւ հետեւում էր: Ամենայն դէպս մեզի՝ հայաստանցիներուս համար ալ վիճակը անսովոր էր: Բայց ի՞նչ էր եղածը. չէ՞ որ մենք բոլորս հայեր էինք: Ինչ որ է, շարունակեմ: Ճամբայ ելանք, շատ չ՛երկարեմ. Կիրովական չհասած մի աղբիւրի մօտ ավտոներից իջանք, ջուր խմեցինք, կարծեմ մի քիչ ուտելիք կար մեզ հետ, ոտքի վրայ կերանք եւ շարունակեցինք մեր ճամբան: Հրաշալի պայծառ եղանակ էր: Մի տեղ ալ ավտոները կանգնեցին վառելանիւթ վերցնելու համար: Այստեղ էր, որ պատահեցաւ մի զուարճալի դէպք: Մեսրոպ Սրբազանը նկատելով մի թերթավաճառի կրպակ, խումբից հեռանալով ուղղուեց այնտեղ եւ շուտով վերադարձաւ: Հարցնում ենք՝ Սրբազան, ի՞նչ է պատահել, բա՞ն էիք ուզում: Եղբայր, ասում է, թերթավաճառին հարցրի ֆինանսական այսինչ թերթը ունէ՞ք, յետոյ ուզում էի տեղանքի քարտէսը գնել: Ծիծաղեցինք, ուրախացանք, բան չկայ ասացինք, Սրբազան, դուն երեւի կարծում ես, որ տակաւին Ամերիկայում ես: Մի քիչ կատակեցինք: Է՛հ, ի՞նչ իմանար Սրբազանը, որ մենք՝ երեւանցիներս, սովորական Երեւան քաղաքի քարտէսը չունէինք, եւ եթէ կար էլ, յատուկ աղաւաղուած, որ դուրսէն եկող «էշփիոնը» լաւ «էշանար»: Ինչ որ է, առաջին վանքը, որ մտանք, Օձունն էր: Այստեղ իսկապէս անակնկալ անմոռանալի բան պատահեց: Եթէ մենք՝ հայաստանցիներս, մի վիճակի մէջ էինք, ներքուստ ամենայն դէպս լարուած իբրեւ սովետական քաղաքացիներ, իրենք՝ սրբազանները, բոլորովին ուրիշ արտասովոր ապրումներու մէջ պէտք է որ ըլլային, իրենց համար, երեւի, ապրում էին իրենց կեանքի ամենաարտասովոր եւ անմոռանալի պահերը: Գտնուել Ս. Հայաստանում, հայրենիքում, որ օտարութեան մէջ ապրող ամէն հայու երազն էր այդ տարիներուն եւ այցելել մեր պատմական սրբատեղիները, պէտք է, որ զիրենք շատ յուզած ըլլար: Ինչ որ է, երբ հասանք Օձունի վանքը, դուռը փակ էր,

լուր ուղարկեցինք եւ պահակը եկաւ, դուռը բացաւ եւ մտանք եկեղեցի: Հիացմունքով դիտում էինք, երբ մեր երիտասարդ սրբազանները որոշեցին աղօթել եւ իրենց ուրախութիւնը յայտնել երկնաւորին: Կողք կողքի կանգնեցին եկեղեցիի մէջտեղը եւ սկսեցին երգելով աղօթել: Մենք երեքս՝ Ջիմը, Ռոբերտը եւ ես, մի քանի մեթր իրենց ետեւը կանգնած հետեւում էինք արարողութեանը յուզումով, եւ երբ վերջացաւ ծիսակատարութիւնը եւ եպիսկոպոսները լռեցին, մէկ էլ մեր ետեւից թռչուններու թեւաբախումներու պէս ծափահարութիւն մը. իսկապէս անհաւատալի. յետ դարձանք, տեսնում ենք մի 20 մանկապարտէզի երկսեռ երեխաներ իրենց ուսուցչուհու հետ: Հրաշքը հոն էր. ինչպէ՞ս սուսուփուս մտել էին եկեղեցի եւ ոչ մէկս չէինք զգացել, կարծես երկնքից իջած փոքրիկ հրեշտակներ ըլլային: Եկեղեցին լեցուեց ուրախութեամբ եւ Հոգիով: Անմոռանալի պահ էր սիրոյ★ Երբ դուրս ելանք, մեզի ընկերացող ընկերը դրսում մեզ էր սպասում. երեւի չէր ուզեցել եկեղեցի մտնելով՝ յանկարծ կեղտոտուիլ: Աստուած իրեն հետ: Բայց մարդը գոնէ անկեղծ էր: Ինչ որ է, այդ գեղեցիկ տեղէն մեր ճանապարհը շարունակեցինք դէպի Հաղպատ, Սանահին:

Հաղպատում էլ ես զարմացայ, երբ մեր շուրջը հաւաքուել էին մի քանի տեղացիներ: Մեսրոպ Սրբազանը սկսեց հարցնել, որ էս սարը այսպէս չի՞ կոչւում, էս միւս սարին անունը այս չէ՞, եւ տեղացիները հաստատում էին Սրբազանին ըսածները: Ապշել էի, մեր Սրբազանը մեր վանքերու պատմութիւնը զարմանալի չէ, որ իմանար, բայց նաեւ գիտէր անուններով տեղանքը, այս արդէն ցոյց էր տալիս, որ նոյնիսկ հայրենիքից հեռու կան հայեր, որոնք ապրում են իրենց հայրենիքի ամէն մէկ հողի կտորով, իրենց համար ամբողջ Հայաստանն էր սրբավայր: Սրբազանը իրական հայրենասէր պատմաբան էր, մեր մշակոյթի գիտակ եւ նուիրեալ: Ինչ որ է, գրութեամբս, վախենամ, ձեզ ձանձրացնի, կարճ կապեմ: Որոշեցինք Երեւան վերադառնալ Սեւանով: Շարունակելուց մեր ճամբան, երբ արդէն անգամ մըն ալ հիացել էինք եւ լիցքաւորուել մեր սքանչելի եկեղեցիները դիտելով, մտանք մի սովորական «նախադու»՝ մի բան ուտելու համար: Կար պանիր, կանաչի, հաց եւ օղի. երբ նստեցինք ուտելու, մեր ուղեկիցը մի պահ մեզնից հեռացաւ: Մենք չեմ գիտեր ինչ մի բանի շուրջ լռելեայն համաձայնուած օղիի բաժակները առանք, լեցուցինք եւ մեր ծանօթութեան կենացը խմեցինք: Իրիկուայ մօտ հասանք Սեւան, որ ուրիշ սրբավայր մըն էր մեր օտարութեան մէջ ապրող եղբայրներու համար, եւ որոշեցինք այս անգամ նորմալ ճաշել: Մտանք «ռեստորան» մը ճուկ ուտելու: Մեր բախտէն նուագախումբ կար, եւ երբ նուագողները տեսան Ռոբերտ Ամիրխանեանը, եւ նա էլ մօտեցաւ իրենց, հասկցանք, որ քէֆ է պատրաստուում: Կերանք, խմեցինք, ուրախացանք: Անմոռանալի օր մըն էր կարծեմ բոլորիս համար: Երբ վերադառնում էինք Երեւան,

ըսի, որ այսօրուայ Օձունում պատահածը պէտք է նկարեմ, Օձունի եկեղեցիի ներսը սրբազանները եւ նկարին առաջամասին երկինքէն իջած մանկապարտէզի երեխայ հրեշտակները: Մի բան էր՝ ասացի: Վերջը, չերկարեմ, դրանից յետոյ նորից տեսել եմ Մեսրոպ Սրբազանին, երբ այցելում էր Հայաստան, միշտ սիրալիր, իր մեղմ բնաւորութեամբ եւ քնքուշ երազով:

Յետոյ եկաւ անկախութիւնը: Ատելի սովետական ռեժիմը կործանուեց: Վախճանուեց երջանկայիշատակ Վազգէն Առաջին կաթողիկոսը: Յետոյ Գարեգին Բ կաթողիկոսը եկաւ Անթիլիասից՝ բազմելու Էջմիածնի Սուրբ Աթոռին, իբրեւ հոգեւոր հովիւ՝ մեծ յոյսեր ներշնչելով իր հօտին: Արդէն այստեղ էր, իր կողքին մեր սիրելի Մեսրոպ Սրբազանը, որ եկել էր իր սիրելի կաթողիկոսին օգնելու իր բոլոր կարողութիւններով: Նորանկախ Հայաստանում երեւան եկաւ Սրբազանին մտաւոր, հոգեկան, բարոյական եւ մանաւանդ հայրենասիրական անսպառ ուժը:

Իր կատարած բարեգործութիւններուն ամբողջութեամբ ծանօթ չեմ, բայց գիտեմ, որ անթիւ են: Կարճ ժամանակի ընթացքին դարձաւ Հայ Եկեղեցու ամենափառաբանուած սպասաւորը★ Շնորհիւ իր բարեգործութիւններուն դարձաւ նաեւ Մուղնիի լքուած վանքին վանահայրը: Սրբազանը մեծ սիրով բարեկարգեց վանքը, գրեթէ վերածելով ուխտատեղիի՝ մանաւանդ Սփիւռքէն եկող իր ծանօթներուն համար: Ժողովուրդը, որ ամէն բան էլ տեսնում է, զինքը աւելի սկսաւ սիրել: Կ՚ուզեմ խօսքս աւարտել նաեւ մի դրուագով: Մի քանի անգամ Սրբազանը ինձ յիշեցնում էր, որ ես խոստացել էի Օձունի եկեղեցիի մէջ «հրեշտակներու» հետ պատահած պատմութիւնը նկարել: Երկար ժամանակ էր անցել, եւ փափաքս մարել էր: Վերջը մի անգամ էլ ըսաւ, որ շատ է ուզում տեսնել այդ նկարը՝ նկարուած իրեն համար: Արդէն դժուար էր ընդառաջ չգնալ իր փափաքին եւ նկարեցի այդ նկարը եւ իրեն տարի նուիրելու: Ուրախացաւ, բայց ըսաւ, որ պէտք է վճարէ նկարին համար: Այդպէս պարզապէս նուէր չ՚ընդունիր: Ես պնդեցի, որ չեմ նկարել փողի մասին մտածելով: Պնդեց, որ պէտք է վճարի նկարին համար: Ստիպուած համաձայնուեցի եւ ըսի, որ եթէ այդպէս է, Սարեան թանգարանի կտուրը վատ վիճակի մէջ է, Շահենը նորոգում է, բայց մի քիչ դրամ պակասում էր նորոգութիւնը աւարտելու համար: Սրբազան, ըսի, Շահենին հարցուցէք եւ այդ գումարը օգնութիւն մը ըլլայ Սարեանի տուն-թանգարանին: Այդպէս ալ եղաւ★ Սրբազանը այդ նկարը իր առանձնատանը կախած էր մինչեւ իր անսպասելի եւ վաղահաս մահը: Հանգիստ իր ոսկորներուն:

Յակոբ Յակոբեան

Ուսուցիչ էր Մեծատառով

Երբեմն նախախնամութիւնը քեզ պարգեւում է ծանօթութիւններ, որոնք ամբողջ կեանքում նրանք դառնում են քո հոգեւոր հարստութիւնը: Իմ ապրած երկար տարիների ընթացքում ես ունեցայ նման հրաշալի դէպք-իրողութիւն. դա Մեսրոպ Արք. Աշճեանի հետ հանդիպումս էր՝ իմ կեանքի վերջին 15 տարիների յայտնութիւնը, յայտնութիւն, որը պիտի լսէի նաեւ շատ ու շատ ուրիշներից եւս:
Առաջին անգամ Սրբազանին հանդիպեցի Նիւ Եորքում, 1989-ին, համազգային, ժողովրդական շարժման կիզակէտում: Վերին աստիճանի անհանգիստ էր Սրբազանը, հարց ու փորձ էր անում, օգնութեան ելքեր էր փնտրում, հոգեկան տառապանքի մէջ էր իր եղբայրների կողքին չլինելու պատճառով: Կարծում եմ, որ իր կեանքի միակ նպատակն ու առանցքը իր ժողովրդի, հայրենիքի մտահոգութիւնն էր, իսկ ինքը նրա անմնացորդ ծառան ու հարազատ զաւակը: Այդ թոհ ու բոհի մէջ Նիւ Եորքում կազմակերպեց անհատական ցուցահանդէսս, բարձր մակարդակով ապահովեց ազգային շրջանակների ներկայութիւնը, նման գործերի մէջ ինքը աննման էր, նուիրւում էր հոգով ու սրտով:

Սակայն Սրբազանի կեանքի հայաստանեան շրջանը նկարագրելու համար ինձ նաեւ անհրաժեշտ կը լինէր մշակութային կեանքի ամենատարբեր ոլորտները մտնել, տեսնել նոր հրատարակուած գրքեր, բացուած ցուցահանդէսներ, վերանորոգուած դպրոցներ, եկեղեցիներ, կանգնեցուած յուշարձաններ... մի խօսքով իր ներկայութիւնը ամենուր էր: Անձամբ ինձ պատուիրեց, որ ստեղծեմ երջանկայիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կիսանդրին՝ թուով չորս հատ. մէկը դրուեց մայրավանքի գրադարանում, փափագում էր նաեւ այդ արձանից տեսնել Ամաղու Նորավանքում՝ իր աղբիւր յուշարձանով... որ մէկը թուարկեմ: Իսկ այսօր ժամանակը թելադրեց, որ ստանձնեմ մէկ այլ պատուաբեր եւ միաժամանակ պատասխանատու գործ՝ քանդակելու իր՝ սիրելի Մեսրոպ Սրբազանի արձանը:
Բարձր մտաւորական էր, նոր ոգի էր բերել Հայաստան, մայր երկրի եւ սփիւռքի միասնականացման ջատագով՝ առանց ճոռոմ խօսքերի, այսօրուայ Հայաստանի մէջ ուզում էր ընդգրկել նաեւ պատմական Հայաստանի հոգեւոր նշխարները, ոտքով, ծայրից-ծայր, մի խումբ հայորդիներով պատմական Կիլիկիայից աղօթելով հասաւ Աստուածաշնչային Արարատի փէշերը որպէս ուսուցիչ, առաքեալ, մեր սրտերը լեցնելով ուրախութեան եւ ցաւի զգացումներով, նաեւ հպարտութեան:

Բարձր գիտելիքներու տէր մարդ էր, հոգեւորը եւ աշխարհիկը ներդաշնակւում էին նրա մէջ: Հայաստանում ապրելու շրջանում երկիրը լցրեց իրենով, իր անսահման հմայքով, տաք սրտով, սիրով:
Ես նմանին իմ կեանքում չէի հանդիպել: Ուսուցիչ էր մեծատառով:

Արա Շիրազ
Քանդակագործ

Անսահման Սէր Ու Բարութիւն Հաւատով Ժպիտ Ու Ներողամտութիւն Արքեպիսկոպոս Մեսրոպ Աշճեան

Այն ինչ ես պիտի յանձնեմ թղթին, դրանք չեն հաստատում վերը ասուած անվիճելի գնահատականները, այլ պիտի փորձեմ շարժանկարի պէս թերթել, արթնացնել յիշողութիւններս:

1998թ. առաջին անգամ Հայաստանի մշակութային օրերն էին Գերմանիայում: Մեր երգչախմբի հիւրախաղերի երրորդ քաղաքն էր Վիթենբերգը (Լիւթերշտադտ):

Երեկոյեան համերգը պիտի կայանար այն եկեղեցում, ուր յաճախ քարոզել էր Լիւթերը: Մեծ էր ուրախութիւնն ու զարմանքը, ինչը բնական է օտարութեան մէջ իւրաքանչիւր հայի համար, երբ երգչախմբի փորձի դադարին մեզ մօտեցաւ բացառիկ ջերմութեամբ, ժպիտով մի բարձրաստիճան հոգեւորական եւ խոստացաւ համերգին ներկայ լինել իր հիւրերի հետ: Աւելի ուշ ես տեղեկացայ, որ այդ անմիջական բարեհամբոյր, խոնարհ մարդը, որ յայտնի էր իր բարի գործերով, Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանն էր:

Սրբազանը նստած էր առաջին շարքում եւ նրա մանկան պէս պոռթկացող ուժգին ծափերը, որոնք ինչպէս ինքն ասաց, արդիւնք էին հպարտութեան, հիացմունքի, խանդավառում էր ե՛ւ կատարողներին ե՛ւ ունկնդրին: Համերգն աւարտուեց եւ ես անհամբեր, շնորհակալ ժպիտով մօտեցայ համերգն աշխուժացնող լաւագոյն ծափահարողին եւ անմիջապէս ստացայ հրաւէր՝ ցանկութիւն երեկոն միասին անցկացնելու: Մինչ ես մտածում էի ինչպէս ներկայացնել համերգից յետոյ երգչախմբի հետ լինելու պահանջ-աւանդոյթը, Սրբազանը բարձրաձայնեց՝ սրտանց հրաւիրելով ամբողջ երգչախումբը: Ճաշարանը շատ փոքրիկ էր՝ կարծես նախատեսուած լինէր մեր երգչախմբի համար: Տէրը եւ մատուցողները իտալացիներ էին, որոնց յիշողութեան մէջ դեռ երկար կը մնայ այդ երեկոն: Երգչախումբը երգում էր անընդմէջ՝ գրանցելով ժամանակի եւ ծրագրի իմաստով եւս երկու համերգ: Իհարկէ այս համերգի յայտագրի պատուիրատուն

Սրբազանն էր: Հնչում էին անընդմէջ հին ու նոր սիրուած երգեր: Սէյրան Աւագեանի հզօր, անկրկնելի ձայնը, բացառիկ կատարումները յայտնութիւն էին Սրբազանի համար, ինչը հետագայում վերածուեց հաւատարիմ ու մի մեծ բարեկամութեան:

Երեկոյի աւարտին Սրբազանը մեզ ուղղուած իր մաղթանքը աւարտեց՝ խոստովանելով, որ այսուհետ իր վրայ է վերցնում մեր երգչախմբի մշտական ունկնդրի պատուաւոր կարգավիճակը: Այդ օրուանից Սրբազանը դարձաւ երգչախմբի բարեկամն ու պահապանը:

Գարեգին Առաջին վեհափառ տիրոջ հովանաւորութեամբ աւարտել ենք կոմիտասեան մեծ ծաւալուն ծրագիրը (4 CD-ներ աշխարհիկ խմբերգերի):
Իմ նոր առաջարկը «XX Դարի Հայ Խմբերգային Ընտրանին» նոյնպէս արժանացաւ հաւանութեան, սակայն մէկ պայմանով. կաթողիկոսի ցանկութիւնն էր աշխատանքներն սկսել Բարսեղ Կանաչեանի խմբերգերից: Այդ հեղինակի նկատմամբ վեհափառն ունէր յիշողութիւնների մի ամբողջ աշխարհ, որով պայմանաւորուած էր յատուկ պարտքի զգացումը: Ձայնագրման աշխատանքները շատ արագ աւարտուեցին, պատրաստ էր մայր օրինակը: Սակայն թողարկման համար նախատեսուած գումարն անընդհատ ձգձգւում էր վեհափառ տիրոջ առողջականի պատճառով: Անցան ամիսներ:

1999-ին՝ Նոր Տարուայ տօնական օրերին մեր տան հիւրն էր Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը, որն իր հետ բերել էր Վեհափառի կողմից ուղղարկուած Բարսեղ Կանաչեանի CD-ի թողարկման ծախսերի գումարը: Ոգեւորութիւնից զատ փաստը շատ անսպասելի էր, ես զարմանքը դէմքիս՝ ընդունեցի փաթեթը: CD-ն թողարկուեց երջանկայիշատակ Գարեգին Առաջին կաթողիկոսի կենդանութեան օրով, սակայն ինձ չյաջողուեց այն փոխանցել նրան: Կայ մի յուզիչ դրուագ եւս: Մեսրոպ Սրբազանը, մահից երկու օր առաջ հասցրեց ցոյց տալ CD-ն վեհափառին, որն իր աչքում մարող վերջին ժպիտով հաստատեց գոհունակութիւնը: Անշուշտ շատ աւելի ուշ ես իմացայ, որ այս յուզիչ, գեղեցիկ պատմութեան հեղինակը Սրբազանն էր: Նրա կողմից այս ամենը արուել էր խոնարհութեամբ, բացառիկ հաւատարմութեամբ՝ գոհացնելու իր ուսուցչին, իր վեհափառին:

Սրբազանը շռայլ եւ կամեցող մարդ էր: Ես յիշում եմ իր նախաձեռնութեամբ մեր երգչախմբի խնջոյքները Սաղմոսավանքում: Սիրում էր անել ամեն բան, որպէսզի մարդիկ ժպտան, լինեն բարեացակամ, հաւատով, լաւատես ապագայի հանդէպ:

2001թ. Յուլիս 22-ն էր: Այդ օրը յիշարժան էր ոչ միայն այն պատճառով, որ մէկ օր անց պիտի երգէինք Իտալիայի աշխարհահռչակ «Լա Սկալա» օպերային թատրոնի երգչախմբի եւ սիմֆոնիկ օրկեստրի հետ, Ռիկարդո Մուտտիի

ղեկավարութեամբ: Ի դէպ այդ օրը պատիւ ունեցայ բացման արարողութեանը ղեկավարել անմահ Կոմիտաս վարդապետի «Հայր Մեր» խմբերգը: Երբ լրանում էր իմ ծննդեան յիսնամեակը, ես կրկին ականատես եղայ Սրբազանի մարդկային բարձր-վեհանձն կեցուածքին:

Մի անգամ Սրբազանի հիւրերի հետ բարձրացանք Արագածի լիճը: Ճաշի ժամանակ, անսպասելիօրէն Սրբազանը վատացաւ: Շնչահեղձ էր լինում: Բոլորս շատ անհանգստացած էինք, պահը շատ լարուած էր: Արագ պէտք էր իջնել քաղաք: Երբ կողքինների հետ քայլ էր անում դէպի մեքենան, յանկարծ կանգ առաւ, շրջուեց՝ հանգստացնելով ներկաներին, եւ ուժ գտաւ իր մէջ ձայնը յստակեցնելու, ժպիտը դէմքին ասաց.

- Կը խնդրեմ, որ շարունակէք խնջոյքը եւ ներողամիտ եղէք անհանգստութիւն պատճառելուս համար:

Ես հիացած էի...

Այսպիսին էր նա առօրեայում, կեանքի շատ տարբեր դրուագներում. միշտ ձիգ, հոգատար, դիմացինին երբեք նեղութիւն չպատճառելու նրբանկատութեամբ: Յիշողութիւնները շատ են եւ միշտ ներկայ, ես զգում եմ այդ մարդուն, ես իրօք տեսնում եմ իրեն մեր կողքին:

Հպարտութեամբ եւ խոնարհութեամբ պիտի խոստովանեմ, որ եղել եմ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի մտերիմների ցանկում:

Յարութիւն Թօփիկեան
Երեւանի Կամերային Երգչախմբի
գեղարուեստական ղեկավար եւ խմբավար

Ապրեց Իրօք Սրբի Կեանքով

Սրբազան: Այսպէս էինք դիմում բոլորս Գերաշնորհ Տէր Մեսրոպ Արք. Աշճեանին: Եւ ոչ միայն նրա համար, որ դա նրա հոգեւորականի կոչումն էր: Սրբազանն այն մարդն էր, որ ապրեց իրօք սրբի կեանքով, իր ողջ կեանքը նուիրաբերեց հայրենիքին, հայրենի ժողովրդին: Շրջում էր աշխարհով մէկ՝ Ամերիկա, Եւրոպա, Աւստրալիա, Ասիա, հայերով շատ նօսր բնակեցուած Ճապոնիա եւ Մալայզիա, դրամ էր հաւաքում, բերում Հայաստան, որ թեթեւացնի իր սիրելի հայրենիքի հոգսը:

Գրական-գիտական գործունէութիւն, գրահրատարակչական գործ, եկեղեցիների նորոգութիւն, դպրոցներ, որբանոցների հիմնում եւ հետագայ գործունէութեան ֆինանսաւորում, ուխտագնացութիւններ, յատկապէս դէպի

կորուսեալ հայրենիք, բարեգործական եւ մշակութային բազմապիսի ու բազմաթիւ ծրագրեր Հայաստանում եւ Արցախում, եւ սա դեռ բոլոր ոլորտները չեն, ուր իր բեղուն գործունէութիւնն էր ծաւալել անխոնջ եւ աննկուն այդ մեծ մարդը՝ Մեսրոպ Արք. Աշճեանը:

Նա, իսկական զինուորի զգացողութեամբ այն առաջին հայորդիներից էր, որ հասկացաւ՝ Արցախեան շարժումը վաղ թէ ուշ պիտի վերաճի ռազմական բախման եւ շատ բան արեց Արցախահայութեան աջակցելու ուղղութեամբ: Նրա այս ոլորտի գործունէութեան օգնականն ու վկան եմ եղել: Սրբազանի նախագահութեամբ եւ իմ տնօրինութեամբ ստեղծուեց «Վարարակն» բարեգործական հիմնադրամը: Հիմնադրամի ծրագրով վարչութեան անդամներս եղել ենք Ստեփանակերտում, Մարտունիում, Հադրութում, իսկ Շուշի, Մարտակերտ քաղաքներում, ինչպէս նաեւ Արցախի 40-ից աւելի գիւղերում օգնութիւն հասցրել ենք անխտիր բոլոր բնակիչներին:

Մարդկանց հետ յարաբերուելու իր իւրայատուկ կերպն ունէր: Շատ կարճ ժամանակում մտերիմ յարաբերութիւններ էր ստեղծում, կապւում նրանց հետ: Անխտիր յիշում էր բոլորին, թէկուզ մէկ անգամ հանդիպած մարդուն. մեծի հետ մեծ էր, փոքրի հետ փոքր: Յիշում եմ, ինչպէս էր խաղում երեք տարեկան Թոռնիկիս հետ եւ ինչպէս էր Թոռնիկս իր բոլոր խաղալիքներն ուզում նուիրել Սրբազանին: Նուիրում էր, որովհետեւ մի քանի րոպէների ընթացքում ստեղծուել էր փոխադարձ վստահութիւն եւ սէր:

Ես հպարտ եմ, որ ճանաչել եւ համագործակցել եմ Մեսրոպ Արք. Աշճեանի հետ: Այդ մեծ մարդու հետ շփուելով մի քիչ աւելի լաւն եմ դարձել, քան մինչ նրան ճանաչելս:

Լօրենց Առուշանեան
ՀՀ Ժողովրդական արտիստ

Մաքրում Եւ Իմաստաւորում Էր Մեր Կեանքը

1984 թուականին եմ հանդիպել (Նիւ Եորք) Գերաշնորհ Մեսրոպ Արք. Աշճեանին: Երկար գրեցի անունը – ինքը ինձ համար եւ կարծում եմ մնացած բոլորի համար մնաց Սրբազան:

Արուեստագէտների, մտաւորականների Սրբազան ընկերը: Նրա առօրեայ, բայց ոչ սովորական գործունէութեան մասնակիցները երեւի թէ առաջին անգամ հասկացանք, թէ ինչ է նշանակում հոգեւոր առաջնորդը, լուսաւորիչը, «ոչ միայն հացիւ» ապրող անհատականութիւնը: Եւ այդ ամենը առանց աւելորդ

պատեթիկայի ու թատերայնութեան: Մեր անհաւատ սերունդը շատ ունէր նրա կարիքը: Նրանով հասկացանք թէ ինչ է նշանակել Հայոց Եկեղեցին մեր ժողովրդի կեանքում: Հասկացանք, որ եկեղեցին պատմա-ճարտարապետական յուշարձան չի, նախ եւ առաջ հոգեւոր հովիւն է ու նրա կապը մարդու հետ:

Հասկացանք, որ հայրենիքը մեծ-մեծ խօսքեր ու ճառեր չեն, ծառայութիւն է՝ ծառ տնկելուց մինչեւ որբին կնքելը, նրանց համար տուն կառուցելը, նրանց պսակելը, գրադարան ստեղծելը, երիտասարդների գրքեր հրատարակելը:

Որոշել էր հայկական սրբապատկերային նկարչութեան աւանդներից դուրս մի քայլ էլ անել: Ինձ ստիպեց այդ քայլը անել. 15 հատ Դետրոյթի Սուրբ Սարգիս եկեղեցու համար, 13-ն էլ Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու համար: Նկարեցի, երեք տարի աշխատեցի եւ ինձ համար նաեւ ուսումնառութեան տարիներ էին:

Շատ դժուար է առանց իր ներկայութեան՝ պարտաւորեցնող, նրբանկատ ու լուսաւոր հայեացքի:

Մաքրում եւ իմաստաւորում էր մեր կեանքը:

Սամուէլ Պետրոսեան
Երեւանի Փ. Թերլէմէզեանի անուան
Գեղարուեստի պետական ուսումնարանի
Տնօրէն

Էլ Զենք Լսելու Նրա Փափուկ Ձայնը

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան

Այսպիսի մարդիկ քիչ կան:

Սակայն պատմութեան ամեն մի հատուածում լինում է այսպիսի մի լուսաւոր կէտ:

Աւելին՝ հիմնականում այսպիսիների ջանքերով է ժողովուրդը պահպանում իր մշակոյթը, պատմութիւնը եւ ինքնագիտակցութիւնը:

Եթէ մեր պատմութեան մէջ եղել են մութ էջեր, ուրեմն այդ ժամանակ չեն եղել նման լուսաւոր մարդիկ: Նրանց առկայութիւնը խիստ կարեւոր է© մի կողմից նրանք օրինակ են ծառայում նրանց, ովքեր պատրաստ են անշահախնդիր ծառայել սեփական ժողովրդին, միւս կողմից նրանց կեանքը եւ գործունէութիւնը մեղադրութիւն է բոլոր նրանց, ովքեր կեղծ մարգարէներ են, կամ կարող էին, բայց չարեցին, անտարբեր էին կողքինի ցաւին:

Եթէ փորձենք ամփոփել Մեսրոպ Արք. Աշճեանի Երեւանեան շրջանի գործունէութիւնը, կը տեսնենք, որ նա այդ տարիներին Հայաստանի համար կատարել է հսկայական աշխատանք: Անհաւատալի է, որ մեկ մարդ կարող էր ոգեւորել, կազմակերպել, ֆինանսաւորել եւ հասցնել աւարտին այդ քանակութեամբ բազմաբնոյթ աշխատանքներ:

Ինչո՞ւմն էր գաղտնիքը:

Նա անշահախնդիր էր,

Նա ազնիւ էր,

Նա չափազանց մեծ գիտելիքներ ունէր,

Նա աշխատասէր էր,

Նրան վստահում էին այն մարդիկ, որոնք պատրաստ էին բարեգործութեամբ զբաղուել, բայց վստահ էին, որ իրենց նուիրաբերած գումարները նպատակին կը հասնեն:

Նա չափազանց բարի էր:

Նա մանուկ էր:

Պատկերացրէք եթէ այսօր Հայաստանում յայտնուէին 10 Մեսրոպ Աշճեաններ, ինչե՞ր կարող էին անել©©©

Ուր կարող էին հասնել©©©

Բայց դա երազ է:

Էլ չենք տեսնելու նրա ժպիտը,

Էլ չենք լսելու նրա փափուկ ձայնը:

Զաւէն Սարգսեան
Լուսանկարիչ, Փարաջանովի Տուն-Թանգարանի
տնօրէն
10. 02. 2005

Սփիւռք

Եկեղեցականը եւ Պատուանդանը
(Մեսրոպ Արք. Աշճեանի Յիշատակին)

Անոնք, որոնք ճանչցան Հոգելոյս Սրբազանը, ապրեցան անոր մտերմութիւնը եւ հետեւեցան կեանքի հանգրուաններուն, անպայման մեզի հետ

պիտի հաստատեն, որ ան առօրեայ իր կենցաղով ու ծառայութեանց հարուստ «ցուցակ»ով, Կիլիկիոյ միաբանութեան պարծանք ըլլալէ ետք, եղաւ պատիւ մը համայն հայ եկեղեցականութեան համար★ Պատահական չէր, որ Սփիւռքէն Հայաստան իր անունը դարձաւ հանրածանօթ, եւ ժողովուրդը այդ անունին կապուեցաւ սիրով ու ակնածանքով, քանի որ իր անձին մէջ տեսաւ աստիճանաւոր կրօնականէն անդին՝ պարզ եկեղեցականը, սրտցաւ ծառայողը, հաւատաւոր նուիրեալը★ Եզակի անձնաւորութիւն մը, որ իր ծառայութիւնները իբրեւ առաքինութիւն «վաճառելու» փորձութիւնը չունեցաւ երբեք★ Ստանձնած բոլոր պաշտօններուն մէջ եւ կրօնական աստիճանակարգերուն վրայ՝ ծառայութեամբ իմաստաւորեց եկեղեցականի հանգամանքը եւ իրեն տրուած իշխանութեան մէջ տեսաւ ծառայութեան ասպարէզը միայն★ Պարզակեաց ու համեստ, իր կենդանութեան վկայեց արդէն, թէ ինք ընտրեալ սակաւներէն էր բազում կոչեցեալներու մէջէն★

Բոլորս ալ «կոչեցեալներ» կը համարուէինք դպրեվանքին մէջ, բայց խոստովանինք, բոլորս չէ, որ կոչեցեալի արժանաւորութեամբ կ՚ընկալէինք իմաստը մեզի տրուած կոչումին՝ ժառանգաւոր(ներ)★ Բառը ինքնին կը թելադրէր պատասխանատուութիւն եւ կը ստեղծէր պարտաւորութիւն, որ մենք՝ ժառանգորդներս, իւրացնելէ ետք մեզի փոխանցուող ազգային ժառանգը, հոգեմտաւոր հարստութիւնը, ըլլայինք նաեւ պահակները ատոր, միանգամայն՝ տարածիչները. ժառանգաւորներ★

Այժմ, 45-46 տարիներու հեռաւորութենէ կը վերյիշեմ ու կը պատկերեմ դպրե-վանքի կեանքը★ Երեւութապէս շատ բան պիտի չխոստանայ անոր նկարագրութիւնը★ Ամէն օր միեւնոյն կանոնին ենթակայ ժամանակացոյց մը, վաղ առաւօտեան ժամերգութենէն մինչեւ իրիկուան ինքնաքննութեան ու խոկումի վերջին պահը★ Սակայն երեւութականէն անդին, դպրեվանեցիներս գիտէինք, որ գործադրուող այդ ժամանակացոյցը մեզի ուղղուած հրաւէր մըն էր մաքառումի, որպէսզի զարգացնենք գիտելիքներու մեր մտապաշարը★ Իսկ այն, ինչ որ բառերու իմաստին մէջ աքցանելով կարելի չէ նկարագրել, հոն տիրող մթնոլորտն էր, որուն իւրայատկութեան մէջ հոյլ մը ուսուցիչներու ջերմեռանդութիւնը եւ տեսուչ հայր սուրբերու ոգեշնչող մտերմութիւնը ժառանգաւորներս կը մղէին մշտական ճիգի՝ մշակելու համար անհատական մեր «ես»ը՝ ազգային ու մարդկային արժէքներու հաւատարիմ մնալու կամքով★ «Ես»ի այդ մշակումը թէեւ կը զարգանար զուգահեռ հասկացողութեամբ, բայց եւ այն գիտակցութեամբ, որ իրաւունքը դէպի անձը ուղղուող, սեփականին վերաբերող պահանջ է, մինչ պարտաւորութիւնը կը տարածուի անձէն դուրս, դէպի ուրիշը, դէպի հանրութիւնը★ Եւ այս իմաստով ալ դպրեվանեցիին նկարագիրը կը կերտուէր այնպէս, անհատականութիւնը կը

կազմաւորուէր այն կռուաններով, որ հետագային կարենար իր «ես»ը ժխտել՝ բարձրացնելու համար հանրային «ես»ը, որուն մարմնաւորողը պիտի ըլլար նաե՛ւ ինք, իբրեւ ազնիւ եկեղեցական թէ հանրային գործիչ՝ ժողովուրդի ծառայութեան ընթացքին★

Հրայրը, Մեսրոպ Սրբազանին աւագանի անունը, ուսանողական տարիներէն կը յատկանշուէր զարմացնող աշխատունակութեամբ, որ ինքզինք ճանչնալու, հաւատքով ամրանալու, նկարագիրով ազնուանալու եւ համեստանալու ուղիղ ճամբան է, քանի որ աշխատունակութեամբ ձեռք կը բերուի գիտութիւն★ Եւ մարդ որքան շատ խորանայ գիտութեան մէջ, այնքան աւելի կ՛անդրադառնայ, որ ինչ գիտէ մարդոց ու աշխարհի մասին եւ ինքզինք կը ճանչնայ, իսկ հանրային կեանքի մէջ որքան շատ գործեր կատարէ, այնքան աւելի կը համոզուի, որ բազում կարիքներու դիմաց չնչին են իրագործումները, եւ կը համեստանայ★ Հրայրին աշխատունակութիւնը յոգնութիւն չճանչցաւ երբեք★ Ընդհակառակն. յատկապէս կուսակրօնութիւնը ընդունելէ ետք, վարդապետութենէն արքեպիսկոպոսին, տարիներու երկայնքին նորովի թափ ստացաւ եւ համահայկական ընդդրկումով մը տարածուեցաւ ազգային ու կրօնական բազմաթիր մարզերու վրայ★

Նախքան ժառանգաւոր դառնալը, պատանի Հրայրին նկարագիրը շաղախուած էր արդէն ե՛ւ ազգային-յեղափոխական, ե՛ւ կրօնական մթնոլորտի մէջ★ Եղած էր ժրաջան անդամներէն Պէյրութ քաղաքի Հ.Յ.Դ. Բաբգէն Սիւնի պատանեկան միութեան★ Այդ միջավայրին մէջ, յեղափոխական մեծ դէմքերու, մեծ գործերու մասին ստացած նախնական դաստիարակութիւնը կազմած էր հիմքը իր հոգեկերտուածքին★ Միաժամանակ, առաջնորդանիստ Սուրբ Նշան Մայր եկեղեցւոյ դպիր, խունկն ու աղօթքը թափանցած էին իր ներաշխարհին եւ դարձած՝ անբաժանելի մասը հոգեկան պահանջներուն★

Դպրեվանքը աւելիով կը լիացնէր կրօնական պահանջը★ Սակայն մտերմական պահերուն յաճախ կը խօսէր պատանեկան միութեան մասին, չէր ծածկեր զգացած կարօտը եւ կարօտի այդ զգացումը կը սնուցանէր յեղափոխական գրականութիւն կարդալով★ Կրօնականն ու յեղափոխական խառնուածքը կը միաձուլուէին միեւնոյն անհատականութեան մէջ★ Հետագային կրօնականը պիտի դրսեւորուէր իր համեստ վարքին, իսկ յեղափոխականը՝ խրոխտ ու յանդուգն նախաձեռնութիւններուն ընդմէջէն★

Զարեհեան շրջանն էր★ Առաքելական շուքով ու պարթեւութեամբ կաթողիկոս, որուն վիճակուեցաւ Անթիլիաս-Էջմիածին դժբախտ պայքարներու ամբողջ ծանրութիւնը★ Քաղաքական կուսակցութիւններն ու եկեղեցականները իրարու հակադրուած՝ պայքարին տուած էին ազգավնաս ծաւալ★ Խռոված էր

սփիւռքահայութիւնը՝ բոլոր գաղութներուն մէջ★ Կիրքերը հանդարտեցնելու կաթողիկոսին հաշտարար ճիգերն ու պատգամները արդիւնքի չէին յանգեր★ Հայ կեանքի ուշադրութեան կեդրոնն էին եկեղեցին ու եկեղեցականը, որով եւ՝ Անթիլիասի կաթողիկոսարանը★ Ահա այդ օրերուն Զարեհ կաթողիկոսի հեռատես որոշումով դպրեվանքը փոխադրուած էր Պիքֆայայի բարձունքին, որպէսզի հոն, առանձնութեան մէջ, կիրքերէ հեռու եւ ազդեցութիւններէ զերծ, ժառանգաւորները անբարդոյթ պատրաստուին ապագայ ծառայութեան, որ կը կազմէ հիմքը Հայ Եկեղեցւոյ★

Առիթն է նշելու, որ թերեւս մեր ենթագիտակցութեան մէջ այլապէ՛ս դաստիարակիչ եղաւ մեզի համար այն պարագան, որ խռովայոյզ այդ օրերուն չգտնուեցաւ ոեւէ ուսուցիչ թէ կղերական, որ նուազագոյն անդրադարձը կատարած ըլլայ եկեղեցական այդ վէճերուն մասին կամ կողմնակցական արտայայտութիւն ունենայ★ Ես չեմ գիտեր, եթէ կաթողիկոսին բառացի թելա~դրանքն էր ատիկա թէ ոչ★ Բայց յայտնօրէն Զարեհեան ոգին էր, որ կը գերիշխէր վանքին վրայ★

Աւելի՛ն. մեր տեսուչը, Արտաւազդ վրդ. Թրթռեան, հեզահամբոյր, այլեւ հաս~տատակամ նկարագիր ու անխոնջ ուսումնասիրող, իր անձին օրինակով մեզ կը մղէր ընթերցումի, խոկումի ու ինքնաքննութեան՝ մեր մէջ ամրացնելով հաւատարմութիւնը՝ հոգեկան արժէքներու հանդէպ★ Ապա Գարեգին վրդ. Սարգիսեան Օքսֆորտէն վերադարձին, ստանձնելով տեսչութիւնը, դպրեվանքը կը վերածէր մտաւոր աշխատանոցի★ Գրական ու երաժշտական երեկոներ, ուսումնասիրական նախափորձեր, «Գլաձոր» պարբերաթերթի խմբագրական աշխատանքներ նորովի կը լիցքաւորէին դպրեվանքի առօրեան★ Բոլորս հրապուրուած էինք իր խօսքի հմայքէն եւ անմիջականութենէն★ Հակառակ տիրող այդ մթնոլորտին, մեզմէ շատեր տատանումի մէջ էին, չէին կրնար որոշել իրենց ապագայ ուղին★ Վանական կեանքի սեղմումներն ու խստապահանջութիւնը վարանումի կը մատնէին մեզ★ Մանաւանդ դիւրին չէր հաշտուիլ աշխարհիկ ազատութենէ ընդմիշտ զրկուելու հեռանկարին հետ★ Քիչեր հաստատ որոշած էին եկեղեցւոյ ճամբով ծառայել Ազգին ու Աստուծոյ★ Ատոնց մէջէն կը զատորոշուէր Հրայրը, որուն համար ծառայութեան այլընտրանք չկար★ Հայ եկեղեցին այնքան մեծ ընդգրկում ունէր, որ իր մէջ կը ներառէր ծառայութեան բոլոր մարզերը, որոնց կարիքն ունէր մեր ժողովուրդը. հոգեկան, գաղափարական, կրթական, ազգային, կրօնական, նոյնիսկ՝ յեղա~փոխական★ Հայ եկեղեցւոյ պատմութիւնն էր, անցեալ ու ներկայ դերա~կատարութիւնը, որոնք իր մէջ ամրացուցած էին այդ համոզումը, որով իր ընտրելիք ուղին յստակ էր ու հաստատ. եկեղեցական ըլլալ★ Եւ իր կեանքի տեւողութեան ու ծաւալուն գործունէութեան բոլոր հանգրուաններուն փաստեց, որ իր համոզումը ճիշդ էր★

Քահանայական ձեռնադրութեան, ձեռնադրուողը եթէ խօսք չունի իրեն տրուելիք նոր անունի ընտրութեան մէջ, ապա ուրեմն նոյնը չէ ձեռնադրողին պարագային★ Ձեռնադրողը կ՚ընտրէ այնպիսի անուն, որ քիչ-շատ համապատասխանէ քահանայացուի խառնուածքին եւ մանաւանդ՝ իր սեփական նախասիրութեան, իր նկարագիրին, իր հակումներուն★ Ուրեմն, պատահական չէր Հրայրին քահանայական անուանակոչումը. Մեսրոպ, իսկ օծակիցներուն՝ Կորիւն, Մաշտոց, Եղնիկ. Ոսկեդարու թարգմանչաց սերունդի ճառագայթող դէմքեր, ինչ որ ցոյց կու տար, որոշող տեսուչին պաշտամունքի հասնող սէրը՝ մեր մատենագիրներու եւ հին վանքերու երախտաշատ գործին հանդէպ★ Սխալ չէր նաեւ տեսուչին համարումը իր աշակերտին նկատմամբ՝ զայն Մեսրոպ անուանակոչելով, քանի որ անիկա մինչեւ վերջ եղաւ ու մնաց գիրքի մարդ, գիրի երկրպագու★

Մեսրոպ Սրբազան մեծ հիացում ունէր ֆետայական գործիչներու, յեղափոխական հերոսներու, յատկապէս Արամ Մանուկեանի հանդէպ★ Տակաւին խորհրդային շրջանին, Հայաստան գործուղման մէկ առիթով փնտռած-գտած էր անոր գերեզմանը★ Վերջին տարիներուն գտած էր նաեւ բնակարանը, զոր տուն-թանգարանի վերածելու իր ջանքերը դժբախտաբար չէր կրցած արդիւնաւոր աւարտին հասցնել★

Որով երբեք պատահական չէր նոյնպէս, որ ինք, երբ դպրեվանքի տեսչութիւնը ստանձնեց, իր անդրանիկ հունձքին համար իբրեւ քահանայական անուանակոչում ընտրեց Արամ, Խաժակ, Սեպուհ, Հրայր անունները. յեղափոխականի շրջանի տիրապետող գործիչներ★

Իր հունձքին կապած սպասումներն ու պատկերացումները արդարացուցին զինք★

Արամ վարդապետ երիտասարդ տարիքէն հանրածանօթ գործիչ դարձաւ միջեկեղեցական շրջանակներու մէջ, ապա նաեւ այդ միջավայրին մէջ նորանոր ոստումներով բարձրացաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ատենապետի պատուաբեր պաշտօնին★ Միաժամանակ, իբրեւ քաջ առաջնորդ լիբանանահայութեան, Արամ եպիսկոպոս միշտ պատնէշի վրայ մնաց, ոգեւորեց հայ բազմութիւններն ու ազգապահ մեր տղաքը՝ Լիբանանի քաղաքացիական ահաւոր պատերազմի բովանդակ տեւողութեան★ Ներկայիս, կաթողիկոս Կիլիկիոյ Աթոռին, միջազգային բեմի վրայ իր ճառագայթումով կը փառաւորէ ոչ միայն գահակալած կաթողիկոսութիւնը, այլ, տեղին է ըսել, Հայաստանեայց Եկեղեցին՝ իր ամբողջութեան մէջ★ Քաղաքական, եկեղեցական, ակադեմական թէ այլ շրջանակներու մէջ կը ներկայանայ հայ ժողովուրդին իրաւունքները պաշտպանողի ու պահանջողի հանգամանքով եւ այնպիսի ջերմեռանդութեամբ, որ եթէ պատշաճութիւնը թոյլատրէ, յարմար պիտի ըլլար զինք կոչել «Հայ Դատի զինուորագրեալ կաթողիկոս»★ Իսկ իր օծակիցները, առաջնորդական թէ տարբեր

պաշտօններու մէջ, նոյնպէս նուիրուած են ազգային-եկեղեցական ծառայութեան★

Մեսրոպ Սրբազանի հանրային-հասարակական գործունէութեան բեղուն շրջանը կը սկսէր առաջնորդական պաշտօններու վրայ. նախ՝ Նոր Ջուղա, ապա՝ Նիւ Եորք★ Առիթ եղած է բաւական մօտէն ճանչնալու երկու թեմերու աշխարհական իր գործակիցներէն շատերը★ Բոլորն ալ անխտիր կը հիանային իր տոկուն աշխատունակութեան վրայ՝ միաժամանակ վկայելով, որ գործ ստեղծելու, նոր ու ինքնատիպ նախաձեռնութիւններով ընթացիկէն վեր բարձրանալու տաղանդն ու հաստատակամութիւնը ունէր★ Անոնց վկայութիւններուն խտացումը կարելի է բանաձեւել հետեւեալ եզրակացութեամբ. Մեսրոպ Սրբազան յանդուգն նախաձեռնութիւններու մարդն էր, բայց եւ այնպէս երբեք չէր խօսեր իր իրագործումներուն մասին★ Ինքզինքին ուղղած մնայուն մարտահրաւէրն էր՝ չկատարածները առաջադրել ու գործադրել★

Իրապէս. գործելու իր այդ ոճէն վաստկած էր արժանահաւատութիւն ու անվերապահ վստահութիւն այն աստիճան, որ բարերարներ, առանց որեւէ պայմանի, նիւթական լիաբուռն յատկացումներով կ'օժանդակէին իր ծրագիրներուն★ Իրողութիւն մը, որ աւելիով բացայայտ պիտի դառնար հետագային, հայաստանեան իր բազմահուն գործունէութեան ընդմէջէն★ Նիւ Եորքի իր առաջնորդութեան վերջին տարիներն էին★ Ազգային Ընդհանուր Ժողովի համար Սփիւռքի տարբեր գաղութներէն պատգամաւորներ Պէյրութ կը գտնուէին★ Իր թեմի ներկայացուցիչները Պրումանայի բարձունքին ի պատիւ իրեն սարքած էին գինեսեղան մը, որուն մասնակից դարձայ զուգադիպաբար★ Հոն խօսք առնողները կը գովէին իրենց սիրելի առաջնորդին բարե-մասնութիւնները՝ ընդգծելով անոր նշանակալից իրագործումները՝ եկեղեցական, հրատարակչական, կրթական, յարաբերական, կազմակերպչական թէ քարոզչական մարզերու մէջ★ Բոլորն ալ բարձրաձայն կը յայտնէին երախտագիտական զգացումներ երախտաշատ գործի դիմաց★ Խօսք տրուեցաւ նաեւ ինծի★ Պահուն պատշաճ արտայայտութիւններուս եզրափակիչ միտքը մօտաւորապէս հետեւեալն էր.

«... Արձաններու համար կը հաստատեն պատուանդաններ, որպէսզի ամուր յենարանի վրայ, աւելի բարձր դիրքի կանգնին եւ հոնկէ ցուցադրեն իրենց վայելչութիւնը★ Հանրային-հասարակական կեանքի մէջ ալ պատուանդաններ են պաշտօնները, որպէսզի մարդիկ այդ դիրքէն ծառայութեան ասպարէզ ունենան եւ իրենց արժանիքներու համապատասխան գործելու դաշտ ստեղծեն★ Կան մարդիկ, որոնք կը ծառայեն պաշտօնին՝ անոր մէջ տեսնելով իրենց արժանիքը, պատիւը★ Կան նաեւ այնպիսիներ, որոնք գործով կ'իմաստաւորեն իրենց պաշտօնը, կ'առաջնորդուին տեսլականով եւ գործն է, որ կը կազմէ իրենց պատիւը★ Այդպիսիներու արժէքը իրենց անձին մէջն է, ոչ՝ հանգամանքին★ Այս սեղանին

շուրջ Մեսրոպ Սրբազանի գործակիցներու խօսքերը կը վկայեն, որ առաջնորդական պատուանդանի վրայ ան իր գործունէութեամբ կ՚արժեւորէ իր պաշտօնը եւ՝ ինքզինք★ Այս հաստատումէն ետք աւելցնեմ նաեւ համոզումս★ Մեսրոպ Սրբազանին տեսադաշտը այնքան ընդարձակ է, գործելու եռանդը այնպէս վառ, հոգին ջերմ եւ տեսլականը այնքան մղիչ, որ նոյն արժանաւորութեամբ եւ համահայկական ընդգրկումով գործունէութիւն պիտի ծաւալէր ան, նոյնիսկ եթէ մնար առանց պատուանդանի...»★ Եւ իրապէս★

Մեսրոպ Սրբազանի գործունէութեան մեծ արշաւը, համահայկական ընդգրկումով, գագաթնակէտին հասաւ, երբ առաջնորդական պաշտօնէն հրաժարեցաւ եւ Գարեգին Ա. կաթողիկոսին հրաւէրին ընդառաջելով հաս-տատուեցաւ Հայաստան, ուր որոշ շրջան մը վարեց 1700ամեակի տօնակատարութեան վարիչ-քարտուղարութիւնը★

Դժուար է նոյնիսկ պարզ ցուցակ կազմել բազմամակարդակ իր նախաձեռնութիւններուն, որոնք կը տարածուէին Հայաստանեան կեանքի գրեթէ բոլոր մարզերուն վրայ★ Ազատամարտիկներու ընտանիքներուն օժանդակութեան ապահովում, Գիւմրիի մէջ որբանոցի ստեղծում, եկեղեցիներու շինարարական նորոգութիւններ, գետերու ափին հազարաւորներու հաւաքական մկրտութիւններ եւ այդ առթիւ տօնախմբութիւններ, չորս հարիւրէ աւելի հրատարակութեանց մեկենասութեանց ապահովում, «Գիրքի տօն»ի յղացում ու գիրքերու ցուցադրութիւն, դէպի Արեւմտահայաստան ուխտագնացութիւններ եւ այդ այցելութեանց մասին հեռատեսիլէ լայնածաւալ քարոզչութիւն՝ շարժանկարներու ցուցադրութեամբ, որպէսզի վերակենդանանայ յիշողութիւնը, 1700 երախաներու մասնակցութեամբ համերգ 1700ամեակի շրջագիծին մէջ եւ այլն, եւ այլն...★ Ահաւասիկ՝ հապճեպ յիշողութեամբ արձանագրուած շարք մը իր իրագործումներէն, որոնցմէ իւրաքանչիւրը բաւարար պիտի ըլլար ոեւէ անձի, որ իբրեւ «կեանքի գործ» յիշատակութեան արժանի դառնար եւ հպարտութիւն պատճառէր★ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի տնօրէն դոկտ. Աշոտ Մելքոնեանի վկայութեամբ՝ «... Մեսրոպ Արք. Աշճեանի հանդէս գալը Հայաստանում հայ մտաւորական շրջանակներում, առանց չափազանցութեան, ուղղակի յեղաշրջում էր նշանակում...»★ Իր վարքին, կենցաղին, կատարած գործերու ծաւալին ու տարողութեան դիմաց, իբրեւ եզրակացութիւն կու տար բնորոշում մը. «... ինձ համար Մեսրոպ Սրբազան մարդկային իտէալի անգերազանցելի օրինակ է...»★

Կ՚արժէ ուրեմն, որ համակողմանի խորացումով ու անդրադարձումով գրուի

վարքը Մեսրոպ Արք. Աշճեանի անոնց կողմէ, որոնք առիթը ունեցան մօտէն հետեւելու իր քայլերուն ու գործունէութեան★ Կեանք մը ամբողջ՝ նուիրումի եւ ծառայութեան★

Իրեն հետ վերջին հանդիպումս երեք տարի առաջ էր★ Յունաստան եկած էր, որպէսզի քանի մը օրեր անցընէ Աթոս կղզիին մէջ, ուր բիւզանդական վաղ ժամանակաշրջանէն կը գոյատեւէ վանքերու համալիր մը, վանական հին կենսաձեւով★ Կը յուսար, որ հոն պիտի կարենայ պեղել եւ լոյսին հանել Գրիգոր Լուսաւորչի կեանքի տակաւին անծանօթ ծալքերը՝ նախքան անոր Հայաստան ուղեւորուիլը★ Անակնկալ պատահարներ պատճառ դարձան, որ կիսով միայն կարենայ կատարել այդ աշխատանքը★

Դէմ դիմաց նստած ենք մեր տան պատշգամին★ Հոգին ճնշումի տակ էր★ Կ'ըսէ, թէ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը իրմէ պահանջած է գիր, որով ինք պիտի խնդրէ միանալ Էջմիածնի՝ հրաժարելով Կիլիկիոյ միաբանութենէն, քանի որ գործադաշտ ընտրած է Հայաստանը★ Նման գիր մը ինքզինք ուրանալու, ինքզինքէն հրաժարելու համարժէք կը համարէր★ Որոշած էր մերժել եւ կ'ապաւինէր Արամ Ա. կաթողիկոսի նեցուկին★ Յաջորդ օր Պէյրութ պիտի մեկնէր արդէն, խնդիրը եւ իր որոշումը պիտի պարզէր իր վեհափառին եւ անոր պաշտպանութիւնը պիտի խնդրէր★

Զեմ գիտեր, թէ հարցը ի՛նչ հոլովոյթ ստացաւ եւ ո՛ւր յանգեցաւ★ Գիտեմ սակայն, որ ինք, ինչպէս եւ դպրեվանքի մէջ կազմաւորուած իր սերնդակիցները, վարչական ու սոսկ կանոնական սկզբունքներու հիմունքով չէ միայն, որ միացած են Կիլիկիոյ միաբանութեան★ Կապը հոգեկան է, որով եւ՝ անքակտելի★ Դպրեվանքի շունչով սնած սերունդներ, երբ կ'ուխտեն միանալ միաբանութեան շարքերուն, հոգելոյս Սրբազանին դիպուկ պատկերացումով կը նմանին պատրաստուած-օրհնուած նոր միւռոնի, որ կը խառնուի հինին, կը ձուլուի անոր հետ, հինն ու նորը կ'ըլլան մէկ ու անբաժան★ Դպրեվանքեան սերունդներն են, որ կը վերանորոգեն միաբանութեան աշխուժութիւնը եւ կ'ապահովեն թարմութեան շարունակականութիւնը★ Ահա թէ Կիլիկիոյ միաբանութեան իր պատկանելիութիւնը ինչ նշանակութիւն կը ներկայացնէր իրեն համար★ Հոն էր, որ կազմաւորուած էր եւ՝ իր փորձառութիւնները իմաստաւորած★ Փորձառութեանց գումարն է, որ կը կերտէ մարդը եւ ինք կերտուած էր Անթիլիասի մէջ★

Մեսրոպ Սրբազան, իբրեւ գիտակից ժառանգաւոր, Կիլիկիոյ դպրեվանքին մէջ ժառանգեց մեր ազգի հոգեմտաւոր հարստութիւնը, տէր կանգնեցաւ այդ ժառանգին եւ արժանաւորութեամբ սպասարկեց եկեղեցիին ու ժողովուրդին՝ Սփիւռքէն Հայաստան★

Վերջին տարիներուն գործեց առանց պատուանդանի★ Բայց իր այդ գոր-

ծունէութիւնը եղաւ այնքան բեղուն, որ իր անունին տուաւ անմահութեան լուսաւոր պատուանդան մը Հայոց Պատմութեան մէջ, արժանի յիշատակութեան՝ սերունդներու համար★

Միհրան Քիւրտօղլեան

Ցունահայ մտաւորական

Ո՞վ Պիտի Շարունակէ Մեսրոպ Սրբազանի Բարեսիրական Գործը

Վերջ գտաւ սկսած եւ շարունակուած գործ մը, նախաձեռնութեամբ եւ գործադրութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութեան անդամ Մեսրոպ Արք. Աշճեանի: Աւելի քան տասը տարի անձնդիր նուիրում մը, որ իր գօրաւոր թափին մէջ հասաւ մինչեւ ինքնախորտակումի:

Վասն հաւատքի, վասն հայրենեաց... Ա՛յս եղաւ սկզբունքը եւ տեսլականը վախճանեալ Սրբազանին: Տուաւ, որքան որ կարելի էր: Տուաւ նոյնիսկ իր ունեցածէն աւելին: Ստեղծեց միջոցներ եւ եղաւ ճշմարիտ ու անկեղծ հայրը տառապող ժողովուրդին:

Երեւոյթ էր Մեսրոպ Սրբազան: Գործեց առանց ոեւէ մէկուն ցուցմունքին: Ի՛նք որոշեց, ի՛նք գործադրեց, ի՛նք գումարներ հայթայթեց, ի՛նք ծախսեց անհատնում եւ առանց վաղուան մասին մտածելու, զի հաւատաց, որ «Աստուած ընդ մեզ է»...

Հաւատքի մարդ, ոգեկան ու հոգեկան զօրութեամբ յորդուն եկեղեցական: Մնած էր կիլիկեան ուխտի ակունքներէն, հաւատարիմ մնաց իր ուսուցիչներէն քաղած հոգեմտաւոր հարստութեան:

Ի՞նչ էր նպատակը, ինչո՞ւ հետապնդեց այսքան իրագործում:

Որովհետեւ տեսաւ եւ հաստատեց, թէ ժողովուրդը անտէր էր եւ կարիք ունէր օգնութեան, զինք աւերներէն դուրս բերող ձեռքի: Զքաւորը, որբը, այրին, ծերունին, անօթին, մտաւորականը, գրողը, արուեստագէտը, կիսափուլ եկեղեցին եւ վանքը օգնութիւն կ՚աղերսէին:

Հայաստանի ժողովուրդը իրաւունք ունէր Մեսրոպ Սրբազանին մարմինը յանձնելու Մուղնի վանքի հողին: Որովհետեւ ժողովուրդը հաւատաց, որ Մեսրոպ Սրբազան Էջմիածնի միաբան էր, որովհետեւ հաւատաց, թէ Մուղնի վանքի մէջ

կատարած էր եկեղեցականի իր ուխտը: Ի՞նչպէս հաւատար, որ Սփիւռքի մէջ կար փոքր երկիր մը՝ Լիբանան, ուր կար վանք մը՝ իր Կիլիկեան Կաթողիկոսութեան ուխտով, ուր թրծուած եւ սնած են առաքելատիպ եկեղեցականներ: Այո՛ սիրելի «մուղնեցիներ», Սփիւռքի իւրաքանչիւր հայ իր սրտին եւ հոգիին մէջ պահած է մասունք մը Էջմիածին, փշուր մը Մուղնի, կայծ ու շող Առաքելոց վանքէն, Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետէն:

Անթիլիասի վանքը պահած է մեծ եւ խորին խորհուրդը մեր հայրենի ուխտավայրերուն:

Թող Մեսրոպ Սրբազան հանգիստ ննջէ կիլիկեան միաբանութեան յատկացուած դամբարանին մէջ, միեւնոյնն է: Անթիլիաս կ՚ապրի Մուղնու Ս. Գէորգ վանքի հոգեղէն լոյսերով:

Մաղթենք, որ նոր լոյս մը ծագի Հայոց Աշխարհէն, նոր Մեսրոպ Սրբազան մը՝ օրինակելիին ճամբան շարունակելու:

Շահանդուխտ
Բանաստեղծ, հրապարակախօս
«Ազդակ» օրաթերթ

Սարկաւագին Առաջին Ազգանուէր գործը

ինչ ճղճիմ է մահը՝ իրա՛ւ Մարդուն գործին դիմաց

Կեանքի գեղեցիկ դէպքերը կը զօրացնեն մարդը★

Անոնցմէ մէկն է առաջին հանդիպումը Հրայր սարկաւագ Աշճեանին հետ,1958-ին★

Եդուարդ Տարօնեան, մանկավարժ, նախկին տնօրէն Ս.Նշան վարժարանի, մասնակիօրէն կաթուածահար, դատապարտուած էր մնալ անկողնին մէջ★ Զինք կը խնամէին տիկ. Զապէլ Թորոսեանն ու իր ամուսինը՝ պրն. Ռուբէն, իրենց տան մէջ★

Պէյրութի Զոքաք էլ Պլաթ հայաշատ թաղին մէջ, ճեմարանի կողքի շէնքին անկիւնը համեստ տան մը մէջ խնամուող Եդուարդ Տարօնեանի սենեակը ուխտավայր մըն էր դարձած նախկին տնօրէնը յարգող անձերու կողմէ★

Իր յամառ մարդու դէմքին վրայ մենք կը տեսնէինք զինք զգետնած հիւանդութեան հանդէպ իր ունեցած արհամարհանքը★

Մտահոգ չէր իր հիւանդութեամբ. բայց մտահոգ էր իր ձեռագիրներով, մանաւանդ այն տրցակ մը սեւագրութիւններով, ուր Նիկոլ Աղբալեանի խնդրանքով (եւ նաեւ ստիպողութեամբ) պատրաստած էր Հայաստանի Բաղէշ

նահանգի բարբառի լայնածաւալ ուսումնասիրութիւնը★ Կ՝ուզէր իր մահէն առաջ տեսնել այս գործին հրատարակութիւնը★ Բայց, ո՞վ պիտի ստանձնէր այդ սեւագրութիւններու հարիւրաւոր էջերու դասաւորումը, ընդօրինակութիւնն ու մեքենագրումը★ Մենք՝ հասուն երիտասարդներս՝ մտահոգութեամբ կը դիտէինք այդ խառնիճաղանճ էջերը★ Փաստօրէն, մեզմէ ոչ ոք համարձակեցաւ ստանձնել այդ պարտականութիւնը★

Եւ օր մըն ալ, Եդուարդ Տարօնեան՝ ակնոցներուն ետին փայլուն աչքերով, ու լայն ժպիտ մը դէմքին՝ մեզի յայտնեց թէ Խորէն Սրբազանի առաջարկով եւ Զարեհ Վեհափառի արտօնութեամբ 17-ամեայ սարկաւագ մը պիտի ստանձնէ այս սեւագրութրութիւններու սեւ աշխատանքը★

Սարկաւա՞գ մը. 17-ամեայ★ Վերապահութեամբ մօտեցանք Տարօնեանի ուրախութեանը★

Շաբաթ մը ետք, Տարօնեանի համեստ սենեակին մէջ հանդիպեցայ 17-ամեայ Հրայր սարկաւագ Աշճեանին, որ նստած Տարօնեանի անկողնին մօտ, կը կարդար ձեռագրին տողերը, հատուածները★ Ծայրայեղ բծախնդիր եւ ծայրայեղ խիստ Եդուարդ Տարօնեանը սրբագրութիւններ կ՝ընէր, փոփոխութիւններ կ՝ընէր... եւ սարկաւագը կը գրէր բառերը, կը ջնջէր բառերը, կը փոխէր տողերը...★ Եւ երբ հատուածը կը ստանար իր վերջնական վիճակը, համբերատար Հրայր սարկաւագը հատուածը կ՝ընդօրինակէր նոր էջի մը վրայ★

Եւ այսպէս, օրեր, շաբաթներ, ամիսներ, տարի, տարի ու աւելի...★ Հրայր սարկաւագ իր հետ վանք կը տանէր «վերջնականապէս» վերջացած էջերը՝ զանոնք մեքենագրելու համար, որոնցմէ շատեր... ետ կը բերուէին յանկարծ, եւ կ՝ենթարկուէին փոփոխութիւններու հեղինակին կողմէ...★ Եւ այսպէս, երկու երկար տարիներ, Հրայր սարկաւագ Աշճեան համբերատարութեամբ, բծախնդրութեամբ եւ հաւատքով, եւ նաեւ ուրախութեամբ կատարեց այս կարեւոր գործը եւ իր շնորհիւ մեքենագրուած էջերը հասան Անթիլիասի տպարանը եւ լոյս տեսաւ Եդուարդ Տարօնեանի «Բաղէշի Նահանգի Բարբառը» մեծարժէք գործը★

Վստահաբար այս գործը երջանկայիշատակ Մեսրոպ Արք. Աշճեանի ազգա-նուէր ԱՌԱՋԻՆ մեծ գործն էր՝ թէ՛ մշակութային գետնի վրայ, թէ՛ ազգային գետնի վրայ, եւ թէ նաեւ մարդասիրական գետնի վրայ★

Կ՝արժէ յիշել Եդուարդ Տարօնեանի շնորհակալիքի հետեւեալ տողերը՝ ուղղուած Հրայր սարկաւագ Աշճեանին★

«Իբրեւ շնորհակալիք՝ սրտանց կը մաղթեմ, որ իր մօտ երբեք չպակսի այս նուիրումի ոգին, որպէսզի անով քաղցրանայ այն լուծը զոր յօժարութեամբ ընտրեց՝ աւելի արդիւնաւոր կերպով ծառայելու համար իր ազգին ու եկեղեցիին»★

Այսօր, 44 տարիներ ետք..., ահա իրագործուած են Տարօնեանի մաղթանքները.

Նուիրումի ոգի

Քաղցր լուծ...

Ծառայել ազգին...

Ծառայել եկեղեցիին★

Այո՛, այս բոլորին մէկտեղումը եղաւ Մեսրոպ Սրբազանի ամբողջ կեանքը★

Նուաճեց բարձունքներ★ Բայց, Մեսրոպ Արք. Աչճեանի մէջ մնաց Հրայր սարկաւագը՝ իր համեստութեամբ, իր հեզութեամբ, իր նուիրուածութեամբ, իր համբերատարութեամբ, իր գերզգայնութեամբ...★

Իր մէջ մնաց մարդը՝ գլխագիր Մարդը★

Գիտեմ.ծրագրած էր 2004 Մայիսին անգամ մը եւս երթալ Վասպուրական Հայոց աշխարհ★ Այս անգամ ուրիշ առաքելութեամբ մը★ Վանեցիի թոռ հայ երիտասարդի մը մէկ յաջողութիւնը խանդավառած էր զինք★ Երիտասարդը՝ իւրաքանչիւր նորայայտ հայկական եկեղեցիի համար տասը տոլար վճարելով նաւավար քիւրտի մը՝ գտած էր հայկական նորայայտ բազմաթիւ եկեղեցիներ, վանքեր, մատուռներ եւ փլատակ այլ կառոյցներ, Վանայ լիճի շրջակայքը, եւ նաեւ լիճին քանի մը կղզիակներու վրայ★ Մեսրոպ Սրբազան խանդավառուած էր, եւ որոշած էր երիտասարդին հետ երթալ Վասպուրական եւ ուսումնասիրել այդ փլատակ սրբավայրերն ու կառոյցները★ 2004 Մայիսին...★

Սրբազանը չկայ...★ Ո՞վ պիտի կատարէ կիսատ մնացած այս գործերը★ Ո՞վ պիտի ազգայնացնէ եւ քրիստոնէացնէ Հայաստանի հեռաւոր գաւառներուն եւ գիւղերուն մէջ ապրող մարդիկը, որոնք վերջին վաթսունամեակին չէին տեսած հայկական խաչ, չէին լսած հայկական պատարագ★ Ո՞վ քրիստոնեայ, հայ՛ քրիստոնեայ պիտի մկրտէ ամբողջ գիւղ մը՝ իր մանուկով, հայրով ու մեծ հայրով★

Ո՞վ պիտի տայ այդքան նուիրում..., եւ ո՞վ պիտի շալկէ, պիտի կարենա՛յ շալկել այդ ծանր ու քաղցր լուծը★

Այս պահուս կը մտածեմ.

Ինչ ճղճիմ ու հասարակ է մահը՝ իրաւ Մարդուն Գործին դիմաց★

Այդպէս եղաւ Մեսրոպ Սրբազանին կեանքը★

Ան իր Գործով յաղթեց մահուան★

Այո՛, այդ Մարդոցմէն էր Հրայր սարկաւագը★

Արա Արծրունի

Սփիւռքահայ գրող

Քաղուած «Արծիւ» գրական հանդէսից

Սրբազան Մեսրոպ Արք. Աշճեան

Իւրաքանչիւր մարդու մահը կը նուաստացնէ զիս

Ճան Տանն

Ճան Տաննի այս արտայայտութիւնը աւելի ԿԵԱՆՔԻ իմաստին կը վերաբերի քան ՄԱՀՈՒԱՆ: Այս արտայայտութիւնը՝ կեանքի կորուստի ողբն է: Այն ընդհատուած ժամանակին՝ ուր ստեղծագործող միտքը կը կասի, ուր՝ անաւարտ մտքերը կանէանան:

Այսօր երբ գրեթէ արդէն երկու տարի անցած է Սրբազան Աշճեանի ֆիզի-քական «մեկնումէն», անոր ոգեղէն գոյութիւնը կը մնայ՝ որպէս «կենդանի» ներ-կայութիւն մեզմէ ամէն մէկուն սրտին մէջ, որովհետեւ ան՝ իր ԳՈՐԾով գլեց անցաւ հասարակ մարդուն համար յատկացուած մահուան սահմանումներէն:

Մեզմէ ամէն մէկը, որ որեւէ առնչութիւն ունեցած է Սրբազան Աշճեանի հետ, կրնայ առանց վարանումի հպարտանալ այս ՄԱՐԴՈՒՆ բոլոր արժանիքներով՝ իտէալապաշտ հոգեւոր, խոհուն ղեկավար, տեսլական ծրագրող, մտահոգ գրող, արդար մտաւորական եւ ցաւակից:

Սրբազանի արարքներուն հիմքը՝ Յիսուս Քրիստոսի ուսուցումները եւ զանոնք որդեգրած Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դաւանանքն էր: Հայ ժողովուրդի անցեալի պատմութեան հանդէպ իր տածած պաշտամունքն էր, ապագայի ձգտումներուն հաւատքն էր: Այդ էր պատճառը՝ որ ան իր կեանքի 50 տարիներու գիտակցական մասը, առանց դոյզն վարանումի նուիրեց իր հաւատքի ընդմէջէն՝ իրագործելու իր ծրագիրները: Կազմաւորուեցաւ Լիբանան, ուսանեցաւ Ամերիկա եւ Եւրոպա, ծառայեց Պարսկաստան եւ Միացեալ Նահանգներ եւ եզրափակեց Հայաստան:

Սփիւռքի եւ Հայաստանի մէջ իր իրագործումները հանրութեան սեփականութիւնն են դարձած: Սակայն իր կեանքին մէջ դրուագներ կան, որոնք՝ հոգեւորական պաշտօնական իրագործումներէն զատ, կը նշեն՝ հոգատար ՄԱՐԴԸ, որ իր կոչումին հետեւորդն է:

Ես պատիւն ունեցած եմ աւելի քան երեսուն տարիներու ծանօթութիւն եւ ընկերութիւն մշակած ըլլալ Սրբազանին հետ: Այս տարիներու ընթացքին, իր հետ գործած եւ մշակած եմ Ազգային Առաջնորդարանի ծրագիրները, ճամբորդած Արեւմտեան Հայաստան, բանախօսած Առաջնորդարանի կազմակերպած բազմաթիւ ձեռնարկներու, գրախօսած իր գրքերէն երկուքը...

Ահա ա՛յս՝ մեր ծանօթութեան ընթացքին կարգ մը իւրայատուկ պահեր են, որ կուզեմ արձանագրել այսօր՝ որոնք կը կարծեմ իր մէջի ՄԱՐԴՈՒՆ կերպարի ծանօթացման աւելի կը նպաստեն եւ որոնց մասին Սրբազանը չէ գրած եւ առաջին անգամն է որ կարձանագրուին:

Սրբազանի առաջին քայլերը դէպի հոգեւոր կեանք (Պատմուած իր մեծ եղբօր՝ Յովհաննէս Աշճեանի եւ քրոջ՝ Հռիփսիմէ Սերոբեանի կողմէ):

1956ի աշնան օր մըն էր Պէյրութի Էշրէֆիէ թաղամասի՝ Աշճեաններու բնակարանին մէջ: Ընտանիքի անդամները հաւաքուած են «բարի երթ» մաղթելու 16 տարեկան պատանի Հրայրին՝ երկրորդ մանչ զաւակը Մարթա եւ Ներսէս Աշճեաններու: Հրայր որոշած էր Անթիլիասի Դպրեվանքը յաճախել: Ան մանուկ հասակէն իր եղբօր՝ Յովհաննէսի հետ, Ս. Նշան եկեղեցւոյ մէջ դպրութիւն եւ սարկաւագութիւն ըրեր էր: Սորված էր եկեղեցական երգեցողութիւնները: Տարիներու ընթացքին իր սէրը եկեղեցւոյ հանդէպ խորացած էր: Այդ տարիքէն իր մէջ արդէն մարմին առած էր՝ որ Հայ ժողովուրդին ծառայելու լաւագոյն միջոցը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին էր: Մայրը, Մարթան, գիտէր իր զաւկին անսահման նուիրումը Հայ Եկեղեցւոյ, գիտէր նաեւ որ Հայ հոգեւորականը, նոր կեանք մը կորդեգրէր՝ դառնալով զաւակը այն հաւաքականին որ ԱԶԳ կը կոչուի: Գիտէր ասպարէզէն թելադրուած դժուարութիւնները: Այդ օր, պատանի Հրայրին համար, կապուածութիւն մը պիտի ընդհատուէր՝ նոր ընտանիք մը կազմելու համար: Այդ օր, մայրական զգացումները իրականութեան հետ կը բախէին: Հրայր իր իրերը հաւաքած, ճամպրուկի մը մէջ զետեղած, ՄԵԾ ճամբորդութեան պատրաստ վիճակի մէջ էր: Ցտեսութեան բառերու փոխանակումէն ետք, Հրայր ճամպրուկը առած դուրս պիտի ելլէր, երբ մայրը արցունքոտ աչքերով ճամպրուկը բռնած էր, որ զաւակը չմեկնի: Մայր ու զաւակ, իւրաքանչիւրը իր կողմ կը քաշէր պատմութիւնը: Մայրը կը կառչէր անցեալին, իսկ զաւակը ապագայ անորոշութեան: Արցունքը բոլորի աչքերուն մէջ էր: Վերջապէս Հրայր խլելով ճամպրուկը դուրս կը թռի արցունքոտ աչքերով՝ մօրը ձայնը ականջին մէջ:

Այստեղ կաւարտի այս պատկերը: Զենք գիտեր պատանի Հրայրը, այդ գիշեր իր առանձնութեան մէջ ինչ խոհերէ անցաւ: Սակայն ծանօթ ըլլալով Սրբազանի զերզգայնութեան, կրնամ կռահել, որ իր բարձը առանձնութեան թաքուն արցունք տեսաւ այդ գիշեր:

Հրայրը հոգեւոր ճանապարհի դուռը բախած էր արդէն:

Սրբազանի Արցունքները...

1997ի ամառն էր: Առաջին անգամն էր, որ Սրբազանի հետ Արեւմտեան Հայաստան կայցելէինք: Պիտի անցնէինք Եփրատի ափերով: Անցնիլ Եփրատի ափերով... ամբողջ ալեկոծ հոգեվիճակ մը կը պարուրէ գիտակից հայ անհատը, երբ այս գետի քովէն կանցնի:

Գետի ափին, Սրբազանը ուզեց հոգեհանգստեան պատարագ մը ընել համատարած այս գերեզմանին առջեւ: Ցած ձայնով մը ըսաւ

- «Հրա՛նդ, սկսինք»:
- «Եւ եւս խաղաղութեամբ զՏէր աղաչեսցուք»ով կը սկսիմ:

Ապա Սրբազանը կը սկսի աղօթքը, մինչ Եփրատը կը հոսի: Սրբազանը կը հասնի «Հոգւոցն հանգուցելոց»ի, ձայնը կը դողայ, բառերը կը կտրտուին ու արցունքները կը հոսին այտերէն... լուռ ենք բոլորս... միայն Եփրատն է, որ կարձագանգէ իր մեղմ ալիքները քսելով ափերուն... Յատուկ, նմանը չտեսնուած հոգեհանգստեան պաշտօն մըն էր որ կը կատարուէր մարդակուլ այս գետի ափին... Հազարաւոր մեր քոյրերուն, մայրերուն եւ զաւակներուն հոգիները հանդարտեցա՞ն... ոչ ոք գիտէ...

Մեր երկրորդ այցելութիւնը 2000 թուականին էր: Անառիկ Սասունի՝ Կէլի Կիւզան գիւղն ենք: Այնտեղ հայկական եկեղեցւոյ բակին մէջ թաղուած է Հայ յեղափոխականներէն Հրայր Դժոխքը: Սրբազանը անհանդարտ չորս դի կը նայէր՝ եկեղեցւոյ նշոյլ մը գտնելու համար: Կարգ մը տուներու պատերուն վրայ խաչքարեր տեսանք: Մտանք գոմ մը եւ ահաւասիկ մկրտութեան աւազան մը: Ուրեմն այ՛ս էր եկեղեցին եւ ուրեմն այստեղերը մօտիկ վայր մը պէտք էր թաղուած ըլլար Հրայր Դժոխքը: Այստեղ ալ Սրբազանը պաշտօնապէս սկսաւ հոգեհանգիստը: Քիւրտերը մեր շուրջը շարուած մտիկ կընէին... Սրբազանի ձայնը դողաց... Քիւրտերը իրար կը նայէին ի տես անոր արցունքին... Գիտէին որ այս վայրին մէջ հայերու տուներ եղած են, գիտէին որ այստեղ իրենցմէ առաջ հայեր ապրած են, գիտէին որ մեր կորուստը կը սգայինք... սակայն չէին գիտեր որ՝ ազգային որբացած հերոսի մը անմոռացութիւնն էր որ կը հնչէր Սասունի այս վայրին մէջ այդ պահուն:

Սրբազանը եւ Քիւրտ Պատանին

Սրբազանի սէրը երեխաներու հանդէպ ամէն տեսակ սահմաններ կանցնէր: Թերեւս երեխաներու մէջ ան կը տեսնէր այն անարատութիւնը, որ հասուն մարդոց կողմէ արդէն արատաւորուած էր: Արեւմտեան Հայաստանի մէջ, երկու պատանիներ կը մնան յիշողութեանս մէջ:

2000 թուականի մեր այցելութեան Արածանիի ափին, Տրդատի Քարը կորոնէինք (Այս այն ժայռակտորն էր, ուր Ս. Լուսաւորիչ՝ Տրդատ թագաւորը մկրտած էր): Քիւրտ տղեկ մը, անջատուելով միւս վազվզող տղոցմէ, մօտեցաւ

Սրբազանին՝ բան մը պահած ափին մէջ: Ձեռքը երկարեց, բացաւ ափը... եւ ահա փոքրիկ մետաղեայ խաչ մը: Սրբազանը ժպտեցաւ... Հրաշքի համազօր բան մըն էր: Հայ հոգեւորականը՝ Տրդատի Քարը գտած օրը, ահաւասիկ քիւրտ տղեկը խաչ կերկարէր Սրբազանին: Լատինական գրութիւններ կային խաչին վրայ: Սրբազանը կարդաց ու ապա ետ տուաւ խաչը: Տղեկը թէ՝

- «Ո՛չ, ո՛չ, քեզի համար է»:

Սրբազանը դրամ տուաւ, տղեկը չառաւ բայց գլուխը կախեց երկիւղած: Սրբազանը ձեռքը դրաւ տղու գլխին եւ աղօթեց: Հայո՞ւ թոռնիկ էր, ո՞վ գիտէ, թերեւս... Տանջող հարցումներ կան, որոնք կը յամենան մարդուս մտքին մէջ:

1997 թուականի Յունիս ամիսն է, Բալուի Հաւաւ գիւղն ենք Սրբազանի մօր ծննդավայրը: Թեթեւ անձրեւ մը սկսած է մաղել: Եկած ենք՝ նշանաւոր եւ պատմական Քաղցրահայեաց Եկեղեցին այցելելու եւ Հաւաւի նշանաւոր երկաչքանի աղբիւրը տեսնելու: Նախ ջուր կը խմենք աղբիւրէն, կը լուացուինք: Քիւրտ տղաները վազվզելով մատնացոյց կընեն ուղղութեամբ մը՝ «վանք, վանք» բացականչութիւններով մեզի կընկերանան: Կը հասնինք կիսափուլ Քաղցրահայեաց եկեղեցին: Սրբազանը մոմ կը վառէ, խունկ կը ծխէ ու հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ բոլոր մահացած Հաւաւցիներու հոգիներուն համար: Առաջին անգամն էր, 1915-էն ասդին, որ Քաղցրահայեացը հայ հոգեւորականի աղօթք կը լսէր: Կը վերադառնանք: Մեզի ընկերակցող եւ Սրբազանի հետ քայլող պատանին դաշտին մէջ կեցաւ եւ ըսաւ- «Թուրքերը այստեղ սպաննեցին հայ աղջիկները: Ես թուրքերը չեմ սիրեր»: «Ուրկէ՞ գիտես»: «Մեծ մայրս ազատեցաւ, ան կը պատմէր»: Սրբազանը ազդուած էր, լուռ էր: Ճիշտ այդ պահուն երկնքի վրայ հազուադէպ կրկնակի ծիածան մը գծուեցաւ: Սրբազանը նայեցաւ մեծ ժպիտով մը երկնքին ու դաշտերուն... հրա՞շք... Չեմ գիտեր: Այս տողերը գրած եմ այդ վայրին մէջ-

Մեսրոպ Ուխտաւորին

Հողին բոյրով, աղբիւրներու կանչերով
ահա այցի է եկեր՝
կարմրաներկուած
իր հայրենի հողերուն...
Կեցած է լո՛ւռ եւ մենակ:
Բայց աչքերուն մէջ երազ,
հոգւոյն մէջ խիղճ,
սրտին մէջ կամք բռունցքեր՝

կը նայի անցեալի թէժ օրերուն:

Ափով սերմեր կը ցանէ

վաղուան բացուող լոյսերուն:

Սրբազանը եւ Ջաւախքի Պատանին

Սրբազանը շեշտուած սէր ունէր Հայ երեխաներու նկատմամբ: Ապագան այս սերունդը կրթելու մէջ էր: Այդ էր պատճառը որ ան առիթ չէր փախցներ՝ մկրտելու, կրթելու, օգնելու հայ մանուկներուն:

2000 թուականի մեր Արեւմտահայաստան այցելութեան վերադարձին, Ջաւախք ենք: Պատմաբան Աշոտ Մելքոնեանի հետ կերթանք՝ Թումանեանով անմահացած Թամար Իշխանուհիի բերդը՝ Թմբկաբերդ: Բաւական այցելուներ կային: Սրբազանը նայեցաւ խումբ մը հայերու որոնց հետ կար նաեւ պարման մը: «Հրա՛նդ» ըսաւ, տղեկը ցոյց տալով: «Այս տղեկը բան մը ունի որ սրտիս կը դպնայ»: Մօտեցանք ընտանիքին: Տղեկը որբ էր:

- «Ես պատասխանատուութիւն կը ստանձնեմ այս տղու կրթութեան ծախսը վճարել մինչեւ համալսարան աւարտելը»:

Օրհնեց պատանին ու տուաւ իր Երեւանի հասցէն եւ ըսաւ որ գրասենեակ հանդիպին կարգադրութիւններուն համար:

Անկարելի է հասկնալ թէ ինչ կանցնէր Սրբազանի մտքէն այդ րոպէներուն: Ինքզի՞նք կը տեսնէր: Ապագայ գիտնակա՞ն մը, գրո՞ղ մը կը պատրաստէր: Հայկա՞կ մը կը փրկէր: Չեմ գիտեր: Ինչ որ ըլլային պատճառները, այդ օր, Սրբազանը հայ մը փրկեց...

Սրբազանը եւ Վարագի Մոլլան

1997ին էր, պատմական Վասպուրական աշխարհն էինք- Վան: Պիտի այցելէինք եօթներորդ դարուն կառուցուած Վարագայ Վանքը: Իր պայծառ օրերուն, եօթը եկեղեցի կար այդտեղ, ժառանգաւորաց վարժարան եւ ուխտաւորներու համար գիշերելու վայր: Այստեղ Խրիմեան Հայրիկ հիմնեց ժառանգաւորացը եւ հրատարակեց գաւառի առաջին հայկական թերթը՝ Արծուի Վասպուրականը: Վարագի վանքը այսօր երեք կամարներով, փշրուած վեց եկեղեցիներով եւ կիսափուլ կանգնած Ս. Գէորգ եկեղեցիով կը ներկայանայ: Պատմութիւնը դաժանօրէն փոխեց ամէն ինչ: Վանքին շրջապատը ներկայիս քիւրտերով բնակուած է: Կառավարութիւնը վանքին դիմացը մզկիթ մը կառուցած է:

Այստեղ ենք՝ տեսնելու եւ խոնարհելու մեր պապերու կառուցած սրբավայրին առջեւ: Վանքը ահաւոր աղտոտութեան մէջ էր՝ կովերու աղբիւս,

հաւերու բոյն, հաւկիթներու կեղեւներ: Մոլլան մօտեցաւ. քիչ մը Արաբերէն գիտէր: Թարգմանեցի Սրբազանի մտահոգութիւնը այս անարգանքին համար: Մոլլան խոստացաւ մաքրել տալ Վարագը: Սրբազանը Մոլլային վարձատրեց՝ «տուած խոստումին համար»: 2000 թուականին երբ վերադարձանք, Սրբազանը մաքրուած եկեղեցւոյ մէջ հոգեհանգիստ ըրաւ եւ նորէն վարձատրեց՝ որ շարունակէ մաքուր պահել Վանքը:

Այսպիսով Սրբազանը լռելեայն, առանց թմբկահարելու, մաքրել տուաւ անտեսուած ու որբացած Վարագայ վանքը...

Կարսի Առաքելոց Եկեղեցւոյ Վերջին Աղօթքը

1997ին Կարս էինք: Փառահեղ Ս. Առաքելոց եկեղեցւոյ դուռը փակ էր: Արտաքսուած ուխտաւորներս Եկեղեցւոյ շուրջը քալեցինք՝ դարաւոր քանդակները նկարելով: Պատուհանի մը ճողերէն մին կոտրած էր: Ներս սողոսկեցայ: Սրբազանը հետեւեցաւ բայց ժաքէթը ճողին բռնուելով պատռեցաւ:

Սրբազանն ու ես ներսն ենք: Ահա դարաւոր Հայ Եկեղեցին, ահա հայ հոգեւորականը՝ իր նախնիներու պարտքը մտքին, թափուր խորանին առջեւ:

Մռայլ էր ներսը ու խոնաւ: Վերի լուսամուտէն արեւի շողը ինկած էր յատակին: Ըսի Սրբազանին որ լոյսի շողին մէջ կենայ: Նկարեցի... հոգեւորը իր սրբավայրին մէջ: Սրբազանը շատ կը սիրէր այդ նկարը եւ իր՝ «**Յոյս եւ Յիշատակութիւն**» գրքին կողքը դրաւ... կարծէք յիշելու այդ առանձնութիւնը: Սրբազանը աղօթեց ապա հոգեհանգստեան պաշտօն կատարեց յիշելով բոլոր անոնց՝ որոնք Առաքելոցի մէջ Տիրոջ խոնարհած էին դարերու ընթացքին:

2000 թուականին Առաքելոցը մզկիթի վերածուած էր: Կոտրած խաչին տեղ Մահիկը դրուած էր: Ներս չկրցանք մտնել: Դուրսը կեցանք եւ աղօթեցինք: 2005ին նորէն այցելեցի բայց այս անգամ առանձին, Սրբազանը չկար, բայց իր ձայնը դեռ կը հնչէր ականջիս մէջ: Լուսամուտի կոտրած ճողը նորոգուած էր: Եկեղեցւոյ թմբուկի վրայի առաքեալներու քանդակները, խաչը, Բագրատունեաց յովազը դեռ կը մնան... որքա՞ն... այդ արդէն դառն ապագայի մթութեան մէջ է...

Ախթամարի Ս. Խաչ եւ Վանայ Ծով

1997ին Ախթամար կղզին ենք, ուր Գագիկ Արծրունի թագաւորի կողմէ թելադրուած եւ Մանուէլ Ճարտարապետի մտայղացումով կառուցուած՝ վիրաւոր բայց դեռ կանգնած կը մնայ՝ Հայ ճարտարապետութեան գլուխ գործոցներէն մին՝ Սուրբ Խաչ Եկեղեցին: Սրբազանը զգեստաւորուեցաւ ու կատարեց հայ հոգեւորականի իր պատշաճ պարտականութիւնը՝ հոգեհանգստեան պաշտօնը: Ապա իջանք ծովափ: Կեցանք կապուտակ Ծովուն մէջ: Յանկարծ Սրբազանը ըսաւ

- «Հրա՛նդ, եկուր քեզ մկրտեմ»:

Անակնկալի եկած, ըսի

- «Սրբազա՛ն, ես մկրտուած եմ»:
- «Ոչ ա՛յս ջուրին մէջ»:

Միտքը պարզ, սակայն խորիմաստ էր: Յուզուած էի, աչքերս՝ թաց: Խելօք մանուկի մը պէս, գլուխս հակեցի: Սրբազանը Ծովուն ջուրը ափով գլխուս թափելով մեր աննման գրաբարով մկրտութեան աղօթք մրմնջեց: Նոր մկրտուած մանուկի պէս, խոնարհեցայ եւ իր աջը համբուրեցի: Ապա աւելի մեծ անակնկալ: Սրբազանը իր մեղմ ձայնով ըսաւ

- «Հրա՛նդ, ինծի ալ մկրտէ»:

Անակնկալի եկայ: Կեանքիս մէջ այդպիսի պահ չէի ապրած: Ես՝ աշխարհականս պիտի մկրտէի Հայ հոգեւորակա՞նը: Սրբազանը տեսաւ զարմացկոտ նայուածքս եւ կրկնեց

- «Հրա՛նդ, մկրտէ՛ զիս»: Զգացի որ ան՝ մեր անհետ կորած պապերու շունչին եւ մեր պատմութեան հետ էր այդ պահուն: Ես պատահականօրէն այդ բոպէին այնտեղ էի եւ այդ պատիւին կարժանանայի: Խոնարհեցաւ: Ամենայն ակնածանքով Վանայ ծովու ջուրը ափիս մէջ առած՝
- «Մեր Եկեղեցւոյ սուրբ պապերու անունով, կը մկրտեմ Քեզ, քաջարի եւ նուիրեալ Աստուծոյ ծառայ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան: Թող անոնց հաւատքը զօրացնէ ու ամրապնդէ քայլերդ՝ Հայ Եկեղեցւոյ եւ Ազգին ծառայելուդ աշխատանքներուն մէջ»: Սրբազանի աչքերը թաց էին:

Պահեր կան, որոնք անմիջապէս կը քանդակուին եւ մաս կը կազմեն մեր կեանքին: Վանայ Ծովու Մկրտութիւնները այդ պահերէն էին:

Սրբազան՝ Մարդը եւ Հոգեւորականը

Հիմա երբ յետադարձ ակնարկով կը նայիմ Սրբազանի անձին ու գործին, կանդրադառնամ, որ Սրբազանը անարատ հետեւորդն էր հայ եկեղեցականներէն՝ Նէրսէս Մեծին ու յատկապէս Խրիմեան Հայրիկին: Այս երկու հսկաները, Հայ եկեղեցին ժողովուրդի՛ն բերին: Երկուքն ալ՝ իրենց միտքն ու կարողականութիւնը ի սպաս դրին գուրգուրալով ժողովուրդի պահանջներուն վրայ: Մեծն Ներսէսի ժամանակ Հայաստան անկախ էր: Ան օգտագործեց պետականութեան ընծայած բոլոր կարելիութիւնները: Խրիմեան Հայրիկ այս պատեհութիւնը չունեցաւ: Հայկական պետութիւն չկար: Հայութեան մէկ մասը ենթակայ էր Թրքական, իսկ միւս մասը՝ Ցարական կամայականութեան: Քաջարի կաթողիկոսը չենթարկուեցաւ այս երկու հսկայ պետութիւններուն: Դէմ կեցաւ երկուքի ոտնձգութիւններուն երբ

անոնք հայուն իրաւունքերը ոտնակոխեցին: Խրիմեան ամենէն տիրական հոգեւոր անձնաւորութիւնն է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ: Սրբազան Աշճեան խորագոյն յարգանք ու ակնածանք ունէր Խրիմեանի նկատմամբ: Ինքն ալ ծնած էր Սփիւռք՝ երբ Հայաստան անկախ չէր եւ ուր համայնավարութիւնը կը տիրէր: Ան շատ կանուխ տարիքէն գիտակցեցաւ՝ որ Հայ Եկեղեցին մեծ պարտականութիւն ունէր հայ ազգային ինքնութիւնը պահպանելու եւ շարունակելու համար: Այս գիրտակցութիւնը համոզման վերածուեցաւ եւ գործնականացաւ: Ան Հայ Եկեղեցւոյ ընդմէջէն ծառայեց՝ Լիբանանի, Իրանի եւ Միացեալ Նահանգներու համայնքներուն: Իսկ երբ Հայաստան անկախացաւ, որոշեց Տուն դառնալ: Պատեհ առի՞թը. Հայաստանեայց Եկեղեցւոյ հռչակման 1700 ամեակն էր: Ան սիրով ընդառաջեց իր ուսուցիչ Գարեգին Առաջին Կաթողիկոսի հրաւէրին եւ ստանձնեց 1700 ամեակի Կեդրոնական Մարմնի նախագահութիւնը: Այս՝ առիթը եղաւ որ Սրբազանը իր բացառիկ մասնակցութիւնը բերէ Հայաստանի մէջ քրիստոնէութեան վերականգման աշխատանքներուն:

Ի՞նչը կը բնորոշէ Սրբազան Մեսրոպ Արք. Աշճեանը:
Սրբազանը իր մէջ կը մարմնաւորէր այն երեք հիմնական յատկութիւնները, որոնք ՀԱՅ հոգեւորականի կեանքին առանցքը պէտք է կազմեն-
-ՀԱԻԱՏՔ՝ Աստուծոյ եւ Անոր Միածին Որդիին՝ Յիսուս Քրիստոսի նկատմամբ:
- Անխախտ Համոզում՝ Հայ ազգի գոյութեան ՈԳԻի նկատմամբ:
- Նուիրում՝ Հայաստանի ԱՊԱԳԱՆ կառուցելու աշխատանքին:
Այս երեք սկզբունքները արտայայտուած են իր հետեւեալ խօսքին մէջ-«Հայ Եկեղեցին եւ Երկիրը հաւատարիմ պէտք է ըլլան իրարու»:

Սրբազան նուիրեալ մըն էր Հաւատքին եւ Հայ Ժողովուրդին:
Ան իր ժամանակի հոգեւորակա՛ն էր:
Զգաց ժողովուրդին պահանջները եւ անոնց ծառայեց:
Կամրջեց անցեալն ու ապագան, Հայաստան ու Սփիւռք:

Միշտ պիտի փնտռենք իր ներկայութիւնը եւ բնաւ պիտի չմոռնանք իր կատարածը:

Հայ Եկեղեցին կորսնցուց 20րդ դարու իր ամենէն կարեւոր հոգեւորականներէն մին:
Հայ Ազգը կորսնցուց իր ամենէն ազնուական զաւակներէն մին:
Հայրենիքը կորսնցուց իր կառուցող զաւակներէն ամենէն կարեւոր

հսկաներէն մին:

Փոխելով Փիլիսոփայ Ճան Տաննի արտայայտութիւնը, կրնանք առանց վարանումի ըսել՝ Սրբազան Աշճեան իր կեանքով եւ գործով, նուաճեց մահը եւ դարձաւ Հայութեան հպարտութիւնը:

Դոկտ. Հրանդ Մարգարեան
Թատերագիր, մտաւորական
2005 Երեւան

Երթաս Բարով Սրբազան Հայր

(Մեսրոպ Արք. Աշճեանի Յիշատակին)

Ահա այսօր
Ես սգաւոր
Ու ծնրադիր՝
Լուսապայծառ
Յիշատակիդ առջեւ անբիծ ու անբասիր,
Աղօթքի պէս հոգեպարար
Կը մրմնջեմ առանձնաբար՝
-Երթաս բարով, Սրբազան Հայր...

-Երթաս բարով...
Թէեւ երթդ անակնկալ
Եւ վաղաժամ՝
Երթըդ ըլլայ յօժարակամ
Աստուծոյ մօտ ամենակալ
Եւ հիւրընկալ,
Երթըդ ըլլայ լոյսի նման
Լոյսերու մէջ ու բարութեան,
Ազնուութեան, համեստութեան,
Ու գոհութեան,
Երթըդ ըլլայ ճամբորդութիւն,
Երթըդ դէպի յաւերժութիւն...

-Երթաս բարով, Սրբազան Հայր...
Բայց նախ քան այս երթը վերջին՝
Արարիչին,
Շնորհ ըրէ ինծի եւ իմ նմաններուս
Հազարաւոր,
Միշտ ենթակայ նոր փորձութեանց,
Միշտ մեղաւոր,
Տեսնելու քեզ վերջին անգամ
Քու սրբազան կերպարանքիդ ու տեսքիդ մէջ
Լուսազարդեալ,
Տեսնելու քեզ կենդանացեալ,
Եւ լսելու ձայնդ անշէջ,
Հեզահամբոյր, հաղորդական
Ու վարակիչ,
Եղբայրութեան ու բարութեան,
Այլեւ սիրոյ
Յորդոր որպէս:

Ա՜խ ես այսօր
Ահեղ վիշտէս
Պարտեալ մէկ անձ՝
Պարտեալ վիշտին դէմ դերազանց,
Աղօթքի պէս
Երբ առանձին
Կսկծագին
Կը մրմնջեմ
Յիշատակիդ սրբութեան դէմ՝
-Երթաս բարով, Սրբազան Հայր...

Կարծես ես ալ քեզի հետ եմ,
Կարծես ես ալ...
Ես քեզի հետ կը ճամբորդեմ...:

Շահպան

Նիւ Եորք
5 Դեկտ. 2003

Իրաւունք Զունէիր
(Մեսրոպ Սրբազանի յիշատակին)

Այս գրոյցը քեզ հետ է Սրբազա՛ն: Եզակիով կը դիմեմ քեզի, որովհետեւ զիս քու մտերիմներուդ շարքին դասելու պատիւին արժանացուցած ես, եւ իմ կարծիքովս, քու համեստութիւնդ եւ հասարակ մահկանացուներուս այնքան մատչելի ու անմիջական ըլլալու նկարագիրդ խորթ հնչիւն մը պիտի տար ամէն տեսակի պաշտօնականութեան:

Դուն գիտէիր, թէ լսելով քու այսպէս հեռանալդ քանի քանիներ ուղղակի կաթուածահար հոգեվիճակի պիտի մատնուէին՝ լքուած եւ դաւաճանուած զգալով իրենք զիրենք: Անոնցմէ այն մասը, որ կ՚ապրի հայրենիքի մէջ եւ վերջին տարիներուն շարունակ զգացած է քու հայրական ու մարդկային հպումդ, անցեալ օր մեծ խռովքով կը փորձէր քեզ այս հողին վրայ գոնէ վերջին տեսութեամբ մը մխիթարուելու կարելիութիւնը ունենալ: Ափսոս որ կարելի չեղաւ, ափսոս որ հողեղէն կազմուածքդ վերջին անգամ քու այնքան պաշտած երկրիդ հետ հաղորդուելու կարելիութիւնը չունեցաւ:

Դուն եւ միայն դուն գիտէիր, թէ քանի՜քանի կարեւոր ծրագիրներ, ոմանք միայն յղացման ընթացքին մէջ, ոմանք արդէն ձեռնարկուած, կիսատ պիտի մնային եւ ոչ մէկ երաշխիք պիտի ըլլար, որ թէկուզ անոնցմէ մէկ փոքր մասը կարենար հասնիլ աւարտի մը:

Դուն շատ լաւ գիտէիր, որ պատմական հայրենիքի եզերքներուն երազանքով նոր սերունդներ ներշնչելու պարտաւորութիւնն ու առաքելութիւնը որքանով իրականացուցած էիր ու տակաւին որքան երկար ճամբայ ունէիր կտրելու այդ ուղղութեամբ:

Դուն գիտէիր, որ գրադարանի ամբողջ բաժին մը պարապ պիտի մնար եւ բազմաթիւ կոթողական գործեր այլեւս անտիպ պիտի մնան քու վրադ իրենց վերջին յոյսը դրած հեղինակներու պահպանակներուն մէջ, միւս կողմէ խնամքով եւ բծախնդրութեամբ լոյս աշխարհ եկած բազմաթիւ հատորներ պիտի չկարենան գտնել իրենց ընթերցողի հասցէն, պիտի դատապարտուին մնալու մութ եւ խոնաւ պահեստներուն մէջ:

Դուն շատ լաւ գիտէիր, որ Հայոց երկինքին տակ քեզի պէս մտածող, քեզի պէս ապրող, քեզի պէս գործող մարդոց կենդանի ներկայութիւնը որքան կենսական էր հաւասարակշռելու համար այն անբան եւ անպիտան պետական

պաշտօնեաներուն հսկայ բանակին չըրածներուն հաշիւը, կամ թեթեւցնելու համար մտաւորական եւ ստեղծագործ մարդուն բեռը, կամ հոգալու համար անտէր մնացած որբուկներուն կարիքները, կամ ջերմացնելու եւ կեանքով լեցնելու համար լքուած ու կիսաքանդ մշակութային եւ հոգեւոր օճախները:

Դուն շատ լաւ գիտէիր այս բոլորը, բայց կը շարունակէիր զարմանալի անխղճութեամբ վարուիլ քու վիրաւոր սրտիդ հետ, դիմագրաւելով այլոց վիշտն ու ցաւը՝ փոխանակ խուսափելու անոնցմէ, կը շարունակէիր դաժանօրէն չարչրկել յոգնած մարմինդ, ցատկելով երկրէ երկիր, վկայութիւն տալով, համոզելով, մեկենասներ ու հովանաւորներ փնտռելով, կամրջելով ցաւն ու սպեղանին:

Արդեօք ի՞նչ կը բաներ ուղեղդ:

Եթէ կը կարծէիր, որ այս թափով աշխատելով պիտի կարենայիր՝ ի հեճուկս քեզ մօտիկ թուացող մահուան, կարճ ժամանակամիջոցին իրագործել ամբողջ կեանքի մը ծրագիրները, սխալ, սարսափելի սխալ դուրս եկաւ հաշիւդ: Հազար անգամ անտեսեցիր հանգիստ աշխատելու, առողջութեանդ ուշադիր ըլլալու խորհուրդները. կարծես ի հեճուկս քեզ սիրողներուն եւ քեզմով մտահոգուողներուն, աւելի եւ աւելի կը բեռնաւորէիր տկար մարմինդ, աւելի ծանր հոգերու տակ կը մտնէիր, հոգեպէս եւ ֆիզիքապէս աւելի սպառող յանձնառութիւններու կը նետուէիր:

Սրբազա՛ն, քիչ մը գիւղական անոտիապաշտութենէ մղուած, խնդրած էի քեզմէ, որ ձեռք քաշես վերջին շրջանին ձեռնարկած այն աշխատանքէն, որով կ՚ուզէիր կանոնաւորութիւն ու ընդհանրութիւն մտցնել թաղման կարգին մէջ, այդ նպատակով շարունակ գերեզմանատուներ կ՚այցելէիր, տապանաքարերու արձանագրութիւններ գրի կ՚առնէիր, մահախօսականներու հաւաքածոներ կը կազմէիր, մէկ խօսքով սեւեռած էիր մահուան գաղափարին վրայ: Անշուշտ ոչինչ կրնար քեզ շեղել քու մտադրութենէդ, քու սլացքէդ, գոնէ այդպէս կը կարծէիր, մինչեւ այդ չարաբաստիկ օրը:

Իրաւունք չունէիր, Սրբազան, այսպէս շուտ հեռանալու մեզմէ, իսկ եթէ այսպէս որոշած էիր թաղուիլ հեռու հայրենիքէն, քու պաշտած հոգեւոր ուսուցիչիդ եւ քեզ ձեռնադրողի կողքին, առաւել եւս իրաւունք չունէիր այսքան շուտ հեռանալու Հայաստանէն:

Բայցեւայնպէս՝ Տէ՛ր, փառաւորէ քու վկադ:

Աբօ Պողիկեան

Սփիւռքահայ մտաւորական

«Ազդակ» օրաթերթ

Հայաստան Աշխարհի Հաւատաւոր Ուխտաւորը

(Մեսրոպ Արք. Աշճեանի անմոռաց յիշատակին)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Զարեհեան կոչուող սերնդի երկու կարկառուն, մեծանուն եւ անմոռանալի դէմքերի ես բախտն եմ ունեցել հանդիպելու, ծանօթանալու դեռեւս 1960-ական թուականներին, երբ որպէս Թեհրանի Թեմի պատգամաւոր մասնակցել եմ Կիլիկեան կաթողիկոսութեան Ազգային ժողովներին եւ այդ թուականներին ստեղծուած կապն ու մտերմութիւնը շարունակուել ու զարգացել է հետագայ տարիների ընթացքում ուր որ հանդիպելու եւ միասին լինելու առիթներ են ստեղծուել, լինի դա Լիբանանում, Պարսկաստանում, ԱՄՆ-ում, Հայաստանում թէ այլուր:

Այդ թուականներին դեռեւս նորընծայ վարդապետներ էին Հայր Գարեգին Սարգիսեանը (հետագայում Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռակից Կաթողիկոս, յետոյ Կաթողիկոս Գարեգին Երկրորդը եւ ապա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը) եւ Հայր Մեսրոպ Աշճեանը:

Մէկը միւսին լրացնող դէմքեր էին նրանք, եւ ի զուր ու անտեղի չէր, որ Գարեգին Վեհափառը Մեսրոպ Սրբազանին վստահեց Քրիստոնէութիւնը Հայաստանում Ազգային Կրօն հռչակելու 1700-ամեակի տօնակատարութիւնների գործադիր քարտուղարի պատասխանատու պաշտօնը: Իրենց տարողութեամբ, բովանդակութեամբ եւ իրագործումներով, արդէն իսկ խօսուն փաստ են այդ տօնակատարութիւնները եւ անհրաժեշտն արդէն իսկ բազում անդրադարձներով ասուած է այդ մասին, հետեւաբար հարկ չկայ կրկնութիւններ անելու: Սակայն անհրաժեշտ եմ համարում կրկնակի անգամ շեշտել այն հանգամանքը, որ եթէ Մեսրոպ Արք. Աշճեանը իր ամբողջ հոգով ու նուիրումով չփարուէր այդ մեծածաւալ գործի իրականացմանը եւ չլինէր Վեհափառ Գարեգին Առաջինի աջ բազուկը այդպիսի տարողութեամբ ու խորքով չէր իրականանայ այդ պատմական բացառիկ նշանակութիւն ունեցող ծրագիրը:

Մեր եկեղեցական պատմութեան մէջ իրենց ուրոյն ու բացառիկ դիրքը գրաւած եւ իրենց կոչման վեհագոյն բարձրութեան վրայ կանգնած այդ երկու դէմքերը անսալով Դէպի Երկիր կոչին, նոր շունչ, նոր եռանդ ու կորով ներշնչեցին նորանկախ հայրենիքին, որը տարածուեց հոգեւոր, մշակութային, բարեգործական եւ ուխտաւորական բնագաւառներում, եկեղեցիների ու վանքերի նորոգութիւններ, որբախնամ աշխատանքներ, հաւաքական մկրտութիւններ «Այգաբաց» միութեան թէ «Մեծն Ներսէս» բարեգործական միութեան նախաձեռնութիւններ, «Մուղնի» հրատարակչականի հիմնում, աւելի քան 200 հատոր գրքերի հրատարակութիւն ընդամենը չորս տարուայ ընթացքում, գիտական, բանասիրական, ազգագրական

գիտաժողովների կազմակերպում, որոնք ընդգրկում էին ոչ միայն Հայաստանեայց Եկեղեցուն եւ Հայոց Պատմութեան հետաքրքրող հարցեր, այլ խորքի մէջ դարձան նաեւ Հայ Դատի հսկայածաւալ քարոզչութիւն: Եւ այդ բոլորից վեր 1700-ամեակի տարիներին Մեսրոպ Արք. Աշճեանը դարձաւ Հայաստան Աշխարհի անզուգական ուխտաւորը իր տկար սրտով թէեւ, բայց որպէս հովիւ քաջ, բարձրանալով Հայոց լեռնալանջերը գաւազանը ձեռին, եղաւ ամենուր, Հայոց երկրի մի ծայրից միւսը, Հիւսիսից Հարաւ եւ Արեւելքից Արեւմուտք, Ջաւախք ու Արցախ, Անի ու Բագարան, Երուանդաշատ ու Խոր Վիրապ, Նպատ լերան լանջերից մինչ եւ Գէլիգուզան եւ Սասնայ սարեր, Արաքսի ափերից մինչեւ Արածանի, Կիլիկիա, Սիս, Հռոմկլայ ու Մուսալեռ, Վան ու Ախթամար ու Տիգրանակերտ: Ինչ խօսք, որ իր այդ բացառիկ նախաձեռնութիւնը ոգեշնչեց բազում ուրիշների, որոնք խումբ առ խումբ Արեւմտեան Հայաստան ուխտի են գնում, բովանդակ Սփիւռքից յագեցնելու համար իրենց հոգում մխացող կարօտն ու հայրենաբաղձութիւնը:

Հայրենի հողի կանչն է այդ, որի մեծ շեփորահարը եղաւ Մեսրոպ Սրբազանը, որ մի ձեռքում խաչ եւ միւսում գրիչ բռնած Հայ Եկեղեցու պատմութեան մէջ ներկայանում է իբրեւ կրօնագէտ, պատմաբան, արձակագիր, հրապարակագիր, հրապարակախօս, եւ ի վերջոյ Մեծ Ուխտաւորը Հայաստան Աշխարհի:

Իր խոստմանն ու գաղափարին գերազանցօրէն հաւատարիմ մնաց Տէր Մեսրոպ Արք. Աշճեանը իր կեանքն անմնացորդ նուիրումով զոհաբերելով հայրենիքին եւ Հայաստանեայց Եկեղեցուն:

Իր յիշատակը յաւէրժ կ՛ապրի մեր պատմութեան մէջ:

Նորայր Պահլաւունի

Ի Յուշ Մեսրոպ Սրբազանին

Գրադարանիս վրայէն հոգելոյս Զարեհ կաթողիկոսի բարի եւ անուշ դէմքը այսօր աւելի տխուր կը նայի: Նկարը 1963 թուականի փետրուարեան համատարած սուգի օրերէն կու գայ, նուէր՝ Մեսրոպ աբեղայէն:

Զարեհ կաթողիկոսի հոգեւոր, ազգանուէր, եւ յատկապէս՝ ծառայական կերպարին ամենէն հաւատարիմ հետեւորդներէն մէկն էր այժմ հանգուցեալ Մեսրոպ Սրբազանը: Գաղափարապաշտ եկեղեցականի բացարձակ տիպար մը, որ իր գտնուած վայրերուն մէջ Անթիլիաս, Հալէպ, Նոր Ջուղա, Արեւելեան Ամերիկա, Հայաստան, իր վարած բոլոր պաշտօնները կատարելու ատեն, իր գործերուն, խօսքին ու գիրին մէջ դրաւ հայրենակարօտ հաւատաւոր պատգամախօսի երանգ

մը, որ զինք դարձուց Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ յատկապէս Կիլիկեան միաբանութեան ուխտեալ ծառայողներէն մէկը:

Վերջին տասնամեակին Մեսրոպ Սրբազան իբրեւ ծառայութեան դաշտ ընտրեց վերանկախացած Հայաստանը: Հայրենի երկրէն ան անդուլ տքնանքով շեփորեց հայրենական մշակութային արժէքներուն, պապենական ողջ ժառանգութեան պահպանման անհրաժեշտութիւնը: Հաւաքական մկրտութիւններ, վանքերու վերանորոգում, կոթողներու վերարժեւորում, գիրքերու հրատարակութիւն եւ տասնեակներով հատորներու մեկենասութեան ապահովում դարձան իր հանապազօրեայ զբաղումները: Անխոնջ եւ յարատեւ աշխատանք՝ ի հեճուկս սրտի հիւանդութեան ահազանգին:

Զինք տեսանք պատկերասփիւռային ծրագիրներուն ընդմէջէն, Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ տարածքներուն վրայ, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ կամ Սիսի Ս. Սոֆիայի թէ Հռոմկլայի աւերակներուն մէջ պսակ օրհնելու ատեն, Եփրատի ջուրերով զովանալու եւ Վանայ լիճի ջուրերուն մէջ ոտաբոպիկ քալելու ժամանակ, Վասպուրականի եւ Տարօնի հայկական բնակավայրերուն եւ յուշարձաններուն որոնման ընթացքին, իբրեւ ուխտաւոր Մշոյ Սուլթան Ս. Կարապետին, հայրենի աշխարհի պատմական վայրերուն մէջ՝ տարագրուած եւ խողխողուած մտաւորականներու, հանրային գործիչներու, հայրենասէր հոգեւորականներու եւ նահատակ ֆեդայիներու ոտնահետքերուն հետեւորդ: Հայ Դատի անժամանցելիութեան, հայոց հայրենիքի ամբողջականութեան ի՜նչ հրաշալի պատգամ եւ հայ ազգի առհաւական ժառանգութեան ի՜նչ շքեղ ոգեկոչում:

Զարեհ Սքանչելին իր նախատիպարն էր: Անոր օրհնաբեր կանչին պատասխանելով եկեղեցական ասպարէզը իբրեւ հայութեան ծառայութեան միջոց ընտրած Մեսրոպ Սրբազանը հաւատարիմ մնաց իր ուխտին: Հիմա իր հոգեղէն երթը կանխահասօրէն աւարտած՝ կ՚երթայ միանալու երախտաւորներու փաղանգին՝ հաւատքի եւ յանձնառութեան յիշատակ մը ժառանգ ձգելով մեզի:

Պտղունց մը հող Նեմրութայ սարէն ու պուտ մը ջուր Վասպուրականի Շուշանց գիւղի աղբիւրէն՝ իբրեւ բալասան յոգնատանջ մարմնին:

Տիգրան Ճինպաշեան
Սփիւռքահայ մտաւորական
«Ազդակ» օրաթերթ

Յուշեր Մեսրոպ Սրբազանի Մանկութենէն

Դեկտեմբերի ցուրտ առաւօտ է, սրտակից բարեկամներու հետ կ՚ուղղուինք դէպի Մուղնիի Ս.Գէորգ եկեղեցին, ուր ասկէ առաջ գաւակներուս հետ եղած եմ, բայց այս անգամ, չենք երթար մեր առաջին այցելութիւնը տալու եւ ծանօթանալու վանքին հետ, չենք երթար վերանորոգումները տեսնելու, կամ վայելելու եղած տօնակատարութիւնները, այլ կ՚երթանք իբր անմխիթար սգակիր, ներկայ ըլլալու եղբօրս Մեսրոպ Արք. Աշճեանի մահուան առաջին տարելիցին★

Երեւանէն Մուղնի երկարող ճամբուն վրայ, ինքնաշարժի պատուհանէն կը դիտեմ, արագ փախչող շէնքերն, հարթ տարածութիւնները, հոս ու հոն մենաւոր տունները, անդին՝ ծառերու խմբակ մը ու տխրօրէն կը մտածեմ, որ ամէն ինչ նոյնն է, միայն Սրբազանը չկայ, արդար գայրոյթ մը կը բռնկի մէջս ճակատագրին դէմ, մահուան դէմ, որու մասին մտածելէ միշտ խուսաբեր ենք՝ մերժելով նայելու աչքերուն մէջ բայց որ միշտ մեզի յաղթած է, ինք մնալով յաւիտենական՝ ինչպէս կը գրէ Նար-Դոս★

Երբ գիւղին կը մօտենանք, հեռուէն կ՚երեւին գորշ, մթագնած ամպերը, որոնք կարծես այսօրուայ տխրութիւնը աւելի շեշտելու նպատակով, իջեր են ցած ու ծածկեր Մուղնիի երկինքը★

Ամպերէն աւելի մութ ու մռայլ սրտերով կը հասնինք վանք, որ իր տերեւաթափ ծառերով, հողմահար վարդերով ու ամբողջութեամբ ծածկուած՝ ձմրան ճերմակ սաւանին տակ, վեհօրէն կը կանգնի. տխուր լռութիւն մը կը տիրէ հոս, որ շուտով կը խանգարուի մեր քայլերուն հանած աղմուկով★

Պահ մը կանգ կ՚առնեմ, ու աչքերով վանքին շրջանը ընելով, կը փորձեմ ամէն անկիւն Սրբազանը տեսնել ու մօտիկ անցեալէն՝ յուշերու պատառիկներ՝ կապուած մեր Մուղնի այցելութիւններուն հետ, կուգան խառնուիլ ներկային. կը յիշեմ այն օրը՝ երբ Սրբազանի ժպտուն նայուածքին տակ, ի տես մեր զարմացած աչքերուն, տեսանք վերանորոգուած վանքը իր երբեմնի շքեղութիւնը վերստացած եկեղեցիով, վերակառուցուած յարակից շէնքերով, ճաշակով կահաւորուած դահլիճով ու մանաւանդ՝ շրջաբակը՝ որ բուրումնաւէտ վարդաստանի էր վերածուած եւ որուն կուգար միանալ թոնրատունէն եկող անուշ լաւաշի բոյրը, առաւել՝ այդ օրը գուգադիպելով Վարդավառի տօնին, գիւղի երախաները եկեր ու իրենց ուրախ բացագանչութիւններով, մեր աւանդութիւնը կը շարունակէին իրարու վրայ ջուր թափելով, անշուշտ չմոռնալով մեզի ալ բաժին հանել:

Այդ օր Մուղնիի վանքէն բաժնուեցանք, մեր հետ տանելով այս հնաւուրց վանքին հանդէպ, Սրբազանէն մեզի փոխանցուած սէրը, զոր միշտ մեր մէջ վառ պիտի մնայ, ինչպէս պիտի մնայ նաեւ յիշատակը բոլոր այն նուիրական

սրբավայրերուն, որ իրեն հետ այցելեցինք, առիթը ունեցանք հաղորդուելու մեր անցեալով եւ հիանալու, մեր նախնիներու ժայռակերտ հաւատքով կառուցած եկեղեցիներուն, որոնց անունները դպրոցական վաղ տարիներէն սկսած, մեզի հետ եղած ու մեր ճամբան լուսաւորած են★

Այս յուշերով զօրացած, կը պատրաստուիմ եկեղեցի մտնել՝ երբ անծանօթ բայց ցաւակից մուղնեցիներ, մօտենալով ինծի, կը փաթթուին իմ ցաւն ու արցունքները բաժնելու, անմիջական ու ջերմ հարազատութիւն մը ստեղծելով մեր միջեւ★

Կը մտածեմ, անոնք դեռ երէկ ուրախ էին, որ Սրբազանը եկաւ իրենց գիւղն ու վանքը շէնցուց, դեռ երէկ զինք կը դիմաւորէին «Մուղնու Սրբազանը» գոչելով, այդ պարզ ու գեղեցիկ բառերուն մէջ դնելով իրենց ամբողջ սէրը, եւ վստահ եմ միշտ կը սպասէին իրեն որ կուգար բաժնելու իրենց ցաւն ու ուրախութիւնը, բայց...պատահեցաւ անսպասելին... Ու օր մըն ալ չեկաւ ան, եկաւ սահմռկեցուցիչ լուրը եւ ցնցեց զիրենք, կառչելով վերջին արդար պահանջի մը, ուզեցին մարմինը ունենալ հոս, որ գէթ կարենային վերջին հրաժեշտը ըսել, մոմ մը վառել, ծաղիկ մը դնել, բայց արդելքներ կային, չեղաւ★

Եւ հիմա արդէն տարելիցն է...

Կը մտնենք եկեղեցի, ուր ցուրտ է ու խոնաւ. պատերը, դարերու թողած հետքերուն հետ միասին, կը կրեն նաեւ դեռ նոր արտասանուած Սրբազանին բառերուն արձագանքները, խորանին վրայ կայ Սրբազանի ծաղիկներով շրջապատուած նկարը՝ ուրկէ լո՜ւռ կը դիտէ. աչքերս սեւեռած հոն՝ կը փոխադրուիմ դէպի անհետացած մանկութիւն★

Կը յիշեմ մեր թաղը, մեր թաղին մէջ նշանաւոր մեր բակը, մեր տունը ու ծնողքս որ տարագրութեան դառն համը ճաշակած՝ յետոյ հիւրընկալ Լիբանանի որբանոցներուն մէջ հասակ նետած երկու որբեր, իրար միանալով բոյն կազմած էին ու բախտաւորուած հինգ զաւակներով. Յովհաննէս, Յակոբ, Սագօ (որ հազիւ քանի մը ամսուայ, կը մահանայ) Հրայր (ապագայ Մեսրոպ Արքեպիսկոպոսը) եւ ես★

Կ՚ապրէինք շատ համեստ պայմաններու մէջ, թէեւ հացի կարօտ չէինք, բայց հացի առատութիւնն ալ մեզի ծանօթ չէր եղած բնաւ. բոլորս ալ նոյն վարժարանը յաճախած էինք, մեծերը ուսման ընթացքը աւարտած ըլլալով, զիս դպրոց տանելու պարտականութիւնը Սրբազանը (Հրայրը) կը կատարէր, եւ ամէն առաւօտ, ձեռք ձեռքի դպրոց կ՚երթայինք, ես դասագրքեր տակաւին չ՚ունէի, բայց Հրայրը ունէր, եւ յանկարծ, ճամբան կանգ առնելով ինծի կուտար զանոնք եւ ինք, ուրիշ գիրք մը բանալով կը շարունակէր թէ՛ քալել եւ թէ՛ կարդալ★

Բաւական տեղ անխօս կը տանէի, բայց՝ երբ գրքերը ծանրանալ կը սկսէին, կը սկսէին նաեւ գանգատներս, «պիտի չտանիմ գրքերդ, հոս մայթին վրայ պիտի

ձգեմ ու քալեմ» կ՚ըսէի, բայց անօգուտ, գրքի ընթերցման մէջ մխրճուած՝ ոչ ալ կը լսէր զիս. քանի գրքերը Սրբազանին անբաժան ընկերներն էին, կը կարդար քալելու ատեն, կը կարդար ուտելու ատեն, կը կարդար նոյնիսկ քնանալու ժամերէն գողնալով եւ օգտուելով՝ փողոցը լուսաւորող աղօտ լապտերէն, երբ մեր սենեակի ելեկտրական հոսանքը անջատուած կ՚ըլլար★

Այս կարդալու պատմութեան հետ կապուած դէպք մըն ալ կը յիշեմ.

Ամրան արձակուրդներուն՝ յաջորդ տարեշրջանի կրթաթոշակը ապահովելու մտահոգութեամբ, պատանի Հրայրը որոշ հաստատութեան մը մէջ իր տարիքին յարմար գործ մը գտնելով կ՚աշխատէր. այդ հաստատութեան դիմացը կը գտնուէր Լիբանանի մէջ հանրածանօթ գրատուն մը «Լիպրէրի Անթուան» անունով, որ նաեւ Ֆրանսական գրական հրատարակութիւններու հետ առնչուած էր եւ ուր Հրայրը գործէն արձակուելէն յետոյ, կը սիրէր երթալ եւ իր նախասիրած գրքերը գատելով գնել★

Այս պարագան չէր վրիպած հաստատութեան տնօրէնին ուշադրութենէն, որ ազդուած այս պատանիին դէպի գրքերը ունեցած սէրէն եւ հետաքրքրութենէն, նաեւ թելադրուած՝ իր սրտի վեհանձնութենէն՝ քովը կը կանչէ զայն եւ շնորհաւորելէ ու քաջալերելէ յետոյ, որ միշտ յարատեւէ իր ընթարցասիրութեան մէջ, կը պատուիրէ որ այդ օրուընէ սկսեալ, ոեւէ գիրք կրնայ առնել, կարդալ եւ ետ վերադարձնել առանց ոեւէ վճարումի★

Ընթերցասէր պատանիի մը համար, ոսկեղէն առիթ էր այս★

Դարձեալ գրքերու հանդէպ իր ունեցած սէրը, յաճախ առիթ կուտար Յակոբ եղբօրս, որ զուարթ բնաւորութեամբ անձ մըն էր, կատակներ ընելու այդ ուղղութեամբ եւ զինք կոչելու «մեծ մարդ»★ Յակոբ եղբայրս ալ, ճակատագրի չար կատակով 62 տարեկան հասակին, արկածով հեռացաւ այս աշխարհէն★

Օր մը բաւական ուշ երեկոյ էր, Հրայրը տակաւին տուն չէր եկած, մօրս աչքերուն մէջ մտահոգութիւն կը կարդայի, քիչ ետք ոտնաձայններ լսուեցան սանդուխներուն վրայ, Յակոբը երթալ ստուգելէ յետոյ որ Հրայրն է եկողը, արագ սենեակ վերադառձաւ, մեզի պատուիրելով, որ երբ ներս մտնէ, ոտքի ելլենք ծափահարենք, այդպէս ալ ըրինք, ու ահա Հրայրը ներս մտաւ եւ առանց ինքզինք աւրելու գլխու շնորհալի շարժումով մեր ծափահարութիւնները ընդունեց. բոլորս խնդացինք եւ մօրս մտահոգութիւնը, որ բարկութեան պիտի վերածուէր, ուրախութեան փոխուեցաւ:

Քաղցր մանկութիւն, որու արժէքին գիտակցութիւնը կ՚ունենանք միայն այն ատեն, երբ տարիներու փոշին հագուելով, կը դառնայ հեռաւոր յուշ★

Գալով մօրս, հետզհետէ վարժուեցաւ ալ չմտահոգուիլ երբ Հրայրը կ՚ուշանար, որովհետեւ, գիտցաւ որ գաղութին մէջ տեղի ունեցող ոեւէ ձեռնարկ,

ըլլար այդ ազգային թաղում, դասախօսութիւն, եկեղեցական տօն, կամ ակումբի ժողով, անտես չէր անցնէր Հրայրի կողմէն, որ միշտ կարելին կ՚ընէր անոնց ներկայ ըլլալու, դպրոցական ժամերէն դուրս★

Օրին մէկն ալ Պուրճ Համուտի հայաշատ թաղերէն մէկուն մէջ, կը հանդիպի իտալացի տարեց զոյգի մը եւ անոնց ընկերանալով մինչեւ իրենց բնակարանը, աւելի ճիշդը խցիկը, կը տեսնէ որ կ՚ապրին չափազանց թշուառութեան մէջ, յուզուած՝ տուն կը վերադառնայ, եւ շուրջը հաւաքելով թաղին բնակիչները կը պատմէ անոնց մասին, բոլորին գութը շարժելով★ Շատ չանցած՝ այդ աղքատ իտալացի զոյգը կ՚որդեգրուի մեր թաղեցիներուն կողմէն եւ պէտք էր տեսնել, երբ ամէն կիրակի կէսօր, մեր սիրելի մայրերը, հաճելի իրարանցումով մը, ամէն մէկը շալկած քիչ մը պանիր, պտուղ, հաց, կերակուր կը բերէին կը լեցնէին պայուսակի մը մէջ, որ Հրայրը հազիւ կարենալով շալկել, կը տանէր մեզմէ բաւական հեռու գտնուող իտալացիներուն տունը, քանի մը ժամէն ետ վերադառնալով դէմքին՝ գոհունակ ժպիտ մը եւ ձեռքին պայուսակը՝ որ այս անգամ լեցուն էր աղօթքներով եւ բարի մաղթանքներով ուղղուած բոլորին★

Այս տարիքոտ զոյգին կողմէ, մօրս ուղղուած մի քանի շնորհակալութեան նամակներ դեռ եւս կան, որ սիրով կը պահենք ուրիշ ընտանեկան յիշատակներու հետ★

Մեր տունը ընդարձակ բակի մը վրայ նայող յարկաբաժին մըն էր՝ երեք սենեակներով սալոնով եւ խոհանոցով, որ կը բաժնէինք դրացի երկու ընտանիքներու հետ, ամէն մէկը ունենալով մէկ սենեակ, իսկ սալոնը եւ խոհանոցը բոլորին էր. երեք ընտանիքներն ալ բազմանդամ էին:

Կ՚ըսէին թէ ժամանակին, իր փառքի օրերուն շքեղ տուն մը եղած էր, բայց մեր բնակութեան շրջանին, կիսաւեր վիճակի մէջ՝ կարօտ էր ծանր նորոգութիւններու, ճմրան ցուրտն ու բուքը, բնաւ դժուարութիւն չէին ունենար իրենց ճամբան գտնելու պատուհաններու ճեղքուած անցքերէն եւ հանգիստ բազմելու մեր սենեակին մէջ, բայց մայրս լաւ գիտէր այդ անբաղձալի հիւրերը վտարելու կերպը, «տաքուկ» սովորութեամբ մը որ հետը բերած էր իր ծննդավայր՝ Հաւաւ գիւղէն★ Ան ճմրան գիշերները «քիւրսի» կը պատրաստէր, մանղալին մէջ ածուխ վառելով, յետոյ ծակտիկաւոր կափարիչով զայն ծածկելէ ետք, վրան հաստ ծածկոց մը կը նետէր եւ մենք երեք եղբայրներս եւ ես, մինչեւ մեր ծունկերը պաշտպանուած այդ ծածկոցին տակ, դաս կը պատրաստէինք, կամ մայրս դարձեալ իր Հաւաւէն հետը բերած՝ «կիստուկ աղբօր» կամ «մղոտ (մսկոտ) փսիկին» հեքիաթները կը պատմէր, մինչ մեր շէկ մազերով եւ մեղրագոյն աչքերով կատուն, մեր ծունկերուն քով՝ անո՜ւշ անո՜ւշ կը մրափէր. սակայն ամրան բնաւ դանդատ չունէինք, երբ նոյն անցքերէն, անուշ քամին ներս մտնէր:

Ամրան, բայց ամրան ո՞վ տունը կը մնար, երբ մեր բակը խաղերու համար ամէն յարմարութիւն ունեցող իր թաքստոցներով մեզ իրեն կը կանչէր, կը վխտային հոն՝ դրացի հայ, յոյն եւ արաբ մանուկները որոնք բոլորն ալ քիչ մը վեր, քիչ մը վար մեզի տարեկից ըլլալով, յետ միջօրէներուն միասին տեսակաւոր խաղերով մեր ժամանակը կը լեցնէինք. երբեմն ալ խաղերու տեղ եկեղեցական արարողութիւններ կ՛ունենայինք, որովհետեւ, Հրայրը շատ փոքր տարիքէն եկեղեցւոյ կապուած էր եւ Ս.Նշան մայր եկեղեցւոյ մէջ, լուսարար Պրն. Հայրապետի շուքին տակ սորված՝ ծէսերն ու աղօթքները, իր մէջ զօրաւոր կերպով ներկայ ըլլալուն, միշտ ի յայտ կուգային ամէնօրեայ կեանքին մէջ★ Օրինակ, երբեմն, մօրս սեւ վերարկուն հագած իբր փիլօն, ճերմակ սփռոցով ծածկուաց սեղանի մը վրայ զանազան չափի դրքեր շարելով, մէջտեղը Սրբանկար մը, կողմերը երկու մոմակալներ, խորան կը շինէր եւ պատարագ կը մատուցէր, ներկայ հաւատացեալները կ՛ըլլային մեր ծնողները, իսկ մենք պզտիկ դպիրները★ Արդարեւ՝ այդ սէրն ու կոչումն էր, որ զինք կանուխէն վանք տարաւ, հակառակ տունէն եկած բոլոր ընդիմութիւններուն՝ մանաւանդ մօրս աղաչանքներուն★

Այնպէս պատահեցաւ որ մէկ երկու անգամ ալ թաղումներ կատարեց★

Առաւօտ մը, չես գիտեր ուրկէ, վիրաւոր թռչուն մը եկած ինկած էր մեր բակը, ամբողջ օրը խեղճը պայքարեցաւ թռչելու փորձեր կատարելով, ամբողջ օրը մեր պզտիկ ուղեղները չարչարուեցան դարման մը փնտռելով... իրիկունը՝ մեռաւ պզտիկ թռչունը... արաբ դրացուհի մը ուզեց աղբակոյտին մէջ նետել զայն, սակայն հանդիպեցաւ մեր բուռն ընդիմութեան, չի ձգեցինք, մտածեցինք որքան անխիղճ է այս կինը, բայց ի՞նչ ընել... Հրայրը անմիջապէս մտածեց լուծումը, պզտիկ տուփ մը ճարելով, մէջը որպէս անկողին մի քանի տերեւներ դրաւ, յետոյ թռչնիկն ալ վրան զետեղելով, տարաւ թաղեց բակին հեռաւոր մէկ անկիւնը: Այդ օր պզտիկ թռչնիկին համար պզտիկ յուղարկաւորներ եղանք ★

Ուրիշ օր մը, դրացուհիի մը կատուն մեռած էր, խեղճ կինը, ընտանիքի անդամ մը կորսնցնողի կսկիծով կուլար ու կը սգար. Հրայրը խորհեցաւ որ եթէ կատուն թաղէ, կրնայ օգնած ըլլալ որ այս կնոջ վիշտը քիչ մը մեղմանայ. այդպէս ալ եղաւ եւ երբ, մենք մեր «պարտականութիւն»ը կատարելէ ետք, եկանք իրեն պատմեցինք, աչքերը ժպտացին ուրախութեամբ ու ալ անկէ յետոյ չլացաւ★

Հապա՞ թատրոնի ներկայացումները որ անպակաս էին մեր բակին մէջ. նիւթերը, երբեմն կ՛ըլլային յունական պատմութենէ՝ որովհետեւ յոյն ընտանիքներ կային, բայց ամենէն շատ կ՛ըլլար Հայոց Պատմութենէն ու այդ յոյն, արաբ պզտիկները կը դառնային մէկական հայ զինուոր, Վարդան Մամիկոնեան, Արշակ թագաւոր, իսկ աղջիկները՝ Փառանձեմ թագուհի, Սաթենիկ, եւայլն. ինք կ՛ընտրէր նիւթերը, ինք կը ղեկավարէր, ինք կը կազմակերպէր. հիմա երբ կը մտածեմ այդ

օրերու մասին՝ կ՛անդրադառնամ, որ Սրբազանը, այդ պզտիկ տարիքին առանց զգալու Հայոց պատմութիւն կը սորվեցնէր օտարներուն:

Օր մըն ալ հազիւ 14 տարեկան, մեր բակին մէջ եղած ներկայացումներէն «քաջալերուած» իրական թատրոն, իրական սրահի մէջ, իրական ժողովուրդի առջեւ ներկայացնելու համարձակութիւնը ունեցաւ եւ «Վարդանանց» պատերազմը ընտրելով իբր նիւթ, Ղեւոնդ Երէցի դերով բեմ բարձրացաւ, իր ընկերներն ալ հետը հանելով★

Այդ ներկայացման մէջ, ես ալ բեմ բարձրացայ իբր Շուշանիկ, բայց այնքան կարճ էր ըսելիք նախադասութիւնս, որ նոյնիսկ ինծի հետ փորձ ընելու ճանճրոյթը չունեցաւ★ նաեւ ձեռնարկէն շաբաթ մը առաջ, համարձակութիւնը ունեցած էր երթալու եւ խնդրելու Պրն. Վահան Փափազեանէն (կոմս), որ իր նախագահութեամբ պատուէ երեկոն, ինչպէս նաեւ գացած էր մինչեւ Անթիլիասի դպրեվանք խնդրելու հոգշ. Գարեգին վրդ. Սարգիսեանէն (ապագայ կաթողիկոսը), որ ներկայ ըլլայ եւ իր խօսքը ըսէ ★

Գարեգին վրդ. քիչ մը զարմացած, քիչ մըն ալ հետաքրքրուած այս պատանեակի քաջութենէն, խոստացած էր ներկայ ըլլալ, առ ի գնահատանք եւ քաջալերանք★

Այս հանդէսը տեղի կ՛ունենար 1955 Փետրուար 17-ին ժողովրդային Տան սրահին մէջ★ Զեմ գիտէր ինչպէս անցաւ ներկայացումը, այն ատեն գնահատել չէի գիտէր, բայց գիտեմ որ այդ օր եւ այդ օրերը նախորդող օրերը, մեծ եղբայրս՝ Յովհաննէսը չափազանց մտահոգութեան մէջ էր թատրոնի յաջողութեան նկատմամբ★

Բայց ժողովրդային տան մէջ կանգ չ՛առաւ Սրբազանին սէրը հանդէսներ կազմակերպելու մէջ, այլ հասաւ մինչեւ Ուաշինկթընի Արլինկթըն գերեզմանատուն, եղան Խորենացիի, Շնորհալիի նուիրուած յուշահանդէսներ, եղան տոհմիկ աւանդութիւններու վերյիշում, ցուցահանդէսներ, վանքերու նորոգում, մկրտութիւններ, ուխտագնացութիւններ, 17.000 մանուկներու երգի փառատօն, Մուղնի եւ այլք, ու տակաւին որքան մտածուած՝ բայց աւա՜ղ իր անժամանակ մահով, անաւարտ մնացած ծրագիրներ★

Հոգեպարար շարականները՝ միացած խունկի բուրմունքին, զիս ետ կը բերեն դէպի դառն իրականութիւն...

Մոմերը կը վառին ոմանք մեղմ, ոմանք զօրաւոր բոցերով...

Սրբազանին յիշատակը յարգելու եկած ժողովուրդին աղօթքները երկինք կը բարձրանան...

Աչքերս դարձեալ կը հանգչին Սրբազանին նկարին վրայ ու ինծի այնպէս կը թուի որ կը ժպտի, այո՛ կը ժպտի...

Կը մտածեմ, թերեւս կ՛ուզէ զիս մխիթարել...

Հռիփսիմէ

Աշճեան

Սրբազանի

քոյրը

19 Դեկտ. Նիւ Եորք

Մեսրոպ Անկրկնելի Սրբազանը

Անոնք, որոնք առիթն ու պատիւն են ունեցած վայելելու Մեսրոպ Սրբազանի մտերմութիւնը, հայ իրականութեան մէջ համեմատաբար բախտաւոր մարդիկ են, որովհետեւ կը խորհիմ, որ այն համոզումը ունին, որ դժուար կրկնելի հայու մը եւ հոգեւորականի մը հարազատութիւնն ու ընկերասիրութիւնը վայելած են:

Ցնցիչ է եւ ծանր ֆիզիքական կորուստը սիրելի Սրբազանին, որ այս աշխարհի տարբեր շրջաններու մէջ 2 Դեկտեմբերին յանկարծակիօրէն ցնցեց բազմահազարներու սիրտերը, որոնք շատ յաճախ կը մտածէին իր մասին, շատ յաճախ կ՛ուզէին խօսակցիլ իր հետ, շատ յաճախ կ՛ուզէին կարդալ իր գործունէութեան մասին եւ շատ յաճախ կ՛ուզէին փոխանցել իրենց գնահատանքը իր կատարած գերմարդկային եւ ամբողջովին հայրենանուէր աշխատանքին:

Փառասիրական եւ իշխանատենչական փորձութիւններու կտրուկ մերժումը թերեւս նախապայմանն էր ու մէկնակէտը բացառիկ ստեղծագործ մտքի մը անդուլ, անդադար եւ անընդմէջ հետեւողականութեամբ արդիւնաւորման եւ արտադրողականութեան, որ հայութեան, Հայ Եկեղեցւոյ եւ Հայաստանին ծառայելու ինքնամաշումով յատկանշուած նուիրուածութեամբը այսօր մեր ժողովուրդին կը ձգէ հարուստ աւանդ մը՝ եկեղեցագիտական, մշակութային, հրատարակչական, ուխտագնացային, եկեղեցաշինարարական, պատմակերտ դէմքերու աճիւններու հայրենացումով եւ բազում ազգային այլ արժէքներով յատկանշուող վիթխարի գործունէութեամբ:

Դժուար է ոչ միայն այս բազմազան գործունէութեան արժեւորումը կատարելը, այլ դիւրին չէ նոյնիսկ անոնց պարզ թւումը: Տագնապը իր պարագային, ժամանակի սահմանափակ ըլլալուն կը վերաբերէր իր անխոնջ ու անկշռոյթ աշխատունակութեան դիմաց:

Հայաստանի վերանորոգուած եկեղեցիներու, Արեւմտահայաստան այցելած ուխտաւորներու, Ուաշինկթընի մէջ հաւաքուած ցեղասպանութենէն վերապրածներու, հրատարակուած բազմահարիւր աշխատասիրութիւններու, տուն եւ ընտանիք կազմած հայ որբերու, նահատակ ազատամարտիկներու ընտանիքներու օժանդակութիւններու, Անթիլիաս-Զուգա-Նիւ Եորք-Էջմիածինի մէջ կերտուած աննախընթաց յաջողութիւններու իրողութիւններուն մէջ կայ ու պիտի մնայ Մեսրոպ Սրբազանին վաւերական կնիքը, որ իր մէջ կ՛ամփոփէր կրօնական ամբասիրութիւնը, ազգային արժէքներու հանդէպ խոր հաւատքը, փառասիրութեան մերժումը, հայութեան եւ հայրենիքին հանդէպ պաշտամունքը:

Եւ այնքան անջնջելի խորք ունին Սրբազանին իրագործումները, որոնք անոր յանկարծակի չիջումով չեն կորսուիր իսպառ եւ յաղթական դուրս կուգան ժամանակի կողմէ մղուած մոռացման պատերազմէն:

Զարախօսութիւններուն ժպիտով պատասխանելը, անոնց չանդրադառնալը եւ մոռնալով ներելը, ճիշտ է, որ կը բխէին Սրբազանին բարութենէն, բայց նաեւ գործի ու աշխատանքի հեւքոտ ընթացքին մէջ նման երեւոյթներու ժամանակ չտրամադրելու իրականութենէն:

Ֆիզիքապէս չկայ Սրբազանը այլեւս: Բայց հարուստ է աւանդը, որ ան ձգեց իր ետին եւ որուն համար ինք գոհ պիտի մնար անկասկած, եւ այնքան շատ են անոր աշխատանքներն ու իրագործումները հայ կեանքին մէջ, որ իրերայաջորդ սերունդները պիտի ճանչնան զինք, գիտակցին իր հայրենանուէր գործունէութեան եւ շարունակեն դաւանիլ այն արժէքները, որոնց համար ապրեցաւ ու գործեց Մեսրոպ անկրկնելի Սրբազանը:

Ս. Ա.

«Երկիր», 5-11 Դեկտեմբեր 2003թ.

Մեսրոպ Արք. Աշճեանի Յիշատակին

«Զարմանալին ի՞նչ է, գիտես© զարմանալին այն է, որ Դեկտեմբեր 5ին գիրքին ներկայացումը տեղի պիտի ունենար, իսկ անոր փոխարէնը՝ դագաղը եկաւ», այսօր հեռաձայնով կըսէր զինքը երկար տարիներ մօտիկէն ճանչցած ալեզարդ տիկին մը★

Տասը օր անցեր է, եւ Մեսրոպ Արք© Աշճեանի անակնկալ մահուան ցնցումը կը շարունակէ իր արձագանգները տարածել ամէն տեղ, բայց մանաւանդ հոս, Նիւ Եորք¬Նիւ Ճըրզի, ուր քսանամեայ իր առաջնորդութեան շրջանին յաջողած էր ստեղծել մտերիմ բարեկամներու ամուր ու լայնածիր շրջանակ մը★

Դեկտեմբեր 2-ի գիշերն էր, երբ աւագ բարեկամս՝ Օննիկ Մարաշեանը հեռաձայնեց, անհաւատալի լուրը փոխանցելով★ Նոյն օրը, քանի մը ժամ առաջ, Մեսրոպ Սրբազանը յանկարծամահ եղած էր★

Կը պատրաստուէինք, երեք օր ետք, միասին երթալու Նիւ Եորք, Սրբազանին կոթողական վերջին աշխատասիրութեան՝ հազարէջեան "The Echmiadzin Chronicles"ի շնորհանդէսին★ Ու անոր փոխարէն, տեղի ունեցան տան կարգ մը եւ օծում մը★

Զմեռնամուտի առաջին ձիւնամրրիկը, սակայն, Ուրբաթ եւ Շաբաթ օրերուն արգելք եղաւ, որ հարիւրաւոր մարդիկ Նիւ Եորքի Սբ© Լուսաւորիչ եկեղեցին երթային իրենց յարգանքի վերջին տուրքը մատուցանելու նորոգ հանգուցեալ հոգեւորականին★ Երեսուն սանթիմեթր ձիւն, ճամբաները անանցանելի★ Զգացողներուն շարքին ես ալ գտնուեցայ★ Այսուհանդերձ, յուղարկաւորներ չպակսեցան★ Վստահ եմ, որ բոլոր բացականերս, մեր տուներուն մէջ շրջափակուած, վայրկեան մը գտանք յիշատակի★

* * *

Պիտի չըսեմ, որ մօտիկ բարեկամներ էինք, քանի որ նորեկ մըն եմ այստեղ, իսկ ան շատոնց ձգած էր առաջնորդական պաշտօնը, Հայաստանի մէջ առաքելութեան անծայրածիր նոր հող մը գտնելով★ Բայց ծանօթ էինք, եւ տարիներու երկայնքին, պատահական հանդիպումները ստեղծած էին համակրանքի անհրաժեշտ հոսանքը★ Ընթերցողը թող ներէ, որ այս հապճեպ ու անկապ նշումները հաւանաբար արժէք մը չունենան, բացի արժանաւոր անհատականութեան մը ոգեկոչումի համեստ փորձ մը ըլլալէ★

Եկած էր Արժանթին 1984ին եւ 1990ին 'թուականները մօտաւոր են, յիշողութեամբ կը փորձեմ որոշ բաներ վերականգնել**★ Կը յիշեմ, որ առաջին այցելութեան, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ օրուան Կաթողիկոս Գարեգին Բ©ը ներկայացնելու առաջադրութեամբ եկած էր շքանշանով պատուելու համայնքի ծանօթ երգահան ու խմբավար Ժան Ալմուխեանը, բաւական աղմուկ յառաջացած էր՝ Էջմիածին¬Անթիլիաս հանրածանօթ վէճի ծիրին մէջ, քանի որ Անթիլիասի պատկանող եկեղեցականի մը ներկայութիւնը սրբապղծութեան պէս բան մը կը համարուէր★ 'Այդ օրերուն էր, որ լսեցի, որ Գարեգին Բ© Կաթողիկոսը, դեռ աթոռակից, տարիներ առաջ Պուէնոս Այրէս այցելած էր անպաշտօն կերպով ու նոյնիսկ, կարծեմ, պատարագելու առիթ մը ունեցած էր**★ Երկրորդ այցելութիւնը արդէն այդ ուղղութեամբ 'թէեւ ոչ այլ ուղղութիւններով** քիչ թէ շատ հանդարտած գաղութ մըն էր, շարժառիթը չեմ յիշեր, ու մասնաւոր հարցեր չէին

ծագած★ Ինծի կը թուի, որ այդ երկրորդ այցելութեան հարեւանցիօրէն ծանօթացանք իրարու, բայց վստահ իսկ չեմ★

Երրորդ անգամ եկաւ Մայիս 1993ին★ Այդ տարի, «Պօղոս Արզումանեան» Հիմնարկութիւնը իր շինած ու հովանաւորած «Արմենիօ¬Արխենթինա» վարժարանի 25ամեակին առիթով անոր աւելցուցած էր «Լեւոն Տէր Պետրոսեան» կոչուած մարզարան մը, որ շինուած էր մէկ տարուան մէջ ’հիմնարկէքը կատարուած էր Յունիս 1992ին, Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահին Արժանթին կատարած պաշտօնական այցելութեան ընթացքին⁎⁎★ Բացումի հանդիսութեան, հայ թէ արժանթինցի պաշտօնական հիւրերու եւ խուռներամ բազմութեան մը առջեւ, Մեսրոպ Սրբազանը դարձեալ կը ներկայացնէր Գարեգին Բ© Կաթողիկոսը★ Կը յիշեմ, որ իր գրաւոր ճառը©©© սպաներէն անթերի առոգանութեամբ կարդաց★

Զարմացած մեկնեցայ★ Ուրկէ՞ ուր սպաներէն գիտէր★

Բայց գաղտնիքը պարզեցի, երբ անձամբ հանդիպեցանք★ Թարգմանել տուած էր իր հայերէն խօսքը եւ յետոյ©©© բծախնդրօրէն ընթերցումը սորված★

Իր կեցութեան ընթացքին, զանազան գործունէութիւններ տարաւ★ Անոնց շարքին եղաւ փորձ մը՝ Պուէնոս Այրէսի մէջ «Երկիր եւ Մշակոյթ» կազ-մակերպութեան մասնաճիւղ մը յառաջացնելու★ Քանի մը տղաք մտանք այդ գործին մէջ, որմէ ի վերջոյ բան մը չելաւ, թէեւ եղան ովքեր, յաջորդող տարիներուն, այս կամ այն դրդապատճառով մասնակցեցան կազմակերպութեան հայաստանեան ամառնային գործունէութիւններուն★

Քանի մը անգամ հաւաքաբար հանդիպեցանք Սրբազանին հետ★ Առիթով մըն ալ, տեսնուեցանք առանձինն, գլուխ¬գլուխի★ Ամէն վայրկեան չէ, որ Սփիւռքէն կամ Հայաստանէն մտաւորական պատրաստութեամբ օժտուած մարդիկ կայցելէին հարաւային կողմն աշխարհի, եւ ես հինէն ի վեր փորձած էի նման մարդոց հետ առանձնաբար հանդիպիլ, մշտական փորձով՝ հարաւի «ամայք»ի առթած կղզիացումը խզելու, զիս հետաքրքրող հարցեր արծարծելու, իմացական վայելք մը ապրելու★ Երբեմն յաջողած էի, երբեմն ոչ★ Այցելուները յաճախ խճողուած օրակարգեր կունենան կամ զիրենք հրաւիրող կազմակերպութեանց կամ անձնաւորութիւններուն «գերիները» կը դառնան★

Հանդիպեցանք նախաճաշի մը ժամանակ, իր բնակած հիւրանոցին մէջ★ Քիչ թէ շատ ծանօթ գիտէր որ «բաներ մը» կը մրոտէի թերթերուն մէջ, ես ալ, ի հարկէ, ծանօթ էի իրեն, իր աշխատանքին, իր գիրքերէն մէկ քանիին★ Զիս տպաւորեց իր հանդարտ խօսելաձեւը, ուժական անհատականութիւնը, ամէն նիւթի իրազեկ ըլլալու հանգամանքը, ամենէն աւելի՝ իրմէ բուրող համեստութիւն մը★ Խօսակցութեան ընթացքին, որմէ մասնաւոր բան մը չեմ յիշեր ’զրոյցներ

*վերականգնելու ընդունակութիւնս շատ տկար է**, սակայն պահ մը եղաւ, երբ գիս անակնկալի բերաւ, ըսելով©*

¬¬ Քեզ պէտք է Նիւ Եորք հրաւիրելու միջոց մը գտնել★

¬¬ ©©©©©©

¬¬ Նոյեմբերին պիտի կազմակերպեմ Լեւոն Ե© թագաւորի մահուան 600ամեակին նուիրուած Կիլիկիոյ թագաւորութեան գիտաժողովը★ Կրնա՞ս պատրաստել թագաւորին եւ Սպանիոյ միջեւ յարաբերութիւններուն նուիրուած զեկուցում մը★

¬¬ Անկարելի չէ, Սրբազան, նկատի ունենալով, որ ուրիշ տուեալներ ալ ունիմ հայ¬սպանական յարաբերութիւններուն մասին★

¬¬ Ուրեմն վերջացած հարց է★

Եւ վերջացած հարց եղաւ★ Նոյեմբերին առաջին անգամ ըլլալով ոտք կը դնէի Ամերիկա★ Տպաւորիչ գիտաժողով մըն էր, որու մանրամասնութիւնները ժամանակին ընդարձակ թղթակցութեան մը նիւթ ըրած եմ '«Կիլիկիան Նոր Աշխարհի մէջ», Յառաջ, 15-16 Նոյեմբեր 1993)★ Միայն պէտք է աւելցընել, որ դուրսէն մէկը, ինչպէս որ ես էի, անոր ընդմէջէն կրնար լիովին գնահատել Մեսրոպ Սրբազանի կազմակերպական բացառիկ տաղանդը★

Ու պէտք է ափսոսալ, որ, այն անձը, որու մտքի ու սրտի արգասիքը եղաւ այդ գիտաժողովը, տասը տարի ետք դեռ հրատարակութեան ընթացքի մէջ գտնուող ու անոր զեկուցումները ամփոփող հատորը պիտի չկարենայ տեսնել★

Որովհետեւ այն անձը, որ առիթը ունեցած է կարդալու կամ լսելու Մեսրոպ Սրբազանը, կրնայ անվարան հաստատել, որ անոր գիրն ու խօսքը կու գային թէ՛ մտքէն եւ թէ սրտէն★ Անոնք ունէին համակող, գրաւող բան մը, ըլլային ճամբորդական նոթեր, քարոզ մը, պարագայական գրութիւն մը կամ գիտական յօդուած մը★

Ան ինքզինքը պատմաբան կամ գիտնական չէ նկատած, եւ այսօր իր հեղինակութեամբ լոյս տեսած շուրջ երեք տասնեակ հատորները արժեւորելու կարելիութիւնը չունիմ, ոչ ալ տեղին է այստեղ նման արժեւորում★ Սակայն, հպանցիկ տպաւորութեամբ մը, Մեսրոպ Թաղիադեանցի օրագրութեան հրա-տարակութիւնը, Սանթիակօ տէ Գոմփոստելայի հայ ուղեւորներու պատմութիւնը, Սուրբ Սարգիսի պաշտամունքին վերականգնումը եւ այլ նիւթեր կը բաւեն իրեն տեղ մը ապահովելու, նոյնիսկ եթէ համեստ ըլլայ, մեր բանասիրութեան պատմու-թեան մէջ★

* * *

Նիւ Եորքէն ետք, ուր քանի մը անգամ անուշ զրոյցի նստելու առիթներ եղան, յաջորդ անգամ տեսայ զինքը Փարիզ, ուր Յունուար 1995ին արձակուրդի

գացեր էի★ «Երկիր եւ Մշակոյթ»ի ընդհանուր համաժողով մը տեղի կունենար, ու երեք¬չորս օրով Վիեննայի Մխիթարեան վանքը երթ ու դարձի ճամբորդութեան մը նախօրեակին, գացի մինչեւ ժողովին վայրը ու զինքը տեսայ★ Երկու տարի առաջուան նոյն ուժական մարդը կը մնար, ժպիտը դէմքին★

Ինչպէ՞ս մտածել, որ չորս օր ետք, Փարիզ վերադառնալով, պիտի իմանայի, թէ սրտի տագնապի մը հետեւանքով հիւանդանոց կը գտնուէր★ Ընկերս՝ այժմ հանգուցեալ Պատրիկ Թադէոսեանը, լուրը հաղորդելով, կառաջարկէր, որ երթայինք զինքը տեսնելու★ Չէինք գիտեր, որ ան մահուան դէմ կը պայքարէր եւ միայն կրցանք զինքը տեսնել միջանցքի մը ապակիէն՝ անգիտակից վիճակի մէջ★

Բայց ազատեցաւ★ Աստուած տուած էր իրեն ութը տարուան երկրորդ կեանք մը, որպէսզի իր մատուցած տուրքերը բազմապատկէր ու, 1997ին Միացեալ Նահանգներու կիլիկեան Արեւելեան թեմի իր «Հանգստաւէտ» պաշտօնը ձգելով, հաստատուէր Հայաստան, ազգային¬եկեղեցական, կազմակերպական, հրա~տարակչական բուռն գործունէութեան նոր հանգրուան մը բոլորելու★ «Յառաջ»ի մէջ, Եւսեբիոսի անցեալ 15~16 Նոյեմբերի քրոնիկը արդէն բաւականին բան կըսէր վերջին տասնամեակին Հայաստանի մէջ անոր ծաւալած ընդարձակ գործու~նէութեան մասին★ Ես միայն պիտի աւելցնէի, սոսկ յիշեցումի կարգով, որ իր նախաձեռնութեամբ, իր կամ ուրիշներու նիւթական հովանաւորութեամբ դէթ երկհարիւրեակ մը գիրք լոյս տեսան այնտեղ★ Իսկ որեւէ իրազեկ ընթերցող գիտէ, որ Հայաստանի մէջ հետզհետէ ծաւալող հրատարակչական գործունէութեան կարեւորագոյն համեմատութիւն մը այսօր կարելի պիտի չըլլար, եթէ Մեսրոպ Սրբազանի նման սփիւռքահայ քանի մը հոգի կամ հաստատութիւն իրենց անգնահատելի ներդրումը բերած չըլլային★ Բայց պէտք չէ մոռնալ, որ ան նոյն տեսակի արդիւնաւէտ գործունէութիւն մը ծաւալած էր ուր որ գացած էր, Սուրիայէն ու Լիբանանէն մինչեւ Իրան ու Միացեալ Նահանգներ★

Անսպասելիօրէն, գոնէ ինծի համար, 1998ի ամրան կարճ կերպով հանդի~պեցանք Խոր Վիրապի մէջ★ Կը շարունակէր պահել իր նկարագրին բոլոր գիծերը, բայց իր ձայնը փոխուած էր, դարձած էր շատ աւելի ցած, գրեթէ շշուկի մը պէս★ Իր առողջական տագնապը յայտնապէս բաժին մը խլած էր իրմէ★

2000էն ետք, Նիւ Եորք~Նիւ Ճըրզի կատարած իր այցելութիւններուն մէկ¬երկու անգամ տեսայ զինքը★ Վերջին անգամ, Փետրուար 2003ին, Շաբաթ օր մը, պրն© Մարաշեանի դասաւորումով, երեքով ճաշի գացինք Նիւ Եորքի մէջ★ Ժամադրուեր էինք Հանրային Գրադարանին առջեւ, ուրկէ ան ելած էր իր թուային (digital) լուսանկարչական մեքենան ձեռքը★ Առաւօտեան ժամը 10էն ի վեր զբաղած էր հնատիպ գիրքերու էջեր լուսանկարելով, էջմիածնին նուիրուած

հրատարակելի հատորին համար★ Ճաշէն ու հոգեշահ զրոյցէն ետք, անշուշտ, վերադարձաւ իր գործին լծուելու©©©★

Ու այս մանրիկ փաստը կը բաւէ ցոյց տալու համար, թէ որքա՞ն սեւեռումով ու արագութեամբ կաշխատէր★ Ութը ամիս ետք, հազար էջնոց հատորը հրապարակ իջած էր★ Ինչպէս դառն իրականութիւնը ցոյց կու տայ, իր կարապի երգն էր★

Մահուան վաղորդայնին, իմ անմիջական շրջապատէս զինքը մօտէն ճանչցած մարդիկ իրենց հիմնաւորուած մտահոգութիւնը կը յայտնէին այն մասին, թէ ի՞նչ պիտի ըլլար Հայաստանի մէջ իր սկսած ծրագիրներուն շարունակութիւնը★ Արդեօք պիտի գտնուի՞ն անձը կամ անձերը, որոնք տէր կանգնին անոնց, գործնապէս ու, մանաւանդ, նիւթապէս★ Տիրող կարծիքները, պէտք է խոստովանիմ, յոռետես են★ Դեռ յոյս ունիմ, որ ժամանակը պիտի հերքէ զանոնք★

Նոյեմբերի սկիզբը ժամանած էր Նիւ Եորք★ Քանի մը օր ետք, հեռաձայնած էի իրեն, խնդրելով ինծի անհրաժեշտ որոշ մանրամասնութիւններ Վենեզուելայի հայ գաղութին մասին★ Ինք չէր մոռցած հարց տալու, թէ արդեօք կա՞ր էջմիածին այցելած որեւէ սպանացի ճամբորդի ուղեգրութիւն, որ իր աչքէն վրիպած ըլլար★ 'Պատասխանը, որքան ինծի յայտնի է, ժխտական է*_*★

Բարեկամս մահէն օր մը առաջ հեռաձայնով խօսած էր իրեն հետ ու կըսէր ինծի, թէ զինքը լաւ գտած էր, առանց որեւէ նշանի, որ անհանգըստացուցիչ բնոյթ մը կրէր★ Նոյնիսկ Սրբազանը իր խոր գոհունակութիւնը յայտնած էր իրեն, որ բարեհաճած էր ղրկել «Յառաջ»ի իր անձնական օրինակները, քանի որ մինչեւ Երեւան իր դարձին, թերթին աւելի քան մէկ ամսուան թիւերը դիզուած պիտի ըլլային©©©★

Ճակատագիրը նախատեսած էր, որ այդպէս ալ պիտի մնային★

«Յառաջ»ը հաւատարիմ ընթերցող մը կորսնցուց, Հայաստանեայց Եկեղեցին՝ իր անսակարկ մէկ ծառան, իսկ հայ մշակոյթը՝ նուիրեալ սպասարկու մը★ Բոլորս սուգի մէջ ենք այսօր★

Վարդան Մատթէոսեան
Նիւ Ճըրզի, Դեկտեմբեր 15, 2003
(«Յառաջ», Դեկտեմբեր 25, 2003)

Խօսք Երախտիքի

1992: Զաւէն Սարգսեանը՝ Փարաջանովի թանգարանի տնօրէնը եւ իմ լուսանկարիչ ընկերս, զիս տարաւ Հայաստանի սահմանէն Անիի աւերակները նկարելու: Այսպիսով ես ծանօթացայ միւս «երկիրիս» թէեւ, պէտք է խոստովանիմ, ծանօթացման իմաստը այդ պահին իր ամբողջ խորութեամբ չընկալեցի:

Տարի մը չէր անցած, երբ Աշճեան Սրբազանը «Հորիզոն» շաբաթաթերթին մէջ տեսաւ այս նկարները: «Լուսանկարչական լաւ մեքենայ մը ունիս»,- ըսաւ ինծի երբ հանդիպեցանք: Անիի այս նկարները խայծ հանդիսացան լուսանկարիչի եւ ուսուցիչի յարաբերութիւններուն, որոնք անքակտելի մնացին մինչեւ Սրբազանի վախճանը (2003):

1997: Առաջին ուխտագնացութիւն Արեւմտեան Հայաստան, առաջին քայլը՝ յաջորդող բոլոր ճանապարհորդութիւններուս: Երկուքս ալ առաջին անգամ կ՛երթայինք Երկիր, բայց Սրբազանը առաջնորդս եղաւ՝ շնորհիւ Հայաստանի պատմութեան, աշխարհագրութեան եւ մշակոյթին մասին իր գիտելիքներու հարուստ պաշարին: Սրբազանը զիս առաջնորդեց ոչ միայն երկիր, այլեւ դէպի պատմութեան ընթացքի վերսկսումը ութ տասնամեակներու դադարէ ետք. ես վկան եղայ Աղթամարի եւ Անաւարզայի մէջ կնքուած հայկական պսակադրութիւններու, գետերու եւ լիճերու ջրօրհնէքին, հնադարեան վանքերու աւերակներուն վրայ կատարուած հայկական սուրբ Պատարագի արարողութիւններու, եւ իմ իսկ վերածնունդիս որպէս հայ քրիստոնեայ՝ հոն, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ մկրտեց Տրդատ Գ. թագաւորը:

Ես վերածուած էի իմ հայրենակիցներուս աչքերուն, վերածուեր էի մինչ այդ երեւակայական հայրենիքի մը հետ կենդանի կապի: Այս ճանապարհորդութիւնը, որ իմ նախկին անձս վերափոխեց իմ նոր դերիս որպէս պատկերներու ժամանակագիր, ես հիմա ստիպուած եմ շարունակելու առանց իմ ուսուցիչիս, սակայն ան կը շարունակէ մնալ ուղեւորութեանս առաջնորդ:

Հրայր Բազէ Խաչերեան
Լուսանկարիչ

Ռիթա Որբերեանի խօսքը՝ արտասանուած Մեսրոպ Արք. Աշճեանի յիշատակին նուիրուած ձեռնարկին

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,

Մեծարգոյ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս՝ պրն. Գագիկ Մարտիրոսեան,

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ, պրն. Եդուարդ Մսրլեան,

Յարգելի հիւրեր եւ սիրելի ներկաներ,

Մեսրոպ Սրբազան Արքեպիսկոպոս Աշճեան.

Մեսրոպ Սրբազան պարզապէս՝ շատերու համար: Համեստ այս կղերականը կը գոհանար այդքանով:

Հանդիպած եմ իրեն միայն մէկ անգամ: Հալէպի Քարէն Եփփէ Ճեմարանի յիսնամեակի տօնակատարութեան՝ Մոնթեպելլոյի մէջ: Սրբազան Հայրը ատեն մը դասախօսած էր այդ ճեմարանին մէջ: Հանդիսութեան մեր սեղանին նստած էր: Շատ համեստ անհատ մը թուեցաւ ինծի այդ երեկոյ: Կարծէք ճեմարանի շրջանաւարտներէն մէկը ըլլար: Եւ, երբ խօսք տրուեցաւ իրեն, ան այդ խօսքը ըրաւ անսեթեւեթ ոճով, պարզ ու յստակ, հաղորդական:

Այդ մէկ-երկու ժամը չէին բաւեր անշուշտ անձ մը լաւ ճանչնալու, այս պարագային՝ բարձրաստիճան եւ բազմահմուտ կղերական մը: Այսօր ես շնորհակալութիւն պիտի յայտնեմ Համազգայինի Շրջանային Վարչութեան, որ ինծի այս առիթը ընծայեց ճանչնալու զինք: Որովհետեւ, ի՞նչ աւելի լաւ միջոց մէկը ճանչնալու քան՝ կարդալ իր գրութիւնները:

Առաջին հերթին, անշուշտ, ուզեցի թղթատել զանոնք՝ գաղափար մը կազմելու համար իր ընդհանուր գրականութեան վրայ, բայց ամէն էջ կը պարտադրէր որ յաջորդ էջը դարձնեմ եւ շարունակեմ ընթերցումս, այնքան հետաքրքրական էին իր պատումները. մեր սրտին խօսող, մեզ յուզող, մանաւանդ երբ կը խօսի իր ծնողքին եւ ընտանիքին, ինչպէս նաեւ մեր եկեղեցիներուն եւ վանքերու ոդիսականներուն մասին:

Սրբազանը կը նկարագրէ իր բազմաթիւ ճամբորդութիւնները, լուսանկարներով եւ քարտէսներով: Իր անանձնական նկարագրին պատճառաւ, այդ ճամբորդութիւններու հաճոյքը ինքն իրեն չէ պահած, այլ զայն բաժնած է բոլոր անոնց հետ, որոնք կ՛ուզեն իր ընթերցողները ըլլալ: Պահեր եղան ուր կը փղձկիս, ուրիշներու՝ կը ժպտիս իր հետ: Նաեւ, երբ լուսանկարները կը դիտենք, կը տեսնենք թէ որքան բարի ժպիտ մը ունի ան:

Մեսրոպ Սրբազանի պարզ մահկանացուի եւ հոգեւոր մարդու էութիւնները այնպէս ընդելուզուած են իրարու որ, որեւէ տեղ, որեւէ տողի կամ որեւէ գրութեան մէջ չես կրնար բաժնել զանոնք իրարմէ: Ահաւասիկ այս երեւոյթն է, որ կ՛ընէ Մեսրոպ Սրբազանի գրականութիւնը՝ ջերմ, հաղորդական, հոգեւոր միաժամանակ՝ աշխարհիկ, ուստի՝ շատ հետաքրքրական: Ան անձնակեդրոն չէ. իբրեւ հայ, ունի նաեւ յեղափոխական ջիղ մը, որ իր գրականութիւնը կ՛ընէ աւելի սիրելի՝ հայ

ընթերցողին: Եւ ինչ որ աւելի կարեւոր է, եւ ի պատիւ իրեն պէտք է ըսել, թէ կրաւորական անձ մը չէ եղած:

Սփիւռքի հայերս, ընդհանրապէս, եւ իրականութեան մէջ՝ կէս-հայեր ենք: Յաճախ անունով միայն. երբեմն՝ անունով եւ գործով: Մեսրոպ Սրբազան եղաւ լման եւ ամբողջական հայ, ապրելով սփիւռքի եւ հայրենիքի մէջ, ծառայելով երկուքին եւ իր Աստուծոյն. բայց, մնաց միշտ իր ժողովուրդին հետ:

Իր 63 տարուան յարաբերաբար կարճատեւ կեանքի ընթացքին, Մեսրոպ Սրբազան եղած է միշտ հետամուտ նպատակներ իրականացնելու: Նպատակի մը հետապնդումը սկզբունքայնութիւն կ՛ուզէ եւ զօրաւոր նկարագիր կը կերտէ:

Այնպէս հասկցայ, որ հոգեւոր կեանքին մէջ, իր գլխաւոր նպատակներէն մէկը եղած է գտնել Գրիգոր Լուսաւորչի նշխարները. ուստի՝ իր ճամբորդութիւններն ու երկար թափառումները երկրէ երկիր: Իր գրութիւններուն մէջ, չկայ հատոր մը ուր ան չի խօսիր Գրիգոր Լուսաւորչի մասին:

Այնուանդերձ, ան ունի 2000ին Ս. Էջմիածին հրատարակուած փոքր հատոր մը, որ նուիրուած է հայ քրիստոնէութեան հիմնադրին՝ «Լուսաւորչի Լոյս Նշխարները» խորագրով, Քրիստոնէութեան Հայաստան Մուտքի 1700ամեակին առթիւ: Երկրորդ հատորիկ մը եւս ունի այս նիւթին մասին «Գերազանց Սեպուհէն Սուրբ Լեռը Աթոս» խորագրով, որու ներածականին մէջ ան դառնութեամբ կ՛ըսէ, թէ շատեր ծաղրի կ՛ենթարկէին իր այս մտասեւեռումը:

Այլ շատ հետաքրքրական նիւթ մը՝ զոր արծարծած է Մեսրոպ Սրբազան Արքեպիսկոպոս, Թուխ Մանուկի առասպելն է, կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ առեղծուածը:

Քիստոնէութիւնը Հայաստանի մէջ Պետական Կրօն Հռչակելու 1700ամեակին կազմակերպուած նստաշրջանի թեման եղած է Թուխ Մանուկի առասպելը: Մեսրոպ Սրբազանի կազմակերպութեամբ 2000ին, այս նստաշրջանի նպատակը եղած էր տարբեր հայագէտ-մասնագէտներու ուսումնասիրութեանց միջոցաւ, քննելու եւ մեկնաբանելու Թուխ Մանուկներու առեղծուածային խնդիրը՝ սկսած նախնադարեան ծիսա-առասպելաբանական ակունքներէն մինչեւ մեր օրերը յարատեւող անոնց պաշտամունքային յուշարձաններու տարածուածութեան հարցերը:

Ո՞վ է Թուխ Մանուկը: Կամ ի՞նչ է ան: Մարդ արարա՞ծ է, սո՞ւրբ է, թէ՝ սրբատեղի: Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի մէջ, բազմաթիւ են այն սրբավայրերը, որոնք կը կոչուին այդ անունով:

Նստաշրջանի բացման Մեսրոպ Սրբազանի կողմէ, ան Թուխ Մանուկի կերպարը կապուած կը գտնէ Յովհաննէս Մկրտիչի հետ, որուն նուիրուած տօներուն՝ կ՛ըսէ ան՝ մեղեդին կը սկսի սա բառերով... «Դու մանուկ»:

Այս նիւթին մէջ առաջինը՝ Գարեգին Եպս. Սրուանձտեանցն է, որ հետեւեալը ըսած է 1874ին թուականին «Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի Դուռ» գործին մէջ: Ան կը գրէ, թէ Հայաստանի մէջ իր տեսած տեղերուն մէջ չէ գտնուած գիւղ մը որ չունենայ իր Թուխ Մանուկը: Փոքր սրբավայրեր են ասոնք, որոնք փոքր տղայ մը անգամ չեն կրնար պարունակել, խաչքար մը, ողջ կամ կոտրած, գերեզմանաձեւ շէնք մը, ուր բարեպաշտ կիներ կ՛երթային եւ իրենց սրտին փափաքները կը ներկայացնէին»: Քիչ մը անդին Սրուանձտեանց կ՛ըսէ. «Եւ եթէ Թուխ Մանուկ կոչուելուն եւ անուան ուշադրութիւն տանք, թերեւս լինին դոքա մանուկներ՝ խլուած իրենց մայրերու ձեռքէն, եւ կպած անոնց ստինքին, եւ գրկին մորթուած քրիստոնէութեան անուան եւ սիրոյն համար, թուխ գոյն ստացած բոսորային արեան մէջ թաթախուելով, որոց յիշատակի համար յատուկ պատմութիւն մը կայ, բացի այն սրբազան երգէն շարակնոցին, որ է «Կամաւոր Պատարագք, Մանկունք Տիօք Եւ կատարեալք իմաստութեամբ, որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ, բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ»: 130 էջնոց հատորիկը հաւաքածոն է նստաշրջանին մասնակցող տասը գիտնականներու, ներառեալ Մեսրոպ Սրբազանը: Զափազանց հետաքրքրական եւ առինքնող նիւթ է: Հոս է որ գտայ հայկական Թուխման անունին ծագումը: Անուն մը, որ միշտ ինծի համար բացատրութիւն չէ ունեցած, որովհետեւ հօրս ընտանիքին մէջ ունեցած ենք երկու Թուխմաններ, երկուքն ալ նահատակուած: Առաջինը եղած է հօրս քեռին, որ 24 տարեկանին կախաղան հանուած է իր պատկանած կուսակցութեան պատճառաւ: Իսկ, երկրորդը՝ հօրաքրոջս երիտասարդ ամուսինը, որ իր տառապող երկրին օգնութեան հասնելու նպատակով, կը ձգէ Ամերիկայի իր հանգիստ կեանքը եւ կը վերադառնայ Տիգրանակերտ եւ այնտեղ կը զոհուի: Զարմանալի զուգադիպութեամբ մը, Մեսրոպ Սրբազանի ներկայացուցած թուղթը կը յիշէ հետեւեալը. «Հայոց նոր վկաներէն Թուխ Մանուկ Տիգրանակերտցիի նահատակութիւնը տեղի ունեցած է 1784 թուականին»:

Armenian Church Patristic and Other Essays հայրաբանական գրութիւններու անգլերէն հատոր մըն է, որ կ՛ամփոփէ Սրբազանին գրութիւնները աստուածաբանական նիւթերու մասին, երբ ան ուսանող էր Princeton համալսարանի աստուածաբանական դպրոցին մէջ: Հատորի առաջին մասին մէջ կան Գրիգոր Տաթեւացիի մասին ծանօթութիւններ, անոր վարդապետութիւնը եւ փիլիսոփայութիւնը. կայ գրութիւն մը համաշխարհային եկեղեցւոյ երեք գլխաւոր ժողովներուն մասին. Նիկիոյ, Կոստանդնուպոլսոյ եւ Եփեսոսի որոնք, ինչպէս շատերը գիտեն, մեծ կարեւորութիւն ունին մեր Եկեղեցւոյ պատմութեան համար:

Երկրորդ բաժնին մէջ, ան կը կեդրոնանայ պատմական նիւթերու վրայ, որոնցմէ են սպառիչ գրութիւններ Մեծն Աղեքսանդրի, taurobolium-ի եւ Կոստանդնուպոլսոյ millet համակարգին մասին:

1994-ին հրատարակած է «Էջեր Հայ Եկեղեցւոյ Պատմութենէն», որ գրած է Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանման վաղորդայնին, պատասխանելու համար շահագրգռուողներու այն հարցումին, թէ ինչպէս կ՚ընտրուին ամենայն հայոց կաթողիկոսները եւ թէ ինչ պայմաններու տակ վախճանած եւ թաղուած են անոնք:

1995-ին Նիւ Եորքի մէջ հրատարակուած The Armenian Church in America անգլերէն փոքր հատորը կը խօսի Ամերիկայի մէջ Հայ Եկեղեցւոյ մասին, իր ծագումէն մինչեւ մեր օրերը: Գրութիւնը կը յաջորդէ Ամերիկայի մէջ հայ գաղութի կազմաւորման նիւթին:

Ուրիշ խումբ մը հատորներու հետեւեալներն են.

1993-ին Նիւ Եորք հրատարակուած «Կեանքի եւ Հաւատքի Էջեր»: Ըստ Մեսրոպ Սրբազանի նախաբանին, անիկա շուրջ երեսուն տարիներու հոգեւորականի մը կեանքի պատմութիւնն է, հետեւաբար բոլորիս համար ալ հետաքրքրական:

Դարձեալ 1993-ին, «Հանդիպումներ» հատորը կ՚ամփոփէ իր հանդիպումները կարգ մը գրողներու հետ, որուն կը յաջորդէ, նոյն հատորին մէջ, «Ընդհատ Էջեր եւ Ճամբաներ», յետոյ «Զրոյցներ», որոնց մէջ կը յիշէ իր զանազան առաքելութիւններուն առթիւ կատարած ճամբորդութիւնները:

Իսկ 1998-ին, «Յետադարձ Հայեացք» հատորը բնորոշելու համար, կ՚ուզեմ մէջբերում մը ընել Սրբազան Հօր խօսքէն. «Գրողը՝ բանաստեղծ ըլլայ թէ՝ վիպագիր, արձակագիր գեղագէտ կամ յուշագիր՝ կը փնտռէ քեզ՝ ընթերցողը, որպէսզի միասին կարդան գիրին յանձնուած մտածումը, ապրումը եւ գրողն ու ընթերցողը ըլլան մէկ՝ ապրումի եւ մտածումի դաշտին մէջ: Հիմա ես ուրախ եմ, որ դուն ինծի հետ ես, եւ մօտս նստած ես, եւ կամ ես ափերուդ մէջ եմ, եւ միասին յետադարձ ակնարկ մը կը նետենք իմ կեանքին վրայ՝ որուն հայելին է այս գիրքը . . . .եւայլն»:

2002-ին, Մուղնի հրատարակչատունէն լոյս կը տեսնէ «Պահն ու Յաւերժութիւնը», որ կը խօսի Հայաստան վերադարձէն ետք իր ապրումներուն եւ գործունէութեան մասին:

Իր «Պահն ու Յաւերժութիւնը» հատորի նախաբանին մէջ, արձակագիր, հրապարակագիր, կրօնագէտ Սրբազանը կը պատմէ հետեւեալ դրուագը. «Կեանքիս ամենէն խռովիչ պահերէն մէկն էր այդ: Վաթսուն տարուան կեանքի մը բարձրակէտը՝ երբ մէկ րոպէի մէջ կը տեսնես ամբողջ կեանքդ, սէրերդ եւ ուրախութիւններդ, կարօտդ ու թախիծդ, անցեալի յիշատակներդ ու ազգային

յոյսերդ: Անդրադարձայ, որ ի մի բան՝ կեանքի մէջ պահեր կան, որոնք յաւերժութիւն կ՛արժեն: Այդ պահերէն մէկն էր այդ փոքրիկ պահը՝ երբ հոգեւոր եղբօր մը հետ կանգնած Ախուրեանի ափին, կը դիտէինք, թէ ինչպէս սպիտակ ու մանիշակագոյն եւ ծիրանագոյն վարդերը «դարիւ-դարիւ» խփելով կ՛երթային յաւերժութեան: Այդ պա՜հը եւ մեր յաւերժական պատմութիւնը: Այդ պա՜հն ու յաւերժութիւնը: Եւ գիտցայ, որ մեր կեանքին մէջ պահեր կան՝ որոնք յաւերժութիւն կ՛արժեն: Բայց մենք ալ պիտի գիտնանք իմանալ պահի իմաստը եւ յաւերժութեան խորհուրդը, ըմբռնել, հասկնալ, վայելել, ապրիլ զանոնք»:

Անցեալ տարի, Մեսրոպ Սրբազան լոյս ընծայեց պատկառելի հատոր մը, թէ արտաքին տեսքով, թէ բովանդակութեամբ, որ ակնածանք կ՛ազդէ հատորը տեսնողին եւ ընթերցողին: Ան սովորական գրքերու չափերուն եւս չի հետեւիր:

Եւ, բաւական ծանր է՝ կշիռքով:

Այս կոթողական եւ հաստափոր հատորը, մօտ 850 էջ, դուրս եկած է Մուղնի հրատարակչատունէն՝ 2003ին: Կը բովանդակէ 96 գունաւոր եւ 176 սեւ-ճերմակ նկարներ եւ լուսանկարներ: Հատորը կը պարունակէ յուշագրութիւնները բոլոր այն ուղեւորներուն, որոնք 13-րդէն մինչեւ 19-րդ դար այցելած են Սուրբ Էջմիածին եւ՝ բնականաբար՝ Հայաստան:

Այս անուանի ճամբորդները կը պատկանին տարբեր ազգերու եւ կրօններու: Անոնց մէջ կան կաթոլիկներ եւ բողոքականներ, իւրաքանչիւրը՝ իր տարբեր ճիւղաւորումներով: Անոնց մէջ կան միսիոնարներ, որոնցմէ շատերը ծայրայեղ մոլեռանդներ: Ուրիշներ, նոյնիսկ եթէ անաստուած չեն, նուազագոյնը բոլորովին անտարբեր են կրօնքի հանդէպ: Ապա, կան դիւանագէտներ եւ զօրավարներ, մտաւորականներ եւ գիտնականներ, աստղագէտներ եւ պետական դէմքեր, կամ պարզ ճամբորդներ, որոնց մէջ կան վաճառականներ, կամ սոսկ արկածախնդիրներ եւ զբօսաշրջիկներ:

Վերոնշեալները թիւով կ՛անցնին 90-ը: Անոնց մեծամասնութիւնը կուգայ Ֆրանսայէն, կան նաեւ բրիտանացիներ այսինքն՝ անգլիացիներ, իրլանտացիներ, սկովտիացիներ եւ ուելշեր՝ գերմանացիներ, ռուսեր, իտալացիներ, ամերիկացիներ, եւ քանի մը հոլանտացի, հունգարացի եւ փորթուկալցի անձնաւորութիւններ:

Ասոնց կողքին, հատորին նախաբանը կը յիշէ նաեւ այցելութիւնները թագաւորներու, որոնցմէ են Ռուսիոյ Նիկոլա Ա. Ցարը, Պարսկաստանի թագաժառանգ՝ Աբբաս Միրզան, եւ Իտալիոյ Վիկտոր Էմմանուէլ Իշխանը: Ընդգրկուած են նաեւ Նասիր Շահ, Նասրէտտին Շահ եւ Մուզաֆֆէրըտտին Շահ: Եւ, այս բոլորին շարքը ժամանակագրական է:

Իր նախաբանի վերջաւորութեան, Մեսրոպ Սրբազան յատուկ երախտագիտութիւն կը յայտնէ բոլոր այն ուղեւորներուն, որոնք չեն ծուլացած գրիչը ձեռք առնելու եւ գրելու մեծագոյն սրբավայրին մասին երկրի մը, որուն անունը շատ մը ազգեր չեն լսած եւ չեն ճանչնար մինչեւ այսօր: Սրբազան Հայրը կ՚ըսէ, որ առանց անոնց յուշագրութիւններուն, մենք պիտի չգիտնայինք մեր հայրենիքին մասին, այս պարագային 13-19-րդ դարերու հայրենիքին, միսիոնարներուն ղրկած նկարագրութիւններու եւ ժողովուրդի ամենօրեայ կեանքին մասին Հայաստանի եւ Էջմիածնի մէջ: Որովհետեւ, գիտենք, մեր պաշտօնական պատմաբանները միշտ գրած են թագաւորներու եւ ազնուականութեան մասին, երբեք՝ պարզ ժողովուրդին:

Տակաւին, շնորհիւ վերոյիշեալ ուղեւորներու արձանագրութիւններուն, մենք այժմ կրնանք գիտնալ Ս. Էջմիածնի առօրեային մասին. օրինակի համար՝ տաճարը, պատարագները, նշխարները, եւ ժողովուրդին յարաբերութիւնը անոնց հետ, կաթողիկոսին շնորհած ունկնդրութիւնները, վանականներուն կեանքը, աղօթքը, անոնց ճաշերը, եւ դպրեվանքի ընդհանուր մթնոլորտը: Նաեւ, թէ ինչպէ՞ս էր Էջմիածնի յարաբերութիւնը պետութեան հետ: Կը գիտնանք նաեւ, թէ ինչպիսի նուաստացուցիչ պայմաններու մէջ կ՚ապրէին մեր կաթողիկոսները դաժան խաներու եւ Երեւանի սարտարներու ճնշման տակ ճզմուած:

Այս ուղեւորները մեզի նաեւ արժէքաւոր տեղեկութիւններ տուած են Հայաստանի պատմութեան եւ աշխարհագրութեան մասին. ճամբաներուն, սահմաններուն, իրենց յարաբերութիւններուն արտաքին թշնամիներու հետ, ինչպէս՝ թուրքերը, պարսիկները, ռուսերը, քիւրտերը, թաթարները, Աք-գոյունլու եւ գարա-գոյունլու ցեղերը, որոնք կը հարստահարէին մեր երկիրը:

Ճիշդ է, որ Մեսրոպ Սրբազան երկու մագիստրոսի տիտղոս ունի աստուածաբանութեան մէջ. ան պարտադրուած՝ ընդհատած է վարդապետական կամ դոկտորական (P.H.D.) ուսումը, որովհետեւ այն օրերուն պաշտօնի կոչուած է իբրեւ առաջնորդ Պարսկաստան, Նոր Ջուղայի թեմին: Մեսրոպ Սրբազան Արքեպիսկոպոս Աշճեան իր այս հատորին համար P.H.D.-ի բծախնդիր աշխատանք տարած է, աւարտաճառի մը կարեւոր պահանջները լրացնելով: Այս պահանջներն են՝ բազմաթիւ լեզուներու ծանօթութիւն, ակադեմական աշխատանք, թէզի մը անհրաժեշտ մասնագիտական մօտեցում եւ, որ ամենէն կարեւորն է, մեծ համբերութիւն:

Բոլոր իր հատորները, մեծ թէ՝ փոքր, պատրաստուած են մեծագոյն խնամքով, ակադեմական բծախնդրութեամբ: Իւրաքանչիւրը՝ էջատակի նօթերով, ընդարձակ մատենագիտութեամբ, որոնք իր գործերը կը դարձնեն ուսանելի գիրքեր, կամ դասագիրքեր: Լուսանկարներու առատութիւնը աւելի վաւերական կը

դարձնէ Սրբազան Հօր պատումներն ու հետազօտութիւնները: Ինչպէս աւելի կանուխ յիշեցի, իր ոճը թարմ է, անմիջական, հաղորդական, անսեթեւեթ եւ գերծ ճոռոմաբանութիւններէ: Իսկ լեզուին մասին, այն հոյակապ արեւմտահայերէնին, ի՞նչ կրնամ ըսել. անոր կը տիրապետեն միայն Անթիլիասի Դպրեվանքի շրջանաւարտները: Աներկբայօրէն:

Մեսրոպ Սրբազան նաեւ իր կեանքով բոլորիս կուտայ շատ կարեւոր դաս մը. այդ դասն է չծուլանալ, գործերը անդադար չյետաձգել եւ յարատեւութեան ոգիով աշխատիլ: Եթէ ռամկօրէնի դառնանք, պիտի ըսենք «այսօրուան գործդ վաղուան մի ձգեր»: Սրբազանը կարծէք նախազգացումը ունեցած է իր մօտալուտ վախճանին: Անշուշտ, ան գիտէր, թէ օր մը սիրտը պիտի դաւաճանէ իրեն: Բայց եւ այնպէս, չէր դանդաղեր: Տակաւին բազմաթիւ ծրագիրներ ունէր: Եռանդ ունէր, կամ ունեցած ըլլալու է: Ունէր նաեւ մանկական խանդավառութիւն մը, որ անյարիր կը թուի իր սքեմին: Բայց, այդ խանդավառութիւնը արդիւնք է ապագայ հաւանական իրագործումներու առթած ուրախութեան, զոր կը կանխէ մտքով եւ կ՛ակնկալէ, որ քովը նստողը եւս վարակուի իր զգացումներէն: Ես, նուազագոյնը, այդ տպաւորութիւնը ունեցայ, երբ պատկերասփիւռէն կը դիտէի իր տեսաերիզները, ներկայ Հայաստանի թէ՝ Արեւմտեան Հայաստանի մէջ, ուր հազարներով երախաներ եւ երիտասարդներ քրիստոնեայ մկրտած է, պսակած կամ խրախուսած:

Մեղք որ, ինծի սահմանափակ ժամանակ տրուած է խօսելու այս փառաւոր անհատին եւ մեծ սիրտ մը ունեցած հոգեւորականին մասին: Կարելիս ըրի խօսքս կրճատելու եւ ամփոփելու համար: Գիտեմ, որ արդարութիւն չեղաւ հոգելոյս Մեսրոպ Սրբազանին, որովհետեւ շատ բան գեղջուեցաւ այս ձեւով:

Եւ, եթէ, ան հիմա երկնքէն մեզի կը նայի եւ կը լսէ, իրեն պիտի ըսեմ հետեւեալը. «Սրբազան Հայր, ուրախ եմ ձեր գրական գործին եւ ձեր հետ ծանօթանալուս: Նաեւ՝ հազար շնորհակալութիւն մեզի ձգած ձեր գրական, կրօնական եւ ազգային ժառանգին համար»:

Շնորհակալութիւն:

Արեւիկ Գաբրիէլեանի բացման խօսքը՝ Մեսրոպ Արք. Աշճեանի յիշատակին նուիրուած ձեռնարկին

Ասում են մարդիկ գրում են այն մասին, ինչը զբաղեցնում է նրանց միտքը, սիրտը կամ հոգին: Ուրեմն ինչու չեմ կարողանում գրել երջանկայիշատակ Մեսրոպ Սրբազանի մասին, որը տեւաբար ներկայ էր մտքիս, ու առյաւէտ

տիրական հոգուս մէջ: Երեւի, Սրբազան Հօր բացակայութեամբ ստեղծուած «ուղղահայեաց Խոր Վիրապը» (իր բառերն են այլ կիրառմամբ) այնքան ահառկու են, որ առնուազն ներկայումս ինձ համար մօտենալն իսկ անհնարին է... Զարմանալի երեւոյթ է - ճիշտ ինչպէս որ ինքը Մեսրոպ Սրբազանն էր օրինաչափութիւններից դուրս ու վեր:

Այս երեկոյի յուշը վերաբերում է լոկ Մեսրոպ Արք. Աշճեան մահկանացուի բացակայութեանը: Քանզի Սրբազան հայրը իմաստաւորեց՝ մահ իմացեալ անմահութիւն է՛ դարեդար ծանօթ ասոյթը. նորին սրբազնութեան անձնաւորած հայրենասէրն ու հայրենաշէնը, խնամքոտ բարերարը, մտաւորականն ու ազգագրագէտը, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ իշխանն ու սպասաւորը, քրիստոնէութեան կրողն ու տարածողն եւ ի վերջոյ՝ հոգեւոր Առաջնորդը մշտապէ՛ս ներկայ են լինելու: Զենք եկել «ողջերի մէջ մեռեալը փնտռելու», այլ այցելելու Մեսրոպ Սրբազանին, լսելու իր մի՛շտ ուսանելի մի՛շտ կարեւոր խօսքը:

Զենք եկել իր երկրային կեանքը թողած հոգեւորականի յիշատակին լոկ յարգանքի տուրք տալու- դրան կը պատշաճէր հոգեհանգստեան պաշտօն՝ եկեղեցում: Եկել ենք իրար յիշեցնելու այդ արտասովոր անձի անչափելի կարեւորութեան մասին: Յիշեցնելու, որ իրաւունք չունենք աչքաթող անել Մեսրոպ Սրբազանի սկսած կարեւոր գործերը, հիմնած ծրագրերը եւ որ մեր յարգանքը, գիտակցուա՛ծ սէրը, որն ինքնին գնահատանք է պարունակում, պէտք է ի սպաս դրուեն դրանց նո՛յն հաւատարմութեամբ, որի անձնաւորումը եղաւ Սրբազան Հայրը:

Պատշաճ է ու բնական, բայց նաեւ օրինաչափական, որ Համազգայինը եղաւ կորստեան տարին դեռ չբոլորած, յարգանքի այս առաջին երեկոյի նախաձեռնողը: Այն ամէնը, ինչ յարիր են Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կոչումին, բազմիցս իրականացուել են Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի մտայղացումների միջոցով, ստէպ՝ միութեանս հետ համագործակցաբար: Յետադարձ հայեացքով յստակ ենք տեսնում այդ Ոսկեդարը. երկու տասնամեակից աւելի ազգային ոգու եւ մշակոյթի տիրող ներկայութիւնն ու ճախրը: Սկսած համայնքի հայեցի դաստիարակութիւնից- մի՛շտ տոհմիկը բազում ձեւերով ներկայացնելով, վերջացած արուեստի մատուցմամբ ցուցահանդէսների, համերգների, մինչեւ իսկ թատերական բեմադրութիւնների միջոցով, յոբելեանից մինչեւ Հայոց իրաւանց պաշտպանին վայել Եղեռնի 70 ամեակի ոգեկոչում Վաշինգտոնում, ուրացող պետութեան աչքի առջեւ: Սահմանափակուել միայն ԱՄՆ-ի կամ Պարսկաստանի ու ի վերջոյ Հայաստանի սահմաններում անարդար է, սակայն սա առաջինն է Մեսրոպ Սրբազանին նուիրուած ձեռնարկներից, որոնց

շարքը որքան էլ երկարի, չի՛ մոտենայ Սրբազան Հօր իրականացումների սոսկական թուարկման ցանկին:

Զե՛նք ուզում մտածել, թէ դեռ ի՛նչ զարմանահրաշ մտայղացումներով կը զարդարէր մեր՝ հայութեան կեանքը, ուր էլ գտնուէր, քանզի երախտամոռ չենք ու եղածի համար, շռայլօրէն իր բաշխածի համար պէտք է միշտ գոհ ու շնորհակալ լինենք: Այս բոլոր թուարկուած ու անթուարկելի գործունէութեան մէջ, սակայն, Մեսրոպ Սրբազանը մշտապէս մնաց Հայ Եկեղեցական, մարդ ու դրանց միասնութեամբ՝ կրօնական քարոզիչ:

Եւ ահա, ինչպէս իր ճաճանչուն կենաց օրոք, այնպէս էլ այժմ՝ անդրաշխարհից շարունակում է մեզ մղել Հայրենաշէն, եկեղեցաշէն ու անպայմա՛ն մարդասէր գործերի: Փա՞ստ. չէ՞ որ չենք լքելու իր շէնացրած Մուղնին, հրատարակչատունը, չափահաս որբերի եւ այլ կարեւոր ու անհրաժեշտ ծրագրերը:

Այո բոլորս բախտ ենք ունեցել ստանալու Մեսրոպ Սրբազանի հետ առնչման օրհնութիւնը, սակայն այդ օրհնութեան չափով էլ որբացած ենք: Սրբազան Հօր բացակայութեամբ մեր կեանքում վիհ է բացուել... սակայն իր իսկ թողած մեծ ժառանգութիւնը սփոփում է բիւրաւոր թանկ վերյուշներով: Իհարկէ, մշտապէս կարօտելու ենք Նորին Սրբազնութեան ճառագուն ներկայութիւնը, շուրջը ստեղծած հետաքրքիր, ուսանելի, պայծառացնող ու ոգեղէնին մղող մթնոլորտը, առօրեայ շփման ոգեւորիչ ուրախութիւնը: Բառերը դալուկ են ու կցկտուր նկարագրելու համար Մեսրոպ Արքեպիսկոպոս անձին, սակայն էութիւնը վճիտ է ու մէկին. հաւատարիմ նուիրում իր Աթոռին, Երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսին, Քրիստոնէական զուլալ սկզբունքներից բխող կեցուածք ու գործունէութիւն... կարճ կեանքի ընթացքում: Բայց այդ կարճ միջոցում թէ որքանով հսկայ՝ վկայ իր թողած իրականացումները, վկայ ծառայած գաղութներում իր թողած կնիքը, վկայ Հայաստանի հազարաւոր մկրտուածները: Վերջապէս, վկայ այն փաստը, որ Արեւմտեան Հայաստանը, հայրենասիրութիւնը կարողացաւ զգացական-վերացական ծիրից բերել իրական, շօշափելի՝ ուխտագնացութեանց, իսկ մինչ այդ գաւառների օր նշելու միջոցով ազգային ու եկեղեցական աւանդոյթները ժողովրդին մատուցեց, սովորեցրեց ու ամենակարեւոր՝ յաջորդ սերնդին ընծայեց: Գուցէ այդ էր իր հեւքոտ, շտապողական աշխատանքի ոճի պատճառը... Նոր սերնդի «հայացումը» անհետաձգելի էր, ինչպէս եւ Եղեռնի վերապրողների հանդէպ նրանց մէջ յարգանք ներշնչելը,- Ուաշինկթընում մեծարուած 800 վերապրողներից այսօր 8-ն էլ աւաղ չեն մնացել: Ուրեմն, ճի՛շտ էր ժամանակի դէմ իր տեւական մրցավազքը:

Միշտ պիտի փնտռենք ու կարօտենք մտքի այդ շքեղ, յորդուն շատրուանը, ինչպէս սիրում էի իրեն ասել. «ամենայն բարեաց աղբիւրը» (երանի հիմա էլ ներկայ լինէր ու նիւթը փոխէր, ինչպէս միշտ, երբ իր մասին էր խօսւում):

Համազգայինի այս ձեռնարկը ոչ այլ ինչ է, եթէ ոչ համեստ մի փորձ բազմավաստակ Առաջնորդին ըստ արժանւոյն յիշելու: «Քոյս ի քոյոց զ՛Քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցեանն»- Ահա այս բառերով էլ յատկանշուեց Մեսրոպ Արք. Աշճեանի երկրային կեանքը, յաղագս ամենեցեան, ազգիս Հայոց, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ եւ Արեւմտեան եւ Արեւելեան Հայրենեաց մերօց երկօցունց:

Հոկտ. 15, 2004,
Ս. Պիթըրս Եկեղեցի, Նիւ Եորք

Աքեմաւոր պահակը

Ոչ եւս է սքեմաւոր պահակը ոչ միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ քրիստոնէական դաւանանքին, այլ նաեւ հայկական մշակութային եւ առհասարակ ազգային արժէքներուն:

Այդպիսին եղաւ Մեսրոպ Արք. Աշճեանի կեանքը, յատկապէս անոր վերջին տարիները, երբ հեռու առաջնորդական պաշտօնի ենթադրած վարչական մաշեցնող առօրեայէն, ան նետուեցաւ նորանկախ Հայաստանի գործի այն ընդարձակ դաշտը, ուր հունձքը շատ է եւ մշակները՝ քիչ:

Դէպի կորուսեալ Արեւմտահայաստան իր կազմակերպած ուխտագնացութիւնները, ատոնց առիթով իր ընդարձակ նկարագրութիւններն ու պատրաստած տեսաերիզները մեզ կը փոխադրէին Սասուն, Մուշ եւ այլ վայրեր, ուր իւրաքանչիւր թուփ ու ծառ, իւրաքանչիւր քար ու քարափ ըսելիք-պատմելիք մը ունի մեզի հայկական ազատագրական շարժումի նուիրեալներուն, հայ մշակոյթի կոթողներ ստեղծած մեծերու կեանքին, վաստակին ու երբեմն նաեւ՝ նահատակութեան մասին:

Ով որ Ռուբէն կարդացած է, կրնայ իսկական խորաչափումը կատարել Մեսրոպ Սրբազանի այն աշխատանքին, որ կը միտէր Արեւմտահայաստանը մեզի ներկայացնել իբրեւ Հայաստան աշխարհի այն վայրը, որ անդադար մեզ կը կանչէ, իրեն տիրութիւն ընելու կոչն ու կանչը կը հնչեցնէ մեր ականջներուն: Առաքելոց վանքի աւերակներուն մօտ, Կէլիկիւզանի մէջ Ցեղասպանութենէն ճողոպրած հայու բեկորներու երդիքին տակ, թէ Հրայր Դժոխքի գերեզմանին մօտ, Սասունի մէջ,

Մեսրոպ Սրբազան մեզի կը ներկայանայ իբրեւ հող, մշակոյթ ու ոգի եւ ասոնց մարմնացումը հանդիսացող Արեւմտահայաստանի սքեմաւոր պահակը, որուն գէնքը մոսինը չէր, այլ՝ գրիչը եւ լուսանկարչական գործիքը:

Արեւմտահայաստանի դաշտերն ու լեռները այսօր քիչ մը աւելի տխուր են: Զկայ իրենց վերադարձին հաւատացող հոգեւորականը եւ ազգային գործիչը:

Վաչէ Բրուտեան
Սփիւռքահայ մտաւորական
«Ազդակ» օրաթերթ

Քիչ Մը Եւս... Որբացանք

Մեսրոպ Սրբազան վախճանեցաւ★
Վերջակէտ★
Նոր տող★
Հոգին կը թեւածէ եթերին վրայ★
Կը վայելէ իմ ու ուրիշներուն պատարագած
մոմերուն ճառագայթը★
Իր անունին պէս եղաւ ան★
Մեսրոպ կը նշանակէ Գիր★
Ան դարձաւ Գիրի մարդ★
Ան դարձաւ գլխագիր Գիրի Մարդ★
Գերազանց նկատեց հագուիլ իսկական
մարդու սքեմը★
Երկար տարիներ ծառայեց Կիլիկեան Սուրբ
Աթոռին★
Եղաւ Առաջնորդ եւ Հոգեւոր Հայր★
Զգաց ժամանակի Հոսքը★

Հաւատաց որ ընելիք ունի★
Վերադարձաւ երկիրը իր նախնիներուն★
Սիրած էր երկիրն այդ ի յառաջագունէ★
Արմէն Արոյեանի հետ միասին, աշխատեցան
փշրել թապուին շղթաները★
Երկրորդ հանգրուանը կոչուեցաւ
Արեւմտեան կողմնաշխարհի...

Դժուարին էր ճանապարհը, խաչի ճանապարհ.
Արեւը կիզիչ այրող-յուշերը վիրաւոր ու
ցասկոտ★
Ետին թողած էր եպիսկոպոսական փայլուն ու
նախշազարդ ասաներ,
Փառք եւ վայելչութիւն,
իշխանութիւն վերջապէս
եւ նուիրական մատանիներ★

Դրոշմելու եւ կնքելու,
Հովուելու եւ առաջնորդելու...
Հաւատաց Յիսուսի օրինակին
Հայու Յիսուսին Հաւատաց...

2

Յուզուեցաւ չափազանց
Արտասուք եղաւ
Ու յուզեց...
Պատարագ ըրաւ, Մշոյ Սուլթան Սուրբ
Կարապետ...
Պսակադրեց եւ աղօթեց★
Քար առ քար Հայաստանը ապրեցաւ,
Պարզօրէն, անկեղծօրէն
Մանուկի անմեղութեամբ եւ բարի աչքերով★
Արեւմտեան հողակտորը շատ ծանր նստաւ
անոր սրտին
Ու սիրտը ճաքեց,
Ճաքեց երեւի մեծ տխրութենէն★

Մարմինը ինկաւ...

Մնաց հոգին աներեւոյթ որ մանուկի պէս
կը ժպտայ անձայն★

Հոգին բաժնուեցաւ մարմինէն
Ու գնաց տուն՝ հանգիստի★
Եղաւ մէկը որուն համար
Աւելորդ էին աստիճանները, փառքը եւ միւս
բաները մեր Եկեղեցւոյ★
Մէկը որուն ներկայութեան Սրբազան ըսելդ
ոչ մէկ կաշկանդում կրնար
Հանդիսանալ★
Հոգին դարձաւ տուն
Ու կը թեւածէ հիմա...

Մէկը անոնցմէ որոնց ներկայ ըլլալը
Գուցէ իր հեռուին մէջ...
Հոգեւոր ապահովութիւն մը պիտի տար
մեզմէ շատերուն...
Կամ քիչերուն...
Բայց մարմինը անոր...
Պիտի դառնայ հողին
Իսկ վառ յուշը Հայաստանի ամէն մէկ հողի
փշուրին, ամէն մէկ ցորեանի հասկին,
Ամէն մէկ կտոր մը արեւին
Անոր կաթիլ անձրեւին
Ու հոգեւոր տարածութեան վրայ★

3

Կը քալենք անյայտ
Ու մերթ մթին ճանապարհներէ...
Մերթ ընդ մերթ
Ճառագայթները կ՚իյնան մեր ճանապարհին...
Կը մնանք առանձին
Կը մաքառինք ու կ՚արիւնինք★
Մեծ ուխտի մը համար
Որ Հայաստանն է,

Միանգամայն հոգեւոր եւ տարածական
Հայաստանը...
Նժդեհներու եւ Եղիշէ Չարենցի իսկական
Հայաստանը...
Ու այս ճանապարհին վրայ այսօր,

Մեսրոպ Սրբազանին կորուստով...
Քիչ մը եւս առանձնացանք★
Քիչ մը եւս մնացինք մինակ★
Որու՞ն մէջ պիտի տեսնենք լոյսը...
Ծանր է պահը★
Ոչ եւս է Մեսրոպ Սրբազանը★
Քիչ մը եւս որբացանք★

***

Սագօ Արեան
Բանաստեղծ,
«Արծիւ» թերթի աշխատակից

Ճրագդ Վառ Պիտի Մնայ

«Անգամ մը եւս զգացի, որ մեր ժողովուրդը կը սիրէ իր եկեղեցին եւ հոգեւորականները: Կրնայ չ՛աղօթել, կրնայ եկեղեցի չ՛երթալ, կրնայ ամէն ձեւով անտարբեր ձեւանալ, բայց միստիկ կապ մը կայ հայ ժողովուրդին եւ իր եկեղեցիին միջեւ: Ցարգը գիտնանք այս խորհուրդին եւ միշտ արժանի ըլլանք այս խորհուրդին եւ միշտ արժանի ըլլանք այդ արտակարգ հոգեւոր վստահութեան»:

Զորեքշաբթի 21 Յունուարի երեկոյեան ժամը 5:00ին Համազգայինի Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ, Հայաստանի կամերային երաժշտութեան տունէն ներս, ուր երկու տարի առաջ նշուած էր Մեսրոպ Արք. Աշճեանի ծննդեան վաթսունամեակը, կազմակերպուեցաւ անոր մահուան քառասունքի նուիրուած յուշ երեկոն, որուն ընթացքին խօսքով հանդէս եկող անձինք, անդրադարձան մեծ հայրենասէրի կատարած ազգանուէր բազմաբնոյթ

աշխատանքներուն, որոնց մէջ ընդգրկած էր եւ որբերն ու ծերուկները եւ երիտասարդներն ու մտաւորականները:

Օրուան պատշաճ մակարդակի գեղարուեստական յայտագիրը մերթ ընդ մերթ կ՚ընդմիջուէր տեսաերիզի ցուցադրումով՝ Սրբազան Հօր Պատմական Հայաստանի այցին: Այդ ընթացքին ան կ՚եզրակացնէր ըսելով.- Մենք համոզուեցանք, որ միայն կենդանական աշխարհը չէ, որ ունի կարօտի զգացում, հայրենի հողը եւս կարօտցած էր հայերուն:

Հինգշաբթի 22 Յունուարին, Պատմութեան Ինսթիթիւթէն ներս՝ սկսաւ գործել Մեսրոպ Արք. Աշճեանի անուան գրադարանը: Նոյն հաստատութեան մէջ պիտի գործէր Սրբազանի գրասենեակը, ուր ան տեղափոխած էր իր ամբողջ գրադարանը՝ աւելի քան 2000 հատոր: Սրբազանին պատկանող ու աշխարհի տարբեր անկիւններու մէջ գտնուող հազարաւոր գիրքեր եւս պիտի տեղափոխուին Երեւան համալրելու Մ. Աշճեանի անունը կրող գրադարանը:

Պատմութեան Ինսթիթիւթի տնօրէնը կը վստահեցնէ, որ նոր գրադարանի գիրքերը բազմաբնոյթ են եւ կը բովանդակեն ուսուցողական նիւթեր, այնտեղ մտնողը կրնայ ինքզինք ծանօթ համարել ցեղասպանութեան խնդրին եւ նոյնիսկ տպաւորութիւն ստանայ, որ այցելած է Արեւմտահայաստան, այս հարցով այցելուին կ՚օգնեն Սրբազան Հօր նկարահանած ֆիլմերը:

Ազգային նուիրեալ գործիչի ու մեծ մարդասէրի յիշատակին նուիրուած այս ու նախապէս կազմակերպուած ձեռնարկները, կու գան վկայելու, որ Մեսրոպ Արք. Աշճեանի վառած ճրագը վառ պիտի մնայ իր խնամած որբերու եւ ծերունիներու, անոնց հոգիի մէջ հայրենիքի գաղափարը արթնցուցած երիտասարդութեան եւ իրեն հետ համագործակցող մտաւորականութեան սրտերուն, ներկայ ու պատմական Հայաստանի սրբավայրերուն եւ յատկապէս իր ջանքերով վերանորոգուած Մուղնի վանքի՝ ամեն տարի վերածաղկող վարդաստանին մէջ, ուր կ՚ուզէր թաղուիլ ան:

Յետադարձ հայեացք մը նետելով վաղ պատմութեան, կը յիշենք, որ 440 թուականի Փետրուար 17ին, երբ Վաղարշապատի մէջ կը վախճանի Ս. Մեսրոպ Մաշտոց, բուռն վէճ մը կը ծագի անոր մարմինը թաղելու տեղին շուրջ: Մէկ մասը կ՚առաջարկէ տանիլ ծննդավայր, միւս մասը՝ Գողթն, ուր առաջին անգամ Մաշտոց սկսած էր ուսուցանել, մէկ մասն ալ կ՚առաջարկէ թաղել մայրաքաղաքի մէջ: Բայց իր իշխանական դիրքով կը յաղթէ ժամանակի հազարապետ Վահան Ամատունի:

Արդեո՞ք Մեսրոպ Սրբազանի պարագային պատմութիւնը ինքզինք կրկնեց, թէ անունը կրկնեց պատմութիւնը...աւաղ անոր իղձը չկատարուեցաւ:

Քանի մը տարի առաջ, միշտ փայլատակող այս մարդու անհանգիստ սիրտը զայն հասցուց մահուան շեմին, սակայն այն բարեբախտաբար փրկուեցաւ ու գրեց հետեւեալը.~

«... Դարձեալ, հազար փառք Աստուծոյ: Մանաւանդ երբ կը մտածեմ, թէ գործերս կրնային կիսատ մնալ...: Ճիշտ է, ըսելու ձեւ է, եւ կը յիշեմ Խորէն Ա. Կաթողիկոսի խօսքը «Ոչ ոք անփոխարինելի է», բայց եւ այնպէս՝ կը մտածեմ, թէ ինչ պիտի ըլլան առաջնորդարանի Հայաստանի յայտագիրները, 900 որբերը, 2300 ծերունիները...: Դեռ նոր հիմներ էինք «Հայաստանի բնութեան բարեկամներու ընկերակցութիւնը»՝ նպատակ ունենալով օգնել Խոսրովի անտառին, Հայաստանի կենդանական աշխարհին եւ վաղուան սերունդներուն յանձնել մեր սերունդին հասած սրբազան աւանդը: Դեռ չէ հրապարակուած մանկութեանս հերոսներէն Արամ Մանուկեանի տուն թանգարանի ծրագիրը: Ո՞ր մէկը ըսեմ: Հապա Ս. Գրիգոր Տաթեւացին, ամառնային միամսեայ դպրոցը Դիլիջանի մէջ, մեր երիտասարդներուն ծառայութիւնը, նորակառոյց եկեղեցիներն ու անոնց պարտքերը, Ս. Լուսաւորիչ ամենօրեայ դպրոցին ծրագիրը, «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան ծրագիրները: Տէր Աստուած, շնորհակալ եմ, որ առիթ տուիր այս բոլորին ետ դառնալու եւ կրցածիս չափ օգտակար ըլլալու ազգիս եւ եկեղեցիս: Ուրիշ բան չեմ խնդրեր, ամեն բանէ գոհ եմ, ամեն ժամանակէ աւելի երջանիկ եմ: Երջանիկ եմ մանաւանդ հիմա, որ գիտեմ, թէ քանի~քանի հոգիներ աղօթեցին ինծի համար...»:

Սրբազան Հա՛յր, յաւերժ երջանիկ պիտի մնաք, որովհետեւ ամեն օր պիտի ըլլան ձեզի համար աղօթողներ, որոնց հոգիները պիտի լուսաւորուին ձեր վառած անմար ճրագի լոյսով:

Նայիրի Մկրտիչեան

«Հայրենիք», Ուրբաթ, Յունուար 30, 2004

Մի Պուտ Կարմիր՝ Մեր Սրտերում

(Մեսրոպ Սրբազանի լոյս յիշատակին)

Մի տաք կարմիր գոյն է դանդաղ~դանդաղ հոսում օրուայ մէջ. ահա բացեցի աչքերս, եւ գոյնը քսուեց բիբերիս, թարթիչներս հպուեցին ջերմութեանը...Ահա պարզեցի ձեռքերս, եւ ափերս ներկուեցին կարմիրով★ Որդան կարմիրն է այդ, աղօթքի պէս հին, աղօթքի պէս հնչուն, աղօթքի պէս երբեք չմեռնող գոյնը★

Մի աղօթք է հնչում հեռու խորքերից. Մշոյ Սուրբ Կարապետ վանքից Մուղնի է հասնում աղօթաձայնն այդ, պատարագում Սուրբ Գէորգ եկեղեցում, շրջում վանքէ վանք...

Մէկն ահա, առաքեալի լուռ քայլքով ձեռքերը թաթխեց կարմիր գոյնի մէջ եւ զարդանաշխ նկարեց Հայոց եկեղեցիների պատերին★ Նա որդան կարմիրը լցրեց Արածանիի ջրերի մէջ եւ աղօթքի գոյնով ներկեց գետը. նա մկրտութիւն արեց գետի ջրում եւ որդան կարմիրը տարաւ՝ գոյնով սրբելու Տրդատայ քարի փոշին...պատմութիւնն իր ձեռքերի տակ սկսեց խօսել որդան կարմիրի լեզուով. նա պեղեց գոյնը, նա գտա՛ւ գոյնը, նա հունցե՛ց գոյնը, դարձրեց գիրք, դարձրեց երգ, դարձրեց խօսք, որն ապրում է դարերի մէջ եւ երբեք չի լռում★ Նա փորձեց կարմիր գոյնով գծել հայրենիքի սահմանները եւ տեսաւ, որ հայրենիքն այդ մի քանի տասնեակ հազար քառակուսի մետրը չէ լոկ. նա հայրենիք փնտռեց Վանում եւ գտաւ★ Նա հայրենիք որոնեց Անիի աւերակների ներքոյ եւ գտաւ★ Նա հայրենիք փնտռեց Ամարասի սուրբ ճանապարհին եւ չսխալուեց★ Նա հայրենիք պեղեց Փարւանայի ափին եւ նորից հայրենիք գտաւ հեռաւոր այդ լճի շուրջ★ Ու ինքը միւռոն լցրեց լիճը, Թմբկաբերդի առումը, իբրեւ խաղ, ցանկացաւ տեսնել լճի ափին եւ տեսաւ★

Իր գտած հայրենիքը նա «թաթախեց» իր սրտի գոյնով եւ առատ-առատ բաշխեց բոլորին★ Երբեք չափսոսաց իր նուիրման, իր ինքնայրումի, իր սիրոյ համար★

Եւ, իբրեւ Սրբազան մի այր, իբրեւ Սուրբ Մեսրոպ, որդան կարմիր գոյն դարձաւ Հայոց պատմութեան գորգի վրայ★

Գորգը լուացւում է, բոլոր գոյները խամրում են, որդան կարմիրը մնում է անմեռ...

Անուշ Թրուանց-Արեան
Լրագրող,
«Ազդակ» եւ «Արծիւ» թերթերի աշխատակից

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Նա Կարգուած էր Աստծու Կողմից

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը Հայ Եկեղեցուն նուիրեալ, խոր իմաստութեամբ իր աստիճանի բարձրութիւնը ճանաչող հոգեւորական էր, որն ունէր մէկ ազնիւ կոչում՝ ծառայել Հայ Եկեղեցուն, իր ազգին, իր ժողովրդին: Ազգի մնայուն արժէքների պահպանութեան գործին նուիրաբերուելը նրա սրբազնագոյն պարտքն էր, որ կատարում էր կամովին՝ խաչուսեալի սիրով ու առաքեալի հաւատով:

Մենք բազում հանդիպումներ, տեւական զրոյցներ, գործնական համատեղ ձեռնարկումներ ենք ունեցել: Այսօրուայ պէս յիշում եմ դեռեւս 1993-ին Սրբազանի հետ մեր զրոյցի մանրամասները Նիւ Եորքում: Ես «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի փոխնախագահն էի, Սրբազանը՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան, Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ: Հայաստանի անկախութեան իրողութեամբ հպարտ, հզօր ու բարգաւաճ Հայրենիք ունենալու երազանքով լուսավառ՝ Սրբազանը տարուած էր հիմնադրամին, ասել է՝ Հայրենիքին հնարաւորինս աջակցելու գործով: Նրա առաքելութեան, ճշմարիտ հոգեւորականի նրա իւրայատուկ կերպարի, նրա պահուածքի ու գործելակերպի մէջ Հայրապետական երկու Աթոռների ապագայ միասնութեան խորհուրդը կար: Նա այն եզակի անհատականութիւնն էր, ում համար ազգային հոգեւոր արժէքների պատկերացումները երբեւէ չէին սահմանափակւում եկեղեցական ծիսակատարումներով. նա ինքը, ասես, գործող եկեղեցի լինէր՝ իր հաւատքի խորութեամբ, հեզ, անարատ, պարկեշտ, բարեսէր ու արդար կերպարով, ժողովուրդ-հոգեւորական կապուածութեանը նախանձելի ջերմութիւն բերող էութեամբ:

«Ամէն մէկ հայ, ուր ալ ըլլայ, սրբազան պարտք ու պատիւ ունի իր աղօթքէն, աստուածահաճոյ մաղթանքէն զատ իր ձեռքի եւ իր հոգի հնարքներէն ու կարողութիւններէն բաժին մը բերելու ազգիս անանց արժէքներու պահպանութեան աշխատանքին»: Սա նրա հաւատամքն էր եւ նաեւ բաղձանքը, որ պետականօրէն առաջինը քրիստոնէութիւնն ընդունած ազգը «պիտի ջանայ շարունակել մեր Ոսկէ Դարի հրաշափառ աւանդութիւնները»:

Սրբազանի կարողութիւններն անսպառ էին, իսկ հնարաւորութիւններն ինքն էր ստեղծում՝ գեղեցիկ ձեռնարկումներ բերող բազում մտայղացումներով, իր հմայիչ պահուածքով, շուրջը համախմբելով բազում համակիրների, ունենալով յատկապէս Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի աջակցութիւնը: Նրա ամեն ձեռնարկում հոգեւոր զարթօնքի նոր լոյս էր բերում առաւելապէս աճող սերնդին, որի համար Սրբազանը հոգեւոր հայր էր քրիստոնէական հաւատքի նրա նորամուտին: Ու նաեւ մկրտիչ էր, որ հաւաքական մկրտութիւններով հարիւրաւոր անապահով երեխաների սուրբ միւռոնով օծեց ու տարիներ շարունակ բարերարի իր ձեռքը պահեց նրանց գլխին: Այսօր Գիւմրիում գործում է նրա հիմնադրած «Թռչունեան» մանկատունը գիւմրեցի որբերի համար: Հապա իր անձնական միջոցներով երիտասարդական խմբերին Արեւմտեան Հայաստանի սրբավայրեր առաջնորդած նրա ուխտագնացութիւնները՝ աղօթքներով եւ յընթացս բացատրութիւններով, որոնք երիտասարդների համար ապուպապերի

ոտնահետքերը մոռացութեան չտալու, անցեալն ու ներկան շաղկապելու եւ դէպի գալիք տանող ճանապարհն իմաստուն անցնելու սերտելի դաս մնացին:

Նա շարունակում էր մեր հոգեւոր այրերի սուրբ գործը՝ հայոց գրով, մշակոյթով ու գիտութեամբ կրթելով հայ սերունդներին, նրանց ամուր կապելով իրենց խորագնաց արմատներին, նրանց մէջ սերմանելով հպարտութեան զգացում եւ արարման ձգտում: Նա հայ մարդու մտքում ու սրտում արթուն էր պահում մեր Ոսկէ Դարի լոյսի ճառագումն ու մեր գոյի պահպանութեան անմարելի բանաձեւումները: Սերունդներին հոգեւոր զարթօնք ու լուսեղէն ճանապարհ պարգեւողի գնահատման էլ ի՞նչ չափանիշ որոնենք այսօրինակ ջանադրութեան համար կամ թէ ինչու՞ որոնենք, եթէ մարդն իր աստուածահաճոյ գործն է անում՝ միակ գնահատանքն ունենալով Աստծոյ ողորմութիւնը:

Ս. Հռիփսիմէին ձօնուած Ներսէս Շնորհալու տողը համարձակւում եմ ամենայն ճշտութեամբ վերագրելի համարել Աշճեան հոգեւորականին՝ «Վառեցեր զլապտեր հաւատոյ»:

Ափսո՜ս, հազար ափսոս, որ Սրբազանի բազում իղձերն անկատար մնացին, եւ բաց մնացած այդ տեղը շատ դժուար պիտի լինի լրացնել: Նման անհատականութիւնները դժուար փոխարինելի են բազում սերունդների համար, եւ նրանց ապրած կեանքի ու ժառանգութեան դասերը մարդկային կերպ եւ ճշմարիտ ապրելու բովանդակութիւն են հաղորդում ներկայ ու գալիք ժամանակներին:

Աստուածահաճոյ դեռ որքա՜ն մտածումներ ունէր Սրբազանը, որոնք պիտի իրենց լրումին հասցնէր նոյն սիրով ու ջանադրութեամբ: Բայց Տիրոջ կամքն էր, երեւի, երդուեալ հոգեւոր հօրը երկնի թագաւորութիւն կանչելը, եւ Սրբազանը Խորանի առջեւ վառուող մոմի պէս այրուեց ու հանգչեց՝ շռայլօրէն բաշխած իր լոյսն ու ջերմութիւնը թողնելով մեզ:

«Համր ու տրտում քայլերով սպիտակ ծերունին անցաւ պատմութեան... Մեր սերունդին համար, մեր գիտակցական ողջ կեանքին մէջ ան այսպէս կամ այնպէս ներկայ էր... »: Մեսրոպ Սրբազանն այսպէս էր գրել Վազգէն Ա-ի մասին՝ Վեհափառի վախճանի քառասուներորդ օրը: Ինձ թոյլ տամ Սրբազանի ոճով աւարտելու խօսքս՝ մեր հոգեւոր զարթօնքի մէջ, մեր մշակութային ու հոգեւոր բոլոր ձեռնարկումների մէջ մենք տեսնում, զգում ենք Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի առինքնող ներկայութիւնը, նրա քրիստոնէական հաւատքի ուժը, նրա վարակիչ աշխոյժութիւնը ու անսահման նուիրուածութիւնն իր ազգին ու ժողովրդին:

Լոյս նրան՝ երկնային թագաւորութեան ճանապարհներին:

Գագիկ Ցարութիւնեան

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ,
իրաւագիտութեան դոկտոր, պրոֆեսոր

Մեսրոպ Արք. Աշճեանն Ամբողջական Հայ Քրիստոնեայ Էր, Առաքելական Նուիրեալ

(Մուղնիում Մեսրոպ սրբազանի մահուան տարելիցի առիթով Ր. Յովհաննիսեանի խօսքը (5 Դեկտեմբերի 2005թ.)

Ես միայն նոր ցանկացայ միջանկեալ այս մի տարուայ լռութեան իմ ուխտը յաղթահարել Մեսրոպ Սրբազանի հրաժեշտի առթիւ: Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանն ամբողջական հայ քրիստոնեայ էր, առաքելական նուիրեալ: Այդ ամբողջականութիւնը նշանակում է, որ իր բերած շնորհը, կատարած աշխատանքը, տածած հաւատամքն ունի մի աղբիւր եւ հազարաւոր շառաւիղներ: Իւրաքանչիւրս ուզում է հաւատալ, որ Սրբազանի հոգու էութիւնը հանրութեան, կեանքի, գործի յատուկ վերլուծաբանի մենաշնորհ ունի: Ընտանիքս եւ ես մի իւրայատուկ հարազատութիւն ենք զգում նրա նկատմամբ: Նման յուշի միջոցառումներ, արարողութիւններ, միասին գալու աւանդոյթներ անհրաժեշտ են նաև մեզ համար, որպէսզի մենք մեզ ճանաչենք, որպէսզի հասկանանք թէ Մեսրոպ Սրբազան մարդը, կղերականը, հայրենիքի նուիրեալն ինչպէս է շարունակում իր գործը, իր աւանդն արդի ժամանակահատուածում՝ արդէն ապրողաց շրջանում:

Միացնող, շաղկապող երեւոյթ էր Մեսրոպ Սրբազանը. Հայաստան եւ Սփիւռք, հայաստանցի եւ սփիւռքահայ, արեւելահայ եւ արեւմտահայ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն★ Պատմական Հայաստանի խորհուրդը, մեր ժողովրդի յոյզերը, տենչանքը եւ ժամանակակից Հայաստանի մարտահրաւէրները, կարիքը, նոր շրջանում ապրելու անհրաժեշտութիւնը, ազգի տարբեր հատուածները քով քովի բերելու հրամայականը՝ ահա այն ամենը, ինչը մշտապէս Մեսրոպ Արք. Աշճեանի մտահոգութիւններն էին★ Այնպէս որ նա եղել է մեր իւրաքանչիւրի կեանքից ներս, մեր մասնագիտական փնտրտուքներում: Եկեղեցական էր, որը մտաւորական էր, մտաւորական էր, որը մարդ էր, մարդ էր, որը եկեղեցու եւ գիտութեան ծառայ էր:

Մեծն Սրբազանի հետ Նիւ Եորքում ծանօթացայ արդէն քանի տասնամեակներ առաջ★ Նա էր առաջինը, որ ինձ Մշոյ գորանիով ներկայացրեց ոչ միայն պատմական Հայաստանի պատկերը, մեր ազգային ակունքները, այլ նաեւ

մեր կորուսեալ Հայրենիքից սերած, արդէն նոր Հայաստանում ապրող ժառանգորդների նիստ ու կացը, ապրելակերպը★ Նա էր, որ մեր ընտանիքին կապեց մայր հողի ամբողջականութեան հետ՝ է՛ւ անցեալի, է՛ւ ներկայի: Տարօն աշխարհից մնացած կանաչ-կարմիրը մեր հարսանիքին նա կապեց Ցրեզնօ քաղաքում գրեթէ 20 տարի առաջ: Ախուրեանի և Արաքսի խառնարանում նա մկրտեց մեր սերունդներին:

Ես վստահ եմ, որ այն, ինչ-որ մենք զգում ենք նրա նկատմամբ որպէս հարազատներ, որպէս աշակերտներ եւ ընտանիքի միեւնոյն անդամներ, կիսում են բազմահազար հայեր՝ արդէն իւրովի: Իւրաքանչիւրը Մեսրոպ Սրբազանից մի այլ աշխարհ կարող է պատմել եւ վկայագրել: Այդքան մեծ է, այդքան զուլալ, եւ մերն է այդ աղբիւրը:

Կողք-կողքի նստելով, իրար հետ կիսուելով Մեսրոպ Արք. Աշճեանի թողած ժառանգութեան եւ մեր անելիքների մասին, նրա յիշատակը յարգելով մենք նաեւ մեր մէջ կը գտնենք Սրբազանի էութիւնը, դասերը, ժառանգութիւնը եւ ապագայի համար նրա պատգամը:

Ռաֆֆի Յովհաննիսեան
Ռազմավարական եւ Ազգային Հետազօտութիւնների
Հայկական Կենտրոնի
Հիմնադիր-տնօրէն

Դառը Բան է Թռիչքը Կիսատ Թողնելը

Դժուար է գրելը, որովհետեւ խօսքը տարօրինակ մի անհատականութեան մասին է, որը եկաւ ու անցաւ գիսաստղի պէս, թողնելով հաւատքի, յոյսի, խոնարհ մաքառման անջինջ մի լուսածիր Հայրենիքում, որը սոսկ քարտէզ չէր պայմանական ու ժամանակաւոր սահմաններով՝ շատ մեծ բան էր, մեծ՝ սովորական չափումներից խոր ու գուցէեւ անըմբռնելի մեր նիւթապաշտ ժամանակներում:

Հեռուստահաղորդումներից մէկի ժամանակ Գերաշնորհ մեր Սրբազանին, մեր Մեսրոպ Աշճեանին լրագրողուհին հարցրեց՝ թէ շա՞տ է արդեօք հիասթափութիւններ ունեցել Հայրենիքում իր գործունէութեան ընթացքում, շա՞տ են խաբել նրան իր մարդասիրական ծրագրերը իրագործելիս:

Տարօրինակ դադար եղաւ եթերում եւ անսպասելի, միայն իրեն յատուկ մանկական անմիջականութեամբ նա զայրացաւ. «Եկել եմ, որ նաեւ ինձ խաբեն, բայց դա՞ է կարեւորը, թող խաբեն էլ, դա՞ է կարեւորը»:

Այնքան զօրաւոր էր իր խաբուելու պատրաստակամութեամբ, հիասթափութեան հողմերին ընդառաջ գալու իր սխրանքով, երբ ծառ էր տնկում,

երբ Մուղնիի իր վարդանոցն էր արարում, երբ ուխտաւոր էր Նարեկավանքից մինչեւ Թմբկաբերդ եւ կորուսեալ Հայրենիքն էր վերածնում իր շնչառութեամբ ու Ախթամարում երիտասարդ զոյգերի պսակաղրութեան արարողութեամբ:

Այդպէս, չենք վերջացրել, հենց այդպէս, այս նոյն տեղում, Վասպուրական աշխարհում իրագործեցիր ազգի ծնունդի ու վերածնունդի խորհուրդն ու յղացումը: Յետոյ Տարօնոյ Աշխարհ, Կարս ու Անի, Ջաւախք, Արցախ:

Կնքում էր, կառուցում, պսակում, տնաւորում էր որբերին, հրատարակում էր գրքեր, կանաչազարդում էր երկիրը: Ուխտաւոր էր: Մենք էլ իր ուխտի եւ երթի մասնակիցներն ու շատ դժուար է առանց նրա: Դառը բան է թռիչքը կիսատ թողնելը:

Ալվարդ Պետրոսեան
ՀՀ Ազգային Ժողովի պատգամաւոր

Մեծ Հայը

Բօթը ցնցող էր. սրտի կաթուածից մահացաւ Մեծ Հայը՝ կրօնագէտ-աստուածաբան, արձակագիր, պատմաբան, հրապարակագիր, մշակութային ու հասարակական գործիչ Մեսրոպ Արք. Աշճեանը՝ խորագիտակը համաշխարհային եւ յատկապէս հայ հոգեւոր ժառանգութեան, հայ մշակոյթի ու նաեւ՝ հովանաւորն այդ ամենի:

Արքեպիսկոպոսն իր գործի նուիրեալն էր, հաւատաւորը ու այդ ամենով վարակում էր բոլորիս, վարակում էր հաւատացեալներին, վարակում էր ժողովրդին:

Ինչպիսի հիացմունքով էինք ունկնդիրն ու ակնդիրը դառնում նրա խօսքին, ոսկեղէնիկ մայրենիին, որն անսպառ յորդում էր, ցրում «ոգու սովը», ցանկացած նիւթ, թեմայ դարձնում ոգեշունչ, իսկ հոգեւոր թեման՝ երանելի, ընդունելի: Իսկ նրա կազմակերպած հրապարակային գրքահանդէսները, եւ մանաւանդ՝ ուխտագնացութիւնները Արեւմտահայաստանի, Վան-Վասպուրականին, Մշոյ Սուրբ Կարապետին... Նարեկայ վանքին, այդ ամենին նուիրուած տեսաֆիլմերը: Ով դիտել է, երբեք չի մոռանայ Արեւմտեան Հայաստանով կատարած նրա շրջագայութիւնները, չի մոռանայ նրա մեկնութիւնները հայոց տաճարի, հայոց վանքի, հայոց հողի, հայի մասին:

Ճակատագրի բերումով բախտ եմ ունեցել Մեսրոպ Արք. Աշճեանին մօտիկից ծանօթանալ 1992թ.: Ամերիկայի կառավարութեան հրաւէրով միջազգային իրաւունքի ինստիտուտում վերապատրաստման դասընթացքներին մասնակցելիս՝ Ջեմմա Անանեանի հետ հանդիպեցինք նրան եւ առաջին իսկ հանդիպումը հիմք

դարձաւ տարիների բարեկամութեան: Հետագայում սոցիալական ոլորտի աշխատանքները ղեկավարելիս՝ իրականացրեցինք բազում ծրագրեր, որոնք վերաբերում էին աղքատների, որբերին, ծերերին, մանկատներին: Յատկապէս կ՛ուզէի առանձնացնել իմ երազների ծրագիրը՝ մանկատներից տարիքի առումով դուրս մնացած, մանկատան սաների մասին: Սրբազանը մեր հանդիպումների արդիւնքում համոզուեց, որ պետութիւնը այդ ժամանակ չունէր հիմնախնդիրը լուծելու հնարաւորութիւն եւ այն վերցրեց իր վրայ: Եւ ինչ սիրով ու հոգածութեամբ էր իրականացնում այն, հող էր գնում, ամուսնացնում այդ զոյգերին, հրճւում նրանց ուրախութեամբ: Նրան մտահոգում էր այն ամենը, ինչ վերաբերում էր հային ու Հայաստանին:

Իսկ ինչպէ՛ս էր պատմում, ներկայացնում... հայոց պատմութեանն ու հայի ճակատագրին վերաբերուող ամեն բան:

Պատմում, ներկայացնում էր սրտո՛վ: Ամեն ինչ, այո՛, ամեն ինչ անցնում էր նրա սրտով, ու սիրտը չդիմացաւ: Ափսո՛ս, հազար ափսո՛ս:

Մեսրոպ Արք. Աշճեանի գործունէութեանը գումարւում էր հոգեւորականի անբասիր կերպարը, շուրջը յարգանք, պատկառանք սփռող նրա էութիւնը:

Բարութեան եւ ոգու ճգնաժամի պայմաններում, այո՝, նա անհատնում նուիրումով էր կատարում իր վեհ առաքելութիւնը, եւ որովհետեւ՝ ազգօգուտ բարութիւնն ու նուիրումը մահ ու վերջ չունեն, նա կը շարունակի ապրել երախտագէտ ժողովրդի յիշողութեամբ: Նա կ՛ապրի, որովհետեւ հոգու վաստակած խաղաղութեամբ աւարտեց իր երկրային կեանքը, բայցեւ՝ ալեկոծ հոգով գնաց, գնաց յոգնած, թողնելով միայն յարգանք, պատկառանք, եւ նրան ճանաչողը յաւէտ կը մնայ ծնրադիր խոնարհումով նրա կեանքի ոճի, անեղծ կերպարի, ապրելու եւ զգալու ձեւի առջեւ...

Խոնարհում նրա խնկելի յիշատակին...

Հրանուշ

Յակոբեան

ՀՀ Ազգային Ժողովի

պատգամաւոր

ՍԱՆԻԿԵՐ

Յուշագիր «Բարեւագրի» Փոխարէն

Գրելով այս տողերը ես ինձ երջանիկ եմ զգում, ուրախ եմ, որ պէտք է ողջ հանրութիւնը իմանայ անկրկնելի բարութեան եւ անփոխարինելի գթասիրտ մարդու՝ Մեսրոպ Արք. Աշճեանի կատարած բարեգործութեան մասին. ինձ համար այդ մասին գրելը մեծ պատիւ է:

Յիշում եմ, երբ բանտում Մեսրոպ Սրբազանը մկրտեց եւ դարձաւ իմ կնքահայրը. ես յուզմունքից մոռացել էի հարցնել, թէ ազատուելուց յետոյ ինչպէս կարող եմ տեսնել իրեն: Մի օր թերթ վաճառելուց տեսայ մի մարդու, որի դէմքը շատ ծանօթ էր ինձ, ու յանկարծ աչքս ընկաւ ձեռքի մատանին, ու տեղում յիշեցի, որ դա Մեսրոպ Սրբազանն է. մինչեւ կը հասցնէր նստել մեքենան, ես վազելով հասայ իրեն եւ ասացի, որ ուրախ եմ վերջապէս ձեզ հանդիպելուս համար: Բայց, երբ Սրբազանը իմացաւ, թէ միայն մատանիով եմ կարողացել ճանաչել իրեն, կատակեց ասելով.

- Եթէ ատանկ է, ես կը հանեմ մատանին, որպէսզի դէմքով ճանչնաս զիս:

Սրբազանը տեղեկացաւ, որ աշխատանք եմ փնտրում, ցանկութիւն յայտնեց այդ հարցով օգնել, բայց քանի որ դեռ չունէի անձագիր, ասաց.

- Ես կ օգնեմ քեզ, որպէսզի թեթեւնան ընտանիքիդ հոգերը:

Ընտանիքում հինգ եղբայր ենք, մայրիկիս եւ տատիկիս հետ, ու միայն ես եմ մինչեւ այսօր աշխատում որպէս շրջիկ լրագրավաճառ:

Կարելի չէ մոռանալ Սրբազանի ոչ մի բառը, արածը իմ ընտանիքի համար. ամեն Կիրակի օր նա ինձ կանչում էր Էջմիածին՝ պատարագին մասնակից լինելու, որով ես աստիճանաբար հոգեփոխուեցի ու հասկացայ, որ մինչ այդ ես ապրել եմ անվայել կեանքով: Մեսրոպ Սրբազան ինձ ոչ միայն սովորեցրեց սիրել Եկեղեցին, աղօթել եւ լինել ազնիւ, այլ նաեւ դաստիարակեց խրատներով ու խորհուրդներով, այդ ամենի շնորհիւ ինձ սկսեցին սիրել, յարգել, շրջապատում վստահել, եւ ի դէմս ինձ տեսնել ոչ թէ աւազակի, այլ ազնիւ ու խելացի պատանու, որից ես ինքս էլ ամաչեցի իմ անցեալից. մինչեւ այսօր եւ ընդմիշտ ապրելու եմ այս նոյն շնորհքով, որը շռայլօրէն ինձ տուեց Մեսրոպ Սրբազանը: Ինձ վստահեց իր առանձնատան կառուցման ժամանակ օգնել շինարարներին, որի շնորհիւ ես արդէն հնարաւորութիւն ունէի աւելի յաճախակի տեսնելու Սրբազանին: Տեսնելով իմ ձգտումը՝ աշխատելու, շատ էր ուրախանում, աւելի ու աւելի էր ինձ հետ մերւում ու սիրում: Այդ ընթացքում իմացայ, որ Սրբազանը պէտք է հաւաքական մկրտութիւն կատարէր Քրիստոնէութիւնը Պետական Կրօն Հռչակելու 1700 Ամեակի առիթով, խմդրեցի, որ իմ եղբայրներին էլ մկրտի: Սրբազանը շատ ուրախացաւ, եւ արդէն յաջորդ օրը եղբայրներիս համար ընտրեց իր ամենամտերիմ

մարդկանցից մէկը, գնեց նոր հագուստ, կօշիկ, նորոգեալ հոգով մկրտուելու համար:

Անցնում էին շաբաթներ, ամիսներ, բայց Մեսրոպ Սրբազանի հոգատարութիւնը չէր սպառւում, այլ աւելի էր շատանում, ամեն շաբաթ օգնում էր դրամով, իսկ երբ լրանում էր ամիսը, բացի դրամական օգնութիւնից, տալիս էր մթերք, գետնախնձոր, ալիւր, եւլն.: Ամեն եղանակի համար հագուստներով եւ կօշիկներով օգնում էր իմ ընտանիքի բոլոր անդամներին, եղբայրներիս տանում էր բժշկական քննութիւնների, երկու անգամ օգնեց, որ մայրիկս բուժուի հիւանդանոցում, ինձ ուղարկեց հիւանդանոց ոտքերս բուժելու համար, ուղարկեց ատամնաբուժի մօտ: Ինչպիսի ստոր մարդ պէտք է լինեմ, որ մոռանամ Սրբազանի արածները: Մեսրոպ Սրբազանը սփիւռքահայ բարերարներ Տէր եւ Տիկին Սողոյեանների միջոցով օգնութիւն ցուցաբերեց ընտանիքիս, որի շնորհիւ կարողացանք վերանորոգել մեր տնակը: Ապա Սրբազանին հրաւիրեցինք, որպէսզի գայ մեր տուն հիւր՝ տեսնելու համար վերանորոգուած բնակարանը: Անկախ նրանից, որ բնակարանը նոր տեսք էր ստացել, աւելի փոխուել ու գեղեցկացել էր, Սրբազանի դէմքին մի ինչ որ անսովոր արտայայտութիւն զգացի, այդ օր շատ տխուր էր ու երկար ժամանակ մտածմունքների մէջ էր. սկսած այդ օրուանից ինձ ասաց.

- Միջոցներ կ՚որոնեմ՝ ձեզ տուն յատկացնելու համար:

Բայց միայն ես չէի, որ Սրբազանի հոգատարութեան կենտրոնում էի, շատ-շատեր կային, որոնց մասին էլ էր հոգ տանում, հիմնականում մանկատան սանիկների, եւ դժուար պայմաններում ապրող ընտանիքների: Սրբազանի ժամերը, անգամ րոպէները վայրկեան առ վայրկեան հաշուած էին, ցաւում էր ամեն ինչի համար, ամեն մէկի ցաւը, դժուարութիւնները նրան տանջում էին, հանգստութիւն էր զգում հոգու մէջ, երբ կարողանում էր ինչ որ չափով հեշտացնել նրանց վիճակը: Այնքան շատ էր սիրում մանուկներին, որ յաճախ էր այցելում դպրոցներ, մանկապարտէզներ, նուէրներ բաժանում, շփուում նրանց հետ, ոտանաւորներ լսում: Նման այցելութիւնները կարծես նրա ծանրաբեռնուած օրը լիցքաթափում էին, թեթեւութիւն էր զգում եւ ուրախ տրամադրութիւններով հեռանում:

Անցեալիս կեանքը կարծես նուէր լինէր ինձ համար, որ ճանաչեցի այդպիսի մի սուրբ մարդու, որ եկաւ երկիր, չարը բարու հետ, դժուարը հեշտի հետ փոխելու համար, մեզ թողնելով մեծ հաւատք ապագայի հանդէպ:

Մինչեւ այս պահն էլ Սրբազանի դէմքը իմ աչքի առաջն է, պահեր են լինում, որ կարծում եմ հիմա կը տեսնեմ նրան, բայց...

Երջանկութեանս սահման չկայ, որ նորից տեսնուելու եմ Մեսրոպ Սրբազանի հետ, անհամբեր սպասում եմ այդ օրուան, այդ երանելի օրուան:

Աննկարագրելի ուրախութիւն եմ ապրում այն մտքից, որ Սրբազանին ընդմիշտ չեմ կորցրել, միայն պէտք է անբասիր ապրեմ, որ երկրային կեանքս աւարտելուց, երկնքում տեղ ունենամ, որպէսզի այդտեղ փնտրեմ Մեսրոպ Սրբազանին, կարօտս որ խեղդում է, հագեցնեմ, մօտից լսեմ նրա ձայնը, այն ձայնը, որ ինձ դարձաւ հարազատ:

Սաֆարեան Կարեն
Սրբազանի սանիկը
Երեւան 7 Փետրուար 2004

Նա Նման էր Արեւի

... Նա նման էր արեւի.

Եւ մի սուրբ առաւօտ, նրա օգնութեամբ ամենախորունկ անդունդից ելայ, փորձելով եւ հաւատալով, որ ինձ հովանի դարձած այդ մարդ-արեւի օգնութեամբ, ամենաբարձր լերան գագաթը կը հասնեմ: Սակայն, երբ ինձ ընդամենը մի քանի քայլ էր մնացել լերան կատարին հասնելու համար, դաժան մի առաւօտ, արեւածագի փոխարէն ակնթարթօրէն մարեց յոյսիս արեւը, եւ ես... կորցրի գագաթը լերան...

Ես դեռ չգտած էլի զրկուեցի գլխավերեւս հովանի դարձած այդ սուրբ ձեռքերից:

Նրա աչքերի ջերմութիւնն ու ձայնի քաղցր ելեւէջները յաւերժ կը մնան իմ յուշերի մէջ:

Ես իմ ողջ կեանքը ապրելու եմ նրա օրհնութեամբ եւ նրա լուսաւոր հոգին օրհնելով:

Ասես երկնքից իջած մի ակնթարթ էր նրա կեանքը: Իջաւ երկնքից, որպէս ապացոյց համայն մարդկութեան, որ սրբերը միայն երկնքներում չեն: Եւ թողնելով բազում բարի գործեր, այդ հողեղէն սուրբն էլի սլացաւ դէպի կապոյտ անսահմանութիւն, որ յաւերժ հսկի այդ կապոյտներից իր զաւակների հսկայ բանակը:

Եւ որպէս վերջաբան կ՛ուզէի աղաղակել ի լուր աշխարհի՝ «փա՜ռք Մեսրոպ ծնող մօրը Սրբազան...»:

Խորէն Մանեան
ք. Վանաձոր 2005թ.

***

Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը վեհ անձնաւորութիւն էր, իսկական մտաւորական ու հայրենասէր, գթասիրտ, մարդասէր, բարի, բարերար: Նրա օրինակը մեզ կրթեց և շատ բան ուսուցանեց: Նրա կերպարը մեր օրերում հազվագիւտ էր: Այսօր «Այգաբաց Միաբանութիւն» բարեգործական կազմակերպութիւնը ձեռնամուխ է եղել եւ կեանքի կոչել «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին» օրէնքի հաստատումը, ինչպէս նաև հետամուտ եղաւ «պետական աջակցութիւն ՀՀ խնամակալական կազմակերպութիւնների շրջանաւարտներին» ծրագրի իրականացմանը, որին մեծ լիցք հաղորդեց Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը:

Սրբազանը լաւ հումոր ունէր: Մի օր կազմակերպուել էր հաւաքոյթ «Այգաբաց Միաբանութիւն» ԲՀ կազմակերպութեան գրասենեակում: Երտասարդները երախտագիտութեան զգացումով իրենց հետ բերել էին ելակ, որը աճեցրել էին հենց Սրբազանի կողմից յատկացուած հողամասում: Սեղանին դրուած էր ելակ եւ միասին հիւրերի հետ ըմբոշխնում էինք: Այդ պահին ես զրոյցի էի բռնուել կողքիս նստած անձնաւորութեան հետ: Յանկարծ Սրբազանը դարձաւ ինձ եւ հարցրեց.

- Արտակ սեղանին դրուածը ռուսերէն Կալինինո կ՚ըսեն չէ՞ :

Ես այդ պահին տարուել էի զրոյցով եւ մտածելով, որ Սրբազանը սխալ բան չի ասի, առանց ուշադրութիւն դարձնելու հարցին, ասացի՝ այո Սրբազան Հայր սեղանին դրուածը Կալինինո է շփոթելով կլուպնիկ բառի հետ եւ (Կալինինոն քաղաքի անուն է) նորից տարուեցի զրոյցի: Նա մի երեք անգամ էլ այդ նոյն հարցը տուեց ինձ եւ ես նոյնը պատասխանեցի: Յանկարծ նկատեցի, որ սեղանի շուրջը նստածները Սրբազանի հետ միասին լիաթոք ծիծաղում են: Ես հասկացայ, որ Սրբազանը նկատել էր, որ ես տարուել էի զրոյցով եւ առիթը բաց չթողնելով հումոր արեց: Քիչ անց ես էլ բոլորի հետ միասին լիաթոք ծիծաղում էինք:

Արտակ Սարգսեան

«Այգաբաց միաբանութիւն» կազմակերպութեան

նախագահ

***

Ես մեծացել եմ Գավառի եւ այնուհետև Մեղրիի մանկատներում: Մանկատունը լքելուց յետոյ յայտնուեցի ծանր վիճակում: Քնում էի փողոցներում: Զբաղւում էի պատահական աշխատանքներով օրուայ հացս հայթաթելու համար: Շուտով «Այգաբաց Միաբանութիւն» ԲՀ կազմակերպութիւնից ինձ ասացին, որ

դու այլևս չես մնայ փողոցում, քանի որ մեզ աջակցում է Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը եւ մեր ծրագրին սիրայօժար օգնում է: Ճիշտն ասած այնքան էի յուսահատուել, որ ինձ թւում էր թէ իմ կեանքը այդպէս էլ շարունակուելու է: Բայց օրերից մի օր ես ստացայ Արմաւիրի մարզի Այգեշատ գիւղում բնակելի տուն իր տնամերձ հողատարածքով, որի համար երախտապարտ եմ մեր սիրելի Սրբազանից և «Այգաբաց միաբանութիւն» կազմակերպութիւնից: Ես միշտ կը յիշեմ նրան: Նա ինձ պէս շատերին օգնեց կեանքին նայել՝ յոյսի ու լոյսի հաւատով:

Վասիլի Պլեխանով

***

Երկար անօթեւան մնալուց յետոյ «Այգաբացի» աջակցութեամբ ժամանակաւոր բնակութիւն հաստատեցի կացարանում: Սակայն շուտով բնակուելուս ժամկէտը լրացաւ եւ կացարանի կառավարչութեանը յանձնեցի սենեակը և ես անօթեւան մնացի: Մանկութեան տարիներից երազել էի ունենալ տուն և ես այդ շրջանում սիրում էի ինձ հետ մանկատանը մեծացած Կարինէին: Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի գթասրտութեան եւ «Այգաբաց Միաբանութիւն» բարեգործական հասարակական կազմակերպութեան ուշադրութեան շնորհիւ ես ստացայ բնակելի տուն, ինչպէս նաեւ սիրելի Սրբազանը մեր կազմակերպութեան հետ համատեղ ջանքերով կազմակերպեց մեր հարսանեկան արարողութիւնը: Ես 10 տարի անօթեւան մնալուց յետոյ չէի հանդիպել այդքան մեծահոգի եւ բարի մարդու: Իմ տան բացման արարողութեանը ներկայ էին հիւրեր, Սրբազանի խորհուրդով մեր տան բակում մի ծառ տնկեցինք, որը մեր սիրոյ խորհրդանիշն էր լինելու այլեւս: Այսօր այդ ծառը ամեն անգամ ջրելուց, յիշում ենք հոգելոյս Սրբազանին, անհամբեր սպասում ենք, որ ծառը տայ իր բարի չիւերը եւ պտղաբերութիւն ընծայի մեզ , ինչպէս Սրբազանի բարի խորհուրդները մեր անձնական կեանքում:

Շուրա Գէորգեան

***

Երբ որ մանկատունը աւարտեցի, տեղաւորուեցի Զէյթունի ուսանողական հանրակացարանում: «Այգաբաց միաբանութիւն» բարեգործական հասարակական կազմակերպութեան պատուաւոր անդամն էր Մեսրոպ Արք. Աշճեանը: Ես շատ դժուար էի ապրում, սենեակս շատ փոքր էր եւ չունէր տարրական կոմունալ յարմարութիւններ: Այդ շրջանում ես ուսանում էի Երեւանի

Առեւտրաիրաւագիտական կոլէջում՝ իրաւաբանական մասնագիտութեամբ: Դժուար ու ծանր օրեր էինք յաղթահարում եւ այդ շրջանում յանկարծ ծանօթացանք Մեսրոպ Արք. Աշճեանին: Նա մօտիկից հետաքրքրուեց մեր իրավիճակով եւ իմացաւ, որ ես ցանկանում եմ ընտանիք կազմել, սակայն զուրկ եմ այդ հնարաւորութիւնից: Շուտով կայացաւ իմ եւ իմ սիրելի Կարենի հարսանեկան արարողութիւնը, որտեղ ներկայ էր եւ իր անմիջական աջակցութիւնն էր ցուցաբերում Մեսրոպ Արք. Աշճեանը: Նա օրհնեց մեզ եւ իր տաք ջերմութեամբ նոր յոյս պարգեւեց ապագայի նկատմամբ: Ես հպարտ եմ, որ Մեսրոպ Արք. Աշճեանի պէս վեհ անձնաւորութիւնը, որին գրեթէ իր սուրբ գործերով ճանաչում է ողջ հայութիւնը, վառ յիշողութիւններ թողեց իմ կեանքում: Նրա կերպարը խորը դաստիարակչական ազդեցութիւն թողեց ինձ վրայ՝ Սրբազանի ոգով կրթելու եւ դաստիարակելու իմ երկու փոքրիկ զաւակներին:

Սուզաննա Մաշկովիչ

***

Մանուկ հասակից երկար ու ձիգ տարիներ անցկացրեցի Գաւառի, այնուհետեւ Մեղրիի մանկատներում: Ինձ անյայտ պատճառներով յայտնուել էի մանկատանը: Այդպէս էլ զրկուած մնացի ծնողական գուրգուրանքից եւ հոգատարութիւնից: Դեռահաս տղայ էի, տակաւին 16-ը չբոլորած, յայտնուեցի փողոցում, պատճառը Խորհրդային Միութեան փլուզումն էր եւ Մեղրիի մանկատան վաղաժամկէտ լուծարումը, քանի որ այն գտնւում էր սահմանամերձ գօտում եւ թշնամու թիրախային կէտում: Ես եւ իմ հասակակիցները, անկախ մեր կամքից, սկսեցինք թափառական կեանք վարել: Յաճախ քաղցած էինք մնում եւ փորձում էինք ինչ որ կերպ հայթայթել մեր օրուան հացը, զբաղւում էինք պատահական աշխատանքներով, բեռնակրութիւն էինք անում, ծանր ֆիզիքական աշխատանք, բայց քանի դեռ երիտասարդ էինք, յաճախ մեզ չէին վստահում նմանօրինակ գործեր: Երբ ցրտերը ընկնում էր, հասկանալի է, որ մեր վիճակը աւելի էր ծանրանում, եւ չգիտէինք որտեղ գիշերէինք: Մի օր տղաների հետ որոշեցինք գիշերել Տիգրան Պետրոսեանի անուան ճատրակի տան նկուղային յարկում, որտեղ մեր բախտակից ընկերներից մէկը, որ այսօր լրագրող է, եւ գրքեր է հրատարակում, աշխատում էր որպէս պահակ եւ ուսանում էր Երեւանի Պետական Համալսարանում: Անշուշտ դա չէր թոյլատրւում Շախմատի տան տնօրէնութեան կողմից, բայց մեր ընկերոջ շնորհիւ ստացանք մեր ակնկալած ապաստանը եւ այսպէս շարունակ մենք որոշ ժամանակ հանգրուանեցինք նկուղում: Անցան տարիներ, երբ ստեղծուեց «Այգաբաց միաբանութիւն» հասարակական

բարեգործական կազմակերպութիւնը: Կազմակերպութեան ծրագրի շրջանակներում Բարեշնորհ Մեսրոպ Արք. Աշճեանը առաջիններից էր, որ անմիջականօրէն անդրադարձաւ մեր սուր խնդրին եւ իր սիրայօժար օգնութիւնը ցուցաբերեց մեզ: Իմ ամբողջ հարսանեկան արարողութիւնը եւ ընակելի տան եւ տնամերձ հողատարածքի յատկացումը հոգաց մեր սիրելի Սրբազան հայրը: Իմ անցած դժուարին օրերը մնացել են ետեւում: Ես այսօր ունեմ իմ ընտանիքը, ծնուել է առաջնեկս, որը կրում է իմ հօր անունը՝ Յակոբ, որին այդպէս էլ ես չեմ տեսել երբեք: Պարզապէս մենակ լինելով այս աշխարհում, որոշեցի իմ գերդաստանը շարունակել: Ես երախտապարտ եմ Մեսրոպ Արք. Աշճեանից, որ իմ կեանքում յեղաշրջում կատարեց եւ չթողեց, որ ես յուսալքուեմ եւ այդ դաժան կեանքի թոհ ու բոհում ծուռ ճանապարհը ընտրեմ: Այսօր երջանիկ եմ, քանի, որ ունեմ ամուր ընտանիք եւ վայելում եմ նրա սէրն ու յարգանքը: Այն ինչը ինձ իր բարի խորհուրդներով ուղեկցեց մեր սիրելի Սրբազան Հայրը: Շնորհակալ եմ Աստծուց, որ արժանացայ Մեսրոպ Սրբազանի օրհնանքին:

Վահան Ֆոնազեան

***

Ինձ անյայտ պատճառներով խնամուել եմ Գաւառի եւ այնուհետեւ Մեղրիի մանկատներում: Մանկատանը ինձ ճանաչում էին որպէս ամենափոքրիկ ու ճարպիկ մի տղայի: դրա պատճառը այն էր, որ ես մարմնապէս չէի աճում: Դա բացատրւում էր նրանով, որ իմ սիրտը գտնւում է աջ մասում: Շուտով լքեցի մանկատունը, այն շրջանում երբ մեր պետութիւնը ծանր ճգնաժամ էր ապրում: Պետութիւնը չունէր յատուկ մօտեցում մանկատունը աւարտած սաների նկատմամբ եւ ինձ պէս շատերը անուշադրութեան մատնուեցին: Դպրոցում լաւ էի տիրապետում Աշխարհագրութեան առարկային եւ ցանկանում էի դառնալ աշխարհագրագէտ. իսկ իմ ընկեր Մհեր Արշակեանը մանկուց ստեղծագործում էր եւ ցանկանում էր դառնալ գրող: մենք մի հասակակիցներ էինք եւ երկուսս էլ յայտնուեցին անօթեւան կարգավիճակում: Շուտով Մհերի օգնութեամբ ապաստան գտայ Տիգրան Պետրոսեանի անուան Շախմատի տանը: Բայց մինչ Շախմատի տանը բնակուելը յաճախ գիշերները լուսացնում էի զբօսայգիներուն: Այնուհետեւ ժամանակաւոր բնակութիւն հաստատեցի իմ բախտակից ընկերոջ Արտակին յատկացուած ժամանակաւոր սենեակում, որին յաջողուել էր ԲՈՒՀ ընդունուել եւ այդ հաստատութիւնից ստանալ այդ սենեակը: Շուտով այդ սենեակի յատկացման ժամկէտն էլ լրացաւ եւ ես նորից մնացի փողոցում: Արտակի հետ միասին դիմում էինք տարբեր ատեաններ, սակայն դրական արձագանգ չէինք

ստանում: Անցան տարիներ եւ շատ դաժան փորձութիւններով անցանք: Միակ մտավախութիւնս այն էր, որ, անկախ իմ կամքից ինձ պատած քաղցը, անօթեւան լինելը ինձ չուղղէին սխալ ու յանցագործ ճանապարհներ: Բայց Աստուծոյ նախախնամութեամբ ես հանդիպեցի Մեսրոպ Արք. Աշճեանին: Այդ հանդիպումը կազմակերպեց արդէն ստեղծուած «Այգաբաց միաբանութիւն» հասարակական կազմակերպութիւնը, որը ձեռնամուխ էր եղել զբաղուելու Հայաստանի մանկատների 16-ից 18 տարին լրացած անօթեւան մնացած սաների սոցիալական հիմնախնդիրներով: Սրբազան Հայրը սիրայօժար իր համաձայնութիւնը տուեց օգնելու եւ աջակցելու ինձ: Շուտով ինձ յատկացրեց բնակելի տուն, տնամերձ հողատարածքով ու մի տեսակ մեծ լիցք հաղորդեց կեանքին այլեւս նայելու լաւատեսութեամբ: Ներկայումս զբաղւում եմ անասնաբուծութեամբ, ունեմ իմ սեփական անասունները, թռչունները, եւ յաճախ արձակ դաշտերը գնալիս հայեացքս գնում է հեռուն եւ մտաբերելով իմ անցեալը ինքս ինձ ասում եմ «Որքան մարդկանց հանդիպեցի, բայց չարժանացայ նրանց թոյզն իսկ գթասրտութեանը, եւ աւելին անարգուեցի եւ մի տեսակ որբի մականունը կրեցի, մինչդեռ մեր սիրելի Սրբազան Հայրը իր տաք շնչով ոչ միայն գթաց մեզ, այլեւ իր բարի խորհուրդներով եւ թէ բարոյական, թէ նիւթական աջակցութեամբ կեանքի ուղեցոյցը հանդիսացաւ մեր հետագայ ճակատագրին:

Դմիտրի Զուեվ

***

Փոքր հասակից մեծացել ենք մանկատանը: Հինգ երեխաներ ենք, Լուսինէն, Արմինէն, Արթուրը, Արայիկը եւ Արտաշը, որը մօրաքրոջ խնամքի տակ է մեծացել: Դպրոցը աւարտելուց յետոյ չգիտէինք որտեղ ապրենք, բայց քանի որ արդէն գոյութիւն ունէր «Այգաբաց միաբանութիւն» բարեգործական հասրակական կազմակերպութիւնը, որին սատարում եւ հովանաւորում էր մեր շատ սիրելի Մեսրոպ Արք. Աշճեանը, ստացանք բնակելի տուն՝ տնամերձ հողատարածքով: Մեզ համար կարծես սա երազ լինէր եւ վախենում էինք, որ մեր աւագ սերնդակիցների պէս, որոնք խնամւում էին մանկատանը, նոյնպէս կը յայտնուէինք փողոցում, սակայն այդ տեղի չունեցաւ, քանի, որ Հայաստանում կար գիտական, մշակութային եւ բարեգործական համակողմանի գործունէութիւն ծաւալող մի մարդ, բազմավաստակ հոգեւորական, որի անունն է Մեսրոպ Արք. Աշճեան: Մենք ուրախ ենք եւ հպարտ, որ այդքան հայրենասէր եւ ազգանուէր, մարդասէր անձնաւորութեան հանդիպեցինք: Նրա օրհնանքը մեզ համար կեանքի կանաչ ճանապարհներ բացեց: Մենք արդէն ինքնուրոյն ենք եւ կարողանում ենք վաստակել մեր հացը, ինչպէս կ՚ասէր Սրբազանը, որ «Ամեն մարդ պէտք է իր

ճակտի քրտինքով վաստակի հացը, մեր նախահայրերը քարէն հաց քամած են եւ իրենց տունը հաւատքով կառուցեր»:

Լուսինէ եւ Արթուր Ջուլհակեաններ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԷՆ ԴՈԿՏ. ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՀԵՏ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆԸ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՏԷԱԼԻ ԱՆԳԵՐԱԶԱՆՑԵԼԻ ՕՐԻՆԱԿ Է

«ԱԶԴԱԿ».-Պարոն Մելքոնեան, ծանօթ է, որ դուք գլխաւոր աջակիցներէն մէկն էիք հանգուցեալ Մեսրոպ արք. Աշճեանին: Կրնա՞ք քանի մը բառով ներկայացնել, թէ ինչպիսի՞ խմորի տէր անձ էր վախճանեալ Սրբազանը:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ.-1990ական թուականների երկրորդ կէսին Մեսրոպ Արք. Աշճեանի հանդէս գալը Հայաստանում հայ մտաւորական շրջանակներում, ուղղակի պիտի ասեմ, առանց չափազանցութեան, յեղաշրջում էր նշանակում: Բանն այն է, որ մենք Մեսրոպ Արք. Աշճեանին մինչ այդ գիտէինք, շատերը նաեւ գիտէին նրան վարդապետութեան շրջանում, երբ դեռ նա Միացեալ Նահանգներում էր, առանձին մարդիկ շատ աւելի շուտ ճանաչում էին նրան Պէյրութից եւ Նոր Ջուղայից, բայց անկասկած նրա գործունէութեան այս վերջին փուլը ամենաբուռնը եղաւ Հայաստանում, եւ դա հասկանալի է, որովհետեւ, ինչպէս ինքն է ասում իր գրքերից մէկում, «Հիմա Ամերիկայէն երկիր կը վերադառնամ Ս. Էջմիածնայ մէջ զբաղելու համար քրիստոնէութեան 1700ամեակի տօնակատարութեան վարիչ քարտուղարի պաշտօնով»:

Ի հարկէ, դա կապուած էր Ամենայն Հայոց Գարեգին Ա. կաթողիկոսի գործունէութեան հետ, եւ վերջինս հրաւիրեց Սրբազանին այդ պաշտօնում աշխատելու: Պէտք է ասեմ, որ Սրբազանը շատ բուռն գործունէութիւն ծաւալեց հայրենիքում: Նախ նա մի գրասենեակ ստեղծեց, որը, մինչ այդ արդէն գործում էր, երբ նա Նիւ Եորքում առաջնորդ էր: Այդ գրասենեակը շատ կարեւոր աշխատանք

կատարեց հայ ազատամարտիկների ընտանիքներին նիւթական օգնութիւն ցոյց տալու իմաստով: Սփիւռքի մեր շատ բարերարներ, վստահելով Մեսրոպ Սրբազանին, նրա միջոցով այդ դրամը կարողանում էին հասցնել հայ ազատամարտիկների ընտանիքներին:

Մի կարեւոր բնագաւառ, որ Մեսրոպ Սրբազանը իրականացրեց, դա «Թռչունեան» որբանոցի ստեղծումն էր Գիւմրիում, որտեղ հարիւրաւոր մանուկներ կային: Մեսրոպ Սրբազանի գործունէութիւնը իր մէջ ներառում է հայաստանեան կեանքի գրեթէ բոլոր բնագաւառները: Նոյնիսկ պէտք է ասել, որ նա բանտերում նստած մարդկանց հետ գործունէութիւն էր տանում, շատերին հէնց բանտում մկրտել էր, զինուորներին կամ բանտապահներին դարձնում էր կնքահայր եւ կնքում էր բանտում նոր ծնուած երեխաներին:

Պատահական չէ, որ այդ մարդկանց մի զգալի մասը բանտից դուրս գալուց յետոյ Մեսրոպ Սրբազանի բարեկամն էին դառնում: Նա նոյնիսկ առանձին դէպքերում նրանց համար տներ, հողամասեր ու անասուններ էր գնում, եւ մարդիկ սկսում էին զբաղուել բնականոն կեանքով: Եւ պատահական չէ, որ Կարէն անունով մի երիտասարդ կայ, որը երախտապարտ լինելով Մեսրոպ Սրբազանին՝ մշտապէս դիմում է մեզ: Այժմ Հայաստանում Մերոպ Սրբազանի անունով գործող միակ կառոյցը մեր հիմնարկի գիտական կենտրոնն է, որ յուրախութիւն մեզ, նրա կենդանութեան օրոք բացուեց: Սրբազանը լինելով համեստագոյն մարդ՝ դիմադրում էր, որ իր անունով չկոչուի այդ կեդրոնը, բայց մենք ստիպեցինք նրան համաձայնուել, եւ 2000 թուականի Յուլիսին երբ մեր հիմնարկի հիմնադրման 60ամեակը նշուեց, Մեսրոպ Սրբազանը մեզ օգնեց եւ մենք կարողացանք վերջաւորութեան հասցնել նորոգութեան աշխատանքները, կահաւորել առաջին յարկի դահլիճը եւ առաջին-երկրորդ յարկերում մի ամբողջ կենտրոն հիմնել, որը իր մէջ ներառում է նաեւ Մեսրոպ Արք. Աշճեանի անուան գրադարանը:

Մեսրոպ Սրբազանի գործունէութեան մէջ անկասկած ամենակարեւոր մարզը նոր եկեղեցիների շինարարութեան եկեղեցիների նորոգութեան մարզն էր: Մեր սփիւռքահայ բարերարների օժանդակութեամբ մեծ թիւով եկեղեցիներ նորոգուեցին: Ի հարկէ, դա ամբողջ արւում էր 1700ամեակի գրասենեակի ընդհանուր ջանքերով:

Սրբազանը իրականացրեց մի հետաքրքիր միջոցառում. Հագարու գետի ափին, Զանգելանում (Արցախի ազատագրուած տարածքներ. դա պատմական Հայաստանի հնագոյն Կովսական գաւառն է) Սրբազանը կազմակերպեց հաւաքական մկրտութիւններ: Կազմակերպեց 17 հազար երեխաների համերգը՝ կապելով դա Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն ընդունման

1700ամեակի հետ, Վազգէն Սարգսեանի անունը կրող մարզադաշտում, 2001 թուականին: Ջտեսնուած միջոցառում էր...

Սրբազանը մի քանի սկաուտական հզօր հաւաքներ կազմակերպեց: Սփիւռքից բազմաթիւ երեխաներ եկան Հայաստան. նրանց մի զգալի մասին Սրբազանը տեղաւորում էր հէնց եկեղեցիների բակերում, որտեղ նրանք նորոգչական աշխատանքներ էին կատարում, մաքրում էին այդ եկեղեցիները քարերից, աղբից, տեսքի էին բերում, որից յետոյ արդէն շինարարները սկսում էին նորոգման աշխատանքները:

Անկասկած իր ամենամեծ ներդրումը Սրբազանը կատարեց Հայաստանի գիտնականների հետ կատարած աշխատանքի ժամանակ: Ես տառացիօրէն կարող եմ ասել, թէ հազիւ Հայաստանում այժմ գտնուի մի հայագիտական կամ ընկերային գիտութիւնների տէր մարդ, անձնաւորութիւն, որը այս տարիների ընթացքում չի շփուել Մեսրոպ Սրբազանի հետ:

Մենք չէինք կարողանում այդպէս էլ կազմել մի ցանկ, թէ որքան գիրք հրատարակուեց Մեսրոպ Սրբազանի օժանդակութեամբ, երբ տարիներ շարունակ, նոյնիսկ խորհրդային ժամանակներից մնացած շատ արժէքաւոր պատմագիտական-հայագիտական աշխատութիւններ մնացել էին անտիպ վիճակում, Սրբազանի հոգողութեամբ լոյս տեսան, եւ այդ աշխատութիւնների հեղինակները մինչեւ այժմ շնորհակալ մօտեցումով միշտ յիշում են այդ ամէնը, եւ ասում են, որ՝ «Սրբազանը ուղղակի յայտնութիւն էր մեզ համար»...

Մեսրոպ Սրբազանը գրքի նկատմամբ ունէր առանձնայատուկ սէր: Նա Հայաստանում կազմակերպեց «Գրքի Տօն»: Աննախադէպ երեւոյթ էր: «Մոսկուա» սրահին յարող «Շարլ Ազնաւուր»ի հրապարակում ամէն մի հրատարակչութիւն իր հրատարակած գրքերով ներկայացաւ մեր հանրութեանը: Սրբազանը խոր ցաւ էր ապրում, որ հասարակութեան մի մասը ուղղակիօրէն հեռացել է գիր-գրականութիւնից, միւս մասն էլ, որը շատ մօտ է կանգնած դրան, նիւթական միջոցներ չունենալու պատճառով չի կարողանում հաղորդակից դառնալ այդ գրականութեան հետ: Այդ միջոցառումը ուղղակի յեղաշրջում եղաւ մեր գրականութեան բնագաւառում:

Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայի մի քանի հիմնարկների հետ Մեսրոպ Սրբազանը ահռելի քանակութեամբ աշխատանք կատարեց: Այս հիմնարկները հետեւեալներն էին. Պատմութեան հիմնարկ Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկ, Լեզուաբանութեան հիմնարկ եւ Արեւելագիտութեան հիմնարկ: Այս հիմնարկների աշխատակիցների, համալսարանի աշխատակիցների եւ կենտրոնական պետական արխիւի աշխատակիցների աշխատութիւնները հրատարակուեցին: Այս աշխատութիւնների մէջ ես անկասկած կ'աւելացնէի այն

բազմահատորեակը, որը Բեհբութեանի գլխաւորութեամբ կազմուեց: Դրանք Հայաստանեայց Եկեղեցու պատմութեանը վերաբերող վաւերագրերն էին, յատկապէս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիւային ֆոնտերը, որոնք տեղափոխուել էին Թիֆլիսից, արխիւներ կային նաեւ Հայաստանում, Ս. Էջմիածնից: Մեր կենտրոնական արխիւի աշխատակիցների օժանդակութեամբ Բեհբութեանը կարողացաւ կազմել այդ վաւերագրերը եւ Մեսրոպ Սրբազանի միջոցով դրանք լոյս տեսան: Այդ հատորները իրենց մէջ հրաշալի նիւթեր էին պարունակում տարբեր ժամանակաշրջանների հայ կաթողիկոսների գործունէութեան վերաբերեալ: Հրաշալի նիւթեր կան Անթիլիաս-Էջմիածին այն ծանր ժամանակների յարաբերութիւնների վերաբերեալ, որոնք վերաբերում են 1950ական թուականների երկրորդ կէսին եւ նոր լոյս են սփռում Հայ Առաքելական Եկեղեցու այդ ժամանակաշրջանի պատմութեան վրայ:

Միւսը գիտաժողովների խնդիրն էր: Մեսրոպ Սրբազանը յատուկ սէր ունէր դէպի գիտաժողովները, որովհետեւ դրանք այն միջոցներն էին, որոնցով հասարակութիւն եւ գիտութիւն կապը ապահովւում էր, եւ գիտնականը զգում էր, որ իր գիտական արտադրանքը հասնում էր հանրութեանը: Եւ այդ իմաստով բազմաթիւ գիտաժողովներ եւ Օշականում Մեսրոպեան ընթերցումներ կազմակերպուեցին, որոնք իրականացւում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ միասին, թեմի առաջնորդ Նաւասարդ Եպս. Կճոյեանի մասնակցութեամբ:

Մեսրոպ Սրբազանի գործունէութեան մէջ առանձայատուկ տեղ ունի Մուղնու Ս. Գէորգ եկեղեցին, որի նորոգութիւնը նա իրականացրեց: Մեսրոպ Սրբազանը յատուկ թուլութիւն ունէր այդ քրիստոնէական կոթողի հանդէպ: Ինքը կ՚ուզէր, որ իր մարմինը ամփոփուէր Մուղնիում: Շատ էր սիրում այնտեղ եւ իր ձեռքով վարդեր էր տնկում: Ինձ անձամբ մի քանի անգամ Սրբազանը ասել էր. «Սրբազա՛ն, ի՛նչ կ՚ըսէք», իսկ նա պատասխանում էր. «Զէ՛, ինձի համար պատիւ է հոս թաղուիլը»...

Բայց շատ տխուր բան եղաւ յամենայնդէպս հայաստանեան ժողովրդի համար: Ես կարծում եմ, որ Մեսրոպ Սրբազանը իրօք արժանի էր, որ մի կտոր հողի արժանանար Հայաստանում, մանաւանդ, որ նա այդ պատիւն արժանացրեց շատ մեծերի: Գիտէք, զօր. Դրաստամատ Կանայեանի (Դրօ) աճիւնները Հայաստան բերելու հարցում Մեսրոպ Սրբազանը մեծ դերակատարութիւն ունեցաւ, ողջունեց Անդրանիկի աճիւնը Հայաստան բերելը, ինչպէս նաեւ իր աջակցութիւնը ցուցաբերեց Սօսէ Մայրիկի աճիւնները Հայաստան բերելու աշխատանքին: Երբ մենք Արեւմտահայաստան գնացինք 2000 թուականին, նա շատ հետաքրքրական մի միջոցառում կազմակերպեց: Մի բուռ հող բերեցինք Սօսէ Մայրիկի Թեղուտ գիւղից եւ Աղբիւր Սերոբի ծննդավայր Ախլաթ գաւառի Սոխորդ գիւղից, եւ այդ

հողը խառնեցինք Սօսէ Մայրիկի գերեզմանի հողին: Շատ հետաքրքրական միջոցառում էր...

Մեսրոպ Սրբազանի գործունէութեան մէջ առանձնայատուկ տեղ ունի նաեւ Արեւմտահայաստանի խնդիրը: Ես երկար ժամանակ զբաղուել էի Արեւմտահայաստանով եւ այդ շրջանները երազի պէս գիտէի, որովհետեւ պատմական ժողովրդագրութեան մասնագէտ եմ: Այդ երազի մէջ ես ստեղծում էի այդ բնակավայրերը, գետերը, լճերը, լեռները: Մեսրոպ Սրբազանի հետ արդէն երկրորդ անգամը լինում էի Արեւմտահայաստանում. մենք քայլեցինք Արեւմտահայաստանով, եւ այսօր, երբ նրա ֆիզիքական բացակայութիւնը կայ ցաւալիօրէն, ինձ համար Արեւմտահայաստանի գաղափարը մի տեսակ մարմնացաւ Մեսրոպ Արք. Աշճեանի կերպարի մէջ:

Այդ մարդը առանձնայատուկ սէր ունէր մեր երկրի, մեր հայրենիքի նկատմամբ եւ պէտք էր տեսնել նրա ուրախութիւնը, նրա արցունքները, նրա յուզումները Արեւմտահայաստանում: Հպարտութիւն էր ապրում, որ նա Արեւմտահայաստանում նորից պսակ անելու պատիւն ունի, ես էլ հպարտանում էի, որ փեսայի կարգավիճակով Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում պսակուելու պատուին եմ արժանանում, եւ Աստուծոյ խաչը իմ գլխին է դրուում Մեսրոպ Սրբազանի ձեռամբ: Սա ուղղակի անպատմելի մի բան է, եւ ամէն մի գիտնական, պատմաբան, քաղաքացի միայն զգացական աշխարհով կարող է պատկերացնել այն, ինչ որ տեղի է ունեցել Արեւմտեան Հայաստանի հետ կապուած, Մեսրոպ Սրբազանի հետ միասին:

Ժապաւէններ նկարահանուեցին, դրանք մեկնաբանուեցին Սրբազանի կողմից: Ես չեմ պատկերացնում մարդ, որ խօսի Մեսրոպ Սրբազանի մասին եւ կարողանայ նրա լիարժէք գործունէութիւնը ներկայացնել: Երբ նրա հետ խօսում էինք եւ ժամադրւում էինք, ասում էր՝ «այս ժամուն ես բռնուած եմ», իսկ երբ արեւելահայերս կատակով ասում էինք, թէ «բռնուած» բառը արեւելահայերէնով նշանակում է «ձերբակալուած», նա ասում էր, թէ՝ «այդ ժամուն ժամադրութիւն ունիմ»:

Գիշեր-ցերեկ աշխատում էր: Ես չեմ խօսում նրա գիտական աշխատութիւնների մասին: Շուրջ 40 մենագրութիւնների հեղինակ է: Ի՜նչ նուիրումով էր աշխատում վերջին «Էջմիածինը Ուղեգրութիւններ» գրքի վրայ: Հնագոյն ժամանակներից ինչ փաստ կայ միջնադարեան Հայաստանի եւ Ս. Էջմիածնի մասին օտարների կողմից թողնուած, հաւաքեց եւ մէկ ստուարածաւալ հատորով հրատարակեց: Իտալացիներ, ֆրանսիացիներ, գերմանացիներ, ռուսներ, արեւելքից եկած զանազան ճանապարհորդներ, որոնք արձանագրել էին, թէ ինչպէս էին տեսել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը 300 տարի առաջ, 500 տարի առաջ:

Սա աննախադէպ աշխատանք էր. եւ երբ տեսնում էիր այդ աշխատանքը, ապշում էիր, թէ այս ծանրաբեռնուածութեան պայմաններում ինչպէս էր Սրբազանը այդ նիւթը հաւաքել:

Մեսրոպ Արք. Աշճեանի հետ ծանօթութեան արդիւնքում ես եկայ մի եզրակացութեան, որ երբ տեսական նիւթը գործնականի էինք վերածում, համոզւում էինք, որ հայ պատմիչները, հայկական աղբիւրները որքան անաչառ են նիւթը հաղորդելու իմաստով: Պատկերացրէք, օրինակ, 18-19րդ դարերի հեղինակները յիշատակում էին «Տրդատայ քար»ի մասին (Արածանիի ափ): Եղաւ այնպիսի մի պահ, երբ Արածանիի ափին Սրբազանը ասաց. «Աչո՛տ, կրնա՞ս «Տրդատայ քար»ը գտնել» (այսինքն այն քարը, որը կանգնեցուել էր հայոց Տրդատ արքայի մկրտութեան վայրում): Ասեցի. «Սրբազա՛ն, ի՞նչպէս գտնեմ, եկեղեցին կրնամ, բլուրը, հնարաւոր է, բայց...», սակայն նա ասաց. «Նայէ՛, այստեղ նկարագրութիւնը կայ»: Սկզբնաղբիւրը դրեցինք, նայեցինք եւ գնացինք «քար»ի գլխին կանգնեցինք: Անպատմելի բան է...

Կամ, ասենք, միւս խնդիրը, երբ 16-17րդ դարերում իտալացի մի հեղինակ եկել է Արեւելահայաստան եւ Թալինի շրջանում տեսել մի ծաղիկ, որը աճում է Մայիսի երկրորդ կէսին եւ ընդամէնը մէկ շաբթուան ընթացքում թառամում է նորից: Եւ պատկերացրէք, Մեսրոպ Սրբազանը այդ ծաղկի խնդրով էր զբաղվուած: Ասում էր. «Կ'ուզեմ գիտնալ, թէ ճի՞շդ է այդ իտալացիին նկարագրութիւնը»: Եւ ապշելու բան. ճիշդ նոյն օրերին, Մայիս ամսին, գնաց ու գտաւ այդ ծաղիկը: Այսպիսի բաներով Սրբազանը երեխայի նման ուրախանում էր:

Խօսելով Սրբազանի մասին ես կ'ուզէի հետեւեալն ասել. ես ընդհանրապէս շատ զգացական մարդ չեմ եւ մինչեւ Սրբազանի հետ ծանօթանալը կարծում էի, թէ ամէն հայ մարդու համար խորհրդանիշ կարելի է համարել միայն ծնողին: Մեսրոպ Սրբազանը ինձ համոզեց, որ ծնողից զատ կարող է լինել նաեւ մի ուրիշ մարդ, որը քեզ համար կը դառնայ պաշտամունքի առարկայ: Ինձ եւ իմ ընտանիքի համար յամենայնդէպս Մեսրոպ Սրբազանը այդպիսին է. մարդկային իտէալի անգերազանցելի օրինակ: Մեսրոպ Սրբազանի ֆիզիքական բացակայութիւնը մի ամբողջ վիհ, մի ամբողջ դատարկութիւն յառաջացրեց մեր մտաւորական կեանքում:

«Ա.».-Դուք ձեր խօսքին մէջ ըսիք, որ Մեսրոպ արք Աշճեանի վախճանումէն ետք մեծ վիհ մը յառաջացաւ հայ ժողովրդի մշակութային, եկեղեցական եւ ազգային կեանքին մէջ: Ներկայիս կա՞ն մարդիկ, որոնք պատրաստ են շարունակել Մեսրոպ սրբազանին սկսած մեծ աշխատանքը, թէ այդ բազմակողմանի աշխատանքը ընդմիշտ դադրած նկատենք սրբազանին վախճանումով:

Ա.Մ.~Գիտէք, կեանքը անկասկած շարունակւում է, բայց ես ոչ մէկին չեմ ուզում վիրաւորած լինել, եթէ ասեմ, որ այն ընդգրկումը, որ ունէր Մեսրոպ Սրբազանը, այն ընկալումը, որ ունէր Մեսրոպ Սրբազանը, այն աշխարհայեացքը, այն լայնախոհութիւնը, որ նրա մօտի՞՞՞՞՞՞՞՞՞ամէն ինչում: Կարող էր անձնական հողի վրայ ինչ~որ մէկի հետ անհամամիտ լինել, բայց եթէ զգում էր, որ այդ մարդը ազգային դիմագիծ ունի, անմիջապէս գերակշռում էր նրա նկատմամբ յարգանքը: Եւ եթէ նոյնիսկ այն մարդը հակակրելի էր որպէս անձնաւորութիւն, Մեսրոպ Սրբազանի մօտ դա ոչ մի նշանակութիւն չունէր:

Այդ իմաստով զարմանում էիր, թէ մարդկային թուլութիւն ասուածը Սրբազանի մօտ ի՛նչպէս է նրա միջից հանուած: Եթէ կար ազգային որեւէ խնդիր, Մեսրոպ Սրբազանի մօտ միայն նոր էր հանդէս գալիս մարդկային թուլութիւնը: Այսինքն ազգայինի նկատմամբ միայն թուլութիւն ունէր: Հրաշք անձնաւորութիւն էր, երեխայի հետ երեխայ էր, մեծի հետ մեծ էր: Ի՞նչ ասեմ. չոր ու կոպիտ մարդու հետ կարող էր մի այնպիսի մթնոլորտ ստեղծել, որ կարող էր անմիջապէս մթնոլորտը փոխել այդ մարդու մօտ:

Ինչ վերաբերում է ապագային, ես կարող եմ ասել, որ մի մխիթարական բան կայ: Յամենայն դէպս Մեսրոպ Արք. Աշճեանը իր ներկայութեամբ ստեղծեց մի անարատ, անբիծ, մաքուր միջավայր, մթնոլորտ, որը շարունակում է գոյատեւել: Եւ ես կարծում եմ, որ այդ միջավայրի մարդիկ պարտաւոր են Մեսրոպ Սրբազանի այդ «Աշճեանական» ոգին եւ ընկալումը շարունակել ապագայի համար պահպանել: Այլապէս ասել, թէ ամէն ինչ կանգնել է նրանից յետոյ, դա կը նշանակի նաեւ անյարգալից վերաբերմունք Մեսրոպ Սրբազանի յիշատակի նկատմամբ:

Ես երազանքի նման մի նպատակ ունեմ, է՛ւ եթէ Սփիւռքում, սատար կանգնեն այս խնդիրին ես ուզղակի ամէն ինչով պարտական կը լինեմ: Մեսրոպ Սրբազանը գրքի նկատմամբ ունէր պաշտամունք: Նա ասում էր, որ՝ «այս համակարգիչը, որ մէջտեղ եկած է, զիս կը գայրացնէ: Ես կ'ուզեմ գիրքը ձեռքս առնել եւ շօշափել զայն: Այդ ամէն Սի. Տի.ի վրայ դնելը այն չէ, ինչ որ ես այդ ընկալումը ունիմ»: Եւ այսպիսի մի հետաքրքրական բան էր ասում. «Գիրքերու հրատարակութեան եւ հայագիտութեան եւ հայագիտութեան այս շարունակականութիւնը կ՛ուզեմ տեսնել»:

Իմ երազանքն է ուրեմն այդ շարունակականութիւնը տեսնել գրքերի հրատարակութեան ձեւով, եւ մեր հիմնարկի գիտական, որի մէկ մասն է կազմում Մեսրոպ Արք. Աշճեանի անունը կրող գրադարանը, դրա կողքին ունենալ մի փոքրիկ տպարան, եւ մեր ակադեմիական հրատարակութիւնները (պատմութեան

հիմնարկի արեւելագիտութեան, բանասէրների) հրատարակել «Մեսրոպ Արք. Աշճեան Մատենաշար»ով: Սա կը լինի իրական գնահատական Մեսրոպ Սրբազանի այդ հրաշալի գործունէութեան, եւ ամէն վայրկեան գրքի վրայ կարդալ Սրբազանի անունը. դա ամենամեծ յիշատակի ու յարգանքի արտայայտութիւնը կը լինի նրա հանդէպ:

«Ա.».-Մեսրոպ Արք. Աշճեան ի՞նչ ծրագիրներ ունէր, զորս չկրցաւ իրագործել իր կանխահաս վախճանման պատճառով: Արդեօք հայրենի ժողովուրդը տակաւին սէր կը տածէ՞ Մեսրոպ սրբազանի յիշատակին նկատմամբ, ինչպէս որ էր պարագան, երբ ինք տակաւին ողջ էր:

Ա. Մ.-Ի տարբերութիւն մեր մտաւորական մարդկանց, Մեսրոպ Սրբազանը որքա՜ն մտերմութիւններ ունէր հայ հասարակ մարդկանց, հասարակ ընտանիքների հետ, բանտից դուրս եկած քրէական յանցագործի ընտանիքից մինչեւ ակադեմիկոսի, պրոֆէսորի ընտանիք, որոնք միանգամայն տարբեր բաներ էին: Այսօր հայ մտաւորականներից որեւէ մէկը կարո՞ղ է հաշիւ տալ իրեն, որ նա նախկին յանցագործի ընտանիքի հետ յարաբերութիւն ունի: Չկայ այդպիսի բան, որովհետեւ նրա մօտ կար այն ընկալումը որ հասարակ ժողովրդից է բաղկացած մեր ազգը: Նա բոլորի ընտանեկան հոգսերը գիտէր: Այդ իմաստով նա դարձեալ աննախադէպ էր:
Այդ մարդիկ փորձում են իրենց կարօտը առնել փոքրիկ գիտական կենտրոնն այցելելով: Յատկապէս Սփիւռքից եւ հայրենի զանազան գիւղերից որքան շատ մարդ է գալիս: Նրանք իրենց նկարներն են տեսնում, ուրախանում եւ խորը ափսոսանք են ապրում, որ Մեսրոպ Սրբազանը իրօք չկայ:
Անսահման սէր կար Մեսրոպ Սրբազանի նկատմամբ: Երբ վախճանման բօթը լսեցինք, դուք պէտք էր տեսնէիք, թէ ի՞նչ էր կատարւում իմ աշխատասենեակում: Դուռը չէր փակւում, եւ գալիս էին ինձ մօտ եւ բոլորը միաբերան ասում էին. «Պարո՛ն Մելքոնեան, ձեզ խնդրում ենք, արէք մի բան, Սրբազանին Հայաստան բերէք, անարդարութիւն է սա, Սրբազանին բերէք Հայաստան»: Միաբերան նոյն բանն էին կրկնում: Ինձ հարկադրեցին, որ մենք կառավարութեան շէնքի դիմաց բողոքի ցոյց անենք, յետոյ եկանք նախագահի նստավայրի մօտ ցոյց արեցինք, հանդիպումներ եղան երկրի ղեկավարների հետ, բայց ի յայտ եկաւ, որ Մեսրոպ Սրբազանը ի կամօք է ցանկացել ամփոփուել Անթիլիասում:
Եւ երախտապարտ կը լինեմ, եթէ մեր ժողովուրդը, այդ հասարակ մարդիկ գտնեն ձեւ Մեսրոպ Սրբազանի աճիւնը հայրենիք բերելու համար: Դա իրապէս երեւոյթ

կը լինի մեր հասարակական կեանքում, եւ Սրբազանի գերեզմանը կը դառնայ սրբատեղի:

Կիսատ թողած ծրագրերի մասին: Մեսրոպ Սրբազանը ունէր ծոցատետրեր, որոնք հիմա պահւում են մեր մօտ: Անընդհատ բացում էր յոբելեաններ: Ուզում էր կազմակերպել Նոր Ջուղայի հիմնադրման 400ամեակ, բայց չստացուեց: Հայ գրերի գիւտի 1600-ամեակը յառաջիկայ մեծագոյն խնդիրն էր, որ Մեսրոպ Սրբազանը ուզում էր իրականացնել: Էդպիսի նպատակ ունէր, որ Արաքսի ափին, Տափերական կամրջի մօտ կառուցուի մի յուշարձան, այն վայրում, որտեղ արքունիքը Վռամշապուհ թագաւորի գլխաւորութեամբ դիմաւորել էր Մեսրոպ Մաշտոցին, երբ նա վերադառնում էր Ասորիքից, հայոց գրերը ստեղծած: Յառաջիկա նպատակը հէնց դա էր:

Ամէնամեայ գիտաժողովներ էին նրա ուղեղում նախատեսւում, գրքերի հրատարակութիւններ: Երբ առողջականի մասին էիր խօսում, իրեն թւում էր, որ Աստուած պիտի պահէ իրեն: Այդպիսի համոզում կար մէջը: Նա մտածում էր, որ մինչեւ 2015 արդեօք որքա՞ն վերապրողներ կարող են մնալ տեսականօրէն, եւ միշտ յիշում էր, թէ ի՛նչպէս 1985ին Նիւ Եորքում հսկայ մի միջոցառում էր կազմակերպել. այս միջոցառումի ժամանակ Միացեալ Նահանգների եւ աշխարհի զանազան մասերի հազարաւոր վերապրողներ հաւաքել էր Միացեալ Նահանգների մայրաքաղաք:

Երբ այդպիսի բաներ էին տեսնում, դու լիցքաւորւում էիր եւ ասում էիր, թէ Մեսրոպ Սրբազանը մահուան մասին չի մտածում, առողջական խնդիր չունի, բայց ինքը եւ իր շրջապատից հատուկենտ մարդիկ գիտէին, թէ Սրբազանը սրտի լուրջ խնդիր ունի, որովհետեւ այս վերջին տարիներին նրա սրտի միայն

25 տոկոսն էր գործում: Ես չգիտէի դա, քոյրը չգիտէր: Գիտէին բժիշկները, ինքը եւ մի քանի մարդիկ:

Մեսրոպ Սրբազանը Արամ Մանուկեանի տուն-թանգարանը ստեղծելու կապակցութեամբ մշտական բանակցութիւնների մէջ էր իշխանութիւնների հետ: Տունը գնաց ու գտաւ: Գերեզմանը գտել էր դեռեւս խորհրդային ժամանակներից, երբ արգելուած բան էր դա: Մեսրոպ Սրբազանը զարմանում էր, որ իշխանութիւնների կողմից չեղաւ համապատասխան արձագանք Արամ Մանուկեանի տունը տուն-թանգարանի վերածելու համար: Ծրագիրը մնաց կիսատ: Կիսատ մնաց նաեւ մի այնպիսի խնդիր, որ ինձ էլ անձամբ շատ հետաքրքրում էր: Նրա գործունէութեան վերջին շրջանում յատուկ ուշադրութեան արժանացաւ Ջաւախքը, մոռացեալ Ջաւախքը: Երբ Արեւմտահայաստանից վերադառնում էինք, այնքան սիրեց Ջաւախքը, եղաւ իմ հայրական տունը, եւ ասում էր. «Կը

խենթանամ, ուր որ կը նայիմ, հայերէն կը խօսին եւ կը խօսին արեւմտահայերէն, էրզրումի բառբարով»:

Սրբազանի համար յայտնութիւն էր Ջաւախքը: Դրանից յետոյ մի քանի անգամ ուխտագնացութիւն կազմակերպեց: Ո՞ւմ մտքով կարող էր անցնել, որ կարելի է դերասաններին տանել Թմկաբերդ, եւ Թմկաբերդում դերասանները կարող են թատերական ներկայացում կազմակերպել հէնց բերդի ներսում, հէնց Յովհաննէս Թումանեանի «Թմբկաբերդի առում»ը: Նոյնը արուեց Փարւանայի ափին: Ջրօրհնէք կազմակերպեց: Ուղղակի այդ իմաստով Ջաւախքը դարձաւ նրա ուշադրութեան կենտրոնը:

Եւ այդ իմաստով, քանի որ այնտեղ էին ծնու՛ել դաշնակցական այնպիսի յայտնի գործիչներ, վարչապետներ՝ Յովհաննէս Քաջազնունին, Համօ Օհանջանեան, «Հայրենիք»ի խմբագիր Ռուբէն Դարբինեանը, յայտնի գործիչ Ռուբէն Տէր Մինասեանը, նրանց տունները ես ցոյց տուեցի Մեսրոպ Սրբազանին: Այսօր, մինչեւ հիմա պահպանուել է Համօ Օհանջանեանի հայրական տունը, որը Ախալքալաք քաղաքի հնագոյն շէնքն է (ներկայիս շրջանի երաժշտական դպրոցը): Մեսրոպ Սրբազանը հսկայական ջանքեր գործադրեց, որպէսզի այդ շէնքը տրուէր Ջաւախքի Առաջնորդարանին: Երկու սենեակ յաջողուեց դա անել: Ամբողջ շէնքն էր ուզում ձեռք ձգել, այդ նպատակով նոյնիսկ հանդիպեց Համօ Օհանջանեանի Քանատայում բնակուող տղայի հետ, բայց դրամ չկարողացաւ հայթայթել, եւ այդ խնդիրը մնաց բաց, բայց Մեսրոպ Սրբազանը յամառօրէն շարունակում էր այդ խնդրին հետամուտ լինել: Չէր ուզում, որ մարդկանց հետքերը կորչէին:

Մի աշխատութիւն էր պատրաստում՝ «Մահը եւ Թաղումը»: Նա հայոց մեծերի կեանքի վերջին պահերը յանձնում էր թղթին, նրանց թաղման նկարագրութիւններով եւ գերեզմանների նկարներով, եւ նա միշտ ասում էր, որ՝ «պզտիկ տեղ մըն ալ ինծի համար ձգած եմ»: Այդ աշխատանքը պէտք է անպայման հրատարակել, եւ հիմա մենք այդ ուղղութեամբ աշխատում ենք:

Ասել, թէ ի՛նչ նպատակներ ունէր Սրբազանը, դժուար է պատկերացնել: Օրինակ՝ ո՞վ կը մտածէր, որ կարելի է ծաղկեպսակ պատրաստել Անիի Մայր Տաճարի հազարամեակի առիթով, տանել Ախուրեան գետ, իջեցնել ջրի մէջ ի պատիւ Գագիկ Ա. Բագրատունի թագաւորի կնոջ՝ Կատրանիդէ թագուհու, որը նախաձեռնել էր Մայր Տաճարի շինարարութիւնը հազար տարի առաջ:

Համահայկական մտածում, ընկալում եւ հայեցի հզօր աշխարհահայեացք: Ա՛յս էր Մեսրոպ սրբազանը:

Ազգակ օրաթերթ,

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԴԱՌՆԱՆՔ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱԶԳ

«ԱԶԴԱԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ԴՈԿՏ. ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Անցեալ տարուան Սեպտեմբերին լուսահոգի Մեսրոպ Արք. Աշճեանի ծրագիրներուն մասին տեղեկութիւններ քաղելու շրջագիծին մէջ, Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատմութեան հիմնարկի շէնքին մէջ հանդիպում ունեցանք հիմնարկի տնօրէն դոկտ. Աշոտ Մելքոնեանի հետ: Նախքան հանդիպումը քանի մը անգամ գտնուած էինք Մեսրոպ Արք. Աշճեանի անուան գիտական - կեդրոն - գրադարանին մէջ: Ով որ այդ գրադարանը մուտք կը գործէ, չի կրնար չհամակուիլ յատուկ զգացողութեամբ, որովհետեւ, այդ մեծ հայը՝ Մեսրոպ Արք. Աշճեան, իր կեանքին գոնէ վերջին 10 տարիներուն, միայն ազգային հպարտանքի զգացում տարածած էր իր շուրջ: Ուրիշ իմաստով ալ մարդ յատուկ զգացումով կը համակուի, որովհետեւ այդ գրադարանը Սրբազանին կենդանութեան եղած էր իր անձնական գրասենեակը, եւ ան հոնկէ տարած էր իր բազմակողմանի գործունէութիւնը:

Մանաւանդ մէկ բան կ'ազդէ անձի մը վրայ: Գիտական - կեդրոն - գրադարանին մէկ անկիւնը կախուած էր Մեսրոպ Արք. Աշճեանի մէկ մեծադիր նկարը, իսկ նկարին վրայ տեղադրուած էին ուրիշ երկու փոքր պատկերներ, որոնք կը պատկանէին Մեծի Տանն Կիլիկիոյ Զարեհ Ա. կաթողիկոսին եւ Հայաստանի Ա. անկախ Հանրապետութեան լուսաւորութեան նախարար Նիկոլ Աղբալեանին: Եւ ըստ մեր լսած բացատրութիւններուն, Սրբազանը իր կենդանութեան միշտ իր կողքին կը պահէր այդ երկու լուսանկարները: Զարեհ Ա. Կաթողիկոս եղած էր Մեսրոպ Սրբազանը կուսակրօն քահանայ ձեռնադրողը, իսկ Նիկոլ Աղբալեան գերազանցապէս եղած էր հայ մշակոյթի մարդը, եւ Սրբազանը խորապէս ազդուած էր անկէ:

Մեր հանդիպումը դոկտ. Աշոտ Մելքոնեանին հետ իր գրասենեակին մէջ եղաւ բաւական ջերմ: Եւ ան երկար, շա՜տ երկար եւ յուզմունքով խօսեցաւ Մեսրոպ Արք. Աշճեանի իրագործուած եւ կիսատ մնացած ծրագիրներուն մասին: Եւ ահաւասիկ մէկ տարի ետք անգամ մը եւս կը հանդիպինք դոկտ. Աշոտ Մելքոնեանի հետ, սակայն այս անգամ՝ «Ազդակ»ի խմբագրատան մէջ: Բնականաբար այս անգամ ալ մեր խօսակցութեան առարկան կը դառնայ Մեսրոպ Արք. Աշճեանին ձգած մեծ ժառանգը, բայց մեր արծարծած նիւթերուն մէջ հիմնական տեղ կը գրաւեն նաեւ հայութեան ապագան եւ Հայրենիք - Սփիւռք յարաբերութիւնները:

«Ազդակ».- Անցեալ տարի ակադեմիայի պատմութեան հիմնարկի ձեր գրասենեակին մէջ Մեսրոպ արք. Աշճեանի ծրագիրներուն մասին մեր ունեցած զրոյցին ընթացքին դուք նշած էիք, թէ «երազ» մը ունիք պատմութեան՝ հիմնարկին կից սրբազանին անունով մատենաշար մը ստեղծելու★ Վերը դուք ակնարկութիւն կատարեցիք, որ այդ «երազ»ը արդէն իրականացած է★ Կարելի՞ է քիչ մը մանրամասն ներկայացնել, թէ ի՛նչպէս իրականացաւ այդ ծրագիրը★

Ա. Մ.- Երբ անցեալ տարուայ Հոկտեմբեր ամսին Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան հրաւէրով Նիւ Եորք գնացի մասնակցելու Մեսրոպ Արք. Աշճեանի յիշատակին նուիրուած ճեռնարկին, այնտեղ խօսք ասացի★ Համազգայինի ղեկավարները դրամահաւաք էին կազմակերպել այդ միջոցառման նախօրեակին եւ բաւական գումար էր հաւաքուել, որովհետեւ Սրբազանը բացառիկ անձնաւորութիւն լինելով՝ մեծ յարգանք էր վայելում★ Այս միջոցառումը կազմակերպելու աւարտին մօտ 20 հազար տոլարի գումար հաւաքուեց եւ որոշում ընդունուեց այդ գումարը փոխանցել մեր հիմնարկում գործող Մեսրոպ Արք. Աշճեանի անուան գիտական կեդրոն-գրադարանին★
Եւ որովհետեւ Սրբազանը յատուկ թուլութիւն ունէր գրքի նկատմամբ, ես հէնց տեղում առաջարկեցի ստեղծել մի փոքր տպարան, որպէսզի կարողանանք մեր հիմնարկին գիտաշխատողների աշխատանքները հրատարակել★ Այդ առաջարկը շատ մեծ արձագանգ գտաւ, եւ որոշուեց այդ գումարը յատկացնել մեզ★ Այդ գումարից որոշուեց 5000 տոլարը յատկացնել Մեսրոպ Արք. Աշճեանի յիշատակին կառուցուող յուշարձանին, որը դրուել է հաւանաբար Մուղնիում, եւ որի քանդակագործը Արա Շիրազն է★
Այս ծրագիրը մենք մտցրեցինք Հայաստանի կառավարութեան բարեգործական միջոցառումների ցանկի մէջ★ Դա շատ կարեւոր հանգամանք է, որովհետեւ հակառակ դէպքում այդ գումարի 20 տոկոսը որպէս տուրք պէտք էր վճարուէր համապատասխան մարմիններին★
Մենք արդէն ձեռք բերեցինք ռիզոկրաֆ ճափոնական գործիք, որը կարող է բաւական արագ տպագրական գործը իրականացնել եւ, յուրախութիւն մեզ, լո՛յս է տեսել առաջին հատորը՝ «Հայոց պատմութեան հարցեր» մատենաշարի 5րդ համարը, որը նուիրուած է Արեւմտեան Հայաստանի պատմական ժողովրդագրութեանը, այսինքն՝ ըստ վիլայէթների գիւղերի՝ բնակչութիւն, տեղաշարժ, մահմետականացում, այս ամբողջ գործընթացը՝ մինչեւ ցեղասպանութիւն եւ ցեղասպանութիւնից յետոյ★
Հիմա հրատարակութեան է պատրաստւում Մեսրոպ Արք. Աշճեանի անուան

մատենաշարի երկրորդ հատորը, որը ամբողջութեամբ նուիրուած է լինելու Մեսրոպ Արք. Աշճեանի անձի գնահատանքին եւ գործունէութեան★ Հայաստանի գրեթէ բոլոր լաւագոյն մտաւորականները իրենց խօսքն են յանձնել թղթին, օրինակ՝ Սիլվա Կապուտիկեան, Պերճ Զէյթունցեան, Լեւոն Անանեան, Սօս Սարգսեան, ակադեմիկոս Վլատիմիր Բարխուդարեան, եւ շատ ուրիշներ★ Հայաստանի ճանաչուած գրեթէ բոլոր մտաւորականները ցանկութիւն յայտնեցին այդպիսի հատոր հրատարակելու եւ մօտաւորապէս 100ից աւելի հեղինակներ իրենց գնահատանքի ջերմ խօսքն են գրել Մեսրոպ Արք. Աշճեանի մասին★

Ազգակ օրաթերթ, 1 Սեպտեմբեր, 2005

ՄԵՆՔ ՀԶՕՐ ԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՁՈՎ, ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՀԶՕՐ ԴԱՇՏՈՎ, ՄԵՐ ՏԱՐԱԲՆՈՑԹ ԷՈՒԹԵԱՄԲ

Հարցազրոյց դոկտ. Աշոտ Մելքոնեանի հետ

Հ.- Պրն. Մելքոնեան, շատ կը ցանկանայինք խօսէիք Մեսրոպ արք. Աշճեանի մասին՝ որպէս գործիչ:

Պ.- Գիտէք ինչ կայ, ես ասեմ Ձեզ՝ ունեմ Մեսրոպ Արք. Աշճեանի նկատմամբ անձնական, մարդկային թուլութիւն: Ես այդպիսի լայն մտահորիզոնի, այդպիսի նուիրումի տէր մարդ, խոստովանում եմ, երբեւէ չեմ հանդիպել: Եւ այդ, որ ասում են՝ կայ մարդկային իդէալ եւս միշտ թերահաւատօրէն էի դրան վերաբերւում, որովհետեւ ասում են՝ ամէն մի հայ մարդու համար երեւի մարդկային իդէալը իր ծնողն է, բայց Մեսրոպ Արք. Աշճեանը ինձ ապացուցեց, որ կայ նաեւ երկրորդ տարբերակը, երբ որ ազգակցական որեւէ կապ չունես այդ մարդու հետ եւ նա կարող է քեզ համար կեանքի իդէալ դառնալ: Ես ուղղակի ապշահար եմ նրա գործունէութեան այդ լայն ընդգրկման համար: Կա՞ր բնագաւառ, որ Մեսրոպ Արք. Աշճեանը չկար. եթէ դա մտային կարողութիւններ պահանջող բնագաւառ էր՝ մտաւորականութեան կողքին էր, պետութեանն էր պէտք սատարել՝ պետութեան կողքին էր, համայնքին էր պէտք սատարել՝ այնտեղ էր, Հայ Առաքելական Եկեղեցուն՝ այնտեղ էր, նոյնիսկ քոյր եկեղեցիների կողքին, էկիւմենիկ շարժում՝

Մեսրոպ Արք. Աշճեանը այնտեղ էր: Անհաւատալի մարդ էր եւ այս դառը, ծանր հարուածը ճակատագրի, որ մեր ժողովուրդը ստացաւ՝ նրա կորստեան հետ կապուած, փորձեցինք մի փոքր հատուցել եւ ես որպէս հայ մարդ՝ հպարտ եմ այն բանով, որ գոնէ նրա կենդանութեան ժամանակ նրա համեստութիւնը յաղթահարեցի եւ ստիպեցի, որ իր կենդանութեան օրօք մեր ինստիտուտում ստեղծուի իր անունով գիտական կենտրոն, որը մեր առաջին եւ երկրորդ յարկերում է գտնւում, դիմացը ցուցանակը փակցուած է եւ որպէս գրասենեակ՝ նրա ամբողջ երկրորդ յարկում մի մեծ սրահ տրամադրեցինք: Ցաւալիօրէն Աշճեանը միայն նորոգման սկիզբը տեսաւ եւ ամբողջ նրա գրադարանը, որ բերուեց այնտեղ, ինքը այդպէս էլ չտեսաւ, նրա անձնական նկարները, լուսանկարները ահռելի քանակութեամբ: Բացի եկեղեցական, գիտական գրականութիւնից այնտեղ կան տասնեակներով տեսաժապաւէններ, հազարաւոր լուսանկարներ, որոնք ահռելի նիւթ են Հայոց հին եւ նոր պատմութեան համար: Գիտէք, Ամերիկայում նրա ձեռնարկները՝ Հայոց Ցեղասպանութեանը նուիրուած. վերապրողների աւելի քան 15-20 հազարի մասին տեղեկութիւններ հաւաքելով, շուրջ քսան տարի առաջ նրանց հաւաքեց Վաշինգտոնում, Միացեալ Նահանգների մայրաքաղաքում. դա ապշելի մի բան էր: Այդ բոլոր նիւթերը մենք մեզ մօտ ունենք եւ ամէն մի սփիւռքահայի համար այդ սենեակը ուղղակի դարձել է մատուռի նման մի բան: Երբ ամէն անգամ գալիս են, ասում են՝ պրն. Մելքոնեան, հիմա հիւրը Բէյրութից է, հիմա Ամերիկայից է եւ գալիս են մարդիկ, հոգեկան մեծ բաւարարութեամբ հեռանում: Գիտէք, նրա ֆիզիկական բացակայութիւնը մենք պէտք է փորձենք փոխարինել Արեւմտեան Հայաստանի Հայ Դատի նկատմամբ մեր նուիրումով, որովհետեւ անձամբ ինձ համար Մեսրոպ Արք. Աշճեանը Արեւմտեան Հայաստանի խտացումն է:

Երբ որ մեր ընկերներից մէկը՝ կանադահայ լուսանկարիչ յայտնի Հրայր Բազէն եկել էր, ասաց՝ Աշոտ, այս եմ բերել, այն եմ բերել, Կտուցում եմ եղել, գիտե՞ս ինչ տեսայ, ամէն տեղ Մեսրոպ Սրբազանն էր, ազնուօրէն ինձ ուղեկցում էր այդ ամբողջ ընթացքում եւ նոյն խօսքերը լսում եմ բոլորից: Եւ թող խօսքս շատ զգացական չթուայ, ասեմ, որ իմ երեխայի կնքահայրն էր նա, ամէն երեկոյ քնելուց առաջ ասում է «Մամա, ինձ տար, Սրբազանին համբուրեմ, յետոյ նոր քնեմ»:

Ուրեմն՝ երբ որ ես եղայ Ջուղայում, Ջուղան, որ պատմութիւն է, մշակոյթ է, այսօր ոգի է նաեւ ինձ համար, նաեւ Մեսրոպ Արք. Աշճեան էր, որովհետեւ երբ գնացինք Առաջնորդարան առաջին տեղը որ ես ուզեցի այցելել այդքան սրբութիւնների մէջ,

խնդրեցի բարձրանալ առաջնորդարանի երկրորդ յարկ, որտեղ Աշճեանի լուսանկարն էր դրուած՝ որպէս առաջնորդ այդ թեմի:

Ալիք օրաթերթ, Թեհրան, 2004, 18 Յուլիսի

Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի պատմութեան ինստիտուտում գործող ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆԻ անուան գրադարանի

Յուշամատեանից

Լաւագոյն տպաւորութիւններով եւ խորագոյն զգացումներով կը մեկնիմ սոյն գրադարանէն: Գրադարան մը, որ մեծագոյն գրաւականն է հայ ժողովուրդի անմահութեան հաւատացող, հայ ժողովուրդի եզակի զաւակ՝ երանեալ Մեսրոպ Արք. Աշճեանին: Գրադարան մը ուր կը թեւածէ անոր անմեռ հոգին:
Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Գրիգոր Փիտէճեան
Երաժշտագէտ
10.4.2004թ.

Our dear Mesrob Ashjian was a member of our family. Whenever he stayed in Montreal, he was always a guest at our home. Our children and both of us will allways cherish his memory and specially the ours we spent together in Montreal and in Armenia the last year of his life.
Now that we are in Armenia we deeply feel his absence, but we are also glad that in this Institute, his memory and his works will be honoured with a museum under his name.
May he rest in peace

Diana and Dicran
Hadjetians

October 8, 2004

Ես՝ Գրիգոր Մեսրոպի Գրիգորեանս գլուխ եմ խոնարհում մեծ հայրենասէր, ականաւոր հոգեւոր գործիչ Մեսրոպ Արք. Աշճեանի յիշատակի առջեւ: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանայ իր պանծալի զաւակին:

Գրիգոր
Գրիգորեան

18.10.2004թ.

Մեր մեծ գրքասէր երջանկայիշատակ Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի անունը կրող այս գրադարանը խիստ անհրաժեշտ հաստատութիւն է եւ լաւագոյն ձեւն է իր յիշատակը վառ պահելու: Եւ եթէ կից տպարան եւս կազմակերպուի, ապա դա կը լինի ու կը դառնայ մեր գրահրատարակչութեան ձեռքբերումներից մէկը:

Ջերմօրէն՝ Ռ. Համբարձումեան

Նման հոգեւորական, նման մարդ ծնւում է 100 տարին մէկ անգամ: Նա մեր ժամանակի քայլող առասպելն էր, մեր ժամանակի Հայրիկը, որի անուշ խօսքին ու ժպիտին կարօտ մնացինք, չարժանացանք նոյնիսկ վերջին անգամ այդ մեծ մարդու աչը համբուրելուն:

Հայր Բաբգէն (Ջաւախք)

Մեսրոպ Սրբազանի հայրենանուէր ծառայութեան հարազատ ցոլացումը եւ յուսալի շարունակականութիւնը դառնալու կոչուած այս համեստ յարկը իր կոչման մէջ տեսնելու փափաքով:

Նարեկ Սրբազան
27 Դեկտ. 2004թ.

Սրբազան Հայր,

Մենք նորէն հանդիպեցանք իրարու Ձեր գրադարանին մէջ, Ձեր աշխատասենեակին մէջ: Դուք բացակայ էիք եւ անպայման ներկայ: Ներկայ էր Ձեր անխոնջ հաւատամքին վկայութիւնը հանդիսացող այն տաք շունչը, որմով դուք վարակեցիք հազարաւոր հայորդիներ Սփիւռքի եւ Հայրենիքի մէջ:

Վերջին անգամ մենք վիճեցանք, մտքեր փոխանակեցինք մեր ազգային ճակատագիրը շահագրգռող կարեւոր խնդիրներու մասին: Բաժնուեցանք վերստին հանդիպելու խոստումով:

Ահաւասիկ ես եկայ եւ վերստին գտայ Ձեզ Ձեր այս հրաշալի առանձնարանին մէջ, որ այլեւս կը պատկանի վաղուան սերունդներուն:

Թող հողը թեթեւ դայ Ձեր վրայ եւ Ձեր տաք շունչը շարունակէ վարակել այս շէնքին նոր սերունդները:

Կարօ Արմէնեան
3 Յունիս 2005թ.

Առաջին անգամ եղայ Մեսրոպ Արք. Աշճեանի անուան գրադարանում: Այն ինձ վրայ խոր տպաւորութիւն թողեց իր բաւական հարուստ ու բազմալեզու գրականութեամբ: Ես զգացի, որ Սրբազանը, իրօք, հայրենանուէր մեծ գործ է կատարել:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ լիցի:

Գէորգ Թոսունեան
17.06.05թ.

Մեսրոպ Սրբազանից լոյս էր ճառագում, եւ ամեն ոք, ով առիթ է ունեցել հաղորդակցուելու նրա հետ կրում է նրա հոգեմտաւոր ազդեցութիւնը...

Այս սրահը եւս համակուած է նրա ներկայութեամբ, ամեն մի հատոր նրա ազդեցութիւնն է ներշնչում:

Եուրի Նաւոյեան
12.06.2005թ.

Երբ իմացայ այս գրադարանի ստեղծման մասին, մեծ հետաքրքրութիւն ունեցայ տեսնելու: Սրբազանի պատանեկութիւնը կը յիշեմ. ես աւելի փոքր էի: Երբ մտայ գրադարան, հիացայ ու յուզուեցայ, մտածելով որ Հայաստանի մտաւորականները որքա՜ն գնահատեր էին Մեսրոպ Սրբազանի անձն ու գործունէութիւնը ու անմահացուցեր անոր յիշատակը: Սրբազանը որքա՜ն գոհ ու երախտապարտ պիտի ըլլար եթէ իմանար...

Նաեւ շատ ուրախացայ, որ իր «Քեռի»ի, պրն. Սուրէն Փափազեանի գրքերն ալ եկած ու միացած են Սրբազանի գիրքերուն՝ այս գրադարանին մէջ: Սրբազանը անսահման սէր ու յարգանք կը ցուցաբերէր «Քեռի»ի նկատմամբ:

Ուրախութեամբ պիտի հաւաքեմ տարիներու ընթացքին հաւաքուած նկարներ, գաղութային եւ ընտանեկան, եւ ուղարկեմ այս հոյակապ գրադարանին:

Ապրի՛ք եւ վարձքերնիդ կատար:

Մելինէ Գարագաշեան
4 հոկտ. 2005թ.

My visit to the Archbishop
Mesrob Ashjian Library

I was instrumental in the shipment of the Armenian books collection from the Souren Papazian Library. I am very please to have seen in person the Library Of Archbishop Mesrob Ashjian.

Harut Chantikian
18 Oct. 2005

Մեսրոպ Սրբազանն իր կեանքի ոճով ամենո՛ւր բազմաթիւ ու նշանակալից յիշատակներ է թողել՝ «Բանիւ եւ գործով»:

Բայց այս գրադարանն այն օջախն է, ուր պարտաւոր ենք գալ ոչ թէ դիտելու, այլ Նորին Սրբազնութեան անթիւ գրուածքների վրայ կենտրոնանալու եւ հանրութեանը հասցնելու համար:

Մեսրոպ Արք. Աշճեանի պայծառ ու կարող Առաջնորդութեան արժանացած՝

Արեւիկ Գաբրիէլեան
19 Հոկտ. 2005թ.

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ, ՄԱՀԸ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեսրոպ Արք.Աշճեանի Վերջին Հարցազրոյցը

Թերթիս աշխատակից Գրիգոր Գրիգորեան, օգտուելով Մեսրոպ Արք. Աշճեանի, վերջերս Ամերիկա այցելութեան առիթէն, երջանկայիշատակ Արքեպիսկոպոսի անժամանակ մահուընէ հազիւ քանի մը օր առաջ, կատարած է հետեւեալ հարցազրոյցը:

Հարցազրոյցը առաւելաբար առնչուած է Զօրավար Սեպուհի աճիւններու Հայաստան փոխադրման եւ միաժամանակ «Զօրավար Սեպուհ» գիրքի հրատարակման, որ մինչեւ մէկ ամիս, լոյս պիտի տեսնէ Երեւանի մէջ:

Հարցազրոյցի ընթացքին շօշափուած են նաեւ շարք մը կենցաղային, հայրենասիրական եւ ազգային հասարակական խնդիրներ, որոնց համապարփակօրէն անդրադարձած է Սրբազանը սոյն հարցազրոյցին մէջ, մամուլին տուած իր վերջին հարցազրոյցն է:

ՀԱՐՑՈՒՄ.-Վահան Փափազեանը (Կոմս), իր «Խոնարհ հերոսներ» գրքի յառաջաբանում գրում է՝ «Պատմութիւնը իր տուրքը հաւատարմօրէն վճարած է, իրաւ եւ անիրաւ մեծերուն, բայց պէտք չէ որ մոռցուին խոնարհները, որ յաճախ պատուանդան են եղած մեծերուն, առանց երեւանալու» Կոմսի խօսքը առաւելաբար վերաբերում է Ֆիդայի-յեղափոխական պարզ զինուորներին: Բայց պարզ եւ խոնարհ հերոսների շարքին ունեցել ենք նաեւ բարձրաստիճան, խոնարհ եւ համեստ զինուորականներ: Այդ շարքին է հրամանատար Սեպուհը:
Սրբազան հայր, մտածում եմ, ի սէր արդարութեան եւ արժէքաւոր խոնարհների նկատմամբ ձեր ունեցած համակրանքի եւ սիրոյ, նախաձեռնել էք աճիւնների փոխադրման ծրագրին եւ գրքի հրատարակութեան: Կարելի՞ է այս առնչութեամբ որոշ տեղեկութիւններ տալ:

ՊԱՏԱՍԽԱՆ.-Շնորհակալ եմ այս առիթին համար, տարիներէ ի վեր՝ փափաք ունէի, որ Սեպուհի աճիւնները հանգիստ առնեն հայրենի հողին մէջ: Երբ տարիներ առաջ Դրոյի աճիւններու փոխադրութեան հարցը կար, ծանօթացայ Սեպուհի կեանքին, անոր ընտանիքին եւ ներքին մղումով՝ զգացի որ Սեպուհի աճիւնները անհանգիստ են: Վերջին տարիներուն՝ Անդրանիկը վերադարձաւ, բայց ինչպէս Կոմսը այնքան գեղեցիկ կերպով գրած է խոնարհ հերոսներու մասին, եւ դուք իրաւացիօրէն ակնարկեցիք՝ Սեպուհը մեծ դէմք էր եւ ինչեր կատարած է 1919-20 թուականներուն, անկախ Հայաստանի կերտման մէջ: Այդ հերոսները պէտք եղած ձեւով չեն մնացած մարդոց յիշողութեան մէջ, այնպէս ինչպէս որ պէտք էր մնային: Ոմանց հանդէպ ալ անարդարութիւն կատարուած է, եւ անոնցմէ է զօրավար Սեպուհ:

Երբ իր կենսագրութեան ծանօթանաս, պիտի զարմանաս, թէ Խարբերդի մէջ ծնած այս հայորդին, որ այնքան մտաւորական ուժ ունեցած է, կամք ունեցած է եւ մարտական ոգիին հետ միաձուլած է անսակարկ հայրենասիրութիւնը, քաղաքական հոտառութիւնն ու իմացութիւնը՝ ինչու՞ պէտք եղած յարգանքը այդ մարդուն հանդէպ չէ եղած:

Հիմա կը յիշեմ, իր մէկ խօսքը, որ ձեւով մը, կը հաւասարակշռէ Կոմսի խօսքը: Տեղ մը կ'ըսէ. «Մեր ժողովուրդը շատ քիչ բան գիտէ, մեր յեղափոխականներու, մեր հայրենասէր քաջերու մասին» եւ նշած է անուններ շարք մը հերոսներու: Անդին կան, սակայն, բազմաթիւ անուններ, որոնք գուցէ

աւելի մեծ քաջութիւն մատուցած են քան անոնք, որոնց անունները հրապարակի վրայ է եւ պատմութեան մէջ անուն ունին այսօր: Ըսեմ նաեւ որ Սեպուհ ինք իր ընտանիքին մէջ պահած է իր քաջարի ընկերներու անունները: Իր զաւակներու անուններն են. Մուրատ, Սեպուհ, Գէորգ եւ Անահիտ: Տեսէ՛ք, արդէն իրմով ձեւով մը կը յիշուին՝ Մուրատն ալ Գէորգ Զաւուշն ալ:

Ես իր ընտանիքին հետ կապ պահեցի, թէ՛ Ուաշինկթընի, թէ Հայաստանի, կուսակցական ու պետական շրջանակներուն հետ խօսած եմ եւ կը յուսամ որ պատշաճ կերպով Սեպուհի աճիւնը կը փոխադրուի Հայաստան: Ճիշտ է ցուցական մեծ հանդէսներ չեն ըլլար, անոնց ժամանակը անցաւ, Անդրանիկի եւ Դրոյի աճիւններու փոխադրութիւնը քաղաքական որոշ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ, բայց կարեւորը այն է, որ Սեպուհը հանգչի իր ժողովուրդի գիրկին մէջ:

Հ.-Սեպուհը, իր մարտական անցեալին զուգընթաց, ունեցել է նաեւ ազգային-հասարակական եւ բարեսիրական գործունէութիւն:

Երզնկայում Սեբաստացի Մուրատի հետ, ստեղծեցին «մէկ հայ մէկ ոսկի» հիմնադրամը որով կարողացան փրկել բազմաթիւ հայ կանայք եւ մանուկներ: Ի՞նչ էք կարող ասել այս մասին:

Պ.-Շատ հետաքրքրական տուեալ էր, որ յիշեցիք եւ ցոյց կու տայ այն, ինչ որ քիչ առաջ յիշեցի, որ «անկախ ռազմական յեղափոխական գործունէութիւնէն, Սեպուհ նաեւ ազգային մեծ մտահոգութիւններով, ծառայող անձ էր եւ ատոր համար էր որ Մուրատի հետ սկսան «մէկ հայ մէկ ոսկի» քաղաքականութեան՝ որով հազարաւոր կիներ եւ երեխաներ փրկուեցան Թուրքերու ձեռքէն: Գիտէք որ 1915էն ետք, երբ որ տարագրութիւն եղաւ, հազարաւորներ կամ բռնի կրօնափոխուեցան կամ որպէս ծառայ-սպասաւոր ապրեցան այստեղ-այնտեղ, մէկը իմ մայրս, իմ քեռիս, որոնք Թուրքերու մէջ մնացին, բայց բարեբախտաբար անոնք ուրիշ ճամբով ազատեցան, բայց կային շրջաններ, որ օգնութիւն չկար, որբախնամ կազմակերպութիւններ չկային եւ Մուրատի ու Սեպուհի աշխատանքը շատ արդիւնաւէտ եղաւ, որովհետեւ քիւրտերը եւ Թուրքերը, մէկ ոսկիի սիրոյն, իրենց մօտ պահած ծառաները, հարեմի մէջ պահուած աղջիկները ազատեցին եւ դարձուցին հայութեան: Մէկ ազատած հայ՝ կը նշանակէ հայ կեանք, հայ տուն, հայութեան ծառի մէկ ճիւղ:

Հ.-Մեր պատմութիւնը անարդար է գտնուել նաեւ իրական խոնարհ հերոսների նկատմամբ, որոնք եղել են ոչ բարձրաստիճան սպաներ եւ շարքային զինուորներ:

Այդ խոնարհների մէջ եղել են դէմքեր, որոնք անկիւնադարձային դերակատարութիւն են ունեցել մեր մարտական պատմութեան մէջ: Կը գոհանամ մի քանի օրինակներով՝ Ղարաբաղի 1918-19ի ինքնապաշտպանութիւնը

ամբողջովին վերագրւում է Անդրանիկին, արդեօք ո՞վ է յիշում գնդապետ Արսէն Շահմազեանի կարեւոր դերը այդ մարտերում: Կամ երբ Ղարաքիլիսայի պատմական ճակատամարտերում, Անդրանիկը լքեց ճակատը, Նժդեհը եւ առաւելաբար հրետանի մարտկոցի պետ սպայ Գուրգէն Տ. Մովսէսեանի նման խոնարհ հերոսներ եւս:

Պ.-Ես հիմա կը յիշեմ կոմսի «Խոնարհ հերոսները», որ մեր պատանեկութեան կը կարդայինք եւ իսկապէս մեզի համար ներշնչումի աղբիւր էր:

Այդ յուշագրութիւններու միջոցաւ ճանչցած ենք երկիրը, ժողովուրդը ճանչցած ենք, որովհետեւ այդ հերոսներէն ամէն մէկը իր գիւղի անունով ճանչցուած էր, եւ այդ ճանապարհով գիւղը կը յիշենք: Եւ կեանքս այնպէս դասաւորուեցաւ որ ոմանց հանդիպեցայ: Վարդան Շահբազ, կամ օրինակի համար խմբապետ Մուշեղ, որ այնքան մեծ դեր կատարած էին: Կը յիշեմ խմբապետ Մուշեղի պզտիկ խանութը, որ սիկարէթ կը ծախէր, եւ շատ շատ ուրիշներ, որոնք Ֆրանսա եւ Ամերիկա եկան:

Բարեբախտաբար մենք ունեցած ենք մեր հերոսներու սերունդը: Ճիշդ նկատած էք, բոլորը համաժողովրդական գնահատանքի չեն արժանացած եւ կամ մոռցուած են, բայց դժբախտաբար կեանքը այդպէս է, ոմանք կը ճառագայթեն, ուրիշները շուքի մէջ կը մնան, որոնք աւելի մեծ գործ կատարած են, դժբախտաբար աշխարհի օրէնքը այս է, եւ չեմ գիտեր թէ որքան անհրաժեշտ է, որ բոլորին գերեզմանադարձ ըլլայ, բայց եթէ անոնք յատուկ խնդրանք ըրած ըլլան, ինչու չէ: Սակայն, այսպէս զանգուածային փոխադրութիւն պէտք չէ, քանի մը պատճառներով՝ նախ որ Սփիւռքի մէջ ալ մեր գերեզմանները պէտք է մնան յարգանքի արժանի: Վերջերս Փարիզ էի, դարձեալ գացի Փիէռ Լա Շէզ, տեսայ որ Անդրանիկը հոն չէ: Վերաթաղման ես Հայաստան էի, բայց նորէն գացի որովհետեւ 1928 թուականներուն այնտեղ էր գերեզմանը, Անդրանիկէն բացի թաղուած էին Ա. Ահարոնեան, Վռամշապուհ Եպս. Թոպարեան, Արփիար-Արփիարեանի հերոս քահանայի (Կարմիր ժամուցի) տիպարը՝ Գրիգոր Օտեան: Այդտեղ ալ սրբութիւն է, Փիէռ Լա Շէզը, Ֆրէզնոյի գերեզմանատունը կամ Վիտոշի հերոսը, որ Պուլկարիոյ մէջ կը հանգչի, Սփիւռքի մեր ներշնչումի խորհրդածութեան աղբիւրներ են ասոնք:

Երկրորդը՝ որոշ հերոսներ կան, որոնք պէտք չէ որ անպայման Հայաստանի Հանրապետութիւն բերուին: Բայց ես կը յուսամ, օր մը որոշներ պէտք է վերադառնան հայրենիք, իրենց ծննդավայրերը: Ինչպէս Սօսէ Մայրիկի վերաթաղումին, 1998ին, ըսի գերեզմանին վրայ, որ Սօսէ Մայրիկի վերջնական գերեզմանը պէտք է ըլլա ա՛յն տեղը, Նեմրութ Սարի կողերուն (Թեղուտ գիւղի մէջ), որմէ քիչ մը անդին Սերոբ Աղբիւրի գիւղը կայ. ես գացի այնտեղ:

Հ.-Ի՞նչ էք մտածում պատուոյ յուշարձաններ կառուցելու մասին, ոչ հայ սպաների համար, որոնք կռուել են հայկական բանակում, մեր հայրենիքի համար: Որպէս օրինակ, Ղարաքիլիսայի ճակատամարտում զօրավար Ուաշինկթըն (Հայկական սպայակոյտի) եւ այլ ուրիշներ:

Պ.-Զինուորականը այնպիսի անձ մըն է, որ կրնայ որեւէ ատեն ճակատի վրայ մահանալ ատոր համար ես միշտ կը գնահատեմ զինուորականները, որոնք իրենց կեանքը միշտ նժարի մէջ դրած են: Հիմա կը յիշեմ, որ 1829ին, երբ որ ռուս-պարսկական պատերազմը վերջացաւ, Եփրեմ Կաթողիկոս Յոլակեանցին իր անձնական գումարով Օշականէն, Էջմիածնի ճամբուն վրայ, յատուկ յուշարձան մը կանգնեցուց, այդ տարիներուն նահատակուած ռուս զինուորներու յիշատակին: Շատ գեղեցիկ արարողութեամբ բացումը կատարուեցաւ եւ հիմա ալ երբ Էջմիածնէն Օշական պիտի երթաս, ճամբու վրայ կը տեսնես այդ յուշարձանը: Տեղացիները զայն կը կոչեն մատուռ եւ երբ այդ մատուռը կայ, ինչու Սարդարապատի եւ Բաշապարանի կռիւներուն զոհուած ռուս զինուորականներուն յիշատակը չի յարգուիր:

Շատ շատ տեղին մտածում էր եւ ասիկա պէտք է վերին իշխանութիւնները եւ պաշտպանութեան նախարարը անդրադառնան:

Հ.-Ի՞նչ էք մտածում կուսակցական զինուորականների եւ գործիչների համար, առանձին «Պանթէոն» պահելու մասին: Ձէք կարծում անջատողական կերպարանք կը ստանայ: Ի նկատի ունենալով որ բոլորը կռուել, աշխատել են հայրենիքի եւ հայութեան համար:

Պ.-Պէյրութի մէջ, Դաշնակցութեան պանթէոնը կայ, այն իմաստով, որ անոնք որոնք ցրուած էին այստեղ այնտեղ, փոխադրուեցան եւ մէկ տեղ ամփոփուեցան: Օրինակի համար Հայր Աբրահամի գերեզմանը, որ ուրիշ տեղ մըն էր, փոխադրուեցաւ Պուրճ Համուտ՝ Վրացեանի մօտ: Այդ պարագային հասկանալի է, բայց իբրեւ սկզբունք ո՛չ: Այս պարագային Նժդեհի խօսքը կը յիշեմ «Մեր հերոսները կրնան կուսակցական ըլլալ եւ իբրեւ կուսակցական կռիւներուն մասնակցիլ, բայց երբ որ կը նահատակուին՝ այլեւս կուսակցութեան հերոսը չեն, այլ հայրենիքի հերոսն են, ազգի հերոսն են եւ պէտք է ըլլան բոլորին եւ ոչ թէ այս կամ այն կուսակցութեանը»:

Հ.-Այսօր ունենք մեր անկախ հայրենիքը: Այդ հայրենիքում ապրում ու ստեղծագործում է մեր ժողովուրդը, նոյն ժողովրդի թոռներն ու թոռնորդիները, որոնք կերտեցին հայոց փառապանծ պատմութիւնը Մայիս 28ը, Սարդարապատն ու Ղարաքիլիսան: Պատմութիւնը, ժամանակն ու պայմանները ստեղծում են իր հերոսներն ու ղեկավարութիւնը: Մեր նորանկախ հայրենիքը չի կարող բացառութիւն կազմել պատմական այդ օրէնքից: Ի՞նչ էք կարող ասել այդ մասին:

Պ.-Մենք երբ որ մեծցանք, հերոսներու պաշտամունքով մեծցանք: Մայիս 28ի սերունդը մեր հիացումի առարկայ էր, եւ տարբեր խանդաղատանքով կը վերաբերէինք անոնց հանդէպ, որոնք այդ ժամանակ, անկախ հայրենիքը կերտեցին: Բարեբախտաբար ժամանակներ եկան, որ մենք ունեցանք Ղարաբաղեան շարժումը եւ Ղարաբաղեան հերոսները: Ճիշդ է, ժամանակի հեռաւորութիւնը աւելի պէտք է պայծառացնէ այդ օրերու հերոսներու դիմագիծը, բայց բարեբախտաբար, այնպիսի ժամանակներու մէջ կ'ապրինք, որ 60-70 տարի յետոյ եկողները պիտի ըսեն երանի 88ի սերունդին եւ երանի անոնց որոնք Հայաստանի երկրորդ անկախութիւնը տեսան: Կը հաւատամ մեր ժողովուրդի կամքին, ներքին ուժին եւ կարողականութեան, որոնք հայրենիքի հերոսներ կը ծնին: Եւ ըսեմ նաեւ որ մենք երբէք եւ երբէք պիտի չկասկածինք մեր ժողովուրդի կարողութեան վրայ, որովհետեւ ժամանակներն են որ կը բերեն հերոսները: Ես կը յիշեմ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսին, որ Սարդարապատի մէջ պայքարող հոգեւորական եղած էր, իր քարոզներէն մէկուն մէջ ըսած էր, որ «Իսրայէլի տառապանքից եւ ստրկութիւնից ծնուեց Մովսէս մեծ մարգարէն»: Մովսէս պատահաբար չծնաւ:

1918 սերունդն ալ իր ժամանակի ոգին էր եւ, Աստուած մի արասցէ, եթէ նոր կացութիւններ ստեղծուին, դարձեալ ծնունդ կ' առնեն մեր ժողովուրդի հերոսները:

Հ.-Ի՞նչ էք կարող ասել «Զօրավար Սեպուհ»ի գրքի մասին:

Պ.-Ուրախ եմ յայտնելու որ Զօրավար Սեպուհի զաւակին՝ Մուրատի մեկենասութեամբ, մէկ երկու ամիսէն, Երեւանի մէջ լոյս պիտի տեսնէ «Զօրավար Սեպուհ» աշխատութիւնը, որ շուրջ 500 էջանոց հատոր մըն է, բազմաթիւ գլուխներու տակ կը ներկայացուի Սեպուհը՝ իր կենսագրութեամբ, թէ ինչպէս Հնչակեան դարձաւ, յետոյ Դաշնակցական դարձաւ եւ ինչպէս գնաց երկիր, Դաշնակցութեան ընդհանուր ժողովներու մասնակցելէն մինչեւ անկախ Հայաստանի մէջ կարեւոր դեր ստանձնելը: Պէտք է յիշել նաեւ որ Սեպուհը մեծ դեր կատարեց Մայիսեան յեղափոխութեան ճնշման մէջ: Զենք գիտեր թէ պատմութիւնը ինչ կը բերէր եթէ այն ժամանակ Հայաստանը համայնավար դառնար. հիմա դիւրին է բազկաթոռին մէջ նստիլ եւ ըսել եթէ յեղափոխութիւնը չճնշուէր, Զանգեզուրը այսպէս կ'ըլլար, Ղարաբաղը այնպէս կ'ըլլար, չենք կրնար ըսել, քաղաքական կացութիւնները իրենց ուրոյն զարգացումները ունին եւ դիւրին է, աթոռի մէջ նստած վերքաղ ընել պատմութիւնը եւ ըսել այսպէս այնպէս:

Այդ օրերուն անկախ պետականութիւնը պահպանելու, Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը յարգել տալու ճիգին մէջ Սեպուհ մեծ դեր կատարեց:

Նաեւ երբ որ եկաւ Ամերիկա ձեռնածալ չմնաց, նուիրումով, հաւատարմութեամբ շարունակեց իր ազգային աշխատանքը այս դաժան երկրին մէջ:

Նորէն շնորհակալութիւն կը յայտնեմ այս հարցազրոյցին համար:

Բարեւներս «Հայրենիք»ի խմբագրութեան եւ անձնակազմին:

«Հայրենիք», Ուրբաթ, Դեկտեմբեր 19, 2003

Մահ, յուղարկաւորութիւն եւ թաղում Մեսրոպ Արք. Աշճեանի

Հանգիստ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ կիլիկեան Ս. Աթոռոյս Միաբանութիւնը խոր վիշտով կը գուժեն իրենց սիրեցեալ միաբանին Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի (1941-2003) անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Դեկտեմբեր, Նիւ Եորքի մէջ:

Հոգելոյս Սրբազանին վերջին օծման արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2003-ին, Նիւ Եորքի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ: Ապա Սրբազանին մարմինը պիտի փոխադրուի Անթիլիաս: Թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 8 Դեկտեմբերին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ապա Սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Կիլիկեան Ուխտի Միաբանութեան Դամբարանին մէջ, Անթիլիասի Մայրավանքէն ներս:

Դիւան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ

Վախճանուել է Գերաշնորհ Տէր Մեսրոպ Արք. Աշճեանը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից խոր ցաւով տեղեկացնում ենք, որ դեկտեմբերի 2-ին, երեկոյեան ժամը 8-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներում անակնկալ, սրտի կաթուածից վախճանուել է Գերաշնորհ Տէր Մեսրոպ Արք. Աշճեանը:

Հանգուցեալ սրբազանը, լինելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան, վերջին տարիներին բնակութիւն էր հաստատել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ իր ծառայութիւնն էր բերում Ամենայն Հայոց կաթողիկոսութեանը եւ հայրենիքին:

Մայր Աթոռում մշտապէս բարձր է գնահատուել Սրբազան հօր հոգեւոր, մշակութային, հասարակական գործունէութիւնը, Հայաստանում Քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութիւնների կազմակերպման գործում նրա մեծագոյն աւանդը, ինչպէս նաեւ հայագիտական եւ գրական բազմավաստակ ծառայութիւնը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ յանուն Ամենայն Հայոց Հայրապետութեան հոգեւոր դասի եւ պաշտօնէութեան, ցաւակցութիւններ է յայտնել Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին:

Սրբազան Հօր յուղարկաւորութիւնը իր կամքի համաձայն, կատարուելու է Անթիլիասում:

Դեկտեմբերի 7-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, յաւարտ Սբ. Պատարագի կը կատարուի հոգեհանգստեան արարողութիւն Սրբազան Հօր հոգու հանգստութեան համար:

Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատուական համակարգ
Հայաստանի Հանրապետութիւն, 4 Դեկտեմբեր 2003թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ

«5» Դեկտեմբերի 2003թ. Հ.2470-109

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Ն.Ս.Օ.Տ.Տ.
ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Վեհափառ տէր

Հայաստանի մտաւորականութիւնը եւ ողջ հասարակայնութիւնը սրտի խոր կսկիծով իր ցաւակցութիւնն է յայտնում նշանաւոր եկեղեցական, հասարակական գործիչ, գիտնական եւ մեծ բարերար Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի անժամանակ մահուան կապակցութեամբ:

Նկատի առնելով հանգուցեալ Մեսրոպ սրբազանի մեծ աւանդը Հայաստանում գիտագրական, մշակութային, հոգեւոր-եկեղեցական կեանքում եւ հայ մտաւորականութեան ու լայն հասարակայնութեան փափագը՝ խնդրում ենք Ձեր համաձայնութիւնը՝ նրա աճիւնը Անթիլիաս տանելուց առաջ Հայաստան բերելու եւ ժողովրդին Մուղնու Ս. Գէորգ եկեղեցում հրաժեշտի հնարաւորութիւն ընձեռելու համար: Նման ցանկութեամբ հանդէս են եկել գիտական, մշակութային գործիչներ, ստեղծագործական բազմաթիւ միութիւններ ու ընկերութիւններ, պետական այրեր:

Յոյսով եւ հաւատով սպասում ենք Ձեր վճռին:

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան
ինստիտուտի տնօրէն,
պատմական գիտութիւնների դոկտոր *Ա. Քալանթարեան*

ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի տնօրէն,
պատմական գիտութիւնների դոկտոր *Ա. Մելքոնեան*

Կաթողիկոսարան Մեծի Տանն Կիլիկիոյ
Անթիլիաս-Լիբանան
Անթիլիաս, 5 Դեկտեմբեր, 2003

Մեծայարգ Տեառք

Ա. Քալանթարեան եւ
Ա. Մելքոնեան
Գիտութիւններու Ազգային Ակադեմիա
Երեւան

Յարգելի՛ Տեառք,

Այս առաւօտ Վեհափառ Հայրապետը ստացաւ Ձեր ցաւակցական գիրը, որուն համար կը յայտնէ իր շնորհակալութիւնն ու գնահատանքը՝ Ձեր արտայայտած սիրոյն ու յարգանքին՝ հոգելոյս Մեսրոպ Արք. Աշճեանի նկատմամբ:

Ինչ կը վերաբերի Սրբազանին աճիւնները Հայաստան բերելու Ձեր փափաքին, ցաւօք կ՚ուզենք յայտնել, որ Վեհափառ Հայրապետը անձամբ զբաղեցաւ այս հարցով: Սակայն նման ծրագիր մը կարելի չէ իրագործել նկատի ունենալով ներկայ աշխարհէն ներս տիրող ապահովական ընդհանուր կացութիւնն ու անոր պատճառով օդանաւային փոխադրութիւններուն վրայ դրուած խիստ ու բազմակողմանի քննութիւնները, ինչպէս նաեւ ժամանակի անբաւարարութիւնը: Յայտնենք, որ այժմ նոյնիսկ Ամերիկայէն Լիբանան փոխադրութեան գծով լուրջ դժուարութիւններու դիմաց կը գտնուինք:

Լաւագոյն մաղթանքներով,

Խաչիկ Տէտէեան

Դիւանապետ

Ցաւակցական այցելութիւն Արամ Ա. Կաթողիկոսին

Երէկ երեկոյեան Համազգայինի կեդրոնական վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարան: Պատուիրակութիւնը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսին յայտնեց իր ցաւակցութիւնները Յունաստանի Առաջնորդ Սահակ Արք. Այվազեանի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի նախկին Առաջնորդ, մշակութային եւ հասարակական գործիչ Մեսրոպ Արք. Աշճեանի անակնկալ վախճանումներուն առիթով: Կեդրոնական վարչութիւնը խնդրեց վեհափառ հայրապետէն, որ ցաւակցութիւնները փոխանցէ նաեւ միաբանութեան անդամներուն:

Ցաւակցագիր

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը համայն Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին անունով խորագոյն ցաւակցութիւններ կը յայտնէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան, Հ.Մ.Ը.Մ.ի տարիներու բարեկամներ եւ սերտ գործակիցներ՝ Գերաշնորհ Տ.Տ. Սահակ Արք. Այվազեանի եւ Գերաշնորհ Մեսրոպ Արք. Աշճեանի վաղահաս վախճանումներուն առիթով:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Լիբանանահայ գաղութը արժանավայել շուքով վերջին հրաժեշտ տուին բազմավաստակ հոգեւորական Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի

Անթիլիասի մէջ երէկ կատարուեցաւ Թաղման կարգը Մեծի Տանն Կիլիկիոյ երէց միաբաններէն, Սպահանի թեմի եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի նախկին Առաջնորդ Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի:

Հոգելոյս Սրբազան հօր վերջին օծման կարգը տեղի ունեցած էր Կիրակի, 7 Դեկտեմբերին Նիւ Եորքի մէջ, ուր անակնկալօրէն վախճանած էր ան սրտի կաթուածի մը հետեւանքով: Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած արարողութեան նախագահեց Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Օշական Արք. Զոլոյեան, մասնակցութեամբ Էջմիածնական թեմի առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամեանի, ինչպէս նաեւ Քանատայի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի, թեմի հոգեւորականաց դասուն եւ հոծ թիւով հաւատացեալներուն:

Յաջորդ օր, Օշական Սրբազան ուղեկցեցաւ Հոգելոյս սրբազան հօր դագաղին, զայն փոխադրելով Անթիլիաս, իր հոգեւոր տունը, ուր կը վերադառնար վերջին անգամ, մնայուն բնակիչը դառնալու անոր:

Անթիլիասի Մայր տաճարին մէջ Թաղման կարգին հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոս, Կիլիկեան Ս. Աթոռին մեծ սուգը բաժնելով միաբան հայրերուն, քոյր յարանուանութեանց պետերու ներկայացուցիչներուն, հոգելոյս Սրբազան հօր հարազատներուն եւ ներկայ սգաւոր հոծ բազմութեան:

Այս տխուր առիթով իր վշտակցութիւնը յայտնած էր նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը, որուն ցաւակցական գիրը ընթերցուեցաւ իր ներկայացուցչին՝ Ղարաբաղի առաջնորդ գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Ցաւակցական գիրին մէջ կ՚ըսուի.

«Մեսրոպ Սրբազանին առիթ ենք ունեցել մօտիկից ճանաչելու, երբ վերջին տարիներին բնակութիւն էր հաստատել Ս. Էջմիածնում աջակից լինելով Երջանկայիշատակ Գարեգին Ա. հայրապետին եւ ապա նաեւ մեզ:
Սրբազանը իրեն յատուկ ազնիւ նուիրումով ու եռանդով աշխուժ գործունէութիւն էր ծաւալել Մայր Հայրենիքում: Արդիւնաւէտ եղաւ նրա ծառայութիւնը 1700ամեակի տօնակատարութիւնների կազմակերպման գրասենեակի տնօրէնի պաշտօնում: Հոգելոյս Սրբազանի ջանքերով ամբողջապէս վերանորոգուեց եւ բարեզարդուեց Մուղնիի հնագոյն Ս. Գէորգ եկեղեցին, նրա նախաձեռնութեամբ եւ հեղինակութեամբ հրատարակուեցին բազմաթիւ գրքեր ու աշխատութիւններ, կազմակերպուեցին գիտաժողովներ, ուխտագնացութիւններ, իրականացուեցին

հոգեւոր կեանքի զօրացմանը կոչուած տարբեր միջոցառումներ եւ բարեգործական ծրագրեր, որոնք Մեսրոպ Սրբազանի անունը ծանօթ ու սիրելի դարձրին հայրենաբնակ հաւատացեալ մեր զաւակներին: Նա առանձնակի խնամք եւ յատուկ վերաբերմունք էր տածում ծնողազուրկ երեխաների նկատմամբ եւ Թերեւս նախախնամաբար լուսահոգի սրբազանի վերջին ձեռնարկներից մէկը եղաւ «Թռչունեան» մանկատան հիմնումը երկրաշարժից աղէտեալ Գիւմրի քաղաքում: Արդարեւ, իր կեանքի ողջ ընթացքին հանգուցեալ սրբազանը հաւատարմօրէն ծառայեց Քրիստոսասէր մեր ժողովրդին, եւ նրա մահուամբ մեր եկեղեցին կորցրեց իր նուիրեալ ու քաջակորով սպասարկողներից մէկին»:

Իր դամբանականին մէջ, Արամ Ա. վեհափառ հայրապետը անդրադարձաւ զոյգ կորուստներուն Սահակ ու Մեսրոպ սրբազաններու անժամանակ հեռացման, որոնք պարտականութեան ճամբուն վրայ ինկան: Վեհափառ հայրապետը շեշտեց կիլիկեան Ս. Աթոռին ճամբով սրբազաններու ստացած ծառայութեան ոգին: Ապա անդրադառնալով Մեսրոպ Սրբազանի բազմաճիւղ առաքելութեան, կարեւորութեամբ շեշտեց անոր նուիրումի բարձրագոյն աստիճանի գիտակցութիւնը: Վեհափառ հայրապետը ըսաւ.

«Սուգի մէջ է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութիւնը, սուգի մէջ ենք բոլորս այս դառն ու ցաւալի իրականութեան դիմաց: Ահա մեր Ս. Աթոռին միաբանութեան պատկանող երկու սրբազաններ, Սահակ Արք. Այվազեան եւ Մեսրոպ Արք. Աշճեան կը հեռանան մեզմէ: Մի քանի օրեր առաջ Աթէնքի մէջ իր մահկանացուն կնքեց Սահակ Սրբազանը: Եւ տակաւին զինք հողին չյանձնած, Նիւ Եորքի մէջ դարձեալ անակնկալ կերպով վախճանեցաւ Մեսրոպ Սրբազանը: Երկու սրբազաններն ալ ինկան իրենց հոգեւոր առաքելութեան ճամբուն վրայ:

Մեր Ս. Աթոռին ու միաբանութեան կեանքի սա տխուր օրերուն, մեզի հետ աղօթակից ու վշտակից դարձան մեր եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու գահակալները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, որ նախ հեռաձայնային հաղորդակցութեամբ յայտնեց իր վշտակցութիւնը, եւ ահա ցաւակցական յատուկ գիրով, այսօր իր ներկայացուցիչը առաքած է, յանձինն Ղարաբաղի առաջնորդ գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանին, մասնակցելու սրբազանի թաղման արարողութեան: Մեր սէրն ու շնորհակալութիւնը կը յայտնենք մեր հոգեւոր եղբօր:

Մեր խոր շնորհակալութիւնը կը յայտնենք Երուսաղէմի Հայոց պատրիարք ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանին, որոնք իրենց ցաւակցական գիրերով դարձեալ վշտակից դարձան մեզի:

Կ՝աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ Հայ եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու գահակալներուն պարգեւէ քաջառողջ ու երկար կեանք, որպէսզի անոնք կարենան աւելի արդիւնաւորութեամբ կատարել իրենց ծառայութիւնը Աստուծոյ, մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին:

Յատուկ շնորհակալութիւն Հայաստանի ու Յունաստանի պետական պատասխանատուներուն, իրենց առաքած մխիթարական գիրերուն համար: Թող Աստուած իրենց պարգեւէ հայրենանուէր ծառայութիւններով լեցուն երկար կեանք:

Մեր ցաւը բաժնեցին նաեւ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներու հոգեւոր պետերը, մեր եկեղեցւոյ թեմական առաջնորդները, թեմերու ազգային իշխանութիւնները եւ ազգայինները: Բոլորին կը յայտնենք մեր գնահատանքը եւ շնորհակալութիւնը:

***

Հոգելոյս Մեսրոպ Սրբազան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ճամբով, Քրիստոսի Աւետարանի նուիրեալ քարոզիչը դարձաւ: Ան կազմաւորուեցաւ Անթիլիասի Դպրեվանքին մէջ: Հոն լեցուեցաւ ու հարստացաւ Աւետարանի ճշմարտութիւններով, թրծուեցաւ մեր եկեղեցւոյ հայրերու հաւատքով ու շունչով, ներշնչուեցաւ Գարեգին Ա., Զարեհ Ա., Խորէն Ա. եւ Գարեգին Բ. երջանկայիշատակ կաթողիկոսներու պատգամներով, ու գնաց մեր ժողովուրդին, հոն սերմանելու Աւետարանի հունտերը, իր կեանքով ու գործով դառնալու Քրիստոսի Աւետարանին զօրեղ պաշտպանը ու տարածիչը:

Մեսրոպ Սրբազան դարձաւ մեր ազգին հաւատաւոր ծառան: Այս Ս. Աթոռէն ան միայն ուսում ու վկայական չստացաւ. այլ անոնցմէ առաջ եւ վեր, ան ազգին ծառայելու ոգին առաւ: Ան, ինչպէս ոեւէ Անթիլիասական միաբան, ազգին ընդհանրական մտահոգութիւններուն ու գերագոյն շահերուն հետ նոյնանալու, անոնց ի խնդիր տագնապելու ու պայքարելու հաւատքը ու վճռակամութիւնը առաւ այս Մայրավանքէն: Եւ ա՝յս յանձնառութեամբ ան մեր ժողովուրդին ծառայեց աւելի քան քառասուն տարիներ:

Մեսրոպ Սրբազան իր հաւատքի առաքելութենէն անբաժան նկատեց հայ մշակոյթը: Ան նուիրուեցաւ մեր հոգեմտաւոր արժէքներուն, հայ մշակոյթի, գիրի ու դպրութեան առաւել ծաղկման ու ճառագայթման: Հանգուցեալ Սրբազանը կարեւոր նպաստ բերաւ մեր բանասիրութեան:

Անթիլիասի մէջ ազգային երգներով ու տագնապներով թրծուած Մեսրոպ Սրբազան, իր գործօն մասնակցութիւնը բերաւ մեր ազգային պահանջատիրութեան հաւաքական աշխատանքներուն: Նախ որպէս միաբան Անթիլիասի մէջ, եւ ապա, որպէս առաջնորդ Պարսկաստանի, Միացեալ Նահանգներու եւ Քանատայի մէջ, ան

ռահվիրան դարձաւ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու ձեռքբերման պայքարին՝ իր գրութիւններով ու պատգամներով յիշեցնելով իր շրջապատին Հայկական Ցեղասպանութիւնը եւ մեր ժողովուրդի անիրաւուած իրաւունքները:

Ազատ ու անկախ Հայաստանի երազը իր կեանքին ու առաքելութեան հետ շաղախած, Մեսրոպ Սրբազան նաեւ իր նուիրեալ մասնակցութիւնը բերաւ հայրենակերտումի վեհ գործին: Ան մանաւանդ վերջին աւելի քան տասը տարիներուն Հայաստանի մէջ իր բազմաճիւղ գործունէութեամբ, մեծապէս նպաստեց հայրենիքի հզօրացման: Նուիրումով ծառայեց, եղաւ կարիքաւորներուն հետ, մտաւորականներուն հետ, զինուորներուն հետ: Օգտակար եղաւ բոլորին: Թերեւս Հայաստանի մէջ ծառայող ոեւէ թեմակալ առաջնորդէ մը աւելի ան ծառայեց մեր ժողովուրդին:

Ահաւասիկ Անթիլիասի մէջ կազմաւորուած, սակայն ամբողջ մեր եկեղեցւոյ, մեր ազգին ու մեր հայրենիքին ծառայութեան լծուած սիրելի Մեսրոպ Սրբազանին ծառայական կեանքին ուրուագիծը միայն: Արդարեւ, յանձնառու ծառայութիւնը եղաւ իր կեանքին կեդրոնը: Անանձնական ծառայութիւնը դարձաւ իր կեանքին ճամբան ու նպատակը իր միակ փառքն ու պատիւը»:

Ապա միաբան հայրերու կողմէ հոգելոյս սրբազան հօր դագաղը ուսամբարձ տարուեցաւ Զարեհեան յուշարձան-դամբարան, ուր կատարուեցաւ Թաղման Կարգը, նախագահութեամբ վեհափառ հայրապետին:

Թաղման Կարգէն ետք վեհափառ հայրապետը եւ սրբազան հօր հարազատները վեհարանի դահլիճին մէջ ընդունեցին ցաւակցութիւնները ներկայ սգաւոր բազմութեան: Ապա, մայրավանքի սեղանատան մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ, որուն ներկայ գտնուեցան միաբան հայրերը եւ լուսահոգի սրբազան հօր հարազատները:

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Գ. Գեոզալեանին

Յարգելի պարոն մարզպետ.

Նկատի ունենալով հոգելոյս Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի ծանրակշիռ աւանդը Հայաստանում գիտագրական, կրթամշակութային հոգեւոր-եկեղեցական

կեանքում՝ խնդրում ենք Ձեր համաձայնութիւնը սրբազանի հոգողութեամբ վերանորոգուած Արագածոտնի մարզի Մուղնի գիւղի միջնակարգ դպրոցը նրա անունով անուանակոչելու համար:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս *Վ. Բարխուդարեան*

ՀՀ ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտի
տնօրէն. բ. գ. դ. *Ա. Եղիազարեան*

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտի
տնօրէն, պ.գ.դ. *Ն. Յովհաննիսեան*

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան
ինստիտուտի տնօրէն, պ.գ.դ. *Ա.Քալանթարեան*

ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի
տնօրէն պ. գ դ. *Ա. Մելքոնեան*

ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար
պարոն Սերգօ Երիցեանին

Յարգելի պարոն նախարար.

Նկատի ունենալով հոգելոյս Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի ծանրակշիռ աւանդը Հայաստանում գիտագրական, կրթամշակութային հոգեւոր-եկեղեցական կեանքում՝ խնդրում ենք Ձեր համաձայնութիւնը սրբազանի հոգողութեամբ վերանորոգուած Արագածոտնի մարզի Մուղնի գիւղի միջնակարգ դպրոցը նրա անունով անուանակոչելու համար:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վ. Բարխուդարեան

ՀՀ ԳԱԱ Գրականութեան Ինստիտուտի
տնօրէն. բ. գ. դ. Ա. Եղիազարեան

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտի
տնօրէն, պ.գ.դ. Ն. Յովհաննիսեան

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան
Ինստիտուտի տնօրէն, պ.գ.դ. Ա.Քալանթարեան

ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի
տնօրէն պ. գ դ. Ա. Մելքոնեան

Հայաստանի Հանրապետութեան Արագածոտնի Մարզպետի

ՈՐՈՇՈՒՄ

2005թ. Յունուարի 11-ի թիւ 1
ք. Աշտարակ

Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Մուղնի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշումները՝ ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան նախարարի 27.12.2004թ. թիւ 21-05-07/392 գրութեամբ տրուած համաձայնութիւնը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մուղնիի միջնակարգ դպրոցը անուանակոչել Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի անունով:
2. Սոյն որոշման կատարման հսկողութիւնը դնել Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթութեան, մշակոյթի եւ սպորտի վարչութեան պետ Ս. Ղուկասեանի վրայ:

Գ. Գէոզալեան

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԻԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Արձ. 7/4
26.12.03

ՄՈՒՂՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ԽՃՈՒՂԻՆ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՎԵՐԱՆՈՒԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մուղնի թաղամասի ազգաբնակչութեան խնդրանքը, ղեկավարուելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրէնքի 16/21 յօդուածի պահանջներով, համայնքի աւագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մուղնի թաղամասով անցնող «Ազատութեան» խճուղին վերանուանել Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի անունով՝

«Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի» փողոց:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ՂԱԼԱՋԵԱՆ

ԱԻԱԳԱՆԻ՝

ԱԻԻԿ ԱԶԻԶԵԱՆ-կողմ
ԱՇՈՏ ՅՈՒՆԱՆԵԱՆ-կողմ
ԱՐԱՄ ՔԱՄԱԼԵԱՆ-կողմ
ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ-կողմ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉԵԱՆ-կողմ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏԵԱՆ-կողմ
ԳԱԳԻԿ ՉԱՉԵԱՆ-կողմ
ԿԱՐՕ ԳԱՍՊԱՐԵԱՆ-կողմ

Վերյուշի Ու Ցիշատակի Երկու Օր

Ճշմարիտ հայրենասիրութիւն ասել է թէ, ամենօրեայ եւ անդադրում հոգածութիւն ընդհանուր բարօրութեան մասին եւ համապարփակ նուիրում: Ապրելու այս բանաձեւն էր որդեգրել Գերաշնորհ Տէր Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը: Թերեւս չկայ առաւել ազնիւ հիւանդութիւն, քան կարօտն առ հայրենիք: Հենց այդ կարօտն էր, որ 90-ականներին Հայաստան բերեց բացառիկ այդ հային, որն, իր իսկ խոստովանութեամբ. «իր ազգէն ու եկեղեցիէն զատ ուրիշ սէր չունեցաւ»:

Այդպիսին էր նա:

Դժուար է Մեսրոպ Արք. Աշճեանի մասին խօսել անցեալ ժամանակով: Առանց նրա անցնող ամեն օրն առաւել խորութեամբ է տեսանելի դարձնում այդ վիհը, որ նրա մահով գոյացաւ մեր հոգեւոր-մշակութային կեանքում: Բայց որտեղ վերջն է, այնտեղ էլ սկիզբն է, եւ այդ սկիզբը վերջ չի ունենալու, քանզի բոլորիս հետ է մշտապէս Մեսրոպ Արք. Աշճեանը ու բոլորիս մէջ: Բանաստեղծ Յովիկ Հովէեանի պատկերաւոր բնորոշմամբ, «հաւանաբար ճաք է տուել Աղթամարի մեր Սուրբ Խաչ եկեղեցու երեւութական զանգը, բայց այդ ճաքից անվերջանալիօրէն հոսելու է հոգեւոր հօր մեղրածոր յիշատակը...»:

Յունուարի 21-ին Կոմիտասի Անուան Կամերային Երաժշտութեան Տանը Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Հայաստանի Գրասենեակի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր յուշ-երեկոյ նուիրուած Մեսրոպ Արք. Աշճեանին: Հրաւիրեալները՝ հարազատներ, մտերիմներ ու բարեկամներ, մտաւորականներ, ասես սպասում էին նրան, որ հերթական

ուխտագնացութիւնը կատարեն դէպի Արեւմտեան Հայաստան՝ իր յիշատակների «էրգիրը», եւ այս զգացողութիւնն էր հաստատում Հրաչեայ Մաթեւոսեանի խօսքը. «Մեսրոպ Արք. Աշճեանը ոչ միայն մեծ ուխտաւոր էր ամբողջ էութեամբ, այլ ինքը տեղով ուխտ էր: Նա մեր էն կարօտն էր՝ մամռկալած կարօտը: Ու ինչպէս աշնան տերեւներով լցուած աղբիւրի բերանն են բացում, էնպէս էլ նա կարողացաւ մեր մամռակալած կարօտի աղբիւրի բերանը բացել, ինքը դարձաւ ոչ միայն ճամփորդ, այլեւ ճանապարհ ու այդ ճանապարհի խորհուրդը»:

Ընդամէնը երկու տարի առաջ այս օրերին նոյն համերգասրահում նշւում էր Սրբազանի 60-ամեակը. հրաշալի մի առիթ՝ երախտագիտութեան եւ սիրոյ համեստ դրսեւորումն ուղղելու ազգային նուիրեալ գործչին, որն աւելի լուսաւոր էր դարձնում մեր կեանքը, ճանաչել տալիս մեզ ու մեր ակունքները, ձգտում սիրոյ եւ ներդաշնակութեան աշխարհակարգ սահմանել: Թերեւս, յուշ երեկոյի խորհուրդն ու պատգամն էր բորբոքելու այն կրակը, որ վառել էր մեր սրտերում Մեսրոպ Սրբազանը, յաւերժ կանգուն պահելու հոգեւոր տունը մեր հոգիներում, նորոգելու այն լոյսը, որով ուղեկցում էր նա իւրաքանչիւրիս, իսկ այդ լոյսի դէմ անզօր են թէ՛ ժամանակը, թէ՛ տարածութիւնը:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարեանի, ԳՄ նախագահ Լեւոն Անանեանի, Սօս Սարգսեանի ելոյթներում հառնում էր Մեսրոպ Արք. Աշճեանի՝ մեծ հոգեւորականի ու մտաւորականի, հասարակական գործչի ու բարերարի, հայրենասէրի եւ ազնուագոյն մարդու կերպարը: Նրա բազմաշերտ գործունէութեան էջերն էին թերթում հռետորները՝ սկսած գիտահրատարակչական նախաձեռնութիւններից մինչեւ 1993-ին «Մեծն Ներսէս» բարեգործական հիմնադրամի ստեղծումը: Նրա հոգածութեամբ լոյս է տեսել շուրջ 220 գիրք, որոնց պսակն է կազմել վերջին շքեղ, ծաւալուն, բազմալեզու ժողովածուն՝ «Ս. Էջմիածին. Ուղեգրութիւններ», որի ազդանմուշները բարեբախտաբար հասցրեց տեսնել: Նրա ջանքերով հիմնովին վերանորոգուեց Մուղնու Ս. Գէորգ Վանքը (Ի դէպ Աշտարակի քաղաքապետարանի որոշմամբ, վանքին յարող փողոցն անուանակոչուել է Մեսրոպ Արք. Աշճեանի անունով): 2001-ին հիմնեց «Մուղնի» հրատարակչութիւնը: Գիտահրատարակչական գործունէութեան մէջ յայտնի է «Մուտք» մատենաշարին նրա հովանաւորութիւնը. 13 հատոր երիտասարդ հայ հեղինակների երախայրիքները: Յաւօք բազում ծրագրեր եւ մտայղացումներ մնացին անկատար: Նրանցից մէկը «Գրքի հայ ակումբ»ի ստեղծումն էր, որի մասին նա հրապարակաւ յայտարարել էր անցեալ տարի՝ աշնանը Շառլ Ազնաւուրի հրապարակում գրքի միջազգային ցուցահանդէսին: Ուզում էր կազմակերպել նաեւ ասմունքի հանրապետական փառատօն, բազում այլ ծրագրեր ունէր, աւա՜ղ...

Պատահական չէ, որ հոգեւոր դէմքերից առաջինն էր, որին Ազգային Ակադեմիան շնորհեց պատուաւոր դոկտորի կոչում: Ասում են, թէ 24 ժամում 48 ժամուայ գործ էր անում, գուցէ թէ սիրտը չդիմացաւ այդքան հոգսերին ու ազգի ցաւերին, եւ մոմի նման հալուեց՝ ազգին ծառայելով, ասուպի պէս եկաւ, փայլատակեց հայոց երկնակամարում մի կարճ ժամանակ եւ հեռացաւ:

Ի թիւս բազմաբնոյթ ելոյթների, սրտառուչ էր նաեւ նախկին բանտարկեալ, այժմ լրագրավաճառ Կարեն Սաֆարեանի հակիրճ խօսքը, որին օգնութեան ձեռք էր մեկնել Սրբազանը՝ կեանքի յատակից բարձրացնելու համար:

Ելոյթները սահուն ընդմիջւում էին Յարութիւն Թօփիկեանի գլխաւորած կամերային երգչախմբի, երգեհոնահար Վահագն Ստամբոլցեանի, երգիչներ Սեյրան Աւագեանի, Թովմաս Պողոսեանի, դաշնակահարուհի Լուսինէ Գրիգորեանի, երգչուհի Աննա Մայիլեանի, Հայաստանի Պետական Կամերային Նուագախմբի կատարումներով:

Լուսապաստառին Մեսրոպ Արք. Աշճեանն է իր կենդանի խօսքով, հատուածներ «Աղաղակող քարերի երկիրը» տեսաֆիլմից:

Յուշ երեկոն շարունակուեց յաջորդ օրը, այս անգամ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտում, հաստատութիւն, որի հետ Մեսրոպ Արք. Աշճեանի բարեկամութիւնը տարիների պատմութիւն ունի: «Ինձ համար Մեսրոպ Սրբազանի կորուստը կարծես նոյնանում է Արեւմտեան Հայաստանի, կորուսեալ հայրենիքի գաղափարի հետ». յիշատակի հանդէսի բացման խօսքում նշեց ինստիտուտի տնօրէն Աշոտ Մելքոնեանը: Յիշատակի հանդէսի առիթը Մեսրոպ Արք. Աշճեանիւ անունը կրող գրադարան-թանգարանի բացումն էր: Ի դէպ, մէկ տարի առաջ, երբ նշւում էր Պատմութեան ինստիտուտի 60-ամեակը, Սրբազանի աջակցութեամբ ստեղծուել էր նաեւ գիտական կենտրոն: Անակնկալներից մէկն այն էր, որ յիշեալ կենտրոնի բացման կարմիր ժապաւէնից մի կտոր գրադարանի բանալիով լիիրաւ տիրոջ իրաւունքով յանձնուեց Սրբազանի քրոջորդուն՝ Հրայրին, իբրեւ ժառանգորդի (Մեսրոպ Սրբազանի աւագանի անունն է):

Պատմութեան ինստիտուտում գործում է Սրբազանի գրասենեակը, ուր նա տեղափոխել էր իր նամբողջ գրադարանը՝ աւելի քան 2000 կտոր գիրք: Մեսրոպ Արք. Աշճեանին պատկանող, աշխարհի տարբեր անկիւններում գտնուող բազմաթիւ գրքեր նոյնպէս կը տեղափոխուեն այստեղ՝ համալրելու այդ գանձարանը, որի «սուրբ մասունքներից» կարող են օգտուել տարբեր մարդիկ:

Սահականուշ Սահակեան

«Եթեր», 29 Յունուար 2004

Յուշ երեկոյ՝ Մեսրոպ Արք© Աշճեանի յիշատակին

Նիւ Եորքի St. Peter's եկեղեցին ենք: Մեսրոպ Արք© Աշճեանի մեծցուած ու տպաւորիչ նկարը խորանին առջեւ է, ամպիոնի աջին, պայծառ լոյս մը վրան: Մօտը՝վառած հսկայ մոմ մը: Նկարին վերի ձախ անկիւնը շեղակի, լայն ու սեւ շապաւէն մը: Կարծես ուխտատեղի ենք մտած: Սրբազանը այնքան իրական կը թուի: Փիլոնը հագին, գորովանքով սոպիտակ գառնուկը գրկած, որուն կը նայի իր իւրայատուկ քաղցր շպիտով: Ամպիոնի ձախին սիւներու կողքին գողտրիկ անկիւն մը՝Սրբազան հօր հրատարակած գիրքերն են դրուած, մեզ յարատեւ յիշեցնելու իր անսպառ սէրը հայ գիրքին հանդէպ: Խորհրդաւոր երկիւղածութիւն մը սրահը կ'ողողէ: Ներկաները լուռ յարգանքով կը սպասեն:

Կակաւին ոչ ոք հաշտուած է պատահածի հետ: Տակաւին կը հաւատանք, որ ասուպի նման տեղ մը ճամբորդած է, տեղ մը գործով հանդիպում ունի, Հայաստան, ԱՄՆ, Արցախ, Ջաւախք եւ որ յանկարծ վերադառնալով Նիւ Եորք պիտի հեռաձայնէ մէկուն կամ միւսին ու համայնքը յանկարծ կեանք պիտի առնէ, քանի մը իրար յաջորդող հանդիպումներ, գրական-մշակութային ձեռնարկներ տեղի պիտի ունենան: Ինք ներկայ պիտի ըլլայ ու պիտի լսենք իր քաջալերող, ներշնչող, յուսատու եւ մեզ յառաջ մղող պատգամները:

Նիւ Եորքի Համազգայինը շատ մօտ եղած ու երկար տարիներ գործակցած է Սրբազան հօր հետ: Յարատեւ նեցուկ եղած էր մեր կազմակերպութեան, յարատեւ քաջալերած ու յորդորած: Իր անսահման սէրը հայ մշակոյթի ու գրականութեան հանդէպ կը դրսեւորուէր իր գուրգուրանքով Համազգայինի հանդէպ: Ներկայ էր մեր ձեռնարկներու մեծ մասին եւ կը փորձէր չմերժել մեր հրաւէրները: Երբ Հայ Կեդրոնը կը վերանորոգուէր եւ շինարարական աշխատանքները անկարելի կը դարձնէին իրագործել մեր ծրագրած ձեռնարկները, Սրբազան Աշճեան «ձեր տունն է» ըսելով՝ լայն բացաւ առաջնորդարանի դռները Համազգայինի առջեւ ուր տեղի ունեցան շարք մը դասախօսութիւններ, գիրքերու շնորհանդէսներ եւ նկարներու ցուցահանդէս- վաճառքներ:

Այս գիշերուայ յուշ երեկոն կազմակերպուած էր Համազգայինի յատուկ յանձնախումբին կողմէ եւ ջանք չէր խնայուած որ Սրբազանին վայել ձեռնարկ մը ըլլար: Վայրի ընտրութիւնը հրաշալի էր, եկեղեցին յատուկ տրամադրութիւն ու խորհրդաւորութիւն մը ստեղծած էր, այնքան յարմար՝ մեր անկրկնելի հոգեւորականին յարգելու համար:

ԱՄՆ-ի Կիլիկիոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Օշական Արք© Զօլոյեանի արտասանած «Հոգուոց»էն ետք, Համազգայինի յատուկ յանձնախումբին կողմէ խօսք առաւ ատենապետուհի ընկհ© Արեւիկ Գաբրիէլեան: «Այս երեկոյի յո՛ւշը վերաբերում է լոկ Մեսրոպ Արք© Աշճեան մահկանացուի բացակայութեանը: Նորին սրբազնութեան անձնաւորած հայրենասէրն ու հայրենաշէնը, խնամքոտ բարերարը, մտաւորականն ու ազգագրագէտը, Հայաստատնեայց Եկեղեցւոյ իշխանն ու բարերարը, քրիստէութեան կրողն ու տարածողը եւ ի վերջոյ՝ Հոգեւոր Առաջնորդը մշտապէ՛ս ներկայ է լինելու: Ձենք եկել «ողջերի մէջ մեռեալը փնտռելու», այլ այցելելու Մեսրոպ Սրբազանին, լսելու իր մի՛շտ ուսանելի, մի՛շտ կարեւոր խօսքերը: Ձենք եկել իր երկրային կեանքը թողած հոգեւորականի յիշատակին լոկ յարգանքի տուրք տալու- դրան կը պատշաճէր հոգեհանգստեան պաշտօն՝ եկեղեցում: Եկել ենք իրար յիշեցնելու այդ արտասովոր անձի անչափելի կարեւորութեան մասին: Յիշեցնելու, որ իրաւունք չունենք աչքաթող անել Մեսրոպ Սրբազանի սկսած կարեւոր գործերը, հիմնած ծրագրերը եւ որ մեր յարգանքը, գիտակցուա՛ծ սէրը, որն ինքնին գնահատանք է պարունակում, պէտք է ի սպաս դրուեն դրանց, նո՛յն հաւատարմութեամբ, որի անձնաւորումը եղաւ Սրբազան Հայրը: Այն ամէնը, ինչ յարիր են Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կոչումին, բազմիցս իրականացուել են Մեսրոպ Արք© Աշճեանի մտայղացումների միջոցով, ստէպ՝ միութեանս հետ համագործակցաբար: Յետադարձ հայեացքով յստակ ենք տեսնում այդ ոսկեդարը, երկու տասնամեակից աւելի ազգային ոգու եւ մշակոյթի տիրող ներկայութիւնն ու ճախրը: Եւ միշտ պիտի փնտռենք այդ շքեղ, այդ յորդուն շատրուանը՝ «Ամենայն բարեաց աղբիւրը»»:

Այս խօսքին յաջորդեց տեսաերիզը: Լռութեան մէջ լոյսերը մեղմացան ու ահա դիմացի հսկայ պատին վրայ կը տեսնենք Սրբազան Արք© Աշճեան՝ Արեւմտահայաստանի մէջ: Ձիրաւի դաշտին մէջն է, Արածանին կ՚անցնի, Տրդատի Քարին մօտ է, ապա միւռոնը կը ծորի Արածանիի ջուրերուն մէջ, ուխտաւորներու մկրտութիւն Արածանիի ափին, Բագնայր, պսակ Աղթամարի մէջ, ու հոգեհանգիստ Մշոյ Ս© Առաքելոց Վանքին մէջ: Մագնիսացած ներկաները՝ իր հետ կը տանի դէպի Երկիրն Աւետեաց:

Յայտագրի վարիչ Հրանդ Մարգարեան նշեց որ «Սգակիրներ եւ վշտակիրներ ենք, սակայն այսօր՝ մենք հաւաքաբար յուշակիրներ ենք: Միայն յուշով է որ մենք Սրբազանի հետ պիտի ապրինք, յուշով է որ անոր պատգամն ու խօսքերը պիտի լսենք: Սրբազանը պիտի ապրի այնքան ատեն որ մենք ազգովին կ՚ապրինք ի՛ր յուշով: Այսօր պիտի ժպտինք իր հետ, պիտի ոգեւորուինք իր խօսքերով, պիտի փառաբանենք իր կեանքն ու գործը եւ ծափահարենք իր՝ մեզի թողած ժառանգը: Այսօր՝ ի՛ր պատումով պիտի լսենք ի՛ր մասին: Մեզի կը մնայ հպարտանալ իր գործով, հպարտանալ որպէս անհատներ եւ որպէս հաւաքականութիւն, որ մեր ազգը ունեցած է իրեն նման սքանչելի ու զարմանահրաշ հայ մը»:

Ցուցադրուեցաւ տեսաերիզի երկրորդ մասը: Սրբազանը կը խօսի իր մեղմ ու թաւշոտ ձայնով: Իր ժպտուն դէմքը կը տեսնենք հանդիպակած պատին: Այնքա՛ն մօտ է մեզ, այնքա՛ն իրական: Կը խօսի հաւատքի մասին: «Հաւատքը կեանքիս ձեւն է, տուած է ինծի վստահութիւն, յոյս եւ գործելու անսահման եռանդ» կ՚ըսէ: Կը պատմէ իր մանկութիւնը, իր որբ ծնողներու ընտանեկան բոյն կազմելը, իր պատանեկութիւնը, հոգեւորական դառնալու մտադրութիւնը: Եղած է Անթիլիասի դպրեվանքի տեսուչ, Նոր Ջուղայի առաջնորդ՝ չորս տարի, ապա ընտրուած ԱՄՆ-ի առաջնորդ 1988-ին: Իր իրագործումներէն կը նշէ, Ուաշինկթընի մէջ Եղեռնի 70-ամեակի ոգեկոչումը, ուր 800 վերապրողներ ներկայ եղան եւ ԱՄՆ-ի մէկ ծայրէն միւսը՝ հայը շարժման ենթարկուեցաւ: Կը լսենք իր պատգամը Մայիս 28-ի 70 ամեակի տօնակատարութեան առթիւ: «Այսօրուայ հանրապետութիւնը՝ 1918-ի անկախ Հայաստանի շարունակութիւնն է: 11-րդ դարէն մենք հող կորսնցուցած ենք եւ ահա այսօր գրաւուած հողերը կ՚ազատագրուին»:

Ապա Հ© Մարգարեան ներկայացուց առաջին խօսողը՝ Սարգիս Թըշոյեան Մէսէչուսէցէն: «Շրջանաւարտ՝ իրաւաբանական քոլէճէն, ընտրուած է շրջանի դատական բաժանմունքի դատաւոր 1988-էն ց՚այսօր:

Դատաւոր Թշոյեան խօսեցաւ անգլերէն: «He was a true servant of God, doing God's work, he was a true patriot and a national leader, who led not by words but by deeds and actions, he was an intellectual gifted and curious. He was a teacher who teaches by example. He was dynamic, energetic and demanding. He was unrelenting in persuing goals. He was a traditionalist but also a visionary. He was a bridge between past and present but he was also the road to future. Mesrob Srpazan, was Faith, Hope and Love within the Armenian Church. He made the Armenian Church relevant to those of us in the United States. "Faith, Hope and Love".» Դատաւորը յուզուած էր, ձայնը քանի մը անգամ դողաց ու լռեց: Անդրադարձաւ Սրբազան Հօր կոթողական աշխատանքներուն ԱՄՆ-ի մէջ, որոնց մեծութիւնը

անգամ մը եւս կը շեշտուի ու կը թարմանայ մեր մտքերուն ու հոգիներուն մէջ: Տակաւին ինչե՜ր կատարեց կը մտածեմ, որոնց մասին ժամանակ չկար որ խօսուէր:

Մարգարեան ապա կը ներկայացնէ երաժշտական բաժնին մասնակցողներ՝ Հայաստան ծնած, ներկայիս Նիւ Եորք բնակող Յասմիկ Մէյլխանէջեան, շրջանաւարտ Կոմիտասի անուան երաժշտանոցէն, բազմաթիւ ելոյթներ ունեցած ԱՄՆ-ի Հայ թէ օտար շրջանակներու մէջ: Յասմիկ՝ սքանչելի մեկնաբանութեամբ երգեց «Նոր Ծաղիկ» (Սրբազանի շա՜տ սիրած երգերէն), եւ «Եկեղեցին Հայկական», մայստրօ Խորէն Մէյլխանէջեանի մշակումով: Երգեհոնի վրայ իրեն ընկերակցեցաւ Ժանէթ Մարգարեան, ծնած է Պուլկարիա եւ շրջանաւարտ՝ Նիւ Եորքի Ճուլիարտ երաժշտանոցէն:

Երրորդ տեսաերիզը, Սրբազան Հօր Հայաստանի կեանքն է: Դարձեալ ի՜նքն է որ կը պատմէ, եւ ի՜ր ձայնով զինք լսելը անսովոր ազդեցութիւն մը ունի, պատահածը անիրական կը թուի: Հրաւիրուած էր Հայաստան Գարեգին Ա կաթողիկոսի կողմէ, որպէս 1700-ամեակի Տօնակատարութիւններու Յանձնախումբի Վարիչ-քարտուղար: «Հայաստան ծով կարիք ունի, փոխանակ դժգոհելու մէկ հատ մոմ վառէ» կ՚ըսէ Սրբազանը: Քրիստոնէութեան 1700-ամեակի առթիւ, կը կազմակերպէ ուխտագնացութիւն դէպի Արեւմտահայաստան ուր «երկիր մը կար, ուր սերունդներ ապրած էին եւ հիմա չկայ: Ծնողքս որբեր էին՝ ես տարագիր էի: Կեանքս փոխուեցաւ» կ՚ըսէ: Հայաստան՝ շատեր կը յիշեն, որ Արք© Աշճեանն էր, որ Արեւմտահայաստանը ծանօթացուց իրենց: Կը խօսի հաւաքական մկրտութիւններու մասին, որոնցմէ մէկուն 800 զինուորներ մկրտուած են: Ծրագրած եւ գործադրած է Հայ Գրքի Օր Երեւանի Ազնաւուրի հրապարակին մէջ, հսկայ համերգ՝ Վազգէն Սարգսեան մարգահամալիրի մէջ 17000 աշակերտներու մասնակցութեամբ: Աննախընթաց երեւոյթներ բոլորն ալ: Բարերարներ գտնելով վերանորոգած է շատ մը վանքեր ու եկեղեցիներ: Ասոնցմէ՝ Մուղնիի Ս© Գէորգ եկեղեցին, որու Տէր Հայրը տեսաերիզի վրա կը պատմէ՝ «Մի պահ Արցախ, մի պահ Երեւան գիտական ժողով, մի օր Գիւմրի որբանոց էր բացում, մի տեղ գրում էր, մի տեղ կառուցում, մի տեղ ճամբորդում: Երբ վախճանեցաւ, գիւղի ժողովուրդը հանգանակութիւն արեց եւ պատարագ, հոգեհանգիստ ու հոգեճաշ տրուեց Սրբազանի համար: Սրբազանը մեր գիւղի ժողովրդի սրտերի մէջն է միշտ»: Տեսաերիզով Սրբազան հայրը կը պատմէ չափահաս որբերու մասին, որոնք 18 տարեկանէն ետք տեղ չունին երթալու: Բարերարներու միջոցով, Սրբազանը իրենց տուն ու այգի տուած, կովեր, հաւ ու մեղուի փեթակներ հայթայթած է, որ տուն ու տեղ ըլլան եւ բնականոն կեանք սկսին: Ապա կը պատմէ իր փնտռտուքը՝ գտնելու համար, երեք թերթիկներով, արտակարգ ճերմակ ծաղիկ մը (Iris=Հիրիկ), Թալինի շրջանին մէջ՝ որը եւ կը գտնէ: Զուգահեռ մը գծելով կ՚ըսէ «Հողին ու ծաղիկին

հաւատարմութեան նման՝ Հայ Եկեղեցին ու հայ հողը իրար հաւատարիմ պէտք է մնան»: Այստեղ կ՚անդրադառնամ որ հրաւիրատոմսերուն վրայի Սրբազանի նկարը՝ ձեռքը ճերմակ ծաղիկներ ու գոհունակ ժպիտը դէմքին՝ իր վերջին նկարն էր Հայաստանի մէջ նկարուած:

Յաջորդ խօսողը, Երեւանէն ժամանած էր յատուկ այս առիթով: «Աշոտ Մելքոնեան՝ ներկայի մեր պատմաբաններուն մէջ ինքնուրոյն տեղ կը գրաւէ իր առողջ կեցուածքով ու արդարադատութեամբ,- շեշտեց Հ© Մարգարեան: Ան մեր ազգի արթուն պահակն է եւ ոչ միայն անցեալի պատմական խեղաթիւրումները կը սրբագրէ, այլեւ ներկայի դէպքերու աչալուրջ եւ ուշադիր հետեւողն է: Մելքոնեան անվախ ու քաջարի պատմաբան է: Մեր դատին թշնամական դիրք բռնած գիտնականներուն կը դիմագրաւէ նոյնինքն իրենց մասնագիտութեան մարզերուն մէջ: Ծնած է Գուգարք նահանգ՝ Ջաւախք, սերած է Էրզրումցի տոհմէ: Ուսանած է Երեւանի պետական համալսարանի Պատմութեան բաժանմունքը եւ 2002-էն ի վեր Հայաստանի Ազգային Ակադեմիայի Հայոց Պատմութեան բաժանմունքի տնօրէնն է: Հրատարակած է գրքեր եւ ստացած մրցանակներ, որոնցմէ վերջինը՝ Հայկաշէն Ուզունեան մրցանակ, ստացաւ 2004-ին՝ իր 2002-ին հրատարակած «Ջաւախք XIX դարուն» տոքթորայի թեզին համար:

Աշոտ Մելքոնեան նշեց, որ «Սրբազանը խոր հետք թողեց Հայաստանեան մտաւորականութեան վրայ: Ճարտարապետութեան, փիլիսոփայութեան, գրականութեան, հնագիտութեան, պատմութեան բնագաւառների մասնագէտները գերուած էին Մեսրոպ Սրբազանով»: Թուեց Հայաստանի մէջ Սրբազանի գործունէութեան շարքը: Բարեգործութիւն՝ (Թռչունեան Տուն, Երկիր եւ Մշակոյթ, Որբերի Այգաբաց ընկերակցութիւն): Հրատարակչութիւն՝ 35-է աւելի աշխատասիրութիւններ, Մուղնի հրատարակչատուն՝ 27000 կտոր գիրք: «Սրբազանի հոգածութեամբ տպագրուեցին 180 գիրք Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի աշխատակիցների գործերից, որոնք տարիներով դարակներում էին մնացած: Ակադեմիայի Պատուաւոր Դոկտորի կոչման արժանացաւ: Ամէն գիտաժողովի կը զեկուցէր գիտական բարձր պատշաճութեամբ»: Դոկտոր Մելքոնեան ծանրացաւ քանի մը դիպուկ օրինակներու վրայ: Նշեց Սրբազանի բանտեր այցելութեան մասին եւ քրիստոնէական սկզբունքով իր մօտեցումը բանտարկեալներուն, որ ուրիշ ոչ մէկ հոգեւորական կատարած էր: Անոնցմէ մին Սրբազանի օգնութեամբ բանտէն ելած, հիմա ամեն կիրակի եկեղեցի կ՚երթայ աղօթելու եւ շաբաթը մի քանի անգամ Ակադէմիայի Սրբազանի անուան գրադարանը կ՚այցելէ կարդալու եւ օգտակար ըլլալու: Շեշտեց Սրբազան Հօր այցելութիւնը Ջաւախք: Երկար տարիներ ո՛չ մէկ հոգեւորական այցելած էր այդ ժողովուրդին: Մոռցուած էր բոլորէն: Ամբողջ Ջաւախքի հայութիւնը ոտքի կը

կանգնի դիմաւորելու, յարգելու եւ հաղորդուելու այս անզուգական հոգեւորականին հետ, աննկարագրելի խանդավառութիւն մը կը պարուրէ բոլորին եւ ջաւախահայութիւնը անմոռանալի օրեր կ՚ապրի: «Կորուստը անդառնալի է,- ցաւը չա՛տ խորը: Ֆիզիկական բացակայութիւնը չի ենթադրում նրա հոգեւոր բացակայութիւնը: «Աշճեանական այն միջավայրն ու հողը, որ նա ստեղծեց Սփիւռքում, Հայաստանում, մնայուն է, ամէնուր է, Արեւմտահայաստանում է: Ո՞վ է ասել, որ Սրբազանը գնացել է, Սրբազանը մեր մէջ է, Սրբազանը յաւէտ է»:

Հ© Մարգարեանը նշեց, որ «Ջահերն ու մտահոգութիւնները եւ եկեղեցւոյ պահպանութիւնը կը փոխանցուի, մեր հոգեւորականները տէր կանգնած են մեր արժէքներուն եւ Ջահը հիմա փոխանցուած է Սրբազան Արք© Զօլոեանին»: ԱՄՆ-ի, Կիլիկիոյ Արեւելեան թեմի Առաջնորդ Օշական Արք© Զօլոյեան՝ իր խօսքին մէջ վերյիշեց Մեսրոպ Արք© Աշճեանի Անթիլիասի օրերէն եւ աւելցուց՝ «Սրբազան Աշճեան մէկ անձէն աւելի էր, իր աշխատանքով, իմաստասիրութեամբ, նուիրուածութեամբ եւ ծառայութեամբ: Ով որ զինք տեսաւ, իր մէջ տեսաւ բարութիւն մը, որ վայել էր մարդ անհատին ու հոգեւորականին: Մենք այսօր եկած ենք այդ արժէքներուն առջեւ խոնարհելու: Բոլոր անոնք, որ օգտուեցան իր իմաստութենէն՝ վարակուեցան իր բարութենէն եւ այսօր, որպէս յիշատակ՝ ինք կը մնա՛յ անոնց հոգիներուն մէջ: Մեսրոպ Սրբազան մի՛շտ կ՚ապրի, պիտի՛ ապրի բոլորին հետ, որովհետեւ Մեսրոպ Սրբազան բոլորին հետ եղաւ: Մեծերը չեն մեռնիր, մեծերը աւելի եւս կը մեծնան»:

Ապա ցուցադրուեցաւ տեսաերիզի վերջին մասը, ուր լսեցինք Սրբազան Աշճեանի պատգամը՝ «Ամէն մարդու մէջ լաւը տեսնել եւ փորձել դուրս հանել»: Կը յաջորդէ Սրբազանի զանազան լուսապատկերներէն շարք մը, որուն հետ կը լսուի Հայաստանի Պետական Ակադէմիական երգչախումբի կատարմամբ՝ «Կիլիկիա» երգը, աքաբելլա: Ներկաներու յուզումը գագաթնակէտի հասած է: Բոլորը ոտքի են եւ Կիլիկիա կ՚երգեն: Վերջին նկարը Սրբազանը թիկունքը դէպի մեզ, աջ ձեռքով ծաղկեփունջ բռնած եւ ձախով հրաժեշտ կու տայ, միաժամանակ կը լսուի «Երթամ ննջել զիմ Կիլիկիա» բառերը: Կարծես իր վերջին հրաժեշտն է բոլորիս ու կեանքին եւ այդ պահուն՝ անարցունք աչք չկար սրահին մէջ:

Այս յուշ երեկոն իրագործով Յատուկ Յանձնախումբի անդամներն էին Արեւիկ Գաբրիէլեան՝ Ատենապետուհի, Լիզա Եսայեան, Ռիթա Կիրակոսեան, Մարիէթ Գաբրէլեան, Նաթալի Գաբրիէլեան, Ժանէթ Մարգարեան, Արմինէ Մինասեան եւ Սոնիա Պզտիկեան:

Տեսաժապաւէնն ու լուսապատկերները՝ պատրաստած էին Սրբազանի քրոջ, Հռիփսիմէի զաւակները՝ Լիզա Եսայեան եւ Հրայր Սերոբեան: Յայտագիրը՝ Խաժակ Զէյթլեան: Լոյսերու պատասխանատու՝ Երազ Մարգարեան-Մեսչեան, ձայն՝ Արմէն

Մեսչեան: Լուսանկարիչ՝ Պետրոս Եսայեան: Մուտքին՝ Նաթալի Գաբրիէլեան, Արմէն Գաբրիէլեան եւ Անահիտ Ուղուրլեան: Հեռատեսիլ՝ «Արճագանգ»: Մեսրոպ Արք© Աշճեանի կեանքին ու գործին նուիրուած այս յիշատակի ճեռնարկը՝ լաւապէս կազմակերպուած, բարձր մակարդակով, պատշաճ ու սքանչելի յայտագիր մըն էր, Սրբազան Հօր արժանի:

«Ապրի՛ք, շատ լաւ էր», պիտի ըսէր Սրբազանը ջերմ ու գոհունակ ժպիտով:

Թղթակից

Հայաստանի անկախացումից յետոյ